Թուրքերի ծագումը

Դ. Ե. Երեմեև

902.7
Ե-79

Գ. Ե. ԵՐԵՄԵԵՎ

ԹՈՒՐՔԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

(Ծագումը և էթնիկական պատմության հիմնական էտապները)

640

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1975

ԳՐԱԴԱՐԱՆ

902. 7
ե 79

ե 10602 (928) 431. 74 «S»
701 (01) 74

Թարգմանություն ռուսերենից՝
Հ. Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

Աշխատությունը նվիրված է թուրքերի էթնոգենեզի պատմության բարդ խնդրին: Պատմական, մարդաբանական, լեզվաբանական և ազգագրական տվյալների հիման վրա հեղինակը լուսաբանում է թուրքերի էթնոգենեզը, թուրքական ֆեոդալական հասարակության կազմավորումը, թուրք ազգի ձևավորման առանձնահատկությունները:

© Изд. „Наука", 1971

© Թարգմանված է հայերեն. «Հայաստան» հրատ. 1975:

Իմ ուսուցիչ, թուրքական պատմության, ազգագրության ու բանասիրության ականավոր ուսումնասիրող, ակադեմիկոս Վլադիմիր Ալեքսանդրովիչ Գորդլևսկու հիշատակին

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Թուրքերի ծագումը, ինչպես և գրեթե ամեն մի ժողովրդի, ամեն մի էթնիկական ընդհանրության ծագումը պատմական բարդ պրոցես է: Էթնիկական պրոցեսները, ունենալով որոշ ընդհանուր օրինաչափություններ, միևնույն ժամանակ ամեն մի կոնկրետ դեպքում ունեն իրենց առանձնահատկությունները: Օրինակ, թուրքերի ծագման առանձնահատկություններից մեկը եղել է միմյանցից չափազանց տարբեր էթնիկական երկու հիմնական բաղադրամասերի՝ ժամանակակից Թուրքիայի տերիտորիան տեղափոխված թյուրքական քոչվոր անասնապահների և տեղական նստակյաց հողագործ բնակչության առանձին խմբերի սինթեզը: Միևնույն ժամանակ թուրք ժողովրդի կազմավորման մեջ դրսևորվել է էթնիկական պատմության օրինաչափություններից մեկը ևս՝ նվաճված ժողովուրդների մի մասի ասիմիլյացումը թուրքերի կողմից՝ վերջիններիս թվական գերակշռության և սոցիալ-քաղաքական գերիշխանության պայմաններում:

Սույն աշխատության մեջ փորձ է արվում քննության առնել թուրքերի ծագման, թուրք ժողովրդի, իսկ ապա նաև թուրք ազգի կազմավորման բոլոր առանձնահատկությունները, միաժամանակ ընդգծելով դրանց ընդհանուրն ու առանձնահատուկը: Նման վերլուծության համար իրրև հիմք են ծառայել պատմական փաստերը՝ գրավոր աղբյուրները, ինչպես նաև մարդաբանական և ազգագրական գիտության տվյալները:

«Հիմնական աղբյուրների և գրականության տեսություն» բաժնում ուշադրություն է դարձված աղբյուրների բնութագրման, ինչպես նաև թուրքական էթնոգենետիկական (ծագումնաբանական) հետազոտությունների գլխավոր ուղղությու-

ներն ու դրանց քննադատության վրա։ I գլխում տրվում է ժամանակակից Թուրքիայի տերիտորիայի աշխարհագրական համառոտ բնութագիրը, այն արեալի, որտեղ տեղի է ունեցել Թուրք ժողովրդի և ազգի կազմավորումը։ Այս գլխում էլ նկարագրված է Անատոլիայի բնակչության էթնիկական կազմը մինչև թյուրքերի զանգվածային գաղթը Անատոլիա, և փաստեր են բերված թյուրքական տարրերի նախասկզբնական ներթափանցման մասին դեպի Բալկաններն ու Փոքր Ասիա։ Այս գլուխը կրում է ներածական ակնարկային բնույթ, կազմելով XI-ից մինչև XX դարը Թուրքիայում տեղի ունեցած էթնիկական պրոցեսների ուսումնասիրության ներածությունը։

II գլուխը նվիրված է սելջուկյան և մոնղոլական նվաճումների դարաշրջանում թյուրքական ցեղերի՝ դեպի Անատոլիա կատարած զանգվածային գաղթի, այդ ցեղերի էթնիկական պատմության վերլուծությանը։ III գլխում քննության են առնվում Թուրք ժողովրդի կազմավորման առանձնահատկությունները, IV գլխում՝ Թուրք ազգի ձևավորման պատմությունը։ V գլուխը պարունակում է տեղեկություններ Թուրք ազգի բնավաքանակի, նրա տարածման, հիմնական զբաղմունքների, դասակարգերի ու սոցիալական խմբերի, մարդաբանական տիպերի, լեզվի և մշակույթի կենցաղի յուրահատկության մասին։ Այս գլխում առանձնահատուկ ուշադրություն է նվիրված Թուրքերի մարդաբանական, լեզվաբանական և ազգագրական այն գծերին, որոնք լույս են սփռում նրանց ծագման ու էթնիկական պատմության առանձնահատկությունների վրա։ Այլ կերպ ասած, այս գլուխը Թուրք ժողովրդի ազգագրական համապարփակ ակնարկ չէ, այլ մի փորձ՝ վերլուծելու էթնիկական մի քանի գծեր՝ նախորդ գլուխներում արված ծագումնաբանական հետևությունները ճշգրտելու և պարզաբանելու նպատակով։

Հիմնական հետազոտությունը պարունակվում է II—V գլուխներում։ Ըստ որում, II—V գլուխներում նախ տրվում է քննարկվող ժամանակաշրջանի Թուրքիայի քաղաքական, տնտեսական ու սոցիալական դրության ամփոփիչ համառոտ բնութագիրը և դրանից հետո միայն վերլուծվում են թուրքական էթնոսի ձևավորման առանձնահատկությունները։

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աղբյուրներ։ Թուրքական ցեղի ծագման պրոցեսի ժամանակագրական ելակետը, որը ի վերջո հանգեցրեց Թուրք ժողովրդի կազմավորմանը, վստահորեն կարելի է համարել XI դարի վերջը, երբ սկսվել էր թյուրքական ցեղերի, գերազանցապես օղուզների ու Թուրքմենների զանգվածային գաղթը դեպի Փոքր Ասիա։ Թյուրքերի ավելի վաղ շրջանի ներթափանցումները այդ տերիտորիան, որոնք, իհարկե, չի կարելի բոլորովին հաշվի չառնել, կրում էին էպիզոդիկ բնույթ և քանակական տեսակետից աննշան էին, որպեսզի կարողանային վճռականորեն ազդել Փոքր Ասիայի էթնիկական պրոցեսների վրա։ Հետևաբար, Թուրքերի ծագումը, Թուրք ժողովրդի կազմավորումը տեղի են ունեցել ուշ միջնադարի շրջանում (XII—XV դդ.), որը համեմատաբար լավ լուսաբանված է բանավոր աղբյուրներում։ Հենց այդ առանձնահատկությունն էլ որոշեց սույն աշխատության հիմնական բաղադրամասը՝ գրավոր աղբյուրները։ Իմաստ չուներ լայնորեն օգտագործել հնագիտական նյութը. դա վերաբերում է պատմական անհամեմատ ավելի վաղ շրջաններին, որոնք արդեն ավարտվել էին առաջին թյուրքերը Փոքր Ասիայում երևալուց դեռ շատ առաջ, և իրեն աղբյուր է ծառայում ոչ թե թուրքերի, այլ փոքրասիական հին ժողովուրդների՝ խեթերի, փռյուգացիների, լիդիացիների, հույների, հայերի, վրացիների, քրդերի և այլ ցեղերի ծագումը վերլուծելու համար։ Այդ պատճառով էլ հնագիտական տվյալները օգտագործված են հազվադեպ դեպքերում միայն։ Մարդաբանական նյութեր նույնպես քիչ են օգտագործված. Թուրք հետազոտողները այս բնագավառում աչքի են ընկնում տենդենցիոզությամբ (նրանց մասին տե՛ս ստորև), իսկ մյուս աշխատությունները և՛ թեմատիկ տեսակետից, և՛ մարդաչափական տվյալների քանակով շատ սահմանափակ բնույթ են կրում։

Բացի դրանից, մարդաբանական նյութը կարող է անուղղակի կերպով միայն հաստատել էթնիկական պրոցեսները և վկայել, ասենք, մարդաբանական տիպերի խառնվածքի, նրանց տարածման մասին և այլն։ Այն չի կարելի դիտել որպես անմիջական ծագումնաբանական աղբյուր՝ առանց վերապահումների։

Գրավոր աղբյուրներից բացի օգտագործված են համեմատական լեզվաբանության, օնոմաստիկայի (անվանաբանության), տոպոնիմիկայի (տեղանունների), անտրոպոնիմիկայի (անձնանունների) և էթնոնոմիկայի (ցեղանունների) ավյալները, թյուրքալեզու էպիկական առանձին հուշարձաններ, սելջուկյան և օսմանական արվեստի ստեղծագործություններ (ճարտարապետություն, դարդաքանդակներ և այլն), ֆոլկլորային ու ազգագրական նյութեր։

Թուրք ազգի ձևավորման ժամանակաշրջանի համար, որը ավարտվեց բառացիորեն մեր օրերում՝ XX դարի առաջին տասնամյակներին, իբրև հիմնական աղբյուրներ են ծառայել ճանապարհորդների վկայությունները, մեզ հետաքրքրող իրադարձությունների ժամանակակից ականատեսների հաղորդումները, ինչպես նաև Օսմանյան կայսրության մի շարք արխիվային փաստաթղթեր՝ թուրք ուսումնասիրողների հրապարակումներով, մարդահամարների ավյալները և Թուրքական հանրապետության պաշտոնական այլ փաստաթղթեր։

Թուրք ազգի ձևավորման առանձնահատկություններին անմիջականորեն վերաբերող շատ արժեքավոր ցուցումներ կան Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի հոդվածներում, որոնք հրապարակվել են «Նյու-Յորք դեյլի տրիբյուն» թերթում՝ «արևելյան հարցի»՝ Օսմանյան կայսրության բաժանման համար մղված պայքարում՝ մեծ տերությունների մրցակցության առավել ուժեղ սրման ժամանակաշրջանում (1853—1855) [1. 2. 5]։ Բանավիճական սուր տոնով գրված այդ հոդվածները միաժամանակ պարունակում են Թուրքիայի ներքին դրության և մեծ տերությունների հետ նրա ունեցած հարաբերությունների խոր գիտական վերլուծություն։ Մեթոդոլոգիական հսկայական նշանակություն ունեն Վ. Ի. Լենինի շատ երկերը, առանձնապես այն երկերը, որոնցում նա մշակել է ժողովրդի և ազգի

կազմավորման, ազգային մշակույթի և ազգային փոխհարաբերությունների տեսական հարցերը [տե՛ս, օրինակ, 6]։

Վաղ շրջանի գրավոր աղբյուրներից ամենից ավելի մեծ նշանակություն ունեն, թերևս, հայկականները։ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» (V դար), VII դարի հայկական «Աշխարհացույցի» մեջ պահպանվել են տեղեկություններ թյուրքական առաջին ցեղերի՝ Անդրկովկաս և Փոքր Ասիայի արևելյան շրջանները ներթափանցելու մասին [տե՛ս՝ 170. 20]։ Անդրկովկասյան և փոքրասիական ժողովուրդների հետ սուվարների և խազարների ունեցած կապերի մասին է պատմում Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղվանից աշխարհի» գիրքը [169]։ XI—XIII դարերում հայկական աղբյուրներում տեղեկություններ են երևում օղուզների և թուրքմենների մասին, որոնք սելջուկյան նվաճումների ժամանակ ներխուժել էին Փոքր Ասիա։ Այդ աղբյուրների թվում ամենից առաջ հարկավոր է նշել Արիստակես Լաստիվերտցու (XI դար), Մատթեոս Ուռհայեցու (մահացել է 1144 թ.), Մխիթար Այրիվանեցու (XIII դար) ժամանակագրությունները։ X—XII դարերի թուրքերի և թյուրքական այլ ժողովուրդների պատմության վերաբերյալ հայկական աղբյուրները քննության են առնված Հ. Դ. Անդրեասյանի աշխատության մեջ, որը հրատարակվել է Թուրքիայում՝ թուրքերեն լեզվով [373][1]։

Սիրիական աղբյուրներից անհրաժեշտ է հիշատակել Միքայել Սիրիացու ժամանակագրությունը (XII դար) և Աբու-լ-Ֆարաջի (1226—1286) աշխատությունը համաշխարհային պատմության մասին։ Միքայել Սիրիացին հատուկ ուշադրություն է նվիրում թյուրքերի գաղթին դեպի Արևմտյան Ասիայի երկները [տե՛ս 276. 67. 197]։ Սելջուկյան ցեղերի մասին

---

[1] Թուրքերի էթնիկական պատմության հետ կապված գրեթե բոլոր գրավոր աղբյուրները վաղուց պատմական գիտության շրջանառության մեջ են դրվել և մանրամասն բնութագրություններ են ստացել Վ. Վ. Բարթոլդի, Վ. Ա. Դորոշևսկու, Ի. Յու. Կրաչկովսկու, Ա. Ս. Տվերիտինովայի, Ս. Գ. Աղաջանովի, Բ. Ն. Զախոդերի, Յա. Ն. Լյուբարսկու և այլոց աշխատություններում։

հետաքրքրական տեղեկություններ կան նաև վրացական տարեգրություններում [տե՛ս՝ 9, էջ 27]։

Բյուրքական ցեղերի մասին, նրանց՝ Բալկաններ և Փոքր Ասիա ներթափանցման մասին բավական շատ տեղեկություններ են պարունակում բյուզանդական աղբյուրները։ Ուղների (օղուզների) մասին առաջին տեղեկությունները բերված են Կոստանտին Սիրանածինի երկում՝ X դարում [214. 325, էջ 204—228]։ Ավելի ուշ շրջանի աղբյուրներից պետք է նշել XI—XIII դարերի հեղինակներ Հովհան Սկիլիցային, Հովհան Զոնարային, Միքայել Պսելլային, Նիկեփոր Վրիեննիային, Նիկիտա Հոնիաթային և առանձնապես Աննա Կոմնինային աշխատությունները. հատկապես վերջինիս երկը անչափ շատ տեղեկություններ է պարունակում ինչպես սելջուկ բյուրքերի, այնպես էլ բյուրքական այլ ցեղերի՝ պեչենեգների, պոլովեցների և այլոց մասին, որոնք դաղթել են Բյուզանդիայի հողերը [34, 178. 15]։ Բյուրքական ժողովուրդների և բյուրքական լեզուների մասին բյուզանդական աղբյուրների տեղեկությունները սիստեմավորված են Հունդարացի պիտանական Դյուլա Մորավչիկի աշխատության մեջ, որը բավականին հեշտացնում է այդ աղբյուրների օգտագործումը [325. 326]։ Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև Դուկայի «Բյուզանդական պատմությունը», որտեղ նկարագրված են օսմանյան պետության առաջին էտապներից մեկի հետ կապված իրադարձությունները [74. 282. 411]։

Աղբյուրների թվում մեծ տեղ են գրավում նաև արաբերեն, իրանական և բյուրքական լեզուներով մեզ հասած երկերը։ Հետաքրքրական տեղեկություններ է պարունակում օղուզների մասին «Ահմեդ իբն Ֆադլանի դիրքը 921—922 թթ. դեպի Վոլգա նրա կատարած ճանապարհորդության մասին» [105. 106. 302]։ Փոքր Ասիայի բնակչության էթնիկական կազմի, նրա զբաղմունքների, ժողովուրդների փոխհարաբերությունների մասին հարուստ նյութ է տալիս Իբն Բաթութան, որը մոտավորապես 1331—1334 թթ. ճանապարհորդություն է կատարել Անատոլիայում [301]։ Այս շրջանի աղբյուրների թվում հարկավոր է հիշատակել սելջուկյան սուլթաններ Ալփ-Արսլանի (1063—1072) և Մելիք-շահի (1072—1092) վեզիր Նիզամ

ալ-Մուլքի «Սիյասեթ-նամե» տրակտատը [210]։ Տրակտատը տեղեկություններ է պարունակում ոչ միայն Սելջուկյանների կայսրության կառուցվածքի մասին, այլև դեռ Մութասիմ խալիֆի օրով (833—841) բյուրքական տարրերի՝ Արևմտյան Ասիա ներթափանցելու մասին, սելջուկյան զորքի թվաքանակի մասին, թուրքմենական ցեղերի դրության մասին։ Այժմ, դրա պարսկերեն բնագրից բացի, հայտնի է նաև այդ աշխատության միջնադարյան թուրքերեն թարգմանությունը [9, էջ 19]։ Որոշ նյութ են տալիս նաև Ջահիր ադ-Դին Նիշապուրիի (XII դար) «Սելջուկ-նամե» [204] և Ֆադլալահ Ռաշիդ ադ-Դինի (1247—1318) «Ջամի աթ-թավարիխ» [205] երկերը։

Անմիջականորեն Փոքր Ասիայում գրված սելջուկյան ժամանակագրություններից մեծ նշանակություն ունի Իբն-Բիբիի աշխատությունը սելջուկյան պետության պատմության մասին (1188—1282)։ Կա պարսկերեն բնագրի հին թուրքերեն թարգմանությունը [435, 436]։ Նշենք նաև Աքսարայլիի ժամանակագրությունը, որը ընդգրկում է մոնղոլական արշավանքից հետո ընկած ժամանակաշրջանը [369. 370] և մեվլեվիների ուխտի գերվիշ Աֆլյաքիի (մահացել է 1359 թ.) հիշողությունները [246]։

Օսմանական պատմագրության վաղ շրջանի երկերից մեկն է «Օգուզ-նամեն» կամ «Սելջուկ-նամեն», որ գրել է Յազըջիօղլու Ալին 1423 թվականին [523]։ Այս երկում օգտագործված են Ռաշիդ ադ-Դինի, Իբն Բիբիի և Ռավանդիի աշխատությունները, ինչպես նաև օղուզական պատմական ավանդությունները։ XV—XVI դարերի ժամանակագրություններից ուշադրության արժանի են Աշըք-փաշա-զադեի [379], Օրուջ բին Ադիլի [481], Մեհմեդ Նեշրիի [321. 327. 473], Մյունեջիմ-բաշիի [475] երկերը, ինչպես նաև օսմանական անանուն «Թեվարիխ-ի Ալ-ի Օսման» ժամանակագրությունը [281. 499. 216]։ Ավելի ուշ շրջանի աղբյուրների մեջ առանձնահատուկ ուշադրության է արժանի աղգությամբ թուրք Էվլիյա Չելեբիի (XVII դար) «Ուղեգրությունը» [242. 419]։ Հեղինակը մանրամասն նկարագրում է Անատոլիայի բնակչությունը, նրա զբաղմունքները, քաղաքները (Ստամբուլը, Բուրսան, Իզմիրը, Տրապիզոնը, Սվասը, Էրզրումը, Վանը)։

XVI դարի երկրորդ կեսի—XVIII դարի Անատոլիայի թյուրքական քոչվոր ցեղերի (յուրյուքների և թուրքմենների) բնութագրման համար մեծ նշանակություն ունեն Օսմանյան կայսրության արխիվային փաստաթղթերը, որ հավաքել ու հրապարակել է թուրք պատմաբան Ա. Ռ. Ալթընայը։ Դրանք, մասնավորապես, տեղեկություններ են պարունակում այդ ցեղերի բնակության վայրերի, նրանց ցեղանունների, քոչվորների նկատմամբ սուլթանական կառավարության քաղաքականության մասին [371]։

Վերջապես, Անատոլիայի բնակչության էթնիկական կազմի, նրա զբաղմունքների մասին շատ կարևոր տեղեկություններ ենք գտնում եվրոպացի ճանապարհորդներ Գիլլոմ դե Ռուբրուկի (XIII դարի կես), Մարկո Պոլոյի (XIII դարի վերջ), Ժ. դե Սեվերակի (XIV դարի սկիզբ), Բերտրանդոն դե լյա Բրոքիերի (XV դար) և ուրիշների երկերում [119. 200. 208. 261. 304]։

XII—XV դարերի Թուրքիայի բնակչության մասին տրվյալներ են պարունակում նաև խաչակրաց արշավանքների մասնակիցներ Ս. դե Սեն-Կանտենի [377], Տագենոնի [49, էջ 125] երկերում, Ռ. Գ. դե Կլավիխոյի ճանապարհորդական օրագրում [122]։

1591 թվականին Թուրքիա կատարած ուղևորության մասին նոթեր է թողել չեխ հեղինակ Վ. Վրատիսլավը [37]։ XVII դարի 70-ական թվականների Թուրքիայի դրությունը լուսաբանել են ֆրանսիացի ճանապարհորդներ Ժ. Կոլինն [277] և Մ. Ֆեբրը [286]։ XVIII դարի աղբյուրներից հետաքրքրություն են ներկայացնում Օ. Ջ. Բյուսբեկի ճանապարհորդության նկարագրությունը [264], Մ. Գյուեի տեղեկությունները թուրքերի բարքերի ու սովորությունների մասին [292] և Ֆ. դե Տոտտի հիշողությունները [348]։

Այս կարգի աղբյուրներ առանձնապես շատ կան XIX դարից։ Արևմտյան տերությունների հետաքրքրությունը Թուրքիայի նկատմամբ, որ առաջացել էր «օսմանյան ժառանգության» համար մղված պայքարի հետևանքով, օտարերկրյա կապիտալի ներթափանցումը Օսմանյան կայսրություն՝ այս ամենը ուղեկցվում էր Թուրքիայի գործերի վիճակի բավական

մանրամասն ուսումնասիրությամբ, որ կատարում էին օտարերկրացի ճանապարհորդները, հյուպատոսները, դիվանագետները, հետախույզները։ Իրենց հաշվետվություններում նրանք հարուստ նյութ են տալիս Թուրքիայի բնակչության էթնիկական կազմի մասին, թուրքերի կողմից երկրի մյուս ժողովուրդների կրոնական ու լեզվական ասիմիլյացման պրոցեսների մասին, ազգային փոխհարաբերությունների մասին և այլն։ Նման աշխատություններից կարելի է հիշատակել 1813—1814 թվականներին Թուրքիայում ճանապարհորդություն կատարած Ջ. Մ. Քիննեյրի [308], Վ. Ֆոնտանիեի (1829 թ.) [288] երկերը, Գ. Մոլթկեի (1835—1839) հիշողությունները [323], Վ. Լանգլուայի (1852—1853) ուղեգրությունները [312], Ա. Ուբիշինիի և Պ. դե Կուրտեյլի (1854—1876) Թուրքիայի նկարագրությունները [228. 229], Վ. Ջ. Պալգրեվի (1869 և 1872 թթ.) հյուպատոսական հաշվետվությունները [190], անձնական տպավորությունների հիման վրա Կ. Մակ.Կոանի (1879 թ.) թողած Թուրքիայի նկարագրությունը [151], Ի. Չեռնիկի՝ Արևելյան Անատոլիա և Հյուսիսային Սիրիա կատարած գիտարշավի (1872—1873) հաշվետվությունը [243], Կ. Գումանի դիտումները [62] և այլ աղբյուրներ։

XX դարի երկերից անհրաժեշտ է նշել Գ. Գրոտեի 1902 թվականի «Ճանապարհորդությունը Ասիական և Եվրոպական Թուրքիայում» [60], առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքիայում աշխատած գերմանացի մասնագետներ դ-ր Ֆրայլիխի և ինժեներ Ռաուլիգի մեծ աշխատությունը թուրքական քոչվոր ցեղերի մասին [420] և, վերջապես, Վ. Սպերկոյի համեմատաբար նոր շրջանի աշխատությունը՝ «Թուրքերը երեկ և այսօր», նրա հիշողությունները XX դարի 30—50-ական թվականներին Թուրքիայում անցկացրած տարիների մասին [338]։

Թուրք ժողովրդի էթնիկական պատմության վերաբերյալ եղած աղբյուրների մեջ աչքի ընկնող տեղ են գրավում ռուս ճանապարհորդների ու ականատեսների երկերը։ Ընդհանրապես, Ռուսաստանում շատ վաղուց է ծագել հետաքրքրությունը Թուրքիայի և թուրքերի նկատմամբ։ Արդեն 1453 թվակա-

նին Կոստանդնուպոլսի գրավումը օսմանցիների կողմից նկարագրված է Նեստոր Իսկանդերի «Պատմություն Ցարգրադի մասին» հիանալի փաստաթղթում [177]: Իսկ 1497 թվականին Ստամբուլ ժամանեց ռուսական առաջին դեսպան, պալատական սեղանապետ Մ. Ա. Պլեշչեևը [176]: XV—XVII դարերում Թուրքիայով էին անցնում ռուս շատ վաճառականների «ուղևորությունների» ճանապարհները: Այստեղ եղել է, ճիշտ է, շատ կարճ ժամանակով, տվերցի Աֆանասի Նիկիտինը՝ «Ուղևորություններ երեք ծովից այն կողմ» գրքի հեղինակը (1466—1472): Մոսկվացի վաճառական Ֆ. Ա. Կոտովը 1623 թվականին կատարած իր ճանապարհորդության մասին թողել է «Ուղևորություն դեպի Պարսկական թագավորություն և Պարսկաստանից Թուրքական հողը և Հնդկաստան և Ուրմուզ, ուր նավերն են գալիս». նրա մյուս երկը՝ «Արաբենի Սուխանովի պրոսկինիտարին» վերաբերում է 1649 թվականին: Վաղ շրջանի երկերից նշենք նաև «Թուրքական կայսրության նկարագրությունը, որ կազմել է XVII դարում Թուրքերի մոտ գերի ընկած մի ռուս» (1669—1674) [տե՛ս 28, էջ 5]:

XVIII դարի երկերից առաջին հերթին անհրաժեշտ է նշել ուխտագնաց վանական Վ. Դ. Բարսկի-Պլակի-Ալբովի ճանապարհորդության նկարագրությունը, որը լույս է տեսել 1778 թվականին, Պ. Ա. Լեվաշովի «Թուրքերի հետ տեղի ունեցած պատերազմի ժամանակի օրագրերը», Պ. Բ. Ինիցիալներով հայտնի հեղինակի «Ցարգրադյան նամակները հին և այժմյան Թուրքերի մասին» (1789 թ.), «Ռուսների գերության ու տառապանքները Թուրքերի մոտ» (1790 թ.) [193]:

XVIII դարի վերջին— XIX դարի սկզբին է վերաբերում վրացի ազնվական «Ռաֆայիլ Դանիբեգաշվիլու ճանապարհորդությունը», որը վրացական և ռուսական ցարերի հանձնարարություններն էր կատարում Ասիայի երկրներում, այդ թվում և Թուրքիայում [69]: XIX դարին—XX սկզբին վերաբերող նման տիպի աղբյուրներից հարկավոր է նշել Մ. Պ. Վրոնչենկոյի երկերը, որը կազմել է Փոքր Ասիայի աշխարհագրական ու ազգագրական շատ մանրամասն նկարագրությունը [38], Ի. Ն. Կազբեկի [114], Դ. վ. Պուտյատայի [202], Յու. Կապի-Բեկի [115], Ա. Վ. Ելիսեևի [76. 77], Պ. Տոմիլովի

[223], Ի. Ի. Գոլոբորոդկոյի [46], Ն. Յա. Մառի [157], Ա. Տիրկովայի [227], Պ. Ի. Ավերյանովի [13] երկերը:

Սովետական շրջանի ռուսական աղբյուրներից շատ արժեքավոր տեղեկություններ են պարունակում Մ. Վ. Ֆրունզեի զեկուցումը Անկարա կատարած ուղևորության մասին [234] և Թուրքիայում սովետական դեսպան Ս. Ի. Արալովի հիշողությունները [16]:

Օսմանական և թուրքական պաշտոնական փաստաթղթերի թվին պետք է դասել առաջին հերթին մարդահամարների տվյալները, որոնք որոշակի նյութ են տալիս XIX դարի երկրորդ կեսին— XX դարի առաջին կեսին Թուրքիայում տեղի ունեցած էթնիկական պրոցեսների մասին (առաջին մարդահամարը Օսմանյան կայսրությունում անց է կացվել 1831 թվականին [450]): Սակայն հարկավոր է ընդգծել, որ մինչև մեր դարի 20-ական թվականները այդ մարդահամարները չէին տալիս ճշգրիտ ու ստույգ տվյալներ Թուրքիայի բնակչության թվականակի ու էթնիկական կազմի մասին: Վիճակագրությունը Օսմանյան կայսրությունում ընդհանրապես վատ է դրված եղել, և, բացի դրանից, մարդահամարների ժամանակ թույլ էին տրվում ուղղակի կեղծիք՝ դիտակցաբար պակասեցվում էր քրիստոնյա բնակչության թվաքանակը: Իսկ գլխավորն այն էր, որ մարդահամարների ժամանակ ազգային պատկանելությունը նենգափոխվում էր դավանական պատկանելությամբ: Օրինակ, Թուրքերը, քրդերը, արաբները և մուսուլմանական մյուս ժողովուրդները նշվում էին լոկ որպես մուսուլմաններ, առանց նրանց առանձնացնելու ըստ ազգային հատկանիշի: «Հույների», այսինքն՝ այսպես կոչված հույն ուղղափառ եկեղեցու հետևորդների թվում խիակական հույների հետ միասին հաշվի էին առնվում ուղղափառության դավանող մյուս ազգությունների ներկայացուցիչները ևս (օրինակ, գագաուզները): Ոչ լուսավորչական դավանանքի հայերից մի մասը ընկնում էր կաթոլիկների (հայ կաթոլիկների) կամ բողոքականների (հայ բողոքականների) ընդհանուր թվի մեջ և այլն: Ուստի մինչհանրապետական Թուրքիայի տարբեր ժամանակաշրջաններում առանձին ժողովուրդների թվաքանակը որոշելիս անհրաժեշտ է լինում օգտագործել գնահատու տվյալներ

[86, էջ 14]: Սովորաբար այդ տվյալները դուրս էին բերվում օսմանական մարդահամարների, հայկական և հունական աղբյուրներից, ճանապարհորդների և հետազոտողների հաշվումներից վերցված տեղեկությունները համադրելու միջոցով [8, էջ 115. 13, էջ 3]: XVIII—XIX դարերում Թուրքիայի բնակչության թվաքանակն ու էթնիկական կազմը որոշելու այդպիսի փորձերից կարելի է նշել Ա. Երիցովի [100], Ա. Դ. Մորդվինովի [172] և Նիկոլա Միխովի [168] աշխատանքները:

Հանրապետական Թուրքիայում մարդահամարները արդեն ավելի լավ էին դրված: Առաջին մարդահամարը անց է կացվել 1927 թվականին, իսկ 1935 թվականից սկսած դրանք կանոնավոր անց են կացվում հինգ տարին մեկ անգամ (տե՛ս՝ 422. 423. 424]: Սակայն այդ մարդահամարների մեծ թերությունն էլ այն է, որ դրանք հաշվի են առնում բնակիչների ոչ թե ազգային պատկանելությունը, այլ նրանց մայրենի լեզուն: Հասկանալի է, որ դա տալիս է Թուրքական Հանրապետության բնակչության ազգային կազմի փոքր-ինչ խեղաթյուրված պատկերը:

Մյուս փաստաթղթերից կարելի է հիշատակել «Ազգային-ազատագրական պայքարի և ռեֆորմների հետ կապված օրենքների ժողովածուն», որոնք ընդունվել են Հանրապետական Թուրքիայում: Այդ օրենքները վերաբերում են մուսուլմանների սովորութային իրավունքի (շարիաթի) և աշխարհիկ իշխանության փոխհարաբերություններին, խալիֆաթի վերացմանը, կենցաղի, հագուստի ռեֆորմներին, Գրիգորյան օրացույցի ընդունմանը, քրեական օրենսգրքի մշակմանը, աշխարհիկ դպրոցների ստեղծմանը և XX դարի 20—30-ական թվականներին Թուրքիայում կատարված բուրժուա-նացիոնալիստական մյուս վերափոխումներին [474]: Թուրք ազգի սոցիալական կազմի մասին հետաքրքրական թվական տվյալներ է պարունակում Թուրքիայի 1963—1972 թթ. երկրորդ հնգամյա պլանի նախագիծը [442]:

Բավական մեծ թվով աղբյուրներ վերաբերում են լեզվաբանության, ազգագրության և ֆոլկլորի բնագավառին: Թուրքերեն լեզվի համեմատական վերլուծությունը, Թուրքերի էթնոգենեզի պրոցեսում կատարված օտարալեզու փոխառությունների առանձնացումը հեշտանում են թյուրքական բարբառների բառարանի առկայությամբ, որ 1074 թվականին կազմել է Մահմուդ Կաշգարին: Այս բառարանը միաժամանակ արժեքավոր աղբյուր է XI դարի թյուրքերի, գլխավորապես օղուզների և թուրքմենների ազգագրության և պատմության վերաբերյալ [386. 22]: Ազգագրական-լեզվաբանական բնույթի հետազոտությունների համար հիանալի աղբյուրներ են Ա. Զ. Բուդագովի [31] և Վ. Վ. Ռադլովի [203] բառարանները, ինչպես նաև վերջերս լույս տեսած «Հին թյուրքերեն բառարանը» [73]: Ժամանակակից թուրքերենի բազմաթիվ բառերի ծագումը ուրիշ լեզուներից նշված են Դ. Ա. Մագազանիկի «Թուրքերեն-ռուսերեն բառարան»-ում [149] և Թուրքիայում հրատարակված «Թուրքերենի բացատրական բառարան»-ում [505]:

Թուրքական տեղանունների համար որպես աղբյուր է ծառայում Անատոլիայի և Արևելյան Թրակիայի բոլոր գյուղերի անունների հավաքածուն, որը հրատարակվել է Թուրքիայում 1928 թվականին [469]:

Թուրքիա ուղարկված գիտարշավների և այնտեղ կատարած դաշտային հետազոտությունների ժամանակ անմիջական դիտումների շնորհիվ թուրքերի ազգագրության մասին շատ մեծ նյութ են հավաքել ռուս գիտնականները (Վ. Ա. Գորդլևսկի, Պ. Մ. Ժուկովսկի և ուրիշն.), արևմտաեվրոպական ու ամերիկյան գիտնականները (Ժ. Պ. Ռու, Քս. դե Պլյանոլ, Վ. Լբերհարդ, Զ. Լ. Պիրս, Պ. Ստիրլինգ և ուրիշն.) [տե՛ս բիբլիոգրաֆիան]: Թուրքերի ազգագրության վերաբերյալ արժեքավոր փաստական շատ նյութ են պարունակում թուրքական ազգագրական աշխատությունները (դրանց մասին խոսք կլինի ստորև):

V գլխում օգտագործված են նաև սույն գրքի հեղինակի անձնական դիտումները 1956 թվականին Թուրքիայում գործուղման մեջ եղած ժամանակ, ինչպես նաև այն ինֆորմացիան, որ նա 1958—1968 թվականներին ստացել է թուրք քաղաքացիներից՝ գիտնականներից, ժուռնալիստներից, դիվանագետներից, որոնց հետ նա բախտ է ունեցել հանդիպել

ու աշխատել[2]: Այս ամբողջ նյութը, երբ այն համադրում ենք ուրիշ ժողովուրդների ազգագրական փաստերի հետ, հնարավորություն է տալիս հետաքրքիր եզրակացություններ անել Թուրքերի էթնոգենեզի և էթնիկական պատմության մասին:

Թուրքերի էթնոգենեզի ուսումնասիրության համար օժանդակ շատ տվյալներ կարող է տալ նաև ֆոլկլորային նյութը, հատկապես բյուրքալեզու էպիկական հուշարձանները, որոնք (իհարկե, որոշ վերապահումներով) կարելի է դիտել իբրև պատմական աղբյուրներ: Դրանցից են, ամենից առաջ, «Իմ պապ Քորքուդի գիրքը» [125. 429. 291], «Ասք Մելիք Դանիշմենդի մասին» [39], Սեյիդ Բաթթալ-ղազիի մասին էպոսը [421. 309. 285], ինչպես նաև թուրքական ֆոլկլորի հրապարակումները [53. 54. 58. 212]:

Գ ր ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն: Պատմական գրականության մեջ չկան այնպիսի աշխատություններ, որոնք հատկապես նվիրված լինեն Թուրքերի էթնոգենեզին և էթնիկական պատմությանը: Սակայն այդ պրոբլեմի առանձին հարցեր, ինչպես նաև թուրքական էթնիկական պատմության որոշ ժամանակաշրջաններ լուսաբանված են մի շարք հետազոտություններում:

Հայրենական հետազոտություններ: Ռուսաց գրականության մեջ Թուրք ժողովրդի ծագման հարցը բարձրացվել էր Թյուրքական ցեղերի ու ժողովուրդների էթնիկական կազմի մասին Ն. Ա. Արիստովի աշխատության մեջ: Այս ականավոր Թյուրքագետը նշել է նաև հարցի հիմնական լուծումը՝ նա Թուրքերին դիտել է իբրև նկվոր Թյուրքական ցեղերի ու տեղական բնակչության էթնիկական համաձուլվածք [18]: Ն. Յա. Մառը այն միտքն է հայտնել, որ քրդերը մեծ ավանդ են ներդրել Թուրքերի մշակույթի մեջ, և որ ուժեղ է եղել քրդական ազդեցությունը Թուրք էթնոսի վրա [156], մի բան, որ

[2] Այդ կապակցությամբ հեղինակը անկեղծ շնորհակալություն է հայտնում Թուրք քաղաքագիտներ Թ. Իլկանին, Թ. Սեյիհօղլուին, Ա. Բաշարելին, Թ. Ուչողլին, Ս. Սյուլեյմանզադեին, Է. Գ. Սանդալչեին, Ս. Յասըքլըին, Դ. Մութլուային, Օ. Ասլանափին և ուրիշ շատերին, որոնք սիրով ու մանրամասն պատասխանել են Թուրք ժողովրդի կենցաղի, նյութական ու հոգևոր մշակույթի առանձնահատկությունների մասին նրա հարցերին:

փայլուն կերպով հաստատվեց ավելի ուշ շրջանի հետազոտություններով[3]: Թուրքերի էթնիկական պատմության մասին առանձին դիտողություններ կան Ա. Ե. Կրիմսկու աշխատություններում [136, 137]:

Թուրքերի էթնիկական պատմության որոշ հարցերին նվիրված սովետական պատմական գրականության մեջ առաջին հերթին պետք է նշել Վ. Ա. Գորդլևսկու «Սելջուկյանների պետությունը Փոքր Ասիայում» կապիտալ աշխատությունը [49], որտեղ քաղաքական ու սոցիալ-տնտեսական բնույթի այլ հարցերի հետ մեկտեղ հետազոտվում է նաև Թուրքերի էթնոգենեզի սկզբնական էտապը: Թուրքերի էթնիկական պատմության և փորթսահական տեղական բնակչության ու բալկանյան բնակչության՝ Թուրքերի վրա ծողած ազդեցության բազմաթիվ հարցեր քննության են առնված միջնադարյան Թուրքիայի քիմալական պատմագրության մասին, Օսմանյան կայսրության ազրարային կարգի մասին Ա. Ս. Տվերիտինովայի հրապարակած աշխատություններում [217. 218. 219]: Սելջուկյան դարաշրջանի էթնիկական պրոցեսների մի շարք առանձնահատկություններ նշված են Ռ. Ա. Հուսեյնովի աշխատություններում [63. 64. 65. 66. 67]: Թուրքերի էթնոգենեզի հիմնական ուղենիշները շատ համառոտ, երկու էջում, քննարկված են Ա. Դ. Նովիչևի կողմից՝ «Առաջավոր Ասիայի ժողովուրդներ» ազգագրական ակնարկներում («Թուրքեր» գլուխը) [184]: Թուրքերի էթնիկական պատմության առանձին էտապներ քննության են առնված ուրիշ հոդվածներում [89. 90]:

Ուսումնասիրվող թեմայի հետ անմիջական առնչություն ունեցող այս աշխատություններից բացի անհրաժեշտ է նշել նաև Թուրքիայի պատմության, էկոնոմիկայի, գաղափարախոսության, գրականության ու մշակույթի, ինչպես նաև ազ-

[3] Ո. Լ. Վիլչևսկին նկատել է արաբական Թուրքական ուղղագրության անմիջական կապի ուշագրավ փաստը քրդական ուղղագրության հետ, որը իր հերթին սկզբունքորեն տարբերվում է պարսկական ուղղագրությունից [35, էջ 146]: Անշուշտ շատ քրդեր են ձուլվել Փոքր Ասիա գաղթած Թյուրքական ցեղերի մեջ. քրդական շատ ուժեղ ազդեցություն են կրել մինչև մեր օրերը դեռևս գոյություն ունեցող Թուրքական քոչվոր ցեղերը՝ յուրուքները, և այլն:

գագրության մասին եղած աշխատությունները, առանց որի անհնար կլիներ փորձել՝ լուծելու Թուրք ժողովրդի էթնիկական պատմության շատ հարցեր: Դրանք են՝ Թուրքիայի պատմության վերաբերյալ Ա. Ֆ. Միլլերի [163. 164. 165], Ա. Դ. Նովիչևի [181. 185], Ա. Մ. Շամսուտդինովի [238. 239] և ուրիշ հեղինակների աշխատությունները, առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակի և պատերազմի ժամանակաշրջանի Թուրքիայի էկոնոմիկայի վերաբերյալ Ա. Դ. Նովիչևի աշխատությունները, որոնց մեջ, մասնավորապես, ուսումնասիրված են միասնական շուկայի ստեղծումը և կապիտալիստական հարաբերությունների զարգացումը Թուրքիայում, որը անմիջականորեն կապված է թուրքական բուրժուական ազգի կազմավորման հետ [182. 186], է. Յու. Հաուանովայի և այլ հեղինակների ուսումնասիրությունները թուրքական բուրժուական նացիոնալիզմի մասին [40. 41. 42. 43. 44. 83. 84], թուրքական գրականության, արվեստի ու մշակույթի պատմության վերաբերյալ աշխատությունները [14. 101. 102. 166. 81], Թուրքիայի բնակչության ազգային կազմի և էթնիկական պրոցեսների մասին ուսումնասիրությունները [8. 30. 86]: Թուրքերի մասին եղած ազգագրական աշխատություններից հարկավոր է նշել Ա. Դ. Նովիչևի՝ վերևում արդեն հիշատակված «Թուրքեր» գլուխը, նրա հոդվածը ժամանակակից Թուրքիայի քոչվորների մասին [183], Վ. Պ. Կուրիլլովի և այլ հեղինակների մի շարք աշխատություններ [130. 131. 132. 133. 134. 135. 80. 85. 87. 88. 93. 94. 95. 96. 97]: Վ. Պ. Կուրիլլովի աշխատությունները աչքի են ընկնում այն բանով, որ նրանցում փորձ է արվում Թուրք ժողովրդի ազգագրական որոշ առանձնահատկությունները կապելու նրա էթնիկական պատմության հետ, Թուրք էթնոսի սպեցիֆիկական բացատրելու պատմական պատճառներով, օրինակ՝ տեղական փոքրասիական հիմնացեղի մեծ ազդեցությամբ: Ազգագրական նյութը օգտագործված է եղել նաև այնպիսի աշխատություններում, որոնք նվիրված են Թուրք ժողովրդի ծագման ընդհանուր պրոբլեմի մասնավոր հարցերին՝ բյուրքական ցեղերի ներթափանցմանը Փոքր Ասիա [92] և Թուրքիայի բնակչության էթնիկական պատմությանը

[91]: Յուրյուքներն ու Թուրքմենները, որոնք ազգագրական խմբեր են ժամանակակից Թուրք ազգի կազմում, իրենց հիմնական մասսայով ներկայացնում են XI—XIII դարերում Անատոլիա գաղթած բյուրքական ցեղերի, գլխավորապես օղուզների և Թուրքմենների ժառանգները: Նրանք համեմատաբար քիչ են խառնվել տեղական նստակյաց բնակչության հետ, քանի որ պահպանել են քոչվորական և կիսաքոչվորական կյանքը: Ճիշտ է, յուրյուքները շատ են խառնվել քոչվոր քրդերի հետ: Այնուամենայնիվ, այդ երկու խմբերը ինչ-որ չափով կարելի է դիտել որպես նախկին բյուրքական ցեղերի մնացորդներ: Այդ պատճառով էլ նրանց ծագման պարզաբանումը կարևոր նշանակություն ունի Թուրքերի էթնոգենեզի պրոբլեմի մասնավոր հարցերից մեկի լուծման համար, այսինքն, այն հարցի, թե ինչ ցեղեր են մասնակցել Փոքր Ասիայի տեղական բնակչության բյուրքացման գործին:

Թուրքիային և Թուրք ժողովրդին նվիրված ռուսերեն լայնածավալ գրականությունը օգտագործելիս իրրև ձեռնարկ է ծառայում «Թուրքիայի բիբլիոգրաֆիա» երկհատոր աշխատանքը, որ կազմել են Ա. Կ. Սվերչևսկայան ու Տ. Պ. Չերմանը՝ Բ. Մ. Դանցիգի խմբագրությամբ: Առաջին հատորը ընդգրկում է 1713—1917 թվականների գրքերն ու ժուռնալային հոդվածները, երկրորդ հատորը՝ սովետական շրջանի հրատարակությունները 1917-ից մինչև 1958 թվականը [28. 29]: Թուրքերի էթնիկական պատմության տեսակետից այդ աշխատության մեջ ամենից ավելի մեծ հետաքրքրություն են ներկայացնում «Բնակչություն», «Ազգագրություն», «Ճանապարհորդություններ», «Ճամփորդական նոթեր», «Ազգային հարց», «Կրոն», «Լուսավորություն», «Արվեստ» բաժինները:

Սովետական պատմագրության մեջ խորը և բազմակողմանիորեն ուսումնասիրված են միջնադարի օղուզների և Թուրքմենների պատմության և ազգագրության պրոբլեմները: Այս ցեղերը եղել են Թուրք ժողովրդի նախնիներից մեկը և վճռական դեր են կատարել Անատոլիայի բյուրքացման գործում: Բնական է, որ այդ ցեղերի էթնիկական առանձնահատկությունների ուսումնասիրումը անմիջական առնչություն

ունի թուրքերի ծագման պրոբլեմի հետ։ Այդ բնույթի աշխատություններից անհրաժեշտ է նշել Վ. Վ. Բարթոլդի կապիտալ ուսումնասիրությունները [24. 25.], Ա. Յու. Յակուբովսկու [245], Ֆ. Ի. Ուսպենսկու [230], Ա. Պ. Տոլստոյի [222], Ա. Ն. Կոնոնովի [127], Ա. Ա. Ռոսլյակովի [207], Ս. Գ. Ագաջանովի [9] հետազոտությունները։ Այս աշխատություններից առանձնապես կցանկանայի նշել Ս. Գ. Ագաջանովի «IX—XIII դարերի Միջին Ասիայի օղուզների և թուրքմենների պատմության ուրվագծեր» մենագրությունը։ Այն գրված է լայն շրջանի սկզբնաղբյուրների խոր և հանգամանալից վերլուծության հիման վրա. օղուզների և թուրքմենների պատմության և ազգագրության հարցերից բացի այնտեղ շոշափված են նաև այնպիսի հարցեր, որոնք կապված են այդ և թյուրքական այլ ցեղերի մի մասի՝ Փոքր Ասիա կատարած գաղթի հետ, ինչպես նաև նրանց հետագա պատմությունը [տե՛ս 9, էջ 46, III, 129, 158—159 և այլն]։

Էթնիկական պատմությունն ուսումնասիրելիս կարևոր նշանակություն ունեն ուսումնասիրվող էթնիկական ընդհանրությանը վերաբերող լեզվախմբի կամ լեզվաընտանիքի համեմատական լեզվաբանության վերաբերյալ եղած հետազոտությունները։ Նախ, լեզուն էթնիկական հիմնական չափանիշներից մեկն է, իսկ երկրորդ, այդ հետազոտությունները հնարավորություն են տալիս առանձնացնել այն յուրահատուկը, որը բնորոշ է հենց տվյալ լեզվին՝ ի տարբերություն նրան ազգակից մյուս լեզուների, այսինքն՝ որոշել ուրիշ լեզուների, մասնավորապես՝ լեզվական հիմնացեղերի ազդեցությունը, ինչպես նաև սահմանել տվյալ լեզվի ելակետային կորիզը, օրինակ՝ այն բարբառը, որը հետագայում գերիշխել է և ընկել ձևավորվող լեզվի հիմքում։ Այդպիսի աշխատությունների թվում առաջին տեղը գրավում են Ն. Ա. Բասկակովի աշխատությունները [26]։ Նշենք նաև Ս. Ս. Մայզելի ուսումնասիրությունը թուրքերին լեզվում եղած արաբական ու պարսկական փոխառությունների մասին [150], Լ. Ա. Պոկրովսկայայի աշխատությունները թյուրքական լեզուների ազգակցական տերմինների մասին [199], Ա. Մ. Շչերբակի աշխատանքները այդ լեզուների կենդանիների անունների մասին [241], Ս. Ե.

Մալովի պատմա-համեմատական ուսումնասիրությունները թյուրքական լեզուների քերականության ու բառապաշարի մասին [152], Է. Վ. Սևորթյանի [209], Ա. Ի. Բոլդանովի [27], Ս. Գ. Կլյաշտորնիի [124] և այլոց աշխատությունները նույն նյութի վերաբերյալ։

Թուրքական և թյուրքական ֆոլկլորի, մասնավորապես՝ էպոսի մասին եղած հետազոտությունների մեջ թուրքերի էթնոգենեզի ուսումնասիրման հետ անմիջական առնչություն ունեն Վ. Ա. Գորդլևսկու [53. 54. 57. 58], Վ. Դ. Սմիռնովի աշխատությունները [211. 212], ինչպես նաև Վ. Վ. Բարթոլդի, Ա. Յու. Յակուբովսկու և Վ. Մ. Ժիրմունսկու ուսումնասիրությունները «Դեդե Քորքուդ» էպոսի մասին [125, հավելվ.], Վ. Ս. Գաբրուզովայի աշխատությունները XIII դարի հենց սկզբին գրի առնված փոքրասիական թյուրքալեզու «Ասք Մելիք Դանիշմենդի մասին» հուշարձանի վերաբերյալ [39]։

Արևմտաեվրոպական հետազոտություններ։ Թուրքիայի պատմության վերաբերյալ արևմտաեվրոպական հեղինակների աշխատություններից, որոնք առնչություն ունեն թուրքերի էթնոգենեզի հարցերի հետ, կարելի է նշել սելջուկյան շրջանին նվիրված հետազոտությունների մի մեծ խումբ։ Դեռ 1848 թվականին հրապարակվել էր ֆրանսիացի գիտնական Մ. Դեֆրեմերիի «Սելջուկյանների պատմություն» հոդվածը [280]։ 1913—1933 թվականներին լույս են տեսնում Ժ. Լոբանի աշխատությունները Ռումի սուլթանաթի մասին [313], սելջուկ թյուրքերի և Բյուզանդիայի հետ նրանց ունեցած փոխհարաբերությունների մասին [314], Դանիշմենդ էմիրների մասին [315]։ Այս աշխատությունները հիմնվում են գլխավորապես բյուզանդական աղբյուրների վրա։ 1932—1952 թվականներին սելջուկյան պատմությանը մեծ ուշադրություն է նվիրում Պ. Վիտտեկը [357. 360]։ Վերլուծելով արևելյան ժամանակագրությունները, նա թուրքերի էթնիկական պատմության առանձին հարցեր ուսումնասիրում է նաև անատոլիական Մենթեշե իշխանապետության մասին իր աշխատության մեջ (XIII—XV դարեր) [358], ինչպես նաև, մասնավորապես, թյուրքական ցեղերի գաղթը Փոքր Ասիա՝ մոնղոլական արշավանքից հետո։ Այս գիրքը գերմաներենից թարգմանվել էր

թուրքերեն և 1944 թվականին հրատարակվել Թուրքիայում [527]։ Նրա հոդվածներից մեկը նվիրված է Անկարայի միջնադարյան պատմությանը [361]։ Փոքր Ասիայի սելջուկ թյուրքերի մասին, Ռումի սուլթանաթի մասին, XI—XIII դարերում Անատոլիայում տեղի ունեցած էթնիկական պրոցեսների մասին, սելջուկյան շրջանի պատմագրության մասին շատ լուրջ և փաստարկված հետազոտություններ պատկանում են ֆրանսիացի արևելագետ Կլոդ Կահենի գրչին [265. 266. 267. 268. 269. 270. 271. 272. 273.]։ Նրա մի հոդվածը ռուսերեն հրապարակվել է «Համաշխարհային կուլտուրայի պատմության բանբեր»-ում [121]։ Այս հեղինակի բոլոր աշխատություններն էլ հիմնված են արևելյան բյուզանդական և այլ սկզբնաղբյուրների մանրազնին ուսումնասիրության վրա։ Յավոք սրտի, նա երբեմն փորձում է իդեալիստորեն բացատրել պատմական որոշ իրադարձություններ։ Այսպես, սելջուկյան շարժման պատճառները, նրա կարծիքով, եղել են այն, որ թյուրքական ցեղերը ընդունել են իսլամը։ Սակայն, հենց ինքն էլ գրում է, որ «թուրքմեններին դրավում էին նոր արոտավայրերը» [269, էջ 8—9]։ Եվ իրոք, սելջուկյան շարժումը պայմանավորված էր այն բանով, որ թյուրքական խոշոր ազնվականական դասը ձգտում էր զավթել նորանոր արոտավայրեր, կողոպտել օտար ժողովուրդների։ Իսկ իսլամը միայն գաղափարախոսական տեսակետից քողարկում էր այդ միանգամայն «նյութական» ձգտումը։

Թուրքերի էթնոգենեզի առաջին էտապին վերաբերող մյուս աշխատություններից նշենք Վ. Ջ. Բրայսի հոդվածը Անատոլիայի թյուրքական գաղութացման մասին [260] և Թամարա Թելբոտ-Ռայսի մենագրությունը փոքրասիական սելջուկների մասին [344], որտեղ հիմնական ուշադրությունը նվիրված է սելջուկյան արվեստի, նրա էթնիկական արմատների վերլուծությանը։ Թ. Թելբոտ-Ռայսի գրքում լավ ցույց են տրված կուլտուրական տարբեր ազդեցությունները սելջուկների վրա, հատկապես տեղական փոքրասիական և հարևան ժողովուրդների դերը սելջուկյան մշակույթի ստեղծման գործում։ Հեղինակը ծագումով ռուս է, և նրա աշխատության մեջ զգացվում է նրա ոչ վատ ծանոթությունը Ռուսաստանի Սելջուկյանների մասին Վ. Ա. Գորդլևսկու ուսումնասիրությանը հետ, սակայն, միշտ չէ, որ բացահայտ մեջբերումներ անգամ կատարելիս, վկայակոչում է այն[4]։

Օսմանյան պետության կազմավորման ժամանակաշրջանին են նվիրված Պ. Վիտտեկի երկու աշխատությունները [356. 359]։

Արժե մեկ անգամ ևս ընդգծել, որ այս բոլոր ուսումնասիրություններն էլ իրրև հիմնական թեմա և խնդիր չեն ունեցել լուսաբանել թուրք ժողովրդի պատմության էթնիկական կողմը և, բնականաբար, թուրքերի էթնոգենեզի հարցերը դրանց մեջ քննության են առնված երկրորդ հերթին, այսպես ասած «գործողության ընթացքին»։

Ավելի ընդհանուր բնույթի աշխատություններից, որոնք նույնպես ունեն նաև առանձին ասպեկտներ և կարևոր են թուրքերի էթնիկական պատմությունը ուսումնասիրելու համար, հարկավոր է հիշատակել Յ. Լեունկլավիուսի «Մուսուլմանական թուրքական պատմությունը», որը հրատարակվել է Մայնի Ֆրանկֆուրտում 1595 թվականին [316], Պ. Ռիկոյի «Թուրքերի պատմությունը» (1687 թվական) [335], Օսմանյան կայսրության պատմության վերաբերյալ Ի. Մ. դ'Օսսոնի [328] և Յ. ֆոն Համմեր-Պուրգշթալի [294] բազմահատոր աշխատությունները, Ջ. Ռեյդի [334], է. Բանզեի [253. 254] գծագրական աշխատությունները, Ֆ. Վ. Հեսլաքի պատմա-ազգագրական ուսումնասիրությունը, որը նվիրված է գլխավորապես Օսմանյան կայսրության էթնիկական ու կրոնական խմբերի դրությանը [295], է. Ս. Կրիզիի «Օսմանյան թուրքերի պատմությունը» [279]։

Թուրքերենի օտարալեզու փոխառությունները և թուրքերենի քերականության ու բառապաշարի մյուս ասպեկտները, որոնց վերլուծությունը լույս է սփռում թուրքերի էթնիկական պատմության վրա, ուսումնասիրված են Գ. Մայերի [322], Վ. Քերեստեջյանի [307], Ա. Տիտցեի [345. 346] աշխատություններում։ Հունական ազդեցությունը թուրքական առաս-

[4] Օրինակ, Թ. Թելբոտ-Ռայսի աշխատության [344] 90-րդ էջը և Վ. Ա. Գորդլևսկու աշխատության [49] 160-րդ էջը, որտեղ քննության է առնված սելջուկյան իշխան կայսարշահի անվան ծագումը։

պելների և էպիկական ստեղծագործությունների վրա նշված է Կ. Բիտոելի [259], Ֆ. վ. Հեսլոքի [296], Հ. էթեի [285], Ս. Գ. Կիրյակիդեսի կողմից [309]։ Թուրքական նացիոնալիզմի պատմության առանձին հարցերը, որոնք կապված են անմիջականորեն թուրքական բուժուական ազգի կազմավորման հետ, ուսումնասիրել է Ֆ. Թաչաուն [342. 343]։ Այս հետինակի արժանիքն այն է, որ որոշակի սահմանագատում է դնում երիտասարդ թուրքերի պանթյուրքիզմի և քեմալականների նացիոնալիզմի միջև։

Արտասահմանյան գրականության մեջ կա երկու հոդված, որոնց վերնագրերից դատելով, կարելի կլիներ ենթադրել, թե դրանք հենց վերաբերում են թուրքերի ծագման թեմային, ավելի ճիշտ՝ թուրք ազգի կազմավորման հարցին։ Դրանցից առաջինը Դ. Բյուռնուֆի «Թուրք ազգի ձևավորումը և նրա հայրենասիրության բնույթը» հոդվածն է, որը հրապարակվել է ֆրանսիական ազգա-հոգեբանական հանդեսում [263], և «Թուրք ազգի ծնունդը» ընդհանուր բնույթի հոդվածը իսրայելական «Նյու աութլուկ» հանդեսում [258]։ Սակայն այս երկու հոդվածները շարադրում են ոչ թե թուրք ազգի ձևավորումը որպես էթնիկական պրոցես, այլ թուրքական պետականության ստեղծումը, Թուրքական հանրապետության կազմավորման պատմությունը։ Դ. Բյուռնուֆի հոդվածը պարունակում է նաև հին թյուրքերի պատմության հայտնի փաստերի համառոտ շարադրանքը, որը ոչ մի նոր բան չի ասում թյուրքագիտության մեջ։ Լուրջ առարկություն է առաջացնում այն, որ հեղինակը կամա թե ակամա թուրքերին պատկերում է որպես թյուրքական պատմության միակ շարունակողների, անտեսելով մյուս թյուրքալեզու ժողովուրդների պատմությունը միջնադարից հետո։

Թուրքական ուսումնասիրություններ[5]։ Թուրքերի էթնոգե-

[5] Սովետական և արևմտաեվրոպական գրականության մեջ կան մի շարք աշխատություններ, որոնք նվիրված են ինչպես թուրքական ազգագրագիտության պատմությանը ընդհանրապես [82. 305], այնպես էլ թուրքական ծագումնաբանական հետազոտություններին, դրանց պատմությանը, մեթոդոլոգիային, դրանց հեղինակների գաղափարախոսական դիրքերին [79]։

նեզի, նրանց էթնիկական պատմության մասին, ինչպես նաև այդ պրոբլեմատիկայի հետ սերտորեն կապված մյուս հարցերի մասին ամենից ավելի մեծ թվով աշխատություններ կան, և դա միանգամայն հասկանալի է, թուրքական պատմական գրականության մեջ։ Ուստի անհրաժեշտ է ավելի մանրամասն կանգ առնել սույն ուսումնասիրության թեմային վերաբերող արտասահմանյան գրականության այս բաժնի վրա։

Օսմանյան կայսրության վերելքի ժամանակաշրջանում (XV—XVI դարեր) թուրք պատմագիրները սկսել էին որոշ հետաքրքրություն ցուցաբերել օսմանյան թուրքերի ծագման նկատմամբ։ Նրանց երկերում շարադրված են թյուրքական, գլխավորապես սելջուկյան, այսինքն՝ օղուզա-թուրքմենական ցեղերի տոհմա-ցեղային կառուցվածքները, նրանց սովորութաբական իրավունքը, էթնիկական պատմության առանձին գծերը։ Դրա համար որպես հիմնական աղբյուր են ծառայել օղուզական ավանդապատումները, որոնց նկատմամբ այն ժամանակվա թուրք պատմիչները վերաբերվում էին, իհարկե, բոլորովին անքննադատաբար։ Հաճախ նրանք նման որոնումներ կատարում էին միայն մեկ նպատակով՝ ապացուցել օսմանյան սուլթանների իշխանության օրինականությունը։ Հենց XV դարի թուրքական պատմական աշխատություններում է, որ երևան է գալիս օղուզական կայը ցեղից օսմանլը ցեղի ծագման վերսկան, որը և սկիզբ դրեց օսմանյան պետականությանը (ինչպես նաև իրենց՝ օսմանական սուլթաններին)։ Հետագայում, ընդհուպ մինչև XX դարի սկիզբը, օսմանյան պատմագրությունը գրեթե չի հետաքրքրվում թուրքերի ծագումով, ամբողջ թուրքական պատմությունը հանգեցնելով այն բանին, թե ինչպես օսմանլը ցեղից ծագեց օսմանյան տերության, սուլթանական դինաստիայի հետ կապված իրադարձությունները վերապատմելուն, նվաճումները և քաղաքական պատմության մյուս փաստերը նկարագրելուն։ Թուրք պատմաբանների անտարբերությունը դեպի թուրքերի էթնիկական պատմությունը բխում էր նաև կայսրությունում տիրապետող իսլամի գաղափարախոսությունից, որի համար էթնիկական և ազգային տարբերությունները էական դեր չէին

խաղում, այլ գլխավորը կրոնական պատկանելությունն էր, բոլոր ժողովուրդների բաժանումը մուսուլմանների և ոչ-մուսուլմանների:

Թուրքերի ծագման պրոբլեմի նկատմամբ բավական մեծ հետաքրքրությունը վերսկսին Թուրքիայում արթնացավ ազգային ինքնագիտակցության առաջին սաղմերի հետ միասին միայն: Որքան ավելի էր զարգանում թուրքական նացիոնալիզմը, այնքան թուրք պատմաբանների ու ազդագրագետների շրջանում ավելի էր աճում այդ հետաքրքրությունը: Թուրքական հանրապետության կազմավորումից հետո ապրելով որոշ վերելք, թուրքական պատմական գիտությունը թուրքերի էթնոգենեզի հարցերում չի կարողացել խուսափել աճման հիվանդություններից, որը արտահայտվել է ծագումնաբանական չհիմնավորված կոնցեպցիաների ծագման, անարդարացի հիպոթեզների առաջքաշման մեջ և այլն: Վերջին ժամանակներս, սակայն, նկատելի է դարձել, որ նրանք դադարում են ավելորդ կերպով հավճեպ հետևություններով ոգևորվելուց և սկսում են ավելի օբյեկտիվ մոտեցում հանդես բերել թուրքերի էթնոգենեզի պրոբլեմին: Որպեսզի կարողանանք ավելի պարզ պատկերացում կազմել այն մասին, թե ինչ ուղիներով է զարգացել թուրքական ծագումնաբանական դրպրոցը, անհրաժեշտ է համառոտակի բնութագրել նրա պատմությունը:

1919—1920 թվականներին օտարերկրյա իմպերիալիզմի դեմ և ազգային անկախության համար մղված պայքարի պայմաններում Թուրքիայում ծնունդ առավ գաղափարախոսական մի հոսանք՝ քեմալականությունը: Քեմալականությունը արտահայտում էր թուրքական ազգային բուրժուազիայի շահերը: Օտարերկրյա ինտերվենտների նկատմամբ տարած հաղթանակից հետո քեմալականները իրենց հիմնական խնդիրն էին համարում ստեղծել ազգային միասնական պետություն՝ թուրքական բուրժուական հանրապետություն: Թուրք գիտնականների առջև խնդիր դրվեց՝ գիտականորեն հիմնավորել թուրքերի իրավունքը Փոքր Ասիայի տերիտորիայի նկատմամբ, մասնավորապես ապացուցել, որ անատոլիական թուրքերը ունեն տեղական ծագում:

Պատահական չէր, որ քեմալականները սկսեցին հրապուրվել պատմությամբ. նրանք հետապնդում էին քաղաքական որոշակի նպատակներ: Թուրք պատմաբան է. Աքսուրքալը գրում է, որ այն ուժերը, որոնք 1919—1922 թվականներին հույն ինտերվենտներին մղեցին զավթելու թուրքական հողերը Անատոլիայում, ապրեսիան արդարացնելու նպատակով դիմեցին պատմության հակագիտական մեկնաբանման: Նրանք հայտարարում էին, թե Արևմտյան Անատոլիան պետք է պատկանի Հունաստանին, քանի որ հին ժամանակներում այնտեղ գոյություն է ունեցել հունական քաղաքակրթություն: Իտալական իմպերիալիզմը ևս պահանջներ էր ներկայացնում Փոքր Ասիայի տերիտորիայի, հատկապես Միջերկրական ծովափի նկատմամբ: 1919—1921 թվականներին իտալական զորքերը օկուպացրել էին Հարավային Անատոլիան: Իտալական ֆաշիստները, Միջերկրական ծովը դիտելով որպես «Իտալիայի ներքին ծով» (Մարե նոստրա), նույնպես վկայակոչում էին այն վաղ պատմական ժամանակները, երբ Անատոլիան մտնում էր Հռոմեական կայսրության կազմի մեջ: Քեմալ Աթաթյուրքը և քեմալականները դատապարտում էին պատմության նման օգտագործումը զավթողական նպատակներով, իսկ այդպիսի չարաշահումների հնարավորությունը վերացնելու համար թուրք գիտնականներին կոչ էին անում ժամանակակից թուրքերի նախնիներին որոնել Թուրքիայի տերիտորիայի հնագույն բնակիչների, օրինակ՝ խեթերի մեջ [368, էջ 583]:

Այդ կոնցեպցիան դրվեց թուրքերի էթնոգենեզի վերաբերյալ թուրք հեղինակների շատ աշխատությունների հիմքում: Անհրաժեշտ է միանգամից վերապահում անել, որ թուրք ժողովրդի բնիկ ցեղ լինելու մասին թեզիսի մեջ ճշմարտության բաժին կա: Իրոք, ժամանակակից թուրքերը Փոքր Ասիայի բոլոր այն ժողովուրդների ժառանգորդներն ու նրանց պատմության շարունակողներն են, որոնք բնակվում էին այնտեղ դեռ մինչև թյուրքական ցեղերի այստեղ գալը և հետագայում մտան թուրք ժողովրդի և ազգի կազմի մեջ: Թուրքերը որոշ չափով նաև Փոքր Ասիայի հին բնակչության ժառանգորդներն են, համենայն դեպս, մարդաբանական տեսակետից թուրքերը

մոտ են կանգնած Անատոլիայի հին բնակիչներին, գրեթե անփոփոխ կերպով պահպանելով նրանց ֆիզիկական տիպերը։ Ամենաբնորոշ գծերով այդ բանի վրա ուշադրություն է դարձրել դեռ ռուս մարդաբան Ա. Վ. Ելիսեևը, որը գրել է Փոքր Ասիայի բնակիչների հին պատկերների հետ թուրքերի ունեցած նմանության մասին [77, էջ 1]։ Թուրքերը որոշ չափով յուրացրել են նաև Անատոլիայի ժողովուրդների հին մշակույթը։ Աղգագրագետներն ու լեզվաբանները թուրք ազգի մեջ դնալով ավելի շատ են հայտնաբերում ազգագրական ու լեզվական այնպիսի առանձնահատկություններ, որոնք գալիս են Փոքր Ասիայի հին, այժմ անհետացած (խեթ, փռյուգիացի և ուրիշ) և մինչև մեր օրերը պահպանված (հայ, քուրդ, վրացի, հույն և այլն) ժողովուրդներից։

Թուրք գիտնականները սակայն այլևս չուսումնասիրեցին, թե Փոքր Ասիայի էթնիկական հին ընդհանրություններից ո՛ր տարրերը և ինչպե՛ս մտան թուրք ժողովրդի կազմի մեջ։ Նրանք ընդունեցին արմատապես սխալ ուղի. որոշեցին ապացուցել, թե թուրքերը որպես էթնիկական ընդհանրություն իրրև ընտիրներ ապրել են Անատոլիայում համենայն դեպս նոր քարե դարի (նեոլիթի) ժամանակներից։

Առաջին նման փորձերը կատարեցին թուրք մարդաբանները։ Ըստ որում նրանց տեսությունները ինքնօրինակ չէին։ Ինչպես նշում է Տ. Ա. Տրոֆիմովան, թուրք հեղինակների ծագումնաբանական կառուցվածքներում օգտագործվել են բուրժուական գիտության զանազան հակագիտական ուղղությունների հետևությունները, որոնք էկլեկտիկ կերպով միաձուլված են մեկ ամբողջության մեջ։ Այսպես, մի կողմից նրանք հենվում էին Ֆրանսիացի մի քանի մարդաբանների գաղափարների վրա, որոնք նեոլիթյան ու ավելի ուշ շրջանի մշակույթի տարածումը Եվրոպայում կապում էին կարճագլուխ (բրախիկեֆալ) ալպիական ռասայի հետ, որը իբր դուրս է եկել Կենտրոնական Ասիայից, մյուս կողմից նրանք վերցնում էին անգլիացի առանձին հեղինակների, մասնավորապես՝ Լ. Սմիթի ասույթները հին ալպիացիների Բյուրքալեզու լինելու մասին [224, էջ 247]։

Թուրքերի էթնոգենեզի այն կոնցեպցիան, որի հիմքում

դրված են արևմտյան գիտնականների այդ հետևությունները, առաջին անգամ շարադրվել է պատմաբանների թուրքական առաջին համագումարում Ռաշիդ Դալիբի, Աֆեթ Ինանի և Շ. Ա. Կանտուի կարդացած զեկուցումներում [506]։ Այդ կոնցեպցիայի հիմնական միտքը հետևյալն է. համաշխարհային կուլտուրայի օրրանը եղել է Միջին Ասիան («Միջին Ասիա» աշխարհագրական հասկացության մեջ Աֆեթ Ինանը մտցնում է նաև Ալթայը և Պամիրը [506, էջ 30]), Թյուրքերը որպես կուլտուրական ռասա այստեղ հայտնվել են մեր թվակ. առաջ IX հազարամյակում. դա եղել է «սպիտակ» (այսինքն՝ եվրոպոիդ) և կարճագլուխ ռասա, որը մեզոլիթի (միջին քարե դարի) շրջանում, և գլխավորապես նեոլիթի շրջանում, դուրս է մղել դոլիխոկեֆալ (երկարագլուխ) պակաս կուլտուրական ռասային. հաղթողները խոսում էին միասնական լեզվով (Ա. Ինանի բնորոշմամբ, Թյուրքական տարբեր լեզուները կամ բարբառները ծագել են ավելի ուշ). ավելի ճիշտ կլինի այդ ռասան անվանել «Թյուրքական», այլ ոչ թե թուրանական կամ ուրալա-ալթայան. Միջին Ասիայից այդ ռասան ցրվեց տարբեր ուղղություններով՝ հենց նա էր, որ բարձր կուլտուրան Եհրից Իրան, Հնդկաստան, Փոքր Ասիա և Եվրոպա. այդ ռասայի ճյուղերից մեկն էլ խեթերն էին, որոնք բնակություն հաստատեցին Անատոլիայում[6]։

Իրենց երկրորդ համագումարում (1937 թվական) թուրք պատմաբանները ներկայացրին նաև ինքնօրինակ հետազոտություններ։ Բայց նրանց մեթոդոլոգիան և հետևությունները մնացին նախկինը. անխզելիորեն կապվում էին միմյանց հետ ռասան և լեզուն, Թուրք էին հայտարարվում Փոքր Ասիայի բոլոր հնագույն ժողովուրդները։ Օրինակ, Մ. Ս. Էնգինը, համադրելով խեթական և հունական պանթեոնները, ելնում էր

---

[6] Անատոլիայի թուրքերին բնիկներ համարելու կողմնակից թուրք գիտնականները Արևմտյան Ասիայի մեկ ուրիշ հին ժողովրդի՝ շումերներին ևս համարում են թյուրքեր։ Այս հարցում ևս նրանք ինքնօրինակ չեն. նրանք զարգացրել են գերմանացի հետազոտող Ֆ. Հոմմելի անհիմն հիպոթեզը թյուրքական լեզուների և շումերերենի ազգակցության մասին, որ նա առաջ է քաշել շումերներեն և թյուրքերեն մի քանի բառերի հնչյունական համադրման հիման վրա միայն [297, էջ 21]։

այսպիսի մի նախադրյալից. Անատոլիան սկսել էր թուրքական հայրենիք դառնալ պալեոլիթից հետո, էնեոլիթի և բրոնզի դարաշրջանում այդ պրոցեսը ուժեղացավ, իսկ մինչսկյութական դարաշրջանում տեղի ունեցավ Անատոլիայի համատարած թուրքացումը [415, էջ 775]։ Նա անդամ շրջանառության մեջ մտցրեց նոր բնորոշում՝ «խեթական թուրքեր» «խեթ թուրքեր» (էթի թյուրքլերի) [416, էջ 780]։ Ռ. Օ. Արրը իր զեկուցման մեջ կոչ արեց նախախեթերի նախորդներին որոնել Կենտրոնական Ասիայում [377, էջ 874]։ Շ. Ա. Կանսուն սելջուկ թյուրքերի կամախների մարդաբանական հետազոտության մասին կարդացած զեկուցման մեջ նույնպես փորձեց ապացուցել, թե Փոքր Ասիան թյուրքերով բնակեցված է եղել դեռ հնագույն ժամանակներում [488]։ Ելնելով այն բանից, որ սելջուկները եղել են կարճագլուխ, այսինքն, նրա կարծիքով, ալպիական ռասայի ներկայացուցիչներ, և որ ալպիական ռասան Անատոլիայում տարածվել է դեռ նախապատմական ժամանակներում՝ Միջին Ասիայի տերիտորիայից, նա ենթադրություն արեց, թե սելջուկները պատմական ժամանակաշրջանում արդեն միայն կրկնեցին այն ուղին, որ նրանցից առաջ անցել էին «ալպիացիները», այսինքն՝ նախաթուրքերը։

Հարկավոր է նշել, որ թուրքերի՝ ալպիական ռասային պատկանելու հիպոթեզը պատմաբանների թուրքական II համագումարում խիստ քննադատեց ֆրանսիացի մարդաբան Ա. Վ. Վալլուան։ «Շ. Ա. Կանսուն և ուրիշները,— ասաց նա,— Անատոլիայի ժամանակակից բնակչությանը կապում են Միջին Եվրոպայի ալպիական տիպի հետ, բայց ես պատճառ չեմ գտնում այդքան հեռու գնալու համար։ Իրոք, Արևմտյան Ասիայի բոլոր կարճագլուխները ունեն ավելի բարձր հասակ, ավելի բարձր դեմք և ավելի բարձր գլուխ, քան «ալպիացիները»։ Նա ընդգծեց, որ չի կարելի նման հետևությունները հիմնավորել միայն կարճագլխությամբ, քանի որ, օրինակ, կարճագլուխներ են միմյանցից այնքան հեռու կանգնած խմբեր, ինչպիսիք են մոնղոլոիդ ռասան և եվրոպոիդ ռասայի ալպիական տիպը [516, էջ 478—479]։

Թուրքերի ծագումը իրր Կենտրոնական Ասիայից եկած

կարճագլուխների ալպիական ռասայի հետ կապելու տենդենցը բնորոշ է նաև թուրք մարդաբանների ավելի ուշ շրջանի աշխատություններին համար։ Թուրք պատմաբանների III համագումարում (1943 թվական) այդ գիծը նկատվում էր Անատոլիայի հնէամարդաբանության մասին Մ. Ս. Շենյուրեկի զեկուցման մեջ [493, էջ 212] և համաշխարհային քաղաքակրթության զարգացման գործում Անատոլիայի կատարած դերի մասին Շ. Ա. Կանսուի զեկուցման մեջ (վերջին զեկուցման հիմնական թեզիսը հետևյալն է. նախաթուրքերը Անատոլիայում երևացել են էնեոլիթի և պղնձի դարաշրջանում. դրանք կարճագլուխ խեթերն էին. հետագա բոլոր զանգվածային գաղթերը դեպի Փոքր Ասիա բարձրացրել են կարճագլուխ բնակչության տոկոսը. երկաթի դարում կարճագլուխները կազմում էին խեթերի 50 տոկոսը) [447, էջ 313]։

1947 թվականին Թուրքիայում հրատարակվեց Աֆեթ Ինանի «Թուրքիայի ժողովրդի մարդաբանական գծերը և Թուրքիայի պատմությունը» գիրքը [439]։ Աշխատության մեջ հավաքված է վիճելարի փաստական նյութ՝ 64 հազար մարդու մարդաբանական հետազոտության արդյունքները. այդ հետազոտությունը կատարվել է առողջապահության, լուսավորության և պաշտպանության մինիստրությունների աջակցությամբ։ Սակայն, հետազոտության հիմնական թերությունն այն էր, որ այս կամ այն շրջանի բոլոր բնակիչները հետազոտվել են առանց նրանց ազգային պատկանելությունը հաշվի առնելու։ Անկետավորման ժամանակ Թուրքիան բաժանված է եղել 10 շրջանի, բայց այդ բաժանումը կատարվել է մեխանիկորեն, առանց հաշվի առնելու ազգային փոքրամասնությունների և ազգագրական խմբերի բնակության շրջանները։ Գրքի հեղինակը գրում է, որ այդ բանն արվել է գիտակցաբար, որպեսզի ցույց տրվի Թուրքիայի բնակչության ռասայական միասնությունը [439, էջ 182]։ Այլ կերպ ասած, հետազոտության են ենթարկվել ոչ միայն թուրքերը (իսկ որոշ շրջաններում, որտեղ գերակշռում են ազգային փոքրամասնությունները, ոչ այնքան թուրքերը), այլ Թուրքիայի ամբողջ բազմազգ բնակչությունը՝ և՛ քրդերը, և՛ լազերը, և՛ աբխազները, և՛ վրացիները և այլն։ Դա, իհարկե, էթնիկական

մարդաբանության համար միանգամայն արժեզրկում է նույնիսկ գրքում զետեղված ամենաընդարձակ աղյուսակների փաստական նյութը, չխոսելով արդեն այդպիսի հետազոտության արդյունքների մասին:

Ա. Ինանի հետևությունը նոր չէ. Թուրքերը, նրա կարծիքով, պատկանում են ալպիական ռասային՝ դինարականի խառնուրդով: Անկեփ ավյալները, գլխավորապես կարճագլխությունը, հեղինակը համադրել է բրածո գանդերի ցուցանակի հետ: Զարդացնելով շվեյցարացի մարդաբան է. Պիտարի հիպոթեզը այն մասին, թե կարճագլուխ կուլտուրական ժողովուրդները Եվրոպա են եկել Արևմտյան Ասիայից [332], նա հայտարարել է, որ «կարճագլուխների բարձր կուլտուրա ունեցող ռասան» Անատոլիայի վրայով Եվրոպա է եկել Միջին և Կենտրոնական Ասիայից: Սկսած պղնձի դարից, գրում է Ա. Ինանը, Թուրքիայում բնակվող ժողովուրդը ունի մարդաբանական միատեսակ գծեր, և նրա առանձին խմբեր Միջին Ասիայից եկել են տարբեր ժամանակ: Մոնղոլներից բացի, ավելի ուշ շրջանի եկվորները (սելջուկները, օսմանցիները) ռասայի տեսակետից Փոքր Ասիայի հին հունական գաղութների բնակիչների եղբայրներն են [439, էջ 56, 59—60]:

Այս բոլոր հետևությունները էլ սնանկ են, քանի որ, նախ, Միջին Ասիայում, ինչպես և Անատոլիայում, հնագույն բնակչության մարդաբանական տիպը բնութագրվում է գանգի երկար ձևով, իսկ ժամանակակից միջինասիական տիպը տարբերվում է փոքրասիականից [188. 189. 225, էջ 478—528]. երկրորդ, սելջուկ թյուրքերը և օսմանցի թուրքերը, խիստ ասած «Միջին Ասիայից եկվորներ» չեն: Օսմանյան թուրքերը որպես էթնիկական ամբողջություն ձևավորվել են բուն Անատոլիայում, իսկ սելջուկ թյուրքերը (հատկապես նրանց արևմտյան, փոքրասիական ճյուղը) իրենց մեջ ներառել են Արևմտյան Ասիայի էթնիկական շատ բաղադրամասեր:

Խեթերի և թուրքերի մարդաբանական տվյալների համադրման հիման վրա Ա. Ինանը փորձում էր ապացուցել նաև խեթական կուլտուրայի թյուրքական ծագումը, մի բան, որ արմատապես սխալ է, քանի որ ռասայի և կուլտուրայի միջև ոչ մի օրինաչափ կապ չկա: Նա ձգտում էր նույնիսկ խեթական կուլտուրայի մեջ գտնել թուրքական ազգագրական զուգահեռներ, օրինակ, խեթական աշխարհագրական զարդանկարների և թուրքական գորգերի զարդանկարների նմանությունը [439, էջ 42], չդիտես ինչու բացառելով կուլտուրայի տարրերի հասարակ ժառանգորդության հնարավորությունը, որ և տեղի է ունեցել տվյալ դեպքում: (Բնականաբար, թուրքերը այդ տարրերը վերցրել են ոչ թե անմիջականորեն խեթերից, որոնք անհետացել էին առաջին թյուրքական ցեղերի՝ Փոքր Ասիայում երևալուց դեռ շատ առաջ, այլ փոքրասիական մյուս ժողովուրդների՝ հայերի, վրացիների, քրդերի միջոցով, որոնց նախնիները իրենց հերթին այդ տարրերը վերցրել էին խեթերից):

Այսպիսով, հսկայական փաստական նյութը Ա. Ինանի գրքում արժեզրկվել է ոչ գիտական մեկնաբանման պատճառով: Նա փորձում էր ապացուցել, թե թուրքերը կամ նրանց ազգակից ժողովուրդները Անատոլիայում ապրում էին մինչև թյուրքական ցեղերի հայտնվելը այնտեղ և թե ներկայիս Թուրքիայում ազգային փոքրամասնություններ չկան: Մարդաբանական ընդհանրությունը հեղինակը շփոթում է էթնիկականի հետ: Անատոլիայի նախկին և ներկայիս բնակիչների մարդաբանական գծերի նմանությունը նա բացատրում է ոչ թե այն բանով, որ եկվոր թյուրքերը, խառնվելով տեղական, ամենևին ոչ թյուրքական բնակչությանը և թյուրքացնելով նրան լեզվի տեսակետից և, ավելի սակաս չափով, նաև կուլտուրայի տեսակետից, գրեթե չեն ազդել նրա մարդաբանական տիպի վրա, այլ այն բանով, որ թուրքերին մոտ ազգակից ժողովուրդները ժամանակակից Թուրքիայի տերիտորիայում ապրել են դարերից ի վեր: Այս բոլոր պնդումները հակասում են պատմական փաստերին:

Ընդհանրապես, թուրք մարդաբանների մեթոդոլոգիական հիմնական սխալն այն էր, որ նրանք որոշել էին գտնել գոյություն չունեցող «թուրքական» կամ «թյուրքական» ռասա[7],

---

[7] «Թյուրք» բառը թուրքերեն ունի «թուրք» և «թյուրք» նշանակությունը (գոյական անուն), և «թուրքական» ու «թյուրքական» նշանակությունը (ածական անուն): Լեզվի «թյուրքչի» անվանումը ևս նշանակում

լեզվական ազգակցությունը սխալ կերպով կապելով ռասայականի հետ։ Ըստ որում, որպես «թուրքական ռասայի» գլխավոր հատկանիշ նրանք հայտարարեցին կարճագլխությունը։ Կարճագլխային տարրերի երևան գալը որևէ տեղում նրանց կողմից բացատրվում էր որպես «թուրքական» մարդաբանական տիպի և համապատասխանորեն նաև թուրքական էթնոսի ներթափանցում և տարածում։ Այսպես, օրինակ, հենվելով այն բանի վրա, որ Ալաջա-Հյոյուքի, Էսքիշեհիրի, Տրոյայի և կուլտուրական մյուս հին կենտրոնների դամբանատեղերում երկայնագանդ տիպերը աստիճանաբար փոխարինվում են կարճագանդ տիպերով, և այդ փաստերը բացատրելով այն բանով, որ կարճագլուխ տարրերը դուրս են մղել երկարագլուխ տարրերին, թուրք գիտնականները գտնում են, որ կարճագլուխ խեթերը (նրանց կարծիքով՝ նախաթուրքերը) չուրս են մղել Անատոլիայի նախկին երկայնագլուխ բնակիչներին [տե՛ս 449, էջ 190—195. 495, էջ 299. 494, էջ 1—10]։

Այս թեզիսը ամենից ավելի հստակ կերպով ձևակերպված է Մ. Ս. Շենյուրեկի աշխատություններում։ Ուսումնասիրելով Տրոյայի, Բաբաքյոյի, Քուսուրայի (Արևմտյան Անատոլիա), Ախլաթլը-բելի, Ալաջա-Հյոյուքի, Ալիշարի (Կենտրոնական Անատոլիա), Դյունդերթեփեի (Հյուսիսային Անատոլիա), Արելանթեփեի (Հարավ-Արևելյան Անատոլիա), Թիլքիթեփեի (Վանա լճի շրջան, Արևելյան Անատոլիա) պեղումների նյութը, նա գալիս է այն եզրակացության, թե էնեոլիթի ժամանակ և պղնձի դարում Անատոլիայի բնակչության մեծամասնությունը կազմում էին երկայնագլուխներ, իսկ փոքրամասնությունը՝ կարճագլուխներ։ Այդ ժամանակաշրջանների Անատոլիայի բնակչությունը նա բաժանում է մարդաբանական երեք տիպի. երկայնագլուխների երկու տիպ (միջերկրածովյան և եվրաֆրիկական) ու կարճագլուխների մեկ տիպ (ալպիական)։ Մ. Ս. Շենյուրեկը վերջին տիպը կապում է ավելի ուշ շրջա-

---

է «թուրքերեն լեզու» և «թյուրքերեն լեզու»։ Երբեմն միայն ճշգրտման համար օգտագործվում են «Թյուրքիյե թյուրքլերի» տերմինը, այսինքն՝ «Թուրքիայի թյուրքեր», որը հավասարազոր է «թուրքեր» հասկացությանը, և «Թյուրքիյե թյուրքչեսի» տերմինը, այսինքն՝ «Թուրքիայի թուրքերենը» կամ, այլ կերպ ասած «թուրքերեն լեզու»։

նի եկվոր նվաճողների, այսինքն՝ խեթերի հետ։ Հին ժամանակների անատոլիական բնակչության աստիճանական կարճագլխայնացումը նա բացատրում է բացառապես խեթերի տարածմամբ։ Ճիշտ է, այդ աշխատություններում Մ. Ս. Շենյուրեկը ոչ մի տեղ չի ընդգծում, թե խեթերին հարկավոր է դիտել որպես անմիջական նախաթուրքեր [340, էջ 55. 341, էջ 614]։

Փաստական նյութից դատելով, հին Արևմտյան Ասիայի բնակչությունը իրոք ապրել է կարճագլխայնացման պրոցես [354, էջ 181]։ Բայց երբ որոշակի տերիտորիայում երկայնագլուխ տիպերին փոխարինելու են գալիս կարճագլուխ տիպերը, ապա դա ամենևին չի վկայում, թե տեղի է ունեցել այն տիպերը կրողների գաղթ և տարածում։ Բնակչության կարճագլխայնացումը կարող է տեղի ունենալ առանց դրսի երկայնագլուխ տիպերի առհոսքի, ինքնաբերաբար։ Ուստի համոզիչ չեն գաղթի մասին Շենյուրեկի հիպոթեզները, որոնք կառուցված են այն հիմքի վրա, թե երկայնագանգերին հաջորդել են կարճագանգերը։

Այնուամենայնիվ, չնայած սխալ հետևություններին, որոնք պայմանավորված են խեթերի և Փոքր Ասիայի մյուս հին ժողովուրդների մեջ ամեն գնով թյուրքական էթնիկական ընդհանրություններ տեսնելու ձգտումով, բրածո գանգերի և կմախքների վերաբերյալ թուրք շատ մարդաբանների աշխատությունները իրենց փաստական նյութով որոշ հետաքրքրություն ներկայացնում են ուսումնասիրողների համար, հատկապես նրանց համար, ովքեր զբաղվում են Փոքր Ասիայի և հարևան երկրների ժողովուրդների ծագման ուսումնասիրությամբ։ Խնդիրն այն է, որ անհրաժեշտ է ճիշտ գնահատել ու մեկնաբանել այդ նյութը։

Թուրք հնագետները թուրքական (թյուրքական) քաղաքակրթության ծագումը կապել են ներկված խեցեգործության կուլտուրաների զարգացման հետ։ Նրանք ենթադրում են, որ այդ կուլտուրաները Չինաստանի, Հնդկաստանի, Արևմտյան Ասիայի, Եվրոպայի և Աֆրիկայի վրա տարածվել են Միջին Ասիայից (Անաուի կուլտուրան) [472. 431. 483]։ Այս հետևությունը նրանք արել են Անաուում և կուլտուրական մյուս

հին կենտրոններում (Տրոյա, Սուզա, Մախենջո-Դարո և այլն) գտնված առարկաների նկարների առանձին մոտիվների ու ձևերի կրկնության հիման վրա։ Բայց այդ նմանությունը կարելի է բացատրել նաև կուլտուրաների փոխադրեցությամբ։ Մանավանդ, որ փաստերը հաստատում են հենց Միջերկրական ծովի ավազանի, Արևմտյան Ասիայի և Հնդկաստանի զարգացած քաղաքակրթությունների գերակշիռ ազդեցությունը Միջին Ասիայի կուլտուրայի վրա, այլ ոչ թե հակառակը։ Իսկ ամենազգխավորն այն է, որ Անաուի կուլտուրան ծագման էր հասել իրանալեզու բնակչության ժամանակաշրջանում՝ թյուրքերի այնտեղ հայտնվելուց զգալիորեն ավելի առաջ։ Այդ կուլտուրան, որ թուրք հնագետները փորձում են ներկայացնել որպես թյուրքական, իրականում իրանական է, այլ ոչ թե թյուրքական, այսինքն՝ այդ հիպոթեզի թուրք հեղինակների կառուցումների ելակետը բոլորովին չի դիմանում քննադատության։ Ուստի բնական է, որ թուրք հնագետների աշխատություններում զարձյալ գիտական հետաքրքրություն են ներկայացնում լոկ պեղումների նյութերը, այլ ոչ թե նրանց մեկնաբանումը, հատկապես թուրքերի էթնոգենեզի պրոբլեմի կապակցությամբ։ Իսկ հնագիտական հետազոտություններ Թուրքիայում կատարվում են բավական լայն չափերով, և դրանց արդյունքները աշխարհով մեկ հայտնի են (օրինակ, խեթերի նախկին մայրաքաղաք Ալաջա-Հյոյուքի, Չաթալ-Հյոյուքի և այլ տեղերի պեղումները)։

Թուրք լեզվաբանները ստեղծել են լեզվի ծագման իրենց հիպոթեզը՝ այսպես կոչված արևային տեսությունը։ Դրա էությունը հետևյալն է. ելնելով այն բանից, որ կրոնական առաջին պաշտամունքը եղել է արևի, լույսի պաշտամունքը և որ մարդկային խոսքի ամենահասարակ հնչյունը ա-ն է, թուրք լեզվաբանները թուրքերեն աf (լույս, սպիտակ) բառը հայտարարեցին աշխարհի բոլոր լեզուների ամենասկզբնական բառը։ Նրանց կարծիքով, այդ «նախահնչյունից» էլ առաջացել են բոլոր մյուս հնչյուններն ու հնչյունային կապակցությունները, որոնք ցույց են տալիս զանազան հասկացություններ։ Օրինակ, աr (արիացի) բառը ծագել է աf և աr բառերի կապակցությունից (աr բառը համադրվում է թուրքերեն էր-

տղամարդ, այր բառի հետ)[8]։ Այս բանը «արևային տեսության» ստեղծողներին առիթ տվեց արիացիներին կապելու թուրքերի հետ, արիական կուլտուրան՝ թուրքականի հետ և արիացիների նախահայրենիքը փոխադրելու Միջին Ասիա [409, էջ 86, 90]։ Նման աշխատություններ, ցավոք, բավական շատ երևացին թուրքական լեզվաբանության մեջ[9]։

Ընդհանրապես, թուրք լեզվաբանները, հաճախ հիմնվելով միայն հնչյունական առնմանումների վրա, հեռու գնացող եզրակացություններ են անում թուրքերենի հետ տարբեր լեզուների ազգակցության վերաբերյալ, փորձում են ապացուցել աշխարհի շատ ժողովուրդների թյուրքական ծագումը։ Ի. Հ. Իզմիրլին իր «Թյուրքական կուլտուրայի հետքեր Արաբական թերակղզում իսլամից առաջ» աշխատության մեջ արաբերեն «էվ», «խաղրեջ և «խուզաա» ցեղանունները հավասարեցնում է թյուրքական «ուս», «խազար» և «ուզ» անուններին և բացառապես այդ հիման վրա թյուրքական կուլտուրայի դծեր է որոնում արաբական հին ցեղերի մեջ [441]։ Ա. Լ. Մանսելը աթայացիներին համարում է Միջին Ասիայից եկած թյուրքական ամենահին ցեղը, որը մեր թվակ. առաջ երկրորդ հազարամյակում Անատոլիայի վրայով եկել է Հունաստան, այդ հետևությունը փաստարկելով միայն ցեղանունների համանման հնչմամբ [471]։ Ուրիշ շատ աշխատություններ նվիրված են թուրքական լեզվի և խեթերի, շումերների, խուրրիների լեզուների միջև կապեր որոնելու հարցին։ Ըստ որում, հե-

---

[8] Չխոսելով արդեն այս հիպոթեզի ընդհանուր մատնածինության մասին, նշենք, որ արիյ բառը որպես Հնդկաստան գաղթած հնդեվրոպական ցեղերի անվանում, երևացել է առաջին թյուրքերի՝ պատմության բեմում հայտնվելուց մի քանի հազարամյակ առաջ։ Ինքը՝ նրա աr(իr) էր կոմպոնենտը, անկասկած իրանական (իսկ գուցե և ավելի լայն՝ հնդեվրոպական) արմատից է. Իրան, հին Արիանա աշխարհագրական անունը և այլն։

[9] Այս հարցում բացասական դեր է կատարել նաև Ն. Յա. Մառը, որը 1934 թվականին Թուրքիայում կարդացած զեկուցման մեջ թուրքերի (թյուրքերի) նախահայրենիքը անվանել է Միջերկրական ծովի ավազանը և խոսել է թուրքերեն (թյուրքերեն) լեզվի հետ խեթերեն, շումերերեն և այլ լեզուների կապերի մասին «նրանց հաջորդական զարգացման մեջ» [158, էջ 55, 56, 62, 97]։

տեսությունների համար միակ հիմնավորում է ծառայում առանձին տերմինների և քերականական կառուցվածքի մի քանի մասնակի համանմանությունների հնչյունական կասկածելի համընկնումը միայն:

Այսպես, Մ. Ս. Սրբը թուրքերեն սեռական հոլովի -ին ածանցը համեմատում է խեթերենի համապատասխան-ան վերջավորության հետ, թուրքերեն ածականակերտ-վի ածանցը խեթերեն-իլ ածանցի հետ, թուրքերենի հոգնակի թվի լար/լեր ածանցը խեթերենի լե-նախդիրի հետ [375. 376]: Նման օրինակներով Հ. Զ. Քոշայը փորձեց նույնիսկ զուգահեռներ գտնել թյուրքերի և բասկերի լեզուների միջև, ապացուցել պատմական կապերը այդ երկու ժողովուրդների միջև [455. 456]:

Թուրքերի էթնոգենեզի բնագավառում թուրքական հետազոտությունների մի մասի մյուս էական արատն այն է, որ մի շարք գիտնականներ ենթարկվել են նացիոնալ-շովինիզմի ուժեղ ազդեցությանը, իսկ թուրքական բուրժուական նացիոնալիզմը հաճախ վերածվում էր նացիոնալ-շովինիզմի, և այդ հեղինակների շատ աշխատություններ գրված են մյուս ժողովուրդների նկատմամբ թուրքերի գերազանցության կանխակալ դիրքերից:

Քեմալական հեղափոխությունից հետո շատ թուրք պատմաբաններ առաջ քաշեցին Թուրքիայի պատմությունը վերանայելու հեղինակը: Այդ հարցում նրանք իրավացի էին. հարկավոր էր քննադատաբար մոտենալ Թուրքիայի պատմագրությանը, որը նախկինում գրվում էր հիմնականում արևմտյան գիտնականների կողմից, այն մաքրել խեղաթյուրումներից, որոնց նա ենթարկվում էր նրանց սուբյեկտիվ լուսաբանմամբ, որը մթագնված էր ռասայականության, գաղութատիրության և իմպերիալիզմի հետադիմական գաղափարներով, որոնք նրանցից շատերին հասցրեցին բարձրամիտ վերաբերմունքի դեպի Արևելքի ժողովուրդները: Այսպես, թուրք պատմաբան Մ. Ֆ. Քյոփրյուլյուն թուրք պատմաբանների I համագումարում ունեցած իր ելույթում բացահայտեց ռասայականության արմատները գաղութատիրության և իմպերիալիզմի մեջ, մերկացրեց արևմտյան որոշ գիտնականների ռասայական

տեսությունները, որոնք արևելյան բոլոր քաղաքակրթությունների ծագումն ու զարգացումը կապում էին բացառապես արիական տարրի հետ: Արիական (հնդեվրոպական) ռասայի «ընտրյալ լինելու» վերաբերյալ նա ասում էր. «Կա հնդեվրոպական լեզվաբնտանիք, բայց չկա հնդեվրոպական ռասա, որը եվրոպական որոշ գիտնականներ կցանկանային ներկայացնել որպես բարձրագույն ռասա, որը ստեղծել է քաղաքակրթություն և ժամանակակից կուլտուրան» [506, էջ 45]: Մ. Ֆ. Քյոփրյուլյուն նշել է նաև եվրոպական պատմաբանների տենդենցիոզությունը թուրքական պատմության մի շարք իրադարձությունների մեկնաբանման գործում: Այդ տենդենցիոզությունը, նրա խոսքերով ասած, դրսևորվել է դեռևս խաչակրաց արշավանքների ժամանակների պատմագրության մեջ: Մասնավորապես, նա քննադատում էր գերմանացի արևելագետ Ռ. Նյոլդեկեին այն բանի համար, որ նա Սելջուկյանների պետության կազմավորումը դիտում էր լոկ որպես հետընթաց քայլ Արևմտյան Ասիայի պատմության մեջ, լոկ որպես բարբարոսների նվաճման արդյունք: Վերջում Մ. Ֆ. Քյոփրյուլյուն մեջ բերեց Ք. Աթաթյուրքի կոչը թուրք գիտնականներին՝ «նորից ստեղծել թուրքական պատմագրություն» [506, էջ 47]:

Սակայն, այդ կոչը իրականացնելու գործում շատ թուրք գիտնականներ հետևողական չեղան. պայքարելով արիական ռասայականության դեմ, նրանցից ոմանք ուրիշ ավելի լավ բան չգտան, այլ նրան հակադրեցին իրենց՝ թուրքական ռասայականությունը և նացիոնալ-շովինիզմը: Այսպես, պատմական ազգագրության վերաբերյալ մի շարք աշխատություններ տոգորված են շովինիզմի ոգով: Ռ. Ս. Աթաբինենը փառաբանում է թյուրքերի կուլտուրաերեզերական դերը աշխարհում [383], Շ. Ալթունդաղը փորձում է օսմանական թուրքերի նվաճումները բացատրել նրանց իբր բարձր կուլտուրայով [372], Ի. Հ. Դանիշմենդը թյուրքերին է վերագրում վարտիքի, պիջակի և թաշկինակի գյուտը [403], (թեև վարտիքը լայնորեն տարածված էր, օրինակ, սկյութական ժողովուրդների մեջ թյուրքերի պատմական ասպարեզ դուրս գալուց դեռ շատ առաջ), Ի. Քաֆեսօղլուն ակնհայտորեն չափա-

պանցրած դեր է հատկացնում թյուրքական կուլտուրային՝ քաղաքակրթության պատմության մեջ [446] և այլն։

Այս բնույթի աշխատություններից, թերևս, արժե առանձին կանգ առնել Ռ. Ս. Աթաբինենի «Թյուրքերի ավանդը Արևելյան Եվրոպայի էթնոսի ու քաղաքակրթության մեջ» գրքի վրա, որը 1952 թվականին հրապարակվել է Ստամբուլում ֆրանսերեն լեզվով։

Ռ. Ս. Աթաբինենի պնդմամբ, Արևելյան Եվրոպայի պատմության մեջ ամեն ինչ ելնում է թյուրքերից։ Այլ կերպ ասած, փոխանակ օբյեկտիվորեն գնահատելու թյուրքական ժողովուրդների դերը Արևելյան Եվրոպայի կուլտուրայի զարգացման գործում՝ մյուս ժողովուրդների ներդրած ավանդի հետ համատեղ, հեղինակը չտնօրինված չափազանցում է թյուրքերի դերը և բոլորովին անտեսում մյուս ժողովուրդներին, թեպետ վերջիններիս դերը անհամեմատ ավելի նշանակալի է եղել թե՛ քանակապես և թե՛ որակապես։ Ըստ որում Ռ. Ս. Աթաբինենը փաստերը մեկնաբանում է կամայականորեն, թյուրքերի հետ է նույնացնում ոչ-թյուրք շատ ժողովուրդների, թյուրքերին է վերագրում ուրիշ ժողովուրդների կուլտուրական նվաճումները։ Այսպես, սկյութացիներին նա հայտարարում է թյուրքեր [249, էջ 21], թեև հին հեղինակները այդ անունով էին կոչում ամենատարբեր ժողովուրդների, իսկ պատմական ու լեզվաբանական ուսումնասիրությունները համոզիչ կերպով վկայում են այն մասին, որ եթե ոչ բոլոր սկյութական ցեղերը, ապա նրանց ճնշող մեծամասնությունը պատկանել են իրանալեզու ժողովուրդների խմբին։ Հակառակ գոյություն ունեցող փաստերին, բոսնիացիներին ու պոմակներին հեղինակը համարում է ոչ թե սլավոններ, որոնք Բալկաններում օսմանական նվաճումներից հետո ընդունել են իսլամը, այլ սլավոնացած թյուրքեր [249, էջ 55]։ Թյուրքերը, գրում է Ռ. Ս. Աթաբինենը, կուլտուրա բերեցին և՛ հունգարացիներին, և՛ սլավոններին, առհասարակ բոլոր ժողովուրդներին՝ սկսած Դանուբից մինչև էգեյան ծովը և Ադրիատիկան [249, էջ 56—57]. օսմանցի թուրքերը Բրակիայի ու Մակեդոնիայի ժողովուրդներին սովորեցրին «ուտել, կառուցել, կարգ ու կանոն հաստատել իրենց մոտ ու ապրել». նրանց սո-

վորույթները, նրանց ֆոլկլորը թուրքերից է գալիս [249, էջ 67]։ Բուլղարիայի ժամանակակից թուրքերը, Ռ. Ս. Աթաբինենի կարծիքով, ոչ թե օսմանյան դարաշրջանում գաղթել են Անատոլիայից, այլ բուլղարական թյուրքեր են, «որոնք վերադարձել են իրենց էթնոսի գիրկը» [249, էջ 60]։ Ռ. Ս. Աթաբինենը կամ ծանոթ չէ և կամ ձևացնում է, թե ծանոթ չէ բուլղարների էթնոգենեզի մասին բուլղարական և սովետական գիտնականների ուսումնասիրություններին։ Այդ ուսումնասիրություններում պարզորոշ ասված է, որ բուլղար ժողովրդի բաղադրամասերից մեկն են եղել բուլղարները կամ նախաբուլղարները՝ թյուրքական մի ցեղ, որը ժամանակակից Բուլղարիայի տերիտորիան է գաղթել VII դարում։ Սակայն հետագայում բուլղարները սլավոնացան ավելի բազմաքանակ տեղական բնակչության շրջանում, ձուլվեցին նրանց, կազմելով նոր էթնոս՝ բուլղար ժողովուրդը, որի մեջ թյուրք բուլղարներից պահպանվեցին միայն կուլտուրայի առանձին գծեր և նրանց նախկին ցեղանունը։

Ռ. Ս. Աթաբինենը խիստ քննադատում է արևմտյան պատմաբաններին՝ նրանց «քրիստոնեական մոլեռանդության» համար, որը ժխտում է թյուրքական ժողովուրդների ավանդը համաշխարհային կուլտուրայի և արվեստի մեջ։ Բայց անմիջապես ընկնում է հակառակ ծայրահեղության մեջ, պնդելով, թե կարելի է 1200 տարվա թյուրքական ճարտարապետության բնորոշ գծերը դիտել Չինաստանից մինչև Մարոկկո և Հնդկաստանից մինչև Բալթիկա [249, էջ 122, 123]։

Այս հեղինակը թյուրքական է հայտարարում նաև Կովկասի մի քանի ժողովուրդների, օրինակ՝ չեչեններին և ինգուշներին [249, էջ 158]։ Զապորոժիեի և Դոնի կազակները, նրա կարծիքով, նույնպես թյուրքեր են, քանի որ «կազակ» ցեղանունը թյուրքական ծագում ունի [249, էջ 137—143]։ Բայց չէ որ ժողովրդի էթնիկական դեմքը որոշում է ոչ թե նրա ցեղանունը, այլ էթնիկական գծերի ամբողջությունը։ Օրինակ, ժամանակակից բուլղարները, անկասկած, սլավոնական ժողովուրդ են, թեև ունեն ծագումով թյուրքական ինքնանվանում։ Բացի դրանից, «կազակ» բառի թյուրքական ծագումը չի կարելի ապացուցված համարել։ Այդ բառը, հավանաբար,

կարող է ծագած լինել «կասոգ» անվանումից՝ «կայսակի» միջոցով, որ կրել էին Հյուսիսային Կովկասի ամենևին ոչ թյուրքական ցեղերը։

Ռուսական Օլեգ և Իգոր իշխաններին, ի դեպ, դրանց ոչ սլավոնական (վարյագական) ծագումը չի ժխտում սովետական պատմագրությունը, Ա.Աթաբինենը դասում է թյուրքերի շարքը (Օլեգը՝ Ուլուղ, իսկ Իգորը՝ Ուգուր) [249, էջ 135]։

Ռ. Ս. Աթաբինենի մեկ ուրիշ աշխատությունը՝ «Թյուրքերը Կոստանդնուպոլսում V-ից մինչև XV դարը» գիրքը, որը հրատարակվել է 1956 թվականին, նույնպես տնդենցիոզ շատ բան է պարունակում, միաժամանակ հանդիսանալով այնպիսի փաստերի մի լավ հավաքածու, որոնք ցույց են տալիս, թե ինչպես թյուրքերը աստիճանաբար և գնալով ուժեղացող զանգվածներով թափանցել են Բյուզանդիայի հողերը [250]։ Այս գրքում ուշադրության արժանի է հեղինակի մի հետաքրքիր միտք ևս։ Թյուրքերի ներթափանցումը Բյուզանդիա, գրում է նա, նման էր Արևմտա-Հռոմեական կայսրության նվաճմանը բարբարոսների կողմից, այն տարբերությամբ միայն, որ թյուրքերն ունեին արդեն բարձր զարգացած քաղաքակրթություն, մի բան, որ չունեին Հռոմը ավերած բարբարոսները։ Այդ պատճառով էլ բարբարոսները ձուլվեցին պարտություն կրած Հռոմեացիների մեջ, այն ժամանակ, երբ թյուրքերը չնթարկվեցին հունական ազդեցությանը [250, էջ 123]։ Այս թեզիսը, սակայն, ճշգրտման կարիք ունի։ Իրոք, թյուրքերը (սելջուկները և օսմանցիները), որոնք վերջ դրեցին Արևելա-Հռոմեական (կամ, այլ կերպ ասած, Բյուզանդական) կայսրությանը, դավանում էին իսլամը, միասվածային կրոն (միասվածային կրոնները՝ քրիստոնեությունը, իսլամը այն ժամանակվա համար մի առաջընթաց քայլ էին ավելի պրիմիտիվ կրոնների համեմատությամբ), և, որ գլխավորն է, ունեին միջին դարերի արևելյան, հիմնականում արաբա-պարսկական, բավական զարգացած կուլտուրա, որ նրանք յուրացրել էին իսլամը ընդունելուց հետո և ավելի էին զարգացրել սելջուկյան ու վաղ օսմանական շրջանում։ Իսկ բարբարոսները, որոնք նվաճել էին Հռոմը, հազիվ թե կարող էին հռոմեական քաղաքակրթությանը հակադրել ինչ-որ էա-

կան բան հոգևոր կուլտուրայի բնագավառում։ Ուստի նրանց մեծ մասը նախ քրիստոնեացավ, իսկ ապա նաև ռոմանականացավ լեզվով։ Իսկ թուրքերը չենթարկվեցին բյուզանդական քաղաքակրթությանը, պահպանեցին թյուրքական լեզուն, իսլամական (իր հիմքում՝ արաբա-պարսկական) կուլտուրան, թեպետ Բյուզանդիայի հունական կուլտուրան, ինչպես մենք ստորև կտեսնենք, շատ է ազդել թուրքերի կուլտուրայի վրա, իսկ հունարենը ազդել է թուրքերենի վրա։

Իբրև շովինիստական կամ ծայրահեղ նացիոնալիստական կարելի է բնութագրել նաև այն աշխատությունները, որոնք գրվել են Թուրքիայում ազգային փոքրամասնությունների առկայությունը ժխտելու դիրքերից։ Իբրև օրինակ կարող է ծառայել Ք. Քեմալի «Անատոլիայի արևելքը և Հարավ-արևելքը» գիրքը [451]։ Հեղինակը նպատակ էր հետապնդում ապացուցել, որ այդ գավառների ամբողջ բնակչությունը թուրքեր են, թեև, ինչպես հայտնի է, այստեղ են ապրում Թուրքիայի քրդական ազգային փոքրամասնության հիմնական զանգվածը և էթնիկական մյուս խմբերը (արաբներ, լազեր, վրացիներ և այլն)։ Ասենք ինքը՝ Ք. Քեմալն էլ է գրում, որ այստեղի բնակչության կեսն է միայն խոսում թուրքերեն, մյուս կեսը խոսում է ուրիշ լեզուներով։ Այնուամենայնիվ, հեղինակի հետևությունը հետևյալն է. Արևելյան և Հարավ-Արևելյան Անատոլիայի բոլոր բնակիչները թուրքեր են [451, էջ 8]։ Նա «իսկական թուրքեր» է հայտարարում նաև այստեղի բոլոր քոչվորներին [451, էջ 19]։ Նա «Թուրանական ժողովուրդներ» է համարում նաև խեթերին ու միդիացիներին. Ուրարտուն անվանված է թյուրքական պետություն. տեղական գետանունները (Տիգրիսը և Եփրատը կամ, թուրքերեն, Դիջլեն և Ֆըրատը) դիտվում են որպես թյուրքական. հին քաղաքների՝ էրզինջանի, էրզրումի և այլ քաղաքների հիմնադրումը վերագրված է թյուրքերին՝ դեռ իսլամի տարածումից առաջ և այլն [451, էջ 10, 16]։ Ջանալով ապացուցել քրդերի թյուրքական ծագումը, նա միանգամայն սխալ է մեկնաբանում ազգագրական փաստերը։ Օրինակ, այն, որ քրդական բալաբան ցեղի ճյուղերից մեկը (իսկ բալաբան ցեղի հիմնական զանգվածը ապրում է Դերսիմի և էրզինջանի մի-

ջև ու խոսում է զազա բարբառով) ապրում է Արևմտյան Անատոլիայում (Սեֆերի-Հիսար—Դողան-բեյ շրջանում) և խոսում է թուրքերեն, ինչպես նաև այն, որ քրդական ցեղերի անունների մեջ հանդիպում են թյուրքական անուններ և քրդերենի բարբառներում կան թյուրքական ծագում ունեցող բառեր, օրինակ՝ Թոյ (Հարսանիք), կալան (զալիմ), նա բացատրում է ոչ թե քրդերի առանձին խմբերի ավելի ուշ շրջանի թյուրքացմամբ (թուրքացմամբ), այլ նրանց վաղեմի թյուրքական ծագմամբ [451, էջ 22—23, 37, 44—45]։

Թուրքերի, ինչպես նաև թյուրքական այլ ժողովուրդների էթնոգենեզի և էթնիկական պատմության վերաբերյալ թուրք հեղինակների աշխատությունների մի մասը իր վրա կրել է պանթյուրքիստական գաղափարների կործանարար ազդեցությունը։ Պանթյուրքիզմը Թուրքիայում լայնորեն տարածվեց երիտասարդ թուրքերի ժամանակ, հատկապես XX դարի 10-ական թվականների սկզբից։ Այդ դոկտրինան, որը իրենից ներկայացնում էր թուրքական բուրժուական նացիոնալիզմի անհեթեթ զարգացումը, ծայրահեղ նացիոնալ-շովինիստական և ագրեսիվ դոկտրինա էր։ Նա կոչ էր անում Թուրքիային ենթարկել թյուրքական բոլոր ժողովուրդներին, ժխտում էր ոչ թյուրքական ժողովուրդների գոյության իրավունքը Թուրքիայում։ Քեմալական հեղափոխությունից հետո քեմալականները, և հատկապես ինքը՝ Ք. Աթաթյուրքը, հանդես եկան պանթյուրքիզմի ծայրահեղությունների դեմ։ Սակայն, նախկին երիտասարդ թուրքերի թվից շատ պանթյուրքիստներ, խոսքով ընդունելով իրենց գաղափարների սխալականությունը, գործով շարունակում էին պանթյուրքիզմի պրոպագանդան։ Այդ պատճառով էլ պանթյուրքիստական գաղափարախոսության ազդեցությունը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում զգացվեց նաև քեմալական հեղափոխությունից հետո։ Այդ ազդեցությունը առանձնապես ուժեղ էր պատմական գիտության մեջ և հասարակական զանազան կազմակերպություններին, օրինակ, հետագայում «Ժողովրդական տների» վերածված «Թուրքական օջախների» գիտալուսավորական գործունեության մեջ։ Զբաղվելով լուսավորական գործունեությամբ, թյուրքական ժողովուրդների, նրբանց սովորույթների, կուլտուրայի ու պատմության մասին արժեքավոր աշխատությունների հրատարակմամբ, այդ կազմակերպությունները դրա հետ մեկտեղ պրոպագանդում էին պանթյուրքիստական գաղափարներ, որոնք նպատակ ունեին թուրքերին հակադրել մյուս ժողովուրդներին և առանձնապես ընդգծել թուրքերի նշանակությունը իբրև մի ազգի, որը իբր կոչված է միավորելու բոլոր թյուրքական ժողովուրդներին։

Սակայն, մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը պանթյուրքիզմը քիչ թե շատ նկատելի դեր չէր խաղում թուրքական պետության քաղաքականության մեջ։ 1927 թվականի ապրիլի 26-ին ընդունված «Թուրքական օջախների» նոր կանոնադրության հոդվածներից մեկում նույնիսկ ասված էր, որ «օջախները», որպես թուրք ազգի կազմակերպություններ, իրենց կապը խզում են պանթյուրքիզմի քաղաքականությունից [21, էջ 263]։ Այդ բանը, անկասկած, արվել էր Ք. Աթաթյուրքի ազդեցության տակ, որի բացասական վերաբերմունքը դեպի պանթյուրքիստական գաղափարների դրսևորումները բխում են քեմալական գաղափարախոսության և պանթյուրքիստների էքսպանսիոնիստական դրույթների անհամատեղելիությունից։

Ք. Աթաթյուրքը բազմիցս հանդես է եկել պանթյուրքիզմի գաղափարների դատապարտմամբ։ Դեռ 1919 թվականին «Իրավունքների պաշտպանության ընկերության» անունից (այսպես էր կոչվում թուրք ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը գլխավորած քաղաքական կազմակերպությունը) ամերիկյան գեներալ Հարբորդին հղած հուշագրում նա գրում էր, որ պանթյուրքիզմը դիտում է իբրև «շատ վտանգավոր գաղափար» [396, էջ 665—666]։ 1921 թվականին Ք. Աթաթյուրքը մեջլիսի ամբիոնից քննադատեց պանթյուրքիզմը և պանիսլամիզմը։ (Վերջին դոկտրինան, որը կոչ էր անում աշխարհի բոլոր մուսուլմաններին միավորել մեկ պետության մեջ, պանթյուրքիստները նույնպես օգտագործում էին, ջանալով խաղալ թյուրքերի կրոնական զգացմունքների վրա, որոնց ճնշող մեծամասնությունը մուսուլմաններ են)։ Մասնավորապես, նա հայտարարեց, որ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (պառլամենտի) քաղաքականությունը նպատակ ունի

պաշտպանել ազգի անկախությունը «որոշակի ազգային սահմաններում», որ պանթյուրքիստներն ու պանիսլամիստները «երևակայական մեծությամբ հափշտակված կեղծարարներ» են, և որ թուրք ազգը պաշտպանելու է իր գոյությունն ու իր անկախությունը, բայց չի ձգտելու զավթել ուրիշների տերիտորիաները [385, էջ 193—196]: 1927 թվականին ժողովրդա-հանրապետական կուսակցության (ԺՀԿ) II համագումարում, նորից հանդես գալով պանթյուրքիզմի դեմ, Ք. Աթաթյուրքը հայտարարեց. «Բոլոր թյուրքերի միավորումը մեկ պետության մեջ անիրականանալի խնդիր է: Պատմության փորձից երևում է, որ պանիսլամիզմի և պանթյուրքիզմի քաղաքականությունը հաջողություն ունենալ չի կարող... Քաղաքական այն դոկտրինան, որ մենք համարում ենք իրականանալի, ազգային քաղաքականությունն է» [384, էջ 3]:

Հարկավոր է նշել, որ ազգի հասկացությունը ևս քեմալականների ու պանթյուրքիստների մոտ էականորեն տարբերվում են միմյանցից: Ազգի պանթյուրքիստական բնորոշումը ձևավորված է եղել Զ. Գյոքալփի կողմից. «Ազգը,— գրում էր նա,— ընդհանուր լեզու, կրոն, բարքեր և կուլտուրա ունեցող, այսինքն՝ միատեսակ դաստիարակություն ստացած մարդկանց ընդհանրությունն է» [425, էջ 15]: Իսկ քեմալականները ժողովրդա-հանրապետական կուսակցության 1935 թվականին ընդունված ծրագրում տալիս են ազգի հետևյալ բնորոշումը. «Դա լեզվի, կուլտուրայի և իդեալի միասնությամբ կապված հայրենակիցներին միավորող քաղաքական և սոցիալական ընդհանրություն է» [400, էջ 3. 389, էջ 6]: Այսպիսով, քեմալականները ազգի բնորոշումից դուրս են հանել կրոնի ընդհանրությունը, որը պանթյուրքիստներին և պանիսլամիստներին հարկավոր է մուսուլման թյուրքերի միավորումը հիմնավորելու համար: Եվ թեպետ երկու ձևակերպումն էլ իդեալիստական են (դրանց մեջ չկա, օրինակ, մատերիալիստական այնպիսի չափանիշ, ինչպիսին է տնտեսական կյանքի ընդհանրությունը), քեմալականների մոտ այնուամենայնիվ ենթադրվում է տերիտորիայի ընդհանրությունը. այդ բանը տրված է «հայրենակիցների ընդհանրություն» քողարկված ձևով (յուրթասլարդան բյություն): 1924—1925

թթ. «Անադոլու» (Անատոլիա) հանդեսում Ստամբուլի համալսարանի մի խումբ ուսանողներ հրապարակեցին ազգի հասկացության իրենց կոնցեպցիան: Ի տարբերություն Զ. Գյոքալփի, նրանք այդ հասկացության մեջ մտցրել էին նաև հայրենիքի գաղափարը, այսինքն՝ տերիտորիայի ընդհանրությունը: Առանց ընդհանուր հայրենիքի, ինչպես և առանց ընդհանուր կուլտուրայի, գրում էին ուսանողները, ազգ գոյություն չունի: Բանավիճելով պանթյուրքիստների հետ, նրանք հանդես էին գալիս այն պնդման դեմ, թե բոլոր թյուրքերը մի ազգ են: Նրանց այդ դատողությունները, որոնք, անշուշտ, ինչ-որ բանում սխալ են (օրինակ, չկա թյուրքական ոսոսա, այլ կա թյուրքական ազգա-լեզվական ընդհանրություն, թյուրքական կամ թյուրքալեզու ժողովուրդների ընդհանրություն), այնուամենայնիվ շատ բնորոշ են քեմալականների նացիոնալիստական հայացքների համար, որոնք, հակառակ պանթյուրքիստների կարծիքի, թուրք ազգի շրջանակները սահմանափակում էին Թուրքիայի ազգային սահմաններով և չէին ընդունում «թյուրքական ազգի» գոյությունը: «Թյուրքը ազգի անունը չէ,— պնդում էին նրանք,— դա ոսոսայի անունն է, որը իր մեջ ընդգրկում է շատ ազգեր՝ անատոլիացիներին, ադրբեջանցիներին... թուրքեստանցիներին և այլն: Սրանք բոլորը, անկասկած, թյուրքեր են: Բայց նրանք մեկ ազգ չեն: Որպեսզի նրանք դառնան մեկ ազգ, նրանք պետք է ունենան ընդհանուր կուլտուրա և հայրենիք: Սակայն նրանց հայրենիքները տարբեր են, ինչպես և նրանց կուլտուրաները» [343, էջ 167]: Ուսանողական հենց այդ խմբից էլ նլավ կոչը՝ թուրքական պետությունը անվանել ոչ թե «Թուրքական հանրապետություն», այլ «Անատոլիական հանրապետություն» (այսինքն՝ «Թյուրքիյե ջումհուրիյեթի»-ի փոխարեն «Անադոլու ջումհուրիյեթի»): «Մենք անատոլիացիներ ենք, Անատոլիան մեր հայրենիքն է. մեր ազգը անատոլիական ազգն է... Թուրանիզմը (այսինքն՝ պանթյուրքիզմը.— Դ. Ե.) չի կարող նպատակ և իդեալ լինել անատոլիական ազգի համար» [343, էջ 168]: Անատոլիան որպես թուրքերի հայրենիքը տեսնելու ձգտման մեջ արտահայտվել են նաև թուրք ժողովրդին իբրև բնիկ համարելու գաղափարները, որ բաժա-

նում էին նաև քեմալականները, որի մասին արդեն խոսվեց վերևում։

Ի դեպ, թուրքերի բնիկ ժողովուրդ լինելու վերաբերյալ հիպոթեզի քննադատությամբ, մասնավորապես այն պնդման դեմ, թե իբր թուրքերը պատկանում են եվրոպոիդների ալպիական ռասային, հանդես են եկել հենց այն թուրք գիտնականները, որոնք ունեին պանթյուրքիստական հայացքներ։ Պատմաբան Զ. Վ. Թողանը «Մոնղոլները, Չինգիզը և թյուրքական աշխարհը» իր գրքում [500] բանավիճում է այն գիտնականների հետ, որոնք ժխտում են թուրքերի ազգակցական կապը մոնղոլների հետ և այդ բանն ապացուցելու համար վկայակոչում են մոնղոլոիդ հատկանիշների առկայությունը թուրք քոչվորների՝ յուրյուքների մոտ։ Պանթյուրքիստների նման դիրքավորումը հասկանալի է, քանի որ նրանք «թյուրքական աշխարհի» ոլորտի մեջ են ներառում նաև մոնղոլեղու ժողովուրդներ ունեցող տերիտորիաները։

Եթե Ք. Աթաթյուրքի կենդանության ժամանակ պանթյուրքիստական գաղափարները կարևոր դեր չէին կատարում թուրքական պատմական դիտության մեջ, իսկ քաղաքականապես դատապարտվել էին, ապա նրա մահից հետո, և հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, դրությունը փոխվեց։ Թուրքիայի ղեկավարներն տրամադրված ռեակցիոն շրջանները գնալով ավելի ու ավելի համառորեն էին ներդործում կառավարության վրա, արտաքին քաղաքականության բնագավառում նրան կողմնորոշելով դեպի ֆաշիստական Գերմանիան։ Աշխուժացան պանթյուրքիստների հին կապերը գերմանական իմպերիալիզմի հետ, որը, ինչպես հայտնի է, իր շահերի համար օգտագործելով Անդրկովկասը և Միջին Ասիան զավթելու վերաբերյալ երիտասարդ թուրքերի ունեցած պանթյուրքիստական մտադրությունները, Օսմանյան կայսրությունը ներքաշեց առաջին համաշխարհային պատերազմի մեջ, որը նրան ջախջախման ու կործանման հասցրեց։ Իսկ որ ղեկավորն է, հաստատվեցին նոր կապեր ֆաշիզմի հետ։ Պանթյուրքիստները սկսեցին թյուրքական բնակչություն ունեցող տերիտորիաները Թուրքիային միացնելու բացահայտ պրոպագանդան [138]։ 1941 թվականի հու-

լիսին նրանց «Բոզքուրթ» («Գորշ գայլ») հանդեսը հրապարակեց «Պանթյուրքիզմը սպասում է» հոդվածը և «Մեծ Թուրքիայի» քարտեզը, որը ընդգրկում էր Սովետական Միության շատ տերիտորիաներ։ Պանթյուրքիստական պրոպագանդան շարունակվեց նաև 1942—1943 թվականներին։ 1944 թվականի մայիսին միայն, երբ պարզ էր դարձել պատերազմի ելքը, պանթյուրքիստական կազմակերպության անդամները ձերբակալվեցին, իսկ նրանց տպագիր օրգանները փակվեցին։

1946 թվականից հետո, երբ ամերիկյան իմպերիալիզմը վերցրեց միջազգային իրադրությունը սրելու կուրս և իր քաղաքականության ուղեծրի մեջ ներքաշեց Թուրքիային, պանթյուրքիստները նորից ակտիվացրին իրենց գործունեությունը, առանձնապես դեմոկրատական կուսակցության կառավարման ժամանակաշրջանում (1950—1960)։ Երևան եկան պատմության վերաբերյալ բազմաթիվ նոր աշխատություններ, որոնք տոգորված էին պանթյուրքիզմի գաղափարներով։ Պանթյուրքիստական աշխատությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ թյուրքալեզու ժողովուրդների ամբողջ պատմությունը նրանց մեջ քննվում է որպես մի բուրգ, որի հիմքը ընդգրկում է հին ժամանակների և միջնադարի բոլոր թյուրքական ժողովուրդները, իսկ կատարին կանգնած են թուրքերը՝ որպես ամբողջ թյուրքալեզու ընտանիքի քվինտէսենցիան [480. 501, 374]։ Թյուրքական ժողովուրդների պատմության նման մեկնաբանությունը պանթյուրքիստների համար անհրաժեշտ է, որպեսզի հիմնավորեն այդ ժողովուրդների միավորումը Թուրքիայի գերիշխանության տակ։

1952 թվականին վերահրատարակվեց պանթյուրքիստների գլխավոր գաղափարախոս Զ. Գյոքալփի «Պանթյուրքիզմի հիմունքները» գիրքը [425]։ 1959 թվականին այդ գիրքը լույս տեսավ ԱՄՆ-ում և Անգլիայում անգլերեն լեզվով [290]։ Պանթյուրքիզմով սկսում են ուժգնորեն հետաքրքրվել ԱՄՆ-ում և ուրիշ արևմտյան երկրներում։ 1957 թվականին Նյու-Յորքում և Լոնդոնում հրապարակվեց Զ. Վ. Հոստլերի «Պանթյուրքիզմը և Սովետները։ Աշխարհի թյուրքերը և նրանց քաղաքական նպատակները» գիրքը [298]։ Գրքի հեղինակը, որ

եղել է ԱՄՆ-ի ռազմա-օդային ուժերի գնդապետ և 1948—1950 թվականներին Թուրքիայում ամերիկյան զինվորական միսիայի անդամ, առաջարկում է որդեգրել Թուրքիայի հովանու ներքո թյուրքերին միավորելու գաղափարը՝ ՍՍՀՄ-ի դեմ մղվող պայքարում։ Այդ նույն մտքերն էլ նա 1958 թվականին շարադրել է «Միդլ Իսթ Ջորնալ» հանդեսի էջերում [299]։ 1960 թվականին նրա գիրքը հրատարակվեց Արևմտյան Գերմանիայում՝ գերմաներեն լեզվով [300]։

1953 թվականին Թուրքիայում հրատարակվեց Ա. Էնգինի «Աթաթյուրքիզմը և պայքարը ռուսական ու թյուրքական աշխարհի միջև» գիրքը [415]։ Հեղինակի հիմնական խնդիրն է՝ ապացուցել Աթաթյուրքի կապը պանթյուրքիզմի հետ, նրա դրական վերաբերմունքը դեպի պանթյուրքիստական գաղափարները, ինչպես նաև հիմնավորել ծագումնաբանական այն հակագիտական կոնցեպցիան, որի համաձայն բոլոր թյուրքական ժողովուրդները միասնական ազգ են։ Իբրև ապացույց այն բանի, որ Ք. Աթաթյուրքը նույնպես ունեցել է պանթյուրքիստական գաղափարներ, Ա. Էնգինը բերում է միայն հետևյալ փաստը։ Նախ, նա Հ. Բայուրի խոսքերից հաղորդում է սովետական լեզվաբաններ Ա. Ն. Սամոյլովիչի և Ն. Յա. Մառի հետ Ք. Աթաթյուրքի ունեցած մի խոսակցությունը, որի ժամանակ Ք. Աթաթյուրքը թյուրքեր է անվանել ուզբեկներին, թուրքմեններին, թաթարներին, կիրգիզներին և թյուրքական լեզվախմբի ժողովուրդների մյուս ներկայացուցիչներին։ Բայց սովետական գիտնականները և սովետական գիտությունը բոլորովին չի ժխտում այն անհերքելի փաստը, որ այդ բոլոր ժողովուրդները թյուրքեր են, այսինքն՝ խոսում են թյուրքական լեզուներով և ընդհանուր շատ բան ունեն կուլտուրայի բնագավառում։ Իսկ Ա. Էնգինը գրում է, թե Ք. Աթաթյուրքի և սովետական լեզվաբանների միջև բորբոքվել է վեճ. Ա. Ն. Սամոյլովիչը և Ն. Յա. Մառը իբր չէին ընդունում, թե այդ ժողովուրդները թյուրքական են [415, էջ 22]։ Երկրորդ, Ա. Էնգինը մեջ է բերում Ք. Աթաթյուրքի մի քանի դիմումները թուրք ժողովրդին, որոնք սկսվում են «թյուրք միլլեթի» (թուրքական ազգ) բառերով, չգիտես ինչու այդ տերմինը մեկնաբանելով իբրև «թյուրքական ազգ» [415, էջ 74]։ Թեև

այդ դիմումների բովանդակությունը միանգամայն պարզորոշ կերպով խոսում է այն մասին, որ Ք. Աթաթյուրքը «թյուրք միլլեթի» ասելով նկատի ուներ հենց թուրք ազգը, թուրք ժողովուրդը, այլ ոչ թե բոլոր թյուրքերին։ Այսպիսով, ավելի քան սնանկ են Ա. Էնգինի փորձերը՝ պանթյուրքիստական գաղափարներ վերագրելու Ք. Աթաթյուրքին, և դա հասկանալի է, քանի որ դա հակասում է Ք. Աթաթյուրքի բոլոր գործողություններին և ասույթներին։

Առհասարակ խառնաշփոթություն և էկլեկտիկա է տիրում էթնոգենեզի հարցերի այն լուսաբանման մեջ, որ առաջարկում է Ա. Էնգինը։ Հեղինակի առանձին դրույթներ միմյանց հետ չեն կապակցվում։ Օրինակ, մի կողմից նա խեթերենը նույնացնում է թուրքերենի հետ, թե՛ մեկը և թե՛ մյուսը անվանելով հնդեվրոպական (արիական) լեզու, մյուս կողմից գրում է բոլոր թյուրքերի համար իբր գոյություն ունեցող միասնական լեզվի մասին, հայտնելով այն միտքը, թե թյուրքական լեզուները (Ա. Էնգինը դրանք անվանում է բարբառներ) իրար ավելի մոտ են, քան սլավոնական, ռոմանական, կելտական լեզուները և այլն։ Ուրիշ խոսքով ասած, Ա. Էնգինի դատողությունները հասցնում են անհեթեթ հետևության. թուրքերեն լեզուն միաժամանակ հնդեվրոպական է և թյուրքական [415, էջ 18]։ Նա թուրքերին (և բոլոր թյուրքերին) դասում է «կարճագլուխների ալպիական ռասայի» շարքը [415, էջ 93]։ Միևնույն ժամանակ ժխտում է ռասայական չափանիշը թյուրքերի միասնությունը բնորոշելիս, հավանաբար հիշելով, որ թյուրքական ժողովուրդների մեջ ևս կան երկարագլուխներ (թուրքմենները) և մոնղոլոիդներ (կիրգիզները, ղազախները, յակուտները), որոնց ոչ մի կերպ չի կարելի համարել ալպիական ռասայի ներկայացուցիչներ։ Իսկ ընդունելով, որ «մաքուր» ռասաներ գոյություն չունեն, նա առաջ է քաշում ռասայականության մի այլ տարատեսակություն՝ «կուլտուրական ռասայականությունը» [415, էջ 71]։

Մենք հանգամանորեն կանգ առանք պանթյուրքիզմի վրա, որը հսկայական վնաս հասցրեց թուրքական պատմական գիտությանը նաև այն պատճառով, որ այդ գաղափարները

պես մինչև այսօր էլ շարունակում են գոյություն ունենալ թուրք ծայրահեղ նացիոնալիստների շրջանում։

Այսպիսով, թուրքերի էթնոգենեզիսի հարցերի վերաբերյալ թուրք հեղինակների աշխատությունների վերլուծության ժամանակ կարելի է պարզորոշ կերպով առանձնացնել երեք խմբի խիստ տենդենցիոզ աշխատություններ՝ նացիոնալիստական, նացիոնալ-շովինիստական և պանթյուրքիստական։ Նացիոնալիստները կանգնած են փոքրասիական թուրքերին քրիստոնյա ժողովուրդ համարելու դիրքավորման վրա, Փոքր Ասիայի հին ժողովուրդներին համարելով թյուրքական էթնիկական ընդհանրություններ։ Նացիոնալ-շովինիստները մարդկության կուլտուրական զարգացման գրեթե ամեն մի դրսևորման մեջ տեսնում են «թուրքական ոգի»։ Պանթյուրքիստները բոլոր թյուրքերին հայտարարում են միասնական ազգ և համապատասխանաբար այդ ազգի վաղեմի արեալն են համարում այն ամբողջ տերիտորիան, որտեղ ապրում են թյուրքալեզու ժողովուրդներ։

Սակայն թուրքերի էթնոգենեզի պետական լուսաբանումը ընդհանուր ոչ մի բան չունի պանթյուրքիստների և նացիոնալ-շովինիստների ծագումնաբանական կեղծարարական կառուցվածքների հետ։ Նման լուսաբանմանը հակասում է նաև նացիոնալիստորեն տրամադրված հետազոտողների միակողմանի ավտոխտոնիզմը։ Թուրքերի էթնոգենեզի հարցերի լուծման ժամանակ պահանջվում է խիստ օբյեկտիվ մոտեցում դեպի այն բարդ պրոցեսը, որը իր հիմքում ունեցել է էթնիկական երկու տարբեր շերտերի՝ տեղական փոքրասիական ժողովուրդների և Փոքր Ասիա եկած թյուրքական ցեղերի միաձուլումը։

Ծագումնաբանական այդ պրոցեսի վերլուծումը պետք է սկսվի, նախ, Փոքր Ասիայի բնակչության էթնիկական կազմի բնութագրից, որ նա ունեցել է այն ժամանակ, երբ թյուրքական ցեղերը թափանցել են այնտեղ, իսկ, երկրորդ, այդ գաղթած ցեղերի էթնիկական բնութագրից։ Այդ ժամանակ միայն հնարավոր կլինի ուսումնասիրել այդ երկու խոշոր և իրենց առանձնահատկություններով շատ տարբեր էթնիկական շերտերի միաձուլման և համախմբման պատմական հիմնական

էտապները, որոնք ի վերջո հանգեցրին նախ՝ թուրք ժողովրդի ձևավորմանը, իսկ ապա՝ թուրք ազգի կազմավորմանը, և այդ ընթացքում օգտագործելով լեզվաբանության, ազգագրության և մարդաբանության համեմատական տվյալները, պարզել, թե այս կամ այն էթնիկական բաղադրամասը ինչ կերպ է մասնակցել թուրք ժողովրդի, իսկ հետագայում՝ ազգի ձևավորմանը, դրանցից որոնք են անհետացել և ինչու, և որոնք են գերակշիռ դիրք գրավել։ Իհարկե, նման դեպքերում անհրաժեշտ է հաշվի առնել նաև էթնիկական ուրիշ խմբերի, օրինակ՝ Բալկաններին, Կովկասի և Արևմտյան Ասիայի հարևան ժողովուրդների ազդեցությունը, որը պայմանավորված է թուրք ժողովրդի և ազգի ձևավորման պատմական պատճառներով։

Ծայրահեղ նացիոնալիզմի գաղափարախոսական տենդենցիոզ դիրքերից գրված աշխատություններից բացի, թուրքական պատմական գրականության մեջ կան հետազոտություններ, որոնք զերծ են այդ տենդենցիոզությունից կամ քիչ են ենթարկվել նրա ներգործությանը։ Եվ թեպետ դրանց թվում չկան այնպիսի աշխատություններ, որոնք հատկապես նվիրված լինեն թուրքերի էթնոգենեզի և էթնիկական պատմության պրոբլեմին՝ նրա ամբողջ ծավալով, դրանցից շատերի մեջ այս կամ այն կերպ շոշափված է այդ պրոբլեմը և կամ քննության են առնված նրա առանձին հարցերը։ Բնականաբար, այդ հետազոտություններին հատուկ են գաղափարախոսական և մեթոդոլոգիական շատ արատներ, որոնք ընդհանրապես բնորոշ են բուրժուական պատմական գիտության համար։ Օրինակ, իզուր կլիներ թուրք գիտնականներից սպասել, որ նրանք կկարողանան մշակել թուրքական ֆեոդալական ժողովրդի կամ թուրքական բուրժուական ազգի կազմավորման պրոբլեմը։ Այդ բանը կարող են անել մարքսիստական դիրքերի վրա կանգնած գիտնականները միայն։

Թուրքերի ծագման պրոբլեմին վերաբերող առավել կարևոր ու լուրջ հետազոտություններում թուրքական պատմական գիտության մեջ արժեքավոր շատ աշխատություններ պատկանում են հայտնի պատմաբան և ազգագրագետ Մ. Ֆ.

Քյոփրյուլյուի գրչին։ Դեռ 1925 թվականին հրապարակվել էր նրա աշխատությունը օղուզական ցեղերի մասին [465. 466]։ Այնուհետև լույս են տեսնում նրա հետազոտությունները Անատոլիայի թյուրքական իշխանապետությունների մասին [462], Օսմանյան կայսրության ծագման մասին [311]. այս աշխատության մեջ մասնավորապես տվյալներ են բերված արևելյան աղբյուրներից Անատոլիայում օղուզներից և թուրքմեններից բացի ղփչաղների և կանգլիների ցեղային խմբերի առկայության, ինչպես նաև անատոլիական քաղաքային բնակչության էթնիկական խայտաբղետ կազմի մասին [311, էջ 52, 93]։ Օղուզական և թուրքմենական ցեղերի՝ Անատոլիայում բնակություն հաստատելու պատմության ուսումնասիրման գործում նշանակալի ավանդ է Մ. Ֆ. Քյոփրյուլյուի «Օսմանյան կայսրության էթնիկական ծագման հարցեր» հոդվածը [468]։ Ճիշտ է, հոդվածի վերնագիրը անհաջող է. հազիվ թե կարելի լինի խոսել պետության էթնիկական ծագման մասին, մանավանդ որ հոդվածում շոշափվում են այն հարցերը միայն, որոնք վերաբերում են Անատոլիային, այլ ոչ թե Օսմանյան կայսրության ամբողջ տերիտորիային։ Զևականորեն այդ աշխատանքը նվիրված է գերմանացի գիտնական Ի. Մարքվարտի այն հիպոթեզի քննադատությանը, որի համաձայն թուրքմենական կայը ցեղը, որից հետագայում, երբ հավատանք պատմական ավանդություններին, ճյուղավորվել է օսմանլը ցեղը, որը սկիզբ է դրել օսմանական պետականությանը, այլ բան չէ, քան թյուրքացված մոնղոլական կայ ցեղը [252]։ Հեղինակը հերքում է նաև պանթյուրքիստ պատմաբան Զ. Վ. Թողանի համանման տեսակետը, որը նույնացնում էր այդ ցեղերը՝ ապացուցելու համար թյուրքերի և մոնղոլների էթնիկական միասնությունը, օսմանյան թուրքերի մոնղոլական ծագումը (347)։ Ինքը՝ Մ. Ֆ. Քյոփրյուլյուն ևս զերծ չի եղել պանթյուրքիստական հայացքներից։ Այսպես, թուրք պատմաբանների I համագումարում նա այն միտքն է հայտնել, թե միասնական «թյուրքական ազգը» գոյություն ունի առնվազն VI դարից, քանի որ այդ ժամանակ չինական ժամանակագրություններում հիշատակվում է Թու-քյու թյուրքական պետությունը

[506, էջ 42]։ Բայց բանավիճելով Ի. Մարքվարտի և Զ. Վ. Թողանի հետ և հենվելով պատմական փաստերի վրա, Մ. Ֆ. Քյոփրյուլյուն այդ հոդվածում լուսաբանել է թյուրքական ցեղերով Փոքր Ասիայի բնակեցման կարևոր շատ հարցեր և տվել է այդ բնակեցման պարբերացումը։ Այդ թեմայի հետ է կապված նաև Մ. Ֆ. Քյոփրյուլյուի մեկ ուրիշ աշխատությունը՝ «Նոր նոթեր կայ ցեղի մասին» [464]։ Թուրքերի էթնիկական պատմության վերաբերյալ հետաքրքիր նյութ են պարունակում նրա ուսումնասիրությունները տեղական աղբյուրների մասին՝ անատոլիական սելջուկների պատմության [463] և օսմանական պետության կազմավորման վերաբերյալ [467]։

Անհրաժեշտ է նշել Ի. Հ. Ուզունչարշըլըի կապիտալ աշխատությունները Օսմանյան կայսրության պատմության մասին [508. 509]։

Օղուզա-թուրքմենական և թյուրքական այլ ցեղերով Անատոլիայի բնակեցման թեմային է նվիրված Մ. Հ. Յընանչի «Թուրքիայի պատմություն։ Սելջուկյան շրջան» գիրքը [526]։ Այդ գրքում ամփոփված է փաստական մեծ նյութ, որ հեղինակը հավաքել է 22 տարի շարունակ, ուսումնասիրելով պատմական ժամանակագրությունները, արխիվային փաստաթղթերը, տոպոնոմիկայի, նումիզմատիկայի, էպիգրաֆիկայի տվյալները և այլն։ Գիրքը զերծ է շովինիզմի և պանթյուրքիզմի գաղափարներից։ Մ. Հ. Յընանչը ընդունում է ոչ-թյուրք էթնիկական խմբերի (հայերի, քրդերի, հույների) գոյությունը Անատոլիայում՝ թյուրքական ցեղերը այնտեղ գալուց դեռ շատ առաջ։ Այնուամենայնիվ, բացատրելով Փոքր Ասիայի, նրա կարծիքով, արագ թյուրքացման պատճառները, նա ուրիշ փաստարկների թվում վկայակոչում է նաև այն, որ նախախեթները եղել են նախաթյուրքեր, այսինքն՝ կրկնում է ծայրահեղ ավտոխտոնիստների չհիմնավորված գաղափարները [526, էջ 161]։ Պատմական առանձին եզրակացություններ Մ. Հ. Յընանչը փորձում է բացատրել իդեալիստական դիրքերից, օրինակ, սելջուկյան նվաճումների հիմնական շարժիչ ուժը համարում է «պատերազմը հավատի համար»՝ պատերազմը իսլամի տարածման համար, ջիհադը (ղազավաթը) [526, էջ 7, 35]։ Գրքի թերությունն է նաև թուրքական պատմագրության

համար, ասենք, ընդհանրապես, բուրժուական պատմական դիտության շատ աշխատությունների համար սովորական հրապարակումը դեպքերի ու երևույթների արտաքին կողմով՝ առանց դրանց պատճառների վերլուծության. հեղինակը լոկ արձանագրում է ցեղերի տեղափոխությունները, ֆեոդալական իշխանապետությունների կազմավորումը, քայքայումը, սահմանների փոփոխումը, երկպառակչական պայքարի ելևէջները...

Սելջուկյան և օսմանական շրջանների Թյուրքական ցեղերի պատմությունը ուսումնասիրվել է շատ աշխատություններում: Այսպես, արխիվային նյութերի հիման վրա Ս. Չեթինը Թյուրքը ուսումնասիրել է յուրյուքների ցեղի տարածումը Ռումելիում՝ XV—XVIII դարերում, նրանց ռազմացեղային կազմակերպության կառուցվածքը, հետևություններ է արել նրանց թվաքանակի մասին [402]: Յուրյուքների պատմությունը, մասնավորապես, նրանց դերը բալկանյան առանձին մարզերի թուրքական գաղութացման և տեղական բնակչության մի մասի թուրքացման գործում, կազմում է Մ. Թ. Գյոքբիլգինի ուսումնասիրության թեման [426. 427]:

1948—1949 թթ. լույս տեսան Ֆ. Դեմիրթաշի աշխատությունները Անատոլիայի Թուրքմենների մասին, որոնք սերել են XI—XIII դարերում Փոքր Ասիա գաղթած օղուզական և Թուրքմենական ցեղերից (406. 407. 408): Դրանք գրված են Օսմանյան կայսրության պետական դանձարանի հաշվեգրումների նյութի հիման վրա: Այդ աշխատություններից մեկում՝ քոչվորական Բոզ-ուղուս միավորման մասին հեղինակը չի սահմանափակվում փաստերի հասարակ շարադրումով, այլ ջանում է վերլուծել դրանք: Դրա շնորհիվ նա կարողացել է լավ ցույց տալ, որ XVI—XVII դարերում Անատոլիայի Թուրքմենների մի մասի վերաբնակումը արևելյան շրջաններից արևմտյան շրջանները և նրանց հետագա նստակյաց դառնալու փաստը առաջացել էր սոցիալ-տնտեսական պայմաններից, մասնավորապես՝ հարկային ծանր լծից, ֆեոդալների կողմից ցեղերի արոտավայրերի զավթումից, քոչվորական անասնապահության անկումից:

Օղուզա-Թուրքմենական առանձին ցեղերի տարաբնակեցմանը Անատոլիայում նվիրված են Ֆ. Սյումերի հոդվածները

յըվա, դյոդեր, ավշար, կարակոյունլու ցեղերի մասին [487. 488. 489. 491], իսկ 1967 թվականին լույս տեսավ նրա «Օղուզներ (Թուրքմեններ): Պատմությունը, ցեղային կազմակերպությունը, էպոսը» ընդհանրացնող աշխատանքը: Այս հիմնավոր աշխատությունը մանրամասն վերլուծության է ենթարկված Ռ. Ա. Հուսեյնովի գրախոսությունում (65), որտեղ նշված են նաև դրա հիմնական թերությունները: Այսպես, առարկություն է առաջացնում օղուզների և Թուրքմենների նույնացումը. իրենց կազմավորման ժամանակի տեսակետից Թուրքմենները ավելի ուշ շրջանի էթնիկական ընդհանրություն են, քան օղուզները. նրանք օղուզներից տարբերվում են նաև էթնիկական տեսակետից, քանի որ իրենց մեջ ընդունել են անհամեմատ ավելի շատ ոչ Թյուրքական տարրեր, օրինակ՝ Միջին Ասիայի և Իրանի քոչվոր և նստակյաց բնակչության իրանալեզու խմբեր: Ֆ. Սյումերը չափազանց հաճախ է իր հետու գնացող հետևությունները կառուցում միայն տոպոնիմիկայի տվյալների վրա, առանց դրանք՝ համադրելու պատմական այլ փաստերի հետ: Բոլորովին անբննադատաբար է վերաբերվում Թյուրքական ավանդազրույցների ու առասպելների հաղորդած նյութերին և այլն: Բայց դրա հետ մեկտեղ այս աշխատությունը մի առաջընթաց քայլ է XI—XIII դարերի պատմական իրադարձությունների հետևանքով Փոքր Ասիայում հայտնված օղուզների և Թուրքմենների էթնիկական պատմության ուսումնասիրման գործում:

Սելջուկյան շրջանի Անատոլիայի էթնիկական պրոցեսների առանձին ասպեկտներ, օրինակ, տեղական բնակչության մի մասի իսլամացումը, քննության են առնված O. Թուրանի կողմից [351. 352]: Արդեն հայտնի աղբյուրներից բացի, նա օգտագործել է Թուրքիայի գրադարաններում պահվող ձեռագրերը՝ վաքուֆային թղթերը, ժամանակագրությունները, Սելջուկյանների արխիվների նյութերը: Նրա առանձին հետազոտություններ նվիրված են հենց այդ բնույթի աղբյուրներին [503. 504]: Բացահայտելով Անատոլիական բնակչության առանձին խմբերի իսլամացման սոցիալական արմատները, օրինակ՝ իսլամական կրոնին անցնելու ժամանակ գործող

նյութական շահագրգռվածությունը, և ցույց տալով դրա դերը այդ խմբերի հետագա թյուրքացման գործում, Օ. Թուրանը, սակայն, Սելջուկյան պետության էթնիկական պրոցեսներին մոտենում է այն տեսանկյունից, թե թյուրքերը իբր ունեին ավելի բարձր կուլտուրա մյուս ժողովուրդների համեմատությամբ, իսկ իսլամը գերազանցություն ուներ մյուս կրոնների նկատմամբ: Այս նացիոնալ-շովինիստական և իսլամիստական մոտեցումը տեղ-տեղ փչացնում է ընդհանուր առմամբ հետաքրքրական ուսումնասիրությունը:

Ի. Քաֆեսօղլուի և Մ. Ա. Քյոյմենի աշխատություններում, որոնք նվիրված են սելջուկյան շրջանի Թուրքիայի պատմության ավելի ընդհանուր հարցերին, շոշափվում են նաև թյուրքական ցեղերի էթնիկական պատմության ասպեկտները [443. 444. 445. 470]: XV—XVI դարերի օսմանական նվաճումների մասին Հ. Ինալջիկի աշխատություններում վերլուծության են ենթարկվում նաև տեղական բնակչության թյուրքական ասիմիլյացման ուղիները (իսլամացման միջոցով, նվաճված բնակչության մեծ խմբեր թուրքաշատ շրջանները վերաբնակեցնելու միջոցով, ենիչերիների պատրաստման զինվորական դպրոցներում քրիստոնյա երեխաներին ու պատանիներին հավաքագրելու միջոցով և այլն [303. 437]: Նշենք նաև ցեղային հիմքի վրա առաջացած անատոլիական թյուրքական իշխանապետությունների մասին եղած աշխատությունները, որոնցում քննության են առնված նաև առանձին թյուրքական ցեղերի էթնիկական պատմության մի քանի հարցեր [365. 366. 510. 513. 525]:

Թուրքերի էթնոգենեզի և էթնիկական պատմության ուսումնասիրմանը անմիջականորեն վերաբերող ազգագրական աշխատություններից կարևոր են յուրյուքների, Անատոլիայի թուրքմենների ցեղերի, ինչպես նաև թուրքերի ազգագրական այլ խմբերի (թախթաջիների, ալավիտների և ուրիշների) ազգագրության մասին եղած աշխատությունները [517. 518. 519. 520. 398. 380. 381. 382. 433]: Հարավային Անատոլիայի թուրքմենների և յուրյուքների մասին Ա. Ռ. Յալգինի դիրքը արժեքավոր է նրանով, որ գրված է հեղինակի դաշտային նյութերի հիման վրա. մոտ տասը տարի նա զբաղվել է

քոչվորական ցեղերի ուսումնասիրությամբ: Գրքում կան շատ լուսանկարներ, նկարներ և գծագրեր, որոնք ակնառու կերպով ցույց են տալիս այդ ցեղերի նյութական կուլտուրայի առանձնահատկությունները: Գրքի թերությունն այն է, որ այնտեղ չկա նյութի որևէ դասակարգում: Դա ավելի շուտ դաշտային օրագիր է՝ հրապարակված գրեթե առանց որևէ մշակման: Բայց հենց դրա շնորհիվ էլ գիրքը ծառայում է որպես ազգագրական հիանալի աղբյուր: Հարավային Անատոլիայի յուրյուքների մասին Ք. Գյունդյուրի մենագրությունը ևս հիմնված է դաշտային ուսումնասիրությունների վրա: Հեղինակը բերում է մարդաչափական տվյալներ յուրյուքների մասին (բացարձակ չափումներ և ինդեքսներ՝ գլխի ցուցանիշը, խորանարդ ինդեքսը և այլն), կազմաբանական տեղեկություններ (աչքերի ձևը, քթի և գանգի պրոֆիլը, մազերի, մաշկի, աչքերի գույնը): Միաժամանակ Ք. Գյունդյուրը նշում է, որ յուրյուքները թուրքերից տարբերվում են երկարագլխությամբ և միջակագլխությամբ (գլխի ցուցանիշը յուրյուքների մոտ ըստ Ք. Գյունդյուրի, հավասար է 76, 46, այն ժամանակ, երբ դա թուրքերի մոտ կազմում է 83—84), ավելի բարձր հասակով և թուխ մաշկով: Գրքում մանրամասն նկարագրված են նյութական կուլտուրան (սնունդը, հագուստը, բնակարանը) և հոգևոր կուլտուրայի առանձին գծերը (սովորույթները, ծիսակատարությունները, հավատալիքները, ֆոլկլորը): Գրքի, ինչպես նաև թուրքական ազգագրական աշխատությունների մեծ մասի, թերությունն է նրա նկարագրողական-օբյեկտիվիստական բնույթը: Բայց հեղինակի հավաքած փաստական նյութը շատ արժեքավոր է:

Փաստական հսկայական նյութ են պարունակում թուրք ժողովրդի կուլտուրայի տարբեր բնագավառների վերաբերյալ բազմաթիվ հետազոտությունները: Դրանց թվում կարելի է նշել ազգագրական արշավախմբերի մասին հաշվետվությունները [438], նկարագրողական բնույթի ազգագրական մենագրությունները երկրի առանձին քաղաքների ու շրջանների մասին [452. 428. 395. 521. 453. 454], մենագրությունները պյուղատնտեսական գործիքների մասին [399], հագուստի մասին [524], սննդի մասին [460], բնակարանների մասին

[363. 367], սովորույթների և հավատալիքների մասին [394. 512], թուրքական հարսանիքի մասին [405. 459. 391. 392. 414], երեխայի ծննդյան հետ կապված ծիսակատարությունների մասին [362], թուրքական ժողովրդական բժշկության և դրա հետ կապված հավատալիքների [393. 514. 353], անասունների խարանման դրոշմների մասին [522], թուրքական գորգերի զարդանկարների մասին (410), թյուրքական ցեղական էթնոնիմիայի հետ կապված Անատոլիայի տեղանունների մասին [364. 478. 479]: Դժբախտաբար, գրեթե բոլոր այդ աշխատություններն էլ տառապում են նկարագրողականությամբ, օբյեկտիվիզմով:

Վերջապես, թուրքական բուրժուական ազգի ձևավորման որոշ առանձնահատկություններ հասկանալու համար հետաքրքրական նյութ են տալիս Ն. Բերքեսի, Մ. Էրիշիրգիլի, Ռ. Օ. Արըքի, Շ. Այքութի և այլ հեղինակների ուսումնասիրությունները թուրքական նացիոնալիզմի մասին [256. 378. 389. 417. 404], որոնց մեջ, օրինակ, բերվում են շատ փաստեր, որոնք ցույց են տալիս քեմալականների նացիոնալիզմի և պանթյուրքիզմի միջև եղած բավական էական տարբերությունը:

ԳԼՈՒԽ I

Անատոլիայի բնակչության էթնիկական կազմը մինչև բյուրական ցեղերի զանգվածային գաղթը

Սույն աշխատության մեջ «Անատոլիա» անվանումը համանշանակ է «Ասիական Թուրքիա» հասկացությանը. երկու տերմիններն էլ նշանակում են ժամանակակից Թուրքական Հանրապետության ասիական մասը: Այսպիսի մեկնաբանումը վերջին ժամանակներս ընդունված է աշխարհագրագետների մեծ մասի կողմից ՍՍՀՄ-ում և արտասահմանում (այդ թվում և Թուրքիայում) [160, էջ 13. 147. էջ 5. 71, էջ 10]:

Անատոլիան ընդգրկում է ժամանակակից Թուրքական պետության տերիտորիայի 97 տոկոսը: Երկրի տարածության մոտ 3 տոկոսը միայն գտնվում է Եվրոպայում, գրավելով Բալկանյան թերակղզու մի փոքրիկ շրջան: Դա Եվրոպական Թուրքիան է, այլ կերպ ասած՝ Արևելյան Թրակիան կամ Արևելյան Ռումելին: XV դարից մինչև XX դարի սկիզբը թուրքական պետությունը՝ Օսմանյան կայսրությունը, գրաված ուներ անհամեմատ ավելի մեծ տարածություն Ասիայում և Եվրոպայում. նա տիրույթներ ուներ նաև Աֆրիկայում[1]: Սա-

1 Իր տերիտորիալ ամենամեծ ընդարձակման շրջանում (XVI—XVII դարեր) Օսմանյան կայսրությունը Անատոլիայից բացի ընդգրկում էր Հունաստանը, Բուլղարիան, Սերբիան, Դալմացիան, Բոսնիան և Հերցեգովինան, Հունգարիան, Տրանսիլվանիան, Ալբանիան, Մակեդոնիան, Թրակիան, Մոլդավիան և Վալախիան, Պոդոլիան, Սև ծովի հյուսիսային ափը մինչև Կուբան և նրա արևելյան ափի մի մասը, Ազովը, Ղրիմը, Հարավային Վրաստանը, Հայաստանի մի մասը և Քուրդիստանը, Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը, Միջագետքը, Արաբիան, Տրիպոլիտանիան և Կիրենաիկան, Ալժիրը, Թունիսը, Եգիպտոսը, Կրետե և Կիպրոս կղզիները: Թուրքական գաղութացումը, սակայն, բացառությամբ Բալկանների մի քանի շրջանների, Թուրքերի զանգվածային վերաբնակեցման բնույթ չէր կրում, այլ սահմանափակվում էր թուրքական կայազորների կամ սուլթանի տեղական վասալների զորքերի տեղավորմամբ:

կայն, Թուրք ժողովրդի կորիզի կազմավորումը, իսկ հետագայում նաև Թուրք ազգի ձևավորումը տեղի էր ունենում Անատոլիայում։ Ուստի, Թուրքերի էթնիկական պատմությունը ուսումնասիրելու համար կարևոր է ամենից առաջ թեկուզ համառոտակի քննության առնել հենց այդ արեալի աշխարհագրական առանձնահատկությունները։

Անատոլիան ընկած է Եվրոպայի և Ասիայի միացման կետում։ Դա կարծես մի բնական կամուրջ է, որը Բալկանները միացնում է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հետ։ Այդ դիրքը միշտ էլ նպաստել է Անատոլիայի տնտեսական զարգացմանը. այդտեղով էր անցնում հաղորդակցության ճանապարհների մեծ մասը Արևելքի և Արևմուտքի միջև, որը, մյուս պատճառների հետ միասին, նպաստում էր միջնադարի այնպիսի տերությունների բարգավաճմանը, ինչպիսիք էին Բյուզանդիան, Փոքր Ասիայի Սելջուկյանների պետությունը, Օսմանյան կայսրությունը (նրա պատմության վաղ շրջանում)։

Եվ XVI դարի կեսերից միայն, երբ աշխարհագրական Ճանապարհագործությունից հետո տեղի ունեցավ առևտրական մեծ ճանապարհների տեղափոխություն, Անատոլիան սկսեց կորցնել իր նախկին նշանակությունը համաշխարհային առևտրի համար։ Վերջին հանգամանքը հանդիսացավ այն կարևոր պատճառներից մեկը, որ Թուրքիան սկսեց սոցիալ-տնտեսական զարգացմամբ ետ մնալ Եվրոպայի, իսկ հետագայում նաև Ամերիկայի շատ երկրներից։

Աշխարհագրական տեսակետից Անատոլիան սովորաբար ընդունում է Փոքր Ասիա թերակղզու (այլ կերպ ասած՝ Անատոլիական թերակղզու), Հայ-Քրդական լեռնաշխարհի և Սիրիա-Միջագետքի սարահարթի արևմտյան ծայրամասի։ Ի դեպ, երբեմն «Փոքր Ասիա» տերմինը հավասարապես օգտագործվում է՝ ցույց տալու համար «Անատոլիան»։

Փոքր Ասիա թերակղզին ողողվում է Սև, Մարմարա, Էգեյան և Միջերկրական ծովերով, Բոսֆորի և Դարդանելի նեղուցների ջրերով։ Թերակղզու մեջտեղում ընկած է Կենտրոնական-անատոլիական բարձրավանդակը, որը հարավից շրջապատված է Տավրոսի լեռնաշղթաներով, իսկ հյուսիսից՝ Պոնտական լեռներով։ Լեռնաշղթաները ձգվում են լայնության

ուղղությամբ, և Սև ու Միջերկրական ծովերի ափագիծը քիչ է կտրատված և մեծ ու հարմար նավահանգիստներ չունի։ Մինչդեռ էգեյան ծովափը, ընդհակառակը, չափազանց բարենպաստ է նավագնացության համար. այստեղ ծովը խոր կերպով մտնում է հովիտները, կազմելով բազմաթիվ ծովածոցեր, որոնք լավ կապված են Արևմտյան և Կենտրոնական Անատոլիայի ներքին շրջանների հետ։ Բազմաթիվ բնական լավ նավահանգիստների առկայությունը Փոքր Ասիայի արևմտյան ծովափին դեռ շատ վաղ ժամանակներում հեշտացրեց Արևմտյան Անատոլիայի զարգացումը հույների կողմից։

Հայ-Քրդական լեռնաշխարհը Անատոլիայի արևելքում իրենից ներկայացնում է բարձրավանդակների, լեռնաշղթաների մի անսիստեմ զուգակցություն. լեռնաշղթաների առանձին գագաթներ հասնում են ծովի մակերևույթից մինչև 4000—5000 մետրի՝ խոր հովիտներով, կիրճերով ու գոգերով։ Լեռնաշխարհի հարավում ընկած է Սիրիա-Միջագետքի բարձրավանդակի Թուրքական մասը՝ ծովի մակերևույթից քիչ բարձրացած մի հարթավայր (մոտ 500 մետր)՝ ոչ մեծ բարձունքներով։

Ասիական Թուրքիան աչքի է ընկնում կլիմայական պայմանների բազմազանությամբ։ Դա հիմնականում կախված է երկրի ռելիեֆի առանձնահատկություններից։ Տաք կլիմա ունեցող հովիտներին հաջորդում են լեռնաշղթաներն ու սարահարթերը, որտեղ կլիման ավելի խիստ է։ Արևմտյան շրջանների միջերկրածովային մեղմ կլիմային Անատոլիայի կենտրոնում և արևելքում փոխարինում է խիստ ցամաքային կլիման, իսկ Սև, Մարմարա, էգեյան և Միջերկրական ծովերի ափերին շատ տեղերում կան մերձարևադարձային կլիմայի օազիսներ։

Արոտային անասնապահության համար Կենտրոնական Անատոլիայի սարահարթի չոր տափաստաններում և Տավրոսի ու Հայ-Քրդական լեռնաշխարհի յայլաղներում (ալպիական մարգագետիններում) գոյություն ունեցող հիանալի պայմանների հետ միասին Ասիական Թուրքիայում կան նաև բոլոր պայմանները ամենաբազմապիսի հողագործության զարգացման համար՝ լավ ոռոգվող հովիտներ արգավանդ հողերով,

ինչպես նաև հարթավայրեր, որտեղ, ճիշտ է, հաճախ պահանջվում է արհեստական ոռոգում: Բնական պայմանների նման բազմազանությունը XI դարից Անատոլիա գաղթած թյուրք քոչվորներին հնարավորություն տվեց երկար ժամանակ պահպանել անասնապահությունը՝ որպես տնտեսության հիմք և աստիճանաբար յուրացնել հողագործությունը, որով վաղուց ի վեր զբաղվում էր տեղական բնակչությունը [184, էջ 303]:

Հաղորդակցության ճանապարհների զարգացման և բնակչության տեղափոխման համար Անատոլիայի ռելիեֆը շատ տեղերում այնքան էլ նպաստավոր չէ: Դժվարամատչելի շրջաններ առանձնապես շատ կան երկրի արևելքում: Այսպես, Արևելյան Անատոլիայի սևծովյան առափնյա շրջանը մնացած Թուրքիայից անջատված է բարձր լեռներով (ավելի քան 3000 մետր): Այստեղի բնակչությունը, որ գերազանցապես լազեր են, միշտ էլ ապրել են հարաբերական մեկուսացման մեջ. կապերը երկրի մյուս շրջանների հետ պահպանվում էր միայն լեռնային կիրճերով, լեռնանցքներով ու ծովով: Հայ-Քրդական լեռնաշխարհում ևս շատ կան լեռնաշղթաներով շրջապատված դժվարամատչելի շրջաններ: Այստեղ ապրող քրդերը հիմա էլ դժվարությամբ են կապ պահպանում երկրի մնացած մասի հետ: Արևելյան Անատոլիայի այդ հարաբերական մեկուսացվածությունը ոչ վերջին դեր է կատարել էթնիկական պրոցեսներում. հենց այստեղ է, որ երկար ժամանակ պահպանվել են Թուրքիայի խիտ ու բազմաքանակ էթնիկական ընդհանրությունները, որոնք դժվարությամբ են ենթարկվել ասիմիլյացիայի թուրքերի հետ,— հայերը, այսրիները, ասորեստանցիները, իսկ քրդերը, լազերը և վրացիները պահպանվել են մինչև մեր օրերը:

Անատոլիան ամենահնադույն քաղաքակրթության շրջան է: Կուլտուրայի զարգացածությամբ և բնակչության վաղեմությամբ Փոքր Ասիան մրցում էր Մերձավոր Արևելքի մյուս մարզերի հետ: Զաթալ-Հյույուքի և Հաջիլարի (Հարավային Անատոլիա) հնագիտական պեղումները ցույց տվեցին, որ արդեն մեր թվակ. առաջ VII—VI հազարամյակներում այստեղ գոյություն են ունեցել մշտական բնակավայրեր, որտեղ

ապրել են բավական բարձր կուլտուրա ունեցող մարդիկ: Նրանք դիտեին նստակյաց հողագործություն (ցանում էին գարի, ցորեն, սիսեռ, ոսպ) և անասնապահություն (պահում էին ոչխար, այծ, կով, խոզ): Բարձր մակարդակի էր հասել նրանց արվեստը՝ քանդակագործությունը և գեղանկարչությունը: Կենտրոնական Անատոլիայում մեր թվակ. առաջ XIX—VIII դարերում գոյություն է ունեցել խեթական սեպագրական պետությունը, որը իր զարգացման մակարդակով չէր զիջում Եգիպտոսին և Միջագետքին: Խեթերը իրենցից հետո թողել են ամենահին տեքստերը, որոնցում արձանագրված է հնդեվրոպական խոսքը: Նրանց ծանոթ էր ոչ միայն հացահատիկի, այլև խաղողի վազի կուլտուրան: Նրանք ստեղծել են ոռոգման բավական զարգացած սիստեմ, որի մնացորդները պահպանվել են մինչև մեր օրերը: Պ. Մ. Ժուկովսկին Փոքր Ասիան համարում էր կուլտուրական շատ բույսերի նախահայրենիքը [103]:

Արևմտյան Անատոլիայում, ինչպես և Արևելյան Թրակիայում մեր թվակ. առաջ I հազարամյակում կազմավորվել էին սատրապական հասարակություններ՝ Թրակիան, Փռյուգիան, Բյութանիան, Միզիան, Լիդիան, Կարիան, քաղաք-հանրապետությունների Իոնական միությունը և այլն: Դրանց բնակչությունը մասամբ բնիկներ էին, մյուս մասը պատկանում էր հույներին, որոնք մեր թվակ. առաջ IX դարից գաղութացրել էին երկիրը և հետագայում իրենց մեջ ձուլել տեղական բնակիչներին: Այդ բոլոր պետությունները սերտորեն կապված էին հին Հունաստանի հետ:

Մեր թվակ. առաջ VI—IV դարերում Անատոլիան մտնում էր Աքեմենյանների Պարսկական տերության կազմի մեջ, այնուհետև նվաճվեց Ալեքսանդր Մակեդոնացու կողմից և հետագայում դարձավ Մակեդոնացու կայսրության ժառանգորդների՝ հելլենական պետությունների մի մասը: Այդ ժամանակ Անատոլիայի գրեթե ամբողջ բնակչությունը (բացառությամբ արևելյան և մի քանի կենտրոնական շրջանների) հունական էր իր լեզվով և կուլտուրայով. այդ բնակչությունը կազմում էին միմյանց հետ ձուլված վերաբնակեցված հույները և հելլենացած տեղաբնակները: Այնուհետև, հին և

նոր թվականության սահմանագծին, Արևմտյան ու Կենտրոնական Անատոլիան կլանվեց Հռոմեական կայսրության կողմից, իսկ դրա անկումից հետո մտավ Բյուզանդիայի կազմի մեջ: Հռոմեական տիրապետությունը իր կնիքը դրեթե չթողեց բնակչության էթնիկական կազմի վրա, որը լեզվով ու կուլտուրայով մնաց Հունական[2]: Բյուզանդական շրջանում այդ բնակչությունը գրեթե ամբողջապես քրիստոնյա դարձավ, ըստ որում քրիստոնեության տիրապետող ձևը դարձավ ուղղափառությունը: Բյուզանդական Փոքր Ասիան անշափ հարուստ դյուղատնտեսական երկիր էր՝ արհեստների ու առևտրի կենտրոններ դարձած ծաղկող քաղաքներով:

Հատկապես էթնիկական տեսակետից ավելի բարդ է եղել Արևելյան Անատոլիայի պատմությունը: Անատոլիայի հյուսիս-արևելքը հնագույն ժամանակներից բնակեցված է եղել դշաններով կամ լազերով՝ քարթվելական լեզվախմբի ցեղերով (լազերենը, ինչպես և վրացերենը, մտնում է կովկասյան լեզվաընտանիքի քարթվելական խմբի մեջ. նա առանձնապես մոտ է մեգրելական բարբառին): «Դշան» ցեղանունը Թուրքիայում պահպանվել է մինչև մեր օրերը Պոնտական լեռների Ջանիկ լեռնաշղթայի անվան մեջ: «Լազ» ցեղանունը հին ժամանակներում այդ ժողովրդի երկրին ավել է լազիկա անունը, որ թուրքերը վերափոխել են Լազիստանի: Դշանների և լազերի ցեղերը, ինչպես գտնում է Ն. Յա. Մառը, ընդարձակ տարածություն էին զբաղեցնում ոչ միայն դեպի երկրի խորքը, այլև դեպի արևելք՝ ընդհուպ մինչև Կրզըլ-Իրմակ գետը, որի նախահնդեվրոպական Գալիս անունը դշաներեն բացատրվում է որպես «գետ» հասարակ անուն [157, էջ 607]: Մեգրելերեն «գալի» բառը նույնպես նշանակում է «գետ»:

Մեր թվականությունից առաջ IX—VIII դարերում Ջանիկում և Լազիկայում, նրանց ծովամերձ մասում, երևան եկան հունական առանձին գաղութներ՝ Հերակլեյը, Սինոպը, Տրապեզոսը և այլն: Պարսիկների, իսկ այնուհետև մակեդոնացիների տիրապետությունը քիչ էր ազդել այդ երկրամասի վրա, որը Փոքր Ասիայի մնացած մասից անջատված էր Պոնտական լեռներով: Մակեդոնական կայսրության քայքայումից հետո այստեղ կազմավորվեցին ստրկատիրական անկախ պետություններ. արևմուտքում՝ Պափլագոնիան, արևելքում՝ Հունա-լազական Պոնտական թագավորությունը: Մեր թվակ. առաջ IV դարից սկսած հունական գաղութացումը ուժեղացավ, որը հանգեցրեց, առանձնապես արևմտյան շրջաններում, հելլենիստական կուլտուրայի տարածմանը: Բայց Լազիկայում լազերը թվական տեսակետից գերազանցում էին հույն գաղութարնակիչներից: Մեր թվականության III—VI դարերում լազերը, թոթափելով հռոմեական տիրապետությունը, կազմեցին էգրիսի թագավորությունը, որը Նշիլ-Իրմակ գետից տարածվում էր մինչև Ռիոն գետի ցածրավայրը: VI դարում այն նվաճեցին բյուզանդացիները: X դարում Լազիկան վերամիավորվեց վրացական թագավորության հետ, իսկ արևմտյան մասը՝ Պափլագոնիան մնաց Բյուզանդիայի կազմում: XIII դարի սկզբին Վրաստանի աջակցությամբ Լազիկայում կազմվեց Հունա-լազական պետություն՝ Տրապիզոնի կայսրությունը վրացական Թամարա թագուհու ազգականներ Ալեքսեյ և Դավիդ Կոմնինների իշխանության ներքո: Այդ պետությունը գոյություն ունեցավ մինչև 1461 թվականը:

Արևելյան Անատոլիան, որի մեծագույն մասը կազմում է Հայ-Քրդական լեռնաշխարհը, պատկանում է Արևմտյան Ասիայի մարդկային կուլտուրայի ամենահնագույն օջախների թվին: Նրա հյուսիսային մասում էր գտնվում Ուրարտու պետությունը (մեր թվակ. առաջ XI—VII դարեր), որի ինքնատիպ բարձր կուլտուրան հետագայում ժառանգեցին ու զարգացրին հայ և վրացի ժողովուրդները: Մեր թվակ. առաջ VII դարի վերջին—VI դարի սկզբին Փոքր Ասիայի արևելյան մասում երևացին արմենների ցեղերը, որոնք աստիճանաբար կրավեցին ամբողջ լեռնաշխարհը: Աքեմենյանների ու Սելևկյանների տիրապետությունից հետո Հայաստանը ձեռք բերեց անկախություն: Տիգրան II թագավորի օրով (մեր թվակ. առաջ 95—55 թթ.) Հայաստանը դարձավ մի վիթխարի ու

2 Հռոմեական տիրապետության շրջանում լատիներեն լեզուն Փոքր Ասիայում օգտագործվում էր միայն որպես պետական (պաշտոնական) լեզու: Բայց արդեն VII դարում հունարենը նրան վերջնականապես դուրս մղեց պետական գործունեության բոլոր ոլորտներից [143, էջ 112]:

հզոր պետություն, որը գյուղատնտեսության զարգացման մակարդակով իրենից ներկայացնում էր այն ժամանակվա առաջավոր երկիր։ Հայերը մշակում էին ոչ միայն բազմաթիվ հացահատիկային ու պաղպաղու բույսերի կուլտուրաներ, այլև դիտեին կերաբույսեր (առվույտ, երնջնուկ, գլուլ)։ 387 թվականին Հայաստանը բաժանվեց Բյուզանդիայի և Պարթևստանի միջև։ VII դարի վերջին այն նվաճեցին արաբները։ Խալիֆաթի տիրապետությունը Հայաստանում տևեց մինչև 885 թվականը։ Բագրատունիների օրով (885—1045) Հայաստանը ապրեց տնտեսական և կուլտուրական վերելք։ Պեղումների ժամանակ հայտնաբերված արհեստի առարկաները ու արվեստի ստեղծագործությունները ցույց են տվել, որ Հայաստանի քաղաքների կուլտուրական կյանքը զարգացման ավելի բարձր մակարդակի վրա էր, քան Արևմտյան Եվրոպայի միջնադարյան քաղաքներում [153, էջ 38]։ Հայ-Քրդական լեռնաշխարհի և Վերին Միջագետքի հարավային մասում դեռ մեր թվակ. առաջ III հազարամյակում գոյություն է ունեցել Սուբարուի սպիտակաերական պետությունը։ Մեր թվակ. առաջ XVIII դարում նրա տերիտորիայի վրա ծագեց մի այլ պետություն՝ Միտաննին, որը մեր թվակ. առաջ XV դարում նվաճվել էր Ասորեստանի կողմից։ Այնուհետև այստեղ տիրապետել են Աքեմենյանները, Սելևկյանները, հին Հռոմը, Պարթևստանը, Բյուզանդիան, սասանյան Իրանը։ Երկրամասը արաբների կողմից նվաճվելուց հետո, հատկապես մեր թվակ. X դարում Հայ-Քրդական լեռնաշխարհի հարավային մասում սկսեցին բնակություն հաստատել քրդական ցեղերը։ Դեռ դրանից առաջ, VII—VIII դարերում արաբները Վերին Միջագետքի լեռնային շրջանների քրդական ցեղերին դրել էին որպես առանձին էթնիկական ընդհանրություն, չնայած նրա ցեղական խիստ մասնատվածությանը, իսկ քրդերենը արդեն VI—VII դարերում որպես ինքնուրույն լեզու անջատվեց իրանական մյուս լեզուների շրջանից [35, էջ 114—115]։

Առանձնապես հարկավոր է հիշատակել Հարավ-Արևելյան Անատոլիայում, Կիլիկիայում, հայկական մեկ ուրիշ պետության գոյության մասին ևս։ XI դարի սկզբին Կիլիկիա գաղթեցին գաղութարնակ հայերը, որոնք 1080 թվականին երկրամասի լեռնային շրջաններում հիմնեցին իրենց պետությունը, որը գոյություն ունեցավ մինչև 1375 թվականը, երբ այն նվաճվեց Եգիպտոսի կողմից։ Կիլիկիան Եգիպտոսի իշխանության տակ մնաց մինչև 1516 թվականը։ Կիլիկյան հայկական պետության բնակչությունը բաղկացած էր հայերից, ասորիներից (այսորիներից), հույներից, ավելի փոքր չափով հրեաներից ու արաբներից [162, էջ 16]։

Համառոտակի սա է Անատոլիայի պատմությունը մինչև թյուրքական ցեղերի զանգվածային գաղթը այնտեղ, որոնք XI դարից սկսելով բնակություն հաստատել Անատոլիայում, այնտեղ հանդիպեցին բարձր զարգացած կուլտուրա ունեցող հին բնակիչների։ Անատոլիայի արևմուտքում և ծովամերձ շրջաններում այդ բնակիչները հիմնականում հույներ էին։ Աբևելքում բնակչության էթնիկական կազմը անհամեմատ ավելի բարդ էր. հույներից բացի այնտեղ ապրում էին լազեր, վրացիներ, հայեր, քրդեր, արաբներ, ասորիներ։ Լեզվական խայտաբղետությունը [այստեղ կային և հնդեվրոպական լեզուներ (հունարեն, հայերեն, քրդերեն), և սեմական լեզուներ (արաբերեն, ասորերեն) և կովկասյան լեզուներ (լազերեն, վրացերեն)] ուղեկցվում էր տնտեսական-կուլտուրական տիպերի բազմազանությամբ։ Այստեղ ապրում էին նստակյաց հողագործներ և անասնապահներ, քաղաքային կյանքի հին ավանդույթներ ունեցող քաղաքաբնակներ (հայեր, հույներ, վրացիներ, ասորիներ), քոչվոր անասնապահներ (քրդեր, արաբների մի մասը), ձկնորսներ և ծովագնացներ (ծովամերձ շրջաններում ապրող հույների ու լազերի մի մասը)։ Բարդ էր նաև կրոնական կազմը. քրիստոնյաներն ու մուսուլմանները ներկայացված էին տարբեր ուղղություններով և աղանդներով։ Քրիստոնյաները բաժանվում էին ուղղափառների (հույներ), հայ լուսավորչականների, նեստորականների և հակոբյանների (ասորիներ) և ուրիշ ավելի փոքր խմբերի։ Մուսուլմանների մեջ գերակշռում էին սունիները (քրդերի և արաբների հիմնական մասը), բայց կային նաև շիաներ։

Այս բազմալեզու և տնտեսության տիպով ու մշակույթով բազմապիսի հիմնացեղի վրա, պատմության կամքով, պետք է նատեր նաև թյուրքական շերտը, որի հետևանքով և ծնունդ առավ էթնիկական մի բարդ ձուլվածք՝ թուրք ժողովուրդը։

Թյուրքական տարրերի ներթափանցումը ժամանակակից Թուրքիայի տերիտորիան տեղի է ունեցել XI դարից առաջ։ Այդ մասին են վկայում գրավոր հուշարձանները՝ հռոմեական, բյուզանդական, ասորական, արաբական, հայկական և այլ աղբյուրները։ Թյուրքերը Փոքր Ասիա էին թափանցում բազմաթիվ ճանապարհներով՝ ոչ միայն արևելքից՝ Իրանի ու Կովկասի վրայով, այլև արևմուտքից՝ Բալկանների վրայով, ինչպես նաև հյուսիսից՝ Սև ծովով։

Արդեն III—IV դարերում թյուրքական ցեղերը, անկասկած, եղել են Փոքր Ասիայի, Կովկասի և Բալկանների ժողովուրդների բազմաբանակ ու մշտական հարևանները. նրանք ավելի ու ավելի ակտիվորեն էին թափանցում այդ մարզերը։ Դերբենտի պարիսպը հենց կառուցվել էր Կենտրոնական Ասիայից եկած թյուրքական այդ առաջին գաղթականների արշավանքներից պաշտպանվելու համար։ Հայ պատմիչ Ագաթանգեղոսը (V դար) հիշատակում է Խոսրով I Թագավորի ժամանակ (217—238) ապրած հոների մասին [192, էջ 20—21]։ V դարի հայ մեկ ուրիշ հեղինակ՝ Փավստոս Բուզանդը հաղորդում է, որ IV դարի 30-ական թվականներին հոները ապրում էին Հյուսիսային Կովկասում և Կասպից ծովի ափերին [231, էջ 14—15]։

Թյուրքական տարրերի նախասկզբնական ներթափանցումը Փոքր Ասիա, ինչպես նաև Բալկաններ, սկսվել է IV դարի վերջին։ 375 թվականին քոչվոր ցեղերի հսկայական զանգվածներ հոների գլխավորությամբ մերձկասպյան տափաստաններից շարժվեցին դեպի արևմուտք։ Սկսվեց այսպես կոչված ժողովուրդների մեծ գաղթը։ Այդ մասին հաղորդում են հռոմեացի շատ պատմաբաններ (Ամմոնիոս, Ամբրելիոս, Վիկտոր, Ամմիանոս Մարցելիանոս և ուրիշներ) [142, հատ. II, էջ 315—337]։ Բյուզանդական ժամանակագիրները հոների մասին հիշատակում են VI—V դարերում՝ Փոքր Ասիայի, Հայաստանի և Բրակիայի կապակցությամբ։ Փիլոստորգիոսը,

օրինակ, հաղորդում է, որ հոները Բրակիայում, Միջագետքում, Սիրիայում, Կիլիկիայում երևացել են 395 թվականին [325, էջ 291], Սոզոմենը հայտնում է, որ նրանք Բյուզանդիայի սահմաններն են ներխուժել նույն թվականին և հարձակվել են Բրակիայի վրա 404 թվականին [325, էջ 317]։ Օլիմպիադորոսը գրում է, որ նրանք Բրակիա են ներխուժել 415 թվականին [325, էջ 288]։

Հոները, ինչպես հայտնի է, ջախջախեցին ալաններին, որոնց մի զգալի մասը նվաճվել էր նրանց կողմից, մտել հոների ցեղային միության մեջ և աստիճանաբար թյուրքացվել։ Հոների կազմի մեջ մտնում էին նաև բուլղարներ, սավիրներ (սուվարներ), սարմատական ցեղեր և այլն։

Թեոդոսիոս կայսրը Բրակիայում ծանր պարտություն մատնեց հոներին, որոնց մեծագույն մասը սրի կացնից եղավ, իսկ մնացածները բնակեցվեցին տարբեր վայրերում [142, հատ. 2, էջ 344]։ V դարի սկզբին հոները քոչեցին Բրակիա [240, I, 2, էջ 90]։

Կարճատև անկումից հետո հոները նորից միավորվեցին և V դարի առաջին կեսին բնակություն հաստատեցին Պանոնիայում։ Հոների գլուխ կանգնեց Աթթիլան, որի երևան գալը նշանավորվեց հոների ցեղային ֆեդերացիայի ամենաբարձր ծաղկումով [433—453]։ Այդ ժամանակ հոները մի քանի անգամ ներխուժել էին Բրակիա [142, հատ. I, էջ 821]։ Աթթիլայի մահից հետո հոների ֆեդերացիան և տերությունը քայքայվեց (ի դեպ, ենթադրում են, որ նա սպանվել էր բյուզանդիայում [324, էջ 116])։ Հոների հիմնական զանգվածը քոչեց Սև ծովի հյուսիսային շրջանները։ Սակայն արագ մասը անցավ Բյուզանդիայի սահմանները և բաժանվեց առանձին ուլուսների [109, էջ 118—119]։ Բյուզանդացի պատմաբան Թեոփանեսը գրում է, որ հոները մասնակցում էին Իրանի դեմ Բյուզանդիայի մղած պատերազմներին, Բրակիայում և Բոսֆորում ապրած հոների մասին [325, էջ 335]։ Այսպիսով, հոների ինչ-որ մի մասը ընկել էր Բրակիա, և, դուցե, անգամ Փոքր Ասիա, այնտեղ նստակյաց դարձել և խառնվել տեղական բնակչության հետ։ Հավանաբար, հենց

այդ ժամանակից էլ հոների «հուն» ցեղանունը պահպանվել է բալկանյան և բյուզանդական անձնանունների մեջ (օրինակ, հունգարական Հունյադի ազգանունը, բյուզանդացի սարեգիր Նիկիտա Հոնիատի անունը)։

VI դարից հոները պատմական ասպարեզից դուրս եկան, տեղը զիջելով բուլղարներին, սուվարներին, ավարներին և խազարներին։ Ավելի շուտ, այս ցեղերը նախկինում մտել էին հոների ցեղային ֆեդերացիայի մեջ, բայց նրանց սեփական ցեղական անունները մնացած են եղել «հուն» անվան տակ, որը որոշ ժամանակ ընդհանուր անուն է եղել հոնական միավորման մեջ մտնող բոլոր ցեղերի համար։ Հոնական շրջանում բուլղարները, օրինակ, մասնակցել են դեպի Արևմտյան Եվրոպա կազմակերպված արշավանքին, որի մասին, մասնավորապես, վկայում է լանգոբարդական պատմաբան Պողոս Դիակոնի հաղորդումը [330, էջ 47, 56]։

V դարում Մերձազովյան շրջանում կազմավորվեց ցեղերի մի միություն բուլղարների գլխավորությամբ։ Այժմ արդեն «բուլղար» ցեղանունը սկսեց դերակշռել առանձին ցեղերի անունների համեմատությամբ և դարձավ Հյուսիսային Մերձսևծովյան շրջանի ցեղերի ընդարձակ ֆեդերացիայի ընդհանուր քաղաքական տերմին։ Այդ մասին շատ տեղեկություններ են պարունակում բյուզանդական ժամանակագրությունները [201 ,էջ 385, 388, 434, 437. 180, էջ 363. 232, էջ 262], որոնք այդ ժամանակաշրջանում ամենից ավելի հաճախ հիշատակում են բուլղարների մասին (V դարի վերջը—VI դարի սկիզբը) [307, էջ 50]։ Բուլղարական ցեղերը ակտիվ կապերի մեջ էին Բյուզանդիայի հետ. հաճախ հանդես էին գալիս որպես նրա դաշնակիցներ, պատերազմում էին նրա զորքերի շարքերում, բնակություն հաստատում Թրակիայում [12, էջ 149—151]։ 530 թվականին Բյուզանդիան բուլղարների մի մասին բնակեցրեց Անատոլիայում (Տրապեզուսի, Ճորոխ և Վերին Եփրատ գետերի շրջանները) [526, էջ 167]։

VI դարում Փոքր Ասիայի և Կովկասի շատ իրադարձություններ կապված են եղել սավիրների (սուվարների, սուբարների, սիբիրների)[3] անվան հետ, որոնց Թեոֆիլակտ Սիմոկատտան դասում էր Հյուսիսային Կովկասում ապրող հոների թվին [233, էջ 160]։ Հոների արշավանքների ժամանակ ընդարձակ մնացին դեպի Արևմուտք տանող ճանապարհի մի կողմում։ Աղբյուրները նրանց անվանում են նաև «սպիտակ հոներ»։ Ինչու Սոխրիտայի ասորական ժամանակագրության մեջ (VI դարի սկիզբ) բերված է մի փաստ այն մասին, որ սպիտակ հոները ներխուժել են Արևմտյան Ասիա, «երբ ամբողջ Սիրիան գտնվում էր նրանց ձեռքում» [197, էջ 39—40]։ Սիրիայից բացի, սուվարները արշավանքներ էին կատարում դեպի Հայաստան և Փոքր Ասիա, հասնելով մինչև Կապադովկիա [232, էջ 126]։ Սուվարները զինվորական ծառայության էին վարձվում նաև բյուզանդական բանակում։

568 թվականին սուվարներին ջախջախեցին ավարները։ Դրանից հետո սուվարների հիմնական զանգվածը գաղթեց Աղվանք (Ադրբեջան)։ Ինչպես հաղորդում է Մենանդրը, Խոսրով Անուշիրվանը կոտորեց նրանց մեծ մասին, իսկ մնացած 10 հազար հոգուն բնակեցրեց Արաքսի և Կուրի միջև [34, էջ 411—412]։ IV դարի 60-ական թվականներին Դանուբի վրա կազմվեց ավարական կագանատը, որի հիմնական կորիզը կազմում էին թյուրքական ցեղերը։ Բյուզանդիայի ժամանակագրիչները ավարների մասին հիշատակում են դեռևս 552 թվականից [325, էջ 41, 105, 111, 122, 355, 365]։ Հովհան Մալալան հաղորդում է, որ 557—558 թվականներին նրանք հայտնվել են Կոստանդնուպոլսում [325, էջ 187]։ Բայան խանի տիրապետության տարիներին ավարները հարձակումներ էին գործում Բյուզանդիայի վրա, որը մի ժամանակ նույնիսկ տուրք էր վճարում նրանց։ Ավարները 619 թվականին պաշարել էին Կոստանդնուպոլիսը և 626 թվականին՝ սլավոնների հետ [250, էջ 127, 220, էջ 229]։ Հայտնի է նաև, որ Բյուզանդիան ավարներին իր կողմն էր գրավում որպես

[3] Մահմուդ Կաշգարին (XI դարի վերջ) նշում էր, որ սուվարները և բուլղարները խոսում են թյուրքերեն [386, էջ 30] և որ նրանք, ինչպես նաև «ճմեկներն ու ղրղիզները» բնակություն են հաստատել մինչև «Ռուս և Ռում երկրները» [386, էջ 32], այսինքն, մինչև Ռուսիա և Բյուզանդիա

ռազմական դաշնակիցների [197, էջ 139]։ Բնակության համար նրանց հողեր հատկացվեցին Դանուբից հարավ, Սավա և Դրավա գետերի միջև ընկած տարածությունում։ Մենանդրի հաղորդման համաձայն, 565 թվականին Կոստանդնուպոլիս ժամանեց առաջին դեսպանությունը Բայան խանի կողմից [325, էջ 254]։ 577 թվականին Հուստինիանոս II կայսրը Արևելյան Անատոլիայում բնակեցրեց ավարներից կազմված զորքեր՝ սահմանները պարսիկներից պաշտպանելու համար։ Հերակլ կայսրը 620 թվականին հետևեց նրա օրինակին [526, էջ 167]։ Ավարների մի որոշ մասը բնակություն հաստատեց Դանուբի վրա։ VIII դարի վերջին Ավարական կագանատը քայքայվեց։ Հետաքրքրական է նշել, որ «ավար» անունը պահպանվել է բալկանյան անձնանունների մեջ, օրինակ՝ Օբրենովիչների սերբական իշխանական ազգանվան մեջ. սլավոնները ավարներին կոչում էին օբրեր (իրենք՝ ավարները իրենց անվանում էին արար), Հին Ռուսիայում նույնիսկ հայտնի էր՝ «կորավ՝ ինչպես օբրե» առածը, որը օգտագործում էին, երբ ցանկանում էին ընդգծել ինչ-որ մի մեծ և մի ժամանակ հզոր բանի անհասկանալի չքացումը։

VI դարի վերջին բուլղարներն ու սուվարները ընկան Թյուրքական կագանատի իշխանության տակ, որը միավորում էր բազմաթիվ ցեղեր՝ Չինաստանից մինչև Իրան և Բյուզանդիա ընկած լայնածավալ տարածքում[4]։ 568—569 թթ. Կոստանդնուպոլիս ժամանեցին Թյուրքերի երկու դեսպանություններ։ 576 թվականին Բյուզանդիան իր հերթին դեսպանություն ուղարկեց կագանատ։ Ըստ որում բյուզանդական դեսպանը իր հետ վերցրեց Կոստանդնուպոլսի բնակիչ 106 Թյուրքերի [250, էջ 127]։ Սա խոսում է այն մասին, որ Կոստանդնուպոլսում գոյություն ուներ Թյուրքերի (ավարների, բուլղարների, սուվարների, գուցե և խազարների) նշանակալի գաղութ։ Բայց հենց այդ թվականին էլ Բյուզանդիայի և

[4] Կագանատի կենտրոնը Ալթայն էր. արևելքում նրա տերիտորիան հասնում էր մինչև Դևղին ծով, Միջին Ասիայում նրա կազմի մեջ էին մտնում Սոգդը և Սիրդարյայի ու Ամուդարյայի միջագետքը։ 588 թվականին նա տրոհվեց Արևելյան կագանատի (Մոնղոլիայում) և Արևմտյան կագանատի (Արևելյան Թուրքեստան և Յոթնագետքը)։

Թյուրքական կագանատի միջև սկսվեց պատերազմ [34, էջ 370—382]։ Բյուզանդիան մերձեցավ բուլղարների հետ, և նրանք սկսեցին համատեղ պայքար կագանատի դեմ։ Դրա հետևանքով բուլղարները կազմեցին իրենց տերությունը՝ Մեծ Բուլղարիան։

VII դարում բուլղարների մի մասը գաղթեց Դանուբի շրջանը[5]։ 755 թվականին նրանցից ինչ-որ մի մաս Բյուզանդիայի կողմից վերաբնակեցվեց Հարավային Անատոլիա [526, էջ 167]։ 778 թվականին բուլղարացի իշխան Տելերիխը մկրտվեց իր շքախմբի հետ միասին, ամուսնացավ բյուզանդական կայսեր հորեղբոր աղջկա հետ և դարձավ բյուզանդական պատրիկ [250, էջ 129]։ Գուցե, բուլղարական այդ բնակչությունից էլ պահպանվել է ժամանակակից Թուրքական «Բուլղար դաղը» («Բուլղարական լեռ») անունը Թուրքիայի հարավում։ Ժամանակակից Թյուրքական լեզուներից բուլղարենի որոշ գծեր ամենից շատ պահպանել է չուվաշերենը, բայց նրանից որոշ գծեր կան նաև գագաուզերենում [26, էջ 106, 117]։ Վերջինս վկայում է այն մասին, որ Դանուբի ափերը գաղթած ոչ բոլոր բուլղարներն էին, որ հետագայում սլավոնացան. նրանցից ինչ-որ մի մասը երկար ժամանակ մնում էր որպես Թյուրքական էթնիկական խումբ, իր որոշ տարրերը հաղորդելով ավելի ուշ եկած Թյուրքական այլ ցեղերին (պեչենեգներին, ուզերին, պոլովեցներին), որոնք մասնակցություն են ունեցել գագաուզների էթնիկական ընդհանրության ձևավորմանը[6]։

VII դարում Փոքր Ասիա թափանցեցին նաև խազարները [169]։ 626 թվականին բյուզանդացիները դաշինք կնքեցին խազարների հետ՝ ընդդեմ արաբների [325, էջ 44]։ VII—

[5] Հետագա դարերում Դանուբի բուլղարները ձուլվեցին սլավոնների հետ և կազմեցին էթնիկական նոր ընդհանրություն՝ արդեն սլավոնալեզու, որը սակայն պահպանել էր Թյուրքական նախկին ցեղանունը, ինչպես նաև հին Թյուրքական, ճիշտ է, շատ աննշան գծեր մշակույթի մեջ և լեզվում [179. 112]։

[6] Հնագիտության տվյալներով, բուլղարների և այլ քոչվորների առանձին խմբեր տեղական բալկանյան բնակչության հետ չձուլվեցին անգամ մինչև VIII դարը և XI դարի առաջին կեսը [215, էջ 3—5]։

VIII դարերում անչափ ընդլայնվեցին ու ամրապնդվեցին Բյուզանդիայի կապերը խազարների հետ։ Բյուզանդական կայսրերը ամուսնական կապերի մեջ էին մտնում խազարների իշխանուհիների հետ։ Հուստինիանոս II-ը (685—695) ամուսնացել էր խազարական կագանի աղջկա հետ, որը մկրտվելուց հետո ստացավ Թեոդորա անունը. Տիբերիոս II-ը նույնպես ամուսնացել էր կագանի աղջկա հետ և 708 թվականին Կոստանդնուպոլիս եկավ խազար զինվորներով [250, էջ 128]։ Կոստանդին V-ի (741—775) կինը նույնպես կագանի աղջիկ էր, որի քրիստոնեական անունն էր Իրենե [325, էջ 44]։ Վերջինս ևս բյուզանդական մայրաքաղաք եկավ խազարներից կազմված իր պատվավոր պահակախմբով։ Նրա որդին՝ Լևոն IV կայսրը ստացել էր «խազար» անունը։ Կոստանդնուպոլիս եկած խազարների մի մասը ընդունեց քրիստոնեություն, բայց հետագայում «հերետիկոսության մեջ ընկավ» և արտաքսվեց Կապադովկիա (Հարավային Անատոլիա) [250, էջ 128—129]։ IX դարում բյուզանդական կայսրերը իրենց արքունիքին կից ստեղծեցին խազարական գվարդիա։ Այդ մասին գրում է Կոստանդին Պորփյուրոգենեսը (Ծիրանածինը) «Բանակաթեմների մասին» երկում [325, էջ 228]։ Բազմաթիվ խազարներ բարձր պաշտոնների հասան բյուզանդական արքունիքում։ Այսպես, զրիմցի խազար Վարդանիոս Թուրքոսը դարձավ Անատոլիայի ստրատելատ [250, էջ 129]։

Հարկավոր է առանձնակի կանգ առնել թյուրքական ցեղերի՝ Անդրկովկաս և Փոքր Ասիա ներթափանցելու վերաբերյալ հաղորդումների վրա, որ կան Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ. հետազոտողների մեծ մասը վերջինիս համարում է V դարի հեղինակ։ Սակայն նրա «Հայոց պատմության» մեջ խոսվում է ոչ միայն հոների, այլև բուլղարների, խազարների, վասիլների մասին։ «Վաղարշակը (մեր թվակ. առաջ II դարի հայոց թագավորը։— Դ. Ե.),— գրում է Մովսես Խորենացին,— իջնում է Շարայի սահմանի մոտի խոտավետ տեղերը, որ հին մարդիկ կոչում էին Անվայտ կամ Վերին Բասյան, բայց ետո (ընդգծումը մերն է։— Դ. Ե.) Բուլղար Վղնդուր Վունդի գաղթականության պատճառով, որ այդ տեղերում բնակվեց, նրա անունով կոչվեց Վանանդ. և (մոտակա) գյուղերը նրա եղբայրների և սերունդների անուններով են կոչվում մինչև այժմ» [170, էջ 81][7]։ Թվում էր, թե այդ դաղթը կարելի կլիներ կապել Վաղարշակի թագավորության ժամանակաշրջանի, այսինքն՝ մեր թվակ. առաջ II դարի հետ։ Բայց տարեգրության մեջ եղած «հետո» բառը հուշում է բուլղարների գաղթը վերագրել ավելի ուշ ժամանակաշրջանի։ Բայց ո՞ր ժամանակաշրջանին։ Ի դեպ, այդ գաղթի փաստն իսկ հաստատվում է այն բանով, որ վրացական աղբյուրներում Բյուրքալեզու բավական ժողովուրդը, որը գրավել էր Բալկարյան կիրճը, կոչվում էր «բասիանի» [140, էջ 56], մի բան, որ ցույց է տալիս նրա կապը հայկական Բասեն (Բասեն, Բասենը կամ հին շրջանի Բասիանը, Ջահանը գտնվում է Երզրումից հարավ)։ Այս տեղանունը, հավանաբար, պահպանվել է ժամանակակից Թուրքական Փաթինելեր անվան մեջ։ VII դարի հայկական «Աշխարհացույց»-ում ասված է, որ Վանանդի գլխավոր քաղաքն է Կարսը [170, էջ 339]։

«Հայոց պատմության» մեջ բուլղարների մասին երկրորդ հիշատակությունը վերաբերում է Վաղարշակի որդի Արշակի թագավորության տարիներին (մեր թվակ. առաջ II դարի վերջը), երբ «մեծ խռովություններ ծագեցին Կովկաս մեծ լեռան դռներում, բուլղարների երկրում և նրանցից շատերը հեռանալով եկան մեր երկիրը և բնակվեցին Կողից ներքև արդավանդ և հացառատ տեղերում երկար ժամանակ» [170, էջ 87]։ Շատ հետազոտողներ բուլղարների մասին նման վաղ հիշատակությունը (մեր թվակ. առաջ II դար) համարում են ժամանակավրիպում։

Ժամանակավրիպում են թվում նաև Մովսես Խորենացու հաղորդածները խազարների մասին, մի բան, որ համոզիչ կերպով ցույց է տվել Լ. Մ. Մելիքսեթ-Բեկը [161]։ Սկզբնական շրջանի հայ պատմագրությունը (IV—VI դարեր), որում

7 Մովսես Խորենացու «Հայոց պատմության» երկրորդ հրատարակության մեջ (1893 թվական) գաղթածների գլխավորի անունը ռուսերեն տառադարձված է որպես Վհնդուր Բուլգար Վունդ [էջ 56]։ «Բուլգար» անունը տառադարձվում է նաև «Բուլկար» [235, էջ 20]։

է նա, եթե չհաշվենք Մովսես Խորենացուն, բոլորովին չդիտեն խազարներին։ Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Կորյունը, Ղազար Փարբեցին, Ջենոբ Գլակը, Եղիշեն խազարների մասին չեն հիշատակում։ Բայց խազարներին ու վասիլներին հավասարապես գիտեն VII դարի հայկական «Աշխարհացույց»-ի հեղինակ Անանիա Շիրակացին և Մովսես Խորենացին։ Խազարների մասին բավական հանգամանորեն խոսում են VII դարի մեկ ուրիշ պատմիչ՝ Մովսես Կաղանկատվացին և ավելի ուշ շրջանի հեղինակներ։ Այսպես, VIII դարի պատմիչ Ղևոնդը պատմում է խազարների և Հայաստանի պատերազմի մասին։ Նրա հաղորդածները տարբեր բառափոխություններով կրկնել են Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին (X դար), Ասողիկ Ստեփանոս Տարոնեցին (X—XI դարեր), Կիրակոս Գանձակեցին (XIII դար) և ուրիշներ [161, էջ 115—116]։ Ղևոնդը հաղորդում է նաև Հուստինիանոս II կայսեր ու խազարական կագանի (խաքանի) դաշեր ամուսնության մասին. այս բանը կրկնում է նաև Կիրակոսը։

Ստեփանոս Ասողիկ Տարոնեցին տեղեկություններ է հաղորդում նաև VII—VIII դարերի սահմանագծում խազարների հետ բյուզանդացիների ունեցած շփումների մասին, այն մասին, թե ինչպես Հուստինիանոս II-ը խազարական զորքի օգնությամբ վերադարձավ «Կոստանդնուպոլիս թագավորական քաղաքը», թե ինչպես նրա թագավորության շրջանում խազարները հպատակեցրին Հայաստանը, Վրաստանը և Աղվանքը [161, էջ 116]։ Այս տեղեկությանը համապատասխանում է նաև XI դարի վրացի տարեգիր Լեոնտի Մրովելիի հաղորդումը այն մասին, որ խազարների ներխուժումից հետո «Քարթլիում խոսում էին վեց լեզվով՝ հայերեն, վրացերեն, ասորերեն, եբրայերեն և հունարեն» [161, էջ 117]։

Եվ այսպես, V դարի հայ պատմիչները բոլորովին չդիտեն խազարներին։ Դրա փոխարեն այդ նույն խազարներին հիշատակում են, Մովսես Խորենացուն չհաշված, VII և ավելի ուշ դարերի հայ պատմիչներն ու այլ գրողներ, ընդհուպ մինչև XIII—XIV դարերը։ Դա հասկանալի է, քանի որ խազարները պատմության ասպարեզ են եկել VI—VII դարերից ոչ շուտ։ Այդ կապակցությամբ Լ. Մ. Մելիքսեթ-Բեկը դնում է Մովսես Խորենացու պատմությունը գրված լինելու ժամանակի հարցը, դրա լուծումների շարքում առաջարկելով կոմպրոմիսային լուծում, այսինքն, որ Մովսես Խորենացին V դարի հեղինակ է, իսկ խազարների մասին հատվածը, ինչպես և նրա «Հայոց պատմության» եղած ցուցակների ու խմբագրությունների տեքստի բազմաթիվ այլ ժամանակավրիպումներն ու անհամապատասխանություններ ավելի ուշ շրջանի արտագրողների ու խմբագիրների միջարկություններ են (161, էջ 118)։ Ըստ երևույթին, այս դիրքերից էլ հարկավոր է մոտենալ Մովսես Խորենացու բուլղարների մասին եղած տեղեկություններին, քանի որ բուլղարները ևս պատմական բեմ են ելել V դարի վերջից—VI դարի սկզբից ոչ շուտ։

Այս վերապահումներն անելուց հետո արժե, այնուամենայնիվ, բերել Կովկասի վրայով Բյուրքերի ներթափանցման մասին այն տեղեկությունները, որ պարունակում է «Հայոց պատմությունը»։ Այսպես, «խազիրների և բասիլների» պատմությունը։ Այսպես, «խազիրների և բասիլների» արշավանքը, որոնք, միանալով, «Ճորա դռնից (Դերբենտի դրունից) դուրս են գալիս... անցնում են Կուր գետի այս կողմը» [170, էջ 134], Մովսես Խորենացին վերագրում է մեր թվակ. II դարի երկրորդ կեսին։ Նման արշավանքների մասին նրա գրքում հիշատակվում են նաև ավելի ուշ ժամանակաշրջաններում [170, էջ 170, 172]։ Խազիրներին և բասիլներին, անկասկած, հարկավոր է համարել Բյուրքական ժողովուրդներ։ Խազիրները նույն խազարներն են. հռոմեական ու բյուզանդական պատմիչները նրանց երբեմն անվանում էին ակացիրներ [325, էջ 301], իսկ բասիլները նրանց ազգակից բերսիլների ցեղերն են, որոնց VI դարի վերջի—VII դարի սկզբի բյուզանդական պատմիչ Թեոփիլակտոս Սիմոկատտան համարում է հոներ [233, էջ 160]։

Հատկանշական է, որ «Հայոց պատմության» մեջ խոսվում է ոչ միայն Բյուրքական ցեղերի ասպատակությունների և նրանց հետ տեղի ունեցած պատերազմների մասին, այլև հայերի ու Բյուրքերի (ինչպես նաև «հյուսիսային» այլ ժողովուրդների, օրինակ, ալանների) հետ գոյություն ունեցած

խազար կապերի մասին։ Այսպես, Արտաշեսի թագավորության շրջանում (մեր թվակ. I դար) Առավեղյանները, ալանների ազգից, նախարարությունների շարքը դասվեցին։ Տրդատի հոր՝ Խոսրովի ժամանակ (II դարի վերջ—III դարի սկիզբը) նրանք խնամիացան Հայաստան եկած «Բասիլների գաղթականներից մի քաջի հետ (ընդգծումը մերն է։— Դ. Ե.) [170, էջ 127]։

Խազարների և բասիլների մասին հետաքրքրական տեղեկություններ է պարունակում VII դարի հայկական «Աշխարհացույցը». «Բասիլը կամ բասիլիկը Սարմատիայում, Աթլ (Վոլգա) գետի ափին ապրող ժողովուրդ է», «նրանց կողքին ապրում են խազիրները» [170, էջ 293, 303]։ Կարևոր է նաև հետևյալ տեղեկությունը. «Սարմատիայում ապրում են շատ ժողովուրդներ, որոնք են՝ խազիրները... (այնուհետև գալիս է ժողովուրդների թվարկումը։—Դ. Ե.)... մինչև Կասպից ծովը, որտեղ վերջանում է Կովկասից եկող լեռնաբազուկը և որտեղ կառուցված է Պարիսպն Դարբանդայ... Նրանցից (այսինքն՝ հիշատակված ժողովուրդներից։—Դ. Ե.) հյուսիս գտնվում է Հոների թագավորությունը և նրանց վարաչան քաղաքն ու մյուս քաղաքները. հյուսիսի (այսինքն՝ Կասպից ծովից հյուսիս ընկած երկրների։— Դ. Ե.) թագավորն է խաքանը, որը խազիրների ինքնակալն է, և խաթունը՝ նրանց թագուհին, բասիլների ցեղից» [170, էջ 309][8]։ Այսպիսով, խազարների թագավորը կոչվում էր խաքան՝ թյուրքական մի տերմինով, որով անվանում էին ցեղապետին։ VI դարի վերջի— VII դարի սկզբի բյուզանդական ժամանակագրությունները խաքան (խագան) անունով էին կոչում ավարների, հոների և թյուրքական այլ ցեղերի տիրակալներին։ Ռուս տարեգիրների մոտ խազիրների տիրակալը կոչվում էր «կագան»։ Ինչպես հայտնի է, ավելի ուշ «խաքան» (խագան, կագան) բառը դարձել է «խան»։

[8] «Աշխարհացույց»-ի թարգմանության մեկ այլ խմբագրության մեջ այս տեղը տրված է հետևյալ կերպ. «Սարմատիայում գտնվում են լեռներ... և շատ գետեր, այդ թվում Աթլը յոթանասուն վտակներով, որտեղ ամրացել է Բասլաց ազգը». «Սամատիայում ապրում են բազմաթիվ ցեղեր, որոնք են՝ խազիրները... բասիլները» և այլն [20, էջ 35—37, 289, էջ 36]։

Հետաքրքրական է հայ ժամանակագրությունների հիշատակությունը ինչ-որ ճենների մասին, որոնք Հայաստանում են հայտնվել IV դարում։ «Հայ ժամանակագիրների ճենները, — գրում է Կ. Պ. Պատկանովը (Պատկանյանը),— ոչ մի դեպքում չինացիներ չեն եղել (նկատի է առնվում «ճեն» բառի համահնչյունությունը Չինաստան՝ «Չին» անվան հետ։— Դ. Ե.)։ Վրացական ժամանակագրության ճենները պարզապես կոչվում են Թուրքեր (Թյուրքեր։— Դ. Ե.). նրանք գաղթել են Վոլգայի ափերից։ Շիրաքինները և բուլղարները Հյուսիսային Կովկասից գաղթել են Կարսի մարզը»։ Հայկական «Աշխարհացույցը» մանրամասն պատմում է «բոլկարների, ճենների և ուրիշների բնակատեղերի» մասին։ Այնտեղ պատմվում է մի այսպիսի փաստի մասին. «Վաղարշակը արևմտյան մարզերի կառավարիչ նշանակեց կոպիտ դիմագծերով ... տափակաքիթ (ընդգծումը Կ. Պ. Պատկանովինն է։— Դ. Ե.) Թորքին»։ «Տափակաքիթ» մակդիրը հիշեցնում է Հայաստան ներխուժած առաջին Թաթարների արտաքին նկարագրությունը, որ տվել են հայ գրողները (այսինքն՝ այդ Թորքը ունեցել է մոնղոլոիդ գծեր։— Դ. Ե.)» [191, էջ 47—48]։

Սրանք են պատմական փաստերը այն մասին, թե ինչպես են IV—VII դարերում թյուրքական տարրերը թափանցել Փոքր Ասիա և Բալկաններ։ Սակայն թյուրքերի այդ նախասկզբնական թափանցումը կրել է էպիզոդիկ բնույթ և հետքեր չի թողել Փոքր Ասիայի էթնիկական պատմության մեջ։ Այդ ներթափանցումը քանակապես եղել է շատ աննշան։ Ներթափանցած թյուրքական տարրերը արագ կլանվում էին տեղական էթնոսի կողմից, ասիմիլյացվում էին և ձուլվում նրա մեջ։

VIII—X դդ. ժամանակաշրջանը բնութագրվում է արդեն թյուրքերի ավելի նշանակալի խմբերի գաղթով, ընդսմին Միջին Ասիայից և Խորասանից։ VIII դարում միջինասիական գրեթե բոլոր թյուրքական ցեղերը արաբական նվաճումների հետևանքով ընդունեցին իսլամը և որոշ ժամանակաշրջանում դարձան Արաբական խալիֆաթի դաշնակիցները։ Աբասյանները, որոնք 750 թվականին անցել էին իշխանության գլուխ, իրենց սահմանները պաշտպանելու, ինչպես նաև իրենց տերիտորիան ընդարձակելու և «անհավատների» վրա

հարձակումներ կազմակերպելու համար սկսել էին իրենց կողմը գրավել իսլամացած թյուրքական ցեղերին [526, էջ 27]: Խալիֆները բազմաթիվ թյուրքերի էին ուղարկում Անատոլիա Ֆերղանայից, Բալխից, Խորեզմից, Սամարղանդից և Հերաթից: Նրանք Անատոլիայում կազմեցին «ղազիների» «հավատի մարտիկների» ջոկատների հիմնական զանգվածը: Նրանց բնակավայրերը կենտրոնացած էին Թարսուսի, Ադանայի, Մարաշի, Մալաթյայի, Ախլաթի, Մանցիկկերտի (Մանազկերտի) և Էրզրումի շրջաններում [526, էջ 19]: Մութասիմ խալիֆի օրով (833—841), որը, ինչպես հաղորդում է Մասուդին [318], թյուրք վարձկան զինվորներին առաջինը իր մոտ ծառայության վերցրեց նույնիսկ Բաղդադ[9]. թյուրքական բանակը դարձավ հիմնական զինվորական ուժը Արաբական խալիֆայության անատոլիական սահմանամերձ նահանգներում[10]: Այստեղ էմիրներն ընտրվում էին թյուրքական ցեղերի առաջնորդներից: Աֆշինը, Իթաքը, Մենգյուջյուրը, Բուղան առավել հայտնի թյուրք էմիրների անուններ են [526, էջ 19]: «Սիյասեթ-նամե»-ում Մութասիմ խալիֆի մասին հաղորդվում է. նա «ուներ այնքան թյուրք սորուկներ, որքան ոչ ոք չի ունեցել: Ասում են, որ նա ունեցել է յոթանասուն հազար թյուրք սորուկներ: Իր զուլամներից շատերին նա բարձրացրեց էմիրների աստիճանի» [210, էջ 51]: Անատոլիայի բազմաթիվ թյուրք զորապետների ու նրանց ջոկատների մասին Մութասիմի օրով և նրանից հետո (IX—X դ.) պատմվում է Սեյիդ Բաթթալ Ղազիի մասին թուրքական էպոսում [421]: Ինչպես նշում է Գ. Գ. Միքայելյանը, խալիֆայության երկու բանակներ, որոնք ուժեղացած էին թյուրքական վարձկան զորքերով. 837—838 թթ. Կիլիկիայի և Հայաստանի վրայով ներխուժեցին Բյուզանդիայի

[9] Մութասիմը, Ա. Մասսեի խոսքերով ասած, հետագայում թողեց Բաղդադը և մայրաքաղաքը տեղափոխեց իր հիմնադրած Սամառա (835 թվական)՝ ամենայն հավանականությամբ այն պատճառով, որ Բաղդադի բնակիչները «դժվարությամբ էին հանդուրժում այդ օտարերկրացիների ներկայությունը» [159, էջ 65]:

[10] Ծմայանները Արևելյան Անատոլիայում (Թարսուս-Մալաթյա շրջան) ստեղծեցին արաբական երկու սահմանամերձ նահանգ՝ սուգուր [526, էջ 19]:

ահմանները [162, էջ 42]: Բյուզանդական ժամանակագիրները նույնպես հիշատակում են Արաբական խալիֆայության թյուրք վարձկանների մասին, որոնք բնակություն էին հաստատել Բյուզանդիայի արևելյան սահմանների երկայնքով, առաջին անգամ IX դարում, օրինակ, Հովսեփ Գեննեսիոսը [325, էջ 64—65, 176], Հովհան Սկիլիցյան [325, էջ 191] և այլ հեղինակներ:

Մութավաքիլ խալիֆի ժամանակ (847—861), որը հակառակորդների դեմ մղած իր քաղաքական պայքարում հենվում էր թյուրք վարձկանների ռազմական ուժի վրա [159, էջ 159], Անատոլիայի սահմանամերձ նահանգները փաստորեն անցել էին թյուրքական ցեղերի առաջնորդների իշխանության տակ: Առաջնորդները ընտրում էին զորապետներ և իրենց ընտրության մասին հայտնում խալիֆին: Զորապետների անունները ցույց են տալիս նրանց թյուրքական ծագումը. վասըֆ աթ-Թյուրքի, Ամաշտար, Բիլքաշտար, Յազմազ, (Յազման), Ահմեդ իբն Թողան, Ռուստամ իբն Բուրդու, Խաքան, Ահմեդ իբն Քայը[11] [526, էջ 21]: Երբեմն այս զորապետները դառնում էին տեղական անկախ իշխանիկներ: Այսպես, 883 թվականին Եդիսպատի էմիր Ահմադ Թուլունիդը անհաջողության կրեց Թարսուսի պաշարման ժամանակ, որտեղ նրբատած էր նրա զորապետ Յազմանը [162, էջ 43][12]: Ընդհանրապես մեծ է եղել թյուրքերի դերը Աբասյանների տերության կազմավորման և բարձրացման գործում [տե՛ս 430, էջ 177—225]:

Ավելին, այդ ժամանակաշրջանում Անատոլիա էին գաղթում թյուրքական ամբողջ ցեղեր, այնտեղ ապաստան գտնելով իրենց հակառակորդներից: Ս. Գ. Աղաջանովը, հենվելով Մասուդիի հաղորդման վրա [318, էջ 244—245], գրում է, որ թյուրքական չորս ցեղեր՝ պեչենեգները, բաջգարդինները, նուքարդաները և բաջնաները օղուզների, կիմակների և

[11] Վերջին անունը, դուցե, խոսում է կայը (կայըգ) ցեղին պատկանելու մասին, որը ինչ-որ չափով հաստատում է Մ. Ֆ. Քյոփրյուլյուի ենթադրությունն այն մասին, որ Անատոլիայում օղուզների առանձին խմբեր երևացել էին դեռ սելջուկների ներխուժումից առաջ [468, էջ 247]:

[12] Ճիշտ է, ավելի ուշ շրջանի՝ 1031 թվականին վերաբերող հետաքրքրական փաստ է հաղորդում Արիստակես Լաստիվերտցին: Սալամայ սորուկը տապալել էր մուսուլմանական էմիրին էդեսա (Ուրֆա) քաղաքում և անցել էր բյուզանդացիների կողմը [17, էջ 72]: Հովհան Սկիլիցյան նրան համարում էր թյուրք [17, էջ 150]:

կարլուկների հետ ունեցած կատաղի ճակատամարտերի հետևանքով հեռացան Մերձարալյան հողերից և հայտնվեցին Փոքր Ասիայում: Մոտ 932—933 թթ. այդ ցեղերը ներխուժեցին Բյուզանդիայի սահմաններից ներս [9, էջ 129]:

Հավանաբար, պատմական այս փաստերի հիման վրա վ. Ա. Գորդլևսկին միջինասիական թյուրքերի նախասկզբնական ներթափանցումը Փոքր Ասիա համարում է VIII—X դարերը: Նա գտնում է, որ այդ ժամանակ այնտեղ հայտնվեցին (ճիշտ է, ավյալ դեպքում նա սկզբնաղբյուրներ չի հիշատակում) խալաջ, կարլուկ, կանգլի, ղփչաղ ցեղերը [49, էջ 22]: վ. Ա. Գորդլևսկին նշում է, որ Խորասանից փոխադրված թյուրքերը բնակեցվել են Բարսուսից և Էրզրումից դեպի արևելք ընկած մեծ տարածքում, այսինքն՝ Փոքր Ասիայի հարավ-արևելյան մասում: Այսպես նախապատրաստվեց, այնուհետև շարունակում է նա, Փոքր Ասիայի նվաճումը Սելջուկյանների կողմից [49, էջ 22]: Սելջուկյան նվաճումից շատ առաջ (նույնիսկ IV դարից սկսած) թյուրքական տարրերի՝ Փոքր Ասիա ներթափանցելու մասին խոսվում է վ. Ա. Գորդլևսկու ընտիր երկերի I հատորի ներածական հոդվածում, որի հեղինակն է Ե. Ֆ. Կուզովլեվան [146, էջ 14], ինչպես նաև այդ հատորի ծանոթագրություններում [50, հատ. I, էջ 491]: Սակայն, ինչպես տեսանք, թյուրքական տարրերի ներթափանցումը Անատոլիա IV—VII դարերում էականորեն տարբերվում էր ավելի ուշ շրջանի ներթափանցումից՝ VIII—X դարերում, որը, անկասկած, կրում էր ավելի մասսայական բնույթ: Այս բանը անհրաժեշտ է նկատի ունենալ:

Անատոլիայի սելջուկյան նվաճման նախօրյակին և դրա հետ միաժամանակ թյուրքերը Փոքր Ասիա էին թափանցում նաև հյուսիս-արևմուտքից՝ Բալկաններից: Սկզբում դրանք պեչենեգների ցեղերն էին: Մահմուդ Կաշգարին իր աշխատության մեջ քանիցս ընդգծում է պեչենեգների բնակավայրերի մոտիկությունը Բյուզանդիային. «Բեչենեգը (պեչենեգները:— Դ. Ե.) Բյուզանդիային ամենից մոտ գտնվող ցեղն է» [386, էջ 28, 488]: Ընդամին Մահմուդ Կաշգարին նշում է, որ կա պեչենեգների երկու խումբ. մի խումբը ապրում է

Բյուզանդիայի կողքին (հենց այս պեչենեգներն են, որ տեղափոխվել են Բալկանները, փրկվելով իրենց վրա հարձակվող օղուզներից), իսկ երկրորդը պեչենեգների ցեղերից մեկն է, որը մնացել էր իր նախկին բնակավայրերում և մտել էր օղուզների կազմի մեջ, պահպանելով իր նախկին «բեչենեգ» ցեղանունը [386, էջ 488]:

Պեչենեգներից հետո հայտնվեցին ուզերը: Նրանց ինքնանվանման մասին այդպես են հաղորդում բյուզանդական ժամանակագիրները: Հավանաբար, սա փոքր-ինչ փոփոխված «օղուզներ» ցեղանունն է: Իրոք, դրանք օղուզների մի մասն էին, որ շարժվեցին հեռու՝ դեպի Արևմուտք: Ռուս տարեգիրները նրանց անվանում էին Թորքեր (այսինքն՝ թյուրքեր): Նրանք Բալկաններ գաղթեցին ղփչաղներից կրած պարտությունից հետո, որ բավական մանրամասնորեն լուսաբանել է Ի. Մարքվարտը [320, էջ 25—27]: Ուզերի հիմնական զանգվածը 1064 թվականին անցավ Դանուբ գետը և հայտնվեց Բյուզանդիայի տարածքում: Հետագայում ուզական ցեղերի մի մասը ճանաչեց Բյուզանդիայի գերիշխանությունը իր նկատմամբ: Ուզերից շատերը հետագայում բարձր պաշտոններ էին զբաղեցնում Բյուզանդական կայսրությունում [9, էջ 159—160]: Ուզերից հետո դեպի Բալկանները գաղթեցին նաև կումանները (ղփչաղները կամ, ռուսերեն, պոլովեցները:)

Բոլոր այս թյուրքական ցեղերը Բալկաններում հայտնվեցին ու բնակություն հաստատեցին մոտավորապես միևնույն ժամանակ. պեչենեգները՝ IX դարի երկրորդ կեսին—XI դարում, ուզերը՝ XI դարում, կումանները՝ XI դարում—XII դարի երկրորդ կեսին [325, էջ 46—47]: Պեչենեգների և ուզերի մասին հաղորդում են Կոստանդին Միրանածինը, Միքայել Փսելլոսը (վերջինիս «Ժամանակագրությունը» ընդգրկում է 976—1077 թթ.). Բյուզանդիայի ծառայության մեջ գտնվող պեչենեգների մասին շատ տեղեկություններ է տալիս Նիկեփոր Բրիեննիոսը (1062—1118) [325, էջ 210, 267, 269], կումանների մասին՝ Հովհան Զոնարան, որը ապրել է XII դարի առաջին կեսին [325, էջ 198]: Քրիստոնեություն ընդունած և կամ դեռևս շամանականություն դավանող այդ

ցեղերի մի մասին Բյուզանդիան բնակեցնում էր սահմանամերձ նահանգներում: Այդպիսի վերաբնակեցումը շատ ինտենսիվացավ XI դարում, երբ Սելջուկյանների առաջնորդությամբ արևելքից Փոքր Ասիա ներխուժեցին օղուզները և Թուրքմենները: Բյուզանդական կայսրերը փորձում էին դրանով փակել սելջուկ թյուրքերի հարձակման ճանապարհը: Կատարելով սահմանապահ զորքերի պարտականություններ, բյուզանդական թյուրքերը երկիրը պաշտպանում էին հարձակումներից: Թյուրք վարձկան զինվորներ շատ կային նաև բյուզանդական բանակում: 1071 թվականին Մանազկերտի մոտ տեղի ունեցած ճակատամարտում բյուզանդական կայսեր Ռոմանոս Դիոգենեսի աջ թևում կանգնած էին ուզերը, իսկ ձախում՝ պեչենեգները: Իրենց դեմ-հանդիման տեսնելով օղուզա-Թուրքմենական զորքեր և, հավանաբար, լսելով նրանց թյուրքական ռազմական կոչերը (ուռանները), նրանք հասկացան, որ հակառակորդը լեզվով և արյունով մոտ է իրենց, անցան սելջուկների կողմը իրենց զորապետի հետ միասին, որոնք ավելի շուտ նրանց ցեղապետերից էին [49, էջ 23]: Բյուզանդական զորքի մի մասն էլ, որի հրամանատարն էր պրոտոսեբաստոր Միքայել Թարխանիոտը («Թարխան» անունը ցույց է տալիս նրա թյուրքական ծագումը), հրաժարվեց կռվել բյուզանդացիների կողմից [250, էջ 133]: Այս ամենը նպաստեց Սելջուկյանների հաջողությանը այդ ճակատամարտում:

Բալկաններից եկած թյուրքերի մասին առանձնապես շատ տեղեկություններ կան Աննա Կոմնինայի «Ալեքսիադա» երկում (այստեղ նկարագրված են XI դարի կեսը—XII դարի սկզբի իրադարձությունները): Աննա Կոմնինան գրել է ոչ թե իր ժամանակի խոսակցական հունարենով, այլ իր սովորած հին հունարենով, հաճախ հին բառերին տալով նոր նշանակություններ: Այսպես, հին ավանդությամբ նա սկյութացիներ է անվանում քոչվորներին[13]: Բայց, ինչպես երևում է

[13] Համանման երևույթ նկատվում է նաև հայ պատմիչ Արիստակես Լաստիվերտցու մոտ, որը, աշխատելով մնալ կլասիկ լեքսիկայի սահմաններում, թյուրք սելջուկներին անվանում է պարսիկներ [17, էջ 88, 110, 117, 150, 131, 162]:

տեքստից, դրանք եղել են թյուրք քոչվորներ՝ պեչենեգներ, ուզեր, կումաններ [15, էջ 22, 45]: Աննա Կոմնինան երբեմն առանձին ուզերին անվանում է սավրոմատներ. [15, էջ 201, 214]: Դրա հետ մեկտեղ նա օգտագործում է թյուրքական ուզ [15, էջ 214], պեչենեգ [15, էջ 208, 212, 213, 216, 217, 233, 235] կուման [15, էջ 208, 213—215, 233—240, 266—274, 384, 394, 396, 397] ցեղանունները: Հետաքրքրական է Աննա Կոմնինայի հետևյալ վկայությունը. «Սկյութական ցեղերից մեկը (ինչպես ապացուցել է Յա. Ն. Լյուբարսկին, դրանք եղել են պեչենեգները [տե՛ս 15, էջ 528, հավ. 723]:— Դ. Ե.), որը շարունակ կողոպտանների էր ենթարկվում սավրոմատներից (այսինքն՝ ուզերի կողմից [տե՛ս 15, էջ 529, հավ. 724]:— Դ. Ե.), թողեց իր վայրերը և իջավ դեպի Դանուվից (Դանուբ:— Դ. Ե.)»: Անցնելով գետը, նրանք «սկսեցին կողոպտել հարևան երկրները և գրավեցին մի քանի քաղաքներ: Հետագայում, մի քիչ հանգարտվելուց հետո, նրանք սկսեցին մշակել հողը, ցանել կորեկ և ցորեն (ընդգծումը մերն է:— Դ. Ե.)» [15, էջ 201]: Սա վկայում է ամենից առաջ այն մասին, որ պեչենեգները եղել են բավական շատ (նրանք գրավել են մի քանի քաղաքներ), և ապա՝ որ պեչենեգները դարձել են նստակյաց գյուղացիներ:

Բյուզանդական զորքերում ուզերը ծառայում էին որպես նետաձիգներ [15, էջ 170]: Շատ թյուրքեր հետագայում գարձան բյուզանդական ականավոր զորապետներ, օրինակ՝ Հայր Ալեքսիոս Կոմնինի զորավար Ուզան («նրա անունը ծագում է ցեղի անունից»՝ նշում է Աննա Կոմնինան. այսինքն՝ նա եղել է ուզ) [15, էջ 270]: Մեկ ուրիշ զորավար, Արգիր Կարացան (Կարաջան?) նույնպես եղել է ուզ [15, էջ 209, 240, 247]: Մոնաստրոս զորավարի մասին Աննա Կոմնինան գրում է, որ նա եղել է կիսաբարբարոս և իմացել է թյուրքերեն լեզու [15, էջ 297], այսինքն, հավանաբար, ունեցել է հույն-թյուրքական խառը ծագում:

Բյուզանդացիների մոտ զինվորական ծառայության մտած թյուրքերի թիվը շատ շատ էր: Այն բանից հետո, երբ բյուզանդացիներն ու նրանց դաշնակից կումանները չախչախե-

ցին պեչենեգներին, վերջիններիս մի մասը կանանց ու երեխաների հետ բնակեցվեցին Մոզիևներում (Վարդար գետից հարավ-արևմուտք)։ Նրանցից կայսրը կազմեց իր զորքի հատուկ ջոկատ [25, էջ 543]։ «Ալեքսիադան» անչափ շատ տեղեկություններ է պարունակում Բալկաններից եկած այն թյուրքերի մասին, որոնք ծառայության են մտել բյուզանդացիների մոտ. «սկյութներեն լեզուն իմացող կիսաբարբարոս մի զինվոր բյուզանդացիների մոտ» [15, էջ 222], «սկյութացի Թաթրանը անցավ բյուզանդացիների կողմը» [15, էջ 224] («Աաք Իգորի գնդի մասին» պոեմում հիշատակված է Թաթրաններ ժողովուրդը), «սկյութացի սարուկ (այսինքն՝ ուզ, պեչենեգ կամ կուման—Դ. Ե.) Դմիտրի անունով» [15, էջ 341], «նավեր արագավազ սկյութացին՝ կարևոր լուրեր հաղորդելու համար» [15, էջ 340]։ Խաչակիրների դեմ բյուզանդական զորավար Կանտակուզինի մղած ճակատամարտի ժամանակ նրա զորքերում կային շատ «սկյութացիներ» (ուզեր, պեչենեգներ, կումաններ) [15, էջ 353]։ Մեկ ուրիշ ճակատամարտի ժամանակ, գրում է Աննա Կոմնինան,— «սկյութացիները... (իսկ նրանցից շատ կային ռոմեական բանակում) նետվեցին ավարի հետևից, ինչպես դա ընդունված է բարբարոսների մոտ» [15, էջ 336]։

Ազգագրական տվյալները նույնպես վկայում են այն մասին, որ թյուրքական տարրերը Բալկաններն ու Փոքր Ասիա են թափանցել հյուսիս-արևմուտքից։ Այսպես, Բալկանների, իսկ մի շարք դեպքերում նաև Անատոլիայի բնակչությունը պահպանել է այնպիսի գծեր, որ թողել են հարավային Ռուսաստանի տափաստաններից այստեղ եկած թյուրքական ցեղերը։ Արևելյան Բրակիայում դեռևս XX դարի սկզբին պահպանվել էին քրիստոնյա Թուրքեր, որոնք կոչվում էին «սուրդուչներ»։ Վ. Ա. Մոշկովը ենթադրում է, որ «սուրդուչ» ցեղանվան մեջ կա «օղուզ» (սուրդուչ—սուրդուզ?) ցեղանվան արձագանքը [173, էջ 410. 310, էջ 427]։ Անատոլիայում, Կայսերի քաղաքի մոտ, XV—XVI դարերում, դատելով արխիվային փաստաթղթերից, ապրում էին քրիստոնյա Թուրքեր, որոնք կրում էին «կարա-քեչիլի» ցեղանունը [526, էջ 167—168]։ Կայսերի քաղաքի շրջակայքի XIII դարի

քրիստոնյա բնակիչների ցուցակում հայտնաբերվել են այնպիսի անուններ, ինչպիսիք են Յուրյուբ-վելիդի Մեհթար և Սարգիս-վելիդի Էյմյուր [503, էջ 68]։ Իսկ «յուրյուրը» և «էյմյուրը» Թյուրքական ցեղանուններ են։ Ուստի միանգամայն հավանական է, որ սուրդուչները, կարա-քեչիլիները և ցեղանուններ ունեցող քրիստոնյաները քրիստոնեության ընդունած և Բյուզանդիայի կողմից բնակեցված պեչենեգների, ուզերի և կումանների մնացորդներն են։ Կան էթնիկական մի շարք ընդհանրություններ ևս, որոնց ծագումը, գուցե, կապված է Բալկաններում եղած այդ վաղ շրջանի շերտի հետ։ Այդպիսիք են զագաուզները, որոնց ցեղանվան մեջ կարելի է տարբերել «ուզ» բաղադրամասը[14]։ Գագաուզների ծագման ամենից ավելի համոզիչ հիպոթեզը, որը հենվում է պատմական և ազգագրական փաստերի վրա, նրանց ծագումը կապում է Թյուրքական այն քոչվոր ցեղերի հետ, որոնք Բալկաններն էին գաղթել դեռ օսմանյան նվաճումներից առաջ [տե՛ս 61]։

XI—XIII դարերում Մակեդոնիայում՝ Վարդար գետի վրա ապրում էին Թյուրքեր, այսպես կոչված օրխիդյան Թուրքեր կամ վարդարիոտներ, որոնց ծագումը հայտնի չէ։ Գուցե, նրանք ևս վաղ շրջանի բալկանյան Թյուրքերի ինչ-որ մի մասն են։ Աննա Կոմնինան գրում է, որ օրխիդյան Թուրքերի առաջնորդն է եղել Թաթիկիոսը, որի հայրը՝ Սարակինոսը, գերի էր վերցվել բյուզանդացիների կողմից [15, էջ 146]։ Սարակինոսը Թյուրքական «սարըչին» բառն է, որը օգտագործվում էր և իրրև անձնանուն, և իրրև ցեղանուն (օրինակ, սարըչիններ էին անվանում պոլովեցների մի մասին)։ Դ. Մորավչիկը ևս ենթադրում է Ալեքսիոս Կոմնինյան կայսեր հայտնի զորավար Թաթիկիոսի Թյուրքական ծագումը։ Ուրիշ հետազոտողներ վարդարիոտներին համարում են գերի ընկած հունգարների ժառանգներ, որոնք X դարում

---

14 Դեռևս XVII դարում Բալկաններում գոյություն ունեին Թուրքական վարչական միավորներ, որոնց անվանման մեջ կար «ուզ» բաղադրամասը՝ Ուզի էյալեթ և Ուզի սանջաք։ XVI—XVIII դարերի օսմանական արխիվային փաստաթղթերում հիշատակվում է յուրյուքական կարա-ուզ ցեղը [371, էջ 24]։ Հնարավոր է, որ դրանք Բալկանների ուզերի մնացորդներն են։

բնակություն են հաստատել վարդար գետի վրա, նրանց ավելացնելով նաև սելջուկյան տարրեր [15, էջ 494]: Սելջուկյանների հետ, սակայն, բյուզանդացիները բախվել են միայն XI դարում: Իսկ ինչ վերաբերում է հունգարներին, ապա, իրոք, բյուզանդական ժամանակագիրները հաճախ նրանց անվանում էին Թուրքեր (այսինքն՝ Թյուրքեր): Մեր կարծիքով, դա բացատրվում է նրանով, որ IX—X դարերում հունգարների մեջ դեռ շատ կային նրանց հետ չձուլված թյուրքական տարրեր, որոնք մտնում էին մադյարների քոչվոր միավորումների մեջ: Գուցե, այդ տարրերից են ծագում սեկլերները՝ հունգարների ազգագրական այդ խումբը: XI—XII դարերում հունգարների կազմի մեջ մտան նաև թյուրքալեզու կումաններ ժողովուրդը:

Բալկաններում (Բուլղարիայում և Հունաստանում) մինչև մեր օրերն էլ պահպանվել են հունարեն խոսող քոչվորներ՝ կարակաչաններ (կամ, հունականացած ձևով՝ սարակացաններ): «Կարակաչաններ» անունը ամենից շուտ թյուրքական է: Սակայն, Բացառված չէ, որ այդ անունը նրանց տվել են արդեն օսմանյան Թուրքերը: Այնուհանդերձ, կարակաչանների մոտ շատ կան թյուրքական տարրեր նյութական ու հոգևոր մշակույթում [306, էջ 45, 75, 111, 136, 140, 275. 154, էջ 50, 54, 72, 81, 88, 111]: Ուղղափառություն դավանող հունալեզու այս քոչվորներին կարելի է համարել նրա ոչ բյուզանդական շրջանում քրիստոնեացված և հունացված թյուրքական ցեղերի անմիջական ժառանգորդներ (ի դեպ, կարակաչանների մասին առաջին հիշատակությունը կապված է XV դարի կեսերին Բյուզանդական կայսրության վախճանի հետ [306, էջ 196]), ապա համենայն դեպս իբրև այնպիսի մի ցեղախումբ, որը իր մեջ առել է նախասկզբնական թյուրքական շատ տարրեր, որոնք շերտ առ շերտ նըստել են ինչ-որ մի նախաթյուրքական քոչվորական հիմնացեղի վրա:

Բալկաններում կա մի թյուրքալեզու առեղծվածային էթնիկական ընդհանրություն ևս՝ կոնյարների քոչվոր ցեղերը: Սրանց ծագումը սովորաբար կապում են Փոքր Ասիայի Սելջուկյանների պետության մայրաքաղաք Քոնիայի հետ [144, էջ 37. 426, էջ 10. 427, էջ 649], գտնելով, որ «կոնյարը» դա «քոնիացին» է՝ Քոնիայի բնակիչը: Բայց նման կազմությունը խորթ է թյուրքական լեզուներին: Օրինակ, Քոնիայի բնակիչը Թուրքերեն կլինի «քոնյալը» կամ հին Թուրքերեն («օսմաններեն» կամ «սելջուկերեն»)՝ «քոնևլի»: Բացի դրանից, կոնյարների մասին հիշատակություններ չկան ոչ սելջուկյան, ոչ էլ օսմանական ժամանակագրություններում: Այնուհետև հայտնի է, որ թյուրքական քոչվոր ցեղերի զանգվածային գաղթը Անատոլիայից Բալկանները սկսվել է օսմանական շրջանում միայն՝ XIV դարի երկրորդ կեսից[15]: Իսկ կոնյարները չէին մտնում քոչվոր ցեղերի (յուրյուքների) ռազմա-ցեղային կազմակերպության մեջ, որը կարևորագույն դեր է կատարել այդ գաղթի մեջ, թեև այդ կազմակերպության մեջ սովորաբար մացնում էին գաղթողների տոհմացեղային ուրիշ խմբեր, օրինակ՝ թաթարներին [426, էջ 12—13]: Այսպիսով, բոլոր տվյալները խոսում են այն մասին, որ կոնյարները Բալկաններ են գնացել օսմանյան Թուրքերի՝ այնտեղ գալուց առաջ (իսկ սելջուկյան քոչվոր ցեղերը ընդհանրապես Բալկաններ չեն գնացել): Կարելի է ենթադրել, որ կոնյարները մնացորդներ են պեչենեգներից, որոնց հին ինքնանվանումը եղել է «կանգար»: Բյուզանդական ժամանակագրությունները նշում են նաև, որ պեչենեգների գաղթից Իզետդին Քեյ-Քավուս սուլթանի որդին, որը իր հետ տարավ նաև զորքերի մի մասը: Նա ընդունեց քրիստոնեություն և ամուսնացավ մի հելլենուհու հետ: Պ. Վիտեկը նույնիսկ «գազաուզ» ցեղանվան մեջ դիտում է «Քեյ-Քավուս» անձնանվան աղավաղված ձևը [360]: Ուրիշ հետազոտողներ, սակայն, առհասարակ ժխտում են XIII դարում սելջուկ թյուրքերի գաղթը Անատոլիայից՝ Բալկաններ [տե՛ս, օրինակ, 174]:

15 Սելջուկյան շրջանում թյուրքական քոչվոր ցեղեր Անատոլիայից Բալկաններ չեն գաղթել: Գաղթեր եղել են միայն քաղաքական դրդապատճառներով. սուլթանի աչքում շնորհազուրկ եղած թյուրքական առանձին զորահրամանատարներ ապաստան էին որոնում Բյուզանդիայում: Նրանք իրենց շքախմբերով և զինված ջոկատներով ընդունում էին քրիստոնեություն և ծառայում բյուզանդացիներին: Այսպես, օրինակ, Բյուզանդիա գաղթեց Իզետդին Քեյ-Քավուս սուլթանի որդին, որը իր հետ տարավ նաև զորքերի մի մասը: Նա ընդունեց քրիստոնեություն և ամուսնացավ մի հելլենուհու հետ: Պ. Վիտեկը նույնիսկ «գազաուզ» ցեղանվան մեջ դիտում է «Քեյ-Քավուս» անձնանվան աղավաղված ձևը [360]: Ուրիշ հետազոտողներ, սակայն, առհասարակ ժխտում են XIII դարում սելջուկ թյուրքերի գաղթը Անատոլիայից՝ Բալկաններ [տե՛ս, օրինակ, 174]:

պում թյուրքական լեզուներում, իսկ ա հնչյունի փոխարինումը ո-վ կարող էր տեղի ունենալ ժողովրդական ստուգաբանության ազդեցության տակ, որոնք հետագայում կոնյարներին կապել են Քոնիայի հետ: Երկրորդ, բուլղարներեն և սերբա-խորվաթերեն լեզուներում «կոնյար» բառը նշանակում է «ձիապան», «երամակապան», «ձի սիրող» (համեմ. ռուսերեն ժարգոնային «лошадник»), բայց սա զուտ սլավոնական կազմություն է (конь+ар ածանցը): Թյուրքական ժողովրդական ստուգաբանությունը այստեղ կարծես խաչաձևվում է սլավոնականի հետ, որը քոչվոր ձիապանների մեջ տեսնում էր ձի սիրողների, որը, բնականաբար, և հատուկ էր թյուրք անասնապահների համար: Վերջապես, ա հնչյունի վերածումը ո-ի սլավոնացած թյուրքական փոխառություններում միանգամայն օրինաչափ է. այսպես, թյուրքական «կայը» և «բայաթ» ցեղանունները ռուսական տարեգրություններում հրնչյունափոխվել են և դարձել համապատասխանաբար «կոույ» և «բոուբ»:

Որոշ հետազոտողներ (Կ. Իրիչեկը, Տ. Կովալսկին) գտնում են, որ Դելի-Օրմանի (Բուլղարիա) թուրքերը իրենց մեջ ներառել էին թյուրքական այնպիսի տարրեր, որոնք այստեղ էին թափանցել հյուսիսից՝ Դանուբի այն կողմից դեռևս օսմանյան թուրքերից առաջ. մարդաբանական տիպով և լեզվով նրանք էականորեն տարբերվում են անատոլիական թուրքերից, ըստ որում նրանց լեզուն շատ մոտ է դագաուզերենին [310, էջ 425—427]:

Թյուրքական լեզվաբանության, այդ թվում և թուրքերեն լեզվի բարբառագիտության ավյալները նույնպես հիմք են տալիս Փոքր Ասիայի հյուսիս-արևմտյան մասը դիտելու իբրև մի շրջան, որտեղ Բուրք ժողովրդի ծագման մեջ մեծ դեր են կատարել Բալկաններից եկած թյուրքական ցեղերը: Եվ իրոք, թուրքերենի հյուսիս-արևմտյան բարբառները կենտրոնական և արևելյան անատոլիական բարբառներից տարբերվում են ընդհանուր առանձնահատկություններով, որոնք այդ բարբառները մոտեցնում են գագաուզերենին: Բացի դրանից, օղուզերենի լեզվաշերտի վերլուծությունը և նրա մասերի համադրումը թուրքմեններենի, ադրբեջաներենի, գագաուզերենի և թուրքերենի համապատասխան մասերի հետ ավելի ճշգրիտ պատկերացում է տալիս նաև օղուզական էթնիկական բազադրամասերի մասին, հիշյալ ժողովուրդների ծագման գործում նրա ունեցած մասնակցության բաժնի մասին: Ամենից առաջ պարզվում է, որ օղուզական լեզվական շերտը ավելի շատ պահպանվել է թուրքերի և գագաուզների մոտ, իսկ ադրբեջանցիների և հատկապես թուրքմենների մոտ այն ուժեղ փոփոխությունների է կրել զրչաղական լեզուների ազդեցության տակ: Այսպես, Մահմուդ Կաշղարին նշում էր, որ օղուզների համար բնորոշ են հնչեղ բաղաձայնները բառասկզբում, դ (տ-ի փոխարեն), գ (կ-ի փոխարեն), ինչպես նաև բ (մ-ի փոխարեն). դևվե (ուղտ), այլ ոչ թե տեվե, ինչպես մյուս թյուրքերի մոտ է, գել (արի), այլ ոչ թե կել, բեն (ես), այլ ոչ թե մեն [386, հատ. I, էջ 31. 339, հատ. II, էջ 225. տե՛ս նաև 26, էջ 144]: Նա նշել է նաև օղուզների լեզվի այնպիսի առանձնահատկություններ, ինչպես ասք քերականական ձևի առկայությունը. բարասը էր (փոխանակ՝ ուր է հարկավոր գնալ) [386, հատ. I, էջ 33], բաղաձայն գ հընչյունի սղումը ներկա ժամանակի դերբայի ածանցում՝ բարագան>բարան (եկող) [386, հատ. I, էջ 33], հատատատական «էվեատ» (այր) ձայնարկության տարբերակը [386, հատ. I, էջ 51]: Հենց թուրքերի և գագաուզների մոտ ենք մենք գտնում բոլոր այդ առանձնահատկությունները առավել լրիվ պահպանված. դևվե (ուղտ), դամ (կտուր), նույնը նաև ադրբեջանցիների մոտ, բայց թուրքմենների մոտ՝ տյուե, տամ. թուրքերի և գագաուզների մոտ՝ գել (արի), բայց ադրբեջանցիների և թուրքմենների մոտ՝ կել. թուրքերի և գագաուզների մոտ՝ բեն (ես), բայց թուրքմենների և ադրբեջանցիների մոտ՝ մեն. թուրքերի և գագաուզների մոտ՝ էվեատ (այր), բայց ադրբեջանցիների մոտ՝ բելի, իսկ թուրքմենների մոտ՝ հավլա: Թուրքերի մոտ պահպանվել է նաև ասքերականական ձևը, իսկ ներկա ժամանակի դերբայի ածանցում չկա գ հնչյունը: Բառապաշարի մեջ ևս գոյություն ունեն շատ մոտ զուգահեռներ թուրքերեն և գագաուզերեն լեզուների միջև, որոնք համանման ձևերը չունեն նույնիսկ օղուզների միջև,

զական ենթախմբի թյուրքական մյուս լեզուներում. թուրք.— անա բաբա, գագ.— անա բորա (ծնողներ), թուրք.— գայը, գագ.— գայըն (մորեղբայր), թուրք. և գագ.— կարը (կին), թուրք. և գագ.—էնիշտե (փեսա, քրոջ ամուսին), թուրք.— դյունյուր, գագ.— դյունյուրջյու (խնամի) [199, էջ 25, 49, 57, 58, 60, 65, 76], թուրք. և գագ.—թոսուն (ցլիկ), թուրք. և գագ.— դյուվե (հորթ), թուրք. և գագ.—կուզու (գառ), թուրք. և գագ.— դոմուզ (խոզ), թուրք. և գագ.— քոփայ (որսի շուն) [241, էջ 99, 101, 113, 124, 127]: Պարզվում է, նաև, որ թուրքերենի հյուսիս-արևմտյան բարբառները գագաուզերենի հետ շատ մոտ են նաև հնչյունական տեսակետից. երկրորդ երկար ձայնավորների առաջացումը ձայնավորների և գ բաղաձայնի կապակցությունների միաձուլման հետևանքով (աղա>աաշ, բուղդայ>բուուդայ, սըղըր>սըըր), բաղաձայնների առնմանումը ել>լլ (օլար>օննար, անլամաք>աննամաք): Թվում էր, թե գագաուզերենի և թուրքերենի նման մոտիկությունը կարելի է բացատրել գագաուզերենի վրա թուրքերենի ծողած ազդեցությամբ դեռևս օսմանյան շրջանում, երբ Բալկանները մտնում էին Օսմանյան կայսրության կազմի մեջ: Սակայն մի շարք փաստեր հերքում են այդ ենթադրությունը: Օրինակ, գագաուզերենը պահպանել է «թոռ» և «աղջիկ թոռ» նշանակության հին թյուրքական ձևը (կըզըննըն օօլու— թոռ՝ աղջկանից. կըզըննըն կըզը—աղջիկ թոռ՝ աղջկանից. օօլունուն օօլու—թոռ՝ որդուց, օօլունուն կըզը— աղջիկ թոռ՝ որդուց), նույն բանը պահպանվել է նաև տուվերենում [199, էջ 20]: Իսկ թուրքերենը դրա համար ունի հատուկ բառ՝ թորուն, որը, հավանաբար, փոխառյալ է հայերենից (հայ.—թոռ): «Սըըր» բառը կա «Կոդեքս կոմանիկուս»-ում [241, էջ 96], այսինքն՝ այստեղ ևս թուրքական ազդեցությունը բացառված է: Այսպիսով, ազդեցությունը գնացել է ոչ թե թուրքերից գագաուզներին, այլ ընդհակառակը, գագաուզներից, ավելի ճիշտ, հին թյուրքական այն ցեղերից, որոնք եկել էին Բալկաններ և հետագայում մտել ինչպես գագաուզների, այնպես էլ թուրքերի կազմի մեջ:

Թուրքերենը, հատկապես նրա հյուսիս-արևմտյան բար-

բառները, և գագաուզերենը բավական հարազատ գծեր ունեն պեչենեգների լեզվի հետ. համեմատեք պեչենեգերեն գ/կ>յ հնչյունափոխությունը բառավերջում (բեգ>բեյ), կ/գ>վ՝ ձայնավորների միջև (բյոքերչի>բյուվերչի), տ>դ բառասկզբում (տաղ>դաղ)[16]. լիակատար համանմանությամբ թուրքերենում և գագաուզերենում, բեյ, գյուվերչին, դաղ:

Այսպիսով, գագաուզերենը և թուրքերենի հյուսիս-արևմտյան բարբառները միմյանց հետ նմանություններ ունեն ժողովական առանձնահատկությունները ամենից ավելի շատ պահպանելու տեսակետից: Ուստի կարելի է ենթադրել, որ այդ լեզուները ունեցել են ժողովական ինչ-որ մի ընդհանուր բաղադրամաս, որը ուժեղացրել է նրանց ժողովական գծերը կամ նպաստել դրանց պահպանմանը, և դրա տարածման շրջանը կարելի է համարել Բրակիան և Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքը: Այդ բաղադրամասի էթնիկական պատկանելությունը օգնում են որոշել բյուզանդական և ռուսական տարեգրությունները, որոնք, ինչպես արդեն տեսանք, շատ տեղեկություններ են պարունակում ուզերի և պեչենեգների մասին: Ըստ երևույթին, այդ ցեղերի բարբառներում էլ հարկավոր է փնտրել այն բաղադրամասը, որը ուժեղացրել է գագաուզերենի և թուրքերենի ժողովական գծերը [98, էջ 72—74]:

Մարդաբանական տվյալները նույնպես հաստատում են, որ թյուրքերի մի որոշակի մասը Անատոլիա է գնացել Բալկանների վրայով: Այսպես, գագաուզների մոտ [75, էջ 204], Թրակիայի հույների, Մակեդոնիայի սլավոնների, վալախների, կարակաչանների և մյուսների մոտ նկատելի է մոնղոլոիդ մի «շերտ» (էպիկանտուսի շատ աննշան տոկոս՝ զուգորդված այտոսկրների միջակ ցցվածության հետ) [528]: Իսկ Փոքր Ասիայի բնակչության մոտ, նույնիսկ թուրքերի մոտ, նման մոնղոլոիդ տարրերը անհամեմատ ավելի քիչ են: Այստեղից հետևում է, որ մոնղոլոիդ «շերտը» թյուրքական ցեղերը Բալկաններ են բերել ավելի շուտ հյուսիսից, քան Փոքր Ասիայից:

16 Պեչենեգների լեզվի վերաբերյալ տվյալները վերցրած են [26, էջ 130]:

Ամփոփելով, կարելի է արձանագրել, որ թյուրքական տարրերի ներթափանցումը ժամանակակից Թուրքիայի տարածքը սկսվել է սելջուկյան նվաճումից շատ առաջ, VIII—X դարերում: Այդ թյուրքերը (երբեմն դրանք ամբողջ ցեղեր էին), բնակություն հաստատելով երկրի տեղական բնակիչների շրջանում, որոշ չափով նախապատրաստեցին Անատոլիայի և Արևելյան Բրակիայի թյուրքացման սկիզբը: Այս հետևության լույսի տակ հետաքրքրական է հետևյալ պատմական փաստը: XI դարի վերջին բյուզանդական ժամանակագրություններում մեջ առաջին անգամ հիշատակվում են Փոքր Ասիա թափանցած թուրքմենները [325, էջ 109]: Աննա Կոմնինան նրանց անվանում է թուրքոմաններ [15, էջ 389]: Այն բանից հետո, երբ Փոքր Ասիան նվաճեցին սելջուկները, որոնց հիմնական մասսան կազմում էին թուրքմենները, պատմական շատ աղբյուրներում երկար ժամանակ այդ ցեղանունով էին հիշատակում Անատոլիայի թյուրքական ցեղերին: Այսպես, Իբն Բիբիի ժամանակագրության մեջ, որն ընդգրկում է 1188-ից մինչև 1282 թվականն ընկած ժամանակաշրջանը, Փոքր Ասիայի թյուրքական ցեղերի նկատմամբ, ինչպես նշել է Վ. Ա. Գորդլևսկին, օգտագործվում է «թուրքմեններ» բառը [49, էջ 44]. Գիյոմ դը Ռուբրուկը (XIII դարի կեսեր) նույնպես հիշատակում է թուրքմենների մասին [119]. Մարկո Պոլոն (XIII դարի վերջ) նույնպես գրում է թուրքմենների մասին և Բուրքիան անվանում է Թուրքմենիա [200, էջ 56]. Իբն Բաթուտան (XIV դարի 30-ական թվականներ) Անատոլիան նկարագրում է որպես թուրքմենների երկիր [301, էջ 415, 417, 456]. Թեմուրը օսմանական Բայազիդ I Յըլդըրըմ սուլթանին (XIV դարի վերջ— XV դարի սկիզբ) հղած նամակներում օսմանական թուրքերին, հավանաբար հին ավանդությամբ, անվանում է թուրքմեններ [295, հատ. I, էջ 139]. XV դարի առաջին կեսի ճանապարհորդներ դը լա Բրոքիերը և Թաֆուրը Կիլիկիան անվանում են Թուրքմենիա [304, էջ 161]: Իսկ ավելի ուշ ժամանակաշրջանում, ինչպես հայտնի է, Փոքր Ասիայի արմատական բնակչության թյուրքացման հետևանքով գոյացած ժողովուրդը սկսեց անվանվել «թյուրք» (թուրք)

ցեղանունով, այլ ոչ թե «թուրքմեն» կամ «օղուզ», այսինքն՝ ստացավ այստեղ գաղթած բոլոր թյուրքերի համար ընդհանուր ինքնանվանում: «Թյուրք» ինքնանվանումը ընդգրկում էր, մասնավորապես, նաև ուզերին (չէ որ ռուսական տարեգրությունները նրանց անվանում էին Թորքեր): Հետևաբար, այս փաստը դարձյալ վկայում է այն մասին, որ Անատոլիայի թյուրքացմանը մասնակցել են ոչ միայն թուրքմեններն ու օղուզները, այլև ուրիշ թյուրքեր, որոնք այստեղ էին թափանցել արևելքից դեռ օղուզներից ու թուրքմեններից առաջ (մասամբ նաև նրանց հետ միասին) և հյուսիս-արևմուտքից, Բալկաններից: Իսկ «թուրքմեններ» ինքնանվանումը մնաց Անատոլիայում, ըստ որում նրա արևելյան շրջաններում, մի աննշան թվով թուրքական թուրքմենների մոտ, որոնք պահպանվել են մինչև մեր օրերը: Վերջապես, Ա. Ա. Ռոսլյակովը գրում է, որ Փոքր Ասիայում թյուրք հասկացության համար օգտագործում էին երեք ցեղանուն՝ թյուրքեր, թուրքմեններ, օղուզներ: Առաջինը առանձնապես լավ ծանոթ էր արևմտյան գրողներին [207, էջ 88]: Սա նույնպես վկայում է այն մասին, որ Փոքր Ասիայի արևմուտքում գերակշռում էին հենց թյուրքերը (որոնք այստեղ էին ընկել Բալկաններից), այլ ոչ թե թուրքմեններն ու օղուզները, կամ արևմտյան գրողները նախ ծանոթացել են այս բալկանյան թյուրքերին, իսկ հետո արդեն օղուզներին և թուրքմեններին, բայց շարունակում էին վերջիններիս հաճախ առաջվա նման կոչել թյուրքեր: Նման երևույթ տարածված է պատմության մեջ: Օրինակ, լեհերը իտալացիներին անվանում են վլոխներ (այսինքն՝ վալախներ՝ ռումիններ), առաջին պատահած ռոմանալեզու ժողովրդի անունը տարածելով իտալացիների վրա. ֆրանսիացիները գերմանացիներին անվանում են ալմաններ՝ ալմանների /ալամանների գերմանական ցեղանունից, որոնք հարևան էին իրենց նախորդ ֆրանկներին. լատիշները մինչև հիմա էլ ռուսներին անվանում են կրիվիչներ (կրիեվիյաս)՝ համանուն և ինչ-որ ժամանակ իրենց հարևան ցեղի անունից. ֆիններն՝ վեներներ/վեներներ (վենեյեն) և այլն:

ԳԼՈՒԽ II

ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ՑԵՂԵՐԻ ԳԱՂԹԸ ԱՆԱՏՈԼԻԱ XI—XIII ԴԱՐԵՐՈՒՄ ԵՎ ՆՐԱՆՑ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Օղուզները և թուրքմենները Ռումի սուլթանությունում

XI դարում արևելքից Փոքր Ասիա ներխուժեց թյուրքական ցեղերի մի հուժկու ալիք։ Դրանք այսպես կոչված սելջուկ թյուրքերն էին (նրանց հիմնական զանգվածը կազմում էին օղուզներն ու թուրքմենները), որոնք 1040 թվականին ներխուժեցին Իրան, մինչև 1055 թվականը նվաճելով այն։ Այնուհետև նրանք նվաճեցին Իրաքը, Սիրիան, Ադրբեջանը, Հայաստանի մի մասը։ Այդ հողերում նրանք ստեղծեցին «Մեծ Սելջուկյանների» պետությունը։ Սելջուկյանների դինաստիան ծագում է օղուզական քընըք ցեղից։ Այդ բանը հաստատվում է, ինչպես գրում է Ս. Գ. Աղաջանովը, միջնադարյան մի շարք աղբյուրներով։ Այդ են ցույց տալիս Ջահիր ադ-Դին Նիշապուրիի «Մալիք-նամեն», «Օղուզ նամեն», և «Սելջուկ-նամեն»։ Այդ մասին ուղղակի ասում է նաև Մահմուդ Կաշգարին [9, էջ 165. 386, հատ. I, էջ 55]։

Սելջուկ թյուրքերը, որոնք իրենց հարձակումները Անատոլիայի վրա սկսել էին դեռևս XI դարի առաջին կեսին[1], նույն դարի 60-ական թվականներին անցան նրա նվաճմանը։ Թյուրք քոչվորները Սելջուկյանների առաջնորդությամբ իրենց ընտանիքներով ու հոտերով Խորասանից, Ադրբեջանից, Իրաքից և Սիրիայից շարժվեցին դեպի Փոքր Ասիա։ Այսպես, Արիստակես Լաստիվերտցու խոսքերով ասած, սելջուկյան սուլթան Տողրուլ բեկը 1054 թվականին «շարժվեց... անհամար զորքերով ու փղերով, կառքերով ու երիվարներով, կանանցով ու երեխաներով և ամենամեծ պատրաստությամբ» (17, էջ 97, 164)։ 1071 թվականին

[1] *1016 թվականին միջինասիական թյուրքերը կատարեցին նաև առաջին հարձակումը Հայաստանի վրա [275, էջ 40—43]։ XI դարի 30-ական թվականների սկզբից Հայաստանի վրա հարձակումներ են կատարում սելջուկյան ջոկատները [10]։*

բյուզանդական զորքերի նկատմամբ Մանազկերտի մոտ տարած հաղթանակից հետո այլևս ոչինչ չէր կարող փակել սելջուկների ճանապարհը դեպի Անատոլիա։ 1085 թվականին նրանք գրավեցին Իզմիրը (Զմյուռնիան), և գրեթե ամբողջ Փոքր Ասիան ընկավ նրանց ձեռքը [230, էջ 19, 167, էջ 7—8]։

Սելջուկյան դինաստիայի ճյուղերից մեկը Անատոլիայում հիմնեց Ռումի սուլթանությունը[2], որը արտաքուստ ընդունում էր «Մեծ Սելջուկյանների» իշխանությունը, բայց փաստորեն անկախ էր [526, էջ 2]։

Խաչակրաց արշավանքները կանգնեցրին Սելջուկյանների հետագա առաջխաղացումը։ Նրանք նույնիսկ կորցրեցին իրենց Իզնիկ (Նիկեյա) մայրաքաղաքը։ Բայց աստիճանաբար նորից անցան հարձակման և 1116 թվականին նվաճեցին Ֆռնիան (Իկոնիոնը), այն դարձնելով իրենց մայրաքաղաքը։ Այդ պատճառով էլ Փոքր Ասիայի Սելջուկյանների պետությունը երբեմն անվանում են նաև Ֆռնիական սուլթանություն։ 1180 թվականին Ռումի սուլթանությունը նվաճեց Փոքր Ասիայի թյուրքական մեկ ուրիշ պետություն, որ հիմնել էին Դանըշմենդյանները 1067 թվականին՝ Սիվաս (Սեբաստիա) մայրաքաղաքով։ Այսպիսով, XII—XIII դարերի սահմանագծում կազմավորվեց Սելջուկյանների թյուրքական մի խոշոր պետություն, որը իր իշխանության տակ միավորում էր գրեթե ամբողջ Փոքր Ասիան և Հայ-Քրդական լեռնաշխարհի մեծագույն մասը։

Սելջուկյանների արագ հաղթանակների պատճառները բացատրվում են այն բանով, որ, նախ՝ նրանց հիմնական

[2] *Ռում—սելջուկ թյուրքերը արաբներից հետո այսպես էին կոչում Անատոլիան։ Այս անունը, ինչպես նշել է դեռ Իբն Բատուտան [301, էջ 415], ծագել է Բյուզանդական կայսրության պաշտոնական անվանումից, որը ավանդաբար կոչվում էր Հռոմեական կայսրություն կամ Հռոմ (լատիներեն՝ Ռոմա, հունարեն՝ Ռոմե)։ Բյուզանդացի հույները (Փոքր Ասիայի բնակիչները) նույնպես իրենց անվանում էին ռոմցիներ (հռոմեացիներ), այլ ոչ թե հելլեններ, ինչպես Հունաստանի հույները։ «Ռոմե» հետագայում պահպանվեց Եվրոպական Թուրքիայի թուրքական անվանման՝ Ռումելիի մեջ (Թուրք.՝ Ռում էլի—Ռում երկիր)։*

հակառակորդը՝ Բյուզանդիան այդ ժամանակ խիստ թուլացել էր Արևմուտքում իր թշնամիների դեմ մղած պայքարից[3] և, գլխավորը, ներքին հակասություններից ու երկպառակություններից[4]։ Բյուզանդական ֆեոդալիզմը ապրում էր քայքայման շրջան։ Միասնություն չկար նաև Բյուզանդիայի և հայ ֆեոդալների միջև։ Երկրորդ, Սելջուկյանների հիմնական հարվածային ուժը օղուզական և թուրքմենական քոչվոր ցեղերն էին [230, էջ 15], որոնք գտնվում էին ֆեոդալիզմի զարգացման վաղ ստադիաներից մեկում և միմյանց հետ սերտորեն կապված էին տոհմա-ցեղային ավանդական կարգապահությամբ։ Իրենց բազմաքանակությունից բացի քոչվոր թյուրքերն ունեին զորական գերազանց հատկություններ. յուրաքանչյուր քոչվոր, քոչվորական տնտեսության ու կենցաղի յուրահատկության շնորհիվ իրենից ներկայացնում էր հիանալի վարժված և լավ զինված հեծյալ զինվոր։ Այս գործոնը, ինչպես օրինակ, նաև մոնղոլական արշավանքների ժամանակ, արաբների նվաճումների ժամանակ, որոնց մոտ առաջին փուլերում հիմնական ռազմական ուժը բեդվինների քոչվոր ցեղերն էին, նույնպես չի կարելի հաշվի չառնել։ Երրորդ, Անատոլիայի ժողովրդական զանգվածները, որոնք հեծում էին բյուզանդական բռնակալության լծի տակ, հաճախ սելջուկների մեջ տեսնում էին նրանց ազատարարներին։ Իհարկե, նրանք դաժանորեն

[3] Աննա Կոմնինան այդ ժամանակաշրջանի մասին գրում է. «Ռոմեական պետության դեմ ապստամբել են «սկյութացին հյուսիսից, կելտը արևմուտքից, իսմայիլականը արևելքից» [15, էջ 391]։ Սկյութացին թյուրքն է Բալկաններից, կելտը՝ արևմտաեվրոպացին, մասնավորապես, նորմանները, իսմայիլականը՝ սելջուկ թյուրքը։

[4] Այս մասին պատկերավոր կերպով է պատմում Արիստակես Լաստիվերտցին. «Երբ Հունաց թագավորությունը (այսինքն՝ Բյուզանդիան։— Դ. Ե.) բաժանվեց երկու մասի (նկատի է առնվում 1057 թվականի երկպառակությունը։— Դ. Ե.), և երկաթե գավազանը եղեգնյա գավազանի պես ջարդուփշուր եղավ (այսպես էր բնութագրում եգիպտական թագավորությանը նախատելով՝ ասորեստանցին), և... երբ պարսիկները (այսինքն՝ սելջուկները։— Դ. Ե.) իմացան սրանց հակառակությունն ու կռիվը միմյանց դեմ, համարձակ հարձակվեցին մեզ վրա և անդադար ասպատակելով՝ աշխարհավեր կործանումը վերջին ծայրը հասցրին, [17, էջ 110]։

սխալվեցին այդ բանում. սելջուկյան սուլթաններն ու էմիրները պակաս ընչաքաղց զավթող ֆեոդալներ չէին, քան նրանց հակառակորդ բյուզանդացիները։

Սելջուկյանների քաղաքականության բաղկացուցիչ մասն էր քոչվոր ցեղերին գիտակցաբար դեպի սահմաններն ուղարկելը՝ բյուզանդացիների, հայերի, վրացիների դեմ պատերազմելու համար [24, էջ 33]։ Դրանով նրանք հետապնդում էին երկու նպատակ. նախ՝ պետության ներքին շրջանները ազատվում էին անհանգիստ քոչվորներից, որոնք միշտ պատրաստ էին խռովություն բարձրացնելու կենտրոնական իշխանության դեմ, և, երկրորդ, ամրացվում էին սահմանները, ապահովվում նոր հողերի նվաճումները և թալանված ավարի ստացումը։ Իսկ քոչվոր ցեղերի արիստոկրատիան մեծ սիրով էր դիմում օտար հողերի նվաճման ու թալանի։

Մ. Ֆ. Քյոփրյուլյուն գտնում է, որ քոչվոր ցեղերի նկատմամբ նման քաղաքականությունը բխում էր քոչվորների համար արոտավայրերի պակասից, ինչպես նաև սուլթանների ձգտումից՝ հիմնական հարկատու զանգվածը հանդիսացող նստակյաց բնակչությանը փրկելու վաշխատունների կողոպուտից ու հարձակումներից [468, էջ 276]։ Վերջինս կարող էր իր դերը խաղալ, բայց ինչ վերաբերում է «քոչվորների համար արոտավայրերի պակասին», ապա այս դիմադրվող ձևակերպման տակ թաքնված է սելջուկյան շարժման սոցիալական բովանդակությունը, ամլացած է նրա դասակարգային էությունը։ Մ. Ֆ. Քյոփրյուլյուն փորձում է նաև այդ շարժումը բացատրել ինչ-որ «կենսական տարածության պակասով» և «գերբնակչությամբ» (468, էջ 276)։ Իսկ իրականում արոտավայրեր բավական քանակությամբ չկային ոչ թե ընդհանրապես քոչվորների համար, այլ քոչվոր աղնվականության համար, քանի որ հսկայական քանակությամբ անասունների կենտրոնացումը նրանց ձեռքում (Իբն Ֆադլանի վկայությամբ, արդեն X դարի սկզբին կային օղուզական այնպիսի առաջնորդներ, որոնք ունեին 10 հազարական ձի և 100 հազարական ոչխար [302, էջ 83. 106, էջ 65—66]) պահանջում էր լայն էքսպանսիա՝ արոտավայրերը ընդարձակելու նպատակով [222, էջ 89, 101]։ Ճիշտն

ասած, հենց դա էր սելջուկյան շարժման հիմնական սոցիալական պատճառը։

Առաջնորդների գլխավորած թյուրքական ցեղերը դեպի արևմուտք էին շարժվում զավթողական նպատակներով։ Այդ շարժման նախաձեռնողները ոչ թե շարքային քոչվորներն էին, այլ զինվորական քոչվոր արիստոկրատիան։ Այդ արշավանքներին մասնակցած ցեղերը ամբողջապես ընկնում էին իրենց ավագանիի՝ հարուստ անասնատերերի իշխանության տակ։ Նոր կրոնը՝ իսլամը, որ թյուրքերն ընդունել էին արաբներից, ամենից շատ էր համապատասխանում քոչվոր ավագանիի շահերին, ալլահի համար հաճո գործ հռչակելով պատերազմը «անհավատների» դեմ, սպանությունները, կողոպուտները, ուրիշների հողերի գրավումը, այդ պատերազմում ընկած ամեն մի մարտիկի հռչակելով դրախտի արժանի հերոս։ Մասնակցելով դեպի Փոքր Ասիայի հողերը կազմակերպվող արշավանքներին, այդ քոչվոր ցեղերը մեծ աղետներ բերեցին նստակյաց հին ժողովուրդներին (հայերին, վրացիներին, հույներին)։ Ցեղերի առաջնորդները, հենվելով մեծ ավարների ձգտող ավագանիի վրա, քոչվոր զանգվածներին դաստիարակում էին ոչ մուսուլման ժողովուրդների նկատմամբ ատելության ոգով, քարոզելով զազավաթ («սրբազան» պատերազմ ընդդեմ ոչ մուսուլմանների)։ Սակայն, ինչպես գրում է Ս. Գ. Աղաջանովը, չնայած այն բանին, որ Մերձավոր և Միջին Արևելքի նվաճումը Սելջուկյանների կողմից ուղեկցվում էր խաղաղ բնակչության նկատմամբ բազմաթիվ բռնություններով և կողոպուտներով, սելջուկյան նվաճումը օբյեկտիվորեն նպաստում էր ֆեոդալական հարաբերությունների հետագա զարգացմանը Արևմտյան Ասիայում։ Դա էր Սելջուկյանների կայսրության կազմավորման գլխավոր պատմական նշանակությունը [9, էջ 46]։ Սելջուկյան կառավարողները նպաստում էին դեռևս Բուիդների օրով գոյություն ունեցած ֆեոդալական իկթա ինստիտուտի լայն տարածմանը։ Հողատիրության այս ձևը լիովին համապատասխանում էր սելջուկյան ավագանիի շահերին։ Շարունակելով քոչվորական կյանքը, բեյերը հնարավորություն ունեին շահագործելու և՛ ցեղակից շարքային

անասնապահներին, և՛ նստակյաց գյուղացիներին, և՛ արհեստավորներին։ Հենց այդ պատճառով էլ ֆեոդալական իկթա ինստիտուտը լայն տարածում ստացավ Սելջուկյանների կայսրությունում [9, էջ 48]։

Դեռ սելջուկյան նվաճումներից առաջ, X դարի վերջին—XI դարի սկզբին, օղուզները և թուրքմենները, գտնվելով Միջին Ասիայում, ինչպես ցույց է տվել Ա. Յու. Յակուբովսկին, ունեցել են դասակարգային հասարակարգ, ճիշտ է, պահպանելով տոհմական բազմաթիվ ինստիտուտներ, որոնք իբրև քող էին ծառայում ցեղական արիստոկրատիայի կողմից քոչվորների աշխատավոր զանգվածներին շահագործելու և ճնշելու համար։ Ֆեոդալական շահագործումը քողարկվում էր նահապետական սովորույթներով [245, էջ 926]։ Ա. Յու. Յակուբովսկին ենթադրում է շահագործման երկու ձևերի առկայությունը XI դարի թուրքմենների մոտ. առաջին ձևն այն էր, երբ որոշակի քանակությամբ անասուններ հատկացվում էին ավատատիրոջը՝ ցեղի կամ տոհմի առաջնորդին՝ կթի և անգամ մորթի համար. դա եղել է մի յուրատեսակ մթերային renտա քոչվորային տնտեսության պայմաններում. և երկրորդ, երբ ավատատիրոջ տնտեսությունում օգտագործվում էր քոչվորի բանվորական ուժը (անասունների արածեցում, մթերքների, բրդի, կաշվի հավաքում և այլն), այսինքն՝ դա եղել է մի յուրատեսակ կոռվորական renտա [245, էջ 927]։ Ինչպես վերևում նշվեց, արդեն X դարի սկզբին օղուզական առանձին առաջնորդներ ունեին 10 հազարական ձի և 100 հազարական ոչխար, միևնույն ժամանակ այդ նույն աղբյուրն էլ (Իբն Ֆադլան) խոսում է աղքատ և ստրուկ օղուզների մասին [106, էջ 63. 9, էջ 108]։ Բնական է, որ ձևականորեն ամբողջ ցեղի կամ տոհմի համայնական սեփականությունը հանդիսացող արոտավայրերի մեծագույն մասը փաստորեն օգտագործում էին հարուստ անասնատերերը։ Այսպիսով, անասունները (փաստորեն և ձևականորեն, քանի որ դրանք տիրոջ մասնավոր սեփականությունն էին) և արոտավայրերը (փաստորեն) իրենց հիմնական մասով կենտրոնացած էին ավագանիի ձեռքում։ Քոչվոր ավատատերերի այդ դասակարգը յուրացրել էր քոչ-

վոր անասնապահական տնտեսության արտադրության հիմնական միջոցները (անասունները և արոտավայրերը)։

Ցեղապետները ունեին զորագնդեր, որոնք գնալով ավելի ու ավելի մեծ դեր էին կատարում ցեղի քաղաքական կյանքում. ավատատերերը նրանց հետ արշավանքների էին գնում ավարառության համար, միաժամին որսի էին դուրս գալիս, խնջույքներ սարքում. հենվելով դրանց վրա նրանք հնազանդության մեջ էին պահում շահագործվող շարքային քոչվորներին։ Տոհմա-ցեղային ավագների խորհուրդը բաղկացած էր ցեղի հարուստ և անվանի մարդկից [245, էջ 927]։

Ինչպես «Մեծ Սելջուկյանների» ամբողջ կայսրությունում, Ռումի սուլթանությունում ևս հողը համարվում էր պետական սեփականություն, բայց ձևականորեն պատկանում էր սուլթանին։ Սուլթանը, որը մարմնավորում էր պետությունը, բարձրաստիճան պաշտոնյաներին (հաճախ, առանձնապես սուլթանության կազմավորման շրջանում, դրանք ցեղապետներն էին) բաժանում էր ավատներ՝ իկթաներ[5]։ Այդ պատճառով ցեղապետը նոր հողերի նվաճման և կամ այլ հանդամանքներում ստանալով ավատներ, հանդես էր գալիս նաև իբրև ավատատեր՝ իկթադար նստակյաց բնակչության՝ գյուղացիների և քաղաքացիների նկատմամբ (թե առաջինների և թե երկրորդների հիմնական մասսան Անատոլիայում սկզբում կազմում էին ոչ թե յուրքերը և անգամ ոչ մուսուլմանները)։ Սելջուկյանների օրով իկթայի առանձնահատուկ ձև էր ուջը (բառացիորեն՝ «վերջ», «ծայր», «սահման»)՝ ավատական հողակտորը պետության սահմանին մոտ, որ սովորաբար տրվում էր ցեղապետներին՝ երկրի սահմանները արտաքին թշնամիներից պաշտպանելու նրանց պարտավորության դիմաց։ Այսպիսով, Ռումի Սելջուկյանները քոչվոր

[5] Համանման երևույթ եղել է միջնադարի ֆեոդալական շատ տերություններում։ Այսպես, Կարլոս Մեծի կայսրությունում ամբողջ հողի գերագույն սեփականատերն էր համարվում թագավորը, որը խոշոր ավատներ էր բաժանում կոմսերին (բարձրաստիճան անձանց) և հերցոգներին (ցեղապետներին)։ Ռումի սուլթանությունում, առանձնապես սկզբնական շրջանում, նույնպես նկատվում էր տարբերություն «էմիր» (բարձրաստիճան անձ) և «բեյ» (ցեղապետ) տերմինների միջև։

ցեղերի նկատմամբ շարունակում էին «Մեծ Սելջուկյանների» քաղաքականությունը՝ անհանգիստ քոչվորներին ուղարկում էին դեպի սահմանները, քոչվոր ավագանիի զավթողական ձգտումները ուղղելով այլ ժողովուրդների կողոպտելու և ուրիշների հողերը զավթելու։ Ցեղերը սահմանամերձ շրջաններն էին քոչում ընտանիքներով, վրաններով և հոտերով։ Ցեղապետը ուջում ստանում էր ուջբեյի (ուջ-բեյի), այսինքն՝ «սահմանը պահպանողի» տիտղոս, քանի որ բալ/բեկ բառը ունի նաև «պահապան», «պաշտպան» նշանակությունը։ Ուջ-բեյը իրավունք ուներ հավաքելու և սուլթանի գանձարանը մուծելու ուջի ամբողջ բնակչությունից, այդ թվում և իր ցեղից գանձվող հարկը։ Մ. Ֆ. Քյոփրյուլյուն ուջ-բեյին համեմատում է միջին դարերի Արևմտյան Եվրոպայի մարկգրաֆի հետ [311, էջ 89]։ Անշուշտ, այդ երկու ավատատերերի միջև նմանություն կա ինչպես տիտղոսի առումով, այնպես էլ ըստ էության։ Սակայն ուջ-բեյի ամենահարազատ նմանությունն է իրանական մարզպանը (մարզ-սահման, պան-պահապան), իսկ ինքը՝ ուջ-բեյ տերմինը իրենից ներկայացնում է պարսկերեն այդ տերմինի բառապատճենը։

Մի քանի ցեղեր երբեմն կազմում էին իլ՝ ցեղային միություն, որի գլուխ կանգնած էր լինում իլ-բաշին [49, էջ 46], որը ընտրվում էր, ըստ երևույթին, ամենից ավելի խոշոր և ազդեցիկ ցեղերի բեյերից։ Իլ-բաշին գերազանցապես հանդես էր գալիս որպես զինվորական առաջնորդ. սուլթանի կոչով նա ներկայանում էր իր ցեղային աշխարհազորով [311, էջ 56]։ Բացի դրանից, պետական բարձր պաշտոնյաներից նշանակվում էին ուջ-էմիրներ, ուջ-բեյերի պետեր [311, էջ 89]։

Ուջերի ցեղերի շրջանում ձևավորվում էր մի յուրահատուկ զինվորա-քոչվորական կենցաղ։ Քոչվորների մի մասը պարեկության և հետախուզության մեջ էր. թեթև հեծելազորը, որ կոչվում էր «աքընջի» (գրոհողներ), հետախուզում էր թշնամուն։ Աքընջիների համար, դուցե, որպես նախատիպ էին ծառայում բյուզանդական ակրիտները (թյուրքական ցեղերից նշանակված սահմանապահներ, որ Բյուզանդիան բնակեցնում էր իր սահմանամերձ շրջաններում)։ Ակրիտ-

ների ինստիտուտը կազմվել էր Արաբական խալիֆայության դեմ Բյուզանդիայի մղած երկարատև պայքարի հետևանքով [311, էջ 88]։ Բայց աքընջիները նման են նաև միջինասիական թուրքմենների աքսյլիներին։ Ցեղի մյուս մասը հոտերն էր արածացնում, զբաղվում էր անտեսությամբ։ Բոլորը, անգամ կանայք ու երեխաները, զինված էին [311, էջ 56]։ Ուշերում կային և՛ ամրոցներ, և՛ քաղաքներ, որոնք յուրատեսակ հենակետեր էին. դրանց բնակչությունը խառն էր [311, էջ 93], մեծամասնությունը, հատկապես քաղաքներում, կազմում էին տեղի բնակիչները։

Քոչվորական ֆեոդալիզմի առանձնահատկություններից մեկը այն զարգացած ֆեոդալական հարաբերությունների բացակայությունն է, որոնք ձևավորվում են նստակյաց հողագործական կուլտուրայի բազայի վրա (քոչվորների մոտ դրանք, որպես կանոն, նահապետական-ֆեոդալական հարաբերություններ են), ուստի Փոքր Ասիայի օղուզների և թուրքմենների մոտ, առանձնապես վերնաշենքային բնույթի երևույթներում, ինչպես և Ռումի Սելջուկյանների պետությունում, պահպանվել էին տոհմա-ցեղային կարգի շատ վերապրուկներ։

Թեև Ռումի սուլթանությունը ֆեոդալական միապետություն էր, այնտեղ դեռ շարունակում էին պահպանվել նահապետական ուժեղ մնացուկներ [219, էջ 12]։ Սուլթանության հիմքերը անկայուն էին. չկար տնտեսական ընդհանրություն։ Սուլթանությունը իրենից ներկայացնում էր կիսաինքնուրույն իշխանությունների մի միավորում, որոնց մեծ մասը ծագել էր ցեղային հիմքի վրա։ Այդ իշխանությունները (բեյլիկները, էմիրություններ) մերթ ճանաչում էին կենտրոնական իշխանությունը, երբ վերջինս ուժեղանում էր, մերթ ամեն մի հարմար առիթի ապստամբում էին նրա դեմ։ Հիմնականը, որ միավորում էր իշխանություններն ու ցեղերը, համատեղ նվաճողական արշավանքներն էին ուրիշ պետությունների դեմ, նպատակ ունենալով զավթել նոր հողեր ու ավար, որոնք հարստացնում էին գլխավորապես ցեղային ավագանիին [219, էջ 13]։

Սկզբնական շրջանում պետության կյանքում կարևոր դեր

էր կատարում նաև ցեղերի ավագների խորհուրդը՝ կուրուլթայը. ճիշտ է, նա արդեն արտացոլում էր ֆեոդալականացող ցեղային ավագանիի, այլ ոչ թե բոլոր քոչվորների շահերը [219, էջ 12]։

Մուսուլմանական սովորութական իրավունքի (շարիաթի) հետ միասին կիրառվում էր նաև օղուզների սովորութական իրավունքը՝ յասան։ Վ. Ա. Գորդլևսկին, վկայակոչելով Յազըջիօղլու Ալիին, նշում է, որ Ալաեդդին I սուլթանը լավ գիտեր այդ իրավունքը, որը շարադրված էր «Օղուզնամե»-ում. արքունիքի կենցաղի մանրուքներն ու քաղաքական դատարանը հիմնված էին նրա ցուցումների վրա [49, էջ 57]։ Թեև Ռումի սուլթանների արքունիքում սովորույթները հիմնականում ձևավորվում էին պարսկական ազդեցության տակ, օղուզների հին կենցաղը ուժեղ կնիք էր թողել նրանց արքունական կենցաղի վրա։ Սուլթանի գահակալության ժամանակ կազմակերպվում էր խնջույք (շյոլեն), որտեղ ցեղերի բեյերը ծիսակատարության սեղանի շուրջը տեղեր էին գրավում օղուզների սովորույթներով սահմանված «տեղակարգության» համաձայն՝ աջ և ձախ թևերի ցեղերի կարգով[6]։ Յուրաքանչյուր բեյ ստանում էր սովորույթով սահմանված իրեն հասանելիք մսակտորը զոհաբերված անասունի որոշակի տեղից։ Ուտելով այդ կտորը, բեյերը կարծես երդում էին տալիս սուլթանին [11, էջ 155]։ Թմբուկը և դրոշակը՝ Սելջուկյանների իշխանության այդ խորհրդանշանը, նրանց էր անցել օղուզներից [11, էջ 155]։

Սուլթանի ընդունելության վայրը կոչվում էր քափու (դուռ, մուտք)։ Դա գալիս էր թյուրքերի քոչվորական կենցաղից, երբ ցեղի անվանի մարդիկ սկզբում հանդիպում էին ցեղապետի վրանի մուտքի մոտ, և ապա միայն ներս մըտնում։ Այդ անունը (բայց արաբա-պարսկական ձևակերպմամբ) հետագայում անցավ նաև օսմանցիներին, որոնց կամքը

6 Աջ թևի մեջ էին մտնում կայը, բայաթ, ալքըրեվլի, կարաեվլի, յազըր, դյուքեր, դուդուրգա, յափարլը, ավշար, քըրըք, բեկդիլի, կարքըն ցեղերը, ձախ թևի մեջ՝ բայանդուր, բեջենն, ջաուլդուր, ջիբնի, սալոր, խմյուր, ալայունլու, ուրքիշ, իքդըր, բուքդուզ, իվե, քընըք ցեղերը [205, էջ 76]։

ռավարությունը կոչվում էր Բաբ-ը Ալի (Բարձրագույն Դուռ) [344, էջ 85]։

Ինչպես գրում էր Վ. Ա. Գորդլևսկին, «սուլթանի մեջ երկար ժամանակ դեռ ապրում էր քոչվորը», ձմռանը սուլթանները քոչվորության էին մեկնում դեպի Միջերկրական ծովի ափերը [52, էջ 2]։ Նկարագրելով Իզեդդին Քեյ-Քավուս I սուլթանի ամուսնությունը, Իբն Բիբին խոսում է հարսնացուի համար հատկացված սանդուղքի մասին, որ պատրաստում էին նրա համար՝ հեշտությամբ ուղտի վրա բարձրանալու նպատակով [52, էջ 4]։ Դա թուրքմենական հին սովորություն էր՝ ուղտի մեջքին կառուցել քեջեբե՝ պատգարականման մի խցիկ, ուր նստում էր քողով ծածկված հարսնացուն՝ փեսայի տուն գնալիս։

Ցեղային աշխարհազորի ռազմական կազմակերպությունը ևս օղուզները և թուրքմենները բերել են Միջին Ասիայից. նույնպես բաժանվում էին աջ և ձախ թևերի. ջոկատների գլուխ կանգնած էին օնբաշիները (տասնապետները, էլլիբաշիները (հիսնապետները), յուզբաշիները (հարյուրապետները) և այլն [49, էջ 50]։

Օղուզները թեև ընդունել էին իսլամը, բայց նրանց մոտ երկար ժամանակ պահպանվում էին շամանականության մնացորդները (օրինակ, թաղման ծիսակատարություններում) [49, էջ 58]։ Կանայք հաճախ բարձր դիրքեր էին գրավում հասարակության մեջ, նույնիսկ մասնակցում էին ճակատամարտերին, չկար կանանց մուսուլմանական մեկուսացությունը [445, էջ 161]։

Սելջուկյանների պետության հարաճուն ֆեոդալականացումը բարդացրել էր ցեղերի փոխհարաբերությունները կենտրոնական իշխանության հետ։ Սուլթանը ցեղային միավորման առաջնորդից վերջնականապես դարձել էր միապետ։ Օղուզներից կամ թուրքմեններից կազմված ջոկատների գլուխ արդեն երբեմն կարգվում էին այնպիսի անձինք, որոնք իրենց ծագումով կապված չէին տվյալ ցեղի հետ [49, էջ 148]։ Գնալով ավելի մեծ դեր էին սկսում խաղալ մամլյուկները կամ ղուլամները (սարուկները)։ Դրանցից էր կազմվում սուլթանի գվարդիան։ Նրանք նշանակվում էին էմիրների,

վալիների (մարզերի կառավարիչների), սալարների (գեներալների) պաշտոններում։ Դեռևս Տողրուլ-բեյի մոտ և՛ վեզիրը և՛ բարձրաստիճան պաշտոնյաները տաջիկներից էին։ Նիզամ ալ-Մյուլքը ևս սարուկներին գերադասում է օղուզական և թուրքմենական բեյերից [526, էջ 98, 159]։ Ռումի Սելջուկյանների մոտ մամլյուկները հավաքագրվում էին գերի ընկած թյուրքերից (զիչաղներից և քրիստոնյա թյուրքերից, որոնք պատերազմում էին Բյուզանդիայի կողմում), ինչպես նաև հայերից, վրացիներից, արխազներից, հույներից և այլն։

Օղուզական և թուրքմենական բեյերը աստիճանաբար հեռացվում էին պետական գործերից։ Նրանք զրավում էին երկրորդական կամ երրորդական պաշտոններ կամ գոնվում էին ոչ մեծ իկթաներում՝ իրենց ցեղերի հետ և կամ ուղարկվում էին ուջեր, որտեղ հաճախ դառնում էին մանր գինվորական ավատատերեր՝ սիպահիներ [526, էջ 100]։

Աճում էր նաև նյութական այն բեռը, որ սուլթանը գնում էր ցեղերի վրա, որը մի յուրատեսակ տուրք էր նվերների ձևով։ Օրինակ, Սանջար սուլթանին ամեն տարի Իրան էին ուղարկում 24 հազար ոչխար [49, էջ 49]։ Ցեղապետները, ինչպես և մյուս իկթադարները, եկամուտների մի որոշակի մասը մուծում էին սուլթանի գանձարանը։ Այդ բաժինը գնալով մեծանում էր [526, էջ 131]։

Սուլթանները գնալով ավելի ու ավելի էին կտրվում քոչվորների զանգվածներից։ Արքունիքում աճում էր պարսկական կուլտուրայի ազդեցությունը։ Հենց Սելջուկյանների դարաշրջանում էր, որ «թյուրք» բառը դարձավ նախատական՝ որպես «ռամիկի», «պլեբեյի» հոմանիշ [369, էջ 9]։ Ի. Քաֆեսօղլուն հետևյալ կերպ է բնութագրում սուլթանների վերաբերմունքը դեպի թյուրքական ցեղերը. «Սուլթաններ կտրվեցին օղուզական զանգվածներից, որոնց ուժերով նվաճվել էր կայսրությունը. սրանք արդեն ոչ թե ցեղերի նախկին առաջնորդներ էին, այլ իսլամի սուլթաններ, որոնք հաճախ անարդարացի էին վարվում թուրքմենների հետ, [445, էջ 161]։

Իրենց իրավունքների ոտնահարմանը օղուզներն ու

թուրքմենները պատասխանում էին ապստամբություններով։ Անգամ անատոլիական սուլթանների առավելագույն հզորության շրջանում սկսվել են թուրքմենների և օղուզների առաջին ապստամբությունները [49, էջ 49. 369, էջ 9]։ Օղուզա-թուրքմենական ցեղերը մասնակցել են նաև դերվիշ Բաբա-Իսհաքի ապստամբությանը (1239 թվական) [49, էջ 97], որը թեև հանդես էր գալիս շիիզմի կրոնական քողի տակ, բայց ըստ էության ամրապնդվող ֆեոդալական կարգի դեմ ստորին խավերի բողոքի արտահայտությունն էր՝ մի յուրատեսակ գյուղացիական պատերազմ Փոքր Ասիայի սելջուկյան պետությունում։

Օղուզների և թուրքմենների տարաբնակեցումը Անատոլիայում

Սկզբնական շրջանում, երբ օղուզական և թուրքմենական ցեղերին տարաբնակեցնում էին Անատոլիայում, հավանաբար, պահպանվում էր նրանց ավանդական բաժանումը բուզուքի (բոզոքի) և ուչուքի (ուչոքի), այսինքն՝ աջ և ձախ թևի, կամ աջ և ձախ կողմի։ Շարժվելով դեպի արևմուտք, բուզուք ցեղերը, որպես կանոն, բնակություն էին հաստատում ուչուք ցեղերից դեպի հյուսիս, այսինքն՝ բնակեցման ժամանակ ինչ-որ չափով պահպանվում էին օղուզական ցեղերում ընդունված մարտակարգերը [49, էջ 45]։ «Բոզոք» անունը իբրև տեղանուն պահպանվել է հենց Կենտրոնական Անատոլիայի հյուսիսում. այնտեղ կա մի սարահարթ, որը մինչև հիմա էլ կոչվում է Բոզոք (Բոզոք յայլասը)։ Օսմանյան կայսրությունում «բոզոք» անունը որպես վարչական միավոր ցույց տվող բառ երկար ժամանակ պահպանվում էր նաև Անատոլիայի հյուսիսում, Յոզղատ քաղաքի շրջանում [408, էջ 354]։

Բայց հետագայում օղուզական և թուրքմենական ցեղերի տարաբնակեցման մեջ ոչ մի առանձին կանոն այլևս չէր պահպանվում։ Անատոլիայում բնակություն հաստատած ցեղերի անունները պահպանած տեղանունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ճանապարհին օղուզական հին ցեղային

միավորումները քայքայվում էին։ Այդ բանին նպաստում էր Սելջուկյանների քաղաքականությունը, որոնք գիտակցաբար կազմալուծում էին ցեղային ուժեղ կազմավորումները և նրանց մաս-մաս բնակեցնում երկրի տարբեր շրջաններում [49, էջ 45]։ Բացի դրանից, ցեղերի մասնատումը թելադրվում էր նաև այն բանով, որ Սելջուկյանները ձգտում էին ամենուրեք, որտեղ կար երկրագործ նստակյաց բրիստոնյա բնակչություն, պահել քոչվորների զինված ջոկատներ [390, էջ 929]՝ որպես յուրատեսակ ոստիկանական ուժեր՝ անհնազանդներին ճնշելու համար։

Անատոլիայի տեղանունների վերաբերյալ թուրք գիտնականների կատարած հետազոտությունները ակնառու կերպով ցույց են տալիս ցեղերի մասնատման պրոցեսը։ Օրինակ, կայք ցեղանվան հետ կապված տեղանունները ցրված են Ջանաքկալեից մինչև Կարս, Ուրֆայից մինչև Մանիսա ընկած վիթխարի տարածության վրա [49, էջ 45]։ Ճիշտ է, երբեմն Սելջուկյանները որևէ ցեղի սկզբում բնակեցնում էին երկրի ներսում՝ ստուգելու համար նրա «բարեհուսությունը», և ապա միայն ուղարկում սահմանամերձ շրջանները. օրինակ, քերմիյան (գերմիյան) ցեղը [480, հատ. IV էջ 114]։ Դա կարող էր թողնել «լրացուցիչ» տեղանուններ, քանի որ ցեղի մի մասը կարող էր նստակյաց դառնալ կենտրոնում, իսկ մի մասը՝ ծայրամասում։ Ցեղերի ցրվածությունը հաստատվում է նաև Սուլեյման I Կանունի սուլթանի ժամանակների հողերի վերաբերյալ փաստաթղթերի վերլուծությամբ. այն գյուղերն ու վարչական միավորները (կազա, նահիյե), որոնց անունները կապված են որևէ ցեղի հետ, ընկած են միմյանցից հեռու [526, էջ 166]։

Հարկավոր է, սակայն, նշել, որ ցեղանունների հետ կապված ոչ բոլոր տեղանուններն են պարտադիր կերպով ցույց տալիս տվյալ ցեղի բնակության վայրը։ Դրանցից շատերը կարող էին ծագել նաև անձնանուններից, առանձնապես ցեղապետների և տոհմապետների անուններից, քանի որ օղուզական ցեղանունները օղուզների և թուրքմենների մոտ շատ տարածված էին նաև իբրև անձնանուններ, որոնք ցույց էին տալիս տվյալ անունը կրողի ծագումը այս կամ այն ցեղից կամ տոհմից։

Այսպես, «Դեդե Քորքուդ» էպոսում կան Ավշար-Բեկ, Բայանդուր-խան, Բյուգդյուզ, Էմեն, Դյուկեր-բեկ, Սալոր-Կազան, Յազըր անձնանունները [125, էջ 286—292. 429. էջ 121—124]: Այս բոլոր անձանունները այս կամ այն կերպ կապված են օղուզների ցեղանունների հետ: Ավելին. Ֆ. Դեմիրթաշը XVI—XVII դարերի օսմանական արխիվային փաստաթղթերում հայտնաբերել է թուրքական թուրքմեններին այնպիսի անուններ, ինչպիսիք են Էյմյուր, Բայադ, Ավշար, Յուրեգիր, Բայընդըր, Դյուգեր, Չավունդուր, Դոդուրգա, Չեփնի, Սալուր, որոնց կրողները երբեմն մտնում էին ուրիշ անուն կրող ցեղի մեջ: Այսպես, Բոզ-Ուլուս միավորումից դյունդեշլի ցեղը կառավարում էր Էյմյուր անունը կրող քեխիուդան (ավագը), գյուղգյուջեք տոհմը գլխավորում էր Չավունդուր քեխիուդան [407, էջ 579, շար.]: Ավելին. հաճախ ցեղապետի կամ տոհմապետի անունը, որը կապված է որևէ այլ ցեղից սերված և այդ անունը կրող անձի ծագման հետ, ժամանակի ընթացքում դառնում էր իր գլխավորած ցեղի կամ տոհմի նոր անունը: Օրինակ, XVI—XVII դարերում բայադ ցեղի մեջ կար կարքըն ենթաբաժանումը, թեև դեռ Ռաշիդ ադ-Դինը կարքընը համարում էր ինքնուրույն ցեղ՝ բայադի կողքին: Ինչպես պարզվում է օսմանական արխիվային փաստաթղթերից, այդ ենթաբաժանումը իր անունը ստացել էր իր ցեղապետից, որը սերել էր կարքըն ցեղից [408, էջ 324]: Մեկ այլ օրինակ. XVI դարում Բոլուի շրջանի (Հյուսիս-Արևմտյան Անատոլիա) յուրյուքների մեջ կար մի փոքրիկ ցեղ՝ ավշարլու, որի անունը ծագել էր ցեղապետի հոր՝ Ավշարի անունից: Իսկ ավշար ցեղի հիմնական զանգվածը այն ժամանակ գտնվում էր Անատոլիայի արևելքում և հարավ-արևելքում [407, էջ 579, շար.]: Ակասակած, այս ամենը ևս նպաստում էր Անատոլիայում այնպիսի տեղանունների տարածմանը, որոնք կապված են օղուզական ցեղանունների, բայց միայն ցեղանունների, այլ ոչ թե ցեղերի հետ: Այս փաստերը անհրաժեշտ է նկատի ունենալ և քննադատաբար մոտենալ տոպոնիմիկայի տվյալներին:

Այնուհանդերձ, Փոքր Ասիայի օղուզական տեղանունները չափից դուրս առատ են, որպեսզի բոլորովին բացառվի առանձին տեղանունների կազմավորման հնարավորությունը անմիջականորեն օղուզական ցեղանուններից՝ այս կամ այն ցեղերը կամ նրանց մասերը բնակեցնելիս: Անատոլիական տեղանունների մեջ ներկայացված են Մահմուդ Կաշգարիի և Ռաշիդ ադ-Դինի արձանագրած օղուզական բոլոր ցեղանունները (բացի յափարլըից[7]: Ալայունթլը և ալքըրէվլի (այլ կերպ՝ ուլա-յունդլուդ և ալքաբյոլյուք) անուններից բացի, որոնք հազվադեպ են անատոլիական տեղանունների մեջ[8] [478, հատ. XI, № 124, էջ 16], մյուս բոլոր ցեղերը առատորեն թողել են իրենց անունները գյուղերին, գյուղաքաղաքներին (կասաբա), քաղաքային թաղամասերին (մահալլե) և անգամ քաղաքներին (օրինակ, Իզմիրի վիլայեթում կա Բայընդըր գավառական կենտրոնը): Անկարայի վիլայեթի տեղանունների մեջ կա 17 ցեղանուն՝ 24-ից (ըստ որում առանձին տեղանուններ կըրկնվում են մի քանի անգամ) [49, էջ 45]: Օղուզական տեղանունները ամենից ավելի խիտ ներկայացված են Կենտրոնական Անատոլիայում, արևմտյան շրջաններում դրանց թիվը արդեն պակասում է, իսկ արևելքում բոլորովին քիչ է: Դա բացատրվում է ամենից առաջ այն բանով, որ Անատոլիա եկած օղուզները և թուրքմենները եղել են տափաստանային տեղանունների կազմավորման հնարավորությունը անմիջականորեն օղուզական ցեղանուններից՝ այս կամ այն ցեղերը կամ նրանց մասերը բնակեցնելիս: Անատոլիական տեղանունների մեջ ներկայացված են Մահմուդ Կաշգարիի և Ռաշիդ ադ-Դինի արձանագրած օղուզական բոլոր ցեղանունները (բացի յափարլըից[7]: Ալայունթլը և ալքըրէվլի (այլ կերպ՝ ուլա-յունդլուդ և ալքաբյոլյուք) անուններից բացի, որոնք հազվադեպ են անատոլիական տեղանունների մեջ[8] [478, հատ. XI, № 124, էջ 16], մյուս բոլոր ցեղերը առատորեն թողել են իրենց անունները գյուղերին, գյուղաքաղաքներին (կասաբա), քաղաքային թաղամասերին (մահալլե) և անգամ քաղաքներին (օրինակ, Իզմիրի վիլայեթում կա Բայընդըր գավառական կենտրոնը): Անկարայի վիլայեթի տեղանունների մեջ կա 17 ցեղանուն՝ 24-ից (ըստ որում առանձին տեղանուններ կըրկնվում են մի քանի անգամ) [49, էջ 45]: Օղուզական տեղանունները ամենից ավելի խիտ ներկայացված են Կենտրոնական Անատոլիայում, արևմտյան շրջաններում դրանց թիվը նական Անատոլիայում, արևմտյան շրջաններում դրանց թիվը արդեն պակասում է, իսկ արևելքում բոլորովին քիչ է: Դա բացատրվում է ամենից առաջ այն բանով, որ Անատոլիա եկած օղուզները և թուրքմենները եղել են տափաստանա-

---

7 Օղուզների ցեղերի կազմի ցուցակներում Մահմուդ Կաշգարին թվարկում է 22 ցեղ՝ քընըք, քայըգ, բայունդուր, ըվա/յըվա, սալդուր, աֆշար, բեգդիլի, բյուգդյուզ, բայաթ, յազըր, էյմյուր, քարաբյոլյուք, ալքաբյոլյուք, ինդիր, յուրեգիր (յուրեկիր), թութըրքա, ուլա-յունդլուդ, բյուգեր, բեչենեգ, չուվալդար, չեփնի, չարուքլուդ [386, հատ. I, էջ 55—56]: Իսկ Ռաշիդ ադ-Դինի ցուցակում բերված է 24 անուն, բայց այլ կարգով, իսկ չարուքլուդ ցեղը առհասարակ չկա. քայը (Մահմուդ Կաշգարիի քայըգը), բայաթ, ալքարաուլի/ալքըրէվլի (ալքաբյոլյուք?), կարաուլի/կարաէվլի (կարաբյոլյուք?), յազար/յազըր (Մահմուդ Կաշգարիի յազըրը), դուկեր/դյուկեր (Բյուգեր), դուգուրգա (Թութըրքա), յափարլը (չկա Մահմուդ Կաշգարիի մոտ), ավշար (աֆշար); քընըք (չկա Մահմուդ Կաշգարիի մոտ), բեկդիլի (բեկտիլի), քարքըն (չկա Մահմուդ Կաշգարիի մոտ), բայանդուր (բայունդուր), չաուլդուր (չուվալդար), բեչենեն (բեչենեգ), չեփնի (չեփնի), սալոր/սալըր (սարգուր), իմուր/իմյուր (էյմյուր), ալայունթլը/ալայունթլու (ուլա-յունդլուդ), ուրքիզ/ուրքիր (յուրեգիր), իկդիր (իգդիր) բուկդուր/բուկդուզ (բյուգդյուզ), յիվե/իվե (յըվա), կանիկ (քընըք) [205, հատ. I, գիրք 1, էջ 76. 11, էջ 132]:

8 Ըստ որում ալքըրէվլին պատահում է միայն հալաքէվլի ձևով:

բնակներ։ Իբրև քոչավայր և բնակավայր, ինչպես գտնում է Մ. Հ. Յընանչը, նրանք ընտրում էին հարթավայրերը, այլ ոչ թե լեռները, և նրանք առաջին հերթին յուրացրին կենտրոնական Անատոլիայի սարահարթի տափաստանները, որտեղ և նրանք ամենից ավելի խիտ կերպով բնակություն հաստատեցին։ Մանավանդ, որ Անատոլիայի տափաստանային տարածությունները այդ ժամանակ ունեին բավական նոսր տեղական բնակչություն, որը կամ փախչում էր լեռները և կամ խոշոր բերդերի պաշտպանության տակ՝ փրկվելով անընդմեջ պատերազմներից. VI դարում—VII դարի սկզբին Անատոլիան մարտերի ասպարեզ էր ծառայում Բյուզանդիայի և Իրանի միջև, VII—X դարերում՝ Բյուզանդիայի և Արաբական խալիֆայության միջև։ Անատոլիան առանձնապես ուժեղ ամայացրին արաբա-բյուզանդական պատերազմները. երեք և կես հարյուրամյակի ընթացքում արաբները ամեն տարի, իսկ երբեմն նաև տարին երկու անգամ, արշավանքներ էին կազմակերպում դեպի Բյուզանդիայի անատոլիական մարզերը, անընդմեջ հարձակումների ենթարկում դրանք։ Ավերվում էին գյուղերն ու քաղաքները, բնակչությունը ոչնչացվում էր և կամ տարվում ստրկության։ Անատոլիայի շատ շրջաններ բոլորովին ամայացան, վերածվեցին անապատների [526, էջ 164—165]։

Այն բանից հետո միայն, երբ օղուզները և թուրքմենները բնակություն հաստատեցին Կենտրոնական Անատոլիայում, նրանք շարժվեցին դեպի արևմուտք, Արևմտյան Անատոլիայի լեռնանցքներով անցնելով, դուրս եկան Էգեյան ծով, հաղթահարեցին Իլգազ և Ջանիկ լեռները և Հասան Սև ծովի ափերին, վերջապես, արդեն XIII դարում, անցնելով Լիկիայի և Կիլիկիայի լեռներով, հաստատվեցին Միջերկրածովյան հովիտներում։

Սակայն Անատոլիայի ծովափին պահպանվել էին նախկին նախաթյուրքական տեղանունները. այստեղ կար հունական, իսկ հյուսիսում՝ լազա-հունական խիտ բնակչություն։ Իսկ Անատոլիայի արևելքում լեռները բնակեցված էին քրդական ցեղերով, իսկ հովիտներում կար բազմաքանակ հայկական, վրացական և նախաթյուրքական այլ բնակ-

չություն։ Բացի դրանից, այստեղ երկար ժամանակ իրենց անկախությունը պաշտպանում էին Կիլիկիայի հայկական պետությունը (մինչև 1376 թվականը) և Տրապիզոնյան հունա-լազական կայսրությունը (մինչև 1461 թվականը), ուստի թյուրքերը այստեղ թափանցեցին օսմանական շրջանում միայն։ Եթե Արևելյան Անատոլիայում, գրում է Մ. Հ. Յընանչը, գյուղերի մեծ մասը պահպանել էին նախկին նախաթյուրքական անունները, ապա Կենտրոնական (մասամբ նաև Արևմտյան) Անատոլիայում գյուղերի մեծ մասը կրում է թյուրքական անուններ։ Դրանք կամ ցեղանուններ, տոհմանուններ էին, կամ ցեղային միավորումների անուններ, և կամ ցեղերի առաջնորդների ու ավագների անձնանուններ [526, էջ 181]։

Անատոլիա գաղթած օղուզա-թուրքմենական ոչ բոլոր ցեղերն էին հավասար քանակությամբ ներկայացված։ Նույնիսկ XI դարի օղուզների ավանդական բաժանումը 24 ցեղերի զգալի չափով կրում էր արհեստական բնույթ. արդեն Մահմուդ Կաշգարին բերում է միայն 22 ցեղի անուն, իսկ մնացած երկուսը կոչված են խալաջ ընդհանուր անունով։ Նման բաժանման արհեստականությունը ցույց է տվել Ս. Պ. Տոլստովը, վերլուծելով XX դարի Միջին Ասիայի թուրքմենական ցեղերի ցուցակը, որ կազմել է Գ. Ի. Կարպովը։ Այս ցուցակում մանր ցեղերը, որոնք աղբյուրներում ներկայացված են որպես ինքնուրույն ցեղեր, ցուցակի մեջ մտցված են ուրիշ ցեղերի մեջ և կամ բոլորովին բացակայում են [222, էջ 78]։ Նույն բանը տեղի է ունեցել նաև Անատոլիայում. եկվոր ցեղերը թվական տեսակետից հավասարարժեք չեն եղել։ Նրանցից մի քանիսը տարբեր պատճառների բերումով աճեցին, մյուսները իրենցից ներկայացնում էին ավելի շուտ նախկին ցեղերի բեկորները միայն, իսկ երրորդները՝ նախկին ցեղերի մասերից ստեղծված նոր կազմավորումներ։

Ամենից ավելի ընդարձակ ու խիտ կերպով տարաբնակվեց քընըք ցեղը։ Տոպոնիմիկան նշում է 28 անուն, որոնք կապված են այս ցեղանվան հետ։ Ըստ որում Անկարայի վիլայեթում՝ երեք անգամ, Մանիսա, Մալաթյա, Ափիոն-

Կարահիսար և Բուրսա վիլայեթներում՝ երկուական անգամ [478, հատ. V, էջ 190—198. հատ. XI, էջ 16]։ Քանի որ Սելջուկյանները եղել են այս ցեղից, ապա, Վ. Ա. Գորդլևսկու կարծիքով, այդ ցեղը, իր արտոնյալ դիրքի շնորհիվ աճեց. ուրիշ ցեղերի մասը ենթաբաժանումներ հարեցին նրան։ Գ. Ի. Կարպովի ցուցակում քընըք ցեղը չկա նույնիսկ ցեղերի մասը ենթաբաժանումներում [11, էջ 132]։ Գուցե, այդ ցեղը ամբողջապես հեռացել էր Թուրքմենիայի տերիտորիայից դեռ սելջուկյան նվաճումների ժամանակ։ Որ քընըք ցեղը եղել է ամենաբազմաքանակը Անատոլիայում, վկայում է նաև հետևյալ փաստը. արշավանքների ժամանակ սուլթանը նրանից վերցնում էր չորս թյումեն (40 հազար) դինվոր, այն ժամանակ, երբ մյուս ցեղերից վերցնում էր միայն մեկական թյումեն (10 հազար) [52, էջ 3]։

Դատելով տոպոնիմիկայի տվյալներից, Անատոլիայում բազմաքանակ են եղել նաև հետևյալ ցեղերը. կայը՝ 27 գյուղ կրում է այս անունը [468, էջ 283], բայունդուր, բայաթ, սալդուր, էյմյուր, ջաուլդուր, ջիբնի, յազգըր [478, էջ 16—17]։ Յազըջիօղլու Ալիի հաղորդման համաձայն, կայը և բայունդուր ցեղերից նշանակվում էին բեյլերբեյերը (գլխավոր բեյերը աջ և ձախ թևերից [222, էջ 87], այսինքն՝ այդ ցեղերը օղուզների շրջանում կարևոր դեր էին խաղում և, հավանաբար, եղել են բավական խոշոր ցեղեր։ Ավելի ուշ, XIV—XV դարերում, կայը ցեղը (ավելի ճիշտ՝ նրանից անջատված մի մասը), օսմանական տարեգիրների հաղորդման համաձայն, դրել է Օսմանյան բնյության հիմքը[9], իսկ բայունդուր ցեղը XI դարում իշխում էր Ախլաթում [49, էջ 50]։ Սելջուկյան ժամանակագրություններում մեջ ևս հիշատակվում են բեյեր բայունդուր ցեղից [478, հատ. V, էջ 197]։ Հավանաբար, այս ցեղի հետ է կապված առասպելական Բայունդուր-խանը [125, էջ 14—17 և հաջ.]։ Բայաթ ցեղը հիշատակվում է «Իմ պապ Քորքուդի դիրքը» էպոսում՝ Արևելյան Անատոլիայի շրջանների կապակցությամբ [125, էջ 11]։

Բավական շատ անուններ են մնացել յըվա, աֆշար, իգդիր, թութըրքա, բեկտիլի, կարաէվլի, թյուգեր, ջարուկլուղ ցեղերից [478, հատ. XI էջ 16—17]։ Մի քանի գյուղեր կան խալաջ անունով։ Տոպոնիմիկայի տվյալները հաստատվում են նաև պատմական փաստերով. օրինակ, աֆշարները Արևելյան Անատոլիայում մեծ դեր են կատարել XV—XVI դարերում, բեյդիլի անունով ցեղը թուրքական թուրքմենների Անատոլիայում գոյություն ունեին քոչվորական խալաջլու ցեղերը [440, հատ. 40, էջ 115]) և այլն։ Անատոլիայում կան բնակավայրեր, որոնք կապված են քարքըն անվան հետ [478, հատ. XI էջ 16—17], մի ցեղ, որ չկա Մահմուդ Կաշգարիի ցուցակում, բայց կա Ռաշիդ ադ-Դինի ինչպես և Խվայի խան Աբուլղազիի մոտ [127]։ Յափարլը ցեղը, որը ներկայացված է վերջին երկու ցուցակներում, հետքեր չի թողել Անատոլիայի տեղանունների մեջ [478, հատ. XI, էջ 16—17]։ Ֆ. Դեմիրթաշը այդ ցեղի մասին հիշատակումներ չի գտել նաև XVI—XVII դարերի Օսմանյան կայսրության արխիվային փաստաթղթերում, որ նա ուսումնասիրել է [408, էջ 343]։ Ըստ երևույթին, այս ցեղը, որը կազմվել է XI դարից ավելի ուշ, Միջին Ասիայի սահմաններից դուրս չի եկել։ Քըրըք անունը (քըրըքլը և քըզըք ձևերով) արխիվային փաստաթղթերում հիշատակվում է որպես շատ սովորական ենթաբաժանումների անուն [408, էջ 356—357]։ Քըրըք անվան հետ կարելի է համադրել նաև եվրոպական Թուրքիայի Քըրքլարելի (Քըրքների երկիր) վիլայեթի անվան հետ, ինչպես քըրըք տոհմը Միջին Ասիայի թուրքմենների գոքլան ցեղում՝ Գ. Ի. Կարպովի կազմած ցուցակում [11, էջ 152]։ Բացի դրանից, Անկարայի վիլայեթում կան քըզըք անունով գյուղեր [49, էջ 45], իսկ Աբուլղազիի ցուցակում,

9 Գ. Վիտտեկը անհավատի է համարում օսմանական ժամանակագիրների այն պնդումը, թե օսմանական սուլթանները ծագել են կայը ցեղից, և նրանց ծագումը համարում է զորավար, զաղի ջոկատի հրամանատարից (Բուրսայի մզկիթներից մեկում մնացել է մի արձանագրություն՝ «Օրխան, սուլթան զազիի որդի») [357, էջ 303]։ Սակայն, «զազին» կարող էր լինել պարզապես Օսման սուլթանի տիտղոսը, բացի դրանից, շատ ժամանակագիրներ նրան անվանում են ոչ թե սուլթան, այլ միայն բեյ կամ էմիր։

ինչպես հայտնի է, քըրքըբ արտասանվում է քիզիք/քըզըք [11, էջ 132]։

Օղուզական ցեղանուններից բացի Անատոլիայի տեղանունների մեջ մնացել են նաև զուտ թուրքմենական ցեղանուններ, օրինակ՝ Թեքե։ Տոպոնիմիկայի տվյալներն այն մասին, որ այս ցեղը (նրա մի մասը) գաղթել է Փոքր Ասիա, հաստատվում են նաև ուրիշ փաստերով։ Ի. Հ. Ուզունչարշըլըն գրում է, որ Թեքե ցեղը (այս ցեղի մի մասը Անատոլիա է եկել Խորեզմից և Սերախսից) Սելջուկյանների կողմից XIII դարի սկզբին բնակեցվել է Անթալյա քաղաքի շրջանում (Հարավ-Արևմտյան Անատոլիա)։ Այս շրջանը երկար ժամանակ կոչվում էր Թեքե էլի (Թեքենների երկիր), իսկ Անթալյայի կառավարիչները՝ Թեքենների բեյեր (Թեքե բեյի) [510, էջ 96]։ Անատոլիայի հարավում հիմա էլ քոչվորական կյանք է վարում յուրյուքների Թեքելի ցեղը [412, էջ 206.419, էջ 28]։ Թեքելի յուրյուքները հիշատակվում են նաև Ա. Ռ. Ալբրնայի հրապարակած օսմանական արխիվային փաստաթղթերում [371, էջ 118, 207]։

Թյուրքերի թվաքանակը Անատոլիայում XI—XII դարերում

Անուղղակի ճանապարհով և, իհարկե, շատ մոտավոր կերպով կարելի է որոշել Սելջուկյանների հետ Անատոլիա եկած օղուզա-թուրքմենական ցեղերի ընդհանուր թվաքանակը։ Մանազկերտի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Ալփ-Ասլանը ուներ 55—60 հազար զինվոր [480, հատ. II, էջ 59]։ Հետագայում Փոքր Ասիայում եղած զորքերի թիվը շատացավ։ Այդ մասին են խոսում բյուզանդական և սելջուկյան աղբյուրները։ Մելիք-շահ սուլթանը Արթուկ-բեյի և էմիր Բութաքի գլխավորությամբ Անատոլիա ուղարկեց 100 հազար զինվոր, որոնք հաստատվեցին Կապադովկիայում 1072 թվականին [526, էջ 174]։ «Արևելքի ներքին երկրներից վիթխարի զորքով հայտնվեց բարբարոս Բութախը»,— այդ մասին հաղորդում է Աննա Կոմնինան [15, էջ 58]։ Յաղըջիօղլու Ալիի խոսքերով, Սոլեյման-շահը Անատոլիայի տերիտորիան ներխուժեց նախ 80 հազար (1078—1079), իսկ ապա 120 հազար թուրքմեններով [526, էջ 174]։

Նիզամ ալ-Մուլքի «Սիյասեթ-նամե»-ում ասված է, որ Մելիք շահը ուներ 400 հազար հեծյալ զինվոր, որոնք ստանում էին «աննզադրամ» (ուլուֆե), «գտնվում էին խնամակալության տակ». «մոտ չորս հարյուր հազար հեծյալներ գտնվում են խնամակալության տակ» [210, էջ 166—167]։ Այս տեղեկությունները պարունակող 42-րդ գլուխը, Բ. Ն. Զախոդերի կարծիքով, պատկանում է «Սիյասեթ-նամե»-ի այն մասին, որը կազմում է Նիզամ ալ-Մուլքի իսկական երկը [210, էջ 311], ուստի այդ տվյալները ամենից ավելի հավաստիներն են։ Հենվելով դրա վրա, Մ. Հ. Յընանչը կատարում է հետևյալ հաշվարկը. Անատոլիայում պետք է գտնվեր զորքի առնվազն մեկ երրորդը, այսինքն՝ 130—140 հազար մարդ։ Եթե նկատի ունենանք, որ յուրաքանչյուր զինվորին ընկնում էր նաև ցեղի չորս անդամ, ապա ընդամենը կլինի մոտ 520—560 հազար մարդ։ Այս թվին ավելացնելով ցեղային աշխարհազորները և այն ցեղերն ու ցեղային ենթաբաժանումները, որոնք ինքնակամ կերպով աշխատանքների ժամանակ միանում էին բանակին, ինչպես նաև Տավրոսի և Կապադովկիայի լեռնանցքներում բյուզանդացիների կողմից բնակեցված քրիստոնյա թյուրքերին, Մ. Հ. Յընանչը Անատոլիայի թյուրք բնակչության թվաքանակը XI դարում հասցնում է մինչև 1 միլիոն մարդու [526, էջ 174]։ Սակայն, հարկավոր է նկատի ունենալ, որ «Մեծ Սելջուկյանների» զորքերում կային ոչ միայն օղուզա-թուրքմենական զինվորներ, այլև զինվորներ գերի բնկած ստրուկներից, որոնց թվում, իհարկե, նույնպես կային թյուրքեր (ղիչաղներ և ուրիշներ)։

Մեկ այլ թուրք պատմաբան, Ի. Քաֆեսօղլուն գտնում է, որ օղուզների և թուրքմենների թիվը Անատոլիայում այդ ժամանակ հավասար է 550—600 հազար մարդու [445, էջ 162]։

Ինչպես վերևում նշվեց, անատոլիական սուլթանը յուրաքանչյուր ցեղից վերցնում էր 10 հազարական զինվոր (մեկական բյումեն), և միայն «իր» բընըք ցեղից՝ չորս բյումեն։

մեն։ Ընդամենը Անատոլիայում կար առնվազն 24 ցեղ (եթե ոչ ավելի, քանի որ նրանց բաժանումը 24 ցեղի ավելի շուտ ավանդական, արհեստական էր, քան իրական), հետևաբար սուլթանի զորքը կազմում էր 270 հազար մարդ (40000+10000×23)։ Եթե յուրաքանչյուր զինվորի համար հաշվենք նաև ցեղի չորսական անդամ, կստանանք 1080 հազար մարդ։ Ճիշտ է, դա XI դարից ավելի ուշ էր, քանի որ Իբն Բիբիի ժամանակագրությունը, որտեղ խոսվում է ցեղերի կողմից հատկացվող թյումենների քանակի մասին, ընդգրկում է 1188—1282 թվականները։ Ուստի անհրաժեշտ է նկատի ունենալ բնակչության 100 տարվա բնական աճը, և, գլխավորը՝ նոր ուժերի անընդմեջ առհոսքը Խորասանից և Միջին Ասիայից։ Բացի դրանից, միշտ չէ, որ թյումենը կազմել է ճիշտ 10 հազար մարդ. նա կարող էր նաև լինել պակաս։

Այնուամենայնիվ, նկատի ունենալով բոլոր այդ հանգամանքները, կարելի է ենթադրել, որ XI դարում Անատոլիա դաղթած թյուրք քոչվորները (նրանց հիմնական զանգվածը կազմում էին օղուզական և թուրքմենական ցեղերը) եղել են մոտավորապես 500—700 հազար մարդ, իսկ ավելի ուշ, XII դարում և XIII դարի սկզբին նրանց թիվը մոտենում էր մեկ միլիոն մարդու։

Անատոլիայի թյուրքական ցեղերի էթնիկական կազմը

Թյուրքական ցեղերի հիմքը Անատոլիայում XI—XIII դարերում կազմում էին օղուզները և թուրքմենները։ Այս շերտը եղել է այնքան ուժեղ, որ նույնիսկ մինչև մեր օրերում էլ պարզորոշ կերպով հանդես է գալիս, երբ ուսումնասիրում ենք Փոքր Ասիայի թուրքմենական ցեղերը, որոնք պահպանվել են Անատոլիայի արևելյան շրջաններում։ Այսպես, թուրքմենական ցեղերի մի մասը Թուրքիայում պահպանել է օղուզական անունները՝ բայընդըր, բայադ, չեփնի [519, մաս 1, էջ 6—8], ավշար [478, հատ. V, էջ 198]։ Թուրքիայում պահպանվել են նաև գյունեչ, բարաք, կարաթաշլը, կարա-կոյունլու ցեղերը [519, մաս 1, էջ 6—8]։ Այս բոլոր անուններն էլ ունեն օղուզական և թուրքմենական ծագում։ Գյունեչ և բարաք ցեղային ենթաբաժանումները գոյություն ունեն միջինասիական թուրքմենների (համապատասխանաբար՝ էրսարիների և յոմուդների) մոտ [120, աղյուս.]։ Կարա-կոյունլու ցեղը հայտնի է որպես թուրքմենական համանուն պետության հիմնադիր։ Կարա-թաշլըները (կարադաշլըները) Թուրքմենիայում պահպանվել են որպես ինքնուրույն ցեղ [11, էջ 132]։ Աբուլղազիի վկայությամբ դրանք օղուզական յազգըր ցեղի ժառանգներն են։

Փոքր Ասիայի թուրքմենական ցեղերի մասին ընդարձակ տեղեկություններ է հայտնաբերել Ֆ. Դեմիրթաշը XV—XVIII դարերի Օսմանյան կայսրության արխիվային փաստաթղթերում։ Դրանց մեջ հիշատակվում են գրեթե բոլոր այն ցեղանունները, որոնք կան Մահմուդ Կաշգարիի, Ռաշիդ ադ-Դինի և Աբուլղազիի ցուցակներում։ Երբեմն միայն որոշ ցեղանուններ, որոնց կրողները նախկինում իրենցից ներկայացրել են խոշոր և հզոր ցեղեր, արդեն միանում էին փոքր ենթաբաժանումներին (կայը, քընըք), որը խոսում է այն մասին, որ տեղի է ունեցել ցեղի կազմալուծում կամ մի փոքրիկ խումբ անջատվել է նրանցից և կամ ցեղի հիմնական մասը անցել է նստակեցության, խառնվել է տեղական բնակչության հետ և կորցրել նախկին ցեղային ընդհանրությունը։ Իսկ ուրիշ ցեղանուններ այդ փաստաթղթերում, ընդհակառակը, վերագրվում էին ավելի խոշոր, հաճախ նույնիսկ մի քանի ցեղերի միավորումներին, ինչպես օրինակ, ավշար, բայադ, բեյդիլի։ Այսպես, XVI—XVII դարերում ավշարների մի քանի միավորումներ եղել են Հալեբի, Դուլքադըրլիի և այլ տեղերի թուրքմենների ուլուսներում (ցեղային միավորումներում) [408, էջ 345—350]։

Թուրքական թուրքմենների մոտ պահպանվել են նաև օղուզների տոհմային տամգաները։ Դրանցով խարանում են խոշոր եզջերավոր անասուններին և ուղտերին։ Դրանք օգտագործվում են նաև իբրև համայիլներ[10]։

[10] Օղուզների տոհմական տամգաները հնուց ունեցել են ոչ միայն սեփականության տոհմական նշանների, այլև տոհմական խորհրդանշանների նշանակություն, որոնք ունեն հրաշագործ ուժ։ Այստեղից էլ դրանց օգտագործումը որպես համայիլներ։

Էվլիյա Չելեբին իր «Ուղեգրության» մեջ (հատ. III) XVII դարի անատոլիական թուրքմենների լեզվի մասին տվել է այնպիսի տեղեկություններ, որոնք վկայում են սելջուկյան ժամանակաշրջանի Միջին Ասիայի թուրքմենների բարբառների հետ նրա ունեցած կապերի մասին: «Թուրքմենների բարբառները, ինչպես և իրենք՝ թուրքմենները, ծագում են Բուխարայի մարզից: Դուրս գալով Մավերաննահրից, թուրքմենները դանիշմենդլի, ակկոյունլու, սելջուկ անունով թափանցեցին Անատոլիա» [484, էջ 1714]: Էվլիյա Չելեբին բերում է թուրքմեններեն մի քանի բառեր և տալիս դրանց նշանակությունը. ըրվանա—էգ ուղտ, գյումեչ—հաց, քեքրիմսի—դինի, դութուբ—հարսի քող, ուշաք—երիտասարդ, չենդի—մկրատ, գյողգյու—հայելի, գյոքշեք—գեղեցիկ և այլն [484, էջ 1714]: Այս բառերի մեծ մասը ժամանակակից թուրքերենում չի օգտագործվում, այն ժամանակ, երբ Միջին Ասիայի արդի թուրքմեններենի մի շարք բարբառներում այդ բառերը, երբեմն հնչյունական աննշան փոփոխություններով, ունեն իմաստով նույն կամ մոտ նշանակություններ:

Օղուզա-թուրքմենական շերտը բավական հստակորեն երևան է գալիս նաև յուրյուքների ցեղանունները ուսումնասիրելու ժամանակ: XVI դարում Ուշաքի շրջակայքում ապրում էր յուրյուքների բայաթ ցեղը, Անկարայի յուրյուքների շրջանում կային յազըրներ (սարը—յազըր և կարա-յազըր), Սիվասի շրջանում ուլու-յուրյուք ցեղային միավորման մեջ էին մտնում դոդուրգաներ. դրանք կային նաև Անկարայի յուրյուքների մեջ. Ուշաքում և Այդինում ապրում էին ավշար-յուրյուքներ [408, էջ 327, 333, 340, 344, 353]: 1522 թվականին մի փոքրիկ կայը ցեղ արձանագրված է Անկարայի յուրյուքների հետ [407, էջ 573]: Հնարավոր է, որ նախկինում յուրյուքների շրջանում եղել են կայընների ավելի շատ ենթաբաժանումներ, որոնք, սակայն, նստակյաց են դարձել: Այդ բանը հաստատում են տեղանունները. Անկարայի վիլայեթում և ընդհանրապես կենտրոնական Անատոլիայում շատ բնակավայրեր կրում են կայը անունը [468, տե՛ս քարտեզը]: Բոլոդավինի շրջանում ապրում էր յուրյուքների սելջուկլյու ցեղը [407, էջ 595], իսկ սելջուկները, ինչպես հայտնի է (թուրքերեն՝ սելջուկներ) ծագել են օղուզներից: Յուրյուքների մի քանի ցեղեր ունեցել են օղուզական տոտեմական անուններ, օրինակ՝ բոզ-դողանլը ցեղը (այս ցեղը մինչև մեր օրերը պահպանվել է Հարավային Անատոլիայում) [518, էջ 356]: Դողանը (բազեն) եղել է օղուզների աջ թևի առաջին չորս ցեղերի օնգոնը (տոտեմը) [49, էջ 45]: Քաջար, կարա-կոյունլու, թեքելի ցեղանունները (այս անուններով յուրյուքական ցեղեր մինչև մեր օրերն էլ պահպանվել են Թուրքիայում) [433, էջ 5, 11, 28] թուրքմենական ծագում ունեն: Ի դեպ, քաջար և կարա-կոյունլու ցեղերում կա մի ավանդություն այն մասին, որ իրենք Թուրքիա են եկել Միջին Ասիայից և Իրանից [433, էջ 41—42]: Կարաէվլի, էյմիրլի, չիփնի յուրյուքական ցեղերը, որոնք պահպանվել են մինչև հիմա, հավանաբար, նույնպես օղուզական ծագում ունեն [390, էջ 935, 382, էջ 82. 519, մաս III, էջ 31]: Ժամանակակից յուրյուքների մոտ հանդիպում են նաև օղուզների տամգաներ [522, էջ 430]: Յուրյուքների հատուկ անունները XVI—XVII դարերում մեծ մասամբ ունեցել են օղուզա-թուրքմենական ծագում. Սալթուք, Արթուք, Դուրսուն, Քըլըչ, Արսլան, Դողան, Աբմաջա, Թոքդամիշ, Քուրտ և այլն [426, էջ 57, 101—104]:

Օղուզներին ավանդաբար 24 ցեղերի բաժանելու արձագանքները կարելի է տեսնել այն բանում, որ օսմանական սուլթան Սուլեյման Կանունիի (1520—1566) Կանուն-նամեի (օրենքների ժողովածուի) համաձայն յուրյուքների ցեղապետերի խորհուրդը բաղկացած էր 24 մարդուց [479, էջ 106]: Իսկ սելջուկյան Ալա ադ-Դին Քեյքուբադ սուլթանի դիվանում (կառավարական խորհրդում) կար 24 քյաթիբ և մյունշի (քարտուղար և դրագիր) [479, էջ 106]:

Բոլոր այս փաստերը համոզիչ կերպով հաստատում են օղուզների և թուրքմենների գերակշռությունը XI—XIII դարերի Անատոլիայի թյուրքերի շրջանում:

Փաստերը, սակայն, վկայում են նաև, որ այդ ժամանակ Անատոլիայի տարածքում կային նաև ուրիշ թյուրքեր: Վերում արդեն խոսվեց այն թյուրքական նախասկզբնական

տարրերի մասին, որոնք Փոքր Ասիա էին թափանցել մինչև սելջուկյան նվաճումը։ Բացի դրանից, օղուզների և թուրքմենների հետ միասին կարող էին գալ նաև թյուրքական այլ ցեղեր, որոնց կարող էր իր հետ բերած լինել սելջուկյան շարժման հուժկու հոսանքը և ցեղերի գաղթը։

Իրոք, Փոքր Ասիայի թյուրքական տեղանունների վերլուծությունը ցույց է տալիս, որ օղուզա-թուրքմենական տեղանուններից բացի հանդիպում են նաև այնպիսի տեղանուններ, որոնք կապված են թյուրքական ուրիշ ցեղանունների հետ, ինչպես, օրինակ՝ կարլուկ, ղփչաղ, չիգիլ, ույղուր, աղաչերի, կուման, խազար [տե՛ս 469]։ Բայց, ինչպես արդարացիորեն նշում է Մ. Հ. Յրնանչը, դժվար է պարզել, թե այս ցեղերը ե՛րբ են եկել Անատոլիա՝ սելջուկյան նվաճումից առաջ, դրա ժամանակ, իսկ գուցե ավելի ուշ՝ մոնղոլական արշավանքների ժամանակ [526, էջ 173]։ Տեղանունների տվյալները հաստատվում են նաև ազգագրական նյութերով։

Այսպես, օրինակ, ժամանակակից թուրք քոչվորների (յուրյուքների, ինչպես նաև թախթաջիների) մոտ, ճիշտ է, ոչ բոլոր ցեղերի շրջանում, դեռևս գոյություն ունի հին տիպի քոչվորական կացարան՝ ալաչիք (ճյուղերից շինված կիսագնդաձև վրան՝ ծածկված թաղիքով) [433, էջ 48—49. 380, էջ 204]։ Իսկ միջինասիական թյուրքերի ազգագրությունից հայտնի է, որ ալաչիքը բնորոշ է Միջին Ասիա եկած վաղ շրջանի թյուրքերի համար, որոնք, հավանաբար, եղել են դեռ մինչօղուզական թյուրքերը [տե՛ս 116. 117. 118]։

Այսպիսով, յուրյուքների և թախթաջիների շրջանում հանդես է գալիս ոչ օղուզական և ոչ թուրքմենական մի ինչ-որ շերտ։ Այնուհետև, Թուրքիայի ժամանակակից թուրքմենների յուրդը մոտ է կարլուկների յուրդին [91, էջ 44—45. 92, էջ 6]։ Թուրքմենների և կարլուկների կացարանների միջև եղած այս կապը հաստատում է Ա. Ա. Ռոսլյակովի այն կարծիքը, որ X—XI դարերում թուրքմենների կազմի մեջ մտնում էին ոչ միայն օղուզներ (ավելի ճիշտ՝ օղուզների մի մասը), այլև թյուրքական ուրիշ շատ ցեղերի ներկայացուցիչներ, համենայն դեպս՝ կարլուկների մի մասը։ Այն մա-

սին, որ թուրքմեններ էին կոչվում ոչ միայն օղուզները, այլև կարլուկները, գրում է նաև Մահմուդ Կաշգարին։ Միջին Ասիայի ժամանակակից թուրքմենների մեջ կարլուկ ենթաբաժին կա արաբաչի ցեղում [207, էջ 84, 89, 94]։ Կարլուկյան տիպի յուրդը Թուրքիայի տերիտորիան կարող էր ընկնել միայն իրենց՝ կարլուկների հետ միասին։

Վերջապես, յուրյուքների մի քանի ցեղերի մոտ տարածված է եռոտանիից կախված տիկը ճոճելու միջոցով կարագ հարելու եղանակը [517, № 103, էջ 12—13. № 106, էջ 14]։ Սա ևս այն գծերից մեկն է, որը հատուկ է թյուրքական այն ցեղերին, որոնք Միջին Ասիայում հայտնվել են առաջիններից մեկը [117, էջ 7]։

Եվ, այսպես, Անատոլիայում XI—XIII դարերում հայտնվել էին բազմապիսի թյուրքական շատ ցեղեր։ Նրանց հիմնական մասսան կազմում էին օղուզները և թուրքմենները, բայց կային նաև թյուրքական այլ ցեղեր՝ Բալկաններից եկած թյուրքեր (պեչենեգներ, ուզեր, պոլովեցներ), ինչպես նաև Միջին Ասիայից եկած շատ թյուրքեր (օրինակ, կարլուկներ)։

Թյուրքերի խառնվելը Անատոլիայի տեղական քոչվորների հետ

Գնալով հետու Արևմուտք, միջինասիական թյուրքական ցեղերը բոլորովին խզեցին իրենց կապերը Միջին Ասիայի իրենց հարազատ ցեղերի հետ, որտեղից և, ըստ էության, սկսվեցին սելջուկյան նվաճումները [11, էջ 109—110]։ Փոքր Ասիա գաղթած օղուզների և թուրքմենների նշանակալի դանգվածներ կտրվեցին իրենց միջինասիական ցեղակիցներից, և նրանց հետագա բախտը արդեն կապված էր ոչ թե միջինասիական թյուրքերի, (օրինակ, թուրքմենների) պատմության հետ, այլ թուրք ժողովրդի պատմության հետ [113, էջ 254]։ Ամենից առաջ, օղուզները և թուրքմենները, ինչպես և մյուս թյուրքերը, որոնք ընկել էին Անատոլիա, հայտնվում էին մյուս թյուրքերից կարծես մեկուսացած շրջանի մեջ, որտեղ տեղի էին ունենում վերախմբավորումներ ցեղե-

րի միջև, նրանց տեղափոխումները, նրանց միախառնումը ուրիշ քոչվորների և տեղական նստակյաց բնակչության հետ։ Քոչվոր ցեղերը հեշտությամբ փոխում էին իրենց բնակության շրջանները, հեշտությամբ մտնում ցեղերի նոր միավորումների մեջ [468, էջ 268]։ Սկզբնական շրջանի քաղաքական այդ միավորումները հետագայում դառնում էին էթնիկական։

Ամենից առաջ, թյուրքական ցեղերը, նույնիսկ դեռ նստակեցության չանցած, Փոքր Ասիայում էթնիկապես միախառնվեցին տեղական բնակչության որոշ խմբերի՝ Անատոլիայի և Բրակիայի մինչթյուրքական քոչվորների հետ։ Բացառված չէ, որ Անատոլիայում և Բալկաններում հայտնված արդեն առաջին թյուրքերը իրենց մեջ ձուլեցին այդ մինչթյուրքական քոչվորների մի մասին։ (Թյուրքական ցեղերի առանձին մասեր ենթաբաժանումներ կարող էին կլանված լինել նաև տեղական քոչվորների կողմից)։ Այսպես, Բալկաններում և Եվրոպական Թուրքիայում քոչվորական կյանք վարող ժամանակակից վալախներին և կարակաչանների մի մասին[11] կարելի է համարել տեղական քոչվոր բնակչության մնացորդներ։

Անատոլիայում, քրդերից բացի, հավանաբար, գոյություն են ունեցել ոչ թյուրքական ծագում ունեցող քոչվորների այլ ցեղեր։ Անուղղակի կերպով այդ մասին է վկայում Թեկուզ այսպիսի մի փաստ. Օգոստոս կայսեր ժամանակներում (մեր թվակ. առաջ 27 թվականն— մեր թվակ. 14 թվական) Անատոլիան հայտնի էր պարարտ ոչխարների և այծերի հոտերով, Հարավ-Արևմտյան Անատոլիայից (որտեղ քրդեր երբեք չեն ապրել) Հռոմ էին արտահանում բուրդ, բրդյա գործվածքներ, բրդյա երկար գուլպաներ, թաղիքե թիկնոցներ, կաշվե կոշիկներ [333, էջ 79]։ Բրդյա երկար գուլպաները և թաղիքե թիկնոցները հիմա էլ տարածված են Թուր-

[11] Դեռ XX դարի 30-ական թվականներին կարակաչանները ձմեռը քոչում էին Եվրոպական Թուրքիա, հասնելով մինչև Գալիպոլի թերակղզին, ամառը հեռանում էին Բուլղարիա [412, էջ 207]։ Ա. Հաջիմիհալին գրում է, որ նախկինում Թուրքիայում կարակաչանները քոչերի ժամանակ հասնում էին մինչև Կապադովկիա [529, էջ kd]։

քիայի յուրյուքների առանձին ցեղերի մոտ [394, էջ 90. 381, էջ 215]։ Իզմիրի շրջանում մինչև հիմա էլ ապրում են զեյբեկները, որոնց համարում են յուրյուքներ, բայց նրանց ծագումը ճշտորեն պարզված չէ։ Զեյբեկները խոսում են թուրքերեն, բայց խիստ տարբերվում են թուրքերից և յուրյուքներից իրենց նյութական և հոգևոր մշակույթով։ Օրինակ, նրանց համար բնորոշ է թաշկինակով կապվող հատուկ ձևի բարձր գլխարկը, նրանք հագնում են ծնկներից բարձր, կարճ շալվար, վառ գույներով ասեղնագործած բաճկոններ և այլն։ Զեյբեկների պարերն ու երգերը ևս շատ են տարբերվում թուրքերի և յուրյուքների պարերից ու երգերից [284, էջ 1292]։

Օղուզների և թուրքմենների էթնիկական միախառնման մասին կարելի է ասել ավելի որոշակի։ Դեռ վաղ միջնադարում օղուզները, ինչպես հայտնի է, իրենցից չէին ներկայացնում ցեղերի կայուն և էթնիկական տեսակետից միասեռ միություն։ Նրանք իրենց մեջ էին ներառնում տեղական, դերազանցապես քոչվոր խմբերին, օրինակ, XI դարում՝ պեչենեգների ցեղերից մեկին։ Այս ներառնված տարրերը երկար ժամանակ պահպանում էին իրենց յուրահատկությունները օղուզական այս կամ այն ցեղի կազմում [11, էջ 5]։ Նույն բանը նկատվում էր նաև Անատոլիա եկած օղուզների և թուրքմենների նկատմամբ։ Քուրդ ցեղապետները, որոնք իշխանության մեջ էին հայ իշխանների և նրանց սյուզերեն Բյուզանդիայի հետ, դաշինք էին կնքել սելջուկ թյուրքերի հետ և մասնակցում էին նրանց արշավանքներին։ Դրանք քրդական ջելալի, բուխտի, բեշնևի, մազինջանի, հյումեյդի, հաբբյարի, զավեզանի (զազա) և այլ ցեղերն էին [526, էջ 186]։ Սերտորեն կապվելով օղուզների և թուրքմենների հետ, նրանք մտնում էին նրանց ցեղերի կազմի մեջ, անգամ ընդունում նրանց ցեղանունները[12]։ Քրդերը, որոնք ընկել

[12] Ավելի ուշ, օրինակ XVI դարում, քրդերը հաճախ մտնում էին նաև Արևելյան Անատոլիայի թուրքմենական ցեղային միավորումների մեջ։ Այսպես, Ռոշ-ուլուս ցեղային միավորման մեջ մտնում էին քրդական մի քանի ցեղեր՝ գեվխեր, լեք, անթեր, ջելյախիր, ջեք և այլն [406, էջ 30—32]։

էին օղուզների և թուրքմենների հոծ զանգվածի մեջ և մեծ մասամբ հետագայում ձուլվել նրանց հետ, հավանաբար, եղել են բավական բազմաքանակ։ Քրդական այդ շերտի շնորհիվ ավելի ուշ (XV դարում) ծագեց մի նոր թյուրքալեզու քոչվոր էթնիկական ընդհանրություն՝ յուրյուքների ցեղերը։ Առանձին թուրք հեղինակներ անգամ պնդում են, որ ժամանակակից քոչվոր յուրյուքներին դժվար է տարբերել քրդերից [398, էջ 84]։ Ֆ. Հ. Հեսլաքը և Մ. Յակիրոզլուսը ուղղակի գրում են, որ որոշ յուրյուքներ ծագումով քուրդ են [295, հատ. I, էջ 129. 350. էջ 367—371]։ Յուրյուքների լեզվում շատ փոխառություններ կան քրդերենից [350, էջ 367]։ Ֆ. Բայրակտարևիչը նշել է, որ յուրյուքների մի քանի ցեղեր նույնիսկ խոսում են քրդերեն [284, էջ 1242]։ Յուրյուքների լեզվում առանձնապես շատ են քրդական փոխառությունները նյութական և հոգևոր մշակույթի բնագավառում։ Օրինակ, նրանք ամբողջությամբ քրդերից են վերցրել քոչվորական կացարանը՝ կարաչադրը (սև վրանը)[13], որ թյուրքերը չունեին Միջին Ասիայում [286]։

Վ. Ա. Գորդլևսկու դիտողությամբ, Իքն Բիբին գերմիյան ցեղը թյուրքական չէր համարում. Բաբա-Իսհակի ապստամբության ժամանակ, 1239 թվականին, ասված է նրա ժամանակագրության մեջ, սուլթանը Մալաթյայից կանչեց «թյուրքերին և գերմիյաններին»։ Նշանակում է, ժամանակագրությունը տարբերություն դնում էր նրանց միջև։ Ուստի Վ. Ա. Գորդլևսկին ենթադրում է այդ ցեղի քրդական ծագումը [49, էջ 148]։ Նույն կարծիքին էր հակված նաև Կլ. Կահենը [268, էջ 352—354]։ Այսպիսով, հնարավոր է, որ XIII դարի Փոքր Ասիայի թյուրքական խոշորագույն ցեղերից մեկը՝ գերմիյան ցեղը, ծագումով եղել է քրդական։ Բացի դրանից, ինչպես նշել է Մ. Հ. Յընանչը, սիփահիները (մանր ֆինվորական ավատատերերը) Ռումի սուլթանությունում

[13] Կարա-չադրի ծածկը գործվում է այծի սև բրդից. վրանը հատակագծով ուղղանկյուն է, կտուրը երկլոր, պահվում է ձողերի վրա։ Վրանի նման տիպ հանդիպում է նաև Արևմտյան Ասիայի ուրիշ քոչվորների՝ արաբների, աֆղանների, բելուջների և այլոց մոտ [97, էջ 61—62]։

եղել են ոչ միայն օղուզներից, թուրքմեններից և այլ թյուրքերից, այլև քրդերից [524, էջ 159]։

Քրդերի հետ թյուրքերի խառնվելու պրոցեսը երբեմն այնքան հեռու էր գնում, որ օղուզների և թուրքմենների մի մասը Անատոլիայի արևելքում քրդացավ։ Օրինակ, Կ. Քեմալը բերում է Գազիանթեփի շրջանում ապրող ժամանակակից քրդական ցեղերի հետևյալ անունները. աֆշար, բարոք, կըրըք, Թորուն [451, էջ 26]։ Այս բոլոր անունները օղուզա-թուրքմենական են, այսինքն՝ քրդանալու հետևանքով օղուզա-թուրքմենական ցեղերից մնացել են միայն ցեղանունները։ Դիարբեքիր—Բիթլիս—Սղերթ շրջանում քոչվորական կյանք են վարում բադիլլի քրդերը (բեյդիլի-ի աղավաղված ձևն է, ինչպես նաև օղուզա-թուրքմենական ցեղանուն) [451, էջ 26]։ Ճիշտ է, քրդացման պրոցեսը կարող էր տեղի ունեցած լինել նաև ավելի ուշ։ Այսպես, XIX դարի վերջին Թուրքիայում ապրում էին կարաբաղլը և ժիրանլը (չորանլը) քոչվոր ցեղերը, որոնց այդ շրջանի ժամանակակից Դ. Վ. Պուտյատան դասում է քրդերի շարքը [202, էջ 93], իսկ XVII դարի արխիվային փաստաթղթերում, որ հրապարակել է Ա. Ռ. Ալթընայը, կարա-բաղլըները և չորանլըները արձանագրված են նաև որպես թուրքմենական ցեղեր [371, էջ 219]։ Սակայն Ֆ. Դեմիրթաշը նշում է, որ Ուրֆայի ֆինանսական փաստաթղթերում արդեն XV—XVI դարերում օղուզական դյոքեր անունով ցեղը նշված է որպես քրդական և որ այդ ցեղի հարկատուների թվում կան նաև թյուրքական անուններ [408, էջ 335, շար.]։ Սա արդեն վկայում է օղուզների մի մասի շատ վաղ քրդացման մասին։

Անատոլիայի հարավ-արևելքում և Սիրիայում օղուզները և թուրքմենները ենթարկվել են արաբական ուժեղ ազդեցության։ Մարդինում, օրինակ, XVIII դարում թուրքմենները խոսում էին արաբերեն [49, էջ 46]։ Ներկայումս Գազիանթեփից հարավ ապրող թուրքմենները շատ փոխառություններ ունեն արաբական նյութական մշակույթից։ Մինչև հիմա էլ պահպանվել են թուրքմենների արաբացած ժառանգներ Սիրիայում [519, մաս I, էջ 36]։

Բոլոր այս պրոցեսները, այսինքն՝ ցեղերի կազմալուծու-

մը, նրանց վերախմբավորումները միախառնումը միմյանց հետ և այլացեղ (ոչ թյուրքական) քոչվորների հետ, հանգեցրին այն բանին, որ նախկին օղուզական և թուրքմենական ցեղերի մեծ մասը հետագայում անհետացավ։ Նրանց փոխարեն երևան եկան նոր ցեղեր նոր անուններով. ինալլու, էլբեյլյու, դանիշմենդլյու, դուլքադրլու (զուլքադիրլյու), թարաքլյու, բահադրլյու, շամլու, ռումլու, արապկիրլյու, սեմիշքեղեկլյու, բայբուրթլու, մարաշլու, ուստաջլու, թուխարլու, ալփավուդ, վարսաք, քուշթեմիրլյու, էլվանլու, այդընլու, սարուխանլու, գերմիյանլու, բևքմեզլյու, բոզդողանլու, կարաքեչիլյու, սարըքեչիլյու, աքչակոյունլու, թոքթեմիրլյու, քոդալլու, կումարլու, թեջիրլյու, դյունդյուդլյու, մենեմենլյու, յաղըբասանլու, էզերլյու, ջերիտլեր, թուրգութլու, բայազըրլու, թորասան, թուրխանլու, չափարլու, թուրֆանլու, համիդլյու, կոսունլու, էսենլյու, չավուշլու, դյունդարլու, մենթեշելլյու, կարախալը, ռամազանլու և այլն [526, էջ 173—174]։ Ինչպես երևում է, նոր ցեղանունները ծագել են կամ ցեղերի բնակության վայրերի անուններից (շամլու. Շամ՝ Սիրիա. ռումլու. Ռում՝ Բյուզանդիա. բայբուրթլու. Բայբուրթ՝ քաղաք Անատոլիայում. մարաշլու. Մարաշ՝ նույնպես քաղաք Անատոլիայում և այլն), կամ ցեղապետների անուններից (դանիշմենդլյու, յաղըբասանլու, թուրգութլու, բայազըրլու, կարախալը, ռամազանլու) և նոր կազմավորված ցեղը գլխավորող տոհմերի անուններից (գերմիյանլու, կարաքեչիլյու, սարըքեչիլյու, աքչակոյունլու և այլն)։

Որպես համանման երևույթ նշենք, որ Թուրքմենիայում XIV—XV դարերում ևս ձևավորվել էին մի շարք ցեղախմբեր նոր անուններով։ Սալորների ծոցից դուրս եկան էրսարի, թեքե, սարըք, յոմուդ ցեղերը։ Վերսաին ծագեցին գոքլեն, խըզրեւի, ալի-իլի, թիվեջի ցեղերը և այլն։ Այս ցեղանունները չկան ոչ Մահմուդ Կաշգարիի մոտ, և ոչ էլ Ռաշիդ ադ-Դինի մոտ։ Մի քանի ցեղեր, հավանաբար, օղուզական ծագում չունեն՝ բուրքաս, օլամ, աղար, էսքի, սաքար և այլն, բայց արդեն Աբուլղազին դրանց դասում էր թուրքմենների շարքը։ Չորս ցեղ միայն պահպանել են հին անունները (երբեմն որոշ հնչյունափոխություններով). չաուդոր (նախկին

շուավալդար/ջաուլդուր), իմրելի (նախկին՝ էյմյուր/իմուր), սալոր և իգդիր՝ օղուզական ցեղերի 24 ավանդական անունների թվից [11, էջ 162]։

Վերևում բերված փաստերը վկայում են այն մասին, որ թյուրքական ցեղերը հաճախ ընդգրկում էին ոչ միայն իրենց արյունակիցներին, այլև ամբողջական խմբեր ուրիշ տոհմերից ու ցեղերից։ Այս փաստերի կապակցությամբ, որոնք ցույց են տալիս Անատոլիայի թյուրքական ցեղերի տարասեռությունը, հարկավոր է նշել, որ այդպիսի առանձնահատկությունը բնորոշ է ընդհանրապես բոլոր քոչվոր ցեղերի համար։ Այսպես, XIII—XV դարերի մոնղոլական և թյուրքական քոչվոր ցեղերը, ինչպես ցույց է տվել Բ. Յա. Վլադիմիրցովը, արյունակցական կապերի վրա հիմնված միավորումներ չեն եղել, այլ արհեստականորեն կազմված են եղել դեռևս Չինգիս խանի ժամանակաշրջանից առաջ կազմալուծված ավելի վաղ շրջանի տարբեր տոհմա-ցեղային խմբերի բեկորներից [36, էջ 137], իսկ XVI—XVIII դարերի Ադրբեջանի թյուրքական ցեղերի վերաբերյալ Ի. Պ. Պետրուշևսկին հանգել է այն եզրակացության, որ այդ ցեղերը կարող էին կազմված լինել տարբեր ցեղերի բեկորներից [196, էջ 95]։ Ֆարսի կաշկայական ցեղերը իրենց պատմության ընթացքում նույնպես միասնական ծագումով կապված էթնիկական ընդհանրություն չեն եղել։ Տարբեր ժամանակաշրջաններում նրանց միացել են թյուրքական տարբեր ցեղեր (օրինակ, խալաջներ) և ոչ-թյուրքական խմբեր ու տարրեր (լակեր, կուխգիլույեներ, մամասանիներ, բախտիյարներ). մի շարք գիտնականներ (Գ. Քերզոն, Օ. Գարրոդ) նշել են լուրերի մեծ դերը կաշկայիների ծագման մեջ [107, էջ 30]։ Տարասեռությունը հատուկ է նաև Արաբիայի բեդվիններին (194, էջ 130], և բախտիյարներին (վերջիններիի ծագմանը մասնակցել են և թյուրքական և արաբական ցեղեր [222, էջ 155]), և Աֆղանստանի ցեղերին (փուշտուներին, խազարեցիներին, չարայմակներին և ուրիշներին), որոնք իրենցից ներկայացնում են ամենևին ոչ միշտ միմյանց ազգակից առանձին խմբերի կոնգլոմերատներ [68, էջ 6]։

Այս ամենը մի ավելորդ անգամ հաստատում է Մ. Օ. Կոսվենի և նրա հետևորդների հետևությունը, որը հիմնված է շատ ժողովուրդների ուսումնասիրման հետևանքով ստացած ընդարձակ նյութի վրա, որ տարբեր տոհմեր միավորվել են էթնիկական խոշոր միավորումների մեջ և կազմել ցեղեր [128, էջ 102—104, 189—190]։ Ա. Ա. Դավիդովը այդ հետևությունը կոնկրետացրել է Աֆղանստանի ցեղերի օրինակով։ Նա գրում է, որ տոհմերը խոշոր ցեղերի մեջ միավորվելու գլխավոր պատճառներից մեկը եղել է ֆեոդալական պետությունների, (և, ավելացնենք, ուրիշ ցեղային միավորումների) ոտնձգություններից իրենց տերիտորիաների համատեղ պաշտպանությունը կազմակերպելու անհրաժեշտությունը [68, էջ 6]։ Մյուս պատճառը, մեր կարծիքով, կարող էր լինել ֆեոդալականացող ցեղային վերնախավի ձգտումը՝ գրավել նորանոր արոտավայրեր, որը սոխում էր նրանց դաշինք կնքել ուրիշ տոհմերի հետ։ Մի շարք դեպքերում, գրում է այնուհետև Ա. Ա. Դավիդովը, այդ միությունները ու միավորումները լինում էին բավական ամուր և հանգեցնում էին էթնիկական կայուն ընդհանրության ստեղծման, որը ժամանակի ընթացքում ստանում էր դաղափարախոսական ձևավորում՝ առասպելական տոհմաբանական ծառի մշակման միջոցով, որը իրար էր միացնում ինչպես իրոք ազգակից, այնպես էլ ոչ ազգակից տոհմերը միասնական «ազգակցությամբ» և ծագումով մեկ ընդհանուր «նախահորից»։ Ըստ երևույթին, ռազմա-ցեղային միությունների ստեղծման գործում սկզբից ևեթ առաջնակարգ դեր է կատարել առանձին տոհմերի ֆեոդալականացող վերնախավը՝ տոհմապետները, ավագները, մուսուլմանական հոգևորականությունը։ Անասունների նկատմամբ առանձին ընտանիքների մասնավոր սեփականության գոյության, սորուկների և ֆեոդալականորեն կախյալների առկայության պայմաններում այդ ցեղային միությունները ծառայում էին ոչ թե իբրև պարզապես էթնիկական (կամ ամենասկզբնական շրջանում՝ քաղաքական), այլ իրենց սոցիալական էությամբ իբրև վաղ շրջանի դասակարգային ռազմա-ֆեոդալական կազմավորումներ [68, էջ 6—7]։ Այսպիսով, միջնադարի քոչվորների ցեղերը (այդ թվում և թյուրքական) և նրանց տոհմա-ցեղային կազմը, ավելի ճիշտ նրանց մոտ ստեղծված նահապետական-ֆեոդալական հարաբերությունները արմատապես տարբերվում էին նախնադարյան համայնական ցեղերից և նրանց տոհմական կարգից։

Փոքր Ասիայի բնակչության էթնիկական կազմը XI—XIII դարերում

Փոքր Ասիայի բնակչության էթնիկական և կրոնական կազմը XI—XIII դարերում եղել է շատ խայտաբղետ։ Ամենից առաջ, պահպանվել էր տեղական բազմաքանակ բնակչությունը, որը շարունակում էր դավանել իր նախկին կրոնը։ Այդ մասին է վկայում այն փաստը, որ նույնիսկ XIII դարում ջիզիեն (ոչ մուսուլմաններից գանձվող գլխահարկը) կազմում էր, ինչպես նշում է Օ. Թուրանը, վկայակոչելով Ակսարային, Ռումի սուլթանության եկամտի կարևորագույն հոդվածներից մեկը [351, էջ 139]։ Հայկական աղբյուրները (օրինակ, Կիլիկիայի հայկական պետության թագավոր Հայտոն, կամ Հեթում I-ի երկը) նույնպես հաղորդում են, որ Փոքր Ասիայում XIII դարի կեսերին ապրում էին հույներ, հայեր, հակոբինյաններ (այսինքն՝ ասորիներ և խալդեր) և թյուրքեր [251, էջ 150, 255, էջ 17]։ Գ. դը Ռուբրուկը, որը 1253—1255 թվականներին ճանապարհորդել է Անատոլիայում, գրում է. Մարսենգենի (այս բնակավայրի մյուս անուններն են. հայ՝ Մանազկերտ, հուն.՝ Մանցիկերտ, արաբ.՝ Մեջինկարտ. այժմ Վանա լճից հյուսիս-արևմուտք կա թուրքական Մալազգիրտ գյուղը) բնակիչները հայեր են, կուրգիներ (այսինքն՝ վրացիներ), հույներ, բայց գերիշխանությունը դրանց նկատմամբ պատկանում է բացառապես սարակինոսներին (այսինքն՝ մուսուլմաններին) [119, էջ 190]։ Մարկո Պոլոն (XIII դարի վերջ) հաղորդում է, որ հայերը և հույները ապրում են մեջընդմեջ գյուղաքաղաքներում և քաղաքներում [181, էջ 56], իսկ Մեծ Հայքի հարավ-արևելյան սահմանի վրա ապրում են քրիստոնյաներ՝

հակոբինյաններ և նեստորականներ[14], իսկ նրանցից ավելի հյուսիս՝ վրացիներ [200, էջ 56]։

Անատոլիայի բնակչության մասին հետաքրքրական տեղեկություններ է բերում Իբն Բաթուտան (ճանապարհորդել է XIV դարի 30-ական թվականներին)։ Ամենից առաջ նա գրում է, որ Անատոլիայում կան «շատ քրիստոնյաներ, որոնք թուրքմեն մուսուլմանների իշխանության տակ են» [301, էջ 415]։ Նկարագրելով Անթալյան, Իբն Բաթուտան նշում է, որ պարիսպներով շրջապատված նրա թաղերում ապրում են հույներ, հրեաներ, քրիստոնյա վաճառականներ, իսկ մուսուլմաններն ապրում են հիմնական քաղաքում (կենտրոնում?) [301, էջ 418]։ Լյադիկայում, նրա խոսքերով, կան շատ հույներ, որոնք գտնվում են մուսուլմանների իշխանության տակ և վճարում են ջիզիե և այլ հարկեր [301, էջ 425]։ Էրզինջանում բնակիչների մեծ մասը հայեր են [301, էջ 437]։ Արևմտյան Անատոլիայի Դենիզլի փոքրիկ քաղաքում ապրում են «անհավատ հույներ՝ մուսուլմանների իշխանության տակ», «այստեղ կա մուսուլմանների միայն մեկ տուն... նրանք կառավարում են հույներին» [301, էջ 456]։ Իբն Բաթուտան հիշատակում է նաև թուրքմենների մի գյուղի մասին և «անհավատ հույն» բնակիչներ ունեցող գյուղերի մասին, որոնք կառավարվում են մուսուլմանների կողմից [301, էջ 456, 466]։ Այսպիսով, Իբն Բաթուտայի հաղորդումներից բխում է, որ Անատոլիայի շատ շրջաններում մուսուլմանները կազմում էին բնակչության փոքրամասնությունը, բացառությամբ, գուցե, արևելյան և հարավ-արևելյան մարզերի մի քանի շրջանների, որտեղ թյուրքերից բացի կային բազմաքանակ այլ մուսուլմաններ՝ քրդեր և արաբներ։

[14] Նեստորականներ— արևելաքրիստոնեական դավանանության հետևորդներ, որի հիմնադիր, Կոստանդնուպոլսի պատրիարք Նեստորը, որպես հերետիկոս, Եփեսոսի III Տիեզերական ժողովում (421 թվական) բանադրվեց ուղղափառ եկեղեցուց։ Նեստորականներ են հիմնականում ասորեստանցիները (ասորիները)։ Մյուս «հերետիկոսները»՝ հակոբինյանները եպիսկոպոս Հակոբ Բարադեյի գլխավորությամբ բանադրվեցին ուղղափառությունից Քաղկեդոնի ժողովում, 451 թվականին։ Հակոբինյանների մեջ կան խալդեր և ասորիներ։

Իսկ Անատոլիայի հյուսիս-արևելքը, որտեղ անկախություն էր պահպանում Հունա-լազական Տրապիզոնյան կայսրությունը, թյուրքական տարրը գրեթե չէր թափանցել։ Թյուրքեր քիչ կային նաև Կիլիկիայի հայկական պետության տարածքում, որտեղ ապրում էին գերազանցապես հայեր, ասորիներ, հույներ, արաբներ [162, էջ 16, 18], ինչպես այդ մասին գրում է արևմտաեվրոպական ճանապարհորդ Վիլբրանդ Օլդենբուգցին, որը 1212 թվականին այցելել է Կիլիկիա։

Փոքր Ասիայի բնակչության էթնիկական կազմի մասին տեղեկություններ կարելի է քաղել նաև թյուրքալեզու էպիկական ստեղծագործություններից։ Այսպես, «Իմ պապ Քորքուդի գիրքը» էպոսը, որը ծագել է XI դարից ոչ առաջ և վերջնականապես ձևակերպվել է XV դարի առաջին կեսից ոչ ուշ, նկարագրելով Անատոլիայի արևելյան մասում տեղի ունեցած իրադարձությունները, թյուրքերին պատահած տրապիզոնցի հույներին, վրացիներին, աբխազներին անվանում է «գյավուրներ» [125, էջ 142, 49]։ Փոքրասիական թյուրքերի մեկ ուրիշ գրական հուշարձան՝ «Ասք Մելիք Դանիշմենդի մասին» էպոսը, որտեղ նկարագրված են XI դարի երկրորդ կեսի և XII դարի դեպքերը, նույնպես վկայում է Անատոլիայի բնակչության էթնիկական ու կրոնական խայտաբղետության մասին։ Թյուրքերից բացի, այնտեղ խոսվում է ռումերի (այսինքն՝ հույների), արաբների, վրացիների, հայերի մասին [39, էջ 75, 82, 83, 103, 112, 117]։

ԷԹՆԻԿԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԸ ԱՆԱՏՈԼԻԱՅՈՒՄ XI—XIII ԴԱՐԵՐՈՒՄ

Թյուրքերի անցումը նստակեցության և դրա նշանակությունը էթնիկական պրոցեսների համար

Օղուզների և թուրքմենների հիմնական զբաղմունքը Միջին Ասիայում X—XI դարերում երկրագործությամբ և ձրկնորսությամբ զբաղվող կիսանստակյաց և նստակյաց առան-

ձին խմբերի գոյության հետ միասին եղել է քոչվորական էքստենսիվ անասնապահությունը [9, էջ 94—95, 87]։ Քոչվորների համար օժանդակ մեծ զբաղմունք էր նաև որսորդությունը [9, էջ 93]։ Քաղաքներում օղուզները և թուրքմենները զբաղվում էին նաև արհեստներով [9, էջ 97—98]։ Սկզբնական շրջանում մոտավորապես նույն վիճակն էր ստեղծվում թյուրքական ցեղերի մոտ (նրանց հիմնական մասը կազմում էին օղուզները և թուրքմենները) Անատոլիայում. նրանց գլխավոր զբաղմունքը շարունակում էր մնալ քոչվորական անասնապահությունը։ Այսպես, խաչակրաց երրորդ արշավանքի մեմուարիստ Տագենոնը գրել է (1190 թվական), որ թյուրքերը Քոնյայում ապրում էին վրաններում [49, էջ 125]։ Մարկո Պոլոն Անատոլիայի թուրքմեններին տալիս է հետևյալ բնութագրությունը. «նրանք ապրում են լեռներում և հարթավայրերում, ամենուրեք, որտեղ դիտեն, որ կան լավ արոտավայրեր, քանի որ զբաղվում են անասնապահությամբ» [200, էջ 56]։ Թուրքմեններին մոտավորապես նույն կերպ է նկարագրել նաև իտալացի դոմինիկյան վանահայր Ռ. Մոնտեկրոչեն, որը այցելել է Փոքր Ասիա XIII—XIV դարերի սահմանագծում [251, էջ 276]։ Մարկո Պոլոն հիշատակում է «թուրքմենական լավ ձիերը», «թանկարժեք լավ ջորիները» [200, էջ 56]։ «Լավ ձիերի» մասին հաղորդում է նաև Հայտոնը [251, էջ 199]։ Հավանաբար, դրանք թուրքմենական այն նշանավոր ձիերն էին, որ թուրքմենները բերել էին Կասպից ծովի այն կողմից։ Ավելի ուշ, օսմանյան շրջանում, ինչպես և այժմ, Անատոլիան այլևս ձիերով շատ հայտնի չէր։ Մարկո Պոլոն խոսում է նաև թյուրքական ցեղերի պարբերական քոչերի մասին. ամռանը Փոքր Ասիայի հյուսիս-արևելյան մարզերն են գալիս «լեվանտական թաթարների (թյուրքերի.— Դ. Ե.) բազմություններ, քանի որ ամռանը այստեղ կան լայնարձակ արոտավայրեր, ձմռանը նրանք գնում են այնտեղ, ուր տաք է, կա խոտ և արոտավայրեր» [200, էջ 56]։ Հայտնի է նաև, որ անասնապահությունից բացի որոշ ցեղեր զբաղվում էին նաև սայլապանությամբ և գորգագործությամբ [311, էջ 56]։

Օղուզների և թուրքմենների մի մասը, սակայն, սկսեց զբաղվել նաև երկրագործությամբ, անցնել նստակեցության։ Այսպես, «Դեդե Քորքուդ» էպոսում, բացի այն տեղեկություններից, որ օղուզները հաճախ զբաղվում են որսորդությամբ, հարձակումներ են գործում դյավուրների վրա, ամառները քոչում են յայլաները, ապրում են վրաններում, ունեն ոչխարների հսկայական հոտեր և ձիերի երամակներ (ըստ որում ընդգծվում է, որ դա նրանց հիմնական հարբստությունն է), շատ բնորոշ հիշատակություն կա այն մասին, որ լեռներում նրանք ունեն խաղողի այգիներ։ Այսպիսով, օղուզները արդեն ունեցել են իրենց խաղողի այգիները [125, էջ 22—23, 60, 73, 77]։ Այդ բանի վրա ուշադրություն է դարձրել Ա. Յու. Յակուբովսկին [125, էջ 121]։ Իսկ Իբն Բաթուտան հանդիպել է թուրքմենների դյուղի [301, էջ 456]։ Այստեղ մենք գործ ունենք Անատոլիայի հողում քոչվոր թյուրքերի նստակեցության անցնելու սկսված պրոցեսի հետ, որը առաջին քայլը եղավ, որ նրանք ամուր բնակություն հաստատեն գրաված տերիտորիաներում, խառնվեն տեղական բնակչության հետ, մերձենան նրանց և սկսեն նրա հետագա ասիմիլյացումը։

Առաջ անցնելով նկատենք, որ այդ պրոցեսը ձգձգվեց շատ երկար. մինչև մեր օրերն անգամ Թուրքիայում պահպանվել են թյուրքական ցեղերի մնացորդներ, որոնք շարունակում են վարել զուտ քոչվորական կյանք, օրինակ, յուրյուքները [526, էջ 176]։ Անատոլիայի արևելքում նախկին քոչվորների մի մասը պահպանել է կիսաքոչվորական կենսաձևը։ Դրանք թուրքմեններն են։ Յուրյուքների և թուրքմենների միջև եղած տարբերությունը, մասնավորապես, այն է, որ առաջիններն, ըստ երևույթին, պահպանել են ավելի շատ հին թյուրքական տարրեր (մինչօղուզական և օղուզական), որոնց համար ավելի հատուկ է եղել զուտ քոչվորական կենսաձևը։ Իսկ երկրորդները մասամբ պատկանում են ավելի ուշ շրջանի շերտին՝ Միջին Ասիայի և Իրանի թուրքմեններին, որոնք դեռ Փոքր Ասիայի մատույցներում յուրացրել էին նստակյաց կենցաղի, գլխավորապես իրանա-

կան կենցաղի շատ տարրեր։ Այդ մասին է վկայում, օրինակ, XIII—XIV դարերի միջինասիական թուրքմենների լեզուն։ Այդ լեզվում շատ կան հողագործական տերմիններ՝ արմուդ (տանձ), նար (նուռ), զերդալու (դեղձ), կավուն (սեխ), լերլերի (սխտոր), մարչիմակ (ոսպ), խարման (կալ), բաղ (այգի), բոստան (բանջարանոց) [9, էջ 95—96]։ Այս բոլոր տերմիններն ունեն իրանական ծագում [98, էջ 70]։

Թյուրքերի մի մասը նստակյաց դարձավ, բնակություն հաստատելով նոր գյուղերում, կամ արդեն գոյություն ունեցած գյուղերում և քաղաքներում, դրանցում կազմելով նոր թաղամասեր [526, էջ 176]։ Սրբեմն թյուրքերը զբաղեցնում էին տեղական բնակիչների լքած գյուղերը [485, էջ 380]։ Նստակյաց դարձած այդ թյուրքերը, որոնք սկսել էին զբաղվել երկրագործությամբ, դրեցին Փոքր Ասիայի թյուրք գյուղացիության հիմքը։ Նրանք պահպանեցին «թյուրք» ինքնանվանումը, որը ընդհանուր է միջնադարի բոլոր թյուրքական ցեղերի համար, բայց կորցրեցին իրենց նախկին ցեղանունները։

Քաղաքներում և ամրոցներում բնակություն հաստատեցին Անատոլիայի նվաճմանը մասնակցած բեյերի և էմիրների ջոկատները [526, էջ 176]։ Նրանց հետ միասին հայտնվեցին հարկահավաքներն ու կառավարչական ապարատի ուրիշ ծառայողներ, իմամներ, մոլլաներ և ուրիշներ։ Այս տարրերը կազմեցին արտոնյալ դասակարգը։ Նրանք ամենից հաճախ իրենց անվանում էին մուսուլմաններ, ի տարբերություն ճնշված վիճակում գտնվող մյուս կրոնական խմբերի։ Բացի դրանից, ինչպես մենք տեսանք, նրանց մեջ գերակշռում էին ոչ թե թյուրքերը, այլ էթնիկական ուրիշ խմբերի մուսուլմանները կամ հավատափոխ տեղական բնակիչները։

Տեղական բնակչության իսլամացումը և էթնիկական միախառնման մյուս գործոնները

Թյուրքերի նստակյաց դառնալը սկսված էթնիկական պրոցեսի մի կողմն էր միայն։ Մյուս կողմը նվաճված տեղական բնակչության իսլամացումն էր[15], որը հետագայում հաճախ վերջանում էր թյուրքացմամբ։

Երբեմն իսլամացումը տեղի էր ունենում կամովին։ Մինչև Սելջուկյանների գալը տեղական քրիստոնյա բնակչությունը կախման մեջ էր Բյուզանդիայից, որի հարկային բեռը ճնշում էր քաղաքացիներին և գյուղացիներին։ Ինչպես նշում է Մ. Վ. Լևչենկոն, XII դարում շատ քաղաքներ ու գյուղեր ամայացան. բնակիչները, փրկվելով հարկերից ու ծանր տուրքերից, փախչում էին սելջուկ թյուրքերի մոտ [143, էջ 223—224]։ Սելջուկյան սուլթանները Բյուզանդիայի կառավարումից առաջացած այդ դժգոհությունը օգտագործում էին իրենց նպատակների համար։ Սուլեյման Քութլումուշը, ինչպես գրում է Վ. Ա. Գորդլևսկին, XI դարի վերջին անցկացրեց սոցիալական ռեֆորմ. Փոքր Ասիայի լատիֆունդիաներում աշխատող ճորտերին և ստրուկներին նա հայտարարեց ազատներ, և նրանք զանգվածաբար սկսեցին ընդունել իսլամ[16]։ Այդպես, հետագայում ևս Սելջուկյանները իրենց կողմն էին գրավում գյուղացիներին Բյուզանդիայից [49, էջ 93]։ Անուղղակի կերպով այդ մասին են վկայում նաև սելջուկյան փաստաթղթերը։ Այսպես, սելջուկյան էմիր Ալթուն-աբայի կողմից 1202 թվականին Քոնյայում կազմված վաքուֆային ցուցակի համաձայն այդ վաքուֆից ստացվող եկամուտը մասամբ պետք է ծախսվեր իսլամացած քրիստոնյաների, հրեաների և հեթանոսների քլապատման և կրոնական ուսուցման համար [351, էջ 140]։

Տեղական բնակչության իսլամացումը խթանվում էր նաև

---

[15] Մինչև սելջուկյան նվաճումը, Փոքր Ասիայի տեղական բնակչության ճնշող մեծամասնությունը դավանում էր քրիստոնեություն (հույները, վրացիները, լազերը և ուրիշներ՝ ուղղափառություն, հայերը՝ լուսավորչականություն, ասորիներն ու խալդերը և ուրիշները՝ նեստորականություն և հակոբյանականություն)։ Անատոլիայի հարավ-արևելյան շրջաններում միայն գերակշռում էին մուսուլմանները՝ արաբները և քրդերը [351, էջ 137]։

[16] Արաբերեն «ռայա» (հոտ) բառը միայն XVIII դարում սկսեց կիրառվել քրիստոնյաների նկատմամբ։ Դրանից առաջ այդպես էին անվանում նաև մուսուլման գյուղացիներին [49, էջ 94], այսինքն՝ նա լուներ «հոտի» արհամարհական երբեմնագ։

այն բանով, որ մուսուլմանները վճարում էին անհամեմատ ավելի քիչ հարկեր, քան քրիստոնյաները, և վայելում էին ավելի մեծ իրավունքներ: Մուսուլման գյուղացիների ռենտա-հարկը (աշարը) հավասար էր բերքի մեկ տասներորդին, իսկ քրիստոնյա և այլ գյուղացիների ռենտա-հարկը (խարաջը) արդեն կազմում էր բերքի մեկ երրորդից մինչև կեսը: Բացի դրանից, աշխատունակ ոչ մուսուլման տղամարդիկ (բացառությամբ սարուկների) վճարում էին նաև գլխահարկ (ջիզիե): Բնական է, որ իսլամի ընդունումը նյութապես շահավետ էր:

Առանձնապես շատ իսլամական կրոնն ընդունեցին հայերը: Դրա պատճառը մասամբ հայերի և բյուզանդացիների միջև եղած կրոնական հակամարտությունն էր[17]: Հայերը, որոնք տառապում էին նաև Բյուզանդիայի կրոնական ճնշումից, սկզբնական շրջանում ուրախությամբ ողջունեցին օղուզների և թուրքմենների հայտնվելը Փոքր Ասիայում [49, էջ 67]: Ս. Տ. Երեմյանը, հենվելով հայկական ու վրացական աղբյուրների վրա, գրում է, որ սովորական երևույթ էր հայերի անցումը իսլամի [99, էջ 67]: Տեղական շատ ֆեոդալներ (հույները, հայերը, վրացիները և ուրիշներ) իսլամը ընդունում էին անձնական շահի համար կամ քաղաքական նկատառումներով: «Ասք Մելիք Դանիշմենդի մասին» էպոսում պատմվում է, որ մանր շատ ֆեոդալներ, հետապնդելով անձնական շահ, հեշտությամբ փոխում էին հավատը: Ազդամիջյան երկպառակությունները, հնարավորին չափ ավելի շատ հողեր զավթելու ձգտումը ստիպում էին ֆեոդալական ավագանիի ներկայացուցիչներին, ինչպես գրում է Վ. Ս. Գաբրուզովան, անցնել Դանիշմենդի բանակը [39, էջ 157]: Օրինակ, Բոկատ քաղաքի իշխանի կրտսեր եղբայրները, ինչ-որ բանի պատճառով վիրավորվելով նրանից, ընդունեցին իսլամ և մասնակցեցին Դանիշմենդի բոլոր արշավանքներին: Ոչնչացնելով ավագ եղբորը, նրանցից մեկը դարձավ Բոկատի կուսակալ, իսկ մյուսը՝ նշանավոր զորապետ, հետագայում նույնպես կուսակալ մի շարք քաղաքներում [39, էջ 158]: Մեկ ուրիշ օրինակ: Ֆեոդալներից մեկի կրտսեր եղբայրը, Յանիչը, ցանկանալով տիրել եղբոր հողերին, սիրով ընդունեց իսլամ: Նրա օգնությամբ Դանիշմենդը ջախջախեց ֆեոդալի զորքերին: Յանիչը ստացավ եղբոր ամբողջ և ամուսնացավ նրա դստեր Մարգարիտի հետ [39, էջ 158]: Նման ուրացողներ շատ կային Դանիշմենդի բանակում: Նրա մերձավորագույն զինակիցներն էին Արտուխին, էֆրումիչեն և Սարգիսը: Սրանց անունները ցույց են տալիս հայկական ծագումը: Լինելով տեղական ֆեոդալական ավագանիի ներկայացուցիչներ, նրանք ընդունեցին իսլամ և միացան Դանիշմենդին [39, էջ 108][18]:

Ինքը՝ Դանիշմենդը, ամուսնանալով հայ իշխանուհու հետ, սկիզբ դրեց մի դինաստիայի, որին XIII դարի պատմագիրները վերագրում էին հայկական ծագում [49, էջ 27. 40, էջ 103. 516, էջ 468]: Իսկ Ս. Տ. Երեմյանը նշմարել է, թե Դանիշմենդը դա Ռատն է՝ հայ նշանավոր զորավար Վիսարիտի որդիներից մեկը [99, էջ 68—70]: Թուրք պատմաբան Մ. Հ. Յրնանչը ևս Դանիշմենդին հայ է համարում [526, էջ 96]: Նա, մասնավորապես, ուշադրություն է դարձ-

[17] Հայերը, ինչպես հայտնի է, քրիստոնեություն ընդունել են IV դարի հենց սկզբից: Հայկական եկեղեցին V—VI դարերում անջատվեց հոռոմեականից և դարձավ ինքնուրույն: Գրիգոր Լուսավորչի անունով այն կոչվում է գրիգորյանական: Բյուզանդիայի կողմից Հայաստանի մեծաղույն մասի նվաճումից հետո Կոստանդնուպոլսի պատրիարքությունը շարունակ ձգտում էր իր իշխանությանը ենթարկել հայկական եկեղեցին, բայց ապարդյուն:

[18] «Ասք Մելիք Դանիշմենդի մասին» էպոսի այս հերոսների հետ կապված սյուժեները պատմում են հետևյալը: Մի անգամ Դանիշմենդը հաղթում է բյուզանդական մի դյուցազնի: Նրա անունը եղել է Արտուխի. նա եղել է տեղական իշխանի զավակ: Արտուխին սիրահարված է Ամասյայի կառավարիչ Շատատատի (հայկական Աշոտ անունը?) դստեր էֆրումիչին. Շատատատը չի ցանկանում աղջիկը կնության տալ նրան: Դանիշմենդը խոստանում է օգնել նրան և առաջարկում է նրան ընդունել իսլամ: Արտուխին համաձայնում է: Նրանց առևանդած էֆրումիչեն նույնպես դառնում է մուսուլմանուհի: Մյուս դյուցազն Սարգիսը, Անկարայի կառավարչի եղբոր որդին, նույնպես ընդունում է իսլամ և ձգտում է ստանալ իր հորեղբոր դստեր Գյուլինոշ-բանուի ձեռքը: Գյուլինոշ-բանուն ընդունում է իսլամ [39, էջ 75, 76, 79, 80]: Էպոսում պատմվող սիրահարական պատմություններ հետև, իհարկե, թաքնված էին նաև «Ասք»-ի հերոսների իրական նախակերպարների քաղաքական ձգտումները:

րել այն բանի վրա, որ Դանիշմենդյանների դրամների վրա չկա ցեղական տամգայի նշանը, այն ժամանակ, երբ Սելջուկյանների դրամների վրա նկարվում էր կընդք ցեղի տամգան, որից իրենք ծագել են, իսկ թյուրքական մյուս դինաստիաների՝ Արտուկյանների, իսկ ավելի ուշ և օսմանյանների դրամների վրա կա կայը ցեղի տամգան, որից նրանք սերել են [526, էջ 96]։ Մ. Հ. Յընանչը գրում է նաև, որ Դանիշմենդ անունը ծագում է պաշտոնի անվանումից [526, էջ 96]։ Օսմանական դարաշրջանում «դանիշմենդ» տերմինը նշանակում էր թալեբեի (մուսուլմանական դպրոցի սանի) երրորդ աստիճանը [49, էջ 27]։ Ժամանակակից թուրքերենում «դանիշմենդ» նշանակում է «խորհրդական»։ Ուստի բացառված չէ, որ Դանիշմենդը ծագած լինի ծառայողական դասից, որը էթնիկական տեսակետից շատ խայտաբղետ էր։ Համենայն դեպս, նույնիսկ «Ասք Մելիք Դանիշմենդի մասին» էպոսը Դանիշմենդին թյուրք չի համարում, չի նշված ոչ ցեղը, ոչ տոհմը, որից նա ծագել է։ Պարզվում է միայն, որ մայրը եղել է արաբուհի, էմիր Ամրայի դուստրը [39, էջ 72, 103]։ Դանիշմենդի զորքը կոչվում է մուսուլմանական կամ սուննիական, այսինքն՝ որոշվում է ըստ կրոնական, այլ ոչ թե էթնիկական պատկանելության։ Միևնույն ժամանակ սելջուկների զորքը կոչվում է «թյուրքական» [39, էջ 102]։ Բոլոր այս փաստերը խոսում են Դանիշմենդյանների դինաստիայի էթնիկական բարդ ծագման մասին և նրա զորքի էթնիկական խայտաբղետ կազմի մասին։

Երբեմն կրոնափոխները բարձր պաշտոնների էին հասնում սելջուկյան մուսուլմանական հիերարխիայում։ Այսպես, քոնյացի մի հայ դարձավ շեյխ (շեյխ Աբդուլլա), հայտնի աստվածաբան դիտնական։ Մեռավ Դամասկոսում 1234 թվականին [351, էջ 144]։

Հետաքրքրական է, որ Անատոլիայում բնակություն հաստատած խաչակիրներից առանձին ֆեոդալներ ևս հետագայում ընդունեցին իսլամ։ Այսպես, վերոհիշյալ վաքուֆային փաստաթուղթը Քոնիայից խոսում է մի քրիստոնյայի մասին, որի անունն էր Թեոդոս բին Յան բին Ալաման (ալմանը, կամ ալամանը, ինչպես հայտնի է, գերմանական ցեղերից մեկն է)։ Ներկայումս Քոնյայում կա Շեյխ Ալաման թաղը, որտեղ կա մի դամբարան Ահմեդ Ալի բին շեյխ Ալաման անունը կրող արձանագրությամբ [351, էջ 140, հավ. 1]։

Վերջապես, եթե նվաճված բնակչությունը այնուամենայնիվ հրաժարվում էր իսլամ ընդունել, նրա վրա ազդում էին մահվան ապառնալիքով։ Այդ մասին շատ է խոսվում «Ասք Մելիք Դանիշմենդի մասին» էպոսում։ Այսպես, եթե բնակիչները և գերիները չէին ցանկանում կամովին ընդունել մուսուլմանական հավատը, Դանիշմենդը հրամայում էր սպանել նրանց մի մասին՝ մնացածների վրա ներգործելու համար։ Այդպիսի փաստեր շատ կան այդ հուշարձանում [39, էջ 155—157]։ Ճիշտ է, երբեմն նվաճվածների մի մասը մահը գերադասում էր հավատուրացությունից [39, էջ 155—166], իսկ իսլամացածների մեծ մասը (այսպես կոչված «նոր մուսուլմանները»— «հին մուսուլմանները»), որոնք մահվան սպառնալիքի տակ փոխել են իրենց հավատը, ամեն մի հարմար առիթի ապստամբում էին և վերստին դառնում քրիստոնյաներ [39, էջ 160—161]։ Ուստի տեղական բնակչության մի մասի անցումը իսլամի այն ժամանակ էր միայն հաստատուն լինում, երբ դա համապատասխանում էր բնակչության այդ մասի ինչ-որ կարևոր շահերին, դրանք քողարկելով պրոզելիտիզմի (հավատուրացության) քողով։ Միայն դրանով կարելի է բացատրել «նոր մուսուլմանների» մեծ դերը Դանիշմենդի բանակում, նրանց հերոսությունը «ճշմարիտ հավատի» համար մղված պայքարում։ Իրոք, ինչպես գրում է Վ. Ս. Գարբուզովան, Դանիշմենդի շարժումը, որը մի բարդ և իր սոցիալական էությամբ հակասական երևույթ էր, միավորում էր հասարակության ամենատարբեր խավերին։ Տարբեր էտապներում այդ շարժմանն էին հարում ֆեոդալներն ու արկածախնդիրները, որոնք ձգտում էին կողոպուտների և հարստացման։ Բայց միևնույն ժամանակ այդ շարժումը արտացոլում էր Փոքր Ասիայի ժողովուրդների (հայերի, արաբների և ուրիշների) ձգտումը՝ ազատագրվելու Բյուզանդիայի ֆեոդալական կառավարիչների ճնշումից [39, էջ 114]։ Համանման

երևույթներ, ճիշտ է, ավելի փոքր մասշտաբի, տեղի էին ունենում նաև Բյուզանդիայի և Փոքր Ասիայի Սելջուկյանների միջև մղված պայքարում:

Բյուզանդացիների կողմից բնակեցված թյուրքերի մեծ մասը նույնպես հետագայում ընդունեց իսլամ, ուժեղացնելով Անատոլիայի իսլամացումը և թյուրքացումը [526, էջ 166]:

Էթնիկական միախառնման մյուս գործոնն էլ եղել է այն, որ Փոքր Ասիայի Սելջուկյանների պետությունում շատ պաշտոններում նշանակվում էին էթնիկական այլ խմբերի սարուկներից, դրանցից էլ կազմում էին ընտիր զորքը, առաջ քաշում զինվորական և վարչական բարձր պոստերի: Դա մի յուրատեսակ ավանդույթ էր Աբասյանների ժամանակներից:

Աբասյանները (ինչպես նաև Սամայաններն ու Ղազնևիները) գերադասում էին պետական պաշտոններում նշանակել սարուկներին: Դա օրինակ դարձավ նաև Սելջուկյանների համար: «Մեծ Սելջուկյանների» մոտ այդ դաղափարը հիմնավորեց Նիզամ ալ-Մուլքը, որը ստեղծեց մամլյուկների և ղուլամների սիստեմը [344, էջ 89]: Նման քաղաքականությունը բացատրվում էր այն բանով, որ անձամբ սուլթաններին նվիրված սարուկները ավելի հուսալի էին, քան իշխանները, ցեղապետները կամ խոշոր ավատատերերը, որոնք փորձում էին ամեն մի հարմար առիթի անկախ դառնալ կենտրոնական իշխանությունից, ապստամբություններ էին բարձրացնում և ձգտում գրավել իշխանությունը: Այդ պատճառով էլ դեռ Տողրուլ-բեյի մոտ (XI դարի առաջին կես) թե վեզիրը, թե պետական բարձր պաշտոնյաները՝ էմիրները, վալիները, սալարները, տաջիկներից էին [526, էջ 98]: Նույն բանը նկատվում էր նաև Ռումի սուլթանությունում:

Ռումի սուլթանի գվարդիան (խասսան) կազմված էր սարուկներից (ռազմագերիներից կամ տեղացի քրիստոնյաներից): Դրանք ոչ թե օղուզներ կամ թուրքմեններ էին, այլ զիչաղներ (այս բառով նշվում էին ոչ միայն բուն զիչաղները, այլև բազմաթիվ ոչ թյուրքեր, որոնք գերի էին վերցվել «Ղիչաղ» երկրում, այսինքն՝ Ռուսիայի հարավին հա-

րող շրջաններում), բալկանյան քրիստոնյա թյուրքերը, իսկ ղևսավորը՝ հայերը, հույները, վրացիները և փոքրասիական այլ բնակիչներ [526, էջ 159—160]: Ռազմագերիներից կամ գնված սարուկներից[19] հավաքագրված ղուլամները սովորում էին հատուկ դպրոցներում (ղուլամխաններում), որից հետո նրանք ծառայում էին բանակում կամ արքունիքում [351, էջ 146]:

Աղբյուրները հաղորդում են, որ սելջուկյան պետական շատ գործիչներ ծագել են սարուկներից կամ երեխա ժամանակ առևանգված են եղել «Ղիչաղ» երկրում և սարկության վաճառվել Անատոլիայի շուկաներում [351, էջ 146]: Իբն Բիբին նշում է, որ Անատոլիայի ամենից ավելի նշանավոր էմիրների մեծ մասը եղել են նախկին սարուկների զավակներ [434, էջ 137—138]: Այդ բանը արտացոլվել է նաև թյուրքական էպոսում: «Դեդե Քորքուդ»-ի հերոս կարիճ Դոմրուլը Դուկա-կոջայի որդին էր [125, էջ 59]: Դուկան հունական անուն է:

Ո. Բուրանի կարծիքով, հատուկ զորքերը, որոնք կոչվում էին իկդիշ և կատարում էին մոտավորապես ժանդարմերիայի կամ քաղաքների պահպանության դեր, նույնպես կազմվում էին իսլամի ոգով դաստիարակված, գերազանցապես տեղացի քրիստոնյաների երեխաներից, այլ ոչ թե գերիներից կամ սարուկներից: Կայսերի քաղաքի իկդիշների պետը (իկդիշ-բաշին) կրում էր Դուսամ անունը, այսինքն՝ հայ էր [351, էջ 147—148]:

Սարուկները ծառայում էին Սելջուկյանների արքունիքում, նրանց պաշտոնյաների, ֆեոդալների մոտ: Դրանք ևս թյուրքեր չեն եղել, այլ տեղական քրիստոնյաներ [119, էջ 192. 301, էջ 442, 446]: Իբն Բաութութան, ճանապարհորդելով Փոքր Ասիայում, գնել էր երկու հույն սարկուհի [301 էջ 445, 449]: Այդ սարուկները երբեմն ընդունում էին ի-

[19] Բյուզանդացիները սելջուկ թյուրքերին վաճառում էին նաև գերիներ: Այսպես, Կոստանդնուպոլսում լատինացիների դեմ 1182 թվականին բարձրացված ապստամբությունից հետո ողջ մնացած 4 հազար վենետիկցիներ, ջենովացիներ և սիցիլիացիներ սարկության վաճառվեցին սելջուկներին [143, էջ 216]:

ջամ, դառնում ազատ և խառնվում մուսուլմանների բյուրքացող զանգվածին։

Քրիստոնյաներին և մուսուլմաններին մերձեցնում էին նաև հաճախակի կնքվող ամուսնությունները նրանց միջև, առանձնապես ֆեոդալական վերնախավի շրջանում։ Ռումի շատ սուլթանների մայրերը և կանայք եղել են քրիստոնյաներ։ Դիյասեդդին Քեյխյուսրև I-ը երկար ժամանակ ապրել է Կոստանդնուպոլսում՝ վտարանդիության մեջ, ուներ բյուզանդացի բազմաթիվ բարեկամներ, ամուսնացել էր հույն Մանվել Մավրոզոմոսի դստեր հետ։ Նրա մայրը ևս քրիստոնյա էր [49, էջ 168]։ Այս սուլթանը կառավարել է 1192—1196 թվականներին, երկրորդ անգամ՝ 1204—1210 թվականներին [344, էջ 66]։ Դիյասեդդին Քեյխյուսրև II սուլթանի (1236—1246 թվականներ) կանանցից մեկը եղել է իշխանուհի Ռուսուդանը, վրաց Թամար թագուհու դուստրը, որին անվանում էին Գյուրջյու Խաթուն (վրացի տիրուհի) [344, էջ 72, 92]։ Գ. դը Ռուբրուկը այդ մասին գրում է հետևյալ կերպ. սուլթանի կինը Իբերիայից է (այսինքն՝ Վրաստանից), նրանից ունի որդի. մյուս որդին հույն հարճից է, երրորդը՝ Թրքուհուց [119, էջ 193]։ Կըլըչ Արսլան I-ի կինը նույնպես եղել է քրիստոնյա (Իզաբելլա, Ռայմոնդի քույրը) [344, էջ 92]. Ռուբրուկին Կըլըչ Արսլան IV սուլթանի մայրը՝ հույն [119, էջ 245]։ Սուլթանների կանայք ունեին իրենց արքունիքը, հարճեր և աղախիններ քրիստոնյաներից[20] [49, էջ 165]։ Քրիստոնյա կանայք վայելում էին ավելի մեծ ազատություն, քան մուսուլմանուհի կանայք, քանի որ ամուսնական պայմանագրով նրանք իրավունք ունեին դավանելու իրենց կրոնը [344, էջ 92]։ Հաճախ նրանք մեծ ազդեցություն էին ունենում ամուսինների վրա [344, էջ 92]։

Այլազգի կանանց հետ ամուսնանալու սովորությունը քնորոշ էր ոչ միայն կառավարող դինաստիայի ներկայացուցիչների համար (մի բան, որ հաճախ էր պատահում միջին դարերում և անգամ ավելի ուշ նաև ուրիշ պետությունների թագավորական տներում՝ որպես քաղաքական դաշինքները ամրապնդելու միջոց), այլև ունևոր և անվանի մարդկանց ավելի լայն շրջանի համար։ Այսպես, Աննա Կոմնինան գրում է. սելջուկյան սուլթանի դեսպան «Ջաուշը[21] պատասխանեց, որ մորից ինքը իբերիացի է (այսինքն՝ վրացի։— Դ. Ե.), իսկ հայրը թյուրք է» [15, էջ 191]։ Ինչպես ընդգծում է վ. Ա. Գորդլևսկին, փոքրասիական սելջուկ թյուրքերը իրենց հարեմներն էին վերցնում սարկուհիներ, հարճեր և կանայք տեղացի քրիստոնյաներից, կանայք՝ Փոքր Ասիայում վաղուց բնակություն հաստատած թյուրքական ցեղերից, Կովկասում ծնված կանանց. այս հանգամանքը հետագայում արտահայտվեց անատոլիացի թուրքի կերպարում [49, էջ 165]։

Այլազգի և օտարազգի աղջիկներին կնության առնելու սովորությունը այնքան էր տարածված Փոքր Ասիայի թյուրքերի մոտ, որ Ռ. Ս. Աթաբինենը այդ բանն անվանում է նույնիսկ հատուկ տերմինով՝ «քսենոգամիա» (արտամուսնություն) [249, էջ 119]։ Սա նշում է նաև, որ այդպիսի ամուսնություններից ծնված զավակները հաճախ «ցեղով և լեզվով խորթ» էին լինում թյուրքերին, քանի որ մայրերի կողմից դաստիարակվում էին «ոչ թյուրքական ոգով» [249, էջ 119]։ Այս հեղինակի խղճին թողնելով հիշյալ փաստերի նման մեկնաբանությունը, կարելի է ընդունել, որ այդ ամուսնությունների հետևանքով ուրիշ ժողովուրդներ կուլտուրապես և լեզվական տեսակետից ազդում էին թյուրքերի վրա։ Իսկ քսենոգամիայի (արտամուսնության) սովորությունը ամենից լավ բացատրվում է թյուրքերի էկզոգամիայի (տարամուսնության) տոհմական սովորությամբ։

Եղել է էթնիկական միախառնման մեկ ուրիշ գործոն ևս։ Բյուզանդիայի և Արաբական խալիֆայության, իսկ ավելի ուշ՝ Սելջուկյանների պետության միջև ընկած սահմանամերձ

[20] Քոնյայի մուսուլմանական գերեզմանատներում մինչև հիմա էլ պահպանվել են քրիստոնյաների բազմաթիվ գերեզմաններ՝ սելջուկյան սուլթաններին կնության գնացած քրիստոնյա իշխանուհիների ծառաների, ինչպես նաև հարազատների գերեզմաններ [250, էջ 137]։

[21] Ջաուշ—գուցե հասարակ անուն է, այլ ոչ թե հատուկ անուն. չաուշ—դեսպան, վստահված անձ։ ժամանակակից թուրքերենում չաուշ (չավուշ)—ենթասպա, տասնապետ, բրիգադիր։

պոտիներում, իսլամի և քրիստոնեության սահմանագծում գոյանում էին էթնիկական հատուկ խմբավորումներ՝ սահմանապահների և զինվորական առաջապահ ջոկատների պարտականություններ կատարող ցեղերի և վարձկանների բնակավայրեր՝ բյուզանդական ակրիտներ, խալիֆայական զազիներ, սելջուկյան աքընջիներ: Կենցաղի ընդհանրությունը մերձեցնում էր նախկինում իշնամի այդ բնակիչներին: Վասալական ցեղերը հաճախ անցնում էին մերթ մեկ, մերթ մեկ ուրիշ սյուզերենի կողմը, շփվում միմյանց հետ ու խառնվում [357, էջ 290—292. 269, էջ 7—8, 32]: Զինվորական ջոկատների էթնիկական խայտաբղետության մասին խոսում են շատ փաստեր: Այսպես, Սելջուկյանների մոտ դրանք ոչ միայն թյուրքերն էին, այլև վարձկանները Մերձկասպիականից, Խորասանից, Դեյլեմից, «զիչաղները» (դրանց մեջ կային նաև արևելյան սլավոններ), վրացիներ, քրդեր, հույներ, նույնիսկ ֆրանկներ [49, էջ 154—155, 158]: Ըստ երևույթին, սելջուկները ֆրանկներից են վերցրել խաթաբլ (ախոռ, հին ֆրանսերեն՝ էտաբլ) տերմինը [49, էջ 158]: Վարձկան զինվորներ շատ կային նաև բյուզանդացիների մոտ: VI դարում դրանք հոներն էին, հեպիդները, գերուլները, վանդալները, գոթերը, լանգոբարդները, սլավոնները, պարսիկները, հայերը, վրացիները [143, էջ 71], VIII—IX դարերում՝ խազարները, պեչենեգները, իբերիացիները, վարյագները, ռուսները [143, էջ 140], XII դարում՝ անգլո-սաքսերը, պեչենեգները և մյուս թյուրքերը, սլավոնները, վրացիները, ֆրանկները (ֆրանսիացիները, գերմանացիները) [143, էջ 211]: Աննա Կոմնինան հիշատակում է նաև նորմանների, ալանների, արևմաղների [15, էջ 441, 465], գերմանացիների (ալամանոի, նեմիտացի, գերմանոի) մասին [15, էջ 465]: Ռոմանոս Դիոգենեսի զորքում Մանազկերտի ճակատամարտում (1071 թվական) ժամանակագիրների վկայությամբ, հույներից բացի կային ռուսներ, ալաններ, խազարներ, պեչենեգներ, ուզեր, զիչաղներ, վրացիներ, հայեր, ֆրանկներ, գոթեր, բուլղարներ [265, էջ 629]:

Էթնիկական նման խայտաբղետությունը հանգեցնում էր տարբեր կուլտուրաների ու լեզուների փոխներթափանցմանը: Օրինակ, նման շատ բաներ կարելի է դիտել փոքրասիական թյուրքերի և բյուզանդացիների հերոսական էպոսի մեջ: Բյուզանդական «Ասք Դիոգենես Ակրիտի մասին» էպոսը ուժեղ ազդեցություն է թողել «Ասք Սեյիդ Բաթտալ-զազիի մասին» [309, էջ 563—570. 291] և «Դեդե Քորքուդ» [125, էջ 197—199] էպոսների վրա:

Հարկավոր է նշել նաև, որ Անատոլիայի հետագա թյուրքացումը ինչ-որ չափով նախապատրաստվել էր նաև բյուզանդական հասարակության մեջ թյուրք-սելջուկյան տարրերի խաղաղ ներթափանցմամբ: Դրանք այն թյուրքերն էին, որոնք անցել էին բյուզանդացիների կողմը, ընդունել քրիստոնեություն, ծառայել բյուզանդական զորքում և զբաղեցնում էին զինվորական ու վարչական բարձր պաշտոններ: Այսպես, Ալփ Արսլանի դեմ ապստամբած փեսան (քրոջ ամուսինը)՝ էրբասղանօղլու Քուրշուն, որը կանգնած էր յավուկ (յիվկ) ցեղի գլուխ, 1070 թվականին անցել էր Բյուզանդիայի կայսր կողմը [526, էջ 68]: Այդ թյուրքերից ոմանք, քրիստոնեական նոր անվան հետ միասին, մկրտությունից հետո պահպանում էին նաև փոքր-ինչ հունականացրած իրենց նախկին անունները. Տցաուսխս (Ջաուշ), Թարխանիոտ (Թարխան), Կուտուլմիս (Քութլմուշ) և այլն [250, էջ 133]:

Այդ մասին առանձնապես շատ տեղեկություններ է հաղորդում Աննա Կոմնինան: Նա հիշատակում է դաշնակիցների մի ջոկատի մասին, որը բաղկացած էր սելջուկներից [15, էջ 67], այնուհետև սելջուկ թյուրքերի մասին, որոնք անցել էին Դերբ գետը (Մարիցան, այսինքն՝ սելջուկները արդեն հայտնվել են Թրակիայում) և դարձել բյուզանդացիների դաշնակիցը [15, էջ 104]: Ոմն Իլխան (սա ավելի շուտ ցեղապետի տիտղոս է) իր արյունակից հարազատների հետ անցել է բյուզանդացիների կողմը և ընդունել քրիստոնեություն [15, էջ 200]: Ալեքսիոս կայսրը երբ պատերազմում էր նորմանների դեմ, օգնության կանչեց սելջուկների ջոկատներին [15, էջ 142]: Բյուզանդացիների զորքում կային վարպետ նետաձիգներ սելջուկներից [16, էջ 170], թուրքոպուլներից (այսինքն՝ թյուրքերի զավակներից) ընտիր

զինվորների հատուկ ջոկատներ, որոնք պահպանվել էին մինչև XIV դարը [325, էջ 65]։

«Ալեքսիական»-ում խոսվում է Կամիր անունով մի սելջուկի և ուրիշ սելջուկ զինվորների մասին, որոնք ծառայության մեջ էին գտնվում բյուզանդացիների մոտ [15, էջ 272], սելջուկների մասին, որոնք որոշել էին մնալ ծառայության մեջ կայսեր մոտ [15, էջ 298] և այլն։ Խաչակիրների հետ բյուզանդացի զորավար Կանտակուզենի ունեցած ճակատամարտի ժամանակ նրա ամբողջ ձախ թևը գրավել էին «թուրքերը» (այսինքն՝ սելջուկ թյուրքերը) [15, էջ 353]։ Բյուզանդացիների կողմն անցած և քրիստոնեություն ընդունած շատ թյուրքեր այնքան էին մերձեցել բյուզանդացիների հետ, որ Աննա Կոմնինան նրանց այլևս անվանում է ոչ թե կիսաբարբարոսներ, այլ ռոմեացիներ, այսինքն՝ հույն բյուզանդացիներ։ Խաչակիրների հետ տեղի ունեցած ճակատամարտերից մեկում, գրում է նա, «ընկան շատ ռոմեացիներ, այդ թվում և Կարան (անկասկած, թյուրքական անուն է. ճիշտ է, դա կարող էր պատկանել նաև Բալկաններից եկած թյուրքի, բայց ոչ սելջուկի։— Դ. Ե.), որը մանկուց եղել է ինքնակալի մերձավոր անձը և մտել էր նրա մոտ մարդկանց շարքը, և թուրք (այսինքն՝ սելջուկ) Սկալիարիոսը՝ արևելյան առավել փառավոր կառավարողներից մեկը, որը անցել էր կայսեր կողմը և ընդունել սուրբ մկրտություն» [15, էջ 351]։ Քրիստոնեություն ընդունած առանձին հարուստ թյուրքեր բնակություն էին հաստատում Կոստանդնուպոլսում որպես պատրիկներ կամ վաճառականներ [250, էջ 129]։

Խաղաղ կերպով բյուզանդական հասարակության մեջ ներթափանցած այս բոլոր սելջուկ թյուրքերը չէին կարող էթնիկական ներգործություն չունենալ տեղական բնակչության վրա[22]։ Այս տեսակետից շատ հատկանշական է Աննա Կոմնինայի դիտողությունը արդեն այն ժամանակ հունարենի վրա թյուրքերենի թողած ազդեցության մասին. «ակրոպոլ... հիմա սովորություն է դարձել անվանել «կուլա»» [15, էջ 317]։ Սա «աշտարակ» նշանակող արաբերեն բառի ակներև փոխառություն է սելջուկ թյուրքերի միջոցով։

Ավելի ուշ, մոնղոլական դարաշրջանում սելջուկյան սուլթան Ալաեդդինը մոնղոլներից փախչելով ապաստան էր փնտրում բյուզանդական կայսր Միխայիլ Պալեոլոգի մոտ [250, էջ 137]։ Նախկին սուլթան Քեյ-Քավուսը ևս, եթե հավատանք օսմանական պատմագիրներին, բյուզանդիա է գաղթել իր ընտանիքի և զորքի մի մասի հետ [250, էջ 137]։

Փոքր Ասիայի սելջուկյան կուլտուրայի էթնիկական արմատները

Էթնիկական մերձեցումը և միախառնումը տարբեր էթնոսների միջև ակնառու կերպով արտացոլվել են Փոքր Ասիայի սելջուկյան կուլտուրայի առանձնահատկությունների մեջ։ Այդ կուլտուրան ստեղծել են ոչ միայն և, թերևս, ոչ այնքան սելջուկ թյուրքերը, որքան տեղական ժողովուրդները (ինչպես նաև հարևան ժողովուրդները՝ արաբները, պարսիկները)։

Ռումի սուլթանությունում արհեստավորներ էին գերազանցապես տեղական բնակիչները։ Այդ բանը նշել է վ. Ա. Գորդլևսկին. քանի որ Փոքր Ասիայում արհեստավորներ եղել են Սելջուկյանների գալուց դեռ շատ առաջ, բնական է, որ դրանք եղել են քրիստոնյաները (հայերը, հույները), որոնք, իհարկե, շատ բան են վերցրել Փոքր Ասիայի արդեն անհետացած տեղական բնակչությունից։ Հայերի և հույների դերը XI—XIII դարերի Փոքր Ասիայի արհեստի մեջ հրապարակային է [49, էջ 102—104]։ Այդ մասին վկայություններ կան այն ժամանակի բազմաթիվ աղբյուրներում։ Իբն Բաթուտան, մասնավորապես, նշել է, որ Լյադիկա քաղաքում (Արևմտյան Անատոլիա) արհեստավոր ջուլհակների մեծ մասը հելլենուհիներ են. նրանք արտադրում են «լյադիկի» գործվածքը, որը հայտնի էր ամբողջ Անատոլիայում [301, էջ 425]։ Արհեստի բնագավառում տեղական բնակիչ-

[22] Հարկավոր է նաև նկատի ունենալ (այս մասին խոսվեց վերևում), որ թյուրքական տարրը Բյուզանդիայում ներկայացված էր նաև Բալկաններից եկած բավական բազմաքանակ թյուրք գաղթականներով։

ների կատարած մեծ դերը իր կնիքն է թողել սելջուկների նյութական կուլտուրայի շատ բնագավառների վրա։

Տեղական ազդեցությունը ուժեղ կերպով արտահայտվել է նաև սելջուկյան ճարտարապետության վրա, մզկիթների, մեդրեսեների, գերեզմանոցների (թյուրբե, քյումբեթ), պալատների (սարայ, քյոշք), քարվանսարաների շինարարության մեջ և այլն։ Այսպես, բրգաձև գմբեթը՝ սելջուկյան պալատամունքային ճարտարապետության հիմքը, ավելի շատ փոխառնված է հայերից[23]։ Շատ ճարտարապետներ ու շինարարներ, որոնց անունները պահպանել է պատմությունը, ծագում էին տեղական բնակիչներից (կամ հարևան երկրների բնակիչներից)։ Օրինակ, «երկնագույն մեդրեսեն» Սիվասում կառուցվել է 1271 թվականին ճարտարապետ Կալոյանի կողմից (Կալո Յանի—հունական անուն է), «Մեծ մզկիթն» ու հիվանդանոցը Դիվրիգիում (1228 թվական) կառուցել է Ահմեդ բին Իբրահիմը Թբիլիսիից, «Սիտտե Մելիք» դամբարանը Դիվրիգիում (1195/96 թվական)՝ Բախրամը (պարսիկ կամ հայ?), «Ալաեդդինի մզկիթը» Քոնյայում 1219/20 թվականին կառուցել է Մուհամմեդ Կաուլանը Դամասկոսից, Դիվրիգիի «Մեծ մզկիթի» միմբերը (ամբիոնը) (թվականը անհայտ է)՝ Ահմեդը Թբիլիսիից [344, էջ 204, 207—209]։ Իբն Բիբին գրում է, որ Փոքր Ասիայի բնակիչներից մեկի պալատում ինքը տեսել է առյուծի բրոնզե արձան, որի երախից խփում էր շատրվան [301, էջ 442]։ Դա սելջուկյան դարաշրջանի անատոլիական շատ պալատների ավանդական զարդն էր, որ վերցրել էին բյուզանդացիներից։

Նստակյաց կյանքի բնորոշ կողմերը, նյութական երկրագործական կուլտուրան նստակեցության անցնող թյուրքերը վերցնում էին տեղական բնակիչներից՝ գյուղացիներից ու քաղաքացիներից[24]։

Տեղական քրիստոնյա բնակիչների ազդեցությունը արտահայտվել է անգամ սելջուկների մուսուլմանական հավատալիքների և ծեսերի մեջ։ Այսպես, թաղման ժամանակ սովորություն կար գլխարկը հանել[25], սգո գույնը եղել է սևը [49, էջ 166]։ Այդ բանը երևում է Սինոպում էմիր Իբրահիմի մոր թաղման նկարագրությունից, որ թողել է Իբն Բատուտան. նրա որդին, էմիրները և մեմլյուկները գնում էին գլխաբաց, իսկ կադիները, քյաթիբները և օրենսգետները չալմայի փոխարեն գլխներին ունեին բրդյա սև գլխարկներ (քերչիֆ)։ Նա գրում է նաև 40 օրվա սգի մասին [301, էջ 468]։

Հավանաբար, Իբն Բատուտայի այս հաղորդումն է մեկնաբանում Վ. Ա. Գորդլևսկին, երբ գրում է. «Արաբ ճանապարհորդի դիտող աչքը անմիջապես Փոքր Ասիայում նկատել է շեղումներ իսլամից։ Եվ դա խոսում է այն մասին, թե Փոքր Ասիայում որքան մեծ է եղել տեղական քրիստոնեական միջավայրի ներգործությունը Թուրք (այսինքն՝ Թյուրք։— Դ. Ե.) նվաճողների վրա» [49, էջ 182]։

XIII դարում, երբ իսլամի և քրիստոնեության միջև կրոնական պատերազմները փոխադրվեցին հիմնականում Սիրիա և Փոքր Ասիայում հաստատվեց հարաբերական հանդուրժողություն, Սելջուկյանների հպատակ մուսուլմաններն ու քրիստոնյաները խաղաղ ապրում էին միասին, միմյանցից վերցնելով հավատալիքները, սովորությունները, ծեսերը։ Մևլևիի դերվիշների սգո հագուստը ուներ քրիստոնեական ծագում, բեկտաշի դերվիշների շրջանում կային քրիստոնյաներ, սուլթան Գիյասեդդին Քեյխոսրև II-ը համարվում էր գաղտնի քրիստոնյա [344, 94, 113—114]։ Փոքր Ասիայի ժամանակակից թուրքերը դեռ ազգ կերպով հիշում են նախկին հավատը՝ քրիստոնեությունը, գրում է Վ. Ա. Գորդլևսկին, գյուղացի կանայք, հաց թխելիս կատարում

---

23 Սելջուկյան դամբարանների աշտարակները կառուցվում էին միջնադարյան հայկական եկեղեցիների աշտարակաձև գմբեթների նման [60, էջ 117]։

24 Այս մասին մանրամասն տե՛ս Վզլիում։

25 Ճիշտ է, իբրև հարգանքի նշան գլխարկը հանելու սովորությունը թյուրքական շատ ժողովուրդների և պարսիկների մոտ կար դեռ իսլամից առաջ։ Այդ մասին արաբական աղբյուրներից և Բար Էբրեյի «Ժամանակագրություն»-ից տեղեկությունների ամփոփ նկարագրությունը տալիս է Մ. Կանարը «Իրն Ֆադլանի ճանապարհորդության նկարագրությունի վոլգայի բուլղարները» երկի իր թարգմանության ծանոթագրություններում [302, էջ 103]։

են այնպիսի շարժում, որը հիշեցնում է խաչակնքումը։ Փոքր Ասիայի Թուրքերի՝ երկու հավատ ունենալու մասին Վ. Ա. Գորդլևսկին նյութերը հավաքել է իր հատկապես գրված բայց դեռ չհրապարակված հոդվածում [49, էջ 178]։

Տեղի էր ունենում նաև հակառակ ազդեցություն։ Ինչպես երևում է 1437 թվականի քրիստոնեական եկեղեցական փաստաթղթերից, հույն հոգևորականությունը «Թուրքիայի շատ կետերում կրում էր անհավատների զգեստ և խոսում էր նրանց լեզվով» [49, էջ 180]։

Սելջուկները հսկայական ազդեցություն են կրել նաև Իրանի կողմից, չխոսելով արդեն արաբների մասին, որոնց ազդեցությունը գալիս էր գլխավորապես իսլամի միջոցով։ Արդեն «Մեծ Սելջուկյանները» Իրանում ենթարկվել էին տեղական քաղաքակրթության ուժեղ ազդեցությանը։ Ռ. Ս. Աթաբինենը նույնիսկ պնդում է, թե սելջուկները Իրանում իրանացան, այնպես, ինչպես նրանք արաբացան Սիրիայում [249, էջ 52]։ Այդ մասին ավելի զգուշորեն է խոսում Ա. Մասսեն. «Թյուրքական հասարակությունը Արևմտյան Ասիայում (այսինքն՝ հասարակությունը «Մեծ Սելջուկյանների» պետությունում, ներառյալ Իրանը, Սիրիան և Փոքր Ասիան։ —Դ. Ե.) վերափոխվել է «բյուզանդական, արաբական և իրանական քաղաքակրթությունների ներգործության տակ» [159, էջ 175]։

Ռումի սուլթանությունում, որի կառավարող դինաստիան Եղել է «Մեծ Սելջուկյանների» մի ճյուղը, շարունակվում էր Իրանի ազդեցությունը։ Այդ մասին շատ վառ կերպով է գրում Վ. Ա. Գորդլևսկին. «Մարդիկ բոլոր կողմերից գալիս հավաքվում էին Քոնյայում։ Կային, իհարկե, բնիկ քրիստոնյաներ (հույներ, հայեր), կային և օտարերկրացիներ՝ արաբներ, իրանցիներ (այսինքն՝ պարսիկներ, տաջիկներ, իրանալեզու այլ ժողովուրդների ներկայացուցիչներ։— Դ. Ե.). իրանցիները պետք է որ շատ լինեին. նրանց այնտեղ էին քաշում իրենց հետևից մեծատոհմիկ աստիճանավորներն ու բարձր պաշտոնատար անձինք՝ վեզիրները, որոնց հաճախ սուլթանները ընտրում էին իրանցիներից. գրագետ մարդիկ, գեղագիրները՝ բոլորը իրանցիներ էին» [49, էջ 126]։

«Գրական լեզուն պարսկերենն էր. Իբն-Բիբիի, Աքսարայի ժամանակագրությունները, Աֆլյաքիի մեմուարները գրված են պարսկերեն։ Բյուզանդիայից Սելջուկյանների կողմն անցած բարձրաստիճան պաշտոնյաներն անգամ գրում էին պարսկերեն, օրինակ, ծագումով հույն Հասս Օղուզը»[26] [49, էջ 163]։ Պարսկերեն լեզուն կրթված մարդկանց շրջանում օգտագործվում էր նաև իբրև խոսակցական լեզու։ Իբն Բատուտան գրում է, որ Գեյվե վայրում (Իզնիկ քաղաքից 50 կիլոմետր արևելք) իր ներկայությամբ մի օրենագետ պարսկերեն էր խոսում մեկ ուրիշ թյուրքի՝ ախիի (մուսուլմանական կրոնական միաբանության անդամի) հետ։ Նա փորձում էր պարսկերեն խոսել նաև Իբն Բատուտայի հետ, բայց վերջինս պարսկերեն չգիտեր [301, էջ 454—455]։

Թյուրքական (Ալփ Արսլան, Կըլըչ Արսլան, Քութլմուշ) և արաբա-մուսուլմանական (Սուլեյման, Գիյասեդդին, Ալաեդդին) անուններից բացի սուլթաններին տալիս էին նաև պարսկական անուններ (Քեյ-Խյուսրև, Քեյ-Բուբադ, Քեյ-Քավուս)։ Պարսկական «փադշահ» («փադիշահ»-ից) տիտղոսը, ինչպես և արաբական «սուլթան» տիտղոսը Փոքր Ասիայի թյուրքալեզու հուշարձաններում նշվել են դեռ XIII դարում [319, էջ 95—96]։ Ընդհանրապես, տիտղոսների, պետական-վարչական, արքունական, դատական և, իհարկե, կրոնական տերմինաբանության մեջ գերակշռում էին արաբերեն և պարսկերեն բառերը (օրինակ, արաբերեն «վեզիր», ռիաներեն «դիվան» և այլն)։ Ռազմական տերմինների մի մասը միայն մնացել էր թյուրքական[27]։

Ինչպես նշում է Թ. Թելբոտ-Ռայսը, սելջուկյան կուլտու-

[26] Ինչպես ցույց է տալիս այս անունը, նա ծագումով ավելի շուտ Եղել է ոչ թե հույն, այլ օղուզ կամ ույղ, որը Բյուզանդիայում ընդունել է քրիստոնեություն։

[27] Մ. Հ. Յընանչը տեղեկություններ է բերում այն մասին, որ Անատոլիան բնակեցված է եղել ոչ միայն քոչվոր թյուրքերով, այլև Մավերաննահրից եկած նստակյաց թյուրքերով, ինչպես նաև տարբեր, գերազանցապես իրանալեզու էթնիկական խմբերի ներկայացուցիչներով՝ նորաստանից, Իրաքից, Ադրբեջանից։ Այդ պատճառով, գտնում է նա, թյուրքական բառապաշարը պահպանվել է ամենաապահովության, մասամբ՝ երկրագործության մեջ, իսկ արհեստներում՝ ոչ [526, էջ 172]։

բային յուրահատուկ է եղել ծայրահեղ էկլեկտիկականությունը: Սուլթանի սև դրոշակն անգամ (սև գույնը գալիս էր օղուզներից) կրում էր մի քանի պատկերներ՝ վիշապ (սասանյան կամ նույնիսկ չինական ազդեցություն?), առյուծ (Արևմտյան Ասիայի հին քաղաքակրթությունների ազդեցություն) և երկգլխանի արծիվ (Բյուզանդիայի ազդեցություն)[28]: Հարթաքանդակներում, զարդաքանդակներում, խեցեղեն առարկաների, գորգերի, դեղարվեստական իրերի, ոսկերչական զարդերի մեջ՝ ամենուրեք կարելի է դիտել մի կողմից կենտրոնական Ասիայի ժողովուրդների ազդեցությունը (այն իրենց հետ բերել են թյուրքերը), իսկ մյուս կողմից՝ Իրանի և Բյուզանդիայի ավելի ուժեղ ազդեցությունը [344, է 157—187]:

Արաբական, իրանական և բյուզանդական ազդեցությունների խաչաձևումը երբեմն արտահայտվում էր շատ հետաքրքիր ձևով: Այսպես, սելջուկյան մի իշխանի կոչում էին Մուհզզեդդին Կայսար-շահ, այսինքն՝ արաբական մուսուլմանական անունից բացի նա ուներ նաև հունական անուն՝ Կայսար (Կեսար կամ Ցեզար) և պարսկական անուն՝ Շահ [49, էջ 160. 344, էջ 90]:

Սելջուկյան կուլտուրայի սինկրետիզմը (չտարբերակվածությունը) դիտել են այն ժամանակվա շատ փիլիսոփաներ:

[28] Երկգլխանի արծվի պատկերը գոյություն է ունեցել դեռ խեթերի մոտ [60, էջ 117]: Այդ կապակցությամբ հետաքրքրական է Բարտարապետության սովետական պատմաբան Գ. Մ. Լյուվիգի դիտողությունը. վերջին արվեստի հին հուշարձանները ուսումնասիրող արշավախմբի կազմում 1924—1926 թվականներին այցելել էր Թուրքիա: Նա գրում է, որ մինչև հիմա էլ Թուրքիայի և Բալկանների բարձր լեռնային մի շարք գյուղերում պահպանվել է մի սովորություն, երբ երիտասարդ լեռնցին ընտանեկան տոնի (սեփական նոր տունը մտնելու, հարսանիքի և այլն) նախօրյակին՝ արշալույսին բարձրանում է լեռները և սպանում մի արծիվ: Արծվի փորոտիքը թափելուց և գլուխը կացինով երկու կես անելուց հետո լեռնցին այդ պաճուճապատանքը փակցնում է իր տան մուտքի վերև: Լեռնցիներից ոչ ոք չի կարողացել ինչպես հարկն է այդ սովորությունը բացատրել Գ. Մ. Լյուվիգին [148, էջ 112]: Այս փաստը խոսում է այն մասին, որ երկգլխանի արծվի խորհրդանշանը հավանաբար, կապված է եղել Փոքր Ասիայի և Բալկանների տոտեմիստական ինչ-որ հին հավատալիքների հետ:

Գուցե, նրանցից ոմանք աղոտ կերպով կռահում էին, թե ինչի պետք է հասցնի այդ ամենը: Այսպես, Փոքր Ասիայի նոր-նոր ստեղծվող էթնիկական նոր ընդհանրության գաղափարախոսական ձևավորման անհրաժեշտությունը, հավանաբար, զգացել է ականավոր միստիկ փիլիսոփա, մեվլեվիների միաբանության հիմնադիր, բանաստեղծ Ջելալեդդին Ռումին (1207—1273)[29]: Նա փորձում էր եթե նոր կրոն չստեղծել, համենայն դեպս վերափոխել իսլամը, մուտցնելով քրիստոնեության: Ջելալեդդինի փիլիսոփայական-կրոնական հայացքների վրա ուժեղ ազդեցություն են ունեցել հույն քրիստոնյաները, բացի դրանից, նրանք նրան ծանոթացրին Պլատոնի ուսմունքին: Ջելալեդդինը հաճախ այցելում էր եկեղեցիները, վանքերը, բարեկամական կապեր էր պահպանում քրիստոնյա հոգևորականների հետ, որոնք նրա մոտ էին գալիս ոչ միայն Անատոլիայի քաղաքներից ու գյուղերից, այլ նույնիսկ Կոստանդնուպոլսից: Կրոնական բոլոր համայնքներում էլ նա ուներ աշակերտներ [351, էջ 141]: Օ. Թուրանի կարծիքով, Ջելալեդդինը երազում էր ստեղծել մի սինկրետիկ (չտարբերակված) կրոն, որը միավորեր քրիստոնյաներին ու մուսուլմաններին՝ որպես միասնական աստծու հավատացողների [351, էջ 141]: Աչքատեղից էլ բխում էր մեվլեվիների կրոնի հանդուրժողականությունը: Ջելալեդդինի օրով Սելջուկյանների մայրաքաղաք Քոնյան դարձել էր, վ. Ա. Գորդլևսկու արտահայտությամբ, միստիկական պանթեիզմի կենտրոն: Մեվլեվիների պանթեիստական հայացքները, որոնք ամրապնդվել էին նրանց հոգևոր առաջնորդ Ջելալեդդինի անձնական հարաբերությունների և հույների նկատմամբ ունեցած համակրանքի շնորհիվ[30], մեղ-

[29] Ջելալեդդինը ծնվել է Բալխում (Բուխարա), խորեզմշահ Ջելալեդդին Մուհամմեդի հալածանքների պատճառով նրա ընտանիքը փոխադրվեց նախ Դամասկոս, իսկ ապա էրզինջան, Լարենդա և, վերջապես, Քոնյա:

[30] Ջելալեդդինի ընտանիքում կանայք, աղախինները հելլենուհիներ էին. Կիրախաթունը (նրա կինը), Կիրաղա-խաթունը (նրա որդի Սուլթան Վելեդի կինը): Դուստրերին տալիս էին հունական անուններ. Էֆենդիպուլո (դուստրը), Դեսպինա (ծոռը): Վերջին անունը հետագայում թուրքերի մոտ պատահում էր նաև օսմանյան դարաշրջանում [49, էջ 179]:

մացնում էին անմիաբանությունը, մերձեցնում քրիստոնյաներին և մուսուլմաններին [49, էջ 178]։ Երբ Ջելալեդդինը մահացավ, նրա թաղմանը ներկա էին Փոքր Ասիայի կրոնական բոլոր հոսանքների և աղանդների կողմնակիցները [351, էջ 142. 250, էջ 137]։ Նրա թաղման պատգարակի շուրջը հավաքվել էր մեծ բազմություն։ Բոլորը, թե բարձրաստիճան անձինք, թե հասարակ ժողովուրդը, գնում էին ոլխաբաց։ Այստեղ կային և՛ քրիստոնյաներ, և՛ հրեաներ, և՛ մուսուլմաններ։ «Նայելով նրան, մենք ճանաչեցինք Հիսուսի, Մովսեսի և բոլոր մարգարեների բնությունը»,— ասում էին նրա երկրպագուները (այսպես է գրում Աֆլյաքին) [49, էջ 177]։

Սակայն Ջելալեդդինը նոր կրոն չստեղծեց։ Չնայած քրիստոնյաների ուժեղ ազդեցությանը, նա մնաց մուսուլման։ Ավելին. շատ քրիստոնյաներ Ջելալեդդինի ազդեցության տակ ընդունեցին իսլամ (դրանց մեջ կային անգամ հոգևորականներ և վանականներ)։ Աֆլյաքիի տեղեկությունների համաձայն, դրանց թիվը հասել էր 18 հազարի [246, հատ. I, էջ 75, 105, 107, 114, 184, 211, 261]։

Այսպիսով, անհաջողությամբ վերջացավ Ջելալեդդինի փորձը՝ հաշտեցնել քրիստոնեությունը և իսլամը։ Այլ կերպ չէր էլ կարող լինել։ Դրա պատճառները խոր կերպով ընկած էին Ռումի սուլթանությունում գոյություն ունեցած սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանների մեջ, ղեկավորապես սոցիալ-տնտեսական և քաղաքական այն հակասության մեջ, որ գոյություն ուներ ֆեոդալների տիրապետող մուսուլմանական վերնախավի և դյուղացիների ու արհեստավորների շահագործվող մասսաների միջև, որոնց մեծ մասը կազմում էին հենց քրիստոնյաները։

Իսկ կրոնների տարբերությունը էականորեն կասեցնում էր Փոքր Ասիայի տարբեր ժողովուրդների փոխադարձ մերձեցման էվոլյուցիոն պրոցեսը։ Այդ տարբերությունը խանդարում էր սելջուկ թյուրքերին՝ արագ ձուլվելու տեղական բնակչության հետ (նրանց միաձուլումը տեղի էր ունենում այդ բնակչության իսլամացման պայմանով միայն)։

***

Այսպես, XI—XIII դարերում Փոքր Ասիայում, չնայած բնակչության էթնիկական ու դավանական բարդ կազմին, աստիճանաբար նկատելի էին դարձել որոշակի տենդենցներ, որոնք հաճախ բարդանում էին բազմաթիվ անբարենպաստ հանգամանքներով, առանձին էթնոսների մերձեցման համար։ Այդ տենդենցների հետագա զարգացումը Ռումի սուլթանությունում, թվում էր, պետք է հանգեցներ տեղական բնակչության մեծագույն մասի իսլամացմանն ու հետագա թյուրքացմանը։ Նախ, իսլամը պետական կրոն էր և արդեն այն ժամանակ, հավանաբար, տարածվում էր տեղական բնակչության բավական մեծ մասի շրջանում, չխոսելով արդեն թյուրք մուսուլմանների մասին։ Երկրորդ, թյուրքերը (քոչվոր, կիսաքոչվոր և նստակյաց) կազմում էին Անատոլիայի տիրապետող և ցեղալեզվական և կուլտուրական խոշորագույն ընդհանրություններից մեկը։

Սակայն, Ռումի սուլթանության սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծայրահեղ հակասական զարգացումը կասեցնում էր միասնական ժողովրդի ձևավորումը։ Մի կողմից Սելջուկյանների միավորած Անատոլիան դարձել էր առևտրական կարևոր ճանապարհների հատման վայր՝ Սիրիայի փոխարեն, որը խաչակրաց արշավանքները սկսվելուց հետո դարձել էր մարտերի ասպարեզ։ Այդ պատճառով XIII դարում Անատոլիան ծաղկում էր ապրում։ Առևտրական բոլոր ճանապարհներին կառուցվել էին քարվանսարաններ[31], նույնիսկ քաղաքներ։ Ռումի սուլթանությունում զարգանում էին

31 Սելջուկյանների օրով Փոքր Ասիայում այն ժամանակվա համար բավական մեծ շինարարություն էր կատարվում. XIII դարում կառուցվել էր 53 քարվանսարա, 11 հիվանդանոց, շատ մզկիթներ ու մեդրեսաներ [250, էջ 125]։ XIV դարի 30-ական թվականներին անգամ, երբ Անատոլիան բաժանվել էր մոնղոլներին ենթակա մի շարք ինքնուրույն ֆեոդալական իշխանություններ, շատ քաղաքներ ու մարզեր դեռ շարունակում էին ծաղկում ապրել։ Իբն Բաթուտան իր այցելած քաղաքները (այդ թվում՝ Քոնյան, Աքսարայը, Լյադիկը) բնութագրում է որպես «ծաղկող» քաղաքներ՝ հիանալի շուկաներով, բազմաթիվ մզկիթներով, բաղնիքներով, արհեստավորների արհեստանոցներով [301, էջ 425, 430, 432]։

դիտությունը, արվեստը, գրականությունը։ Բոլոր կողմերից այստեղ էին գալիս մուսուլմանական աշխարհի գիտնականները, գրողները և բանաստեղծները [526, էջ 5]։ Բնական է, որ Ռումի սուլթանությունում XIII դարում, մինչև մոնղոլների արշավանքը, սկսել էր հասունանալ տնտեսական որոշակի ընդհանրություն։ Բայց, մյուս կողմից, շատ ուժեղ էին նաև կենտրոնախույս ուժերը, որոնք պայմանավորված էին գլխավորապես ֆեոդալական ու ցեղային մասնատվածությամբ։ Կենտրոնական իշխանությունը Ռումի սուլթանությունում միշտ էլ եղել է թույլ։ Շատ ամիրայություններ Սելջուկյանների առավել մեծ հզորության ժամանակաշրջաններում անգամ մնում էին կիսաանկախ (Դանիշմենդի, Արթուկի, Սալթուկի, Մենգյուջյուկի ամիրայությունները և այլն), իսկ բեյերը ուշերում հաճախ դուրս էին գալիս սուլթանի հպատակությունից։ Այս ամենը խանգարում էր Ռումի սուլթանությունում մշտական ու կայուն տնտեսական ներքին կապերի կարգավորմանը։ Այդ կապերի հաստատմանը խանգարում էր նաև բյուրքերի խոշոր զանգվածների, իսկ մի շարք շրջաններում՝ քրդերի ու արաբների շարունակվող քոչվորությունը։

Այնուհետև, Ռումի սուլթանությունում, ինչպես արդեն նշվեց, չէր ստեղծվել միասնական լեզու։ Պաշտոնական (պետական) և գրավոր գրական լեզուն պարսկերենն էր, իսկ կրոնի լեզուն՝ արաբերենը։ Փոքր Ասիայի բյուրքերը նույնպես չունեին միասնական լեզու։ Ամեն մի առանձին շրջանում կամ մարզում, ուր բնակություն էր հաստատում այս կամ այն ցեղի մեծ մասը, ստեղծվում էր տերիտորիալ բարբառ։ Դրա հիմքը կազմում էր ցեղի բարբառը և դրա հետ ձուլված տեղական լեզվական հիմքը։ Լեզվական այդ հիմքերը շատ բազմազան էին. արևմուտքում գերակշռում էր հունական հիմքը, արևելքում՝ առանձին շրջաններում դա կարող էր լինել հայերենը, վրացերենը, քրդերենը, արաբերենը, ասորերենը և այլն[32]։ Այս ամենը ուժեղացնում էր

[32] Հենց Ռումի սուլթանության ժամանակաշրջանում էր, որ Փոքր Ասիայի բյուրքերի լեզվի, ավելի ճիշտ՝ նրանց բարբառների մեջ մտան

տարբերությունը տերիտորիալ բարբառների միջև։ Այսպես, Կենտրոնական Անատոլիայում, որտեղ բյուրքերի մեծ մասը կընդգ ցեղից էր, կազմեց իր բարբառը[33] [526, էջ 173], Արևմտյան և Արևելյան Անատոլիայում ստեղծվեցին մի քանի այլ բարբառներ։

Փոքր Ասիայի սելջուկ բյուրքերը չունեին նաև միասնական ցեղանուն, ինչպես նաև միասնական էթնիկական ինքնագիտակցություն։ Քոչվոր և կիսաքոչվոր բյուրքերի մոտ ընդհանուր «բյուրք» ցեղանվան և փոքրասիական բյուրքլեզու ընդհանրությանը պատկանելու գիտակցության վրա գերիշխում էին ցեղային անուններն ու ցեղային ինքնագիտակցությունը։ Նստակյաց բյուրք բնակչության, այսինքն՝ նստակյաց դարձած բյուրքերի և նրանց հետ խառնված խլամացած ու բյուրքացած (հաճախ ոչ լրիվ) տեղացի բնակիչների մոտ գերակշռում էին կրոնական ինքնանվանումը և ինքնագիտակցությունը. նրանք իրենց ամենից հաճախ անվանում էին մուսուլմաններ։ «Բյուրք» ցեղանունը մնացել էր նստակյաց դարձած նախկին քոչվոր բյուրք գյուղացիների մի մասի մոտ միայն։

Ամփոփելով ամբողջ ասվածը, կարելի է արձանագրել հետևյալը։ XI—XII դարերում Փոքր Ասիա գաղթեցին բյուրքական շատ ցեղեր, գլխավորապես օղուզներ և թուրքմեններ, որոնք նրանցից առաջ կամ նրանց հետ այստեղ եկած ուրիշ բյուրքերի հետ միասին կազմեցին բյուրքալեզու ցեղալեզվական և կուլտուրական մի ընդհանրություն, որը ամրա-

տեղական լեզուներից շատ բառեր, որոնք հետագայում պահպանվեցին թուրքերեն լեզվում։ Արդեն Իբն Բատուտան Անատոլիայի բյուրքերի մոտ նշում էր «չելեբի» (տեր, պարոն, ասորերեն՝ ցլիբա) [203, էջ 1879], «էֆենդի» (կրթված մարդ, հունարեն՝ աֆսենտես) բառերը [301, էջ 424, 463]։ Այս բառերը նշված են նաև Անատոլիայի XIII դարի բյուրքալեզու գրավոր հուշարձաններում [319, էջ 97, 99]։ Ժամանակակից յուրյուքների մոտ «չալար» բառը պահպանվել է «աստված» իմաստով [319, էջ 97]։ «Դեդե Քորքուդ»-ի լեզվում նշված են հայկական և վրացական փոխառություններ. «թագավոր» (կառավարիչ), «աղնաուր» (ասպետ) և այլն [125, էջ 23, 64, 9, 196]։

[33] Կենտրոնական Անատոլիայի (կամ Անկարայի) բարբառը հետագայում դրվեց ժամանակակից թուրքերեն լեզվի հիմքում [526, էջ 173]։

պնդվեց նաև թյուրքերի ճնշող մեծամասնության ընդհանուր կրոնով՝ սունների աղանդի իսլամով, որը և եղել էր Ռումի սուլթանության պետական կրոնը։ Շատ թյուրքեր XI—XII դարերում անցան նստակեցության։ Այդ ժամանակ սկսվեց նստակյաց թյուրքերի էթնիկական միախառնումը տեղացի նստակյաց, գերազանցապես իսլամացած բնակչության հետ։ Քոչվոր թյուրքերը ևս խառնվում էին տեղացի քոչվոր տարրերի հետ։ Այս ամենը սկիզբ դրեց Փոքր Ասիայի տեղական բնակչության մի մասի թյուրքացմանը։

Սակայն Փոքր Ասիայում XI դարի վերջին—XIII դարի առաջին կեսին միասնական թյուրք ժողովրդի ձևավորում տեղի չունեցավ (եթե այն տեղի ունենար, կարելի էր այն կոչել հին թուրքական, ինչպես դա եղավ հին ռուս ժողովրդի հետ, որը ձևավորվեց Կիևյան Ռուսիայում՝ IX—X դարերում)։ Այս պրոցեսի ավարտմանը խանգարած պատճառներից կարելի է նշել հետևյալները։

1. Քննության առնվող պատմական ժամանակաշրջանը շափազանց կարճատև էր (ընդամենը մոտ երկու հարյուրամյակ), որպեսզի հնարավոր լիներ Փոքր Ասիա գաղթած և ծագումով տարբեր թյուրքական ցեղերի փոխադարձ ասիմիլյացիա, իսկ գլխավորը՝ տեղական բնակչության գոնե բավական մեծ մասի կայուն ասիմիլյացիան։ Համեմատության համար կարելի է նշել, որ հին ռուսական ժողովրդի կազմավորումը տեղի էր ունենում անհամեմատ ավելի երկարատև պատմական ժամկետներում։ Այն տերիտորիան, որտեղ IX դարում կազմավորվեց հին ռուսական պետությունը, հին ժամանակներից բնակեցված է եղել սլավոններով։ «Դաշտաբնակները, որոնք կոչվում էին ռուսներ» (Նեստոր), դրանից շատ առաջ գլխավորեցին Միջին Մերձդնեպրյան շրջանում կազմավորված ցեղային միությունը։ «Ռուս» անունը արդեն VI—VII դարերում դուրս էր մղել մյուս ցեղանունները, տարածվելով Արևելյան Եվրոպայի զրեթե ամբողջ անտառատափաստանային շրջանի վրա, որ զբաղեցնում էին սլավոնական (մեծ մասամբ), ուգրոֆիննական երկրագործ ցեղերը և հողի վրա նստակյաց դարձած թյուրք և ուգոր քոչվոր ցեղերը։ Այսպիսով, հին ռուսական ժողովրդի

կազմավորումը տևեց առնվազն չորս-հինգ հարյուրամյակ։

2. Ռումի սուլթանությունում, որը շարունակ բզկտվում էր ցեղային ու ֆեոդալական երկպառակություններով, չկար բավականաչափ կայուն տնտեսական ու քաղաքական ընդհանրություն։ Իսկ հին ռուսական պետությունում XI—XII դարերում գոյություն ուներ բավական հաստատուն տրնտեսական ու քաղաքական ընդհանրություն։

3. Ռումի սուլթանությունը շատ խայտաբղետ էր էթնիկական տեսակետից. այնտեղ ապրում էին ծագումով տարբեր թյուրքական ցեղեր, էթնիկապես միմյանցից և թյուրքերից հեռու բնիկ ժողովուրդներ (հայեր, վրացիներ, հույներ, քրդեր, արաբներ և այլն)։ Էթնիկական խայտաբղետությունը հաճախ ուժեղանում էր կրոնական հակամարտությամբ, որ գոյություն ուներ ոչ միայն քրիստոնյաների և մուսուլմանների միջև, այլև այդ կրոնների տարբեր հոսանքների կողմնակիցների միջև (սուննիներ և շիաներ, ուղղափառներ, լուսավորչականներ, նեստորականներ, հակոբյաններ և այլն)։ Իսկ հին ռուսական պետությունը էթնիկական տեսակետից եղել է համեմատաբար միասեռ, արևելասլավոնական ցեղերը կազմում էին նրա բնակչության ճնշող մեծամասնությունը։ Կիևյան Ռուսիայի էթնիկական միասեռությունը ուժեղանում էր նաև միասնական կրոնով՝ ուղղափառությամբ։

4. Ռումի սուլթանությունում չկար միասնական լեզու, այն ժամանակ, երբ հին ռուսական պետությունում ձևավորվել էին միասնական լեզուն և միասնական կուլտուրան։

5. Փոքր Ասիայի սելջուկ թյուրքերը XI—XIII դարերում, և նույնիսկ շատ ավելի ուշ, չունեին միասնական ցեղանուն։ Էթնիկական ինքնագիտակցությունը նստակյաց թյուրքերի մոտ փոխարինվում էր դավանական գիտակցությամբ, իսկ քոչվոր ցեղերի մոտ գերակշռում էր իրենց ցեղին պատկանելու գիտակցությունը։ Իսկ Կիևյան Ռուսիայում «ռուս ժողովուրդ», «ռուսական հող» հասկացությունները հաստատուն կերպով մտել էին գործածության մեջ և ցույց էին տալիս հին ռուսական ժողովուրդը և նրանով բնակեցված տերիտորիան։

ԳԼՈՒԽ III

ԹՈՒՐՔ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Անատոլիայի էթնիկական պատմության առանձնահատկությունները մոնղոլական տիրապետության և ֆեոդալական մասնատվածության ժամանակաշրջանում

Մոնղոլների արշավանքը քաղաքական մեծ փոփոխություններ առաջ բերեց Անատոլիայում։ Մոնղոլների կողմից Քյոսե-դաղի մոտ սելջուկյան զորքերին հասցված պարտությունից հետո (1243 թվական) Փոքր Ասիայի Սելջուկյանների պետությունը արագ անկում ապրեց և 1307 թվականին[1] վերջնականապես քայքայվեց։ Մոնղոլները անմիջապես չոչնչացրին Ռումի սուլթանությունը. սկզբում նրանք կիլիկիայի հայկական թագավորության և Տրապիզոնյան կայսրության հետ հավասար այդ սուլթանությունը ևս դրեցին միայն վասալական կախման մեջ իրենցից։ Սուլթանության տարածքում ֆեոդալական անկախ տիրույթների կազմավորման արագ պրոցեսը մոնղոլների համար շատ հեշտացրեց Սելջուկյանների ներքին գործերին միջամտելը։ Գործելով «բաժանիր, որ տիրես» սկզբունքով, նրանք հրահրում էին ֆեոդալների հակամարտությունն ու երկպառակությունները, պաշտպանում էին իրենց հավատարիմ էմիրներին, սուլթաններ էին նշանակում իրենց դրածոներին և, վերջապես, առասարակ վերացրին սուլթանությունը[1]։

Մոնղոլները հսկայական ավերածություններ պատճառեցին Փոքր Ասիային. բազմաթիվ քաղաքներ ոչնչացվեցին, տասնյակ հազարավոր բնակիչներ կոտորվեցին։ Շատ բնա-

[1] 1307 թվականը, երբ մոնղոլները խեղդամահ արեցին սելջուկյան վերջին սուլթանին, համարվում է Ռումի սուլթանության վախճանը։

կիչներ, գերազանցապես արհեստավորներ, ենթարկվեցին գերեվարության։

Արդեն XIII դարի կեսերին սելջուկյան սուլթանի տիրույթները բաժանվել էին երկու մասի. սուլթանին էին անցել Կըզըլ-Ըրմակ գետից արևմուտք ընկած հողերը, իսկ Ռումի սուլթանության արևելյան տերիտորիաները անցել էին մոնղոլական տերության։ Հետագայում Փոքր Ասիայի այս մասը մտավ Հուլաղուլյանների կամ իլխանների պետության մեջ (վերջինս 1256—1353 թվականներին, Փոքր Ասիայի արևելյան մասից բացի, իր մեջ ներառնում էր Իրանը, Աֆղանստանը, Անդրկովկասը և Իրաքը)։

Փոքր Ասիայի արևմտյան մասում սկսվեց սելջուկյան սուլթանից և անգամ մոնղոլներից անկախ ֆեոդալական-ցեղային իշխանությունների արագ կազմավորում։ Մոնղոլական արշավանքը միայն արագացրեց սելջուկյան պետության բաժանումը այդ իշխանությունների, քանի որ սուլթանության ֆեոդալական մասնատումը սկսվել էր դեռ ավելի առաջ։

Այդ պրոցեսի հետևանքով Փոքր Ասիայի արևմտյան մասում ծագեցին տասից ավելի ինքնուրույն իշխանություններ՝ ամիրայություններ կամ բեյություններ՝ Կարամանը, Գերմիյանը, Կարա-Իսան, Սարուխանը, Այդընը, Մենթեշեն, Թեքեն, Համիդը, Կաստամոնուն, Ռամազանօղլուն, Օսմանլըն և այլն։ Բոլոր այս ոչ մեծ պետական կազմավորումները ստեղծվել էին ցեղային հիմքի վրա՝ որպես քոչվոր և կիսաքոչվոր թյուրքական ցեղերի միավորումներ կառավարող տոհմի շուրջը, այսինքն՝ նրանց կազմակերպման հիմքում ընկած էր ոչ այնքան տերիտորիալ, որքան ցեղային սկզբունքը [219, էջ 12—13]։

Այսպիսով, ուժեղագույն հարված հասցվեց Սելջուկյանների օրով դեռ նոր-նոր ձևավորվող և դեռ շատ թույլ, չամրապնդված քաղաքական ու տնտեսական միասնությանը Անատոլիայում։ Իսկ դա հանդեցրեց այն բանին, որ գնալով թուլացան Փոքր Ասիայում միասնական թյուրքալեզու էթնիկական ընդհանրության կազմավորման նոր նշմարվող տենդենցները։

Բացի դրանից, էթնիկական մեծ փոփոխություններ տեղի ունեցան Անատոլիայի թյուրքական քոչվոր ցեղերի շրջանում, մասնավորապես կատարվեցին նրանց նոր վերախմբավորումներ։ Իսկ գլխավորը՝ Անատոլիան XIII դարում ընդունեց շատ նոր եկվորների՝ թյուրքերի և ոչ թյուրքերի, որոնք, փրկվելով մոնղոլական արշավանքից, փախչում էին Միջին Ասիայից և Իրանից[2]։ Այն բանից հետո, երբ մոնղոլները ջախջախեցին խորեզմշահերի պետությունը, ցեղերի մի մասը գնաց Անատոլիա՝ խորեզմցիների զորքերի մնացորդների հետ, որոնք ծառայության մտան Ռումի սուլթանի մոտ։ Այդ մասին հաղորդում են, ինչպես նշել է Պ. Վիտտեկը, ժամանակագիրներ Նեսևիին և Իբն Բիբին [527, էջ 14]։ Որպես դրա հնարավոր հետքեր, ժամանակակից Թուրքիայում կա մի գյուղ Խորղում անունով [468, էջ 282], Անատոլիայի հարավում մինչև հիմա էլ քոչվորական կյանք է վարում յուրյուքական Խորղում ցեղը [519, մաս III, էջ 30][3]։ Խորեզմցի յուրյուքները պահպանել են մարդաբանական յուրահատուկ տիպ՝ վառ արտահայտված մոնղոլոիդ տիպը, որը նրանց խիստ տարբերում է ոչ միայն թուրքերից, այլև մյուս յուրյուքներից [519, մաս III, էջ 30]։ Ս. Գ. Աղաջանովը թվարկում է թուրքմենական և օղուզական մի քանի ցեղեր, որոնք

[2] Մինչև մոնղոլական նվաճումը տեղի էր ունեցել քոչվոր ցեղերի բռնական խոշոր մի գաղթ ևս. XII դարի վերջին, երբ խորեզմշահ Թեքեշը Իրանում տապալեց սելջուկյանների դինաստիան, Սելջուկյանների կողմնակից թյուրքական ցեղերի մի մասը գնաց Անատոլիա [526, էջ 168]։ Թյուրքերի հետ միասին գնացին նաև շատ պարսիկներ, որը եղավ Ռումի Սելջուկյանների վրա իրանական ազդեցության ուժեղացման պատճառներից մեկը [526, էջ 168]։

[3] Գ. դը Ռուբրուկը հաղորդում է, որ Արաքս գետի շրջանում «նախկինում ապրում էին կորասմիններ», այսինքն՝ խորեզմցիներ [155, էջ 187]։ Բայց դրանք եղել են ավելի վաղ շրջանի եկվորներ, որոնք այստեղ հայտնվել են 1200—1220 թվականներին, այն բանից հետո, երբ Խորեզմը գրավել էր Արևմտյան Իրանը և Ադրբեջանը։ «Խորղում» ցեղանունը և տեղանունը լավ համադրվում է Խորեզմի անատոլիական թյուրքական անվան հետ, որ պահպանվել է «Ասք Մելիք Դանիշմենդի մասին» էպոսում. Արտուխին, որի մայրը եղել է գերեվարած խորեզմուհի, անվանում են «խորեզմցիների պարգև», «խորեզմցիների դուցաղն» [39, էջ 103]։

Չինգիս խանի հորդաներից փախել են Փոքր Ասիա [9, էջ 255]։ Դրանց մեջ է եղել նաև կայը ցեղը (ավելի ճիշտ, նրա մի մասը) [216, թ. 33]։ Մի քանի աղբյուրներում նշված է, որ կայըները բնակություն են հաստատել Անկարայի մոտ՝ Կարա-դաղի շրջակայքում։ Երբ մոնղոլները ամայացրին Խորասանն ու Բալխը, Մախանում ապրող օղուզները հեռացան Ադրբեջան և Անատոլիա։ Օսմանական աղբյուրներում պատմվում է նաև, որ Խորասանից եկած օղուզները փախել էին մոնղոլներից [418, էջ 199]։ Հաղորդվում է նաև, որ կարամաններն Իրանից գնացին Հարավային Անատոլիա [473, հատ. I, էջ 42—43]։ Որոշ պատմաբաններ կարամաններին համարում են աֆշար ցեղից, մյուսները՝ սալորներից [9, էջ 255]։

Ցեղերի հետ միասին Անատոլիա էին գնում նաև նստակյաց բնակիչները։ Շատ գնացին նաև մուսուլման հոգևորականներ, շեյխեր, դերվիշներ [357, էջ 300]։ XIII դարի անատոլիական մեծ բանաստեղծ Աբդալ Մուսան ծագումով Խորասանից էր, մեկ ուրիշ բանաստեղծ, Հաջի Բեկտաբը (Շերիֆ) (1247—1337) ծնվել է Նիշապուրում [511, էջ 8, 49]։

«Դիչաղ» երկրի վրա մոնղոլների կատարած արշավանքից հետո դիչաղների մի մասը ևս գաղթեց Անատոլիա կամ ծովային ճանապարհով՝ Սև ծովով, կամ ցամաքային՝ Կովկասի վրայով [526, էջ 169]։

XIII դարի երկրորդ կեսին Անատոլիա գաղթեցին նաև մոնղոլների իշխանության տակ եղած ցեղերը՝ արևելյան թյուրքերը և մի քանի զուտ մոնղոլական ցեղեր, օրինակ՝ թաթարները (կարա-թաթարները) [526, էջ 169]։ Մոնղոլական ցեղերը, սակայն, Անատոլիայում երկար չմնացին և ոչ մի էական դեր չկատարեցին էթնիկական պրոցեսներում։

XIII դարի վերջին Տիգրիսի և Եփրատի միջև ընկած հյուսիսային շրջանները քոչեց կարա-կոյունլուների թուրքմենական ուժեղ ցեղը [480, հատ. III, էջ 228], որը մինչև մոնղոլական արշավանքը ապրում էր Մավերաննահրում։

Այսպիսով, XIII դարի երկրորդ կեսին Փոքր Ասիան կարծես ստացավ նոր համալրում թյուրքական քոչվոր ցեղերով և ոչ-թյուրքական (ամենից հաճախ՝ իրանական) ծագում

ունեցող մուսուլմանական տարրերով։ Վերաբնակեցված թյուրքերի հիմնական զանգվածը կազմեցին թուրքմենները, որոնք բնակություն հաստատեցին գլխավորապես Փոքր Ասիայի արևելյան մարզերում։ Այս բանը, մասնավորապես, բացատրում է «թուրքմեն» ինքնանվանման պահպանումը ժամանակակից Թուրքիայի արևելքում ապրող թյուրքական ցեղերի մոտ, այն ժամանակ, երբ արևմտյան շրջաններում այդ ինքնանվանումը չի պահպանվել (Արևմտյան և Հարավային Անատոլիայի քոչվոր թուրքերը իրենց անվանում են «յուրյուք», «թախթաջի», բայց ոչ «թուրքմեն»)։

Թուրքմենների մեծ զանգվածի կենտրոնացումը Անատոլիայի արևելյան շրջաններում, Արևմտյան Ասիայում մոնղոլների տիրապետության անկումից հետո, XIV դարի սկզբից հանգեցրեց Կարա-կոյունլուների և Աք-կոյունլուների ցեղային մեծ միությունների կազմավորմանը։ Աք-կոյունլուների միությունը գլխավորեց բայընդըր ցեղը։ Պայքարը ցեղային այդ միությունների միջև, որը մղվում էր փոփոխական հաջողությամբ, առաջ էր բերում Արևելյան Անատոլիայի թյուրքական քոչվոր ցեղերի զգալի տեղաշարժեր։ XV դարի առաջին կեսին, երբ Իրանում իշխանությունը գրավեց կարա-կոյունլուների ցեղի դինաստիան, թուրքմենների մի մասը և Վանի, Էրզրումի ու Բիթլիսի շրջանում քոչվորական կյանք վարող և Կարա-կոյունլուների ուլուսի մեջ մտնող թյուրքական մյուս ցեղերի մի մասը Կարա-Յուսուֆի հետ միասին գնաց Իրան [526, էջ 170]։ Իսկ XV դարի երկրորդ կեսին, երբ Իրանում ամրապնդվել էր Աք-կոյունլուների դինաստիան, Էրզինջանից, Խարփութից, Դիարբեքիրից այնտեղ քոչեցին շատ թուրքմեններ՝ Աք-կոյունլու ուլուսի անդամները Ուզուն-Հասանի գլխավորությամբ։ Իսկ Կարա-կոյունլու ուլուսի մեջ մտնող ցեղերի մի մասը, Աք-կոյունլուների հալածանքներից փախչելով, բահադուրլու (բահարլու) ցեղի գլխավորությամբ վերադարձավ Անատոլիա [526, էջ 170]։

Թեմուրի 1402 թվականի արշավանքը Անատոլիայի վրա և դրա հետևանքով ֆեոդալական ու միջցեղային պայքարի սրումը հանգեցրին այն բանին, որ թյուրքական շատ ցեղեր

գնացին Ռումելիա։ Ցեղերի մի մասը (օրինակ, կարա-թաթարները) Թեմուրի հետ միասին գնացին Միջին Ասիա [526, էջ 170]։

Ինչպես արդեն նշվեց, Անատոլիայի իշխանությունները ծագել էին ցեղային հիմքի վրա։ Այսպես, Գերմիյան ամիրայությունը իր անունը ստացել էր ցեղանունից, Կարեսին կազմվել էր թուրքմեն քոչվորների առաջնորդ Կարա-Իսայի ավատից, Սարուխանը՝ թուրքմենական բեյ Սարըխանի ուղից և այլն [239, էջ 136—137]։ Փոքր Ասիայի ֆեոդալական այդպիսի ոչ մեծ պետություններից մեկն էր Օսմանլըն (Օսմանյանը)։ Այդ պետությունը ծագել էր ուջ-բեյ Էրթողրուլի (մեռել է 1281 թվականին) ուղից։ Էրթողրուլը եղել է կայը ցեղի, ավելի ճիշտ, այդ ցեղից անջատված և հետագայում տարածված մի մասի առաջնորդը [239, էջ 139]։ 1289 թվականին Ռումի սուլթանը Էրթողրուլի որդի Օսմանին շնորհեց բեյի տիտղոս, իսկ 1299 թվականին Օսմանը սկսեց արդեն գործել անկախ և իր իշխանությունը հռչակեց ինքնուրույն պետություն [164, էջ 9]։ Օսմանի անունով նրա ցեղակիցները հետագայում սկսեցին կոչվել օսմանլը, այսինքն՝ օսմանցիներ։ Օսմանը և նրա ցեղը վարում էին կիսավաչկատուն կյանք. ամռանը քոչում էին յայլաները [219, էջ 14]։ Իր որդիներին Օսմանը թողեց իբրև ժառանգություն ձիերի երամակներ և ոչխարների հոտեր՝ իր հիմնական հարստությունը [407, էջ 600]։

Այս բոլոր գաճաճ իշխանություններում, ինչպես և Սելջուկյանների պետությունում, սկզբում տիրապետում էին նահապետական-ֆեոդալական հարաբերությունները։ Այսպես, ցեղերի ավագների խորհուրդը շարունակում էր աչքի ընկնող դեր խաղալ օսմանական իշխանության կյանքում. հայտնի է, որ Օսմանը և նրա որդին ու ժառանգորդը՝ Օրխանը բեյի կոչման մեջ հաստատվում էին ուջ-բեյերի և ցեղի անվանի մարդկանց խորհրդում [219, էջ 13]։ Ուջ-բեյերը և ցեղային ավագանին, որոնք իրենց ձեռքն էին կենտրոնացրել ցեղի հիմնական հարստությունը՝ անասունները, որոշում էին պետության քաղաքականությունը, որը ուղղված էր նոր հողեր

գրավելու, հարևաններին կողոպտելու, իսկ այնուհետև՝ XIV դարի կեսերից, որ առանձնապես բնորոշ էր Օսմանական իշխանության համար, նաև հարևան ժողովուրդներին հպատակեցնելու նպատակին՝ նրանցից տուրք ստանալու համար [219, էջ 14]։ Քոչվորների դրությունը գյուղացիների և արհեստավորների դրությունից ավելի լավ էր (առանձնապես ծանր էր քրիստոնյա բնակչության դրությունը)։ Քոչվորները, որպես աշխարհազորների հիմնական մասսա, հարկվում էին միայն փոքր տուրքերով, իսկ արտոնյալ ցեղերը (առանձնապես բեյերի ջոկատների անդամները) առհասարակ ազատվում էին հարկերից ու պարհակներից։ Դա էր այն պատճառներից մեկը, որ այդ ժամանակաշրջանում դանդաղեց կամ բոլորովին դադարեց քոչվորների՝ նստակյաց կյանքի անցնելու պրոցեսը։

Ֆեոդալական-ցեղային իշխանությունների կազմավորման հետ ուժեղացավ քոչվոր ցեղերի դերը Փոքր Ասիայի քաղաքական կյանքում։ Մոնղոլները կարողացան ամրանալ միայն Արևելյան ու Կենտրոնական Անատոլիայում, բայց չկարողացան բարձրանալ լեռներն ու անցնել ծովափնյա շրջանները՝ թուրքմենական ցեղերի դիմադրության պատճառով և մի շարք դեպքերում ստիպված էին ճանաչել թուրքմենական բեյերի ինքնավարությունն ու անգամ անկախությունը [526, էջ 6—7]։ Մոնղոլները, սակայն, հաճախ նրանց դեմ ուղարկում էին պատժիչ արշավախմբեր, որը Անատոլիայում ստեղծում էր անընդմեջ պատերազմական գործողությունների իրադրություն։ Քոչվորների, ինչպես նաև քաղաքացիների ու գյուղացիների առանձին դժգոհությունն էին առաջացնում իրանական պաշտոնյաների չարաշահումները, որոնց մոնղոլները իրենց հետ բերել էին Անատոլիա [526, էջ 6]։ Նրանց կամայականությունից հարուստ շատ քաղաքացիներ փախան Սիրիա և Եգիպտոս։

Մոնղոլների տիրապետության շրջանում չդադարեցին թուրքմենական և թյուրքական այլ ցեղերի ապստամբությունները սելջուկյան սուլթանի դեմ, որը դարձել էր մոնղոլների վասալը և հարկատուն։ Այդ ապստամբություններում

առաջատար դեր էր կատարում կարաման ցեղը[4] և ուջների բեյերը [370, էջ 159, 182, 189]։ Սուլթանները մոնղոլների աջակցությամբ դաժան դատաստան էին տեսնում ապըստամբների հետ, բայց այնուամենայնիվ այդ ապստամբությունները հաճախ վերջանում էին սուլթանական և մոնղոլական զորքերի ջախջախմամբ [370, էջ 189]։ Ապստամբները մի քանի անգամ գրավեցին Կոնյան՝ 1261, 1275 և 1277 թվականներին [49, էջ 37—38]։

Այդ իրադրության մեջ, ինչպես գտնում էր վ. Ա. Գորդլևսկին, Փոքր Ասիայի թուրքմենների մեջ ծնվեց հայրենասիրության զգացումը։ Պայքարելով օտարերկրյա զավթիչների՝ մոնղոլների դեմ և տեսնելով Սելջուկյանների թուլությունն ու անգամ նրանց դավաճանությունը Անատոլիայի ընդհանուր թյուրքական շահերին, որոշ բեյեր փորձեցին իրենց վրա վերցնել Փոքր Ասիայի թյուրքական բոլոր ցեղերի իրավունքների պաշտպանությունը, կազմակերպել հակահարված մոնղոլներին, Ռումի սուլթանության մայրաքաղաքը ազատագրել օտարերկրյա քաղաքական և կուլտուրական բռնությունից [49, էջ 38]։ Այդ գործում առանձնապես մեծ հաջողության հասան կարամանի բեյերը, նրանց իշխանությունը դարձավ խոշորագույններից մեկը Փոքր Ասիայում և ամենահզորը՝ Օսմանյան իշխանության բարձրացմանը նախորդած ժամանակաշրջանում[5]։ Նրանք նույնիսկ տիրեցին Սելջուկյանների պետության մայրաքաղաքին՝ Կոնյային։ Կարամանյան բեյերի հայրենասիրությունը դրսևորվեց նաև այն բանում, որ նրանք պայքար սկսեցին և իրանական ազդեցության դեմ Փոքր Ասիայում, և պարսկերեն լեզվի դեմ՝ Սելջուկյանների կառավարչական ապարատում [49, էջ 38]։ 1327 թվականին Կոնյայում թուրքերեն լեզուն սկսել

[4] Անատոլիայի հարավում (Անթալյա վիլայեթ) մինչև հիմա էլ պահպանվել է յուրյուքների մի փոքրիկ ցեղային ենթաբաժանում, որը կրում է կարաման անունը [381, էջ 218—222]։ Հնարավոր է, որ դրանք երբեմնի հզոր ցեղի մնացորդներն են։

[5] վ. Ա. Գորդլևսկին գտնում էր, որ այս իշխանության կառավարող դինաստիայի՝ կարամանյանների հիմնադիրը եղել է իսլամ ընդունած հայ [49, էջ 98]։

էր օգտագործվել որպես պաշտոնական լեզու՝ գրասենյակային գրագրության, փաստաթղթերի և այլնի համար [344, էջ 127]: Կարամանների «ռամկական» իշխանությունը, որը գրասենյակներից դուրս վանեց պարսկերենը և այն փոխարինեց թյուրքերի լեզվով, պաշտպանում էին նաև թյուրք գյուղացիները, որոնք տառապում էին կրկնակի ճնշումից՝ Սելջուկյանների և մոնղոլների [49, էջ 38]: Ճիշտ է, հարկավոր է նշել, որ անցումը պարսկերեն լեզվից թյուրքերենին նկատվել էր դեռ առաջ: Մոնղոլների արշավանքից անմիջապես հետո թյուրքերեն սկսեց գրել Ջելալեդդին Ռումին: Եվ թեպետ նրա այդ բանաստեղծությունները մեծապես զիջում են պարսկերեն գրած նրա մյուս ստեղծագործություններին թե ձևի տեսակետից, և թե լեզվի իմացության տեսակետից (դրանք պարունակում են նույնիսկ քերականական սխալներ [511, էջ 59]), ինքը՝ այդ երևույթը շատ հատկանշական է: Դա մի պատասխան էր մոնղոլական նվաճմանը և սելջուկյան սուլթանների դավաճանությանը. մոնղոլներին ցույց տրվող դիմադրության ժողովրդական ոգին արտահայտելու ձգտում: Նրա որդին՝ Սուլթան Վելեդը նույնպես սկսել էր բանաստեղծություններ գրել թյուրքերեն, «անատոլիականաշուղական բարբառով», ինչպես գրում է թուրքական գրական հանրագիտարանը [511, էջ 92]:

Սակայն Անատոլիան միավորելու ուղղությամբ կարամանների ծավալած շարժումը, ինչպես և թյուրքերենը իրենց պետության լիիրավ լեզուն դարձնելու ձգտումը հաջողությամբ չպսակվեց: Նա հանդիպեց ֆեոդալների ու ցեղապետների մրցակցությանն ու ցեղամիջյան պայքարին[6]: Ինչպես այդ մասին գրում է Մ. Ֆ. Յրնանչը, մոնղոլների թուլանալուց և Փոքր Ասիայից հեռանալուց հետո անգամ այդ բոլոր գաճաճ պետությունները՝ բեյլիքներն ու ամիրայությունները սկսեցին կռվել միմյանց դեմ, խախտելով երկրի և «ազգի» (ավելի ճիշտ, պետք է ասել՝ Անատոլիայում նոր ձևավորվել սկսած թյուրքական էթնիկական ընդհանրության) միասնությունը: Այդ միջցեղային պայքարը տևեց երկու հարյուրամյակ, էլ ավելի ուժեղացնելով Անատոլիայի քայքայումը: Քաղաքները անկում ապրեցին, քոչվոր տարրերը ուժեղացան, սկսեցին իշխել առանձին շրջաններում [526, էջ 7]:

Այսպիսով, մոնղոլական արշավանքը և դրան հաջորդած ֆեոդալական մանրատվածության և ցեղային անջատվածության խիստ ուժեղացումը, քոչվորների՝ նստակեցության անցման դանդաղումը և նույնիսկ որոշ դեպքերում քոչվորության վերականգնումը՝ այս ամենը խիստ դանդաղեցրեց և նույնիսկ ընդհատեց էթնիկական այն պրոցեսը, որը տանում էր դեպի հին թուրք ժողովրդի կազմավորումը: Սակայն չէին ոչնչացել թյուրքերի ամուր կապերը նվաճած և յուրացրած տերիտորիաների հետ Փոքր Ասիայում, որտեղ նրանք արդեն կազմում էին ցեղալեզվական և կուլտուրական ամենախոշոր ընդհանրություններից մեկը: Դրանով իսկ ստեղծվել էին բոլոր պայմանները, ինչպես նշում է Ա. Դ. Նովիչևը, թուրքական պետության (ավելի լավ կլինի ասել՝ անատոլիական թյուրքերի պետության) վերածնման և նոր ձևերով նրա գոյության շարունակման համար [185, էջ 12]: Այլ կերպ ասած, Անատոլիայում թյուրքական միասնական էթնիկական ընդհանրության կազմավորման համար նախադրյալները պահպանվել էին: Եվ այդ ընդհանրության ծագումը խթանողի, ինչպես նաև անատոլիական բոլոր հողերը իր իշխանության տակ միավորողի դերը կոչված էր կատարելու Օսմանյան իշխանապետությունը, որը ժամանակի ընթացքում դարձավ Օսմանյան կայսրություն՝ միջնադարի ուժեղագույն տերություններից մեկը:

Օսմանական պետության բարձրացումը և թուրք ժողովրդի կազմավորումը

Բոլորովին ուժասպառ եղած Բյուզանդիայի հետ հարևանությունը նպաստում էր Օսմանական իշխանապետության ընդարձակմանը: Այդ պատճառով էլ օսմանները իրենց

6 Կարամանների իշխանությունը օսմանցիները նվաճել էին 1471 թվականին:

էքսպանսիան ուղղեցին ամենից առաջ դեպի արևմուտք։ Մինչև XIV դարի կեսերը նրանք արդեն հվաճել էին Փոքր Ասիայի ամբողջ հյուսիս-արևմուտքը՝ մինչև Մարմարա ու Սև ծովերի ափը և Դարդանելի արևելյան ափը։ XIV դարի երկրորդ կեսին—XV դարում օսմանական սուլթանները նվաճեցին Բալկանյան թերակղզին, որտեղ նրանք հանդիպեցին օսմանական պետությունից նույնպես ավելի թույլ ֆեոդալական իշխանությունների, որոնք թշնամություն էին անում միմյանց նկատմամբ և բզկտվում ներքին երկպառակություններից։ Բացի դրանից, ֆեոդալական ճնշումից տառապող բալկանյան շատ գյուղացիներ, որոնք օսմանների մասին գիտեին միայն դեսից-դենից լսելով, սկզբնական շրջանում նրանց դիմավորում էին որպես իրենց փրկարարների [164, էջ 14]։ XIV դարի վերջին տասնամյակներին հնազանդվեցին նաև Փոքր Ասիայի թյուրքական մյուս բեյությունները[7]։

Այն բանից հետո, երբ 1402 թվականին Թեմուրը ջախջախեց օսմանական բանակը, Օսմանյան պետությունը բաժանվեց մասերի. շատ բեյություններ նորից դարձան անկախ, սկսվեց միջցեղային պայքարը օսմանական գահի համար։ Բայց արդեն երկու տասնամյակ հետո օսմանները նորից սկսեցին իրականացնել Փոքր Ասիայի թյուրքական բեյությունները իրենց իշխանության տակ միավորելու քաղաքականությունը և հարևան երկրների նվաճումը։ 1453 թվականին վերցվեց Կոստանդնուպոլիսը, օսմանական սուլթանը այն դարձրեց իր մայրաքաղաքը։ XV դարի երկրորդ կեսին ավարտվեց ամբողջ Փոքր Ասիայի միավորումը Օսմանական պետության շրջանակներում. 1461 թվականին նվաճվեց Հունա-լազական Տրապիզոնյան կայսրությունը, իսկ 1471 թվականին՝ Կարամանի բեյությունը, որը նախկինում հավակնում էր իր իշխանության տակ միավորել Փոքր Ասիան։

XVI դարում Օսմանական տերությանը միացվեցին Իրաքը,

[7] Հարևան պետությունների նկատմամբ օսմանների համեմատաբար արագ հաղթանակների պատճառների մասին տե՛ս [164, էջ 14—18]։

Սիրիան, Պաղեստինը, Եգիպտոսը, Եմենը, Կիպրոսը, Թունիսը և այլ տերիտորիաներ։ Վրաստանը բաժանվեց Իրանի և օսմանների միջև (1555 թվական)։ Մի շարք պետություններ իրենց ճանաչեցին օսմանական սուլթանի վասալներ (Ղրիմի խանությունը, Մոլդավիան, Հունգարիան, Ալժիրը)։ Այսպիսով, XV—XVI դարերում նախկին Օսմանյան բեյությունը դարձավ բազմազգ Օսմանյան կայսրություն։

Օսմանյան կայսրությունում տիրապետող ժողովուրդը օսմաններն էին, կամ, ինչպես նրանց սկսել էին անվանել Բալկանների սլավոնական ժողովուրդները, ուկրաինացիներն ու ռուսները, թուրքերը։ Թուրք ժողովրդի կորիզը սկսեց կազմավորվել սկզբնական օսմանյան բեյությունում, որտեղ գերակշիռ դերը էր դրավում օսմանլը ցեղը։ Այս ցեղանունով հետագայում սկսեցին կոչվել նաև Օսմանյան տերության բոլոր թուրքերը։ Սակայն «օսմանլը» (օսմանցի կամ, ինչպես երբեմն գրում են, օսման) բառը չդարձավ ցեղանուն, թուրքերի ժողովրդական ինքնանվանում։ Սկզբում այդ բառը ցույց էր տալիս պատկանելությունն օսմանլը ցեղին կամ Օսմանի բեյությանը, իսկ հետագայում՝ Օսմանյան կայսրության հպատակությանը։ Ճիշտ է, հարևան ժողովուրդները այդ անվանումը թուրքերի նկատմամբ երբեմն օգտագործում էին որպես ցեղանուն, բայց միայն թյուրքական մյուս ժողովուրդներից տարբերելու համար։ Օրինակ, ռուսաց լեզվում, հատկապես մինչև XX դարի 20—30-ական թվականները, օգտագործվում էր օսմանցի թուրքեր կամ օսմանական թուրքեր անվանումը (իսկ մյուս թյուրքերը հաճախ անվանվում էին նույնպես թուրքեր կամ թուրք-թաթարներ, թուրքական ժողովուրդներ կամ թուրք-թաթարական ժողովուրդներ, ինչպես նաև նրանց լեզուները՝ թուրք-թաթարական բարբառներ կամ լեզուներ)։

Իսկ որպես թուրքերի ցեղանուն, որպես նրանց ժողովրդական ինքնանվանում, որը, սակայն, տարածված էր գլխավորապես գյուղացիության շրջանում, այլ ոչ թե քաղաքացիների և օսմանական հասարակության ֆեոդալական վերնախավի շրջանում, դարձյալ մնաց նրանց հին «թյուրք»

(Թուրք) ցեղանունը[8]։ Դրա պատճառը հետևյալներն էին։ Ինչպես արդեն վերևում նշվեց, «Թյուրք» ցեղանունը ընդհանուր էր Անատոլիա գաղթած թյուրքական բոլոր ցեղերի համար[9]։ Երբ քոչվոր թյուրքերի մի մասը դարձավ նըստակյաց և խառնվեց տեղական բնակչության հետ, ցեղային կապերը քայքայվեցին, աստիճանաբար մոռացվեցին նաև ցեղային անունները։ Թյուրքերի կողմից տեղական բնակիչների ասիմիլյացման պրոցեսում հաղթող էր հանդիսանում թյուրքական լեզուն։ Հոգևոր և առանձնապես նյութական կուլտուրան, ընդհակառակը, նրանք վերցնում էին բնիկներից։ Սակայն նոր կազմավորվող էթնոսը իրեն համարում էր թյուրքական, քանի որ խոսում էր թյուրքերեն լեզվով, ավելի ճիշտ՝ անատոլիական թյուրքերենի բարբառներով, և գիտակցում էր, որ իր ծագման մեջ մեծ դեր են կատարել թյուրքերը։ Բայց այս ամենը ճիշտ էր գերազանցապես գյուղացիների նկատմամբ, նստակյաց դարձած քոչվոր թյուրքերի և իսլամ ընդունած բնիկ մինչթուրքական գյուղացիների միախառնումից առաջացած թուրք գյուղացիների նկատմամբ։ Իսկ ինչ վերաբերում է քաղաքների բնակչությանը, ապա նրա ինքնանվանումը ամենից հաճախ եղել է ոչ թե էթնիկական, այլ կրոնական՝ մուսուլմաններ։ Իրեն այդպես էր անվանում նաև ֆեոդալական վերնախավը։ Բնակչության այս խմբերի շրջանում տարածված էր նաև «օսմանցի» պաշտոնական անվանումը, բայց սա ավելի հաճախ նշանակում էր «Օսմանական պետության հպատակ»։ Այս բանը տեղի էր ունենում նաև այն պատճառով, որ ինչպես քաղաքների բնակչությունը, այնպես էլ ֆեոդալական

[8] Ինչպես վերևում արդեն նշվեց, Թուրքերեն լեզվում, ինչպես նաև մի քանի այլ լեզուներում, տարբերություն չկա «Թյուրք» և «Թուրք» ցեղանունների միջև։ Թուրքերեն Թյուրք նշանակում է և Թուրք, որպես թուրքական էթնիկական ընդհանրության (ժողովրդի, ազգի) ներկայացուցիչ և Թյուրք, որպես թյուրքական ժողովուրդների ցեղա-լեզվական ընդհանրության ներկայացուցիչ։

[9] Այս ցեղանունը «իրենց» է եղել նաև Օսմանական տերության մեջ մտած մնացած բնությունների թյուրքերի համար։ Իսկ «օսմանլը» բառը նրա ցեղանվանական նշանակությամբ նրանց համար մնում էր խորթ։

վերնախավը Օսմանյան կայսրությունում հաճախ սերած է եղել ոչ թե նախկին քոչվոր թյուրքերից, այլ տեղացի իսլամացած բնակչությունից։ «Թուրք» (թյուրք) բառը օսմանական կառավարող դասակարգի ըմբռնմամբ երկար ժամանակ եղել է «գեղջուկ», «պլեբեյ» բառերի հոմանիշ. այդպես եղել է նաև Փոքր Ասիայի սելջուկյան պետությունում։ Այսպես, XVI դարի հայտնի թուրք բանաստեղծ Յահյա Բախլըջալըի ոտանավորներում պարունակվում է ծաղր «գեղջուկ» Յուրքերի նկատմամբ, մի հեգնանք, որը լի է արհամարհանքով ամեն թուրքականի նկատմամբ [511, հատ. 4, էջ 57—58]։ Ֆրանսիացի հետազոտող Մ. Գյուեն նույնիսկ XVIII դարի առաջին կեսին նշում էր, որ Թուրք նշանակում է «գյուղացի», «կոպիտ», «անտաշ» և որ այն հարցին, թե ինքը «Թուրք է թե ոչ», օսմանցին պատասխանում է՝ մուսուլման [292, հատ. I, էջ 8]։ Ավելին. անգամ XX դարի սկզբին, թուրք հետազոտող Մ. է. էրիշիրգիլի վկայությամբ, թուրք անվանում էին միայն թուրք գյուղացիներին, իսկ քաղաքի բնակիչները իրենց անվանում էին մուսուլմաններ [417, էջ 10]։

Անատոլիայի միավորումը օսմանական սուլթանի իշխանության տակ, Ստամբուլի (նախկին Կոստանդնուպոլսի) վերածումը Թուրքիայի վարչական, առևտրական, քաղաքական և կուլտուրական խոշորագույն կենտրոնի, նպաստեցին երկրի տարբեր շրջանների միջև տնտեսական, քաղաքական և կուլտուրական կապերի զարգացմանը։ Այս ամենը մերձեցնում էր թուրքերի էթնիկապես առանձին խմբերին, որոնք ծագել էին թյուրքերի և տեղացի բնակչության միախառնումից, իսկ վերջինս էլ նույնպես էթնիկապես տարբեր էր երկրի տարբեր շրջաններում, մերձեցնում էր միմյանց նաև մնացած թյուրքական քոչվոր ցեղերին, որոնք գնալով ավելի շատ էին անցնում նստակեցության և խառնվում թուրքերին ու մյուս բնակչությանը։ Ուրիշ խոսքով ասած, այդ երկու պրոցեսը, այն է, մի կողմից՝ թուրքերի առանձին խմբերի միջև տերիտորիալ տարբերությունների վերացումը և դեռևս պահպանված թյուրքական ցեղերի միջև ցեղային տարբերությունների վերացումը, և մյուս կողմից, թյուրքա-

կան ցեղերի նստակյաց դառնալը և նրանց խառնվելը թուրքերի և մյուս բնակիչների հետ, այս ամենը տանում էր դեպի թուրք ժողովրդի կազմավորումը։ XV դարի վերջին—XVI դարի առաջին կեսին կազմավորվեց թուրք ժողովուրդը՝ իր տերիտորիայով, լեզվով, տնտեսական և կուլտուրական որոշ ընդհանրությամբ։

Իհարկե, տնտեսական ներքին կապերը Անատոլիայում և Արևելյան Թրակիայում դեռ թույլ էին, քանի որ ֆեոդալիզմի սոցիալ-տնտեսական պայմանները չէին ստեղծել և չէին կարող ստեղծել այն դրսեն համապարփակ տնտեսական կապերը, որոնք ծագում են, օրինակ, կապիտալիզմի զարգացման հետ և բնորոշ են բուրժուական ազգի համար։ Ֆեոդալական էկոնոմիկան առանձնապես ուժեղ չէր զարգացնում առևտրական կապերը, որոնք ամուր էին իրենց առևտրական կենտրոններն ունեցող փոքրիկ շրջանների սահմաններում միայն։ Անատոլիայում չկար միասնական շուկա։ Գյուղացիական տնտեսությունը հիմնականում բնամթերային էր, որը հաճախ դուրս չէր գալիս անգամ տվյալ փոքրիկ շրջանի ներքին շուկան։ Բացի դրանից, մշտական տերիտորիալ կապերը ևս, առանձնապես Արևելյան Անատոլիայում, դեռ չէին հաստատվել երկրի առանձին շրջանների աշխարհագրական մեկուսացածության և քոչվորների կատարած ավազակությունների հետևանքով հաղորդակցության վատ, իսկ երբեմն նաև ոչ անվտանգ ճանապարհների պատճառով։

Գլխավորապես սոցիալ-տնտեսական բնույթի այս բոլոր գործոնները կասեցնում էին թուրքերի տերիտորիալ շատ խմբերի վերջնական միաձուլումը միասնական էթնիկական ընդհանրության մեջ, նպաստում էին քոչվոր ցեղերի անջատվածության և նրանց անդամների ցեղային էթնիկական ինքնագիտակցության պահպանմանը, խանգարում էին լեզվի բարբառային առանձնահատկությունների վերացմանը, արգելակում էին միասնական ցեղանվան տարածումը և այլն։ Այլ կերպ ասած, թուրքական էթնիկական ընդհանրությունը Անատոլիայում և Արևելյան Թրակիայում XV դարի վերջին—XVI դարում եղել է տիպիկ ֆեոդալական ժողովուրդ։

Թուրք ժողովուրդը աչքի էր ընկնում նաև մի շարք սպեցիֆիկ գծերով։ Ամենից առաջ նա իր մեջ ներառել ու աստիճանաբար ասիմիլյացրել է ոչ-թյուրքական տարասեռ բազմաթիվ էթնիկական տարրեր։

Բալկանյան մի շարք երկրների գաղութացումը թուրքերի կողմից

Վերևում արդեն ուշադրություն դարձվեց այն բանի վրա, որ թյուրքերը դեռ Անատոլիայում սելջուկյան պետության գոյության ժամանակ իրենց մեջ ներառել էին տեղական բազմաթիվ էթնիկական տարրերի (հույների, հայերի, վրացիների, քրդերի և այլն)։ Այդ պրոցեսը տեղի էր ունենում նաև Ռումի սուլթանության քայքայումից հետո առանձին իշխանապետություններում, ճիշտ է, պակաս աստիճանի հետևողականությամբ, քանի որ մոնղոլական արշավանքից հետո տեղի ունեցավ թյուրքերի քոչվորության ժամանակավոր ուժեղացում։ Թյուրքերի կողմից տեղական բնակչության առանձին խմբերի ասիմիլյացումը նոր ուժով սկսվեց Օսմանական պետությունում։ Հարկավոր է նշել, որ այդ ժամանակից սկսած ասիմիլյացման՝ իսլամացման և հետագա թուրքացման ոլորտի մեջ ընկան մասամբ նաև Բալկանների ժողովուրդները՝ սլավոնական (սերբերը, բուլղարները, խորվաթները, բոսնիացիները և այլն), ալբանները, բուն Հունաստանի և Արշիպելագի հույները, ռումինները, հունդարները և այլն։ Սուլթանների նվաճած մյուս երկրներում օսմանական ֆեոդալական վերնախավի մեջ թափանցեցին տեղացի շատ մուսուլմաններ՝ արաբներ, քրդեր և այլն։

Բալկաններում որևէ երկիր նվաճելուց հետո օսմանյան սուլթանները այնտեղ էին ուղարկում ոչ միայն սիփահիներից ու ենիչերիներից և իրենց ադմինիստրացիայի ներկայացուցիչներից կազմված զինվորական կայազորներ[10], այլև

10 Բալկանների տեղանունների մեջ պահպանվել են օսմանական զինվորական ու վարչական մի շարք տիղոսներ. չավուշ (կրտսեր սպա), կադի (մուսուլմանական դատավոր), սերքան (նետաձիգ), մյուդերրիս (մեդ-

մուսուլմանների, գլխավորապես Անատոլիայի գյուղացիների առանձին խմբեր [303, էջ 107, 123—124]։

Այս վերաբնակիչները Բալկաններում բնակություն էին հաստատում քրիստոնյա բնակչությունից անջատ՝ առանձին գյուղերում կամ քաղաքների առանձին թաղամասերում. այս բանը հաստատվում է XV դարի արխիվային փաստաթղթերով [303, էջ 126]։ Մուսուլմանների վերաբնակեցումը Անատոլիայից հետապնդում էր ստրատեգիական նպատակ՝ ամրապնդել նվաճող թուրքերի դիրքերը հնազանդեցրած երկրներում։ Հետագայում սակայն այդ մուսուլմանները, որոնց մեծ մասը թուրքեր էին, ձուլվում էին նոր միայն իսլամ ընդունած տեղի բնակիչների հետ և ասիմիլյացվում միմյանց հետ։ Ասիմիլյացման պրոցեսում հաղթում էր թուրքերեն լեզուն, բայց մշակույթի մեջ և նույնիսկ լեզվում (օրինակ, բառապաշարում) նրանք շատ բան վերցրել են տեղի մինչթուրքական բնակչությունից։ Բալկաններում այսպես գոյացան թուրք բնակչության օջախները։

Իհարկե, չարժե չափազանցնել թուրքերի կողմից բալկանյան երկրների գաղութացման աստիճանը և առավել ևս բալկանյան ժողովուրդների ասիմիլյացման աստիճանը։ Նվաճված տերիտորիայի մեծ մասում, բացառությամբ Անատոլիայից և Ստամբուլին հարող Ռումելիայի մի մասից (ներկայիս Արևելյան Թրակիայից, կամ Եվրոպական Թուրքիայից), թուրքերը եղել են լոկ օկուպանտներ։ Բալկանյան ժողովուրդները շարունակում էին ապրել շատ թե քիչ հոծ զանգվածներով։ Օսմանյան ֆեոդալները, թուրքական կայազորները և վարչական պաշտոնյաները իրենցից ներկայացնում էին օտարածին և բանակապես աննշան տարր։ Օրինակ, Մորեայում նույնիսկ XVIII դարում 400 հազար հույնի դիմաց կային ընդամենը 15—20 հազար մուսուլմաններ [165, էջ 35, 58]։ Թուրքերը որպես օկուպանտներ էին մնում նաև նվաճած ուրիշ տերիտորիաներում՝ Եգիպտոսում, Սիրիայում, Քուրդիստանում և այլն։

րնեի դասատու, աստվածաբանական աստիճաններից մեկը), դամգաջի (կնիքապահ) և այլն [303, էջ 125—126]։

Յուրյուքների դերը Ռումելիայի գաղութացման գործում

Բալկաններ էին գաղթում նաև որոշ թյուրք քոչվորներ Անատոլիայից։ Քոչվոր ցեղերը մեծ դեր կատարեցին Օսմանական պետության մեջ նրա ծագման սկզբնական շրջանում։ Քոչվոր ցեղերի ռազմական կազմակերպությունը գաղութաբնակ թուրք գյուղացիների հետ միասին եղել է Ռումելիայի թուրքական գաղութացման և հետագա մասնակի թուրքացման կարևոր գործոն։ 1352 թվականը, երբ Օրխան բեյը Դարդանելով օսմանական զորքերը փոխադրեց եվրոպական ափ, այդ գաղութացման սկիզբը եղավ։ Իսկ այդ ժամանակ օսմանական բանակում դեռ մեծ տեղ էին գրավում ցեղային աշխարհազորները։ Դուցե, մինչ այդ առանձին ցեղեր (դրանց հիմքը կազմում էին բազմաթիվ տեղական քոչվոր տարրեր կլանած թյուրքերը) արդեն սկսել էին ձևավորվել մի յուրատեսակ էթնիկական ամբողջության մեջ, որը հետագայում ստացավ յուրյուքների ցեղեր ընդհանուր անունը։ Իհարկե, դա շատ հարաբերական մի էթնիկական ընդհանրություն էր, քանի որ հենց սկզբից էլ նա բաժանված է եղել առանձին ցեղերի։ Բայց նրանց մերձեցնում էր քոչվորական տնտեսության մեջ և կենցաղում եղած ընդհանուր շատ բան[11]։

Մինչև XV դարը պատմական աղբյուրները յուրյուքների մասին ոչինչ չեն հաղորդում։ Եվ միայն XV դարում Օսմանյան կայսրության «Կանունննամե»-ում (օրենքների ժողովածուում) և օսմանական պատմաբանների աշխատություններում (Օրուչ բին Ադիլ, Աշըք-փաշա-զադե) առաջին անգամ հիշատակվում են յուրյուքները [371, էջ V. 411, էջ 3—4]։

Յուրյուքների էթնիկական ընդհանրության ձևավորման գործում ոչ պակաս նշանակություն է ունեցել նաև XV—XVIII դարերում Օսմանյան կայսրությունում քոչվոր ցեղերի ռազմա-վարչական կազմակերպության գոյությունը, որի անդամները կոչվում էին յուրյուքներ։ Մեհմեդ II Ֆաթիհ

---

11 Թեմուրի արշավանքի ժամանակ 1402 թվականին Անատոլիայից Բալկաններ քոչեցին բազմաթիվ թուրքմաններ, քրդեր և արաբներ [499, էջ 45—46]։

սուլթանի (1451—1481) «Կանուննամե»-ում կա մի հոդված, որը սահմանում է յուրյուքների իրավական դրությունն ու պարտականությունները [371, էջ V]։ Սուլեյման I Կանունիի (1520—1566) «Կանուննամե»-ում յուրյուքների մասին կան մի քանի հոդվածներ [371, էջ V]։

Ռումելիա գաղթած յուրյուքների ցեղերը վարչական տեսակետից կցված էին մի քանի տերիտորիալ միավորների՝ զեամեթ-բեյությունների, որոնց գլուխ կանգնած էին զաիմները (զինվորական խոշոր ավատատերերը), որոնք ցեղային տիտղոսով կոչվում էին նաև «սուբաշի» կամ «սյուբաշի» [427, էջ 655. 387, էջ 11], որ նշանակում էր «զորահրամանատար» (սյու—զորք, բաշ—գլուխ)։ Այս բաժանումը հենց սկզբից էլ եղել է ավելի շուտ ցեղային, քան տերիտորիալ։ Մ. Բ. Գյոքբիլգինը գտնում է, որ Քոջաջիք և Նալդյոքեն զեամեթ-բեյությունների անունները ծագել են ցեղապետներ Քոջա Խամզա և Նալբանտ Դողան անուններից։ Թեքիրդաղ զեամեթ-բեյությունը ունեցել է նաև ուրիշ անուն, որը ավելի շուտ ցեղային է՝ Կարագյոզ [427, էջ 654—655]։ Իրանում, օրինակ, կա թյուրքական կարագոզլու ցեղ։ Մինչև XV դարի կեսերը քոչվոր յուրյուքների մի քանի միավորումներ կոչվում էին ցեղապետների անուններով՝ ոմար-խանլու և յայլ-դյոքեն յուրյուքներ [427, էջ 655]։ Բուլղարական ժամանակակից Պլովդիվ քաղաքի շրջանում կային երկու փոքրիկ զեամեթ-բեյություններ՝ Ակթուզ և Օկտավ։ Ս. Զեքինթյուրքը ենթադրում է, որ այս անունները ևս ծագել են ցեղերի անուններից [402, էջ 110]։ Օրուչ բին Ադիլը հաղորդում է, որ նվաճված որոշ հողեր տրվել էին «յախշիլի և ակբաշ ժողովրդին» [219, էջ 15]։ Ակբաշը, արդեն որպես ցեղ, հետագայում հիշատակվում է նաև Ա. Ռ. Ալբընայի հրապարակած արխիվային փաստաթղթերում [371, էջ 77]։ Բալկանների տեղանունների մեջ պահպանվել են նաև թյուրքական ցեղային անուններ՝ կայը, սալուրլու, թուրքմեն, ակշակոյունլու և այլն [303, էջ 125—126]։ Այս ամենը վկայում է, որ յուրյուքները սկզբում բաժանվում էին ըստ ցեղային սկզբունքի և բնակություն էին հաստատում առանձին ցեղերով։ Այլ կերպ ասած, յուրյուքների ցեղերը (իսկ

գուցե և «յուրյուք» ինքնանվանումը) գոյություն են ունեցել օսմանների կողմից համանուն ռազմա-վարչական կազմակերպության ստեղծումից առաջ։

Բացի դրանից, XV դարում և ավելի ուշ յուրյուքների քոչվոր ցեղերը ապրում էին ոչ միայն Ռումելիայում, այլև Անատոլիայում, օրինակ, Անկարայի շրջանում (յուրյուքան-ը Անկարա)։ Նրանք չէին մտնում բալկանյան յուրյուքների ռազմական կազմակերպության մեջ և «յուրյուք» տերմինը նրանց նկատմամբ օգտագործվում էր միայն որպես ցեղանուն[12] [427, էջ 652]։ Սա հիմք է տալիս ենթադրելու, որ «յուրյուք» անունը որպես Թուրքիայի քոչվոր ցեղերի մի մասի էթնիկական անուն գոյություն է ունեցել յուրյուք ցեղերի ռազմա-վարչական կազմակերպության ստեղծումից առաջ։ Համանուն ռազմական կազմակերպությունը լոկ ամրացրեց այդ անվանումը պաշտոնական լեզվում և նպաստեց, որպեսզի այն հաստատվի որպես ցեղանուն։ Իրև օրինակ այն բանի, թե ինչպես ռազմական ցեղային կամ տերիտորիալ կազմակերպությունների անունները պատմական որոշակի պայմաններում դառնում են ցեղանուններ, կարող է ծառայել Իրանում «շահսևեններ» և Ռուսաստանում «կազակներ» անվանումների ծագման պատմությունը։ Համանման երևույթ «քուրդ» տերմինի վերաբերյալ նշում է Օ. Լ. Վիլչևսկին [35, էջ 74]։ (Յուրյուքների ծագման մասին ավելի մանրամասն տե՛ս [91, էջ 24—48])։ Արդեն այն բանից հետո, երբ յուրյուքները ձևավորվեցին որպես էթնիկական ընդհանրություն, նրանք ասիմիլյացրին էթնիկական

---

12 «Յուրյուք» ցեղանունը կարող է ծագած լինել անձնանունից, քոչվորների խումբ գլխավորած որևէ ցեղապետի անունից։ Իսկ «Յուրյուք» անձնանուն բյուրքերի մոտ եղել է։ Սելջուկյան ժամանակագրությունները հիշատակում են Ալի-Յուրյուքի մասին, որը եղել է կայը ցեղի բեյերից մեկի որդին [480, հատ. IV, էջ 197], մեկ ուրիշ անուն՝ Բոզ-Յուրյուք հանդիպում է «Դեդե Քորքուդ» էպոսում [429, էջ XIV]։ Իսկ բյուրքերի մոտ հաճախ էին դեպքերը, երբ անձնանունը դառնում է ցեղանուն. Օսման-Օսմանլը (օսմաններ, օսմանական թուրքեր), Նողայ-Նողայներ (Նողայական թաթարներ), Սելջուկ-սելջուկներ, գուցե, Ուզբեկ (խան)—ուզբեկներ և այլն։

մի քանի խմբեր։ Այսպես, Ռումելիայի գաղութացման ժամանակ յուրյուքների կազմի մեջ մտան շատ թաթարներ։ Նոր հողերը բնակեցնելու համար առաջին անգամ թաթարներին օգտագործեց Բայազիդ I Յըլդըրըմը [1389—1402]։ Դրանք հիմնականում նողայցի թաթարներն էին հարավռուսական տափաստաններից և Ղրիմից։ Յուրյուքների ռազմական կազմակերպության մեջ մտած թաթարների չորս խումբ երկար ժամանակ պահպանվում էր մեկուսացած, բայց հետագայում ասիմիլյացավ նրանց հետ [427, էջ 651, 655]։ Բայց միշտ չէ, որ միայն թյուրք քոչվորներ էին ուղարկվում նոր մարզերը։ Երբ Սուլեյման փաշան, Օրխանի հայրը, խնդրեց հորը մուսուլմաններ ուղարկել Գալիպոլի թերակղզում նոր ձեռք բերված հողերը բնակեցնելու համար, այնտեղ ուղարկվեց մի քոչվոր ցեղ Մարմարա ծովի ափի Կարեսի շրջանից։ Աշըք-փաշա-զադեի մոտ այդ ցեղը անվանված է կարաարաբ [303, էջ 122]։ Ա. Ս. Տվերիտինովայի կարծիքով, դրանք եղել են արաբներ [219, էջ 16]։

Յուրյուքների զեամեթ-բեյությունները իրենց հերթին բաժանվում էին սերասքերությունների, որոնց գլխավորում էին սերասքերները՝ զորահրամանատարները, որոնք ունեին նաև «չերիբաշի» ցեղային տիտղոսը [427, էջ 655]։ Չերիբաշի նույնպես նշանակում էր «զորահրամանատար» (չերիդորք, բաշ—գլուխ)։ Սերասքերությունները բաժանվում էին օջախների, որոնցից յուրաքանչյուրում սկզբնական շրջանում պետք է լիներ 24 չափահաս տղամարդ, իսկ XVI դարի կեսից՝ 30 տղամարդ[13]։ Օջախը ուղարկում էր մեկ զինված մարտիկ վեց ամիս ժամկետով [509, հատ. I, էջ 561, հատ. III, մ. 2, էջ 285. 402, էջ 111. 371, էջ V—VI]։ Չերիբաշիները գլխավորում էին այդ զինվորներից կազմված ջոկատները (371, էջ VI)։ Օջախի մնացած անդամները զինվորին ապահովում էին զենքով, պարենով և հագուստով։ Այդ բանը

[13] Այս դեպքում «օջախ» բառը այլևս չուներ իր սկզբնական նշանակությունը (օջախ, ծուխ, անտեսություն, տուն, ընտանիք, տոհմ) այլ ուներ ռազմա-վարչական միավորի նշանակություն։ Օրինակ, ենիչերիների օջախ (զորամաս, կորպուս) կամ սիպահիների օջախ (զինվորական ավատատերերի հնձյալ ստորաբաժանում) [426, էջ 38],

իրականացվում էր նրանցից 50-ական աքչե հավաքելու միջոցով (մոտավորապես երկու ոչխարի դին [401, էջ 509])։ Այդ կազմակերպության օգնությամբ սուլթանական կառավարությունը ձգտում էր, նախ վերահսկողության տակ առնել քոչվոր ցեղերին, իսկ երկրորդ, նրանց օգտագործել որպես զինված ուժ արտաքին ու ներքին թշնամիների դեմ։ Սոցիալական էությամբ դա ռազմա-ավատական սիստեմ էր, որ կիրառվում էր քոչվոր ցեղերի նկատմամբ։ Յուրյուքներից հավաքված հարկը (այն հավաքում էին սուբաշիները) մասամբ գնում էր պետական գանձարանը, իսկ մասամբ՝ սուբաշիների և չերիբաշիների կարիքների համար։ Սուբաշիներն ու չերիբաշիներն ունեին իրենց կցված յուրյուքներ [402, էջ 112], այսինքն՝ յուրատեսակ ծառաներ կամ «սպասավորներ ճորտերից»։

XVI դարում Ռումելիայում եղած յուրյուքների թվի մասին կարելի է դատել օջախների թվից, որոնք կազմում էին 1545 (402, էջ 112)։ Մեկ օջախում հաշվելով 30 չափահաս տղամարդ, ընդամենը բոլոր օջախներում կստանանք 46 350։ Յուրաքանչյուր չափահաս տղամարդուն ընկնում էր առնվազն հինգ մարդ՝ կանայք, ծերունիներ և երեխաներ։ Այսպիսով, ընդհանուր բնակչությունը այդ օջախներում կազմում էր մոտ 230 հազար մարդ, այսինքն՝ յուրյուքների ընդհանուր թիվը Ռումելիայում չէր անցնում 250 հազարից (եթե ավելացնենք նաև այն յուրյուքներին, որոնք իրենց ընտանիքների հետ միասին կցված էին սուբաշիներին և չերիբաշիներին, ինչպես նաև առանձին փոքր տոհմա-ցեղային ստորաբաժանումներին, որոնք չէին մտնում ռազմական կազմակերպության մեջ)[14]։

Այդ համեմատաբար ոչ մեծ թվով յուրյուքները բնակեցվեցին բավական ընդարձակ տարածքում, որը ընդգրկում էր ոչ միայն ներկայիս Եվրոպական Թուրքիան, այլև ամբողջ

[14] XVII դարում օջախների թիվը կրճատվեց մինչև 1294-ի։ Ցեղերի մի մասը քոչեց Անատոլիա, մյուս մասը դարձավ նստակյաց. ընկավ նաև յուրյուքների ռազմական կազմակերպության դերը պետության մեջ [509, հատ. III, մ. 2, էջ 285. 284, էջ 1242]։

Թրակիան և Մակեդոնիան. ըստ որում դրա հյուսիսային սահմանում յուրյուքները տարաբնակեցված էին Դանուբի երկայնքով մինչև Բենդերի և Ակկերման (Բելգորոդ-Դնեստրովսկի), իսկ հարավային սահմանում՝ մինչև Սալոնիկ [402, էջ 110]։ Ցրված լինելով տեղական ոչ բյուրք բնակչության շրջանում, որը քանակական տեսակետից խիստ գերազանցում էր յուրյուքներին, այս քոչվոր ցեղերը, բնականաբար, չկարողացան լրիվ թուրքացնել Ռումելիան, բայց, անկասկած, որոշ դեր կատարեցին նրան մասնակի թուրքացման գործում։ Յուրյուքների միախառնումը Բալկաններին տեղացի բնակչության հետ տեղի էր ունենում նրանց նրստակյաց կյանքի անցնելու պրոցեսում։ Մ. Բ. Գյուբրիլգինը նշում է, որ յուրյուքների առանձին ցեղեր դեռ XV դարի առաջին կեսին վարում էին կիսանստակյաց կյանք և զբաղվում էին երկրագործությամբ [427, էջ 653]։ Երկրագործության անցնելը հաճախ պայմանավորված էր լինում քոչվորական անասնապահության անկումով։ Սնանկացած յուրյուքները գնում էին ֆեոդալի հողը մշակելու և նրան վճարում էին հողահարկ [401, էջ 486]։ Յուրյուքների ռազմական կազմակերպության սուբաշիներն ու չերիբաշիները քոչվորների՝ նստակյաց դառնալու հետ զուգընթաց վերածվում էին ֆեոդալների, որոնք հարկ էին հավաքում նստակյաց դարձած յուրյուքներից, իսկ նրանց զեամեթ-բեյությունները և սերասքերությունները դառնում էին ֆեոդալական կալվածքներ, որոնց տեր լինելը արդեն հաճախ չէր պարտավորեցնում կատարել զինվորական ծառայություն [371, էջ 60]։ Բայց Բալկաններում շատ յուրյուքներ քոչվոր կամ կիսաքոչվոր մնացին ընդհուպ մինչև մեր օրերը, նրանց մեծ մասը համաշխարհային պատերազմից հետո վերադարձավ Անատոլիա։ Իսկ նստակյաց դարձած որոշ յուրյուքներ այդպես էլ չխառնվեցին տեղացի բնակչության և կամ Բալկաններ գաղթած թուրքերի հետ, և նույն յուրյուքներ անունով մինչև հիմա էլ ապրում են Բալկանների որոշ շրջաններում [284, էջ 1242]։

Անատոլիայի և Բալկանների տեղացի բնակչության մի մասի ասիմիլյացումը թուրքերի կողմից

Ինչպես Անատոլիայում, այնպես էլ Ռումելիայում, տեղացի բնակչության ասիմիլյացումը թուրքերի կողմից տեղի էր ունենում մի քանի ճանապարհներով։ Այդպիսի ասիմիլյացման համար սովորաբար առաջին քայլն էր լինում իսլամի ընդունումը տեղացի բնակչության մի մասի կողմից։ Իսկ իսլամացումը շատ դեպքերում վերջանում էր թուրքացմամբ։

Օսմանական երիտասարդ ֆեոդալիզմի հիմքը ռազմա-ավատական սիստեմն էր։ Բոլոր նվաճված հողերը բաժանվում էին զինվորական մանր ավատների՝ թիմարների, խոշոր ավատների՝ զեամեթների, խասերի (սուլթանի, դինաստիայի անդամների, վեզիրների, բարձր աստիճանավորների հողերի), վաքուֆների (մուսուլմանական համայնքների հողերի)։ Ավատները ֆեոդալներին տրվում էին զինվորական ծառայության դիմաց։ Ռազմա-ավատական սիստեմը չփոփոխեց օսմանական նվաճումներից առաջ հաստատված արտադրական հարաբերությունների էությունը։ Որոշ ֆեոդալների փոխարինելով նորերով, այն էլ ոչ ամենուրեք, նվաճողները պահպանեցին հիմնական արտադրող դասակարգի՝ գյուղացիության շահագործման նախկին եղանակը [165, էջ 30]։ Դա գերազանցապես բնավարձակալություն էր։

Սակայն, հարկեր վճարելու տեսակետից գյուղացիությունը հավասար պայմաններում չէր գտնվում։ Մուսուլման գյուղացիները վճարում էին հիմնական հարկը (կամ ռենտան)՝ աշարը, տասանորդական հարկը գյուղատնտեսության տարբեր մթերքներից։ Ոչ մուսուլմանները վճարում էին բարձրացած հողահարկ (խարաջ) և լրացուցիչ գլխահարկ (ջիզիե)։ Այս վերջին հարկը դրվում էր աշխատունակ տղամարդկանց վրա՝ 16 տարեկանից սկսած, փաստորեն դա փրկագին էր զինվորական ծառայությունից ազատվելու համար, քանի որ բանակում ծառայում էին հիմնականում մուսուլմանները։ Ռազմա-ավատական հողերից գանձվող հարկերը ծախսվում էին սիփահիներին պահելու համար։

Բացի դրանից, ոչ մուսուլմանները, իհարկե, վայելում էին անհամեմատ ավելի քիչ իրավունքներ, քան մուսուլմանները, որոնք մուսուլմանական ռազմա-ֆեոդալական թեոկրատիկական միապետության Օսմանական պետությունում ունեին մի շարք արտոնություններ։ Ոչ մուսուլմանները ավելի շատ էին ենթարկվում օսմանական ֆեոդալների և իշխանության օրգանների կամայականությանը՝ կեղեքումների, անմիջական կողոպուտի, վիրավորանքների, խոշտանգումների և անգամ սպանությունների։ Ոչ մուսուլմանը համարվում էր անհավատ՝ գյավուր, երկրորդ կարգի մարդ, որը փաստորեն գտնվում էր օրենքից դուրս։

Բյուզանդացի տարեգիր Դուկան գրում է, որ թուրքերը միշտ ստիպում էին Անատոլիայի քրիստոնյաներին՝ ընդունել իսլամ [411, էջ 31]։ Բայց բռնի իսլամացումից բացի կար այլ կարգի իսլամացում ևս։ Այն փաստը, որ մուսուլմանները ավելի քիչ հարկ էին վճարում, վայելում էին ավելի մեծ իրավունքներ, քան ոչ մուսուլմանները, բնականաբար, խթանում էր, որ շատ գյուղացիներ ընդունեն իսլամ։ Բացի այն բանից, որ իսլամի ընդունումը գյուղացուն խոստանում էր նյութական ու բարոյական մեծ օգուտներ, օսմանական սուլթանները դեռ յուրատեսակ պրոպագանդա էին մղում, որ կայսրությանը թշնամի պետությունների գյուղացիները ընդունեն մուսուլմանություն։ Այս տեսակետից նրանք շարունակում էին Ռումի Սելջուկյանների քաղաքականությունը։

Սուլթանները, գրում է Ռ. Ս. Աթաբինենը, պաշտպանում էին գյուղական բնակչությանը՝ ընդդեմ քրիստոնյա ֆեոդալների և վոյեվոդների։ Կային նույնիսկ մեծ վեզիրների հատուկ հրահանգներ փաշաներին՝ սահմանամերձ շրջանների կուսակալներին։ «Մեր հպատակների հետ վարվեցեք այնպես,— նշում էր Սուլեյման I Կանունին (1520—1566),— որ հարևան իշխանապետությունները նախանձեն նրանց բախտին և մեր կառավարչաձևը գերազանցեն քրիստոնյա թագավորների իշխանությունից»։ Զարմանալի չէ, որ գյուղացիների մի մասը փախչում էր օսմանցիների կողմը [249, էջ 158]։ Օսմանական աղբյուրները հաղորդում են, որ գյուղացիները ամբողջ գյուղերով ընդունում էին իսլամ։ Այսպես, XV դարի դեպքերի ժամանակակից Աշըք-փաշա-զադեի վկայությամբ, Գյոյնյուկի շրջանում մի քանի գյուղ ընդունեց իսլամ [498, էջ 43, 68]։ Քրիստոնեական եկեղեցին վարում էր այսպես ասած հակապրոպագանդա։ 1337—1340 թվականներին տարածվել էր Կոստանդնուպոլսի պատրիարքարանի դիմումը Նիկեյայի (այժմյան Իզնիկի) քրիստոնյա բնակչությանը, որով կոչ էր արվում չընդունել իսլամ [351, էջ 152]։

Նվաճված բնակչության մի մասի իսլամացման մեկ այլ գործոնն էլ այն էր, որ օսմանացիների նվաճած երկրներում տեղական ավագանիի շատ ներկայացուցիչներ անցնում էին հաղթողների կողմը և ընդունում իսլամ։ Մի շարք արիստոկրատներ, ծառայության անցնելով օսմանցիների մոտ, որպես թիմարներ և զեամեթներ ևս էին ստանում իրենց նախկին կալվածքները [249, էջ 157—158]։ Հ. Ինալչիքը օսմանական արխիվային փաստաթղթերի տվյալների հիման վրա պարզել է, որ XV դարում սուլթանների մոտ ծառայության էին անցել բազմաթիվ տեղացի ֆեոդալներ և որ քրիստոնյաները կազմում էին թիմարատերերի նշանակալի մասը նոր նվաճված հողերում։ Նախկին քրիստոնյա շատ ֆեոդալներ, ընդունելով իսլամ, դառնում էին մարզերի կառավարիչներ (սանջաք-բեյեր) [303, էջ 113—115]։

Այդ բանը նշում են նաև սովետական շատ հետազոտողներ։ Տեղացի քրիստոնյա ֆեոդալների՝ սուլթանների մոտ ծառայության անցնելը, նշում է Ա. Ս. Տվերդոխլեբովան, ուղեկցվում էր սովորաբար իսլամի ընդունմամբ։ Ծառայության էին անցնում շատ ազդեցիկ մարդիկ, օրինակ, սերբ իշխան Լազարի որդի Ստեֆանը [219, էջ 19]։ Բուլղարական բոյարների, սերբական և բոսնիական վելիկաշների նշանակալի մասը իր ֆեոդալական տիրույթներն ու իրավունքները կարողացավ փրկել իսլամի ընդունման գնով, նշում է Ի. Ս. Դոստյանը։ Նրանցից շատերը մտան Օսմանյան կայսրության ֆեոդալական դասակարգի մեջ և հետագայում ասիմիլյացվեցին թուրքերի կողմից [72, էջ 44]։

Բյուզանդացի մի քանի ֆեոդալներ, օրինակ էվրենոս և

Քյոսե Միխալ բռնակալները, դարձան օսմանական ֆեոդալներ և հսկայական կալվածքներ ստացան Բալկաններում [249, էջ 158]։

Բալկանների տեղական բնակչության հետ թուրքերի էթնիկական միախառնման մեկ ուրիշ գործոնն էլ գերիների, ստրուկների, գյուղացիների դերեվարությունն էր Անատոլիա և նրանց բնակեցումը այնտեղ։ Հաճախ, առանձին մարզերի նվաճման ժամանակ, գրում է Ա. Ս. Տվերիտինովան, վկայակոչելով Մյունեջիմ-բաշիին [475, հատ. III, 289], ամբողջ շրջանների բնակչությունը տարվում էր Անատոլիա [219, էջ 24]։ Սերբիա կատարած արշավանքից հետո, հաղորդում է բյուզանդացի ժամանակագիր Դուկան, Մեհմեդ II Ֆաթիհը (1451—1481) այնտեղ գերի վերցրած 4 հազար կանանց ու տղամարդկանց բնակեցրեց Ստամբուլի շրջակայքի գյուղերում[15] [74, էջ 409]։ Իսկ ընդամենը այդ սուլթանը Սերբիայից ու Բոսնիայից գերեվարեց մոտ 200 հազար մարդ և բնակեցրեց Փոքր Ասիայում [141, էջ 191]։ Ահա Դուկայի մեկ այլ հաղորդում ևս, որը վերաբերում է ավելի վաղ շրջանում Բալկաններում օսմանցիների հայտնվելուն, երբ նրանք այստեղ եկան որպես բյուզանդացի Հովհան Կանտակուզինի դաշնակիցներ. «Իսկ թուրքերը դադարեցնելով մարտը, գնացին գյուղերը թալանելու։ Եվ ահա նրանք Կոստանդնուպոլիս վաճառքի բշեցին՝ անթիվ-անհամար շղթայակապ մարդկանց՝ տղամարդկանց ու կանանց՝ կրծքի երեխաներով, ծաղկող պատանիների, հոգևորականների և վանականների» [282, էջ 32]։

Հ. Ինալջիքը գրում է, որ Ստամբուլում և նրա շրջակայքում գյուղացիներ էին վերաբնակեցվել ոչ միայն Սերբիայից, այլև Ալբանիայից, Մորեայից, Կաֆայից (Թեոդոսիայից)։ Մի խումբ ալբանների Մեհմեդ II-ը բնակեցրեց Տրապիզոնում [303, էջ 123—124]։

Սերբական աղբյուրները վկայություններ են պարունակում այն մասին, որ տեղացի բնակիչների մի մասին օսմանցիները դարձնում էին ստրուկներ։ Այն բանից հետո, երբ սերբական նովո Բրդո քաղաքը կամովին հանձնվեց թուրքերին (1455 թվականին), սուլթան Մեհմեդ II-ը հրամայեց կոտորել ուժեղ և առողջ տղամարդկանց, իսկ 320 պատանիների ու 700 կանանց բաժանեց իր մերձավորներին որպես ստրուկներ [167, էջ 116—117]։

XIV դարից սկսած Օսմանական պետությունում ամենալայն տարածում էր գտել ստրկավաճառությունը, որը առաջացել էր անչափ շատ գերիներ վերցնելու և մի շարք ժողովուրդների հնազանդեցնելու հետևանքով։ Անատոլիայում երևան եկան ստրկավաճառության հատուկ շուկաներ։ Ստրկավաճառները զորքերի հետ միասին գնում էին արշավանքների, որպեսզի էժան գնով գնեն վերցված գերիներին։ Ստրկավաճառությունից ստացվող մաքսը սուլթանական գանձարանի եկամուտների հոդվածներից մեկն էր [72, էջ 40]։ Ստրկավաճառությունը Օսմանյան կայսրությունում գոյություն ունեցավ շատ երկար։ Դեռ XIX դարի կեսերին Ստամբուլում կար ստրկավաճառության շուկա [334, էջ 247]։ 1909 թվականին միայն ընդունվեց մի օրենք, որը արգելում էր ստրուկների առուծախը [227, էջ 138]։

Հարկավոր է նշել, որ Բյուզանդիան ևս, ընդհուպ մինչև իր անկումը 1453 թվականին, վարում էր լայն ստրկավաճառություն, ըստ որում հաճախ ստրուկներին վաճառում էր օսմանցիներին [250, էջ 157]։

Էթնիկական միախառնումը տեղի էր ունենում նաև օսմանական բանակում՝ զինվորական ծառայության միջոցով։ Սուլթանի զորքերում, առանձնապես Օսմանական պետության բարձրացման սկզբնական շրջանում, ծառայում էին ոչ միայն թուրքեր և այլ մուսուլմաններ (արաբներ, քրդեր և այլն), այլև շատ քրիստոնյաներ։ Հաճախ դրանք հակառակորդի բանակից փախածներն էին։ Այսպես, Կոսովո պոլեի ճակատամարտում (1389 թվական) բոսնիացիները Վլադկոյի գլխավորությամբ անցան օսմանցիների կողմը։ Օսմանական ֆեոդալ և զորավար, բյուզանդական նախկին բռնակալ Էվրենոս բեյի աքընջիները (թեթև հեծելազորը) համարվեցին

[15] Ստամբուլի մոտ պահպանվել են «Բելգրադյան անտառ» (Բելգրադ օրմանը), Պոլն (Պոլյա) և այլ տեղանուններ, որոնք այդ վերաբնակեցման հնարավոր հետքերն են։

կամավորներով Բալկանների տեղացի բնակիչներից [249, էջ 69]։ XV դարի վերջին, նշում է ժամանակագիր Իդրիս Բիդլիսին, քրիստոնյաները կազմում էին օսմանական բանակի նշանակալի մասը [303, էջ 117]։ Մեհմեդ II-ի զորքում կային շատ սերբեր (սերբերի ջոկատները օսմանական զորակոչների ներքո կռվում էին դեռևս Թեմուրի զորքերի դեմ 1402 թվականին՝ Անկարայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում [250, էջ 144]), ինչպես նաև շատ բոգոմիլներ [249, էջ 159], որոնք հերետիկոսության կրոնական քողի տակ հանդես եկող բալկանյան ժողովուրդների հակաֆեոդալական և հակաբյուզանդական շարժման ներկայացուցիչներն էին։ Բոսնիայում, Սերբիայում, Մակեդոնիայում, Բուլղարիայում օսմանական բանակի մեջ էին մտել այսպես կոչված «վոյնուկները», որոնք ունեին մի շարք նույնպիսի իրավունքներ, ինչ որ սիփահիները [303, էջ 114]։ Թուրքական ամրոցներում ծառայում էին քրիստոնյա ժանդարմներ՝ մարտոլոսներ [31, հատ. II, էջ 196]։

Այս բոլորը, սակայն, անկանոն զորքեր էին։ Բայց 1361—1363 թվականներին օսմանական բանակում, ուրիշ կանոնավոր զորքերի թվում ստեղծվեց քրիստոնյա ռազմագերիներից բաղկացած առաջին հետևակային կորպուսը, որը հետագայում ստացավ «ենի չերի» (նոր զորք) անունը, որտեղից և գործածության մեջ մտավ «ենիչերիներ» բառը։ XV դարի 20-ական թվականներին ենիչերիներ հավաքագրելու համար կիրառվում էր դևշիրմե սիստեմը, երբ հավաքում էին 8-ից մինչև 20 տարեկան քրիստոնյա երեխաներին ու պատանիներին, որոնք հետագայում անցնում էին զինվորական պատրաստության, ընդունում էին իսլամ և աստիճանաբար ասիմիլյացվում թուրքերի կողմից (սկզբնական ուսուցման և դաստիարակության համար նրանց հաճախ տեղավորում էին թուրքական ընտանիքներում) [185, էջ 16]։ Ենիչերիներին սկզբում արգելում էին ամուսնանալ ընտանիք կազմել, բայց հետագայում այդ արգելքը այլևս չէր պահպանվում։ Օսմանական ռազմական նավատորմը կոմպլեկտավորվում էր գլխավորապես հույներից և լազերից, որոնք հիանալի ծովագնացներ էին։ Նույնիսկ XVIII դարում նավե-

րի անձնակազմը բաղկացած էր հույներից, և ծովային հետևակը միայն՝ թուրքերից [165, էջ 96]։

Նախկին շատ ռազմագերիներ, ստրուկներ, ենիչերիներ, իսլամ ընդունած օսմանահպատակ քրիստոնյաների երեխաներ, որոնք արժանացել էին սուլթանի վստահությանը, օսմանական բանակում և պետության մեջ նշանակվում էին ամենաբարձր պաշտոններում։ Դա կուլերի (ստրուկների) սիստեմն էր, այսինքն՝ ղուլամների և մամլյուկների սելջուկյան սիստեմը։ Կուլեր էին համարվում ընդհանրապես սուլթանի բոլոր հպատակները։ Կուլերի սիստեմը, ռազմաավատային սիստեմի հետ միասին, սուլթանին հնարավորություն էր տալիս դիմադրելու մեծատոհմիկ խոշոր ֆեոդալներին և նպաստում էր կենտրոնական իշխանության ամրապնդմանը նվաճված հողերում։ Օսմանական ֆեոդալիզմը, չնչին բացառություններով, տոհմական ժառանգական ֆեոդալական արիստոկրատիա չի ունեցել, ինչպես այդ եղել է միջնադարյան Եվրոպայում։ Սուլթանի ամեն մի հպատակ կարող էր գրավել ամենաբարձր պաշտոններ պետությունում։ Կուլերի սիստեմը առանձնապես մեծ տարածում ստացավ սուլթան Մեհմեդ II-ի ժամանակ և նրանից հետո։ Նրա մեջ շատ վեզիրներ սերում էին ստրուկներից [303, էջ 120—122]։ Կարելի է բերել մի քանի առավել վառ փաստեր, երբ նախկին ստրուկները, ենիչերիները կամ թշնամական բանակից սերած ու իսլամ ընդունած մարդիկ դառնում էին ականավոր պետական գործիչներ, աշքի ընկնող զորահրամանատարներ, գիտության ու կուլտուրայի գործիչներ։ XV դարի առաջին կեսի վեզիրներ Մահմուդ փաշան, Մուրադ փաշան, Զագանոս փաշան, Ռումի Մեհմեդ փաշան, Գեդիկ Ահմեդ փաշան, Իսահակ փաշան և ուրիշներ եղել են բյուզանդացիներ, որոնք ծառայության են մտել սուլթանի մոտ և ընդունել իսլամ [249, էջ 158]։ Ստամբուլի առաջին կադիներից (մուսուլմանական դատավորներից) մեկը՝ Մոլլա Խյուսրևը, եղել է 1396 թվականին Նիկոպոլի ճակատամարտում գերի ընկած և իսլամացած ֆրանսիացի [250, էջ 144]։ Օսմանական խոշորագույն ճարտարապետ Սինանը (1489—1588) երիտասարդ ժամանակ եղել է ենիչերի և ծագու-

մով հույն (165, էջ 463. 166, էջ 29)։ Հայտնի թուրք ծովագնաց և քարտեզագիր Փիրի Ռեիսը (մեռել է 1554 թվականին) նույնպես ծագումով եղել է հույն։ Ականավոր բանաստեղծ Իսա Նեջատին (մեռել է 1509 թվականին) եղել է Ադրիանոպոլսի գրավման ժամանակ վերցված սորուկներից, մեկ այլ բանաստեղծ՝ Յահյա Բաշլըջալըն (մեռել է 1582 թվականին) եղել է դեվշիրմեով վերցրած երեխաներից [511, հատ. 2, էջ 137, հատ. 4, էջ 57—58]։

Այս փաստերը նշել են նաև իրենք՝ սուլթանի «առաջ քաշած» մարդիկ։ Այսպես, սուլթան Մեհմեդ II-ի մեծ վեզիր, Թուրքացած ալբանացին, արքունիքին հայտնելով սուլթանի մահվան լուրը, ասում էր. «Եղել է մի հանգամանք ևս, որը նպաստել է այս (այսինքն՝ Օսմանեան։— Դ. Ե.) պետության ամրապնդմանն ու նրա ազդեցության մեծացմանը. նրանք (սուլթանները։— Դ. Ե.) իմաստուն կերպով և վարպետորեն բոլոր ցեղերից հավաքում էին այնպիսի մարդկանց, որոնք դատապարտված են գեղջկական չարքաշ կյանքի, չեն երկրպագում միաստնական աստծուն, որի մասին ավետել է մարգարեն։ Սուլթանները նրանց դարձրին բարեպաշտ ու երջանիկ, պարգևեցին նրանց աստիճաններ ու փառավոր պաշտոններ։ Այդ մարդկանցից էլ ծագում եմ ես և ինձ լսողների զգալի մասը» [282, էջ 130]։

Օսմանեան պետական գործիչների թվում շատ կային նաև ծագումով սլավոններ, այսպես կոչված Թուրքացածները (потурченец)։ Սուլթան Բայազիդ II-ի օրով (1481—1512) չորս վեզիրներ եղել են Թուրքացած սլավոններ, Սուլեյման I-ի և Սելիմ II-ի (1566—1574) օրով ինը մեծ վեզիրներից ութը եղել են Թուրքացած սլավոններ։ Նրանցից մեկը՝ Ռյուստեմ փաշան ծագումով եղել է խորվաթ։ Նշանավոր մեծ վեզիր Մեհմեդ Սոքուլլուն (Սոկոլովիչը) եղել է դեվշիրմե՝ Բոսնիայի Սոկոլ գյուղից. սկզբում նա եղել է կափուդան փաշա (ծովակալ), այնուհետև վեզիր և կայսրության փաստական կառավարիչ 1568-ից մինչև 1579 թվականը՝ Սուլեյման I-ի կամազուրկ հաջորդներ Սելիմ II-ի և Մուրադ III-ի օրով [165, էջ 464]։ XV դարի վերջին Զետայի տիրակալի որդի Յուրի Չեռնոևիչը, որը ընդունել էր իսլամ,

սուլթանից հողեր ստացավ Անատոլիայում [72, էջ 44]։ Բ. դը լա Բրոքիերը 1433 թվականին հանդիպել է Ռումելիայի բեյլերբեյի (գլխավոր բեյին, Ռումելիայի ֆեոդալների վինվորական աշխարհազորի պետին), որը եղել է նախկին սորուկ բուլղար։ XVI դարի վերջի մեծ վեզիր Մեհմեդը նույնպես եղել է բուլղար սորուկներից [72, էջ 40]։

Վերջապես, եղել է ուրիշ ժողովուրդների հետ Թուրքերի էթնիկական միախառնման մի գործոն ևս։ Նվաճված երկրների շատ կանայք ընկնում էին սուլթանի, ֆեոդալների, բարձրաստիճան պաշտոնյաների հարեմները։ Հաճախ ամենահասարակ զինվորն անգամ քրիստոնյա աղջիկներին կնության էր վերցնում։ Տարեգիր Աշըք-փաշա-զադեն, որը մասնակցել է 1438 թվականին Հունգարիայի հարավային մարզերի դեմ կազմակերպված արշավանքին, հաղորդում է, որ այդ արշավանքի ժամանակ վերցված գերիները այնքան շատ էին, որ մի զույգ կոշիկի դիմաց կարելի էր առնել գերի ընկած սորկուհի [379, էջ 125. 219, էջ 24]։ Ահա Էվլիյա Չելեբիի ավելի ուշ շրջանի մի վկայություն (1657 թվական). «Բանակավայրում (այսինքն՝ Հունգարների գումակում։— Դ. Ե.) բռնագրավված 80 հազար սայլակներում կային արևի նման փայլող գերի սորկուհիներ, որոնցից ամեն մեկը արժեր ամբողջ Ռումելիայից գանձվող խարաջին, բայց վաճառվեցին մի ծխամորճի կամ մի օքքա հացի դիմաց» [242, էջ 69]։ Սուլթանները հաճախ խրախուսում էին ամուսնությունները մուսուլմանների և գերի վերցված քրիստոնյա կանանց միջև։ Օսմանեան տարեգիրներ Աշըք-փաշա-զադեն և Քոջա Հյուսեինը պատմում են, որ մի անգամ սուլթան Օրխանը շրջում և դիտում էր նոր միայն վերցված Նիկեյա քաղաքը։ Ողբ ու կոծով նրան դիմեց կանանց մի բազմություն։ «Մեզնից շատերը,— բացականչում էին նրանք,— զոհվեցին քո զինվորների սրերից, քանի-քանիսին էլ տարավ սովն ու ժանտախտը։ Զրկանքներից ու դժբախտություններից մեր կյանքը դարձել է անտանելի»։ Այդ ժամանակ սուլթանը իր կադիներին ու սիփահիներին դիմեց հետևյալ հրամանով. «Ովքեր կարիք ունեն, թող այս կանանցից իրենց կնության վերցնեն»։ Եվ ովքեր նրանցից

կին վերցրեցին, սուլթանը նրանց տվեց տուն և նշանակեց ռոճիկ [219, էջ 23]։

Այսպիսով, օսմանացիների մոտ ևս նկատվում էր «քսենոդամիայի» (օտարամուսնության) նույն տենդենցը, ինչ որ սելջուկների մոտ։ Դա բնորոշ էր օսմանական հասարակության ինչպես վերին, այնպես էլ ստորին խավերի համար։ Օսմանական դինաստիայի անդամները Օսմանական պետության զարգացման սկզբնական շրջանում հաճախ ամուսնանում էին քրիստոնյա իշխանուհիների հետ։ Օրխան բեյի կինը եղել է Բյուզանդական իշխանուհի Թեոդորան, Մուրադ I, Բայազիդ I Յըլդըրըմ սուլթանների, Բայազիդ I-ի երկու տղաների կանայք նույնպես եղել են բյուզանդացի իշխանուհիներ։ Սուլեյման I սուլթանի սիրեցյալ կինն էր ուկրաինուհի Ռոքսոլանան, որը մեծ դեր էր կատարում քաղաքական կյանքում։ Շատ թուրքեր, ընդհուպ մինչև XVIII—XIX դարերը, հաճախ կնության էին առնում վրացի, հունգար, լեհ, ուկրաինացի, չերքեզ և այլ ստրկուհիներ [250, էջ 143. 292, հատ. I, էջ 404, հատ. II, էջ 28]։

Այսպիսի բազմազան ճանապարհներով թուրք ժողովրդի մեջ ձուլվում էին էթնիկական տարրեր խմբերի ներկայացուցիչներ։ Հ. Ինալչիքը գտնում է, որ կազմավորվող թուրք ժողովուրդը 30 տոկոսով բաղկացած էր իսլամացած տեղի բնակչությունից, իսկ 70 տոկոսը կազմում էին թյուրքերը [303, էջ 152]։ Բայց ավելի շուտ թյուրքերի տոկոսը եղել է անհամեմատ ավելի ցածր։

Թուրքերի կուլտուրայի ու լեզվի զարգացման առանձնահատկությունները XV—XVI դարերում

Անատոլիայի միավորումը սուլթանների իշխանության ներքո նպաստեց տնտեսական ու կուլտուրական կյանքի նորմալացմանը։ Աստիճանաբար ամրանում էին առևտրական կապերը։ Վերականգնվում էին մոնղոլական արշավանքի, ֆեոդալական երկպառակությունների և օսմանական նվաճման ժամանակ անկում ապրած արհեստավորական հին կենտրոնները և ծագում էին նորերը։ Պետական իշխանության ամրապնդման հետ զուգընթաց գցվում էին թուրքական դիտության, գրականության և արվեստի հիմքերը։ Սակայն օսմանցի թուրքերի կուլտուրական մակարդակը հաճախ զգալիորեն ավելի ցածր էր, քան նրանց հնազանդեցրած Փոքր Ասիայի և Բալկանների ժողովուրդներինը։ Նույնիսկ XV դարի կեսերին, երբ Օսմանական կայսրությունը ամրապնդվել էր տնտեսապես ու քաղաքականապես, թուրքերի քոչվորական կյանքի մնացուկները արգելակում էին կուլտուրայի զարգացումը [166, էջ 10]։ XV դարի կեսերին Թուրքիա այցելած եվրոպացիներից մեկը գրել է, որ թուրքերից ամբողջ սերունդներ իրենց նախնիների սովորությամբ անասուններ արածացնելուց և պահելուց բացի ուրիշ ոչ մի բանով չեն զբաղվում [136, էջ 213]։ Այդ պայմաններում ավելի բարձր կուլտուրայի յուրացումը, ինչպես նշում է Յու. Ա. Միլլերը, եղել է օրինաչափ [166, էջ 10]։

Բացի դրանից, XV—XVI դարերի թուրքական կուլտուրան կրել է նաև արտաքին ուժեղ ազդեցություններ։ Օսմանական արքունիքում մեծ տարածում էին ստացել այն ժամանակի իսլամական գիտության ու կուլտուրայի լեզուները՝ արաբերենն ու պարսկերենը։ Բարերար ներգործություն է ունեցել նաև Մերձավոր Արևելքի երկրներից և Միջին Ասիայից ականավոր շատ գիտնականների ու բանաստեղծների գտնվելը Թուրքիայում։ Օրինակ, Ուլուգբեկի աշակերտ Ալի Քուշչին, որին հալածում էին մոլեռանդ մոլլաները, Սամարղանդից փախավ Ստամբուլ, որտեղ հիմնեց աստղաբաշխների դպրոց և աստղադիտարան։ Այդ ժամանակ Ստամբուլում թարգմանվել էին հայտնի գիտնականներ Ղազվինիի, Աբու-լ Ֆիդայի, Թաբարիի երկերը տիեզերագնացության մասին և Պտղոմեոսի նշանավոր աշխարհագրությունը [166, էջ 10]։

XV դարում սկզբնավորվեց և XVI դարում ամենամեծ ծաղկման հասավ օսմանական գրականությունը, որի մեջ առաջատար տեղը գրավում էր պոեզիան. վերջինս, սակայն, գտնվում էր արաբական և պարսկական պոեզիայի ուժեղ ազդեցության տակ (նրանցից էին վերցված անգամ բանաստեղծական հիմնական ձևերը՝ գազելը, որը քնարական

ոտանավոր է տխուր բովանդակությամբ, ներբողի տիպի քասիդե բանաստեղծությունը, էպիկական կամ աստվածաբանական բնույթի պոեմը՝ մեսնեվին և այլն)։ Գրականության լեզուն շատ հեռու էր ժողովրդական խոսակցական լեզվից։

Ընդհանրապես, XV—XVI դարերում թուրքերի լեզուն դեռ վերջնականապես ձևավորված չէր։ Ժողովրդական խոսակցական թուրքերեն լեզուն բաժանվում էր մի շարք բարբառների, որոնք շատ էին տարբերվում իրարից։ Դրանց հիմքում, ինչպես արդեն նշվեց վերևում, ընկած էին թյուրքական ցեղերի բարբառները։ Բացի դրանից, այդ բարբառները, հատկապես դրանց բառապաշարը, ենթարկվել էր տեղական լեզուների զգալի ազդեցությանը։ Ըստ ոլորտի, այժմ դրանք ոչ միայն հունական, հայկական, վրացական, քրդական և փոքրասիական այլ փոխառություններ էին[16], որոնց մի մասը յուրացրել էին դեռ Ռումի սուլթանության թյուրքերը, այլև բալկանյան, գլխավորապես սլավոնական բառապաշար էր։ Թուրք ժողովրդի մեջ թափանցած սլավոնական տարրերը, բնականաբար, ազդում էին նաև թուրքերի և՛ լեզվի, և՛ կուլտուրայի վրա։ Թուրքերը շատ բան էին վերցնում նաև, անմիջականորեն շփվելով բալկանյան մյուս ժողովուրդների հետ, որոնք, որպես կանոն, սոցիալական ու կուլտուրական զարգացման մակարդակով նրանցից ավելի բարձր էին կանգնած։ Ամենից ավելի ուժեղ սլավոնական ազդեցությունը թուրքերի վրա սկսվեց այն ժամանակ, երբ նրանք նվաճեցին Սերբիան (1389 թվական) և Բուլղարիան (1393 թվական)։ Վ. Ա. Գորդլևսկին բերում է այսպիսի մի փաստ, որը ցույց է տալիս սլավոնական նշանակալի տարրերի գոյությունը Ստամբուլում՝ XV—XVI դարերում. օսմանական արքունիքում նույնիսկ մի ժամանակ իշխում էր սերբերեն լեզուն [56, էջ 10]։

Ճիշտն ասած, սլավոնական ազդեցությունը թուրքերի վրա սկսվում է ավելի վաղ շրջանում՝ Բալկանյան թերակղզու օսմանական նվաճումից էլ առաջ։ Դա սլավոնների

[16] Թուրքերենի փոխառյալ բառերի մասին մանրամասն տե՛ս V գլուխը։

ազդեցությունն էր այն թյուրքերի վրա, որոնք Փոքր Ասիա էին ընկել հարավռուսական տափաստանների և Բալկանների վրայով[17], և բուն Փոքր Ասիայի սելջուկ թյուրքերի վրա, որտեղ կային սլավոնական գաղութներ և սլավոնական վարձկան զինվորական ջոկատների բնակատեղեր։ Շատ փաստեր վկայում են, որ այդ գաղութները եղել են բավական բազմաքանակ։ 821—825 թվականների Փոքր Ասիայի ժողովրդական շարժմանը («Ֆոմա Սլավյանինի ապստամբությունը») ակտիվ մասնակցություն են ունեցել սլավոնները, որոնք հանդես են եկել հայերի, լազերի և ուրիշների հետ։ Հուստինիանոս II-ը Փոքր Ասիա էր փոխադրել սլավոնների, որոնցից VII—VIII դարերի սահմանագծում կազմավորվեց 30 հազարանոց զինվորական կորպուսը [143, էջ 113]։ 762 թվականին Փոքր Ասիա էր գաղթել սլավոնական մի գաղութ, որը բաղկացած էր մոտ 208 հազար մարդուց [143, էջ 113]։ Աղբյուրները նշում են նաև բազմաթիվ դեպքեր, երբ սլավոնական ջոկատները անցել են արաբների կողմը [143, էջ 114]։ 989 թվականին Կիևից եկած վարյագա-ռուսական մի ջոկատ օգնեց Վասիլ II-ին՝ հաղթանակ տանելու խռովարար ֆեոդալների նկատմամբ [17, էջ 20]։ Արիստակես Լաստիվերտցին վարյագա-ռուսական ջոկատները անվանում է էրուզներ (ռուսներ) և վրանգներ (վայրագներ)։ Դրանք բյուզանդական բանակի ամենաանհանգիստ ջոկատներն էին, որոնք աչքի էին ընկել սելջուկների դեմ մղված մարտերում [17, էջ 50, 100]։ X դարում Կոստանդնուպոլսում եղել է ռուսների առևտրական գաղութ։ 1018 թվականին բյուզանդացիները բազմաթիվ խռովարար բուլղարների գաղթեցրին Հայաստան[18] [143, էջ 144, 167], իսկ մինչև այդ բուլղարների հիմնական զանգվածը եղել են սլավոններ։ Աննա Կոմնինան հիշատակում է Սագուդաի գյուղը (Նիկեայից հյուսիս), որի բնակիչները եղել են սլավոններ [15, էջ 402, 615]։

[17] Օրինակ, սլավոնական «իզրա» բառը («ըզբա» ձևով) արձանագրված է «Կոդեքս կումանիկուս»-ի (XII դար) պոլովեցական լեզվում [203, հատ. I, մ. 2, էջ 1399]։

[18] Մանազկերտի ճակատամարտի նախօրյակին Վասպուրականի կառավարիչ է եղել Բուլղարի որդի Ահարոնը [17, էջ 94]։

Փոքր Ասիայի սլավոնների մասին կան Վ. Ի. Լամանսկու [141] և Պ. Խարանիսի [274] հատուկ ուսումնասիրությունները։ Անատոլիայի հյուսիս-արևմտյան մասի տեղանունների մեջ կապեր են գտնում սլավոնաբանությունների հետ. Լիբուսա (Լիբուշա, Լյուբուշա), Զագորա, Կիոս (Կիոս համեմ.՝ Կիև) [141, էջ 155—156]։

Թուրքերենի բառապաշարում կան ոչ քիչ փոխառություններ բալկանյան՝ հարավսլավոնական, հունգարերեն և ռումիներեն լեզուներից։ Այդ բառերը գերազանցապես կապված են նատակյաց երկրագործական կուլտուրայի հետ. օրինակ, սլավոնական փոխառություններն են իլբե ներքնատուն, գետնախուղ, խրճիթ), կուլուչկա (թուխս), կոլեսկա (սայլակ), խամութ (խամութ), փոպլուք (գութան), կապուսկա (ճաշատեսակ կաղամբից), բորչ (բորշչ), վիշնե (բալ). հունգարական փոխառություններ՝ պալանկա (ցանկապատ), վարոշ (փոքր քաղաք, արվարձան), կոչաշ (կառապան). ռումինական փոխառություններ՝ մասա (սեղան), սոբա (վառարան), ֆրանջոլա (բուկի), քաշեր, քաշկավալ (պանրի տեսակներ) և այլն [203, հատ. I, մ. 2, էջ 1545, հատ. II, մ. 1, էջ 981, մ. 2, էջ 1699, հատ. IV, մ. 2, էջ 1948, 1959, 2051. 31, հատ. I էջ 319, 523, հատ. II, էջ 71. 322, էջ 56]։ Շատ սլավոնաբանություններ նույնիսկ մտել են պաշտոնական օսմաներեն լեզվի մեջ, օրինակ՝ վոյվոդա (վոյեվոդա)։ Մինչև XIX դարի կեսերը այսպես էին կոչվում սանջաքների (մարզերի) կառավարիչները [308, էջ 48]։

Պաշտոնական և գրական լեզուն է եղել թուրքերեն խոսակցական լեզվից շատ հեռու «օսմաներեն լեզուն» (օսմանլըջա)։ Այդ լեզվից շատ հեռու է արատաբառ, բառապաշարը՝ հիմնականում արաբական և պարսկական[19], իսկ քերականական կառուցվածքը թեև գերազանցապես եղել է թուրքականը, բայց ունեցել է բազմաթիվ տարրեր պարսկական ու

[19] «Օսմաներեն լեզվի մեջ թափանցել էին շատ հունարանություններ։ Այսպես, Թուրքիայի XV—XVII դարերի պաշտոնական փաստաթղթերում տասնորդական հարկը ցույց տալու համար արաբերեն «ուշր» ու թուրքերեն «օնլուք» բառերի հետ օգտագործվում էր նաև հունարեն «դիմոս» բառը [217, էջ 209]։

արաբական քերականություններից։ Արաբա-պարսկական բառապաշարի գերակշռությունը և այդ երկու լեզուների քերականական ձևերի գոյությունը «օսմաներենում» բացատրվում են պատմական պատճառներով։ Արաբերեն լեզուն իր կլասիկ ձևով արդեն սելջուկյան պետության թյուրքերի համար եղել է կրոնի (սուննի աղանդի իսլամի) լեզու, նա կրոնի լեզու է եղել և Օսմանական բեյլիքությունում և Անատոլիայի մյուս բեյլիքություններում, իսկ այնուհետև նաև Օսմանյան կայսրությունում, որը մուսուլմանական ֆեոդալական-թեոկրատիկական պետությունում նրա ներթափանցման համար բացում էր հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտները։ Դարանի լեզվով ոչ միայն կատարվում էին արարողությունները մզկիթներում և կարդացվում քարոզները, նա լայնորեն օգտագործվում էր նաև մուսուլմանական դատավարության մեջ, որը հիմնված էր շարիաթի (մուսուլմանական իրավունքի) վրա, գրասենյակներում ու բանակում, դպրոցներում (մեդրեսեներում), որոնք գտնվում էին հոգևորականության տնօրինության տակ (աշխարհիկ դպրոցներ չկային)։ Պարսկերեն լեզվի ազդեցությունը ևս ըստ կրվում էր դեռ Սելջուկյանների դարաշրջանից, որոնց արքունիքում նա եղել է գրական և պաշտոնական գրավոր լեզու։ Պարսկերեն լեզվի ազդեցությունը գալիս էր նաև պարսկական պոեզիայի միջոցով, որի լավագույն նմուշներին աշխատում էին նմանվել օսմանական բանաստեղծները։

«Օսմաներեն լեզվով» էին գրում նաև XV—XVI դարերի թուրք բանաստեղծներն ու պատմագիրները։ Սակայն «օսմաներեն լեզվով» սեփական գրականության ստեղծումն անգամ այնուհանդերձ մի խոշոր առաջընթաց քայլ էր նախորդ՝ սելջուկյան դարաշրջանի համեմատությամբ, երբ գրականության մեջ (պոեզիայում և պատմական երկերում) անբաժան կերպով գերիշխում էր պարսկերեն լեզուն[20]։ Ուս-

[20] Սելջուկյանների գրական ավանդույթին հետևելով, պարսկերեն (ինչպես և արաբերեն) էին գրում օսմանական շատ բանաստեղծներ՝ Մեհմեդ Յազըջի դադեն (մեռել է 1451 թվականին), Յուսուֆ Շեհքին (XV դար), Մուսլիհիտդին Մուստաֆա էբյուլվեֆան (XV դար), Իսմաիլեդին էբուսսուուդը (1490—1574), որը հռչակ էր ստացել հենց իր արաբերեն ու պարս-

տի կարելի է համարել, որ այնպիսի բանաստեղծներ, ինչպիսիք են Նեջատին (մեռել է 1509 թվականին), Համդի Չելեբին (մեռել է 1509 թվականին), Իվազ Ջաաին (1471—1546), Բաքին (1527—1600) և ուրիշներ, ինչպես նաև XV դարի պատմագիրներ Աշըք-փաշա-զադեն և Մեհմեդ Նեշրին, որոնք գրել են «օսմաններեն լեզվով», հիմք են դրել թուրքերեն լեզվով գրականությանը: Այն ժամանակի ամենանշանավոր բանաստեղծ Բաքին (նրա լրիվ անունն է Աբդյուլբաքի Մահմուդ) փորձում էր նույնիսկ իր ոտանավորներում «օսմաններեն լեզուն» մոտեցնել թուրքերեն խոսակցական լեզվին և այդ լեզվի մեջ մտցրեց Ստամբուլի բարբառի շատ տարրեր [511, հատ. I, էջ 43—46, հատ. II, էջ 139]: Թուրքերեն խոսակցական լեզվով գրելու փորձեր կատարել են նաև XVI դարի ուրիշ բանաստեղծներ՝ Ջահրեմին, Մեհմեդ Նազմին, որոնց ոտանավորների լեզուն անվանում էին «թյուրք-ի բասիտ» (հասարակ թուրքերեն) [511, էջ 97, 136, հատ. II]: Արևելյան Անատոլիայից եկած մի քանի բանաստեղծներ էլ «օսմաններեն լեզվի» մեջ էին մտցնում արևելյան բարբառների տարրեր, որոնք մոտ էին ադրբեջաներեն լեզվին, օրինակ, Դարիրը (XV դար) [511, հատ. I, էջ 67]: Բայց այս բոլոր փորձերը այն ժամանակ հետագա զարգացում չստացան. դրա համար անհրաժեշտ պատմական պայմաններ դեռևս չկային: Գրականությունը, ինչպես և առհասարակ օսմանական ամբողջ արվեստն ու գիտությունը, ծառայում էին օսմանական հասարակության վերնախավի՝ ֆեոդալների, մուսուլմանական հոգևորականության, բարձրաստիճան պաշտոնյաների շահերին: Ժողովրդական շահերը իրենց ոտանավորներում արտահայտում էին ժողովրդական բանաստեղծները՝ աշուղները, օրինակ, Մասումին (XVI դար): Նրանք հորինում էին դեստաններ (էպիկական պոեմներ), կոշմաններ (երգիծական փոքրիկ ոտանավորներ) թուրքերեն խոսակցական բարբառներով: Բայց նրանք եղել են առանց գրի բանաստեղծներ, և նրանց ստեղծագործությունը պատկանում է ֆոլկլորին, այլ ոչ թե գրականությանը:

կերեն բանաստեղծություններով, և ուրիշներ: Իսկ XVI դարի բանաստեղծ Լեալին նույնիսկ իրեն ներկայացնում էր իբրև պարսիկ, որպեսզի ավելի մեծ շնորհների արժանանա սուլթանի արքունիքում, մինչև որ ի վերջո մերկացվեց [511, հատ. I, էջ 75, հատ. II, էջ 29, 84, 117, հատ. III, էջ 103—104, 113, հատ. IV, էջ 65]: Բարկացած Լեալին սուլթանի մասին գրեց մի երգիծական բանաստեղծություն, որի մեջ կային հետևյալ բնորոշ տողերը.

«Թե ցանկանում ես ուշեղալ պատվավոր մի տեղ,
պետք է որ լինես արաբ կամ պարսիկ»
[139, էջ 6]:

Արվեստի բոլոր տեսակներից Օսմանյան կայսրությունում XV—XVI դարերում ամենից ավելի մեծ տարածում էր գտել ճարտարապետությունը: Այդ ժամանակաշրջանի թուրքական ճարտարապետության հիմնական հուշարձանները եղել են պաշտամունքային կառուցվածքները՝ մզկիթներ, դամբարաններ, ինչպես նաև սուլթանների պալատներ: Այս շինարարության մեջ օսմանյան թուրքերը վերցրել և ավելի զարգացրել են գլխավորապես Բյուզանդիայի և սելջուկների ավանդույթները: Սուրբ Սոֆիայի բյուզանդական ուղղափառ տաճարը, որ թուրքերը Կոստանդնուպոլիսը գրավելուց հետո վերածեցին մզկիթի, մի յուրատեսակ օրինակ հանդիսացավ նոր մզկիթներ կառուցելու համար: Եվ թեպետ թուրք ճարտարապետները հաճախ ստեղծագործաբար վերամշակում էին այդ տաճարի ճարտարապետական գաղափարը, այնուամենայնիվ XV—XVI դարերում և անգամ ավելի ուշ կառուցված գրեթե բոլոր մզկիթներում երևում է մարդկային հանճարի իր հզորությամբ, գեղեցկությամբ ու ավարտվածությամբ զարմանահրաշ այդ ստեղծագործության ազդեցությունը [166, էջ 28]: Դամբարանները սովորաբար կառուցվում էին սելջուկյանների եղանակով, միայն սուր գմբեթը փոխարինվել էր կիսագնդաձև և ընդհանրապես ուրվագծատակերը դարձել էր ավելի կլորավուն, սահուն: Մեծացել էին դամբարանների չափսերը [166, էջ 34]: Կառուցվում էին նաև քարվանսարաներ, ծածկած շուկաներ, բաղնիքներ և այլն: Թուրքական բաղնիքների տիպը ստեղծվել է հին Հռոմի դարաշրջանից կառուցվող բյուզանդական հասարակական բաղնիքների անմիջական ազդեցության տակ: Դրանց ծանոթացել էին դեռ սելջուկ թյուրքերը:

Գեղարվեստական արհեստների զարգացման, ինչպես առհասարակ արհեստի մեջ մեծ դեր են կատարել տեղի բնակիչները, որոնք հաճախ պահպանած են եղել քրիստոնեական նախկին հավատը։ Ակնագործության մեջ առաջատար տեղը գրավում էին հույները, հայերը։ Զինագործները, գորգագործները, կավագործները՝ բոլորը եղել են տեղացի քրիստոնյաները (հայեր, հույներ, վրացիներ և ուրիշն.) [166 էջ 75, 77, 80]։ Այդ մասին անմիջական տեղեկություններ կան ավելի ուշ շրջանում՝ XVII դարի կեսերին էվլիյա Չելեբիի մոտ [419, հատ. III, էջ 249—251, հատ. IX, էջ 25]։

Թուրքերը գերակշռություն ունեին արհեստի միայն այն բնագավառներում, որոնք կապված էին անասնապահության՝ քոչվոր թյուրքերի ավանդական զբաղմունքի հետ։ Դրանք կաշեգործներն էին, կոշկակարները, թամբագործները, թաղիքագործները և այլն։

Օսմանցիները հաճախ վերցնում էին նաև հնազանդեցված ժողովուրդների հասարակական հարաբերությունների ձևերը, քանի որ դրանք ավելի զարգացած էին, քան թուրքականները[21]։ Այդ կապակցությամբ Ա. Ս. Տվերիտինովան բերում է շատ բնորոշ մի դեպք, որ պատմել է Աշըք-փաշազադեն.

«Գերմիյանից Օսմանին ներկայացավ մի մարդ և ասում է.

— Վաճառիր ինձ այս շուկայի մաքսը (բաջը)։

Օսմանը հարցնում է.

— Իսկ ի՞նչ է բաջը։

Մարդը պատասխանում է.

— Շուկա եկող յուրաքանչյուր մարդուց ես վարձ կվերցնեմ։

— Այդ շուկայի մարդիկ քեզ պա՞րտք են, որ նրանցից դու փող ես վերցնելու,— զարմացավ Օսմանը։

21 XV—XVI դարերի Թուրքիայի սոցիալ-տնտեսական կառուցվածքի վրա բյուզանդական ֆեոդալական հարաբերությունների, մասնավորապես բյուզանդական իրավական ինստիտուտների թողած ազդեցության մասին տե՛ս, օրինակ [218]։

— Իմ խան,— պատասխանում է մարդը,— այդպես է սովորությունը։ Բոլոր տեղերն էլ փադիշահները այդպես են պահանջում... Դա վաղուց գոյություն ունի...

... Այդ ժամանակ միջամտեցին կադիներն ու սուբաշիները, որոնք ասացին.

— Մեր տե՛ր, այդպես է բեյերի սովորությունը շուկայի նկատմամբ։ Ամեն մեկն էլ նրանց ինչ-որ բան տալիս է։

— Դե, եթե դուք այդպես եք ասում,— եզրափակեց սուլթանը,— թող այսուհետև այսպես լինի. ով շուկա գնէ բերում ու վաճառում, թող վճարի երկու աքչե, իսկ եթե չվաճառի, թող ոչինչ չվճարի [219, էջ 20. 363, էջ 19—20]։

Նույնիսկ կիսալուսինը, որ հետագայում դարձավ իսլամի խորհրդանշանը, օսմանցիները վերցրել էին բյուզանդացիներից։ Այդ խորհրդանշանը եղել է Կոստանդնուպոլսի գերբը՝ մինչև նրա գրավումը թուրքերի կողմից [250, էջ 119]։

Այնուամենայնիվ, թուրքական կուլտուրան ու արվեստը, չնայած իր էկլեկտիկականությանը, Օսմանյան կայսրության ամենամեծ վերելքի այդ ժամանակաշրջանում հասել էին հաջողությունների, աչքի էին ընկնում մեծ յուրօրինակությամբ։ Օսմանցի թուրքերը, ինչպես նրանցից առաջ սելջուկ թուրքերը, ստեղծագործաբար վերամշակելով բազմաթիվ փոխառությունները, ստեղծում էին իրենց առանձնահատուկ ոճը արվեստի և գրականության մեջ։ Այդ ժամանակաշրջանի ճարտարապետությունը տվել է մի շարք սքանչելի գլուխգործոցներ։ Օսմանական ճարտարապետներին նույնիսկ հրավիրում էին ուրիշ երկրներ. Մեծ Մոնղոլների պալատը Հընդկաստանում, մի շարք շինքեր Դելիում, Լահորում, Ագրայում կառուցվել են թուրք ճարտարապետների մասնակցությամբ[22]։ Թուրքական ռազմաշունչ երաժշտությունը վերցրել էին եվրոպական շատ ժողովուրդներ։ Անգամ օսմանական

22 Թուրք ճարտարապետ Սինանի աշխատանքները կան նաև ՍՍՀՄ տերիտորիայում։ 1552 թվականին Սինանը, Ղրիմի խան Դեվլեթ Գիրեյի հանդրանքով կառուցեց Գյուզլեվի (Եվպատորիայի) ամրոցում խան-Ջամի (այլ կերպ՝ Թաթարխան) մզկիթը։ Իր տեսքով դա նման է Ստամբուլի մզկիթներին. դրա տարբերիչ կողմերն են մասերի համամասնությունը, գեղեցիկ ձևի գմբեթը [166, էջ 102, հավ. 16]։

պոեզիան, որը գտնվում էր արաբական և պարսկական պոեզիայի մեծ ազդեցության տակ, այդ ժամանակ աչքի էր ընկնում որոշ ինքնատիպությամբ [165, էջ 53]: Թուրքական մանրանկարչական արվեստը, որ ստեղծվել էր իրանական ու ադրբեջանական վարպետների ազդեցության տակ, ինչպես նաև ոչ առանց եվրոպական ազդեցության, ունեցել է միայն իրեն հատուկ գծեր:

Ցեղերը XV—XVI դարերի թուրք ժողովրդի կազմում

XV դարի երկրորդ կեսին և XVI դարում Անատոլիայի և Ռումելիայի բնակչության զգալի մասը կազմում էին վաչկատուն և կիսավաչկատուն ցեղերը: Ռումելիայի յուրյուքներից բացի, որոնց մասին արդեն խոսեցինք վերևում, դեռևս նստակեցության չանցած քոչվորներ առանձնապես շատ կային Կենտրոնական և Հարավ-Արևելյան Անատոլիայում, որտեղ նրանք հասնում էին ամբողջ թուրք բնակչության 20 տոկոսին [185, էջ 23]: Այդ ցեղերը նստակյաց թուրքերից տարբերվում էին ոչ միայն իրենց քոչվորական կենցաղով, այլև ցեղային բարբառներով, կուլտուրայի առանձնահատկություններով: Այնուհանդերձ, նրանք ավելի մոտ էին թուրքերին, քան թյուրքական մյուս ժողովուրդներին, ուստի նրանց ընդհանուր առմամբ կարելի է անվանել թուրքական ցեղեր, չնայած նրանք պահպանել էին իրենց ինքնանվանումները՝ յուրյուքներ, թուրքմեններ, թախթաջիներ և այլն, արդեն չհոսելով ավելի փոքր տոհմա-ցեղային անունների մասին:

XV—XVI դարերում թուրքական ցեղերի մեջ տեղի ունեցան սոցիալական և էթնիկական մի շարք փոփոխություններ: Այսպես, օսմանական կանոնավոր բանակի աճման ու ուժեղացման հետ զուգընթաց ընկնում էր ցեղային աշխարհազորերի, մասնավորապես յուրյուքների ռազմական կազմակերպության նշանակությունը: XVI դարում յուրյուքների ջոկատները ավելի շատ օգտագործվում էին միայն որպես պահակազոր լեռնանցքներում, ճանապարհներին, որպես օժանդակ զորք ամրություններ, կամուրջներ կառուցելիս,

հրետանի, դինամիթերք ու պարեն փոխադրելիս և այլն: Յուրյուքների վրա դրվում էին նաև ուրիշ բնապարհակներ. նրանց ստիպում էին աշխատել հանքերում, նավաշինարաններում, նորոգել ամրոցները, մզկիթները, քարվանսարանները [371, էջ IV. 402, էջ 111. 349, էջ 201]: Նախկին տուրքերից բացի, նրանցից սկսեցին հավաքել այն հարկերը, որ գանձում էին մուսուլմանական մնացած բնակչությունից [402, էջ 115]: Արոտավայրերում յուրյուքները ենթարկվում էին տեղական իշխանությունների ճնշումներին ու կողոպուտին: Ֆեոդալները սկսել էին զավթել արոտավայրերը [48, էջ 94]:

Յուրյուքների շրջանում աճում էր դժգոհությունը. նրանք հաճախ ապստամբում էին: XVI դարի և ավելի ուշ շրջանի, ընդհուպ մինչև XVIII դարի սկզբի սուլթանական հրովարտակները վկայում են յուրյուքների ու պետության միջև եղած ֆինանսական փոխհարաբերությունների մասին, նրանց անընդմեջ հուզումների ու խռովությունների մասին, այն մասին, որ նրանք հարկադրական բնակավայրերից փախչում էին Հարավային և Արևելյան Անատոլիայի խուլ շրջանները: Դրա հետևանքը եղավ այն, որ յուրյուքների ցեղերը խառնվեցին Անատոլիայի մյուս քոչվորների, գերազանցապես քրդերի և թուրքմենների հետ, որոնք համերաշխ էին յուրյուքների հետ՝ կառավարության նկատմամբ նրանց ունեցած փոխհարաբերություններում և թաքցնում էին իրենց մոտ փախստական ու ապստամբ յուրյուքներին:

Օսմանական սուլթանների տիրապետության տարածումը դեպի Փոքր Ասիայի արևելք, նույնպես հանգեցրեց վաչկատուն ցեղերի վերաբնակեցմանը հիմնականում Իրանի և Անատոլիայի միջև ընկած տարածքը: XVI դարի առաջին կեսին շիա թուրքմենների ցեղերը մասամբ գաղթեցին Իրան, իսկ շահ Իսմայիլի կողմից հալածվող ցեղերը, ընդհակառակը, գնացին Անատոլիա [526, էջ 160—170]: Սուլթանի իշխանությունը ճանաչող ցեղերի մի մասին կառավարությունը Հարավ-Արևելյան Անատոլիայից բռնի կերպով վերաբնակեցրեց Եվրոպական Թուրքիա, ինչպես օրինակ, թեքե ցեղին [49, էջ 46] (շիիզմի լոզունգների տակ տեղի ունեցած

քոչվորների և գյուղացիների ապստամբության գլուխ կանգնած էր Հասան-օղլուն՝ թեքե ցեղից [198, էջ 254]։

Թուրքական ցեղերի հիմնական զբաղմունքը շարունակում էր մնալ քոչվորական անասնապահությունը։ Այսպես, Բոզ-Ուլուս ցեղային միավորումը XV—XVI դարերում քոչում էր Դիարբեքիր-Էրզրում շրջանների միջև ընկած տարածքում, որտեղ նրանք ունեին ամառային արոտավայրեր ու կացարաններ, և Մարդին-Տեր-էզ-Զոր շրջանների միջև, որտեղ նրանք ձմեռում էին [406, էջ 39]։ XVII դարի երկրորդ կեսին անգամ, այն ժամանակվա ֆրանսիացի ճանապարհորդ Մ. Ֆեբրի վկայությամբ, քոչերի ժամանակ «մի քանի ընտանիքների հոտերը ծածկում էին հողը երկու լյո տարածությամբ» [286, էջ 316]։ Բայց գնալով ավելի շատ ցեղեր էին անցնում նստակեցության և զբաղվում երկրագործությամբ։ Շամ-բայադի ցեղը, օրինակ, ամառանոցային վայրերի հողերում ցանում էր հացահատիկ, Ռամազանլի ուլուսի բեյդիլի ցեղը նույնպես զբաղվում էր երկրագործությամբ [408, էջ 325, 359]։

***

Այսպիսով, XV—XVI դարերի թուրքերի լեզվի, էկոնոմիկայի և կուլտուրայի ընդհանրության մասին կարելի է խոսել միայն հարաբերականորեն։

1. Թուրքական էթնիկական ընդհանրությունը, որը ձևավորվել է Անատոլիայում և Արևելյան Բրակիայում XV դարի վերջին—XVI դարի առաջին կեսին, բնութագրվում էր, ինչպես և ֆեոդալիզմի ժամանակաշրջանի ուրիշ շատ ժողովուրդներ, ներքին անտեսական կապերի թուլությամբ, միասնական շուկայի բացակայությամբ։ Դրա հետ մեկտեղ, երկրի մի շարք մարզերում (գլխավորապես Անատոլիայի արևելքում) աշխարհագրական անբարենպաստ պայմանների և հաղորդակցության անհուսալի վատ ճանապարհների հետևանքով չէին հաստատվել նաև մշտական տերիտորիալ կապեր։

2. XV—XVI դարերի (և անգամ ավելի ուշ շրջանի) թուր-

քերը չունեին միասնական ցեղանուն, միասնական ինքնանվանում։ Իրենց թուրք անվանում էին միայն թուրք գյուղացիները։ Ընդհանին, էթնիկական ինքնանվանումը, հատկապես ֆեոդալական վերնախավի մոտ, փոխարինվում էր դավանական անվանումով։ Ժողովրդական «թուրքեր» կամ նույնիսկ պաշտոնական (ըստ հպատակության) «օսմանցիներ» անվան փոխարեն օգտագործում էին կրոնական անվանումը (ըստ կրոնական համայնքի պատկանելության)՝ «մուսուլմաններ»։ Մանավանդ, որ ֆեոդալական վերնախավի մոտ, որի ներկայացուցիչները հաճախ ոչ թե սերած էին թուրքերից, այլ իսլամ ընդունած ցեղային այլ խմբերից, զարգացած չէր թուրք ժողովրդին պատկանելու զգացումը։ Այդ զգացումը փոխարինվում էր Օսմանական պետության և մուսուլմանական համայնքի գլխավորին՝ սուլթան-խալիֆին նվիրվածության զգացումով։

3. Թուրքերեն լեզուն որպես միասնական ամբողջություն դեռ վերջնականապես ձևավորված չէր։ Նա բաժանված էր բազմաթիվ բարբառների (տերիտորիալ և ցեղային), որոնք մեծ տարբերություններ ունեին իրարից։ Պաշտոնական և գրավոր գրական լեզուն այսպես կոչված օսմաներեն լեզուն էր, որը էականորեն տարբերվում էր թուրքերեն խոսակցական բարբառներից։ Հասարակ ժողովուրդը այդ լեզուն չէր հասկանում։ Կրոնի լեզուն արաբերենն էր։

4. Թուրք ժողովրդի մեջ մտնում էին բազմաթիվ ցեղեր (յուրյուքներ, թուրքմեններ և այլն), որոնք դեռ չէին անցել լրիվ կամ նույնիսկ մասնակի նստակեցության, չէին ձուլվել թուրքերի հետ և ունեին մի շարք առանձնահատկություններ կենցաղում, կուլտուրայի և լեզվի մեջ։

ԳԼՈՒԽ IV

ԹՈՒՐՔ ԱԶԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Թուրք ազգի ձևավորման ելակետը կարելի է համարել XIX դարի 30-ական թվականները: Այդ ժամանակաշրջանը բնութագրվում է այն բանով, որ Թուրքիայի գյուղատնտեսության մեջ սկսում են երևան գալ նոր արտադրական հարաբերություններ, որոնք նախադրյալներ ունեին զարգանալու և վերածվելու կապիտալիստական հարաբերությունների, ծնունդ են առնում առաջին կապիտալիստական տարրերը արդյունաբերության մեջ, աշխուժանում է ներքին և արտաքին առևտուրը: Այդ ժամանակից սկսվում է Թուրքիայի արդյունաբերական բուրժուազիայի սաղմնավորումը և առևտրական բուրժուազիայի աճը: 1834—1839 թվականներին ռեֆորմներ անցկացվեցին հողային հարաբերությունների, պետական կառուցվածքի և վարչական կառավարման մեջ, որը համապատասխանում էր ծնունդ առնող բուրժուազիայի շահերին: Իհարկե, այդ ռեֆորմները չի կարելի բուրժուական անվանել բառիս լրիվ իմաստով, նրանք եղել են շատ երկչոտ և, ամենակարևորն է, հաճախ մնում էին լոկ թղթի վրա: Սակայն, դրա հետ մեկտեղ, նրանք արտացոլում էին նաև սկսված փոփոխությունները սոցիալ-տնտեսական հարաբերություններում:

Բայց այդ ժամանակաշրջանում սկսեցին նաև նախադրյալներ ստեղծվել արևմտյան տերությունների կողմից Թուրքիայի տնտեսական և քաղաքական ստրկացման համար, որը հետագայում հանգեցրեց նրա վերածմանը կիսագաղութի: Այս երկու հակասական պրոցեսները մեծապես որոշեցին ինչպես Թուրքերի ազգային զարգացման բնույթը, այնպես էլ ընդհանրապես էթնիկական (ազգային) փոխհարաբերությունների շատ առանձնահատկություններ Օսմանյան կայսրությունում: Նախքան անմիջականորեն Թուրքերի՝

որպես ազգ ձևավորվելու պրոցեսի քննարկմանն անցնելը, արժե համառոտակի հիշեցնել Թուրքիայի պատմական զարգացման մի քանի գծեր նախորդ ժամանակաշրջանում՝ XVII—XVIII դարերում:

Թուրքիայի զարգացման առանձնահատկությունները XVII—XVIII դարերում

XVI դարում, հատկապես նրա երկրորդ կեսին, սկսվեց օսմանական ֆեոդալիզմի աստիճանական քայքայումը: Իսկ XVIII դարում սկսվեց օսմանական ռազմա-ավատական սիստեմի լիակատար ճգնաժամը:

XIV—XV դարերում Թուրք ֆեոդալները, որպես կանոն, չէին զբաղվում հողային տարածությունների տնտեսական շահագործմամբ: Նրանք հողը համարում էին որպես հարկեր հավաքելու աղբյուր, որոնք անհրաժեշտ էին զորքը պահելու համար: Հարստացման գլխավոր աղբյուրն էր նվաճված երկրների կողոպուտը՝ ռազմաավարի, ստրուկների, տուրքի ստացումը և այլն: Իրենց ամբողջ ջանքն ու եռանդը ֆեոդալներն օգտագործում էին մարտունակ բանակ ստեղծելու և ամբողջ կայսրությունում զինվորական խիստ կարգապահություն պահպանելու համար: Եվ այս տեսակետից նրանք այն ժամանակ իրենց ժամանակակից մի շարք պետություններից ավելի ուժեղ էին [164, էջ 16—17]:

Բայց արդեն այդ ժամանակաշրջանում զարգացում էին ստացել նաև հակասությունները, որոնք կային օսմանցիների ռազմա-ֆեոդալական սիստեմի հիմքում: Հարստությունների կուտակումը ֆեոդալների ձեռքում բարձրացրեց հողային սեփականության շահավետությունը: Ֆեոդալներն սկսեցին հետաքրքրություն ցուցաբերել նաև հողի տնտեսական շահագործման նկատմամբ: Շատ ավատներ սկսեցին կենտրոնանալ մեկ սեփականատիրոջ ձեռքում: Սուլթանները հողը որպես փաստական սեփականություն բաժանում էին պալատական և քաղաքացիական աստիճանավորներին: Այս ամենը ուժեղացրեց խոշոր ֆեոդալա-կալվածատիրական հողատիրությունը: Նոր ֆեոդալական-կալվածատիրական

միջնախավի համար, նախկին ռազմական ավատատերերի համեմատությամբ, հողատիրությունը դարձավ արդեն որպես հարստացման ոչ թե օժանդակ, այլ հիմնական աղբյուր։ Ֆեոդալները ուժեղացրին գյուղացիների ճնշումը, ավելացրին վարձակալության արժեքը հողի օգտագործման համար, մացնում էին կամայական ծանր տուրքեր, կոռ, գյուղացուն զրկում էին ոչ միայն հավելյալ, այլև անհրաժեշտ արդյունքի զգալի մասից։ Գյուղատնտեսությունը անկում էր ապրում, իսկ ֆեոդալները հարստանում էին [164, էջ 20—21]։ Հարստանում էին նաև մուսուլմանական հոգևորականությունը և պալատական կամարիլյան։ Կալվածատերերը փրկագնվում էին զինվորական ծառայությունից։ Միևնույն ժամանակ հնարավոր էր դարձել փողով ձեռք բերել փաշայի կամ քաղաքի կառավարչի պաշտոնը։

Սուլթանի իշխանությունը դարձավ անկայուն։ Չխոսելով արդեն կայսրության մյուս մասերի մասին, նույնիսկ Ռումելիայում և Անատոլիայում՝ օսմանական պետության այդ կենտրոնական մարզերում, փաստորեն գոյացել էին միմյանցից և կենտրոնական իշխանությունից անկախ ֆեոդալական կազմավորումներ։ Դանուբի վրա, Վիդինում, բոսնիացի ֆեոդալ Օմեր Փազվանդօղլուն, օգտագործելով բուլղարացի հայդուկ ապստամբներին, հավաքեց սեփական բանակ և դարձավ մի ամբողջ մարզի տիրակալը։ Նրա որդի Օսմանը ևս չենթարկվեց կենտրոնական կառավարությանը [165, էջ 61]։ Արևելյան Անատոլիայում իշխում էին քուրդ ֆեոդալները։ Բիթլիսի փաստական տերը քուրդ խանն էր, գրում էր XIX դարի սկզբի անգլիացի ճանապարհորդ Ջ. Մ. Քիննեյրը [308, էջ 163]։ Հյուսիս-Արևելյան Անատոլիան գտնվում էր Էրզրումի փաշայի անբաժան տիրապետության տակ։ Կենտրոնական Անատոլիայում Անկարայի, Յոզգատի, Չորումի և Ամասիայի շրջանները գտնվում էին Չափանօղլու ֆեոդալների ժառանգական տիրապետության տակ։ Արևմտյան Անատոլիայի ամբողջ էգեյան-միջերկրածովյան մասը պատկանում էր Կարաօսմանօղլուների ֆեոդալական տոհմին։ Այդ բոլոր տիրույթներում վարչական, զինվորական, դատավորական պաշտոններում մարդիկ նշանակվում էին տեղական փաշաների և ֆեոդալների ցուցումով։ Չափանները և Կարաօսմանները նույնիսկ թիմարներ ու զեամեթներ էին բաշխում իրենց անունից [165, էջ 194]։ Այս բոլոր պատճառները՝ ռազմա-ավատական սիստեմի քայքայումը, խոշոր ֆեոդալների դուրս գալը կենտրոնական կառավարության իշխանության տակից և այլն (օրինակ, janissaries-ների խռովությունները), հանգեցրին Օսմանյան կայսրության նախկին ռազմական հզորության անկմանը։

Այն ժամանակ, երբ Օսմանյան կայսրությունը ճգնաժամ էր ապրում, նրա գլխավոր ռազմական հակառակորդները ուժեղանում էին։ Եվրոպայում աճում էին նոր արտադրողական ուժեր, զարգանում էին կապիտալիստական հարաբերությունները, ձևավորվում էին ազգերը, ազգային պետությունները (միազգ կամ բազմազգ՝ տիրապետող ազգի գլխավորությամբ)։ Իսկ Օսմանյան կայսրությունում պետության ռազմական բնույթը, նվաճողների տնտեսական շահագրգռվածության բացակայությունը ազգային միավորման գործում, բնակչության էթնիկական ու կրոնական խայտաբղետությունը, այս ամենը խոչընդոտ էր հանդիսանում ոչ միայն այն բանին, որ առանձին ազգությունները միաձուլվեն մեկ ամբողջական՝ «օսմանական» ազգի մեջ, այլև այն բանին, որ իրենք՝ թուրքերը դառնան ազգ։ Անատոլիացի թուրքը նույնքան քիչ էր կապված ռումելիացի թուրքի հետ, որքան Մորեայի հույնը եգիպտոսի արաբի հետ [165, էջ 34—35]։ Ամբողջ նվաճված տերիտորիայում, բացառությամբ Անատոլիայի և Արևելյան Թրակիայի, թուրքերը շարունակում էին մնալ լոկ որպես օկուպանտներ։ XVII—XVIII դարերում նրանք սկսեցին աստիճանաբար թողնել նվաճված երկրները՝ հնազանդեցված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման հարվածների տակ և իրենց ռազմական հակառակորդներից՝ եվրոպական տերություններից կրած պարտությունների հետևանքով։

Բազմազգ Օսմանյան կայսրության փլուզումը սկսվեց թուրքերի՝ ազգ դառնալուց դեռ շատ առաջ։ Ուստի թուրքական տիրապետությունը ուրիշ ժողովուրդների նկատմամբ, որոնցից շատերը զարգանում էին թուրքերից ավելի արագ,

դարձել էր ռեակցիոն վերապրուկ։ Ինչպես հայտնի է, ազգերի ձևավորման դարաշրջանում ոչ մի ժողովուրդ չի կարող երկար ժամանակ հնազանդեցրած պահել ուրիշ ժողովուրդների։ Առավել ևս դա անհնար էր Օսմանյան կայսրությունում, որտեղ կառավարման ամբողջ սիստեմը կառուցված էր մի այնպիսի սկզբունքի վրա, որ շատ ժողովուրդներ (որոնց մի մասը սկսել էին ձևավորվել իբրև ազգեր) պետք է ստրկաբար ենթարկվեին թուրք ֆեոդալների դասակարգին։ Օսմանական ֆեոդալիզմի քայքայման տրամաբանական վախճանը պետք է լիներ այն, որ հաջորդաբար ստեղծվելու էին ազգային պետություններ, կազմավորվելու էր թուրք ազգը և դրանով իսկ Օսմանյան կայսրությունը հանգեր մի թուրքական պետության՝ թուրքական ազգային սահմանների մեջ։ Բայց այդ առանց այն էլ բարդ ճանապարհին ծագեց լրացուցիչ բարդություն՝ մեծ տերությունների միջամտությունը, որի հետևանքով ազգային պետությունների, հատկապես թուրքական պետության ստեղծումը Օսմանյան կայսրության տերիտորիայում ընթացավ դանդաղ ու հակասական կերպով։ Տերությունների միջամտությունը և նրանց մրցակցությունը «օսմանյան ժառանգության» համար մղված պայքարում հանգեցրեց այն բանին, որ Օսմանյան կայսրությունը մեկ և կես դար շարունակ դառնում էր հոգևարքի մեջ. իրենք՝ թուրքերը այդ ժամանակամիջոցում ընկան կիսագաղութային կախման մեջ, և թուրքական ազգային պետությունը ստեղծվեց միայն մեր օրերում, քեմալական ազգային-ազատագրական շարժման հետևանքով, որը ծագեց ու հաղթանակ տարավ Ռուսաստանի Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության շնորհիվ [165, էջ 74]։

Թուրք ժողովրդի մի քանի գծերը XIX դարի սկզբին

Գնահատման տվյալների համաձայն[1], թուրքերի թվաքանակը XIX դարի 30-ական թվականներին Թուրքիայի տերիտորիայում՝ նրա ժամանակակից սահմաններում կազմում էր ամբողջ բնակչության կեսից քիչ ավելին, հավասարվելով մոտավորապես 7 միլիոն մարդու։ Թուրքերից բացի, դարձյալ գնահատման տվյալներով, այն ժամանակ այնտեղ ապրում էին 2 միլիոնից ավելի հայեր, մինչև 2 միլիոն քուրդ, 1—1,5 միլիոն հույն, 200 հազար արաբ, 150 հազար լազ, 100 հազար աջարացի (վրացի մուսուլման), 100 հազար հրեա, 100 հազար ասորի, 50 հազար պոմակ և բուլղար, 30 հազար ալբանացի, 20 հազար բոսնիացի ու խորվաթ, 5 հազար սերբ և ուրիշ ավելի մանր էթնիկական խմբեր։ Այսպիսով, Թուրքիայի բնակչության ընդհանուր թվաքանակը հավասար էր 12—13 միլիոն մարդու։ Ըստ որում ազգային փոքրամասնությունները կազմում էին 5—6 միլիոն, այսինքն՝ երկրի ամբողջ բնակչության մոտ 45 տոկոսը։

Թուրքերի շրջանում պահպանվել էին ցեղային ու տերիտորիալ ազգագրական շատ խմբեր, ինչպես նաև կրոնական-աղանդավորական համայնքներ։ Նրանցից շատերը չէին գիտակցում իրենց պատկանելությունը թուրք ժողովրդին, էթնիկական տեսակետից կապված մնալով իրենց ցեղին կամ իրենց տերիտորիալ խմբին կամ թե չէ կրոնական-աղանդավորական համայնքին։ Մոտ 2 միլիոն մարդ (ամբողջ բնակչության մոտավորապես 15 տոկոսը) կազմում էին թուրքական ցեղերը՝ թուրքմենները և յուրյուքները։ Կրոնա-աղանդավորական խմբերից, որոնք լեզվով ու կուլտուրայով մոտ էին թուրքերին, բայց դեռ ամբողջովին չէին ասիմիլյացվել, կարելի է նշել թախթաջիներին, արդալներին, յեզբեկներին, կարամանլըներին, համշենցիներին, ալավիտներին և ուրիշների։

Թուրք քոչվոր ցեղերի տարաբնակեցման մեջ XVII—XVIII դարերում տեղի ունեցան որոշ փոփոխություններ։ XVII դարում սկսվեց թուրքմենների վերաբնակեցումը Անատոլիայի արևելյան շրջաններից դեպի արևմուտք, որը կատարվել էր սոցիալական պատճառներով՝ ֆեոդալների կողմից արոտավայրերի զավթումների, հարկերի ածի հետևանքով և այլն։ Այդ վերաբնակեցումը եղել է մասսայական և շարունակվել է մինչև XVIII դարի վերջը [337, էջ IX.

[1] Օսմանական մարդահամարները մուսուլմանական բնակչության կազմը ըստ ազգությունների չէին տալիս։ Քրիստոնյաները ևս հաշվի էին առնվում ըստ իրենց դավանության։

406, էջ 41—42]։ Առանձին ցեղեր հասան մինչև Էգեյան ծովի ափը [406, էջ 45]։ Հենց XVII դարից էլ Օսմանյան կայսրության պաշտոնական վավերագրերում, ինչպես նշում է Ֆ. Դեմիրբաշը, Արևմտյան և Կենտրոնական Անատոլիայի քոչվոր ցեղերը ցույց տալու համար «յուրյուք» հին տերմինի հետ միասին երևան եկավ նոր՝ «թուրքմեն» տերմինը, որը առաջ օգտագործվում էր Արևելյան և Հարավ-Արևելյան Անատոլիայի թուրք քոչվորների նկատմամբ [406, էջ 46]։ Քոչած թուրքմենները մասամբ ձուլվում էին յուրյուքների ցեղերի մեջ, ավելացնելով քոչվորների թիվը Փոքր Ասիայի այդ շրջաններում [333, էջ 125]։ Դա էր գլխավոր պատճառը, որ Արևմտյան Անատոլիայում երկար ժամանակ պահպանվեց քոչվորությունը։ XVII դարում նույնպես Իրանից Անատոլիա գաղթեցին սուննի թուրքմենները, օրինակ՝ չափանլը ցեղը, որից սերեց հետագայում Անատոլիայի ֆեոդալական ուժեղ մի տոհմ՝ Չափանօղուլլարը [526, էջ 171]։ XVIII դարում ևս թուրքմենական մի շարք ցեղեր Իրանից գաղթեցին Թուրքիա (Իրանում ներքաղաքական բարդությունների պատճառով) [526, էջ 171]։ Այդ գաղթերը ևս ավելացրին թուրք քոչվորների թիվը Թուրքիայում։

XIX դարի սկզբին թուրքական շատ ցեղեր պահպանել էին ոչ միայն վաչկատուն ապրելակերպը, այլև գրեթե անկախ էին կառավարությունից։ Թուրքմենների ցեղերը, գրել է Ջ. Մ. Քիննեյրը, իրենց հոտերն արածացնում են Սաքարյա գետի երկայնքով ընկած արոտավայրերում և հրաժարվում են ապրել գյուղերում։ Օտարներից ոչ ոքի իրենց տերիտորիան չեն թողնում. թուրքմենների կախումը կառավարությունից լոկ անվանական է [308, էջ 88]։

Թախթաջիները, որոնք թյուրքալեզու լեռնաբնակ քոչվորներ էին, կրոնով շիա մուսուլմաններ, ապրում էին Հարավային Անատոլիայում, զբաղվելով անասնապահությամբ և փայտամշակմամբ։ Ալավիտների և արդալների շրջանում ևս տարածված էր շիիզմը։ Ալավիտները նստակյաց են։ Արդալները քոչվոր էին և զբաղվում էին դարբնությամբ ու այլ արհեստներով, առանձին խմբեր հայտնի էին որպես թափառաշրջիկ երաժիշտներ։ Ջեյբեկները, որոնք Արևմտյան

Անատոլիայի լեռնաբնակ քոչվոր անասնապահների ցեղեր էին, սուննի մուսուլմաններ էին՝ շամանականության ուժեղ վերապրուկներով։ Կարամանլիները նստակյաց թուրք ուղղափառներ էին, թուրքացած հույների սերունդներ և, հավանաբար, բյուզանդացիների մոտ կատարած զինվորական ծառայության ժամանակ քրիստոնեություն ընդունած թյուրքական ցեղերի մնացորդներ։ Համշենցիները իսլամացած և թուրքացած հայերի ժառանգներ են, գերազանցապես երկրագործ գյուղացիներ։ Անգլիական հյուպատոս Վ. Ջ. Պալգրևը, որը 1869—1872 թվականներին ուսումնասիրել է Արևելյան Անատոլիայի հյուսիսային շրջանները, համշենցիների մասին գրել է հետևյալը։ Համշենի շրջանն ունի 13 190 բնակիչ, բոլորը հայեր են, բայց մեծ մասը դավանում է մուսուլմանություն։ Համշենի հայերի իսլամացումը կատարվել է աստիճանաբար և, կարծեմ, սկսվել է ամենաշատը 100 տարի սրանից առաջ (այսինքն՝ XVIII դարի վերջին երրորդում). այն շարունակվում է նաև մինչև ներկա ժամանակը [190, էջ 70]։ Ռուս հետազոտող Ի. Ն. Կազբեկը, Վ. Ջ. Պալգրևի ժամանակակիցը, նշում էր, որ թեպետ համշենցիները հիշում են իրենց հայկական ծագումը, նրանք չգիտեն նախնիների ոչ լեզուն, ոչ հավատը և խոսում են միայն թուրքերեն [114, էջ 99, 125]։

Թուրքերին, որպես տիրապետող ժողովրդի, պատկանում էին հիմնականում ֆեոդալների կառավարող դասակարգը, մուսուլմանական հոգևորականությունը, սպայությունը և աստիճանավորները։ Բայց այնուհանդերձ թուրքերի մեծ մասը կազմում էին գյուղացիները, գլխավորապես՝ երկրագործները։ XIX դարի 30-ական թվականներին թուրքերի շրջանում եղել է արհեստավորների և ինտելիգենցիայի մի համեմատաբար միջնախավ։ Թուրքերի մեջ այդ ժամանակ գրեթե չկար բուրժուազիա, նույնիսկ առևտրական, չխոսելով արդեն արդյունաբերական բուրժուազիայի մասին։ Առևտրական բուրժուազիան, ինչպես նաև արհեստավորները ներկայացված էին գերազանցապես հույներով, հայերով, հրեաներով։

Ընդհանրապես, թուրքերի տնտեսական-կուլտուրական

մակարդակը, ամբողջությամբ վերցրած, եղել է ավելի ցածր, քան ազգային շատ փոքրամասնությունների մակարդակը: Դա բացատրվում էր պատմական օբյեկտիվ գործոններով:

Նախ, քոչվոր թյուրքերը, որոնք թուրք ժողովրդի ձևավորման որոշիչ բաղադրամասն էին, անցնելով նստակեցության, պետք է յուրացնեին տեղացի ժողովուրդների՝ նախկինում իրենց անծանոթ բարձր և շատ բազմապիսի երկրագործական կուլտուրան, տնտեսության նրանց փորձը, որ մշակվել էր դարեր շարունակ և հարմարեցվել տեղի աշխարհագրական պայմաններին: Այդ յուրացումը պահանջում էր շատ ժամանակ, և թուրքերի տնտեսական-կուլտուրական զարգացումը, բնականաբար, ետ էր մնում Թուրքիայի մյուս ժողովուրդների համեմատությամբ, որոնք հին ժամանակներից սիրապետում էին տեղական տնտեսության և կուլտուրայի հմտություններին և դրանք ավելի էին զարգացնում: Օրինակ, հույն կամ հայ գյուղացու տնտեսությունը ավելի զարգացած էր (մնացած հավասար պայմաններում), քան թուրք գյուղացու համանման տնտեսությունը: Առաջիններն ունեին ավելի կատարյալ գյուղատնտեսական գործիքներ, ունեին դարեր շարունակ հանգամանորեն մշակած իրենց երկրագործական օրացուցակները և այլն: Իհարկե, այդ հանգամանքը ոչ մի չափով չի նսեմացնում թուրքերի տնտեսական-կուլտուրական նվաճումները. նրանք ստեղծել էին քոչվորական անասնապահության շատ զարգացած տիպ: Բայց այդ տիպը խիստ տարբերվում էր այն տիպից, որին նրանք սկսեցին անցնել Անատոլիայում:

Երկրորդ, թուրք ֆեոդալների իշխող դասակարգը, որոնք, որպես կանոն, սերել էին կամ նախկին մինչթուրքական ֆեոդալներից, կամ քոչվորական ավագանիից, առանձնապես աչքի էր ընկնում պարազիտային ապրելակերպով: Ֆեոդալների մեծ մասը իր համար անհամեմատ ավելի շահավետ ու «պատվավոր» զբաղմունք էր համարում կողոպտել նվաճված ժողովուրդներին, քան վարել սեփական տնտեսություն: Իսկ երբ թուրք ֆեոդալի այդ ավանդական զբաղմունքների ոլորտը սկսեց աստիճանաբար կրճատվել և նրանք սկսեցին վարել սեփական տնտեսություններ, ապա, գյուղացիներին շահագործելիս, կիրառում էին բռնության ամենապրիմիտիվ եղանակները: Այդ պատճառով էլ թուրք կալվածատերերը իրենց զարգացման մեջ ետ էին մնում մյուս երկրների ու ժողովուրդների կալվածատերերից: Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը XIX դարի կեսերի թուրք ֆեոդալին բնութագրում էին որպես «ֆեոդալիզմի ամենացածր և բարբարոսական աստիճանի վրա» կանգնած ֆեոդալի [2, էջ 6]:

Թուրքերի լեզվում մեծ տարբերություններ էին պահպանվել առանձին բարբառների միջև. թուրքերեն խոսակցական լեզուն բաժանվում էր Ստամբուլի, Իզմիրի, Անկարայի, Քոնիայի բարբառների, բալկանյան մի շարք բարբառների, Արևելյան և Հարավային Անատոլիայի բարբառների: Օրինակ, նախկին Կարամանի բեյլիքյան տերիտորիայում տարածված բարբառը XIX դարում այնքան էր տարբերվում Ստամբուլի և Իզմիրի բարբառներից, որ նկատելի էր նաև օտարերկրացիների համար [312, էջ 25]: Արտոնյալ դիրք էր գրավում Ստամբուլի բարբառը: Այդ բարբառով էր խոսում Ստամբուլի ավագանին, թուրք մտավորականությունը, կրթված սպայությունը:

Շատ էական էր տարբերությունը նաև խոսակցական ու գրավոր լեզվի միջև: Որպես գրական ու պաշտոնական լեզու շարունակում էր մնալ «օսմաներենը»: Այդ լեզուն հասկանալի էր կրթված վերնախավի համար միայն: Թուրք ժողովրդի լայն խավերը այն չէին հասկանում:

Միակ բանը, որ միավորում էր թուրքերին, իսլամն էր: Բայց այդ կրոնը արդեն խեղդում էր ազգային ինքնագիտակցության սաղմերը ինչպես թուրքերի, այնպես էլ մյուս մուսուլմանական ժողովուրդների մեջ: Նվաճված բնակչության մի մասի՝ գյուղացիների իսլամացումը, որ համեմատաբար ինտենսիվ էր XV—XVI դարերում, XVII դարից սկսեց դանդաղել, քանի որ Օսմանյան կայսրությունում ֆեոդալական շահագործման ուժեղացման կապակցությամբ այլևս առանձին նյութական խթաններ չկային հավատափոխների համար. մուսուլման գյուղացիները ևս ենթարկվում էին ֆեոդալական անողոք շահագործման: Բացի դրանից, գնալով ավելի որոշակի էր գծագրվում այն անանցանելի սահմանը

սուլթանի մուսուլմանական և ոչ մուսուլմանական հպատակների միջև, որ ստեղծել էր իսլամը: Մուսուլմանությունը ոչ միայն կրոն էր: Իսլամը թափանցել էր իր դավանողների ամբողջ կյանքի մեջ: Մուսուլմանները միավորվում էին իրար հետ և անջատվում մնացած բնակչությունից ոչ միայն կրոնական համայնքի շրջանակներով՝ որպես այդպիսին: Իսլամը ընդգրկում էր կյանքի ու գործունեության զաղափարախոսական, պետական-քաղաքական, վարչական-արքունական, ռազմական, դատական ու կենցաղային ոլորտները: Մուսուլմաններին միավորում էին ոչ միայն պաշտամունքի հաստատությունն ու սովորույթները: Մուսուլմաններն ունեին իրենց քրեական ու քաղաքացիական դատարանները, որոնք գործում էին շարիաթի հիման վրա: Այդ դատարաններում որպես վկա կարող էին հանդես գալ միայն մուսուլմանները: Մուսուլմաններն ունեին առանձին դպրոցներ: Օսմանական բանակը, վարչական ու դատական ապարատները բաղկացած էին բացառապես մուսուլմաններից: Մուսուլմանական համայնքի անդամները արտոնյալ իրավական դիրք էին գրավում կայսրությունում, իսկ ինքը՝ մուսուլմանական համայնքը կարծես մի «պետություն էր պետության մեջ»:

Կրոնական այդ անջրպետը խանդարում էր և փոխադարձ էթնիկական մերձեցմանը մուսուլմանական և ոչ մուսուլմանական ժողովուրդների միջև, դժվարացնելով, իսկ որոշ դեպքերում նաև անհնարին դարձնելով, խառը ամուսնությունները: Մուսուլմանների, քրիստոնյաների մոտ (տարբեր եկեղեցիների ներսում), հրեաների մոտ գոյություն ուներ կրոնական ներտոհմային ամուսնություն. ամուսնությունները, որպես կանոն, տեղի էին ունենում հավատակիցների միջև: Սակայն, օրինակ, մուսուլման թուրքը կարող էր կնության առնել նաև ոչ մուսուլմանուհուն, թեև դա տեղի էր ունենում համեմատաբար հազվադեպ, քանի որ հույները և հայերը, Մ. Վ. Վրոնչենկոյի վկայությամբ, այդպիսի ամուսնությունները հանդուրժում էին «միայն ծայրահեղ կարիքի, վախի կամ շահի դեպքում» [38, մ. II, էջ 153]: Հարուստ թուրքերը իրենց հարեմները համալրում էին մուսուլմանուհիների և ոչ մուսուլմանուհիների հաշվին: Բայց այնուամենայնիվ, ամենից հաճախ եթե թուրքի կին էր դառնում ոչ թրքուհին, ապա դա լինում էր քրդուհին, արաբուհին, չերքեզուհին և այլն: Բայց մուսուլմանուհին չէր կարող ամուսնանալ քրիստոնյայի կամ հրեայի հետ. այդպիսի ամուսնությունը պատժվում էր մահվամբ (եթե տղամարդը իսլամ չէր ընդունում, նրան մահապատժի էին ենթարկում) [38, մ. II, էջ 153]: Խառը ամուսնությունները այդպիսի պայմաններում չէին տանում դեպի տարբեր ժողովուրդների փոխադարձ էթնիկական մերձեցում, այլ նպաստում էին մյուս ազգային փոքրամասնությունների ասիմիլյացմանը մուսուլմանների կողմից, թեև այդ փոքրամասնությունները ասիմիլյացման ժամանակ որոշ կնիք թողնում էին մուսուլմանների կուլտուրայի վրա: Բայց քանի որ մուսուլմանները ներկայացված էին առավելապես թուրքերով, նման ասիմիլյացումը մեծ մասամբ հավասարազոր էր թուրքացմանը:

Գոյություն ուներ նաև ներտոհմային ամուսնություն, որը նույնպես նպաստում էր մյուս ժողովուրդների թուրքացմանը. թուրքը ազատ կարող էր կնության առնել և արաբուհուն, և քրդուհուն, և լազուհուն, և աջարուհուն: Բայց թրքուհին շատ հազվադեպ էր ամուսնանում մեկ ուրիշ, թեկուզև մուսուլմանական ժողովրդի ներկայացուցչի հետ: Այդ բանի մեջ, հավանաբար, արտացոլվում էին նաև թուրքերի տոհմա-ցեղային վերապրուկները, մասնավորապես ներցեղային ամուսնության մնացուկները: Ներցեղային ամուսնությունը բնորոշ է եղել նաև արաբների ու քրդերի այն մասի համար, որոնք պահպանել էին տոհմա-ցեղային բաժանումը. նրանց աղջիկները ամուսնանում էին միայն ցեղակիցների հետ: Ներցեղային ամուսնություն ունեին նաև թուրքական ցեղերը [433, էջ 41, 73]:

Այսպիսով, ոչ մուսուլմանական բնակչության իսլամացումը XIX դարում տեղի էր ունենում, որպես կանոն, մուսուլմանների և ոչ մուսուլմանների խառը ամուսնությունների հաշվին: Իսկ իսլամացման հիմնական պատճառը, որը գործում էր Օսմանյան կայսրության վերելքի ժամանակաշրջանում, ինչպես վերևում նշվեց, գրեթե վերացավ հավատափոխների համար նյութական հատուկ շահերի բացակա-

յության պատճառով։ Ավելին, ոչ մուսուլմանների հիմնական զանգվածները՝ հայերը, հույները, սլավոնները, առանձնապես, երբ նրանք ապրում էին խոշոր և հոծ խմբերով, սկսել էին համառորեն դիմադրել իսլամացմանը։ Դա, նախ, մի յուրատեսակ բողոք էր ուժեղացած տնտեսական ճնշման դեմ, մուսուլմանների հետ իրենց ոչ իրավահավասար իրավական դրության դեմ։ Երկրորդ, այդ ժողովուրդները գնալով ավելի շատ էին գիտակցում, որ իրենք ունեն անհամեմատ ավելի հին և բարձր կուլտուրա, քան իրենց կեղեքողները։ Երրորդ, սկսվեց նրանց ազգային ինքնագիտակցության աճը, իսկ ոչ մուսուլմանական ժողովուրդների ազգային կուլտուրայի կենտրոնատեղն ու պահապանը Օսմանյան կայսրությունում, պատմական պատճառների բերումով, դարձան նրանց կրոնական համայնքները[2]։

Թեև Օսմանյան կայսրությունում հաստատված ոչ մուսուլմանական կրոնական համայնքների սիստեմը սուլթանների և կառավարող վերնախավի կողմից օգտագործվում էր ամենից առաջ հնազանդեցված բնակչությանը իրենց ենթարկելու համար, դրա հետ միասին նա նպաստում էր ոչ մուսուլմանական ժողովուրդների կուլտուրայի պահպանմանը։ Պաշտոնապես ճանաչված էին մի քանի այդպիսի համայնքներ. հունական-ուղղափառ (հույներ, բուլղարներ[3], սերբեր և ուրիշներ), հայ լուսավորչական (երկուսն էլ 1453 թվականին թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի գրավման պահից), հրեական (1493 թվականից), հռոմեա-կաթոլիկականը, որը ընդգրկում էր Հռոմի պապի հոգևոր գերիշխանությունը ճանաչող բոլոր քրիստոնյաներին և ստորաբաժանվում էր ավելի մանր համայնքների՝ լատինացիների (կաթոլիկների), մարոնիների, հույն ունիատների (մելկիտների), հայ ունիատների, խալդ ունիատների, ասորի ունիատների, բուլղար ունիատների (այս բոլոր «ենթահամայնքները», ինչպես և ինքը՝ համայնքը, պաշտոնապես ձևակերպվել են XIX դարի 20—60-ական թվականներին)։ Գոյություն ունեին նաև բողոքական (գերազանցապես հայեր), նեստորական և հակոբյան համայնքներ (վերջիններիս մեջ ներկայացված էին գլխավորապես ասորիները և խալդերը) [229, էջ 51—53]։ Համայնքների ղեկավարները իրենց դավանակիցների նկատմամբ ունեին ոչ միայն հոգևոր, այլև քաղաքացիական իշխանություն այնպիսի հարցերում, որոնք լուծվում էին տվյալ համայնքի կրոնական օրենքներով (ամուսնություն, ապահարզան, գույքային և կենցաղային վեճեր), ինչպես նաև գանձում էին տարբեր տուրքեր պետության և իր՝ համայնքի օգտին։ Նրանց ձեռքում էր գտնվում նաև լուսավորությունը՝ հունական, հայկական, հրեական և այլ դպրոցները։ Կ. Մարքսի խոսքերով ասած, Կոստանդնուպոլսի պատրիարքը ոչ միայն Օսմանյան կայսրության բոլոր ուղղափառ հպատակների «հոգևոր ղեկավարն» էր, այլև նրանց «քաղաքական ներկայացուցիչն ու գերագույն դատավորը» [1, էջ 167]։

Այդ պայմաններում, երբ Օսմանյան պետության հպատակի իրավական դրությունը շատ բաներով որոշվում էր այս կամ այն կրոնական համայնքին նրա պատկանելությամբ[4], հաճախ էթնիկական (ազգային) և անգամ պետական պատկանելության հասկացությունը նենգափոխվում էր դավանաբանական հասկացություններով։ Ինչպես նշել է Կ. Մակ-Կոանը, XIX դարի երկրորդ կեսին «ազգային ինքնագիտակցությունը ենթարկված էր կրոնականին. Օսմանյան կայսրության հպատակը (նկատի է առնվում թուրքը։—Դ. Ե.) հազվադեպ է իրեն անվանում թուրք կամ թեկուզ օսմանցի,

---

2 Հաճախ իսլամի ընդունումը լինում էր միայն առերևույթ՝ ֆեոդալների բռնությունների, տեղական իշխանությունների կեղեքման հետևանք և այլն։ Այսպես, իսլամ ընդունած և թուրքացած հույների մի մասը գաղտնի հետևում էր ուղղափառության հին սովորություններին, պահպանելով հունական անունները և այլն [60, էջ 71]։

3 Ավելի ուշ, 1870 թվականին, ուղղափառ բուլղարները առանձնացան ու կազմեցին առանձին համայնք, որը ճանաչում էր բուլղարական էկզարխության իշխանությունը։

4 «Կրոնական և ազգային գաղափարները խառնվում էին Օսմանյան կայսրության բնակիչների մտքերում,— գրում էին Ա. Ուրիչինին և Պ. դը Կուրթեյը։— Կրոնը, չհանդիսանալով միայն խղճի գործ, դարձել էր արտոնությունների աղբյուր մի մասի համար կամ անիրավահավասար դրության աղբյուր՝ մյուսների համար» [229, էջ 53]։

բայց միշտ անվանում է մուսուլման» [151, էջ 119]: Մոտավորապես նույն բանը նկատվում էր նաև քրիստոնյաների մոտ: Այսպես, հայ կաթոլիկ-ունիատները և հույները իրենց ազգային պատկանելության մասին հարցին պատասխանում էին՝ «կաթոլիկ» [62, էջ 62]:

Թուրքերի և մուսուլմանների վերաբնակեցումը նախկին օսմանական և սահմանակից տերիտորիաներից Թուրքիա

Այն կապակցությամբ, որ շատ երկրներ ազատագրվել էին օսմանցիներից, այդ երկրների թուրք բնակչության մի մասը, ինչպես նաև մուսուլմանների մի մասը ներգաղթեց Թուրքիա: XVIII դարի վերջին Թուրքիայում հայտնվեցին Ղրիմից գաղթած թաթարները[5], XIX դարում Թուրքիա գաղթեցին նաև Բյուրքական որոշ ցեղեր Կովկասից (օրինակ, կարաչափախները): Այն բանից հետո, երբ Օսմանյան կայսրությունը կորցրեց Հարավ- Արևելյան Եվրոպայում գավթած տերիտորիաները, թուրք գաղութարարների հիմնական զանգվածը նորից վերադարձավ Թուրքիա: 1848 թվականին ներգաղթող թուրքեր եկան Հունգարիայից, 1878 թվականին, ռուս-թուրքական պատերազմից հետո, որի հետևանքով օսմանական լծից ազատագրվեցին բալկանյան մի շարք ժողովուրդներ, հայտնվեցին առաջին ներգաղթողները Բալկաններից. 1900 թվականին թուրքերը ներգաղթում են Կրետե կղզուց. 1913 թվականին, բալկանյան պատերազմներից հետո, նորից են թուրքերը ներգաղթում Բալկաններից:

Այդ ներգաղթողների մի մասին օսմանական կառավարությունը տարաբնակեցրեց Արևելյան Անատոլիայում: Այսպես, Կարասու գետի վերին հոսանքներում, որտեղ առաջ ապրում էին շատ հայեր (նրանց մի մասը հետագայում տեղափոխվեց Ռուսաստան), տեղի մուսուլման բնակչության քանակը ավելացնելու նպատակով բնակեցվեցին XIX դարում Ռուսաստանից գաղթած թուրքեր և այլ մուսուլմաններ [100, էջ 47]:

Այդ վերաբնակեցումների կապակցությամբ XIX դարի երկրորդ կեսին Թուրքիայում երևան եկավ էթնիկական մի ընդհանրություն ևս՝ չերքեզները: Թուրքերը այդպես են անվանում Կովկասից գաղթած ուբիխներին, ադիգեներին, շապսուղներին, չեչեններին, կաբարդիններին, ինգուշներին և մյուս լեռնաբնակ մուսուլմաններին: Չերքեզները տարաբնակեցվեցին Թուրքիայի ամենատարբեր շրջաններում, որպես կանոն առանձին գյուղերով՝ թուրք, քուրդ, հայ և այլ բնակչության շրջապատում: Ռուսական պաշտոնական վիճակագրության համաձայն, Թուրքիա են գաղթել մինչև 1,8 միլիոն լեռնցիներ: Սակայն մեծ թվով չերքեզներ զոհ գնացին վերաբնակման ծանր պայմաններից, անսովոր կլիմայից առաջացած հիվանդություններից [8, էջ 121]: 1875—1876 թվականներին նրանք արդեն կազմում էին միայն մոտ 1 միլիոն [229, էջ 32, 61]: Պ. Ի. Ավերյանովի տվյալներով, 1912 թվականին նրանցից մնացել էր միայն 400 հազար մարդ [13, էջ 21]: Չերքեզների թվաքանակի պակասումը տեղի է ունեցել նաև թուրքերի կողմից նրանց ասիմիլյացման հաշվին: Մանավանդ, որ չերքեզները իրենց աղջիկներին վաճառում էին թուրքերի հարեմներին, և այդ առևտուրը վիթխարի չափեր էր ընդունել: Շատ չերքեզներ ծառայում էին որպես սպաներ օսմանական բանակում, որպես ոստիկաններ և ժանդարմներ: Մի շարք չերքեզներ գրավել են բարձր պաշտոններ՝ մարշալ Ֆուադ փաշան, գեներալ Ահմեդ փաշան, գեներալ Հյուսեին Դաիմ փաշան, ոստիկանության մինիստր Նազըմ փաշան և ուրիշներ [46, էջ 197. 115, էջ 89]:

Ռուսաստանից ներգաղթածները (թաթարները, չերքեզները և այլն) իրենց հետ Թուրքիա բերեցին նստակյաց կյանքի զարգացած ձևեր՝ վառարան՝ հաց թխելու համար, ձիաքարշ քառանիվ սայլեր, որոնք ստացան «թաթար արաբասը» (թաթարական սայլ) անունը, և այլն [97, էջ 58. 333, էջ 133]: Զուլվելով Անատոլիայի թուրքերի հետ, նրանք այդ փորձերը հաղորդում էին նրանց:

[5] 1783 թվականին ներգաղթեց մոտ 300 հազար մարդ [18, էջ 403]: Երկրորդ ներգաղթը տեղի ունեցավ 1853—1856 թվականներին Ղրիմի պատերազմից հետո (200 հազար մարդ):

Լեզվական ասիմիլյացիոն պրոցեսների առանձնահատկությունները Թուրքիայում XIX դարում

Անատոլիայի ոչ թուրք բնակչության մի մասի լեզվական ասիմիլյացիան թուրքերի կողմից մինչև XIX դարի 30-ական թվականները բավական հեռու էր գնացել։ «Անկարայում... հայերը հայերեն չգիտեն»,— վկայում էր Մ. Պ. Վրոնչենկոն։ Իզմիրից և Բուրսայից բացի հայ հոգևորականները ոչ մի տեղ հայերեն չգիտեն և ծիսակատարությունները կատարում են թուրքերեն[6] «հայկական տառերով տպագրված գրքերով». անձնական նամակագրության մեջ գրում են թուրքերեն խոսակցական լեզվով՝ հայկական տառերով. դպրոցներում գրել ու կարդալ սովորեցնում են թուրքերեն՝ հայկական տառերով, բայց թուրքական այբուբեն չեն սովորեցնում [38, մ II, էջ 29, 241]։ Վ. Լանգլուան, որը 1852—1853 թվականներին ճանապարհորդել է Կիլիկիայում, նույնպես նշում է, որ հայերը և հույները գրում էին թուրքերեն, բայց հայկական ու հունական տառերով [317, էջ 25]։ Թուրքական (փաստորեն՝ արաբական) գրին անցնելու համար խոչընդոտ էր հանդիսանում կրոնների միջև եղած տարբերությունը. թուրքական գիրը իր ծագումով կապված էր իսլամի հետ, իսկ հայկական գիրը ընկալվում էր որպես հայ քրիստոնեական եկեղեցու ատրիբուտ։ Այս հանգամանքները ավելի էին զգալի դառնում նաև դպրոցական ուսուցման եկեղեցական բնույթի հետևանքով։

Հայերի թուրքացման մոտավորապես նույն պատկերը նկարագրել են ֆրանսիացի ճանապարհորդներ Ա. Ուբիչինին և Պ. դե Կուրթեյլը XIX դարի 70-ական թվականներին. հայերը խոսում էին կամ թուրքերեն, և կամ հայերեն՝ մեծ քանակությամբ թուրքական բառերի խառնուրդով. գրքային հայերեն լեզուն օգտագործվում էր միայն դպրոցներում և գիտնականների շրջանում [229, էջ 61]։ Ռուս ճանապարհորդ

[6] Դա ճիշտ էր Արևմտյան և Կենտրոնական Անատոլիայի համար։ Իսկ երկրի արևելքում, որտեղ կար հայկական հոծ բնակչություն, հայերենը, բնականաբար, ավելի գործածական էր։

Ե. Գ. Վեյդենբաումը (1878 թվական) գրում էր, որ Արթվինի հայերը բոլորը առանց բացառության խոսում են թուրքերեն և իրենց սովորությունների մեջ այնքան են թուրքացել, որ նույնիսկ միմյանց հանդիպելիս ողջունում են մուսուլմանական ձևով [33, էջ 186]։

Շատ հույներ մինչև XIX դարի 30-ական թվականները այնքան էին թուրքացել, որ նույնպես մոռացել էին հունարենը։ Նոր հունարենը տարածված էր միայն ծովափին մոտ շրջանում, գրում էր Մ. Պ. Վրոնչենկոն, իսկ օրինակ, Այդինում քիչ հույներ գիտեն այդ լեզուն. հունարեն են խոսում նաև Բուրսայում, Սև ծովի ափին՝ ընդհուպ մինչև Ստամբուլ, բայց Սինոպից սկսած հունարեն գիտեն ոչ բոլոր հույները. Կենտրոնական Անատոլիայում միայն Կայսերիի մոտի հունական գյուղերում հույները գիտեն իրենց լեզուն «կամ, ավելի լավ է ասել, նրա ինչ-որ մի տարօրինակ և հազիվ հասկանալի բարբառը, որը, ի դեպ, պահպանել է հին հունարենի որոշ գծերը». իսկ բուն Կայսերիում հույները խոսում են թուրքերեն, ցածր հոգևորականությունն անգամ պատարագը անում է թուրքերեն [38, մ. II, էջ 231]։ Այդպիսի դրությունը բնորոշ էր թուրքական քաղաքների մեծ մասի հույն բնակչության համար. «Անկարայում հույները մի քանի բառ գիտեն հունարեն», «Անթալյայի հույներից շատ քչերն են մի քանի բառ հասկանում հունարեն», սակայն Բերգամայում «հունարեն խոսացողներ շատ կան» [38, մ. II, էջ 29, 40, 58]։ Իզմիրում, Մանիսայում, Իզմիտում և այլ քաղաքներում կան հունական դպրոցներ, շարունակում է Մ. Պ. Վրոնչենկոն, բայց հունարենը վատ են սովորում, քանի որ ընտանիքում խոսում են թուրքերեն։ Իրենք՝ ուսուցիչներն անգամ մեծ սիրով խոսում են թուրքերեն, քան հունարեն։ Եկեղեցական դպրոցներում ուսուցանում են թուրքերեն, բայց հունական տառերով։ Հոգևորականները եկեղեցական արարողությունները կատարում են հունական տառերով գրված կամ տպված թուրքերեն գրքերով [38, մ. II, էջ 232]։ Այսպիսով, հույների թուրքերեն լեզվի լրիվ միաձուլումը թուրքերի լեզվի հետ դեմ էր առնում միայն գրի տարբերությանը, որը, ինչպես և հայերի մոտ, ուներ կրոնա-

կան ծագում: Դա արտացոլում էր նաև գործի էությունը՝ թուրքերի կողմից հույների լրիվ ասիմիլյացմանը խանգարում էր նրանց դավանանքների տարբերությունը[7]: Թուրքական հույների մասին մոտավորապես նույն բանն էր գրում նաև անգլիացի հետազոտող Կ. Մակ-Կոանը XIX դարի 70-ական թվականներին. «Նրանց լեզուն պակաս մաքուր է, քան Հունաստանի բնակիչների լեզուն, և որոշ տեղերում խառնված է թուրքերենի հետ»: Նա հիշատակում է նաև «ներքին Անատոլիայի հունական, բայց թուրքերեն խոսող գյուղերի» մասին [151, էջ 108—109]:

Ուղղափառությունը պահպանած անատոլիական հույների մի մասի լեզվական ասիմիլյացումը թուրքերի կողմից նշվել է նաև ավելի առաջ: XV դարի սկզբին Անատոլիայի հույն հոգևորականությունը խոսում էր թուրքերեն [49; էջ 180]: Իսկ XVIII դարի սկզբին, ռուս ճանապարհորդ Վ. Գ. Բարսկի-Պլակա-Ալբովի վկայությամբ, շատ քրիստոնյաներ խոսում էին միայն թուրքերեն. «Անատոլիայում ապրող քրիստոնյանները բոլորն էլ խոսում են թուրքերեն և ուրիշ լեզու չգիտեն. եթե միայն հունարեն գրքեր կարդում են էլ եկեղեցում, բայց չեն հասկանում. կարդում են միայն եկեղեցու համար, և որպեսզի քրիստոնեական հավատը չկորչի [141, էջ 18]:

Արևելյան Անատոլիայի մի շարք շրջաններում, որտեղ թուրքերը գերազանցում էին թվական տեսակետից, նույնպես տեղի էր ունենում մնացած բնակչության թուրքացում: Վ. Ջ. Պալդրևը գրում էր, որ Սինոպի և Տրապիզոնի միջև ապրող ամբողջ բնակչությունը խոսում է թուրքերեն, թեև տարբեր են իրենց ծագումով՝ թուրքմեններ, քրդեր, հայեր [190, էջ 28]: Հարավ-Արևելյան Անատոլիայի քրդերից էլ շատերը յուրացրել էին թուրքերեն լեզուն [222, էջ 202, 255.

7 Թուրքական հայերը XIX դարի 30-ական թվականներին կրոնով եղել են գերազանցապես ուղղափառներ, բայց նրանց մեջ կային և կաթոլիկ-ունիատներ: XX դարի սկզբին կային նաև 15 հազար հույն մուսուլմաններ (բոլոր թուրքական հույների 1 տոկոսը) [13, էջ 16]: Բայց դա, ավելի շուտ, ուշ շրջանի երևույթ է, երբ Աբդուլ Համիդի բռնակալության պատճառով հույների մի մասը ընդունեց իսլամ:

236, էջ 322]: Այդ ասիմիլյացմանը նպաստում էր, նախ, այն, որ թուրքերեն լեզուն գործնականում կիրառվում էր բոլոր պետական ու վարչական հիմնարկներում (կամ թե նրա գրավոր-գրական ձևը՝ «օսմաներեն լեզուն», որը այնուամենայնիվ իր կառուցվածքով ավելի մոտ էր թուրքերենին, քան, ասենք, հայերենին, հունարենին, վրացերենին, քրդերենին): Թուրքերենն օգտագործվում էր նաև բանակում, որտեղ թուրքերից բացի ծառայում էին նաև ուրիշ մուսուլմաններ: Երկրորդ, թուրքերը կազմում էին ամբողջ երկրի բնակչության մեծագույն մասը: Երրորդ, թուրքերեն լեզուն եղել է ազգամիջյան հաղորդակցման միջոց (օրինակ, երկլեզու վրացիները, որոնք գիտեին մայրենի և թուրքերեն լեզուները, վերջինս օգտագործում էին միայն Թուրքիայի մյուս ժողովուրդների ներկայացուցիչների հետ հաղորդակցվելիս [190, էջ 86]): Ճիշտ է, ավելի ուշ շրջանում՝ XX դարի սկզբին, Ն. Յա. Մառը հետաքրքիր օրինակներ է բերում, թե ինչպես թուրքերենը հաղորդակցման միջոց էր ծառայում Թուրքիայի այն բնակիչների համար, որոնք պատկանում էին էթնիկական տարբեր ընդհանրությունների: Լազիստանի ծովափով երթևեկություն կատարող փոքրիկ շոգենավի վրա լազերեն խոսքը լսվում էր ժամանակ առ ժամանակ միայն. իբրև «միջազգային լեզու» ծառայում էր թուրքերենը. նավատերը հայ էր, նավավարը՝ թուրք, անձնակազմում ևս կային թուրքեր, բուֆետում աշխատում էին մի հայ և մի թուրք, ուղևորների մեջ կային լազեր, հույներ և համշենցիներ: Յա. Մառը նշում է նաև, որ Լազիստանի սրճարաններում, որտեղ հավաքվում էին լազեր, հույներ, թուրքեր, մեծ մասամբ լսվում էր թուրքերեն լեզուն [157, էջ 552, 568]:

Բայց այն շրջաններում, որտեղ թուրքերը չէին գերակշռում և բնակչության մեծամասնությունը կազմում էր որևէ ուրիշ էթնիկական ընդհանրություն, ասիմիլյացումը ընթանում էր գերակշռող ընդհանրության լեզվի յուրացման ուղղությամբ: Այսպես, Սյուրմենե շրջանում (Սև ծովի արևելյան ափի մոտ, որտեղ եղել է բազմաքանակ հույն բնակչություն) բոլորը առանց բացառության խոսում էին «շատ աղճատ-

ված հունարեն բարբառով և մեծ մասը ուրիշ ոչ մի լեզու չգիտեր» [190, էջ 78]։ Գերակշիռ քուրդ բնակչություն ունեցող մարզերում հայերը քրդացել են [236, էջ 296]։ Նույնիսկ այն վայրերում, որտեղ հայերը կազմում էին բնակչության զգալի տոկոս, օրինակ, Բիթլիս և Դիարբեքիր վիլայեթներում, նրանք, «սերտ շփման մեջ մտնելով քրդերի հետ, մոռանում էին հայերենը և խոսում էին միայն քրդերեն» [202, էջ 26]։ Քրդացել են նաև թուրքական մի քանի ցեղեր՝ կարափափախլիները (կարափափախները), կալքանլըները, կարա-քեչիները [247, էջ 26]։

Ինչպես նշել են մի քանի հետազոտողներ, քաղաքներում թուրքերի հետ ուժեղ կերպով ձուլվում էին արաբները [38, մ. II, էջ 226]։ Քոչվոր արաբները միախառնվում էին քոչվոր քրդերի հետ, օրինակ, Դիարբեքիրի վիլայեթում [13, էջ 11]։ Տեղեկություններ չկան այն մասին, թե այդ միախառնման ժամանակ որ լեզուն էր հաղթող դուրս գալիս, բայց դատելով մուսուլմանական ժողովուրդների մոտ արաբերեն լեզվի կատարած առանձնահատուկ դերից, կարելի է համարել, որ դա եղել է հենց արաբերենը։ Այս հետևության օգտին են խոսում նաև մի շարք փաստեր. հայտնի է, օրինակ, որ Անատոլիայի հարավ-արևելքում և Սիրիայում թուրքմենների մի մասը արաբացել էր [49, էջ 46]։

Սրբեմն տարբեր ժողովուրդների սահմանագծերում գոյանում էին էթնիկական ընդհանրությունների անցողիկ ձևեր։ Օրինակ, Վ. Ջ. Պալգրևը այսպես էր բնութագրում բնակչության այդպիսի խառը խմբերից մեկը. Տրապիզոնի մարզի արևելյան շրջաններում բյուզանդացիների ժառանգները խառնվել են թուրքերի և հայերի հետ, ավելին, ոչ պակաս բաժին պահպանել է նաև նախասկզբնական պոնտական տարրը (նկատի են առնվում լազերը և նրանց ցեղակից այլ բաղադրամասերը). այնուհանդերձ, այն խառնուրդը, որ այստեղ հայտնի է «հույն» անունով, մինչև այժմ էլ գերակշռում է մուսուլմանների և քրիստոնյաների միջև [190, էջ 86]։

Կապիտալիստական հարաբերությունների սաղմնավորումը և Թուրքիայի ժողովուրդների ազգային զարգացման առանձնահատկությունները XIX դարի առաջին կեսին

Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական հետամնացությունը նրան հասցրեց քաղաքական անկման. կայսրության ներսում ծագեցին ապստամբություններ, իսկ միջազգային ասպարեզում նա սկսել էր ավելի հաճախ պարտություններ կրել իր հակառակորդների դեմ մղած պատերազմներում։ Այդ պատճառով XIX դարի 30—50-ական թվականներին կայսրության կառավարող շրջանները իրագործեցին մի շարք ռեֆորմներ, հույս ունենալով շտկել դրությունը։ Այդ ռեֆորմները գերազանցապես վերաբերում էին բանակի, կառավարման վերակառուցմանը և կենտրոնական իշխանության ամրապնդմանը։ Դրանցից մի քանիսը չնայած կիսատ-պռատ էին ու անվճռական, բայց վերաբերում էին սոցիալ-տնտեսական հարաբերություններին։

Այսպես, 1834 թվականին պաշտոնապես վերացվեց ռազմա-ավատական սիստեմը։ Հողը սկսեց մուտք գործել մասնավոր շրջանառության մեջ։ Սակայն, դա դեռ չէր նշանակում բուրժուական կարգերի արմատավորում։ Անցումը դեպի հասարակական կարգի նոր ձևերը տեղի էր ունենում չափազանց դանդաղ ու հիվանդագին։ Այդ ճանապարհին կարևորագույն խոչընդոտն այն էր, որ սուլթանական կառավարության և տեղական փաշաների համայականության պատճառով ապահովված չէր մասնավոր սեփականությունը։ Օրինակ, շատ լայնորեն կիրառվում էր գույքի բռնագրավումը ամեն մի առիթով։ Ֆրանսիացի էնցիկլոպեդիստ Վոլնեյը, որը դեռ 1783—1785 թվականներին ճանապարհորդություն էր կատարել դեպի այն ժամանակ Օսմանյան կայսրության կազմի մեջ եղած Սիրիա և Եգիպտոս, գրում էր. «Երկրագործը ցանում է ճիշտ այնքան, որքան անհրաժեշտ է ապրելու համար. արհեստավորը աշխատում է միայն իր ընտանիքը կերակրելու համար. եթե նա ունենում է որևէ ավելցուկ, ապա դա խնամքով թաքցնում է» [335, էջ 348]։

Հունական, հայկական և նոր-նոր երևան եկող թուրքական առևտրական վաշխառուական բուրժուազիան, որը ուներ կուտակած փողեր, չէր կարող դրանք ներդնել արդյունաբերության մեջ: «Իրոք,— գրում էր Ֆ. Էնգելսը,— թուրքական, ինչպես և ամեն մի ուրիշ արևելյան տիրապետություն անհամատեղելի է կապիտալիստական հասարակության հետ. կուտակված հավելյալ արժեքը ոչնչով երաշխավորված չէ սատրապների ու փաշաների գիշատիչ ձեռքերից, բացակայում է բուրժուական ձեռնարկատիրական գործունեության առաջին հիմնական պայմանը՝ վաճառականի ու նրա սեփականության անվտանգությունը» [4, էջ 33]:

Գյուլխանեի հաթթ-ի շերիֆով (1839 թվականի սուլթանական հրովարտակով) խոստացվեց երաշխավորել բոլոր օսմանյան հպատակների կյանքի, պատվի ու գույքի անվտանգությունը՝ անկախ նրանց դավանանքից: Այդ հրովարտակից հետո ընդունվեցին նոր քրեական օրենսգիրք և նոր առևտրական կանոնադրություն, կազմվեցին առևտրական ու քրեական խառը դատարաններ, որտեղ լսվում էին և՛ մուսուլմանների, և՛ ոչ մուսուլմանների գործերը, վերացվեց մահապատիժը ոչ մուսուլմանի համար, որը ամուսնական կապի մեջ էր մտել մուսուլմանուհու հետ, կատարվեցին առաջին փորձերը՝ դպրոցը անջատելու եկեղեցուց (թուրքական դպրոցները հանձնվում էին աշխարհիկ իշխանությունների իրավասությանը, բայց դասավանդման բովանդակությունը դրեթե չէր փոխվում. այն դարձյալ տոգորված էր մնում կրոնական ոգով): Վերացվեց ոչ մուսուլմանների հարկը (խարաջը), որոշում ընդունվեց ոչ մուսուլմաններին ևս բանակ զորակոչելու մասին: Բայց գրեթե այս ամենը մնաց թղթի վրա: Խարաջը, օրինակ, լոկ փոխարինեցին նոր հարկով:

1856 թվականին հրապարակվեց սուլթանական մի հրովարտակ ևս՝ հաթթ-ը հյումայունը, որը հիմնականում կրկնում էր այն դրույթները, որոնք հռչակվել էին առաջին հրովարտակով: Արդեն միայն այդ փաստը խոսում է այն մասին, որ շատ «ռեֆորմներ» մնում էին որպես դատարկ հայտարարություններ: Եվ դա հասկանալի է, քանի որ դրանց

իրականացման ճանապարհին կանգնած էին բազմաթիվ խոչընդոտներ: Մուսուլմանները, որոնք սովոր էին քրիստոնյաներին համարել երկրորդ տեսակի հպատակներ, դիմադրում էին ոչ մուսուլմանների զորակոչմանը: Նրանք չէին ցանկանում ենթարկվել նրանց՝ որպես սպաների ու պաշտոնյաների (հաթթը-հյումայունը հայտարարում էր, որ ոչ մուսուլմանները կարող են ընդունվել պետական ծառայության և զինվորական ուսումնարաններ), հրաժարվում էին գնալ այն դատարանները, որտեղ մուսուլմանների հետ հավասար դատին մասնակցում էին նաև քրիստոնյաները: Մուսուլման վաճառականներն ու արհեստավորները լրացուցիչ հարկերից ազատված ռայայի մեջ տեսնում էին ապագա հաղթական մրցակիցներին՝ արդյունաբերական շուկայում: Մուսուլմանական հոգևորականությունը երկյուղ էր կրում իր ազդեցության թուլացումից, քանի որ քրիստոնեական պաշտոնյաների հետ միասին պետության կառավարման մեջ կարող էին թափանցել նաև աշխարհիկ սկզբունքներ [46, էջ 148]:

Թանզիմաթի ռեֆորմների մեծագույն մասը մնաց որպես բարի ցանկություններ. երկրում դեռևս չկար սոցիալ-տնտեսական կայուն բազա նրանց իրականացման համար: Այնուամենայնիվ, այդ փորձերը օբյեկտիվորեն ուղղված էին կապիտալիստական հարաբերությունների զարգացումը հեշտացնելու նպատակին: Հաթթ-ը հյումայունում, օրինակ, կար մի նշանավոր ֆրազ. «Այն ամենը, ինչ վնասում է առևտրին, ոչնչացվելու է» [229, էջ 213]: Արդեն սա վկայում էր այն մասին, որ բուրժուական հարաբերությունների զարգացումը երկրում բավական հեռու է գնացել:

Սակայն, պատմական զարգացման առանձնահատկությունների հետևանքով նոր, կապիտալիստական հարաբերությունները Թուրքիայում սաղմնավորվում էին շատ դանդաղ. նրանց խանգարում էին ֆեոդալական և թեոկրատիկական խոչընդոտները: Այն ժամանակ, երբ Արևմտյան Եվրոպայի երկրներում դեռ XVII դարի երկրորդ կեսին—XVIII դարում ֆեոդալիզմին փոխարինելու էր եկել կապիտալիզմը, Թուրքիայում տիրապետում էին ֆեոդալական հարաբերու-

թյունները։ Կապիտալիստական կացութաձևը գնալով ավելի էր զարգանում նաև Արևելյան ու Կենտրոնական Եվրոպայի երկրներում, որտեղ արտադրողական ուժերի աճի բազայի վրա գոյացել էին ազգային շուկաներ, և դրանով իսկ տնտեսական հիմք էր ստեղծվել բուրժուական ազգերի ձևավորման համար։ Իսկ Թուրքիայում միասնական ներքին շուկա չի եղել ոչ XVIII դարում, ոչ էլ նույնիսկ XIX դարի սկզբին։

Այնուամենայնիվ արհեստների և արդյունաբերության մի քանի ճյուղերի՝ ռազմական, մետաղամշակման, շինարարական և այլ ճյուղերի զարգացումը տանում էր դեպի քաղաքների բնակչության աճ և մեծացնում էր նրանց նշանակությունը՝ որպես սպառողական շուկաների։ Մեծ, հատկապես ծովափնյա քաղաքներում զգալի տեղ էր գրավում արտաքին առևտուրը։ Հենց այդ ոլորտում էլ սկսեցին կենտրոնանալ խոշոր կապիտալները։

Կարևոր է նշել, որ արհեստներով ու առևտրով, այսինքն՝ էկոնոմիկայի այն ճյուղերով, որտեղ ամենից ավելի շուտ կարող էր հաստնանալ կապիտալիստական կացութաձևը, զբաղվում էին առավելապես ոչ թուրքերը և անգամ ոչ մուսուլմանները։ Ինչպես այդ մասին արդեն ասվեց վերևում, պատմականորեն ստացվել է այդպես. Փոքր Ասիայի և Բալկանների հին բնակիչները վաղուց հռչակված էին իրենց արհեստներով։ Նրանց մոտ հնուց ի վեր զարգացած էր առևտուրը։ Հույները, հայերը, սլավոնական և այլ ժողովուրդների ներկայացուցիչները կազմում էին քաղաքների արհեստավորների ու առևտրականների ճնշող մեծամասնությունը։ Բացի դրանից, շատ թուրքեր արհեստներով ու առևտրով զբաղվելը իրենց համար ամոթալի գործ էին համարում։ Թուրքական վերնախավի և մանր ֆեոդալների միջին դասակարգի շրջանում իդեալական ու պատվավոր զբաղմունք էր համարվում զինվորական, քաղաքացիական կամ հոգևոր ծառայությունը։ Իսկ թուրք գյուղացու համար շատ դժվարին էր արհեստավոր կամ առևտրական դառնալու ճանապարհը. նա չուներ ոչ անհրաժեշտ համաություններ, ոչ միջոցներ։

Թուրքերի կողմից արհեստների յուրացման ճանապարհին կանգնած էին նաև միջնադարյան համքարությունները (էսնաֆները), որտեղ տիրում էր դավանաբանական անողոք անջատվածությունը։ Կրոնական առանձին խմբերի՝ ուղղափառների, հայ լուսավորչականների, կաթոլիկների համքարությունները մեկուսացած էին իրարից և մուսուլմաններից, իրենց շարքերը թույլ տալով միայն հավատակիցներին և խստորեն պահպանելով արտադրության գաղտնիքները։ Նման դրությունը հանգեցնում էր այն բանին, որ արհեստի որոշ ճյուղերում (նույնիսկ XX դարում) թուրքեր առհասարակ չկային։ Օրինակ, սովետական դեսպան Ս. Ի. Արալովը նկարագրում է, թե ինչպես ինքը 1922 թվականին, անկախության համար Թուրքիայի մղած պատերազմի ժամանակ, այցելել էր դարբինների զինվորական դպրոցը. «Ի՞նչ է դարբինների դպրոցը... Տարօրինակ է թվում, որ Անատոլիայում թուրքերը այն ժամանակ չունեին իրենց դարբինները։ Ձիերին պայտում էին արհեստավորները՝ հույները, հայերը։ Այժմ հույները պատերազմում էին թուրքերի դեմ, հայերի հետ ևս բարեկամություն չունեին։ Ձիերը տառապում էին անորակ պայտումներից։ Եվ ահա սկսեցին բանակում ստեղծել կարճատև դպրոցներ՝ դարբնի արհեստը սովորեցնելու համար» [16, էջ 96—97]։

Վաշխառուները և բանկիրները ևս գրեթե բացառապես ոչ-մուսուլմաններն էին, ոչ-թուրքերը։ Այս բանում, անկասկած, արտահայտվել է նաև իսլամական արգելքը տոկոսով փող տալու վերաբերյալ։ Այլ կերպ ասած, կապիտալի նախասկզբնական կուտակման այդ ուղին փակ էր թուրքերի համար, որոնք խստորեն պահպանում էին հավատի դոգմաները։

Վերջապես, մեկ այլ տեսակետից ևս թուրքերը գտնվում էին տնտեսական ավելի վատ պայմաններում, քան ոչ-մուսուլման ժողովուրդները։ Զինվորական ծառայության պարտքը վիթխարի բեռի նման ընկած էր թուրքերի, հատկապես գյուղացիների վրա։ Մինչև 1909—1910 թվականները զինվորական ծառայության պարտականությունները կատարում էին միայն մուսուլմանները, ըստ որում թուրքերը կազմում էին կանոնավոր բանակի ընդհանուր թվաքանակի երեք քառորդը խաղաղ և պատերազմական ժամանակ։

Օսմանյան կայսրության անընդմեջ պատերազմները, անհամար ապստամբությունների ճնշումը (ապստամբած արաբների ու քրդերի դեմ օգտագործվում էին թուրք զինվորները)՝ այս ամենի հետևանքով խիստ կրճատվում էր թուրք տղամարդկանց, գլխավորապես գյուղացիների թիվը, որը տնտեսապես ուժեղ հարված էր հասցնում գյուղացիական տնտեսությանը։ Նույնիսկ խաղաղ ժամանակ աշխատողին իր աշխատանքից կտրելը ծանր էր անդրադառնում գյուղացիական ընտանիքի էկոնոմիկայի վրա։ Ինչպես նշել է Վ. Ջ. Պալգրևը 1860—1870 թվականներին (և այս բանը ճիշտ է նաև ավելի վաղ ժամանակաշրջանների համար), բնակչության մեջ, որը արդեն գտնվում էր ծայրահեղ աղքատության մեջ, իսկ այդպիսի դրության մեջ էր անասուլիական գյուղացիության ինը տասներորդը, երիտասարդ աշխատողին ընտանիքից կտրելը պատճառ էր դառնում վերջնական սնանկացման։ Իսկ զինվորական ծառայությունը շարունակ աշխատանքից կտրում էր զինվորական ծառայության ընդունակ տղամարդ բնակչության 20 տոկոսը [190, էջ 32]։

Այսպիսով, կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար նախադրյալներ գոյություն ունեին ամենից առաջ Օսմանյան կայսրության ոչ-թուրք և ոչ-մուսուլման բնակչության շրջանում, այլ ազգային փոքրամասնությունների շրջանում, որտեղ կար առևտրականների, վաշխառուների և արհեստավորների լայն միջնախավ։

Առաջավոր կուլտուրան և նրա նյութա-տեխնիկական ապահովումը նույնպես ավելի արագ զարգանում էր նույն այդ էթնիկական խմբերի շրջանում։ Օսմանյան կայսրության ընդհանուր անկումը XVII—XVIII դարերում հանգեցրեց թուրքական գիտության, արվեստի և գրականության աստիճանական անկման։ Ճարտարապետությունը կորցրեց ինքնատիպությունը, օսմանական շինարարները սկսեցին ստրկաբար ընդօրինակել արևմտաեվրոպական նմուշները։ Անկման հասավ նաև մանրանկարչության արվեստը։ Ընդհանուր առմամբ, կերպարվեստի զարգացմանը խանգարում էր սուննի աղանդի իսլամը, որը արգելում էր քանդակագործության և գեղանկարչության մեջ վերարտադրել կենդանի էակներին։

Երկու և կես դար շարունակ թուրք գրականությունը չվեց խոսքի և ոչ մի ականավոր վարպետ։ Օսմանական բանաստեղծները շարունակում էին կրկնել պարսկական քնարերգության հնացած թեմաները՝ սոխակն ու վարդը, ոտանավորի ձևը դարձնում էին գերագույն օրենք՝ ի վնաս բովանդակության։ Գիտությունը կաշկանդված էր հոգևորականության կողմից, որը պաշտպանում էր իր արտոնությունները։ Առաջվա նման չկար աշխարհիկ ուսուցում։ Մուսուլմանական դպրոցները սխոլաստիկայի ու խավարամոլության օջախներ էին։ Բնակչությունը գրեթե ամբողջովին անգրագետ էր [105, էջ 53, 54. 185, էջ 55—56]։ Առաջին տպարանը Օսմանյան կայսրությունում բացեցին հրեաները 1494 թվականին, հայկական տպարանը բացվեց Ստամբուլում 1565 թվականին, հույները իրենց տպարանն ստեղծեցին Բուրբիայում 1627 թվականին։ Եվ 1729 թվականին միայն տպագրվեց առաջին թուրքերեն գիրքը [101, էջ 47—58]։ Առաջին թուրք տպագրիչը եղել է հունգարացի Իբրահիմ Մյութեֆերրիկան, որը ընդունել էր իսլամ [185, էջ 57]։ Ավելի ուշ, երբ գրատպագրությունը սկսեց բավական լայնորեն զարգանալ, թուրքական տպագրությունը շարունակում էր եւս մնալ ոչ թուրքականից. XIX դարի 70-ական թվականների սկզբին կայսրությունում հրատարակվում էր 47 թերթ ու հանդես, որոնցից միայն 13-ն էին թուրքերեն։ Այս ամենը նույնպես արգելակում էր թուրքերի կուլտուրական մակարդակի աճը։ Այս տեսակետից թուրքերը եւս էին մնում կայսրության մյուս ժողովուրդներից. XX դարի սկզբին թուրքերի 90 տոկոսը անգրագետ էր, այն ժամանակ, երբ հույների մոտ անգրագետները կազմում էին 50 տոկոս, հայերի մոտ՝ 33 տոկոս [185, էջ 133—134]։ Թուրքերի կուլտուրական զարգացման վրա խիստ ազդում էր նաև կանանց կրթության լրիվ բացակայությունը։ Անգրագետ ու կուլտուրապես հետամնաց մայրերը տարրական դաստիարակությունից բացի շատ քիչ բան կարող էին տալ իրենց զավակներին։

Այսպիսով, պատմական շատ պատճառներ պայմանավորեցին այդպիսի, առաջին հայացքից պարադոքսային ար-

դյունքը. տիրապետող ժողովուրդ հանդիսացող թուրքերի սոցիալ-տնտեսական զարգացումը գնալով ավելի շատ էր ետ մնում նրանց ճնշման տակ գտնվող ոչ մուսուլմանական ժողովուրդների զարգացումից: Հույները, հայերը, մյուս ոչ մուսուլմանական ժողովուրդների ներկայացուցիչները, որոնք մեծ դեր էին կատարում առևտրի ու արհեստի մեջ և ունեին կուլտուրական բարձր մակարդակ, Օսմանյան կայսրությունում ենթարկվում էին կրոնական խտրականության: Իսկ այդ հակասությունը կասեցնում էր և՛ առևտրի, և՛ արդյունաբերության զարգացումը: Այդ հակասությունը ոչ միայն կրոնա-ցեղային էր, այլև սոցիալական. իսկ երբ ի վերջո սկսեց սաղմնավորվել նաև թուրք առևտրական բուրժուազիան, ապա առևտրական բուրժուազիայի ամբողջ օսմանական դասակարգի շրջանում չկար միասնություն: Կրոնական ճնշման պատճառով մուսուլմանների և ոչ մուսուլմանների միջև գոյություն ուներ թշնամություն, այն ժամանակ, երբ նրանց դասակարգային շահերը պահանջում էին միավորել ջանքերը՝ ֆեոդալական կարգերի դեմ պայքարելու համար:

Կրոնական ճնշումը, ընդգծելով կայսրության բնակչության էթնիկական խայտաբղետությունը, ուժեղացնում էր առանձին ժողովուրդների անջատվածությունը իրարից, խորացնում էր տնտեսական անշահագրգռվածությունը տարբեր ազգությունները միասնական «օսմանական ազգի» մեջ միավորելու գործում: Նա նույնիսկ կասեցնում էր իրենց՝ թուրքերի կոնսոլիդացումը որպես ազգ, քանի որ արգելակում էր նրանց սոցիալ-տնտեսական և կուլտուրական զարգացումը, կողմնորոշելով դեպի ֆեոդալական հարաբերությունների, թեոկրատիկ կառավարչաձևի, կրոնական դպրոցների պահպանումը:

Այնուամենայնիվ, չնայած այդ բոլոր բացասական գործոններին, XIX դարի առաջին տասնամյակներին Թուրքիայում երևան եկավ կապիտալիստական պրիմիտիվ տնայնագործական արդյունաբերություն, գոյություն ունեին առանձին խոշոր մանուֆակտուրաներ և գործարանային ձեռնարկություններ [182, էջ 98], զարգացել էր լեռնահանքային արդյունաբերությունը:

Իհարկե, արտադրողական ուժերի զարգացման մակարդակը ամբողջ երկրում դեռ շատ ցածր էր: Արդյունաբերությունը, բացառությամբ Ստամբուլ քաղաքից, գտնվում էր արհեստի ու մանր ապրանքային արտադրության ստադիայում: Մանուֆակտուրաները քիչ էին զարգացած: Գերիշխում էր մեծագնորդը: Շուկան աչքի էր ընկնում մեծ մենկուսացածությամբ, որը ավելի էր ուժեղանում երկրի արևելքում հաղորդակցության ճանապարհների զարգացման համար դժվարին աշխարհագրական պայմանների հետևանքով [182, էջ 23]: Ի. Չևռնիկը 1872—1873 թվականներին Թուրքիա ուղարկված արշավախմբի հաշվետվության մեջ նշում է, որ մեծ մարզերը ապրում են իրենց սեփական կյանքով, միմյանցից կտրված, և որ հաղորդակցության լավ ճանապարհներ չկան [243, էջ 198]: Մի շարք բավական խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ զուտ կապիտալիստական չէին. հանքերում աշխատում էին նրանց կցված քրիստոնյաները՝ հույները, հայերը, այլ ոչ թե վարձու բանվորներ [38, մ. I, էջ 134—135, մ. II, էջ 36, 129]. հանքերի մի մասը մասնավոր անձանց կապիտալիստական սեփականություն չէր, այլ նրանք այդ հանքերը վարձակալում էին կառավարությունից [190, էջ 19, 22]. Ստամբուլի արդյունաբերության խոշորագույն ձեռնարկությունները, որոնք հիմնականում բավարարում էին բանակի ու նավատորմի պահանջները, պատկանում էին պետությանը և կազմակերպված էին ռազմա-վարչական սկզբունքներով [228, էջ 119—122]: Արդյունաբերության զարգացումը դանդաղեցնում էին նաև միջնադարյան համքարությունները ու համքարային կանոնակարգումը (համքարությունները վերջնականապես վերացվեցին 1918—1923 թվականների քեմալական հեղափոխությունից հետո միայն):

Այսպիսով, բացակայում էր հիմնական նախադրյալը թեկուզ «օսմանական» միասնական ազգի կամ առանձին՝ թուրք, հայ, հույն ազգերի (Թուրքիայի տերիտորիայում) ձևավորման համար, այն է՝ արտադրողական ուժերի զար-

գացման բարձր մակարդակ։ Այն ժամանակ, երբ անգլիական, հոլանդական և արևմտաեվրոպական մի քանի այլ ազգեր պատմական ասպարեզ էին եկել արդեն XV—XVII դարերում այն պատճառով, որ նրանց արագ ձևավորումը պայմանավորված է եղել ամենից առաջ արտադրողական ուժերի զարգացման այն ժամանակվա համար բարձր մակարդակով, որը հանգեցրեց ֆեոդալական ներփակության վերացմանը։

Բայց արտադրողական ուժերի զարգացման այդպիսի ցածր մակարդակի դեպքում անդամ Թուրքիայի արդյունաբերական հետագա առաջադիմությունը հանդիպում էր խոչընդոտի՝ արտասահմանյան ապրանքների մրցակցությանը։ Ըստ որում այդ մրցակցությունը տեղի էր ունենում արևմտյան տերությունների կողմից Օսմանյան կայսրության տրնտեսական հարաճուն ստրկացման պայմաններում։

Դեռ XVIII դարի երկրորդ կեսին օսմանական արդյունաբերությունը մեծ վնաս էր կրում երկիր ներմուծվող արտասահմանյան ապրանքների մրցակցությունից։ XIX դարի առաջին տասնամյակներին այդ մրցակցությունը անչափ աճեց և ուժեղագույն հարված հասցրեց Թուրքիայի տեղական արդյունաբերությանը։ Անատոլիան, որ այնքան հռչակված էր իր բամբիշով, սաթինով և մետաքսով, XIX դարի կեսերին արտադրում էր դարասկզբին արտադրածի մեկ տասներորդից ոչ ավելի [182, էջ 92]։ Բացի դրանից, տերությունների պարտադրած ստրկացուցիչ համաձայնագրերի, այսպես կոչված կապիտուլյացիաների[8] պատճառով Թուրքիան

8 Դեռևս Սուլեյման I-ի ժամանակ Օսմանյան կայսրության ծաղկման ու հզորության տարիներին Թուրքիան Ֆրանսիային շնորհել էր մի շարք արտոնություններ, որոնք սկիզբ դրեցին երկրում կապիտուլյացիոն ռեժիմի հաստատմանը։ Արտոնությունների բովարկումը պարունակող փաստաթղթերը՝ կապիտուլյացիաները (այսինքն՝ գլուխները, հոդվածները) Ֆրանսիային տալիս էին (ավելի ուշ դրանք տրվեցին նաև ուրիշ տերություններին) հետևյալ հիմնական արտոնությունները. ցածր մաքսատուրքեր, նրա հպատակները ազատվում էին հարկերից, ենթակա չէին թուրքական դատարաններին։ Կապիտուլյացիաները նախատեսում էին օտարերկրյա տերությունների իրավունքը՝ հովանավորելու իրենց հավատակիցներին։ Սկզբում կապիտուլյացիաները անիրավահավասար պայմանագրերի բնույթ

զրկված էր մրցակցության դեմ ուղղված միակ զենքից, որին սովորաբար դիմում են արդյունաբերական տեսակետից թույլ պետությունները, պրոտեկցիոնիզմի զենքից։ Նա իրավունք չուներ ոչ ավելացնել մաքսերը, ոչ հարկել արտասահմանյան առևտուրը, ոչ թուրքական դատարանին ենթակա դարձնել օտարերկրացուն, որը դատավճռ է ունեցել օսմանական հպատակի հետ կամ նույնիսկ հանցանք է գործել։ Արտասահմանյան առևտրի մեջ շատ մեծ դեր էր կատարում կոմպրադորական բուրժուազիան, որը դարձյալ, որպես կանոն, ազգային պատկանելությամբ ոչ թե թուրքականն էր, այլ հունականը, հայկականը, հրեականը։ Այդ բուրժուազիան սերտորեն կապված էր օտարերկրյա կապիտալի հետ։

Սկսած XIX դարի 30-ական թվականներից մինչև XX դարի դարի առաջին տասնամյակը անշեղորեն աճում էր ոչ միայն կոմպրադորական, այլ ընդհանրապես առևտրական, ինչպես նաև արդյունաբերական բուրժուազիան, որը թուրքական չէր ազգային պատկանելությամբ։ Այդ բուրժուազիայի աճի մասին են վկայում այն ժամանակվա բազմաթիվ ականատեսներ՝ ճանապարհորդներ և հետազոտողներ։ Ահա, օրինակ, Մ. Պ. Վրոնչենկոյի (1835 թվական) տպավորությունները. արհեստներն ու առևտուրը Արևմտյան և Կենտրոնական Անատոլիայի հայերի ամենազլխավոր զբաղմունքն է. ամենահարուստ վաճառականները Փոքր Ասիայի ներքին քաղաքներում հայեր են. բոլոր բանկատերերը քրիստոնյա-

չունեին։ «Քանի որ ղուրանը թշնամի է հայտարարում ամեն մի օտարերկրացու, ապա ոչ ոք չի հանդգնի առանց նախազգուշական միջոցների հայտնվել մուսուլմանական երկրում։ Եվրոպական առաջին վաճառականները, որոնք իրենց վրա էին վերցրել այդպիսի ժողովրդի հետ առևտուր անելու ռիսկը, փորձում էին նախ իրենց համար ապահովել բացառիկ պայմաններ և արտոնություններ, որոնք, սակայն, հետագայում տարածվում էին նրանց ամբողջ ազգի վրա։ Այսպիսին է կապիտուլյացիաների ծագումը... կապիտուլյացիաները արտոնություններ են, որ միակողմանի կերպով շնորհել է կառավարությունը, որը, հետևաբար, կարող է իր հայեցողությամբ վերացնել դրանք» [1, էջ 168, 169]։ Բայց հետագայում դրությունը փոխվեց. կապիտուլյացիաները դարձան Օսմանյան կայսրության պայմանագրային պարտավորություններ, որ նրա կառավարությունը իրավունք չուներ վերացնել միակողմանի կարգով։

ներ են. քրիստոնյա վաճառականները թուրք վաճառականներից ավելի ունևոր են և իրենց ձեռքում են պահում առևտրական ամենագլխավոր շրջանառությունները [38, մ. II, էջ 242, 263, 281]։ Մոտավորապես նույնպիսի տպավորություն է ստացած եղել նաև Վ. Ջ. Պալգրևը (1869—1872 թվականներ). «Կարա-Հիսարի շրջանում հայերը զբաղվում են առևտրով ու վաշխառությամբ, և շուտով կգա մի ժամանակ, երբ նրանց կանցնեն նախնական մահմեդական սեփականատերերի բոլոր հողերը» (տվյալ դեպքում, հավանաբար, թուրքերի նախկին ֆեոդալական կալվածքները անցնում էին նոր ծնունդ առնող բուրժուաների դասակարգի ձեռքը); «ամենահարուստ վաճառականը Դիրեսունում հայ է», Թուրքական Վրաստանում վաճառականները «եկվոր հայերն» են [190, էջ 18, 85]։ Կ. Մակ-Կոանը (1879 թվական) գրում էր. հույների հիմնական զբաղմունքը առևտուրն է, սակավաթիվ հույներ են միայն զբաղվում հողագործությամբ. առևտուրը Իզմիրում, Բուրսայում, Անկարայում գրաված է քրիստոնյաների (հույների, հայերի, և օտարերկրացիների) ձեռքում. քրիստոնյաների ձեռքին է գրեթե ամբողջ արտաքին և անգամ ներքին առևտրի մենաշնորհը. այսպես, Անկարայում, որտեղ բնակիչների երկու երրորդը մուսուլմաններ են, վերջիններս միայն արտադրում են բուրդ, իսկ դրա առևտուրը անում են քրիստոնյաները (հույները, հայերը). մետաքսի արդյունաբերության կենտրոն Բուրսայում նույն պատկերն է [151, էջ 109, 364]։ Մի քանի ճանապարհորդներ նույնիսկ հակված են չափազանցելու հայերի դերը Թուրքիայի առևտրում։ Դ. վ. Պուտյատան (1896 թվական) գրում է. գրեթե բոլոր սարրաֆները (այսինքն՝ դրամափոխները, բանկիրները, վաշխառուները) Թուրքիայում հայեր են. քաղաքներում հայերի ձեռքում է կենտրոնացած առևտուրը, արհեստները, վաշխառությունը [202, էջ 20, 33]։ Մեկ այլ ճանապարհորդ, Յու. Կապի-Բեկը (1897 թվականին), ըստ էության, կրկնում է նրան. ամբողջ առևտուրը ինչպես Եվրոպական, այնպես էլ Ասիական Թուրքիայում դարձել է հայերի մենաշնորհը [115, էջ 96]։ Հայերը իրոք հսկայական դեր են կատարել առևտրի ու վաշ-

խառության մեջ, բայց չի կարելի հաշվի չառնել նաև Թուրքիայի մյուս քրիստոնյաներին, հատկապես հույներին։ Գ. Գրոտեն (1902 թվական) նշում էր, որ Անկարայում առևտրի մեջ առաջնակարգ դեր էին կատարում հայ կաթոլիկները և հույները [60, էջ 49]։ Պ. Տոմիլովը (1904 թվական) գրում էր, որ «Մերսինի ամենահարուստ վաճառականները» հույներն են [222. էջ 38], իսկ Ի. Ի. Գոլոբորոդկոն (1908 թվական) հետևություն էր անում, որ Եվրոպական Թուրքիայում գերակշռում են հույն առևտրականները, իսկ Ասիականում՝ հայերը [46, էջ 149]։ Արտաքին առևտրի մեջ ևս գերակշռում էին հույն առևտրականները, որին նպաստում էր այն հանգամանքը, որ Թուրքիայի առևտրական նավատորմը գրեթե ամբողջովին հույների ձեռքում է [229, էջ 162]։ Եվ կարծես այս բոլոր ասույթների համար իբրև եզրակացություն է հնչում Ֆ. Էնգելսի խոսքերը. «...ով է առևտուրը վարում Թուրքիայում։ Համենայն դեպս ոչ թուրքերը... Հույները, հայերը, սլավոնները և արևմտաեվրոպացիները, որոնք հիմնավորվել են ծովային մեծ նավահանգիստներում, իրենց ձեռքում են պահում ամբողջ առևտուրը...» [5, էջ 25]։ Հույն և հայ առևտրական բուրժուազիան արագ հարստանում էր։ 1870—1880 թվականներին նույնիսկ նկատվում էր հողամասերի և շարժական այլ գույքի ինտենսիվ անցում թուրքերից հայերին և հույներին, որոնք գնում էին արտերը, այգիները, եկամտաբեր տները և այլն [62, էջ 56, 60]։

Իհարկե, այն փաստից, որ առևտուրը գտնվում էր գերազանցապես հույների և հայերի ձեռքում և որ նրանց ինչ-որ մի որոշ մասը գնալով հարստանում էր, չի կարելի հետևություն անել, թե իբր Թուրքիայում, անխտիր, բոլոր հույները ու հայերն էին կազմում հաջողակ առևտրական բուրժուազիան։ Արևմտյան Անատոլիայի հույների և Արևելյան Անատոլիայի հայերի մեծ մասը գյուղացիներ էին, հաճախ չքավոր գյուղացիներ, և դաժանորեն շահագործվում էին ինչպես թուրք (իսկ արևելքում նաև մուսուլմանական այլ՝ քուրդ, արաբ, լազ) ֆեոդալների կողմից, այնպես էլ իրենց կուլակների, վաշխառուների առևտրականների կողմից։ «Երկրագործ հույները աղքատ են, հարուստ են միայն վաճառականները»,—

ընդգծում է Մ. Պ. Վրոնչենկոն [38, մ. II, էջ 234]։ «Հայ ազգը XIX դարի սկզբներին շերտավորված էր երկու խմբի. աշխատավոր դասակարգ և ամիրաներ,— գրում է Ի. Ի. Գոլոբորոդկոն։— Ամիրաները՝ խոշոր առևտրականները, բանկիրները, արդյունաբերողները և պաշտոնյաները, իրենց հարստության, արքունիքի հետ ունեցած ծառայողական կամ անձնական կապերի շնորհիվ, կազմում էին արտոնյալ դասակարգը։ Նրանք իրենց ձեռքն էին հավաքել ազգային գործերի ղեկավարությունը։ Նրանց հաջողվել էր ազատվել անձնական շատ պարտավորություններից, որ կրում էր աշխատավոր դասակարգը։ Վերջինս կազմում էր հայ ազգի ճնշող մեծամասնությունը. գյուղական շրջաններում նա բաղկացած էր միայն հողագործներից, քաղաքային շրջաններում՝ արհեստավորներից ու մանր առևտրականներից։ Ավելի ուշ, հողերի բռնի զավթումների ազդեցության տակ (հայկական հողերը սկսել էին զավթել նստակեցության անցնող քրդերը և հայկական շրջանները վերաբնակեցված չերքեզները։— Դ. Ե), գյուղացիների շրջանից առանձնացավ մի խումբ ևս, որը աճում էր ոչ թե օրերով, այլ ժամերով,— մարաբան, գյուղական պրոլետարիատը, որը բառացի իր աշխատանքը չնչին գնով վաճառում էր հողատերերին» [46, էջ 229]։ Գյուղական հայ պրոլետարիատի կազմավորման գործում հիմնական դերը կատարեց նաև հայ գյուղացիության շերտավորումը։

Բուրժուազիայի և բուրժուական հարաբերությունների հետագա աճը հայերի և հույների շրջանում հանգեցրեց այն բանին, որ բուրժուական ազգի ձևավորման համար տնտեսական նախադրյալները ավելի շուտ ծագեցին ոչ թե թուրք ժողովրդի մեջ, այլ այդ ճնշված ազգային փոքրամասնությունների շրջանում։ Իսկ հայերի և հույների ազգային ինքնագիտակցության զարգացումը արագացնում էր Օսմանյան կայսրության ժողովուրդների, հատկապես բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը, որը ավելի էր ուժեղացել XIX դարում. 1804 և 1815 թվականներին տեղի ունեցան սերբերի ապստամբությունները թուրքական տիրապետության դեմ, 1821 թվականին սկսվեց ազգային-ազատագրական պատերազմը Հունաստանում, որը 1830 թվականին ձեռք

բերեց անկախություն, 1861 թվականին Օսմանյան կայսրությունը ճանաչեց Ռումինիայի պետությունը, 1867 թվականին Սերբիայից վտարվեցին թուրքական վերջին կայազորները, 1875 թվականին ապստամբություն բռնկեց Բոսնիայում և Հերցեգովինայում, իսկ 1876 թվականին՝ Բուլղարիայում, որը 1878 թվականին ազատագրվեց օսմանական լծից։ Քրիստոնեություն դավանող բալկանյան ժողովուրդների հաջող պայքարը թուրքական տիրապետության դեմ ուժեղացնում էր նաև ազգային ազատագրության և նացիոնալիզմի գաղափարների հասունացումը Թուրքիայի քրիստոնյա փոքրամասնության՝ գլխավորապես հայերի և հույների շրջանում։ Այդ գաղափարները, սակայն, հաճախ ընդունում էին կրոնական գունավորում, դեռևս հեռու էին զուտ նացիոնալիզմ լինելուց։ Այս տեսակետից ուշագրավ է, օրինակ, այն, որ հայերը և հույները իրենց ազգային ինքնավարությանն էին ձգտում իրենց կրոնական համայնքների համար սուլթանի կողմից ճանաչված ստատուտների ձևով. 1860—1863 թվականներին հաստատվեցին հայ լուսավորչականների ստատուտները, իսկ 1862 թվականին հունական պատրիարքարանի ստատուտը։

Այդ ժամանակ չափազանց հակասական է եղել նաև եվրոպական տերությունների քաղաքականությունը Օսմանյան կայսրության ազգամիջյան հարաբերությունների հարցում։ Եվրոպական տերությունները, իրենց հավատակից քրիստոնյաներին պաշտպանելու պատրվակով գնալով ավելի հաճախ էին միջամտում Օսմանյան կայսրության ներքին գործերին, մասնավորապես ազգամիջյան կոնֆլիկտներին։ Ֆրանսիան հովանավորում էր կաթոլիկներին, ցարական Ռուսաստանը՝ ուղղափառներին և լուսավորչական հայերին, Անգլիան՝ ընդհանրապես բոլոր քրիստոնյաներին։ Այդ հովանավորությունը տերություններն օգտագործում էին ամենից առաջ իրենց շահերի օգտին՝ Օսմանյան կայսրությունը թուլացնելու և տնտեսապես ավելի շատ ստրկացնելու համար։ Բայց, տնտեսապես ստրկացնելով Օսմանյան կայսրությունը, այն դարձնելով ագրարա-հումքային կցորդ, Անգլիան, Ֆրանսիան և արևմտաեվրոպական մյուս տերությունները

շահագրգռված չէին իրականում պաշտպանելու ազգային-ազատագրական շարժումները, որոնք կարող էին հասցնել իրենց համար տնտեսական կողոպուտի ասպարեզ հանդիսացող կայսրության փլուզմանը: Իսկ Ռուսաստանը, որը շահագրգռված էր Բալկաններում իր դիրքերը ամրապնդելու գործում և նույնպես հետապնդում էր իր նպատակները (օրինակ, հայտնի են ցարիզմի զավթողական նկրտումները Ստամբուլի և նեղուցների նկատմամբ), պաշտպանում էր ազգային-ազատագրական շարժումները, որոնք նպաստում էին թուրքերի արտամղմանը Բալկաններից, ընդամին խաղալով օբյեկտիվորեն դրական, առաջադիմական դեր: XIX դարի վերջին—XX դարի սկզբին բալկանյան բոլոր ժողովուրդները թուրքական տիրապետության դեմ մղած ազգային-ազատագրական համառ պայքարի և Ռուսաստանի ռազմական ու քաղաքական օգնության շնորհիվ ստացան անկախություն, չնայած այն բանին, որ Ռուսաստանի գործողությունները ուժեղագույն դիմադրության էին հանդիպում արևմտյան տերությունների կողմից, որոնք վախենում էին Բալկաններում ռուսական ազդեցության ուժեղացումից և ձգտում էին նեղուցները վերցնել սեփական վերահսկողության տակ: Ռուսաստանը դարձյալ շահախնդրորեն, պաշտպանում էր նաև հայերի, ասորիների և քրդերի ազգային շարժումները Թուրքիայի արևելքում, նույնպես օբյեկտիվորեն խաղալով դրական դեր և այստեղ ևս հանդիսանալով արևմտյան տերությունների մրցակցությանը:

Այսպիսով, Եվրոպական տերությունների քաղաքականությունը Թուրքիայի ժողովուրդների ազգային շարժումների նկատմամբ թեպետ եղել է չափազանց հակասական և համապատասխանում էր ամենից առաջ այդ տերությունների շահերին, այնուհանդերձ արթնացնում էր Թուրքիայի ճնշված ժողովուրդների ազգային ինքնագիտակցությունը, խթանում նրա աճը:

Այս բոլոր պատճառները հանգեցրին այն բանին, որ սոցիալ-տնտեսական և կուլտուրական տեսակետներից քրիստոնյա ազգային փոքրամասնություններից թուրքերի ետ

մնալու հետ միասին, վերջիններս ետ էին մնում նաև նացիոնալիզմի գաղափարների զարգացման մակարդակով:

Մինչև XIX դարի 60—70-ական թվականները թուրքական նացիոնալիզմի հստակ գաղափարներ գոյություն չունեին: Կառավարող դասակարգի ներկայացուցիչների շրջանում (թուրք ֆեոդալներից և բյուրոկրատական վերնախավից բացի այդ դասակարգին էին պատկանում նաև մուսուլմանական ուրիշ ժողովուրդներից ելածները՝ քրդերը, արաբները, ալբանացիները և այլն) իշխում էր իսլամիզմի գաղափարախոսությունը, որը ժխտում էր մուսուլմանական ժողովուրդների ազգային առանձնահատկությունները և ձգտում էր բռնի իսլամացնել ոչ մուսուլմանական ժողովուրդներին, նպատակ ունենալով Թուրքիայում և նույնիսկ ամբողջ Օսմանյան կայսրությունում ստեղծել «միասնական մուսուլմանական ազգ»: Ազգային տարբերությունները իսլամիստների պատկերացմամբ էական դեր չէին կատարում: Նրանց կարծիքով, գլխավորը կրոնական պատկանելությունն էր: Իր հետագա զարգացման մեջ թուրք կառավարող շրջանների իսլամիզմը վերաճեց պանիսլամիզմի:

Թուրքիայի վերածումը օտարերկրյա տերությունների կիսագաղութի XIX դարի վերջին—XX դարի սկզբին և ազգային պրոցեսները

Բանզիմաթի ռեֆորմների մեծ մասը մնաց չիրականացված[9]: Առաջվա նման շարունակվում էին անկարգությունները ու կամայականությունը: Բայց Թուրքիայում, թեպետ չափազանց դանդաղ, բայց աճում էին այն ուժերը, որոնք գնալով ավելի անհանդուրժողաբար էին վերաբերվում դեպի տիրապետող կարգը. գնալով ավելի բազմաքանակ ու ավելի հարուստ էր դառնում առևտրական բուրժուազիան, հանդես

9 Միջնադարի շատ օրենքներ և սովորություններ Թուրքիայում պահպանվել էին նույնիսկ ընդհուպ մինչև XX դարի սկիզբը. օրինակ, դեռ 1908 թվականին քրիստոնյաները պարտավոր էին կալվածատիրոջ համար մի շարք աշխատանքներ կատարել նրա անձնական հողերում [46, էջ 137]:

եկան լիբերալ կալվածատերերը, որոնք շահագրգռված էին բուրժուազիայի հետ տնտեսական համագործակցության մեջ։ Դրանք գերազանցապես խոշոր հողատերերն էին, որոնք հողեր էին ձեռք բերել գնելու կամ կաշառքի միջոցով և գյուղատնտեսական մթերքներ էին մատակարարում շուկային, այլ ոչ թե հին ֆեոդալներ էին, որոնք պահում էին իրենց ժառանգական ավատները։ Երկրում կարգ հաստատելու գործում շահագրգռված էին նաև հարկերի, հանքերի ու հանքահորերի վարձակալները, առևտրականները. սրանց բոլորին կեղեքում էին ֆեոդալները, փաշաները, հաճախ նրանք կողոպուտների էին ենթարկվում ճանապարհներին ու տանը։

Բայց XIX դարի վերջին քառորդի—XX դարի առաջին տարիների գլխավոր պատմական գործոնը, որը մեծապես փոխեց երկրի դասակարգային հարաբերակցությունները և ազդեց ազգային պրոցեսների վրա, թուրքական էկոնոմիկայի ներգրավումն էր համաշխարհային շուկայի մեջ։ Թուրքիայի վերածումը իմպերիալիստական տերությունների ապրանա-հումքային կցորդի ուղեկցվում էր գյուղատնտեսական արտադրության, հատկապես տեխնիկական կուլտուրաների զարգացմամբ։ Այսպես, ծխախոտի տարածությունները 1884-ից մինչև 1903 թվականը ավելացել էր 3,3 անգամ, բամբակի բերքը 1896-ից մինչև 1908 թվականը՝ 32 անգամ և այլն [185, էջ 113]։

Աշխատանքի բաժանման աճը գյուղատնտեսության մեջ, նրա ներգրավումը համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ, կապիտալիստական հարաբերությունների ներթափանցումը ուժեղացրին դասակարգային շերտավորումը գյուղում։ Սկսեց ձևավորվել գյուղական բուրժուազիան՝ հանձինս կուլակների ու կալվածատերերի, որոնք անցնում էին տնտեսավարման կապիտալիստական մեթոդներին։ Երևան եկավ նաև գյուղատնտեսական պրոլետարիատը։ Թեև քաղաքներում օտարերկրյա ապրանքների ներմուծումը առաջացրեց արդյունաբերության որոշ ճյուղերի անկում, այնտեղ սկսեցին կառուցվել ֆաբրիկաներ ու գործարաններ, որոնք անհրաժեշտ էին օտարերկրյա կապիտալին։ Երկրի էկոնոմիկայի վրա առանձնապես մեծ ներգործություն ունեցավ երկաթուղիների շինարարությունը, որոնք անհրաժեշտ էին օտարերկրյա կապիտալիստներին՝ Թուրքիայի ռեսուրսները իրենց շահերի օգտին ավելի լավ օգտագործելու համար [185, էջ 113—114][10]։

XIX դարի երկրորդ կեսին, գլխավորապես 80-ական թվականներին, երկաթուղային շինարարությունը նպաստեց Թուրքիայի արտադրողական ուժերի զարգացմանը, առանձին շրջանների տնտեսական կապերի ամրապնդմանը և ընդհանուր թուրքական շուկայի կազմավորմանը։ Իհարկե, այն ժամանակվա Թուրքիայից երկաթուղիները, Ա. Դ. Նովիչևի արտահայտությամբ, մի կողմից «ծնդանոթափողեր էին, որոնցից արկեր էին թռչում արտասահմանյան էժան ապրանքների ձևով, որոնք հարվածում էին թուրքական արդյունաբերությանը» [182, էջ 248], բայց մյուս կողմից էլ երկաթուղիների շինարարությունը խթանում էր ապրանքա-փողային հարաբերությունների հետագա զարգացումը դրանց հարևան, գերազանցապես գյուղական շրջաններում, որտեղ բնատնտեսությունը փոխարինվում էր ապրանքայինով։ Զարգանում էր նաև ծովային նավագնացությունը, հիմնականում առափնյա նավագնացությունը, կառուցվում էին նավահանգիստներ[11]։

Առևտրափոխանակությունը Թուրքիայում, գրում էր Ի.

---

10 1856 թվականին սկսվեց Իզմիր-Այդին երկաթուղու շինարարությունը, 1864 թվականին՝ Իզմիր—Կասաբա, 1881 թվականին կառուցվեց Մուդանյա—Բուրսա ճանապարհը, 1886 թվականին՝ Մերսին—Ադանա, 1888 թվականին սկսվեց Իզմիտ—Անկարա հատվածի շինարարությունը, իսկ ավելի ուշ՝ Բաղդադի մագիստրալի շինարարությունը, որը XX դարի սկզբին արդեն անցնում էր ամբողջ Փոքր Ասիայով՝ Բոսֆորից մինչև Սիրիա [223, էջ 302—303. 147, էջ 158—159. 70, էջ 34]։ Մինչև առաջին համաշխարհային պատերազմը, ընդամենը կառուցված է եղել 3931 կիլոմետր երկաթուղագիծ [213, էջ 95—96]։ Բեռների հոսքը այդ ճանապարհներով սրընթաց աճում էր. 1904 թվականին Բաղդադի մագիստրալով փոխադրվել էր 4424 տոննա բեռ, իսկ 1912 թվականին՝ 57 456 տոննա [182, էջ 164]։

11 1844 թվականին հիմնվել է թուրքական առաջին չոգենավային ընկերությունը, իսկ առաջին համաշխարհային պատերազմի սկզբին Թուրքիայում կար մասնավոր ու պետական 230 այդպիսի ընկերություն [213, էջ 98]։

Ի. Գոլոբորոդկոն, արագ աճում է հաղորդակցության ճանապարհների զարգացման շնորհիվ։ Շոգենավային կանոնավոր երթևեկություններ են հաստատվել բոլոր նշանավոր նավահանգիստների հետ, կառուցվում են երկաթուղիներ։ Առաջ ապրանքները փոխադրվում էին քարավանային դժվարին ճանապարհներով, առևտրականին սպառնում էր ավազակախմբերի հարձակման մշտական վտանգը։ Այժմ նրա ապրանքը անվնաս հասցվում է երկաթուղու ցանկացած կետը։ Փոխադրման էժանությունը, արագությունը և անվտանգությունը ուժգին զարկ տվեցին առևտրափոխանակության զարգացմանը երկրի ներսում։ Առևտրական հարաբերությունների ընդարձակ ցանց հաստատվեց նաև նախկինում օտարերկրյա կապիտալի համար անմատչելի վայրերի հետ։ Փոքր Ասիայի հարավային ծովափին, այն վայրերում, որտեղից անցնում էր երկաթուղին, երկրագործական աշխատանքները արդեն կատարվում են կատարելագործված գործիքների, գութանների, կալսիչների օգնությամբ և այլն։ Եվ դա հիանալի արդյունքներ է տալիս [46, էջ 149, 125]։

Ճիշտ է, երկաթուղիների շինարարությունը երկրում դրանց աշխարհագրական տեղաբաշխման տեսակետից կատարվում էր չափազանց անհավասարաչափ. դրանք կառուցվում էին միայն Արևմտյան և Կենտրոնական Անատոլիայում։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին այդ շրջաններում 100 քառակուսի կիլոմետրին ընկնում էր 570 մետր երկաթուղագիծ, որը զգալի թիվ է [182, էջ 242]։ Իսկ լեռնոտ ու կիսամեկուսացած արևելյան շրջանները մնում էին առանց ճանապարհների։ Ճանապարհների բացակայությունը խանգարում էր բնատնտեսության քայքայմանը արևելյաանատոլիական գյուղում, գյուղատնտեսական արտադրանքի ավելցուկները վաճառահանելու տեղ չկար։ Օրինակ, Խարփութի շրջանում արտադրում էին բամբակ, բուրդ, խաղող, հացահատիկ, գրում էր Ա. Տիրկովան։ Բայց մարդիկ չգիտեին, ինչ անեն այդ ամենը, քանի որ լավ ճանապարհների բացակայության պատճառով արտահանում չկար։ Միայն Բիթլիսի վիլայեթը կարող էր տարեկան տալ 0,5 միլիոն տոննա հացահատիկ։ Բայց դրա արտահանման հույս

չկար, և շատ հողեր մնում էին անմշակ, իսկ շատ ձեռքեր՝ անզբաղ։ Դա, մասնավորապես, այն պատճառներից մեկն էր, որ Բիթլիսից ամեն տարի Ամերիկա էին գաղթում 30 հազար հայեր [227, էջ 70—71]։

Այդ պատճառով Արևելյան Անատոլիան՝ Թուրքական Քուրդիստանը, Թուրքահայաստանը, Թուրքական Վրաստանը և Լազիստանի արևելյան շրջանները անհամեմատ ավելի դանդաղ էին ներգրավվում ընդհանուր թուրքական շուկայի մեջ և սոցիալ-տնտեսական զարգացմամբ ետ էին մնում մնացած Թուրքիայից, որը կասեցնում էր նաև ազգային պրոցեսները։ Օրինակ, այդ գործոնը ինչ-որ չափով դանդաղեցրեց քրդերի ձևավորումը իբրև ազգ (ուրիշ պատճառների հետ միասին, օրինակ, քուրդ ժողովրդի առանձին մասերի տարաբնակեցումը տարբեր երկրներում, նրանց ցեղային մասնատվածությունը և այլն)։ Հենց դա էլ արգելակեց նաև թուրքահայերի ազգային կոնսոլիդացումը, քանի որ կապիտալիստական հարաբերությունները զարգանում էին ոչ թե արևելաանատոլիական հայերի, հայ ժողովրդի այդ համեմատաբար հոծ զանգվածների շրջանում, այլ գլխավորապես Կենտրոնական և Արևմտյան Անատոլիայի քաղաքներում ապրող, այսինքն՝ բնակչության հայ մեծամասնություն չունեցող շրջաններում ապրող հայերի մեջ։ Մանավանդ, որ հայերի շրջաններում ապրող հայերի մեջ։ Մանավանդ, որ հայերի մյուս, ավելի մեծ մասը, ապրում էր Ռուսական կայսրության տերիտորիայում։

Տնտեսական կապերի զարգացումը արևմտյան և կենտրոնական շրջաններում ուժեղացնում էր ոչ թուրք բնակչության ազգային ասիմիլյացման (թուրքացման) պրոցեսները, բնակչություն, որը այստեղ կազմում էր փոքրամասնություն և ցրված էր թուրքերի զանգվածների շրջանում[12]։ Առանձնապես արագ էին ասիմիլյանում էթնիկական այն ընդհանրություն-

---

12 Ազգային պրոցեսների վրա տնտեսական հարաբերությունների ունեցած ազդեցությունը ուսումնասիրելու համար մեթոդոլոգիական մեծ նշանակություն ունի Վ. Ի. Լենինի հետևյալ ասույթը. «...տնտեսական շրջանառության պահանջներն ինքնին կորոշեն տվյալ երկրի այն լեզուն, որը մեծամասնության համար օգտավետ է գիտենալ առևտրական հարաբերությունների շահերի տեսակետից» [6, էջ 117]։

ները, որոնք վաղուց ընդունել էին իսլամ և մասամբ արդեն ենթարկվում էին թուրքացման: Այսպես, Լազիստանի արևմտյան շրջանների լազերի վերաբերյալ Ն. Յա. Մառը գրել է. «Ինտենսիվ շփումը տարբեր ժողովուրդների հետ, հարբուսանալու մասին միակ ոգևորող միտքը և արտագաղթի ուժեղ շարժումը դեպի Թուրքիայի բոլոր նավահանգստային քաղաքները և նրանց շրջակայքը խիստ նպաստում են լազերի ազգային ինքնագիտակցության վերջնական կործանմանը» [157, էջ 625]: Դեռ XIX դարի կեսին լազերը, իտալացի ճանապարհորդ Ա. Բիանկիի վկայությամբ, իրենց զգում էին ինքնուրույն ուժ, հաճախ թշնամության մեջ լինում թուրքերի հետ [257, էջ 302]: «Հիմա (այսինքն՝ 1910 թվականին:— Դ. Ե.),— նշում էր Ն. Յա. Մառը,— առանձին տեղերում հազիվհազ կարելի է նշմարել այդ զգացումի մնացորդները. ընդհանրապես լազերը համոզված թուրք հայրենասերներ են» [157, էջ 624]: Շատ լազեր արդեն չգիտեին լազերեն և խոսում էին միայն թուրքերեն: Ավելին, նրանք հաճախ ամաչում էին իրենց մայրենի լեզվից: Այսպիսով, լազերի մի մասի ասիմիլյացումը, հավանաբար, մոտ էր ավարտին: Բայց Լազիստանի արևելյան շրջաններում (Վիցում, Արխավում, Խոպում) դրությունը այլ էր. լազերի ճնշող մեծամասնությունը պահպանել էր և՛ մայրենի լեզուն և՛ իր ազգային ինքնագիտակցությունը [157, էջ 626]: Դա բացատրվում է առաջին հերթին այն բանով, որ Արևելյան Լազիստանը, որ չուներ հաղորդակցության լավ ճանապարհներ, տնտեսապես թույլ էր կապված մնացած Թուրքիայի հետ:

Թուրքիայի վերածումը կիսագաղութի և երկաթուղիների շինարարությունը իրենց հետ բերեցին ոչ պակաս կարևոր մի առանձնահատկություն ևս: Առաջ երկրի առևտրական կետերը իբրև առևտրի առարկա իրենց տրամադրության տակ ունեին տեղական արտադրության ապրանքներ, որոնց հոսանքները շարժվում էին գլխավորապես երկրի ներքին առանձին կենտրոնների միջև, որը նպաստում էր առևտրական բուրժուազիայի ձևավորմանը ներքին շրջաններում: Վերջինս չէր կարող այդ պրոցեսի մեջ չներգրավել նաև թուրք բնակչության մի մասին, ծնել նաև ազգությամբ թուրք առևտրական

բուրժուազիա: Սակայն, երբ Թուրքիան դարձավ արդյունաբերական տերությունների հումքային կցորդ և վաճառահանման շուկա, ներքին առևտուրը զգալի չափով ենթարկվեց արտաքին առևտրի շահերին, առևտրական կենտրոնները ներքին շրջաններից փոխադրվեցին նավահանգստային քաղաքները, ծագեցին նաև նոր կենտրոններ (դրանցից մի քանիսը նույնիսկ ներքին Անատոլիայում), որոնք դարձան երկաթուղային հանգույցներ կամ գյուղատնտեսական արտադրանքի և հումքի արտահանման կետեր: Առևտրական ակտիվության կենտրոնների այդպիսի տեղափոխումը ներքին շրջաններից (որտեղ գերակշռում էր ազգությամբ թուրք բնակչությունը) դեպի արտաքին շրջանները, որոնք, որպես կանոն, ընկած են ծովափին, հանգեցրեց օտարերկրյա կապիտալի հետ կապված կոմպրադորական բուրժուազիայի նոր ուժեղացման: Այդ բուրժուազիան, որը ազգային պատկանելությամբ մեծ մասամբ թուրքական չէր, գերիշխող նշանակություն ձեռք բերեց երկրի առևտրում [182, էջ 116]: Այսպիսով, Ասիական Թուրքիայում ևս ստեղծվեց այնպիսի իրադրություն, որ Եվրոպական Թուրքիայում ստեղծվել էր դեռ XIX դարի առաջին կեսին, որի մասին Ֆ. Էնգելսը գրել է. «Հենց սլավոնական և հույն բուրժուազիան բոլոր քաղաքներում և առևտրական կետերում... ավելի է հարստանում և ազդեցիկ դառնում, իսկ թուրքերը գնալով ավելի ու ավելի են մղվում հետին պլան» [5, էջ 25]: Այս դիտողությունը արդարացի է նաև Ասիական Թուրքիայի համար, այն ուղղումով միայն, որ այստեղ գրեթե չի եղել սլավոնական բուրժուազիա, այլ գերազանցապես եղել է հայ և հույն:

Թուրքիայի կիսագաղութային դրությունը պայմանավորեց արդյունաբերության դանդաղ և այլանդակ զարգացումը: Երկաթուղիներ անցկացնելուց հետո օտարերկրյա ապրանքների հոսանքը դեպի Թուրքիայի խորքը ավելացավ, փակվում էին թուրքական արդյունաբերության ամբողջ ճյուղեր, բացառությամբ, թերևս, գորգագործությունից, որը սկսեց աշխատել արտահանման համար: Թուրքիան գնալով ավելի էր դառնում հումք արտահանող երկիր, այն ժամանակ, երբ առաջ նա արտահանում էր նաև պատրաստի արտադրանք՝

մետաքս, թավիշ, մահուդ, սաֆյան, զենք։ Օտարերկրյա կապիտալը կանգնեց թուրքական արդյունաբերության զարգացման ճանապարհին և դարձավ նրա լճացման հիմնական պատճառը։ XIX դարի վերջին—XX դարի սկզբին թուրքական արդյունաբերությունը գտնվում էր ծայրահեղ հետամնացության վիճակում, թեև որոշ զարգացում ստացել էին նրա որոշ ճյուղերը, օրինակ, ալրաղացային (քանի որ երկաթուղիներ անցկացնելուց հետո ուժեղացավ հացահատիկի առհասը դեպի Ստամբուլ, Իզմիրի և մյուս քաղաքների շուկաները) [182, էջ 93, 101]. այնուհետև, բամբակի առևտրի կենտրոն Ադանայում երևան եկան բամբակաղտիչ և մանվածքային գործարաններ, կային նաև բազմաթիվ տնաշխատ ջուլհակներ [223, էջ 52]։ Բայց դարձյալ ներքին շուկան սպասարկող ձեռնարկությունների զգալի մասը պատկանում էր օտարերկրացիներին կամ այլազգի բուրժուազիային։ Այսպես, վեց փայտասղոցման գործարաններից XIX դարի 90-ական թվականների սկզբին երեքը պատկանում էին օտարերկրացիների, իսկ երեքը՝ Թուրքիայի հույներին. հինգ ձուլարաններից ոչ մեկը թուրքական չէր. դրանք բոլորն էլ կամ հույների, կամ այլազգի ուրիշ կապիտալիստների սեփականությունն էին [182, էջ 108]։ Օտարերկրացիները իրենց ձեռքն էին զցել մունիցիպալ ձեռնարկությունները՝ գազագործարանները, էլեկտրակայանները, տրամվայի գծերը, ինչպես նաև նավաշինարաններ, պահեստներ, զինանոցներ կառուցող ձեռնարկությունները [182, էջ 108]։ Թուրքական արդյունաբերության ամբողջ էական մասը պատկանում էր օտարերկրացիներին կամ, ավելի փոքր չափով, այլազգի բուրժուազիային։ Սա էր թուրք ազգային բուրժուազիայի թուլության հիմնական պատճառը։

Անատոլիայում, գրում էր Ի. Ի. Գոլոբորոդկոն, կազմվել էր թուրք արդյունաբերական բուրժուազիայի մի խավ։ Սակայն բոլոր ամենաշահավետ արտադրություններն ու կոնցեսիաները արդեն զավթել էին օտարերկրացիները։ Նրանք ունեին մի շարք հսկայական արտոնություններ և առավելություններ։ Թուրք արդյունաբերողները չէին կարող հաջողությամբ մրցել օտարերկրացի ձեռնարկատերերի հետ [46, էջ 212]։ Շատ ուժեղ էին նաև այլազգի բուրժուազիայի դիրքերը։ «Բանկերը և նոր ծնվող արդյունաբերական ձեռնարկությունները,— վկայում է Ա. Տիրկովան,— տնօրինում են հույները, հայերը վարում են առևտրական գործերը... Հիմա թուրքերը խելքի են եկել և ուրախ կլինեին մրցել և՛ օսմանական քրիստոնյաների հետ, և՛ եվրոպացիների հետ, և՛ լեվանտացիների (XVII—XVIII դարերում Լեվանտի, այսինքն՝ Միջերկրական Արևելքի երկրներում բնակության հաստատած արևմտաեվրոպացիների ժառանգների) հետ, բայց դրա համար նրանք չունեն ոչ փորձ, ոչ փող» [227, էջ 131]։

Պրոլետարիատը հիմնականում ազգությամբ թուրքական չէր։ «Բանվորների մեջ թուրքեր քիչ կան։ Ստամբուլում, օրինակ, ծխախոտի ֆաբրիկայում... 2,5 հազար բանվորներից 200-ն են միայն թուրք։ Արհեստավորների մեջ նույնպես նրանք քիչ են։ Միայն համալ-բեռնակիրների համքարությունում 7 հազար հոգուց կեսը մուսուլմաններ են, բայց առավելապես քրդեր»,— այս է Ա. Տիրկովայի մեկ ուրիշ վկայությունը ևս [127, էջ 231]։ Պրոլետարիատի ընդհանուր թվաքանակը Թուրքիայում առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին հավասար է 50 հազար մարդու [182, էջ 112]։ Իր սակավաթվությունից բացի, նա շատ փոշիացած էր, քանի որ խոշոր ձեռնարկություններ քիչ կային։

Ինտելիգենցիայի շրջանում ևս գերակշռում էին ոչ թուրքերը։ Ինժեներները, բժիշկները, փաստաբանները, որպես կանոն, հույներն էին, հայերը, հրեաները։ «Բոլոր ազատ պրոֆեսիաները զբաղեցրել են քրիստոնյաները, որոնք ամենից հաճախ կրթությունը ստացել են Արևմուտքում» [227, էջ 132]։ Այս բանում արտահայտվել է թուրքերի ժողովրդական կրթության, առանձնապես հատուկ և բարձրագույն կրթության խիստ ետ մնալը։ Թուրքերի կրթությունը, ըստ էության, շարունակում էր մնալ հոգևորականության ձեռքում։ Մասնագետներ՝ բժիշկներ, ինժեներներ թուրքերի և մյուս մուսուլմանների թվից պատրաստում էին միայն զինվորական ուսումնարանները, որոնց պատրաստության ընդհանուր մակարդակը ավելի բարձր չէր, քան միջնակարգ կրթության դպրոցներում։ Արևմուտքում կրթություն ստա-

նալու համար շատ հազվադեպ էին ուղարկում թուրքերին, և եթե ուղարկում էին, ապա միայն սպաներին։ 1869 թվականին ընդունվեց օրենք ընդհանուր պարտադիր ձրի տարրական կրթության մասին, միջնակարգ դպրոցների ցանց ստեղծելու և համալսարան բացելու մասին (սա աշխատանքն սկսեց միայն 1900 թվականին)։ Այս օրենքը վատ էր կենսագործվում։ Պատահական չէ, որ արդեն 1913 թվականին ուժի մեջ մտցվեց նոր օրենք տարրական դպրոցների ուսուցման մասին։ Սակայն, այս օրենքից հետո էլ աշխարհիկ կրթության հաջողությունները աննշան էին։ Աշխարհիկ տարրական և միջնակարգ դպրոցներում անգամ իսլամի դասավանդումը շատ մեծ տեղ էր գրավում [185, էջ 132—134]։

Այսպիսով, արտադրողական ուժերի և սոցիալական հարաբերությունների զարգացումը Թուրքիայում XIX դարի վերջին քառորդում—XX դարի սկզբին հանգեցրեց կապիտալիստական հարաբերությունների, ինչպես և ընդհանուր կուլտուրական մակարդակի ամենամեծ աճման՝ դարձյալ ճնշված ազգային փոքրամասնությունների, այլ ոչ թե թուրքերի մոտ։ Ըստ որում այդ հակասությունը դնալով ավելի էր սրվում նաև այն պատճառով, որ թուրք ազգային բուրժուազիան, թեև դանդաղ և մեծ ուշացումով, բայց այնուամենայնիվ նույնպես սկսել էր զարգանալ։ Այդ հակասությունը, որը սկզբում զգացվում էր որպես տնտեսական հակասություն, հետագայում անխուսափելիորեն պետք է վերածվեր քաղաքական հակասության, գաղափարախոսական տեսակետից ձևավորվեր բուրժուա-նացիոնալիստական հոսանքների ձևով։

Եվ իրոք, ներքին արտադրության, հատկապես թուրքական ձեռնարկությունների արտադրած ապրանքների առևտուրը, ուներ նաև թուրք առևտրականներ։ «Նավահանգստային քաղաքներում շուկաների կրպակների մեծագույն մասը հույների և հայերի, ավելի հազվադեպ՝ հրեաների ձեռքում է,— գրում էր Ի. Ի. Գոլոբորոդկոն,— բայց որքան ավելի ենք դնում դեպի Անատոլիայի խորքը, այնքան ավելի շատ ենք հանդիպում թուրք, գլխավորապես մանր առևտրականների» [46, էջ, 18, 149]։ Այդ առևտրի մասշտաբները ավելի փոքր էին, քան ներմուծվող և արտահանվող ապրանքների

առևտրինը, մանավանդ, որ վերջինս վարկավորվում էր օտարերկրյա ֆիրմաների կողմից։ Այդ պատճառով թուրք առևտրականները մասշտաբով ավելի փոքր էին, ըստ որում կենտրոնացած էին գլխավորապես ներքին Անատոլիայում [182, էջ 122]։ Բացի դրանից, մեծ ու փոքր թուրք կալվածատերերը, դյուղի հարուստները, կիսաֆեոդալական մեթոդներով շահագործելով դյուղացիներին, աստիճանաբար հաղորդակից էին դառնում նաև առևտրին։ Նրանք քաղաքներում բաց էին անում կրպակներ ու խանութներ, ձգտում էին ավելի խոշոր առևտրական ու ֆինանսական գործառնությունների միջոցով ևս բազմապատկել իրենց հարստությունները [164, էջ 84]։ Ազգությամբ թուրք, նոր ծնունդ առնող ուժերի այդ բոլոր ներկայացուցիչները նախանձով էին նայում օտարազգի առևտրականների վրա, բայց, զրկված լինելով իմպերիալիստական բռնության դեմ պաշտպանվելու հնարավորությունից և մյուս բուրժուաներից ավելի շատ տառապելով ֆեոդալական կամայականությունից, ոչինչ չէին կարողանում անել իրենց դրությունը բարելավելու համար [182, էջ 122]։ Նրանց ճանապարհը փակում էր կապիտուլյացիոն արտոնություններ ունեցող և եվրոպական տերությունների հովանավորությունը վայելող օտարերկրացիների և այլազգի կոմպրադորների մրցակցությունը։ Նոր ծնունդ առնող թուրք բուրժուազիան իր առաջին իսկ քայլերին հանդիպեց մի խոչընդոտի, որ նա անմիջապես չզիտակցեց, բայց որը միանգամայն զգալի էր կոնկրետ արդյունքներից։ Թուրք բուրժուազիան ստեղծված դրության համար անմիջական մեղավոր համարում էր սուլթանին, որը թուրքերին իրավազուրկ էր դարձրել իրենց սեփական տանը։ Սկզբնական շրջանում դեռևս աղոտ, այդ դժգոհության արտահայտիչը եղավ թուրք ինտելիգենցիան, որը ծագումով ֆեոդալական-բյուրոկրատական էր, գաղափարախոսությամբ՝ արդեն բուրժուական [164, էջ 84—85]։ Հենց նա էլ հանդիսացավ թուրքական նացիոնալիզմի առաջին գաղափարների տարածողը։ Թուրքական նացիոնալիզմի առաջին սաղմերը ծագեցին XIX դարի 60-ական թվականներին, «նոր օսմանների» (նեն օսմանլըլար), այդ սահմանադրական միապետականների

շարժման մեջ, որոնք ձգտում էին կիրառել բուրժուական մի շարք ռեֆորմներ և հույս ունեին դրանով կանխել կայսրության փլուզումը (տե՛ս 195]: «Նոր օսմաններին» նացիոնալիզմը դեռ շատ անորոշ էր: Այդ նացիոնալիզմը հանգում էր գլխավորապես թուրքերին լեզուն արաբական և պարսկական փոխառյալ բառերից մաքրելու համար ծավալված շարժմանը: «Նոր օսմանների» գաղափարների ազդեցության տակ ծնվեց նաև գեղարվեստական նոր գրականություն՝ արձակը, որը գրեթե չկար անցյալում: Զարդացավ թատերագրությունը, քարացած ձևերից սկսեց հեռանալ պոեզիան: Նոր գրականությունը հաճախ տոգորված էր լինում հայրենասիրական բովանդակությամբ, երբեմն պրոպագանդում էր հավասարություն՝ բուրժուական ըմբռնմամբ: XIX դարի երկրորդ կեսին հանդես եկան թուրք ականավոր գրողներ, որոնք ձգտում էին վերափոխել լեզուն, այն մոտեցնել ժողովրդականին, և զարդացնել գրականության նոր ժանրեր: Իբրահիմ Շինասին (1826—1871) հրատարակեց թուրքական առակների ժողովածու[13], թուրք գրականության մեջ առաջին անգամ գրեց կատակերգություն: Նա նույնիսկ առաջարկություն արեց արաբական այբուբենը թուրքական գրչության մեջ լատինականով փոխարինելու մասին [496, էջ 223—249]: Նամըք Քեմալը (1840—1888) սկսեց գրել բանաստեղծություններ, որոնք տոգորված էին հայրենասիրական զգացումներով, ստեղծեց թուրքական առաջին վեպը: Գրականության նորացման և գրական լեզվի պարզեցման կողմնակից էր նաև Զիյա փաշան (1825—1881): Այս բոլոր գրողները «նոր օսմանների» առաջնորդներից էին [511, հատ. II, էջ 60—63, հատ. III, էջ 117—118, հատ. IV, էջ 84—87]:

«Նոր օսմանների» շատ ղեկավարներ Օսմանյան կայսրությունը պահպանելու նպատակով ցանկանում էին օգտագործել նաև պանիսլամիզմի դոկտրինան, որը արտացոլում էր կայսրության կղերա-ֆեոդալական վերնախավի շահերը և

[13] Ճիշտ է, այդ ժողովածուն կոչվում էր «Օսմանական առածներ» (այլ ոչ թե թուրքական) «Դուրուբ-ի էմսալ-ի օսմանիյե» այսինքն՝ «թուրքական» անվանումը ավանդաբար դեռ բվում էր տհաճ:

XIX դարի վերջին դարձել էր պետական գաղափարախոսություն, որը փորձում էր հիմնավորել Օսմանյան կայսրության տերիտորիալ ամբողջականության պահպանումը, նրա ժողովուրդների ստրկացումը կառավարող դասակարգերի կողմից: Դրա հետ մեկտեղ, պանիսլամիզմի գաղափարախոսությունը օգտագործվում էր նաև որպես մի միջոց Օսմանյան կայսրությունում և ամբողջ մուսուլմանական Արևելքում եվրոպական կապիտալիստական տերությունների բռնության դեմ պայքարելու համար: Բայց իր զարդացման ընթացքում թուրքական կառավարող շրջանների պանիսլամիզմը ընդունեց ավելի ու ավելի ռեակցիոն և նույնիսկ ագրեսիվ բնույթ, ծառայում էր արտաքին քաղաքական այնպիսի էքսպանսիոնիստական նպատակի, ինչպիսին է աշխարհի բոլոր մուսուլմանների միավորումը օսմանական սուլթան-խալիֆի իշխանության տակ, իսկ կայսրության ներսում կոչ էր անում ճնշել ու ֆիզիկապես ոչնչացնել քրիստոնյա ազգային փոքրամասնություններին:

Բայց «նոր օսմանների» շարժման մեջ հատկապես նշանակալից էր թուրքերեն լեզվի պրոպագանդման փաստը, նրանց ձգտումը՝ լեզուն մաքրել հասարակ ժողովրդի համար անհասկանալի փոխառյալ բառերից, այն մոտեցնել խոսակցական լեզվին: Բանն այն է, որ, ինչպես այդ մասին արդեն ասվեց, մինչև «նոր օսմանները» «թուրքերեն լեզու», «թուրք» հասկացությունները օսմանական իշխող դասակարգի համար ծառայում էին որպես կոպիտի, «ռամկականի» հոմանիշ, համարվում էր ամոթալի. կառավարող շրջաններում թուրք էին անվանում «հասարակ ժողովրդին», թուրք «ռամիկին», «անտաշին»:

Փորձելով պանիսլամիզմի գաղափարները զուգորդել նացիոնալիզմի դեռ ոչ հստակ գաղափարների հետ, «նոր օսմանները» քարոզում էին սեր դեպի «օսմանական հայրենիքը», առաջ քաշեցին լոզունգ՝ ստեղծել «օսմանական ազգ», որը, նրանց մտահղացմամբ, պետք է իր մեջ ներգրավեր կայսրության ինչպես մուսուլմաններին, այնպես էլ քրիստոնյաներին: Այլ կերպ ասած, նրանց գաղափարախոսությունը ոչ միայն անորոշ էր, այլև հակասական: Այնուամե-

նայնիվ, նրանք գտնում էին, որ հենց թուրքերը պետք է միաձուլեն այդ «օսմանական ազգը»: Այսպես երևան եկավ օսմանիզմի կոնցեպցիան, որը ծնունդ առնող թուրքական նացիոնալիզմի և պանիսլամիզմի զաղափարների մի յուրատեսակ խառնուրդ էր:

1876 թվականին «նոր օսմաններին» հաջողվեց հասնել թուրքական առաջին սահմանադրության ընդունմանը, որը վերսին հռչակում էր մոտավորապես նույն բուրժուական ազատությունները, ինչ որ 1839 և 1856 թվականների սուլթանական հրովարտակները («Անձնական ազատություններ միանգամայն անձեռնմխելի է...»— Հոդվ. 10. «Բոլոր օսմանցիները հավասար են օրենքի առջև»— Հոդվ. 16. «Անշարժ և շարժական սեփականությունը.... երաշխավորված է»— Հոդվ. 21 [229, էջ 217]): Սահմանադրության մեջ ակնառու կերպով արտացոլվել էին նաև «նոր օսմանների» զաղափարախոսական դրույթները ազգային հարցում: Այսպես, Հոդվ. 8-ը՝ «Կայսրության բոլոր հպատակները կոչվում են օսմանցիներ՝ առանց դավանանքի խտրության», արտացոլում էր օսմանիզմի սկզբունքը. Հոդվ. 11-ը՝ «Իսլամը պետական կրոն է», կենսագործում էր իսլամիզմի զաղափարները. Հոդվ. 18-ը՝ «Հասարակական պաշտոններ զրաղեցնելը պայմանավորված է թուրքերեն լեզվի իմացությամբ, որը պետության պաշտոնական լեզուն է». Հոդվ. 57-ը՝ «Վիճաբանությունները պառլամենտում տեղի են ունենում թուրքերեն լեզվով» և Հոդվ. 68-ը՝ «Չեն կարող դեպուտատ ընտրվել... 3) այն անձինք, ովքեր չգիտեն թուրքերեն լեզուն..., 10) այն անձինք, ովքեր պնդում են իրենց պատկանելությունը օտար ազգության», խոսում էին «նոր օսմանների» թուրքական նացիոնալիզմի մասին [տե՛ս՝ 229, էջ 216—227]:

Այդ սահմանադրությամբ իրենց դեպուտատներն ընտրելու իրավունք ստացան նաև ոչ մուսուլմանական կրոնական համայնքները (բայց ոչ ազգային փոքրամասնությունները, լինեն դրանք քրիստոնյա, մուսուլմանական և կամ ուրիշներ): Պառլամենտի առաջին նստաշրջանի դեպուտատների մեջ կային 69 մուսուլմաններ, 42 քրիստոնյաներ, 2 հրեա [46, էջ 208]: Դա խոսում էր այն մասին, որ կրոնական

պատկանելությունը «նոր օսմանների» համար ուներ անհամեմատ ավելի մեծ նշանակություն, քան ազգային պատկանելությունը:

Առաջին թուրքական սահմանադրությունը երկար կյանք չունեցավ. 1878 թվականին Աբդուլ Համիդ II սուլթանը ցրեց պառլամենտը, վերացրեց սահմանադրությունը և իրեն հայտարարեց անսահմանափակ միապետ: Աբդուլ Համիդի բռնապետությունը շարունակվեց մինչև 1908 թվականը: Նրա թագավորության շրջանում Օսմանյան կայսրությունը վերջնականապես դարձավ օտարերկրյա կապիտալի կիսագաղութը: Կայսրության ֆինանսներն անդամ վերահսկում էր անգլո-ֆրանսիական հատատաուրյունը՝ «Օսմանյան բանկը», որը միաժամանակ և էմիսիոն բանկ էր և պետության դանձատուն: Բոլոր այդ տարիներին երկրում մոլեգնում էր ռեակցիան: Քրիստոնեական փոքրամասնությունների նկատմամբ Աբդուլ Համիդը վարում էր կատաղի շովինիստական քաղաքականություն: Լինելով մոլի պանիսլամիստ, նա չէր վստահում անդամ թուրքերին և իրեն շրջապատում էր չերքեզներից, քրդերից, լազերից, աջարացիներից ևած մերձավորներով: Դրանցով էլ համալրվում էր նաև սպայական կազմը: Ի. Ի. Գոլոբորոդկոն գրում էր, որ զինվորական դպրոցների սովորողների մեջ ընդամենը մի քանի հարյուր թուրք կա, մնացածները չերքեզներ են, լազեր, աջարացիներ [46, էջ 190]: Աբդուլ Համիդը որոշեց «հայկական հարցին վերջ տալ հայերին վերջ տալու միջոցով»: Հայկական շրջանների վարչական-զինվորական ֆունկցիաները հանձնվեցին քուրդ ֆեոդալ ցեղապետներին: Ստեղծվեց հատուկ, ոչ կանոնավոր հեծելազոր քրդերից, չերքեզներից և կարա-փափախներից, որը սուլթանի անունով կոչվեց «Համիդիյե»: Այդ հեծելազորը սկսեց սիստեմատիկաբար ոչնչացնել ու կոտորել հայերին այն վիլայեթներում, որտեղ նրանք կազմում էին բնակչության մեծամասնությունը և կամ նշանակալի տոկոսը: Պանիսլամիստները օգտագործում էին նաև հասարակ մուսուլմանների ատելությունը, որ նրանց մեջ առաջացրել էին հայ վաշխառուների և վաճառականների գործողությունները, որպեսզի նրանց զրդռեն ամբողջ հայ ժողովրդի դեմ: Դրա

հետևանքով հրահրվեց մի կոտորած, որին զոհ գնացին հարյուր հազարավոր հայեր։

Այդ պայմաններում շատ հայեր, իրենց կյանքն ու գույքը փրկելու համար, ընդունում էին իսլամ։ Վերջին տասնամյակներին, 1912 թվականին նշում էր Պ. Ի. Ավերյանովը, հալածանքների պատճառով եղել են դեպքեր, երբ ամբողջ հայ գյուղեր ընդունում էին մուսուլմանություն (13, էջ 16)։ Մեծ վնաս հասցվեց նաև հայ բուրժուազիային քաղաքներում. խախտվեց նրանց գրեթե ամբողջ առևտուրը, բռնագրավումների պատճառով նրանց սեփականությունն անցավ թուրքերի ձեռքը [46, էջ 251]։ Աբդուլ Համիդի ռեժիմը ճնշում էր նաև հայերի ազգային կուլտուրան, օրինակ, արգելված էր ներկայացնել հայկական պիեսներ [46, էջ 119]։

Չնայած այն բանին, որ ազգային հակասությունները, որոնք կառավարող շրջանների կողմից հրահրվում և օգտագործվում էին իրենց նպատակների համար, խանգարում էին բոլոր հակաֆեոդալական ուժերի միավորմանը, բոլոր ազգությունների առաջադիմական տարրերը պայքար սկսեցին աբդուլհամիդյան ռեակցիոն ռեժիմի դեմ։ Այդ պայքարը ավարտվեց 1908 թվականին՝ երիտասարդ թուրքերի հեղափոխությամբ։

Երիտասարդ թուրքերի հեղափոխությունը, առաջին համաշխարհային պատերազմը և դրանց ազդեցությունը Թուրքիայի ազգային պրոցեսների վրա

Երիտասարդ թուրքերի առաջին ընդհատակյա կոմիտեն հիմնվեց 1889 թվականին։ Դրա հիմնադրողներն էին մուսուլմանական տարբեր ազգություններ ներկայացուցիչները՝ քրդեր, ալբանացի, բոսնիացի, թուրք և ուրիշներ։ Երիտասարդ թուրքերին պաշտպանեցին նաև մյուս ժողովուրդների՝ հայերի, հրեաների, արաբների բուրժուա-նացիոնալիստական գաղտնի կազմակերպությունները։ Սակայն երիտասարդ թուրքերը հիմնականում արտացոլում էին թուրք ազգային բուրժուազիայի լիբերալ խավերի և նրա հետ կապված ու Աբդուլ Համիդի ռեժիմից դժգոհ կալվածատերերի, ինտելիգենցիայի, սպայության և պաշտոնեության մի մասի ձգտումները։ Երիտասարդ թուրքերի շարժումը կղերա-ֆեոդալական կարգի ծայրահեղությունների դեմ ուղղված լիբերալ շարժում էր։ Մինչդ առած թուրք առևտրական բուրժուազիան երիտասարդ թուրքերի հեղափոխության շարժիչ ուժն էր, թուրք ինտելիգենցիան՝ նրա գաղափարախոսը, իսկ նրա կատարողը դարձավ սպայությունը, որը ապստամբության բարձրացրեց զորքերում։

Երիտասարդ թուրքերի հեղափոխությունը չէր նշանակում Թուրքիայի վերափոխում բուրժուական պետության։ Երիտասարդ թուրքերը, հասնելով սահմանադրության վերականգնմանը, շարժումը համարում էին ավարտված։ Նրանք ընդունակ չէին լուծելու բուրժուա-դեմոկրատական հեղափոխության խնդիրները, թույլ չավեցին ագրարային հեղափոխությանը ծավալվելու և դաժան հաշվեհարդար տեսան սկսված բանվորական շարժման հետ [տե՛ս 163]։

Երիտասարդ թուրքերի շարժումը դրա հետ մեկտեղ վկայում էր, որ թուրք բուրժուական ազգի ձևավորման պրոցեսը թևակոխել է նոր փուլ։ Թուրքերի ազգային կոնսոլիդացման համար տնտեսական նախադրյալներ արդեն գոյություն ունեին. Անատոլիայում ծնունդ էր առել թուրք առևտրական բուրժուազիան, ամրապնդվում էին տնտեսական կապերը Անատոլիայի և Արևելյան Թրակիայի առանձին շրջանների միջև, որտեղ բնակչության մեծամասնությունը կազմում էին թուրքերը։

Թուրքերի ազգային կոնսոլիդացման՝ խորը գնացած պրոցեսի գաղափարախոսական արտահայտությունը հանդիսացավ Թուրքիզմի՝ թուրքական բուրժուական նացիոնալիզմի առաջին հստակ գաղափարախոսության հոսանքը, որը աստիճանաբար զարգացում ստացավ երիտասարդ թուրքերի շրջանում։

Ճիշտ է, սկզբում երիտասարդ թուրքերի գաղափարախոսությունը ազգային հարցում օսմանիզմն էր։ Մինչև իշխանության գլուխ անցնելը, երիտասարդ թուրքերը Օսմանյան կայսրության մյուս ժողովուրդներին խոստացել էին ճանաչել նրանց ինքնուրույն գոյության իրավունքը կայսրու-

թյան շրջանակներում։ Դրա պատճառն այն էր, որ կայսրությունը կազմալուծվում էր ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման հարվածների տակ։ Այսպես, երիտասարդ թուրքերի 1908 թվականի կոչի մեջ բուլղարները, հայերը, արաբները անվանված են եղբայրներ։ Բայց այդ բոլոր ժողովուրդները, երիտասարդ թուրքերի մտահղացմամբ, պետք է մնային Թուրքիայի հովանու ներքո, ժամանակի ընթացքում ձուլվելին «օսմանական ազգի» մեջ [492, էջ 68]։

Երիտասարդ թուրքերի՝ իշխանության գլուխ անցնելուց հետո օսմանիզմը արագ կերպով ըստ էության դարձավ մի անսքող թուրքական նացիոնալ-շովինիզմ, որը անհաշտելի էր Օսմանյան կայսրության մյուս, հատկապես քրիստոնյա, ժողովուրդների նկատմամբ։ Դա բացատրվում էր այն բանով, որ երիտասարդ թուրքերի՝ իշխանության գլուխ անցնելը խոր անհաշտելի հակասություններ բացահայտեց թուրք և այլազգի՝ գլխավորապես հույն և հայ բուրժուազիայի միջև։ Այդ բանը հասկանում էին ոչ թուրք նացիոնալիստական կազմակերպությունների շատ առաջնորդներ դեռ հեղափոխությունից առաջ։ Նրանց բլոկը երիտասարդ թուրքերի հետ կրում էր ժամանակավոր, տակտիկական բնույթ։ Համաձայնությունը ուժի մեջ էր մնում միայն մինչև ընդհանուր նպատակին հասնելը՝ աբդուլհամիդյան ռեժիմը տապալելը, որից հետո պայմանավորվող խմբերից յուրաքանչյուրը իր համար իրավունք էր վերապահում գործելու ինքնուրույն (դրանք էին. երիտասարդ թուրքերի «Միություն և առաջադիմություն» կոմիտեն, հայկական «Դաշնակցություն» կազմակերպությունը, հրեական «Լավարա» կոմիտեն, արաբական «Հայֆեթ» կազմակերպությունը և ուրիշներ) [46, էջ 216]։ Ազգային փոքրամասնությունների բուրժուազիան պայքար սկսեց վարչական ապակենտրոնացման համար, նկատի ունենալով հետագայում հասնել լիակատար անջատման կայսրությունից։ Դա հանդիպեց թուրք բուրժուազիայի վճռական դիմադրությանը, որը փորձում էր ամրանալ կոմպրադորական առևտրի բնագավառում և այլազգի բուրժուազիայից խլել նրանց գրաված դիրքերը։ Բացի դրանից, երիտասարդ

թուրքերի շարժման մեջ հեղափոխությունից հետո տեղի ունեցան փոփոխություններ՝ այնտեղ գնալով ավելի շատ դեբակշիռ դիրք էին գրավում «աջ» խմբավորումները։

Այժմ երիտասարդ թուրքերի առաջնորդները հայտարարում էին, որ այսուհետև Օսմանյան կայսրությունում չկան ոչ բուլղարներ, որ հույներ, ոչ մակեդոնացիներ. բոլորը հավասար են և բոլորն էլ օսմանցիներ են։ Իրականում դա հանգեցրեց ազգային փոքրամասնությունների նոր հալածանքների։ Երիտասարդ թուրքերը որոշեցին «օսմանացնել» կայսրության բոլոր հպատակներին։ Իսկ օսմանացում ասելով նրանք հասկանում էին իսլամացում և թուրքացում։ Երիտասարդ թուրքերի կուսակցության կենտկոմի պլենումի բանաձևում (1911 թվական) ասված էր. «Կայսրությունը պետք է դառնա մուսուլմանական... Հարկավոր է այլասեռ տարրերին զրկել իրենց հատուկ ազգային կազմակերպություններն ունենալու իրավունքից... Թուրքերեն լեզվի տարածումը մի գերազանց միջոց է մուսուլմանների տիրապետությունը հաստատելու և այլասեռ տարրերին ասիմիլյացնելու համար» [248, էջ 174]։

Իր ոտքերի տակ ռեալ հող չունեցող օսմանիստական դաղափարախոսության ճգնաժամը շուտ սկսվեց. կայսրության ժողովուրդները կռահեցին նրա նպատակները։ Օսմանիզմին վերջնական հարված հասցրին երիտոլիտանական պատերազմը և բալկանյան պատերազմները, ինչպես նաև արաբների ապստամբությունները։ Այդ պայմաններում, հատկապես այն կապակցությամբ, որ գերմանական իմպերիալիզմը սկսել էր թափանցել Օսմանյան կայսրություն և կառավարող շրջաններն էլ սկսել էին կողմնորոշվել դեպի կայզերական Գերմանիան, երիտասարդ թուրքերը վարում են ավելի շատ հակառուսական քաղաքականություն և իբրև այդ քաղաքականության գաղափարախոսական հիմնավորման միջոց որդեգրում են պանթյուրքիզմի գաղափարախոսությունը, որը կոչ էր անում Թուրքիային միացնել թյուրքական ժողովուրդներ ունեցող բոլոր հողերը։ Այդ ժողովուրդները, պանթյուրքիստների մտահղացմամբ, պետք է դրվեին Թուրքիայի գերիշխանության տակ և, կորցնելով իրենց ազգային ա-

ռանձնահատկությունները, ձուլվելին թուրքերի հետ։ Այդպիսով արդարացվում էին երիտասարդ թուրքերի ագրեսիվ մտադրությունները Միջին Ասիայի, Կովկասի և Իրանի մի քանի մարզերի նկատմամբ։ Կայսրության ներսում պանթյուրքիզմը կոչ էր անում ֆիզիկապես ոչնչացնել կամ վերջնականապես թուրքացնել ազգային փոքրամասնություններին։

Պանթյուրքիստական գաղափարախոսությունը զարգանում էր երիտասարդ թուրքական նացիոնալիզմի բազայի վրա, որը սկզբում ընդունել էր «թյուրքչյուլյուք» կամ «թյուրքիզմ» անունը, մի տերմին, որ ուներ երկակի իմաստ։ Նրա մեջ թաքնված էին երկու միանգամայն տարբեր հասկացություններ. թուրքիզմ (թուրքական նացիոնալիզմ) և թյուրքիզմ (պանթյուրքիզմ), քանի որ «թյուրք» բառը, ինչպես արդեն նշվեց, թուրքերեն նշանակում է և «թուրք» և «թյուրք»։ Թուրք բուրժուազիան, ինչպես և ճնշված ազգի ամեն մի բուրժուազիա (իսկ Թուրքիան մինչ այդ արդեն դարձել էր իմպերիալիստական տերությունների կիսագաղութը), ուներ երկակի բնույթ։ Մի կողմից, նա պատմական առաջադիմության կրող էր՝ պայքարում էր ֆեոդալիզմի դեմ, օտարերկրյա կապիտալի բռնության, իր անիրավահավասար դրության, երկրի կուլտուրական հետամնացության դեմ, ձգտում էր վերացնել Թուրքիայի կապիտալիստական զարգացման ճանապարհին եղած խոչընդոտները։ Իսկ մյուս կողմից, նա ոչ միայն կապիտալիստական շահագործում էր բերում իր սեփական ժողովրդին և ձգտում էր հարստանալ թուրք աշխատավորական զանգվածների հաշվին, այլև երազում էր էքսպանսիայի մասին, ուրիշ տերիտորիաներ գավթելու մասին, ուրիշ ժողովուրդներին ճնշելու մասին [41, էջ 133. 44, էջ 149]։ Այդ ձգտումները քողարկվում էին շովինիստական գաղափարախոսությամբ։ Այն ժամանակվա պատմական կոնկրետ պայմաններում թուրքական նացիոնալիզմը (թյուրքչյուլյուքը) երիտասարդ թուրքերի մոտ ուներ երկակի բովանդակություն, իսկ նրանց քաղաքական գործունեության վերջին ժամանակաշրջանում վերաճեց պանթյուրքիզմի [256, էջ 364]։

Երիտասարդ թուրքերի պանթյուրքիզմը սերտորեն միա-

հյուսվում էր պանիսլամիզմի հետ։ Եվ դա հասկանալի է, քանի որ, նախ, պանթյուրքիստական պրոպագանդայի մեջ երիտասարդ թուրքերը իրենց նպատակների համար օգտագործում էին նաև թյուրք մուսուլմանների կրոնական զգացումները, իսկ երկրորդ, օսմանական սուլթան-խալիֆների նման, նրանք փորձում էին հենվել պանիսլամիզմի վրա՝ անկախության համար արաբների ազգային շարժման դեմ մղված պայքարում։ Դրա հետ մեկտեղ, դա խոսում է այն մասին, որ երիտասարդ թուրքերի նացիոնալիզմը դեռ զերծ չէր կրոնական շերտանասլաձքներից։ Իսկ դա վկայում էր նրա անհասունությունը, որը արտացոլում էր օբյեկտիվ պայմանները՝ թուրքերի դեռ ոչ լրիվ կոնսոլիդացումը իբրև ազգ։

Սակայն թուրքերի ազգային ինքնագիտակցությունը գնալով ավելի էր բյուրեղանում։ Ջուտ նացիոնալիստական գաղափարները գնալով ավելի ու ավելի շատ էին տարածվում թուրք ինտելիգենցիայի շրջանում։ Ա. Տիրկովան գրի է առել մի, ինչպես ինքն է բնորոշում, «թուրք հայտնի գրողի»՝ այս տեսակետից շատ բնորոշ հայտարարությունը, որ նա արել է 1911 թվականին. «Թուրքը մոռացել է իր ծագումը։ Հարցրեք նրան, թե ո՞վ է նա։ Նա կասի, որ ինքը մուսուլման է։ Նրանից խլել են ամեն ինչ, անգամ լեզուն։ Առողջ, պարզ թուրքերեն լեզվի փոխարեն նրան տալիս են օտար, անհասկանալի, պարսկական ու արաբական բառերով խճճված լեզու (նկատի է առնվում «օսմաներեն լեզուն»։— Ռ. Ե.)» [227, էջ 175]։ Իսկ թուրք առաջադեմ մտավորականներին Ա. Տիրկովան բնութագրում է հետևյալ կերպ. «Մուսուլմանության հին կրոնականությունը չքացել է նրանց մոտից, իսկ նրա փոխարեն ծնունդ է առնում մինչև կրոնականության հասցրած սերը դեպի հայրենիքը» [227, էջ 157]։ Թուրքերի ազգային ինքնագիտակցության աճին նպաստում էր նաև այն, որ երիտասարդ թուրքերի հեղափոխությունից հետո որոշ զարգացում ստացավ լուսավորությունը։ Տարրական դպրոցների թիվը XX դարի սկզբի 28 615-ից 1910 թվականին հասավ մինչև 36 230. ընդլայնվեց նաև միջնակարգ կրթությունը, կազմակերպվեցին առաջին իգական միջնակարգ դպրոցները, նոր ֆակուլտետներ բացվեցին

Ստամբուլի համալսարանում և այլն (185, էջ 134)։ Երևան եկան թուրքերեն լեզվով առաջին դասագրքերը։ Շատ գրողներ իրենց ստեղծագործությունների լեզուն գնալով ավելի շատ էին մոտեցնում ժողովրդական թուրքերեն խոսակցական լեզվին։ Դեռ 1899 թվականին բանաստեղծ Մեհմեդ Էմինը հրատարակեց բանաստեղծությունների ժողովածու «Թուրքերեն ոտանավորներ» (Թյուրքչե շիիրլեր) վերնագրով [511, հատ. IV, էջ 69]։ Լեզվի, ձևի և բովանդակության տեսակետից թուրքական պոեզիայի իսկական ռեֆորմատոր հանդիսացավ Թեվֆիք Ֆիքրեթը (1870—1915) [511, հատ. IV, էջ 20—22]։ Գրականության մեջ գնալով ավելի շատ տեղ էին գրավում հայրենասիրական թեմանները. հիշատ է, որոշ ստեղծագործություններ արտահայտում էին նաև պանթյուրքիստական գաղափարներ։ 1914 թվականին Ստամբուլում բացվեց թուրքական թատրոն՝ «Դարյուլբեդա-ի օսմանի» (օսմանական արվեստի տաճար)։

Երիտասարդ թուրքերը մի շարք միջոցներ կիրառեցին նաև թուրքերեն լեզուն ազգային փոքրամասնությունների շրջանում տարածելու համար. բոլոր մասնավոր դպրոցներում, որտեղ դասավանդումը թուրքերեն լեզվով չէր, մտցվեցին պարտադիր առարկաներ՝ թուրքերեն լեզու, Թուրքիայի աշխարհագրություն և պատմություն։ Թուրքերեն լեզուն գործածության մեջ դրվեց նաև բոլոր օտարերկրյա կոնցեսիաներում, որտեղ ծառայողների հիմնական մասսան կազմում էին հույները և հայերը։

Ազգային ինքնագիտակցության աճը առաջ բերեց նաև հակաիմպերիալիստական տրամադրությունների ուժեղացում Թուրք ժողովրդի շրջանում՝ գլխավորապես Անգլիայի և Ֆրանսիայի դեմ, որոնց կապիտալը ամենից ավելի գիշատիչ կերպով շահագործում էր Թուրքական էկոնոմիկան։ Այդ տրամադրությունները բաժանում և պաշտպանում էր նաև Թուրք ազգային բուրժուազիան, որը Անատոլիի երկրների կապիտալիստների և նրանց հետ կապված օտարազգի կոմպրադորների մեջ տեսնում էր իր անհաշտ մրցակիցներին։ Դա եղավ այն պատճառներից մեկը, որ Օսմանյան կայսրությունը, չնայած Գերմանիայի կողմից պատերազմի մեջ

մտնելու անցանկալիության մասին նույնիսկ նրա կառավարող շրջանների մի մասի մոտ եղած կարծիքին (շատերին սարսափեցնում էր Ռուսաստանի հետ բնդհարվելու միտքը), այնուամենայնիվ գնաց գերմանական արտաքին քաղաքականության ֆարվատերով, որը կարողացավ երիտասարդ Թուրքերի պանթյուրքիստական ձգտումները օգտագործել իր նպատակների համար, և առաջին համաշխարհային պատերազմի մեջ մտավ ընդդեմ Անտանտի երկրների։ Սակայն պատերազմի տարիներին գերմանական իմպերիալիզմը, իրեն լիակատար տեր զգալով Թուրքիայում, էլ ավելի գիշատիչ մեթոդներով սկսեց կողոպտել երկիրը։ Դա, առանձնապես պատերազմի վերջին, Թուրք ժողովրդի մեջ առաջացրեց ուժեղ հակագերմանական տրամադրություններ, որոնք տեղ-տեղ վերաճեցին ապստամբությունների։

Պատերազմի տարիներին երիտասարդ Թուրքերը փորձեցին երկրի ներսում իրականացնել իրենց պանթյուրքիստական և պանիսլամիստական նպատակները՝ ոչնչացնել ոչ մուսուլմանական ազգային փոքրամասնություններին։ Այդ նպատակի իրականացման գործում նրանք մասամբ հաջողություն ունեցան։ Օգտվելով պատերազմական դրությունից, երիտասարդ Թուրքերը, կայզերական գլխավոր շտաբի պետերի խորհրդով, ձեռնամուխ եղան հայ ժողովրդի տեղահանմանը Արևելյան Անատոլիայից։ 1,2 միլիոն հայեր արտաքսվեցին Սիրիա և Իրաք, մոտ 1 միլիոն հայեր (ուրիշ ավյալներով, մոտ 1,5 միլիոն) բնաջնջվեցին այդ տեղահանությունների ժամանակ, զոհվեցին սովից ու հիվանդություններից [164, էջ 155. 185, էջ 131]։ Շատ հայեր փախան Ռուսաստան, Իրան և ուրիշ երկրներ։ Դրա հետևանքով Արևելյան Անատոլիայի և Կիլիկիայի մի շարք շրջաններ բոլորովին ամայացան։ Հայերի ձեռնատուներին արժանացան նաև տարրները։

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքիայի էկոնոմիկայում տեղի ունեցան էական փոփոխություններ։ Թեև Թուրքիայի գյուղատնտեսությունը ընդհանուր առմամբ անկում ապրեց պատերազմական տարիներին (գլխավորապես չքավոր և միջակ տնտեսությունների սնան-

կացման հաշվին), գյուղական հարուստները հսկայական շահույթներ էին ստանում, գյուղատնտեսական մթերքներ մատակարարելով բանակին և զբաղվելով դեֆիցիտ ապրանքների սպեկուլյացիայով: Օգտագործելով այդ կերպ կուտակված կապիտալը, նրանք սկսեցին մասնակցել առևտրին և նույնիսկ արդյունաբերությանը [168, էջ 32]: Թուրք առևտրական բուրժուազիան, անատոլիական կալվածատերերն ու կուլակները ուժեղացան նաև գյուղատնտեսական մթերքները Գերմանիա և Ավստրիա արտահանելու կապակցությամբ: Այդ արտահանումը, որը ըստ էության թուրքական հումքի անխնա կողոպուտ էր, առանձնապես շահավետ եղավ թուրք առևտրական բուրժուազիայի համար, որը առաջին անգամ մուտք գործեց արտաքին շուկա: Միևնույն ժամանակ կոմպրադորական (իբրև կանոն, ազգային պատկանելությամբ ոչ թուրք) բուրժուազիան, որը կապված էր Անտանտի երկրների արտաքին առևտրի հետ և կախված էր նրանց վարկերից, խիստ թուլացավ այդ երկրների հետ առևտրական կապերի լրիվ դադարեցման հետևանքով: Այդ բուրժուազիային թուլացնում էր նաև երիտասարդ թուրքերի նացիոնալիստական քաղաքականությունը, որոնք այլազգի բուրժուազիայի նկատմամբ կիրառում էին դիսկրիմինացիոն տնտեսական միջոցներ (բարձր հարկեր, բռնագրավումներ և այլն) [186, էջ 68]:

Մեծ փոփոխություններ տեղի ունեցան նաև արդյունաբերության մեջ: Արդյունաբերությունը, որը կապված էր արտահանման և ներմուծման հետ, այսինքն՝ դարձյալ այն ճյուղերը, որտեղ իշխում էին այլազգիները, խիստ կրճատեց արտադրությունը: Միևնույն ժամանակ որոշ զարգացում ստացավ այն արդյունաբերությունը, որը բավարարում էր բանակի և ներքին սպառման կարիքները, ձեռք էր բերել ներմուծման զրկեթե լրիվ դադարեցման կապակցությամբ արտասահմանյան ապրանքների մրցակցությունից ազատ շուկա և խրախուսվում էր երիտասարդ թուրքերի հովանավորական քաղաքականությամբ: Ստեղծվեցին մի քանի մանր ձեռնարկություններ, որոնք բանակին մատակարարում էին մահուդ, կոշկեղեն և այլն, ինչպես նաև ներքին շուկայի համար

գործող ձեռնարկություններ: Պատերազմական շրջանի պայմաններում դրանք ծագեցին ոչ թե նավահանգստային քաղաքներում, որոնք խոցելի էին թշնամու նավատորմի համար (և հենց այդ քաղաքներում էր, որ կար այլազգի ուժեղ բուրժուազիա), այլ Անատոլիայի խոր շրջաններում, որտեղ գերակշռում էր թուրք բնակչությունը և արդեն ծնունդ էր առել թուրք բուրժուազիան: Թուրք բուրժուազիայի ուժեղացմանը նպաստում էր նաև այն, որ պատերազմի ժամանակ փաստորեն դադարել էր կապիտուլյացիաների ռեժիմի գործադրումը:

Կայսրության ծայրամասային շրջանների օկուպացումը հակառակորդի զորքերի կողմից, նավահանգիստների դերի անկումը էկոնոմիկայում նպաստեցին այն բանին, որ տնտեսական կապերը սկսեցին զարգանալ հիմնականում Անատոլիայում, որտեղ վերջնականապես ձևավորվեց միասնական ներքին շուկա [տե՛ս՝ 186, էջ 68 և հաջ.]:

Այս փաստերը խոսում էին այն մասին, որ արդեն կային բոլոր պայմանները թուրք բուրժուական ազգի կոնսոլիդացման ավարտի համար: Այդ պրոցեսի քաղաքական հետևանքները չհապաղեցին արտահայտվել: Ճիշտ է, դրանք ամբողջ ուժով դրսևորվեցին առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո միայն, օտարերկրյա ինտերվենցիայի ժամանակ, երբ թուրք բուրժուազիան, պաշտպանելով իր, թեկուզ չափերով աննշան կապիտալը, իմպերիալիստական զավթիչների դեմ հանդես եկավ թուրք ժողովրդի ազգային-ազատագրական շարժման լոզունգով [164, էջ 160—162]:

Քեմալական հեղափոխությունը և թուրքերի ազգային կոնսոլիդացման ավարտումը

Առաջին համաշխարհային պատերազմում կրած պարտությունից հետո Օսմանյան կայսրությունը կորցրեց իր բոլոր տերիտորիաները Աֆրիկայում և Ասիայում, բացառությամբ բուն Թուրքիայից: Բացի այդ Թուրքիան էլ Սևրի հաշտության պայմանագրով ենթակա էր բաժանման Անտանտի եր-

կրների միջև։ Այդ բաժանումը նրանց միջև համաձայնեցված էր 1916 թվականին (այսպես կոչված Սայքս-Պիկոյի համաձայնագիրը)։ Արևելյան Թրակիան Ադրիանոպոլսի հետ և Իզմիրի շրջանը պետք է անցնեին Հունաստանին, սիրիական սահմանի երկայնքով մի լայն շրջան՝ Ֆրանսիային։ Նեղուցների գոտին անջատվում էր իբրև առանձին շրջան՝ միջազգային կառավարման տակ։ Ստամբուլը Թուրքիային էր մնում պայմանով միայն։ Նախատեսվում էր Անատոլիայի արևելքում ստեղծել իբր անկախ, բայց փաստորեն Անգլիային ենթակա բուֆերային պետություններ՝ դաշնակցական Հայաստան և ֆեոդալական Քուրդիստան, որոնք պետք է իմպերիալիզմի համար իբրև ֆորպոստ ծառայեին ընդդեմ երիտասարդ Սովետական Ռուսաստանի։ Մնացած Անատոլիայի նշանակալի մասը ազդեցության ոլորտների էր բաժանվում Ֆրանսիայի և Իտալիայի միջև։ Թուրքերի համար մնում էր միայն մի փոքրիկ հատված Սև ծովից մինչև Անկարա։ Բայց դա էլ պետք է դառնար կիսագաղութ։ Թուրքիան պետք է զինաթափվեր։ Հաստատվում էր կապիտուլյացիաների ռեժիմը։ Ֆինանսական լիակատար վերահսկողություն էր սահմանվում Անատոլիայի տերությունների կողմից։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը Ռուսաստանում և Սովետների Հանրապետության կազմավորումը արմատապես փոխեցին իրադրությունը աշխարհում և հակաիմպերիալիստական պայքարի ալիք ստեղծեցին գաղութային և կախյալ երկրներում։ Թուրք ժողովուրդը պայքարի ելավ իր ազգային անկախության համար։ Այդ պայքարի հիմնական ուժը դարձավ գյուղացիությունը։

Դեռ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ բանակ զորակոչված հարյուր հազարավոր թուրք գյուղացիներ, չցանկանալով կռվել գերմանական իմպերիալիստների և պանթյուրքիստ էքսպանսիոնիստների՝ իրենց համար խորթ նպատակների համար, զենքը ձեռքներին վերադարձան իրենց գյուղերը և Անատոլիայում ստեղծեցին բազմաթիվ պարտիզանական ջոկատներ։ Այդ ջոկատները առաջինը սկսեցին զինված պայքարը օկուպանտների դեմ [164, էջ 172]։

Թուրքիայի բանվոր դասակարգը չափազանց սակավաթիվ էր և քաղաքականապես թույլ, որպեսզի դառնար ազգային-ազատագրական շարժման հեգեմոնը։ Եվ այդ շարժումը գլխավորեց անատոլիական բուրժուազիան, որը հանդես էր գալիս որպես համազգային թուրքական շահերի արտահայտիչ։ Թուրք ազգային բուրժուազիայի քաղաքականության կիրառողները եղան մտավորական (գերազանցապես զինվորական-մտավորական) շրջանները, որոնք ինտերվենտների դեմ և իմպերիալիստների ձեռքին մարիոնետ դարձած սուլթանի դեմ մղված զինված պայքարը համարում էին հայրենիքի փրկության միակ միջոցը։ Նրանց շրջանից էլ դուրս եկավ Թուրք ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ղեկավար, գեներալ Մուստաֆա Քեմալ փաշան (հետագայում նա ընդունեց Աթաթյուրք ազգանունը)։ Նրա անունով էլ ամբողջ շարժումը սկսեց կոչվել քեմալական [164, էջ 173]։

Սովետական Հանրապետության աջակցությամբ թուրքական ազգային-ազատագրական շարժումը, որը կրում էր հակաիմպերիալիստական բնույթ, հաղթանակեց։ 1923 թվականի հուլիսի 24-ին ստորագրվեց հաշտության պայմանագիր, որը սահմանեց Թուրքիայի այն սահմանները, որ նրա ժողովուրդը պաշտպանեց ինտերվենտների դեմ մղած պայքարում, և վերացրեց կապիտուլյացիաներն ու արևմտյան տերությունների մյուս առանձնաշնորհումները։ Ստորագրվեց նաև համաձայնագիր Թուրքիայի և Հունաստանի միջև բնակչության փոխանակման մասին. Թուրքիայից արտաքսման ենթակա էին բոլոր հույները, բացի Ստամբուլում ապրողներից, ինչպես նաև գագաուզներն ու մյուս ուղղափառ տարրերը, իսկ Հունաստանից՝ մուսուլմանները, որոնց ճնշող մեծամասնությունը կազմում էին թուրքերը։ Մինչև 1927 թվականը մոտ 0,5 միլիոն այդպիսի վերաբնակիչներ եկան Թուրքիա[14]։

Ազգային-ազատագրական պայքարի ընթացքում Թուր-

[14] Ներգաղթը դեպի Թուրքիա շարունակվում էր նաև հետագայում։ 1923—1955 թվականներին ներգաղթել է մոտ 1,5 միլիոն մարդ [171, էջ 107, 125]։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Թուրքիա գաղթեցին Բուլղարիայի, Հարավսլավիայի և Ռումինիայի թուրքերը։

քիայում տեղի ունեցավ բուրժուական հեղափոխություն, որը ստացավ քեմալական անունը։ 1920—1930 թվականներին երկրում իրականացվեցին բուրժուական ռեֆորմներ։ Թուրքիայում կապիտալիզմի արագ զարգացման հետևանքով դրանց անհրաժեշտությունը առաջացել էր դեռ շատ վաղ։ Վերացվեցին սուլթանությունը և խալիֆայությունը։ Թուրքիան հռչակվեց հանրապետություն։ Եկեղեցին անջատվեց պետությունից, իսկ դպրոցը՝ եկեղեցուց։ Եվրոպական օրենսգրքերի հիման վրա մտցվեցին քաղաքացիական և քրեական նոր օրենսգրքեր, որոնք բոլորովին զերծ էին մուսուլմանական իրավունքի հետ եղած կապից։ Արգելվեց բազմակնությունը, չադրան։ Թուրքերեն գիրը փոխադրվեց լատինական այբուբենի։ Ղուրանն անգամ թարգմանեցին թուրքերեն և 1932 թվականից սկսած մզկիթներում կարդում էին ոչ թե արաբերեն, այլ թուրքերեն. այն տպագրվել էր լատինատառ [159, էջ 200]։ Մտցվում էր եվրոպական հագուստ (մասնավորապես, արգելվել էր կրել ֆես)։ Մուսուլմանականի փոխարեն պաշտոնական տոմար դարձավ գրիգորյանը։ Հանգստի օր հայտարարվեց կիրակին՝ մուսուլմանների համար սրբազան ուրբաթ օրվա փոխարեն և այլն։ Արգելվեցին հոգևոր կրթության բոլոր տեսակները, փակվեցին մեդրեսեները և Ստամբուլի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետը[15]։

«Օսմաններեն լեզուն» վերջնականապես փոխարինվեց թուրքերենով, որը դարձավ պաշտոնական, պետական, իսկ աստիճանաբար նաև գրական լեզու։ Քեմալականները հետևողականորեն պայքարում էին թուրքերենը արաբերեն ու պարսկերեն բառերից, արաբա-պարսկական քերականական ձևերից մաքրելու համար, սակայն ընդհանուր առմամբ առաջադիմական այդ շարժումը երբեմն դառնում էր անհաշտելի պուրիզմ, երբ առանձին, նույնիսկ ամուր կերպով գործածության մեջ մտած փոխառյալ բառերը փոխարինվում էին արհեստականորեն հորինված, ժողովրդին անհասկանալի բառերով։ Այդ բանում արտահայտվեցին արդեն բուրժուական նացիոնալիզմի ծայրահեղությունները։ Նոր գրական լեզվի վրա մեծ ազդեցություն գործեց թուրքերեն լեզվի Անկարայի բարբառը, քանի որ Անկարան դարձավ Թուրքիայի մայրաքաղաքը և խիստ աճեց նրա ընդհանուր նշանակությունը թուրքերի ազգային մշակույթի զարգացման վրա։

Քեմալական հեղափոխությունից հետո թուրք ժողովրդի ճանաչված անունը դարձավ «թուրքեր» ցեղանունը՝ նախկին «մուսուլմաններ» կամ «օսմանցիներ» անվանումների փոխարեն։ Որոշ ժամանակ, ինչպես այդ մասին արդեն խոսվեց վերևում, գանկանում էին նույնիսկ «թուրք» (թյուրքերեն՝ «թյուրք») անվան փոխարեն մտցնել «անատոլիացի» (անատոլուլու) անունը, որպեսզի վերջնականապես վերացնեն «թուրք» և «թյուրք» անվանումների մեջ եղած շփոթը, որ կա թուրքերենում [343, էջ 168]։

Քեմալականները թուրքական նացիոնալիզմը մաքրեցին պանթյուրքիստական և պանիսլամիստական շերտանըստվածքներից [տե՛ս 83, էջ 58—70. 40]։ Նրանք նույնիսկ «թյուրքչություն» տերմինը, որ նշանակում էր նաև թուրքիզմ, այսինքն՝ թուրքական նացիոնալիզմ, և թյուրքիզմ, այսինքն՝ պանթյուրքիզմ, փոխարինեցին «միլլիյեթչիլիք» (հետագայում՝ «ուլուսչուլուք») տերմինով, որ նշանակում է նացիոնալիզմ։ Միլլիյեթչիլիքը (ուլուսչուլուքը) հռչակվեց որպես Քեմալ Աթաթյուրքի ստեղծած Ժողովրդա-հանրապետական կուսակցության վեց սկզբունքներից մեկը[16] և ըմբռնե-

[15] Այն օրենքները, որոնցով կենսագործվում էին քեմալականների այդ բոլոր ռեֆորմները, Թուրքիայում հրատարակվել են առանձին գրքով 1957 թվականին [տե՛ս 474]։

[16] Մնացած հինգ սկզբունքներն են. ջումհուրիյեթչիլիք (հանրապետականություն), այսինքն՝ հավատարմություն կառավարման հանրապետական ձևին. խալքչիլիք (ժողովրդականություն), այսինքն՝ ժողովրդական սուվերենության ճանաչում և դրա հետ մեկտեղ դասակարգերի և դասակարգային պայքարի առկայության ժխտումը «միասնական Թուրք ժողովրդի» մեջ. դեվլեթչիլիք (էտատիզմ), այսինքն՝ պետական սեկտորի զարգացում էկոնոմիկայի, գլխավորապես արդյունաբերության մեջ, պետական կապիտալիզմ. լայիկլիք («աշխարհականություն»), այսինքն՝ կրոնական բոլոր գործերի անջատում պետական գործերից և դպրոցի աղատում մուսուլմանական հոգևորականության ազդեցությունից. ինքըլապչըլըք (հեղափոխականություն), այսինքն՝ հավատարմություն քեմալական հեղափոխության գաղափարներին. այժմ այդ իմաստով օգտագործվում է նաև «դեվրիմջիլիք» նորաբանությունը։

վում է որպես պայքար թուրք ազգի անկախության համար։ Հատկանշական է, որ քեմալականների զինված ուժերը կոչվում էին «կուվվա-ի միլլիյե» (ազգային ուժեր), այն ժամանակ, երբ «խալիֆայական բանակը», որը Անատոլուի երկրների աջակցությամբ հանդես էր գալիս օսմանական նախկին կարգերի վերականգնման օգտին, խալիֆայության և սուլթանության պաշտպանությամբ՝ ընդդեմ քեմալականների, իրեն անվանում էր «կուվվա-ի Մուհամմեդիյե» («Մուհամմեդի ուժեր», «մահմեդական կամ մուսուլմանական ուժեր» [515, էջ 5]։

Քեմալականների նացիոնալիստական հայացքների այդպիսի հստակությունը օբյեկտիվ պրոցեսների գաղափարախոսական արտահայտությունն էր, մասնավորապես այն բանի, որ թուրք բուրժուական ազգը վերջնականապես ձևավորվել էր։ Իբրև բուրժուական ազգ թուրքերի կոնսոլիդացման ավարտի ժամանակը կարելի է համարել քեմալական հեղափոխության և թուրք ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ժամանակաշրջանը (1918—1923)։ Այդ հեղափոխությունն էլ ձևավորեց պետական առումով ազգային կոնսոլիդացման ավարտված պրոցեսը՝ ստեղծեց թուրքական ազգային պետությունը՝ Թուրքական Հանրապետությունը։

Թուրք ազգի վերջնական կոնսոլիդացումը արագացավ ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ, ճիշտ այնպես, ինչպես իտալական, իսպանական, գերմանական և Արևմտյան Եվրոպայի մյուս ազգերի ձևավորումը արագացավ նապոլեոնյան Ֆրանսիայի ագրեսիայի դեմ այդ ժողովուրդների մղած պայքարի շնորհիվ։ Այս տեսակետից շատ հետաքրքրական է մի էպիզոդ Թուրքիայի անկախության պատերազմի ժամանակաշրջանից. թուրքերեն խոսող և իրենց նախկին մայրենի լեզուն բոլորովին մոռացած անատոլիական հույների մի մասը անջատվեց Կոստանդնուպոլսի պատրիարքից, նրան համարելով թուրքական ազգային-ազատագրական պայքարի գործի դավաճան։ Նրանց ղեկավար պապ էֆիմը (սարկավագ Եֆիմը), որը հայտարարել էր ուղղափառ թուրքերի հավատարմությունը իրենց եղբայրներին՝ մուսուլման թուրքերին, նույնիսկ փորձ կատարեց պրավել

պատրիարքարանի հաստատությունները [51, էջ 210. 8, էջ 124]։ Էֆիմը հանդես եկավ ուղղափառ թուրքերի (այսինքն՝ թուրքացած հույների) կողմից հունարեն լեզուն ուսումնասիրելու դեմ, «ուղղափառ օսմանցիների» Կայսերիի VII համագումարը որոշում ընդունեց այն մասին, որ աղոթքները կարդացվեն միայն մայրենի (այսինքն՝ թուրքերեն) լեզվով, որ այդ լեզվով վարեն նաև եկեղեցական ամբողջ պաշտոնական գրագրությունը [51, էջ 210]։ Այս փաստը խոսում է այն մասին, որ շատ հույներ արդեն այնքան էին թուրքացել, ասիմիլյացվել թուրքերի կողմից, որ դավանանքների տարբերությունն անգամ չէր խանգարում նրանց՝ իրենց համարելու թուրք ազգի մի մասը և մնացած թուրքերի հետ միասին հանդես գալու օտարերկրյա ինտերվենցիայի դեմ։

Թուրքական ազգային պետության կազմավորումը նպաստեց ազգային ինքնագիտակցության գաղափարների տարածմանը թուրք ժողովրդի բոլոր խավերում։ Թուրքական նացիոնալիզմի գաղափարախոսական գործոնը ևս կատարեց իր դերը այդ գործում, քանի որ քեմալականները համառորեն պրոպագանդում էին ազգային և նացիոնալիստական գաղափարներ։ Հայրենիք ասելով չպետք է հասկանալ պարզապես Թուրքիայի տերիտորիան, գրում էր, օրինակ, «Վաթան» («Հայրենիք») թերթը, այլ նաև թուրք ժողովրդի բարոյաքաղաքական միասնությունը, տեղայնության վերացումը, մայրաքաղաքը՝ Նահանգներին, Ստամբուլը՝ Անատոլիային հակադրելուց հրաժարումը և այլն [42, էջ 28]։ «Ազգությանն» ակզբունքը, թուրք ազգին պատկանելու գիտակցությունը թուրքերի մեջ փոխարինելու եկան իսլամիզմի և օսմանիզմի սկզբունքներին, սուլթան-խալիֆին նվիրված լինելու գաղափարին։

Թուրք ազգի զարգացումը 1930—1965 թվականներին

Քեմալական հեղափոխությունը, չնայած պատմականորեն առաջադիմական իր բնույթին, կիսկատար էր։ Նա չշրջանցեց գոյություն ունեցած կարգի սոցիալ-տնտեսական հիմքերը, մասնավորապես, չլուծեց ագրարային հարցը։ Այդ

հեղափոխության մեջ ղեկավար դերը գրավեց թուրք ազգային բուրժուազիան։ Թուրքական Հանրապետությունը, որը կազմվել էր քեմալականների հաղթանակից հետո, դարձավ բուրժուա-նացիոնալիստական պետություն։ Իշխանությունը գրավելու հենց սկզբից թուրք բուրժուազիան պայքար սկսեց Թուրքիայի այլազգի բուրժուազիայի դեմ, այդ պայքարը վարելով բոլոր միջոցներով (տնտեսական, քաղաքական, վարչական), սկսեց սիստեմատիկաբար ճնշել նաև ազգային փոքրամասնություններին՝ որպես այդպիսիների։

Թուրքական պետությունը ամեն կերպ պաշտպանում էր թուրք բուրժուազիային, խթանում նրա զարգացումն ու ամրապնդումը։ Այս տեսակետից մեծ դեր կատարեց էտատիզմը՝ էկոնոմիկայի մեջ պետական սեկտորի զարգացումը քեմալականների կողմից կամ, այլ կերպ ասած, պետական կապիտալիզմը, և մասնավոր ձեռնարկատիրության խրախուսումը արդյունաբերության մեջ, ինչպես նաև փոխառավական ու վաճառող կոոպերատիվների ստեղծումը գյուղում, որոնք էական օգնություն հանդիսացան թուրք կուլակներին։

Քեմալական կառավարությունը ձգտում էր զարգացնել նաև թուրքական ազգային մշակույթն ու գիտությունը։ Առանձնապես մեծ հաջողություններ ձեռք բերվեցին ժողովրդական լուսավորության բնագավառում։ Կրթության հին կղերա-ֆեոդալական սիստեմի փոխարեն ստեղծվեց նոր, աշխարհիկ սիստեմ, որը գրի ռեֆորմի հետ միասին (արաբական այբուբենը ավելի դժվար էր սովորելու համար) բարձրացրեց գրագիտության տոկոսը երկրում։ Այն բանից հետո, երբ թուրք կանայք ազատագրվեցին մուսուլմանության շատ կապանքներից, ավելի մեծ զարգացում ստացավ նաև կանանց կրթությունը։ Քեմալականները, սակայն, չկարողացան լրիվ վերացնել անգրագիտությունը և թեկուզ տարրական կրթությամբ ընդգրկել ամբողջ բնակչությանը։ Այսպես, նույնիսկ 50-ական թվականներին 40 հազար թուրքական գյուղերից 16 հազարը դպրոց չուներ։ 1965 թվականին դպրոցական կրտսեր հասակի երեխաների 70 տոկոսն էր միայն հաճախում դպրոց, իսկ բնակչության շրջանում միայն 48 տոկոսն էր գրագետ [442, էջ 22]։ Ըստ որում,

անգրագետների ամենից ավելի մեծ տոկոսը բաժին էր ընկնում երկրի արևելյան վիլայեթներին, որոնք ամենից քիչ էին զարգացած նաև տնտեսապես։ Զարգանում էր նաև միջնակարգ ու բարձրագույն կրթությունը. 1960 թվականին արդեն կար մոտ 30 բարձրագույն ուսումնական հաստատություն։

Որոշ զարգացում ստացան թուրքական գրականությունն ու արվեստը։ 20-ական թվականներին գրականության մեջ իշխում էին հայրենասիրական և նացիոնալիստական գաղափարները. 30-ական թվականներին ծագում և զարգանում է թուրքական քննադատական ռեալիզմը (դրա ականավոր ներկայացուցիչներն են Ռ. Ն. Գյունթեքինը, Ս. Ալին, Յա. Կ. Կարաօսմանօղլուն)։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Թուրքիայի գրականության և արվեստի մեջ հաջողություններ ձեռք բերեցին առաջադիմական հոսանքները։ Այնպիսի բանաստեղծներ ու գրողներ, ինչպես Նազըմ Հիքմեթը, Յաշար Քեմալը, Օրխան Վելին, Սուատ Դերվիշը, Մրֆաթ Ըլգազը, Ազիզ Նեսինը և ուրիշներ, թուրք գրականությանը մեծ փառք բերեցին ամբողջ աշխարհում։ Թուրքիայի կերպարվեստը, որ ազատագրվել էր իսլամի դոգմատիկայից, ստեղծեց ճանաչում գտած գլուխ-գործոցներ։ Ռեալիստ շատ նկարիչներ, յուրացնելով եվրոպական գեղանկարչության և քանդակագործության նվաճումները և օգտագործելով գլխավորապես թուրքական ժողովրդական ստեղծագործության ազգային ավանդույթները, ստեղծեցին իրենց սեփական՝ թուրքական ոճը [81]։

1950—1960 թվականներին, երբ իշխանության գլուխ էր կանգնած Դեմոկրատական կուսակցությունը (Ա. Մենդերեսի կառավարությունը), երկրում նկատվեց էական նահանջ այն առաջադիմական վերափոխումներից, որ իրականացրել էին քեմալականները։ Թուրքիայում ուժեղացավ ռեակցիան, որի պատճառն էր երկրի քաղաքականության ու էկոնոմիկայի ենթարկումը ԱՄՆ-ի շահերին։ Ա. Մենդերեսի կառավարությունը թույլատրեց աղոթքներն ասել արաբերեն, շաբաթական երեք անգամ ռադիոյով հաղորդել Ղուրանի տեքստը, իսլամ դասավանդել տարրական և միջնակարգ դպրոցներում։

վերսկսվեց աստվածաբանության ֆակուլտետի գործունեությունը։ Այդ ժամանակամիջոցում կառուցվեց 5 հազար մզկիթ, այն ժամանակ, երբ 16 հազար գյուղեր չունեին դպրոց։ Այդ տարիներին ակտիվացան պանիսլամիստները, քանի որ Բաղդադի պակտի (հետագայում՝ ՍԵՆՏՕ) նման ագրեսիվ բլոկների ստեղծումը քողարկվում էր, այլ պատճառներից բացի, նաև «իսլամը կոմունիզմից պաշտպանելու» դրոշի տակ։ Պանիսլամիստները պահանջում էին վերադառնալ արաբական այբուբենին, հին բառապաշարին (թուրքական սահմանադրության տեքստում բոլոր նորաբանությունները այդ ժամանակ նորից փոխարինվեցին արաբա-պարսկական բառերով), հանգստյան օր հայտարարել ուրբաթը. ընդհանրապես նրանք ուզում էին վերացնել այն սահմանը, որ, ըստ նրանց կարծիքով, ծագել էր Թուրքիայի և մուսուլմանական մյուս երկրների միջև Սեթեյուրքի ռեֆորմների հետևանքով [278]։ Նրանք հայտարարում էին, որ վերադարձը դեպի իսլամիստական իդեալները Թուրքիային հնարավորություն կտա «իսլամի սրի» դեր կատարել Արևելքում, բարոյական հիմք կստեղծի կոմունիստական դաղափարախոսության դեմ մղած պայքարում։ Ա. Մենդերեսի տապալումից հետո Թուրքիայում իշխանության գլուխ անցան հասարակական այնպիսի ուժեր, որոնք իրենց հավատարմությունը հայտնեցին քեմալականության սկզբունքներին։ Բայց երկրում դեռ մնացին բավական ուժեղ ռեակցիոն շրջաններ, որոնք հենվում էին ԱՄՆ-ի աջակցության վրա։

Ազգային փոքրամասնությունների նկատմամբ թուրքական կառավարող շրջանները հենց սկզբից կանգնեցին նրանց թուրքացնելու ուղու վրա։ Թուրք նացիոնալիստների նպատակային դրույթները ամրագրվեցին օրենսդրական կարգով։ Այսպես, 1924 թվականի սահմանադրության նախագծի 88-րդ հոդվածի նախնական խմբագրությունը երկրում ապրող բոլոր մարդկանց համարում էր թուրքեր։ Եվ թեպետ պառլամենտը այդ հոդվածն ընդունեց ուղղումով («քաղաքացիությամբ կոչվում են թուրքեր»), նրա էությունը չփոխվեց։ Քաղաքացիության մասին օրենքը թուրքեր է համարում նաև բոլոր այն անձանց, որոնք երկրում ծնվել են ոչ թուրքերից,

վերջապես 1961 թվականի սահմանադրության 54-րդ հոդվածը բոլոր թուրքական քաղաքացիներին համարում է թուրքեր։ Ազգային փոքրամասնությունների ազգային գոյության իրավունքներ չճանաչելու մասին են վկայում նաև օրենսդրական ուրիշ ակտեր։ Այսպես, 1924 թվականի սահմանադրության 2-րդ հոդվածում ասված էր. «Պետական լեզուն թուրքերենն է»։ Նոր սահմանադրության մեջ «պետական» բառը փոխարինված է «պաշտոնական» բառով (հոդվ. 3) [45, էջ 132]։

Ազգային փոքրամասնությունները ենթարկվում են շատ սահմանափակումների. նրանց համար փակ են պետական պաշտոնների, սպայական կորպուսի դռները, կանոնակարգվում է նրանց տեղափոխությունը երկրում, որոշ արհեստներով, արտաքին առևտրով զբաղվելու նրանց իրավունքը։ Այլազգի բուրժուազիան թուրքականի համեմատությամբ անհավասար վիճակի մեջ է դրված նաև հարկային տեսակետից։ Այսպես, գույքի հարկի մասին եղած օրենքով, որը գործել է 1942—1944 թվականներին, հույն, հայ, հրեա առևտրականները պարտավոր էին վճարել անհամեմատ ավելի բարձր հարկ, քան թուրք առևտրականները [45, էջ 138]։

Դեմոկրատական կուսակցությունը, 1950—1960 թվականներին գտնվելով իշխանության ղեկի մոտ, առավել ևս թունդ շովինիստական քաղաքականություն էր վարում ազգային հարցում։ 1955 թվականի սեպտեմբերին նա նույնիսկ կազմակերպեց հույների ու հայերի ջարդեր։ Դրանց համար անմիջական առիթ հանդիսացավ հույն-թուրքական տարաձայնությունների սրումը Կիպրոսի հարցի շուրջը։ Ինչպես ապացուցեց Դեմոկրատական կուսակցության կառավարության գործի վերաբերյալ կայացած դատական պրոցեսը, այդ ջարդերը կազմակերպել էր ինքը՝ նախկին պրեմիեր-մինիստր Ա. Մենդերեսը։

Թուրքական պաշտոնական վիճակագրությունը անտեսում է Թուրքիայի բնակչության ազգային կազմի հարցը, այն ննջգափոխելով բնակչության ըստ լեզվական պատկանելության բաշխելու վերաբերյալ ավյալներով. մարդահամա-

րի հարցաթերթիկներում չկա «ազգային պատկանելությունը» կամ «ազգությունը» հարցը. դա փոխարինված է մայրենի լեզվի վերաբերյալ հարցով։ Բնականաբար, դրա հետևանքը լինում է ազգային կազմի իրական պատկերի խեղաթյուրումը և զգալիորեն պակասեցվում է ազգային փոքրամասնությունների թվաքանակը։ Բացի դրանից, ազգային անիրավահավասարության պայմաններում ազգային փոքրամասնությունների շատ ներկայացուցիչներ դերադասում են թաքցնել իրենց ազգությունը, իրենց մայրենի լեզուն։

Որ մայրենի լեզվի մասին տվյալները պակասեցնում են ազգային փոքրամասնությունների թվաքանակը, ցույց են տալիս Թուրքիայի մարդահամարի տվյալները։ Օրինակ, 1955 թվականին հայերենը իբրև մայրենի լեզու էր ընդունել 47 հազար մարդ։ Միևնույն ժամանակ իրենց լուսավորչական էին հայտարարել ավելի քան 55 հազար մարդ։ Իսկ լուսավորչականություն դավանում են միայն հայերը։ Այսպիսով, այս օրինակից ակնառու կերպով երևում է, որ ինչպես է խիստ նվազեցվում հայ ազգային փոքրամասնության թվաքանակը, եթե այն որոշում են մայրենի (հայերեն) լեզվի հատկանիշով։ Բացի դրանից, 55 հազար հայ լուսավորչականներին հարկավոր է դումարել նաև այն հայերին, որոնք դավանում են ուրիշ կրոններ։

Թուրքահայերի լեզվի ու կրոնի վերաբերյալ եղած տվյալների հարաբերակցությունից կարելի է անել նաև այն հետևությունը, որ ասիմիլյացման պրոցեսում կրոնը պահպանվում է ավելի երկար, քան լեզուն, և որ հենց կրոնական պատկանելությունն է մնում իբրև վերջին խոչընդոտը թուրքերի հետ հայերի լրիվ միաձուլման և իրենց ազգային ինքնագիտակցությունը կորցնելու ճանապարհին։

Որոշ դեպքերում մայրենի լեզվի վերաբերյալ եղած թվական տվյալները կասկածանք են հարուցում նաև տարբեր մարդահամարների միջև եղած անհասկանալի թռիչքների պատճառով. ազգային փոքրամասնությունների թվաքանակը մերթ խիստ պակասեցվում է, մերթ խիստ մեծացվում (տե՛ս 1-ին աղյուսակը)։ Հաշիվ թե այդ բանը կարելի լինի բացատրել, օրինակ, լեզվական ասիմիլյացիայով (երբ դնա-

չով պակասում է մայրենի լեզուներով խոսող ազգային փոքրամասնությունների թվաքանակը) կամ նրանց բնական աճով։ Այսպես, 1935 թվականին՝ քրդերը (ըստ լեզվի) կազմում էին 1480 հազար մարդ, իսկ 1940 թվականին՝ միայն 1020 հազար, այսինքն՝ նրանց թիվը պակասել է 460 հազարով։ Ճիշտ է, քրդերի նկատմամբ հարկավոր է նկատի ունենալ նաև այն, որ նրանցից շատերը վարում են քոչվորական կյանք և կարող են պարզապես վրիպել մարդահամար անցկացնողների ուշադրությունից։ Սակայն մարդահամարները տալիս են նաև նստակյաց ազգային փոքրամասնությունների՝ հայերի, հույների և այլոց թվաքանակի խիստ նվազում։ Իսկ լազերի և վրացիների թվաքանակը, եթե դաւենք մարդահամարների տվյալներից, 1945-ից մինչև 1950 թվականը ավելացել է գրեթե երկու անգամ։

Աղյուսակ 1

Թուրքիայի բնակչության ազգային կազմը ըստ մայրենի լեզվի հատկանիշի՝ թուրքական մարդահամարների տվյալների համաձայն* (հազար մարդ)

Մայրենի լեզուն	1927 թ.	1935 թ.	1940 թ.	1945 թ.	1950 թ.	1955 թ.	1960 թ.	1965 թ.
Թուրքերեն	11778	13899	16079	16598	18255	21792	25200	28290
Քրդերեն	1184	1480	1020	1477	1855	1504	1850	2370
Արաբերեն	134	154	249	247	269	346	350	365
Հունարեն	120	109	81	89	89	82	65	48
Չերքիզերեն (այսինքն՝ կովկասյան լեռնցիների լեզուները)	96	92	—	67	76	91	63	58
Հրեերեն	69	57	47	62	36	29	—	10
Հայերեն	65	58	38	56	53	47	53	33
Լազերեն	—	63	—	47	70	27	22	26
Վրացերեն	—	57	—	40	73	54	33	34
Այլք	202	189	307	117	171	150	119	157
Ընդամենը	13648	16158	17821	18790	20947	24122	27755	31391

Թուրքական մարդահամարների տվյալները ցույց են տալիս ազգային փոքրամասնությունների բաժնի աստիճանական նվազում Թուրքիայի բնակչության ընդհանուր թվաքանակի

* Աղյուսակը կազմված է ըստ [422, 423, 424]։

մեջ. 1927 թվականին թուրքերը կազմում էին ամբողջ բնակչության 86 տոկոսը, իսկ 1955 թվականին՝ արդեն 90,3 տոկոսը։ Բնական այս մարդահամարները ճիշտ չեն արտացոլում երկրի բնակչության ազգային կազմի պատկերը, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ ասիմիլյացիոն պրոցեսները՝ ազգային փոքրամասնությունների թուրքացումը, ընթանում են բավական արագ։ Բնակչության թվաքանակում թուրքերի բաժնի ավելացմանը նպաստում է նաև նրանց ներգաղթը ուրիշ երկրներից և ոչ թուրքական ծագում ունեցող անձանց արտագաղթը (հույներինը՝ Հունաստանը, հրեաներինը՝ Իսրայել և այլն)։

Թուրքական կառավարության քաղաքականությունը ազգային փոքրամասնությունների նկատմամբ նպաստում է նրանց ասիմիլյացմանը թուրքերի կողմից։ Երկրում չկան ազգային դպրոցներ և ազգային մամուլ, ռադիոհաղորդումները վարվում են բացառապես թուրքերեն լեզվով։ Ազգային փոքրամասնությունների հունական, հայկական, հրեական դպրոցներ կան միայն Ստամբուլում, բայց դրանք էլ միայն տարրական ու միջնակարգ դպրոցներ են. քրդական, լազական, վրացական կամ չերքեզական դպրոցներ բոլորովին չկան. ազգային լեզուներով՝ հունարեն, հայերեն, հրեերեն ու ալբաներեն թերթեր նույնպես հրատարակվում են միայն Ստամբուլում, մյուս ազգային փոքրամասնությունների լեզուներով թերթեր ընդհանրապես չկան։ 20-ական թվականներին փորձեր արվեցին Ստամբուլում ստեղծել քրդական ու չերքեզական դպրոցներ ու թերթեր, գրականություն հրատարակել այդ լեզուներով։ Այդ շարժումը ղեկավորում էր քրդական և չերքեզական ինտելիգենցիան։ Բայց թուրքական ադմինիստրացիան խափանեց այդ փորձերը [8, էջ 121—123]։

Ժամանակակից Թուրքիայի՝ որպես թուրքերի բնակության հիմնական տերիտորիայի, բնակչության ազգային կազմի համար բնորոշ է շատ թե քիչ արտահայտված միատարրությունը։ Համեմատաբար վերջերս՝ 20—30-ական թվականներին, թուրքերը բնակվում էին Արևելյան Անատոլիայում՝ հայերի ու ասորիների նախկին բնակած շրջաններում և ծովափին ու Արևմտյան Անատոլիայում՝ հույների կողմից բնակեցված շրջաններում։ Ժամանակակից Թուրքիայի բնակչության ազգային այդ միատարրությունը առանձնապես նկատելի է, երբ մենք այն համեմատում ենք օսմանյան ժամանակաշրջանի նրա բնակչության ազգային կազմի հետ (ժամանակակից սահմաններում)։ Այնուհանդերձ, գնահատող տվյալներով, որոնք տարբերվում են մարդահամարների տվյալներից, ազգային փոքրամասնությունները ներկայումս էլ կազմում են երկրի բնակչության առնվազն 20 տոկոսը և պրազեցնում են նրա տերիտորիայի գրեթե մեկ քառորդը։ Դրանցից ամենախոշորը քրդերն են, որոնց թվաքանակը շատ հետազոտողներ համարում են երեք և ավելի միլիոն մարդ։

Թուրքերի շրջանում մինչև այսօր էլ պահպանվել են ազգագրական շատ խմբեր։ Յուրյուքները և թուրքմենները, որոնց թիվը խիստ կրճատվել է XIX դարի կեսերից (այժմ յուրյուքների թիվը հասնում է 300—500 հազար մարդու, իսկ թուրքմեններինը՝ մոտ 70 հազարի), դեռ լրիվ նստակեցության չեն անցել և վերջնականապես չեն ձուլվել թուրքերի հետ։ Իրենց ազգային պատկանելության մասին հարցին նրանք, որպես կանոն, պատասխանում են «յուրյուք» կամ «թուրքմեն», այլ ոչ թե «թուրք»։ Նրանք սովորաբար ամուսնական կապերի մեջ չեն մտնում թուրք բնակչության հետ։ Բայց լրիվ նստակեցության անցնելուց հետո բավական արագ ասիմիլյանում են նրանց հետ։ Յուրյուքների բնակության հիմնական շրջանները պահպանվել են Հարավ-Արևմտյան և Հարավային Անատոլիայում. թուրքմենները առանձին օջախներով ապրում են Արևելյան և Կենտրոնական Անատոլիայի թուրք, իսկ որոշ շրջաններում նաև քուրդ բնակչության հետ [85. 88. 96. 97. 183. 329]։ Ազգագրական մյուս խմբերը՝ թախթաջիները, աբդալները և այլն անհետացման են թվական տեսակետից։ Սրանք շուտ ձուլվում են թուրքերի հետ։

Ընդհանուր առմամբ, Թուրքիայի ժամանակակից ազգային պրոցեսների մեջ տիրապետող տենդենցն է ազգային փոքրամասնությունների ասիմիլյացումը թուրքերի կողմից և

նրանց միաձուլումը թուրք ազգի հետ. նույնպիսի տենդենց տիրապետում է նաև թուրքերի ազգագրական խմբերին վերաբերող պրոցեսներում: Ասիմիլյացիոն պրոցեսները արագանում են էկոնոմիկայի և սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման հետևանքով՝ կապիտալիզմը արագ զարգանում է և՛ քաղաքում և՛ գյուղում: Աճում է բանվոր դասակարգը. 1960 թվականին Թուրքիայի միայն մշակող արդյունաբերության մեջ կար 640 հազար բանվոր, իսկ ընդամենը երկրում կար 1057 հազար բանվոր (այդ թվում 52 հազար լեռնագործ, 165 հազար շինարար, 200 հազար տրանսպորտային) [213, էջ 29]: Զարգանում են հաղորդակցության ճանապարհները. 1923 թվականին կար 4188 կիլոմետր երկաթուղագիծ, երկրորդ համաշխարհային պատերազմի վերջին՝ 7585 կիլոմետր, 1964 թվականին՝ 8058 կիլոմետր: Երկաթուղային ցանցի զարգացածությամբ Թուրքիան առաջ է անցել Արևելքի հարևան երկրներից. Թուրքիայում 100 քառակուսի կիլոմետրին ընկնում է 1040 մետր երկաթուղագիծ, 1000 բնակչին՝ 290 մետր, իսկ Սիրիայում, Իրաքում և Իրանում՝ համապատասխանաբար 455 և 168, 370 և 236, 213 և 164 մետր [213, էջ 95—96]: Ասֆալտապատ խճուղային ճանապարհների երկարությունը կազմում է 8066 կիլոմետր [213, էջ 100]: Զարգանում է նաև օդային տրանսպորտը. եթե 1933 թվականին կար մարդատար միայն մեկ գիծ (Անկարա—Էսքիշեհիր—Ստամբուլ), ապա 1960 թվականին օդային տրանսպորտը արդեն սպասարկում էր 25 քաղաքներ [213, էջ 102]: Ճիշտ է, հարկավոր է նշել, որ Թուրքիայի արևմտյան շրջանները անհամեմատ ավելի շատ են հագեցած հաղորդակցության ճանապարհներով, քան արևելյանները: Արևելյան Անատոլիայի մի քանի շրջաններ, օրինակ, միչև հիմա երկաթուղի չունեն:

Վերջին տարիներին արագ տեղի է ունենում երկրի ուրբանիզացիա. 100 հազարից ավելի բնակիչ ունեցող քաղաքների թիվը 1960 թվականի 9-ից 1965 թվականին հասել է 14-ի: Բնակչության թվաքանակի բուռն աճ է տեղի ունեցել Ստամբուլում (1960 թվականին 1467 հազար և 1965 թվականին 1795 հազար), Անկարայում (համապատասխանաբար՝

650 հազար և 902 հազար), Իզմիրում (361 հազար և 417 հազար) [423, էջ XII, 507]: Այս աճը, ինչպես և Թուրքիայի մյուս քաղաքներում, տեղի է ունենում գլխավորապես քայքայված գյուղացիների, գործազուրկ բատրակների և աղքատացած քոչվորների՝ գյուղից քաղաք փոխադրվելու հաշվին: Ուրբանիզացիան անհամեմատ ավելի ինտենսիվ տեմպի է ունենում երկրի արևմտյան ու կենտրոնական, քան արևելյան շրջաններում: Այդ պատճառով էլ ասիմիլյացիոն պրոցեսները ավելի դանդաղ են տեղի ունենում Թուրքիայի արևելքում, քան նրա կենտրոնում և արևմուտքում:

***

Այսպիսով, թուրք ազգի ձևավորման պատմության վերլուծությունից կարելի է անել հետևյալ հետևությունները:

1. Պատմական մի ամբողջ շարք պատճառների բերումով բուրժուական հարաբերությունների զարգացումը Անատոլիայում և Արևելյան Թրակիայում XIX դարում սկսվեց նախ ոչ մուսուլմանական էթնիկական հանրությունների՝ հույների, հայերի և այլոց շրջանում: Այդ բանը սկզբնական շրջանում որոշեց նաև այդ հանրությունների էթնիկական զարգացման ավելի բարձր մակարդակը թուրքերի համեմատությամբ: Բուրժուական հարաբերությունների արագ զարգացումը հույների, հայերի և մյուս ոչ մուսուլմանական ժողովուրդների շրջանում հանգեցրեց այն բանին, որ Թուրքիայի առաջին բուրժուազիան ազգային պատկանելությամբ գերազանցապես թուրքական չէր: Այդ բուրժուազիայի ուժը առանձնապես սկսեց աճել XIX դարի կեսին, երբ ինտենսիվ կերպով Թուրքիա սկսեց թափանցել օտարերկրյա կապիտալը, որը թուրքական էկոնոմիկան շահագործելիս հենվում էր երկրի զրեթե ամբողջ արտաքին առևտուրը իր ձեռքը վերցրած այլազգի կոմպրադորական բուրժուազիայի վրա և իր հերթին աջակցություն էր ցույց տալիս նրան: Թուրքիայի ազգային արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասը մինչև առաջին համաշխարհային պատերազմը նույնպես գտնվում էր այլազգի բուրժուազիայի ձեռքին: XIX դարի

վերջին—XX դարի սկզբին Թուրքիայի վերածումը արևմտյան տերությունների կիսագաղութի, իմպերիալիստների միջամտությունը նրա ներքին գործերին, ուժեղացրին Թուրքիայի ժողովուրդների ազգային զարգացման այլանդակ բնույթը՝ թուրքերը դարձան օտարերկրյա կապիտալի կողմից շահագործվող ճնշված ժողովուրդ, այն ժամանակ, երբ իրենք ևս ճնշում էին ուրիշ ժողովուրդների, որոնք հաճախ ավելի զարգացած էին սոցիալ-անտեսական և էթնիկական տեսակետներից:

2. XIX դարի 30-ական թվականներից սկսվեց Թուրք բուրժուական ազգի ստեղծանական ձևավորումը: Այդ պրոցեսը շատ հակասական էր ու դանդաղ: Ամենից առաջ, երկրի աշխարհագրական առանձին շրջանների հարաբերական մեկուսացածության և հաղորդակցության լավ ճանապարհների բացակայության հետևանքով մեծ դժվարություններով սկսեց ձևավորվել Թուրքիայի միասնական շուկան: Սրդեն այդ պատճառով Թուրք բուրժուազիան վատ էր կապված միմյանց հետ տնտեսապես: Բացի դրանից, նա անհամեմատ ավելի թույլ էր այլազգի բուրժուազիայից, որը հենվում էր արևմտյան տերությունների հովանավորության և կապիտալների վրա: Թուրք բուրժուազիայի զարգացման ճանապարհին կանգնած էին նաև ֆեոդալական կարգի բազմաթիվ խոչընդոտներ: Բայց այնուամենայնիվ անշեղորեն ընթանում էր կապիտալիստական հարաբերությունների զարգացման պրոցեսը: Այդ պրոցեսի մեջ ներգրավվում էին նաև Թուրքերը: Իսկ նրանց շրջանում կապիտալիզմի զարգացման հետ միասին տեղի էր ունենում նաև Թուրք բուրժուական ազգի ստեղծանական ձևավորումը, որը ավարտվեց հիմնականում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ կազմավորվեց Թուրքական միասնական շուկան, երևան եկավ Թուրքական արդյունաբերական բուրժուազիան և ամրապնդվեց Թուրքական առևտրական բուրժուազիան: Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին և նրա ժամանակ, ինչպես նաև նրա ավարտից հետո սրվեցին ազգային փոխհարաբերությունները երկրի ներսում: Դրա պատճառը Թուրք և այլազգի բուրժուազիայի միջև եղած անհաշտելի մրցակցությունն էր, որը վերջին հաշվով ծայրահեղորեն սրեց ազգային հարցը Թուրքիայում, վերածվեց հայերի, ասորիների կոտորածի, Թուրքիայի հույների արտաքսման Հունաստան:

3. Թուրքական ազգային-ազատագրական պայքարը իմպերիալիստների և օտարերկրյա զավթիչների դեմ (1918—1923) նպաստեց Թուրքերի վերջնական կոնսոլիդացմանը որպես ազգ: Բուրժուական Թուրքական Հանրապետության կազմավորումից հետո Թուրքերը՝ տիրապետող ազգը, որոշ ազատ ասպարեզ գտավ իր ազգային զարգացման համար, քանի որ վերացվել էին ֆեոդալական ու թեոկրատիկական շատ սահմանափակումներ, որոնք խանգարում էին այդ զարգացմանը:

4. Թուրքերը սկսեցին իրենց դիտակցել որպես միասնական ազգ: Ազգային ինքնագիտակցությունը փոխարինելու եկավ կրոնականին, «ազգության» սկզբունքը՝ իսլամիզմի, օսմանիզմի նախկին սկզբունքներին, սուլթան-խալիֆին հավատարիմ լինելու գաղափարին: «Թուրք» (Թյուրք) ցեղանունը տարածվեց ամբողջ Թուրք ժողովրդի վրա, այլ ոչ միայն գյուղացիների վրա, ինչպես առաջ էր: Նա դուրս մղեց նախկին կրոնական «մուսուլման» անվանումը, որը փոխարինում էր ցեղանվանը: Օգտագործվելուց դադարեց նաև Թուրքի նախկին պաշտոնական անունը՝ «օսմանցի»: Նախկին խոշոր ցեղերից և տերիտորիալ խմբերից, որոնք անցյալում թույլ էին կապված Թուրք ժողովրդի հետ, Թուրք ազգի կազմում մնացին միայն քանակապես աննշան ազգագրական խմբեր (յուրյուրներ, Թուրքմաններ, Թախթաջիներ և այլն), որոնք դնալով ավելի շատ են լուծվում Թուրք ազգի մեջ: Խոսակցական լեզվից հետու և հասարակ ժողովրդի համար անհասկանալի պաշտոնական դրավոր ու դրական լեզվի («օսմաներենի») փոխարեն աստիճանաբար ծագեց նոր, ժողովրդականին մոտ դրավոր և դրական լեզու: Նրա գիրը նորից ստեղծվեց լատինական այբուբենի հիման վրա: Տեղական բարբառները դնալով ավելի են մոտենում դրական լեզվին և իրար. դրանք այլևս չունեն այնպիսի խոր տարբերություններ, որոնք բնորոշ էին այն ժամանակաշրջանի համար, երբ Թուրք ժողովուրդը դեռ ազգ չէր դարձել:

ԳԼՈՒԽ V

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԵՐԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1970 թվականի գնահատու տվյալներով, Թուրքիայում ապրում է մոտավորապես 30 միլիոն թուրք[1]: Թուրքական ազգային փոքրամասնություններ կան Բուլղարիայում (700 հազար մարդ), Հարավսլավիայում (200 հազար), Հունաստանում (120 հազար), Կիպրոսում (100 հազար), Ռումինիայում (15 հազար), Իրաքում (10 հազար): ՍՍՀՄ-ում ապրում է 79 հազար թուրք:

1965 թվականի թուրքական պաշտոնական տվյալների համաձայն, Թուրքիայի բնակչության 70 տոկոսը (իսկ դա նշանակում է՝ մոտավորապես նույնքան էլ թուրք) ապրում են գյուղերում: Ինքնագործ բնակչությունը բաշխվում է հետևյալ կերպ. 75 տոկոսը զբաղված է գյուղատնտեսության մեջ, 12 տոկոսը՝ արդյունաբերության, 13 տոկոսը՝ սպասարկման ոլորտում [442, էջ 22]: Այլ կերպ ասած, բնակչության ճնշող մեծամասնությունը (70—75 տոկոսը) գյուղացիներ են՝ գերազանցապես չքավորներ և միջակներ: Գյուղացիների հիմնական զբաղմունքը հողագործությունն է, իր նշանակությամբ երկրորդ տեղը գրավում է անասնապահությունը: Ազգագրական խմբերը (յուրյուքները, թուրքմենները և այլն) զբաղվում են հիմնականում անասնապահությամբ՝ հաճախ վաչկատուն կամ կիսավաչկատուն: Մովափնյա շրջաններում մեծ նշանակություն ունի ձկնորսությունը և ծովի հետ կապված այլ զբաղմունքներ, օրինակ՝ սպունգների հավաքումը: Բանվոր դասակարգը սակավաքանակ է՝ ամբողջ բնակչության 10 տոկոսից ոչ ավելի: Դա

[1] Թուրքիայի ամբողջ բնակչությունը 1970 թվականի մարդահամարով կազմում է 35,6 միլիոն մարդ:

բխում է Թուրքիայի տնտեսական զարգացման ընդհանուր մակարդակից. այն դեռ մնում է որպես ագրարային երկիր, չնայած բավական որոշակի է դարձել ագրարային-ինդուստրիալ երկրի վերածվելու տենդենցը: Խոշոր կապիտալիստներ քիչ կան, գերակշռում են մանր ձեռնարկատերերը: Զգալի միջնախավ են կազմում կուլակները, պահպանվել են խոշոր կալվածատերերը, հատկապես երկրի արևելքում: Համեմատաբար մեծ թվով բնակիչներ զբաղված են սպասարկման ոլորտում. սպասավորական կազմից բացի, դրանք հիմնականում մանր առևտրականներ են, ոչ մեծ հյուրանոցների, ռեստորանների, սրճարանների սեփականատերեր և այլ կարգի մանր բուրժուաներ:

Մարդաբանական տիպերը

Թուրքերի մարդաբանական առաջին նկարագրություններից մեկը կատարել է անգլիացի հետազոտող Ջ. Ռեյդը: Նա թուրքերին բաժանում էր երեք տիպի. թուրք-մոնղոլոիդներ, որոնք, նրա կարծիքով, ծագում են Չինգիզ խանի թաթարներից, եվրոպոիդ թուրքեր, որոնք ծագել են փոքրասիական բնակչության իսլամացած և թուրքացած խմբերից, «խառը» թուրքեր, որոնք ծագել են առաջինների և երկրորդների խաչավորման պրոցեսում [334, էջ 100]: Թուրքերի մի մասը մոնղոլա-թաթարներից ծագած լինելու վերաբերյալ հեղինակի պնդումը, որը շարունակում է միջնադարյան եվրոպական շատ պատմագիրների տրադիցիան, որոնք ծագումով թուրքերին կապված են համարում մոնղոլների հետ, իհարկե, միանգամայն սխալ է: Մոնղոլոիդությունը, որը թուրքերի մոտ հանդես է գալիս չափազանց աննշան կերպով միայն առանձին խմբերի շրջանում, կապված է ոչ թե մոնղոլների հետ, այլ Միջին Ասիայի վաղ միջնադարի թյուրքերի հետ, որոնց հատուկ են եղել, ճիշտ է, շատ մեղմացած, մոնղոլոիդ գծեր: Այդ մոնղոլոիդությունը, որը ավելի էր ընդգծված Միջին Ասիայի և Կովկասի եվրոպոիդների հետ այդ թյուրքերի միախառնման հետևանքով, Փոքր Ասիա էին բերել օղուզների և թուրքմենների ցեղերը: Փոքր Ասիայում,

տեղական եվրոպոիդ բնակչության հետ հետագա միախառնման հետևանքով օղուզների և թուրքմենների մոնղոլոիդ գծերը պրեին բոլորովին լուծվեցին եվրոպոիդ հատկանիշների զանգվածի մեջ։ Սակայն, նշելով թուրքերի խառը ծագության, մասնավորապես տեղական բնակչության շատ խմբերի ձուլումը նրանց հետ, Ջ. Ռեյդը, անկասկած, իրավացի է։

Ամենաընդհանուր գծերով թուրքերի մարդաբանական բնութագրման մյուս փորձը պատկանում է Ն. Ա. Արիստովին։ Թուրքերի բազմազիսի տիպերը,—գրում է նա,—առաջացել են այն բանի հետևանքով, որ ամենաշատը ինը դարերից առաջ Միջին Ասիայից Փոքր Ասիա և ավելի ուշ Բալկանյան թերակղզի գաղթած թուրքերը խաչաձևվել են տեղական քրդերի, հույների, սլավոնների հետ... Հավատի և լեզվի ընդհանրությամբ թուրքերը ըստ մարզերի խիստ տարբերվում են իրենց ֆիզիկական տիպով՝ նայած թուրքացած էթնիկական խմբերին և խառնուրդների մեջ թյուրքական արյան խառնության, որը մի քանի շրջաններում, օրինակ՝ Բալկանյան թերակղզում, միանգամայն աննշան էր [18, էջ 412]։

Ժամանակակից հետազոտողներից թուրքերի մարդաբանական նկարագրությունը տվել է Ն. Ն. Չեբոկսարովը։ Նրա հետևությունների համաձայն, կարելի է տարբերել հարավային եվրոպոիդների միջերկրածովյան-բալկանյան (միջերկրածովյան) խումբը, որի համար բնորոշ են նեղ ալիքաձև մազերը, երրորդային մազածածկի ուժեղ զարգացումը, դեմքի կառուցվածքի նրբությունը, այտոսկրների թույլ զարգացումը, լայն բացված (նշակերպ) աչքերը, դուրս ցցված նեղ քիթը՝ ուղիղ մեջքով, փոքր-ինչ հաստացած շրթունքներ։ Թուրքերի համար, ինչպես նաև առհասարակ բոլոր հարավային եվրոպոիդների համար, բնորոշ է ուժեղ զունավորումը՝ սև կամ շագանակագույն աչքերը, սև կամ շագանակագույն մազերը։ Թուրքերի շրջանում տարածված է նաև հարավային եվրոպոիդների մեկ այլ խումբ՝ առաջավորասիականը (այլ կերպ՝ արմենոիդը, ասորիդը կամ անատոլիականը)։ Այս խմբի ներկայացուցիչները ավելի շատ հանդիպում են երկրի արևելքում։ Առաջավորասիական խումբը տարբերվում է երրորդային մազածածկի շատ ուժեղ զարգացմամբ. նրա համար բնորոշ են նաև խիստ ցցուն քիթը՝ ուռուցիկ ձևի պրոֆիլով. քիթը ունի զարգացած թևեր, ծայրը կախ ընկած է։ Այս խմբի ներկայացուցիչների համար բնորոշ են խոշոր դանդը, ճակատի մեծ թեքությունը, ցցուն արտահայտված հոնքավերևը։ Մոնղոլոիդ տարրերը թուրքերի մոտ բոլորովին անհետացել են։ Առանձին տեղական խմբերի մոտ միայն սակավաթիվ դեպքերում նշված է էպիկանտուսի (աչքի ներքին անկյունում արցունքի ելունդը ծածկող մաշկի կնճռի) առկայությունը [237, էջ 26]։ Թուրքիին հետազոտող Ս. Բունակովը հայտնաբերել է նաև «մոնղոլական բիծ» (մոնղոլոիդների համար բնորոշ պիգմենտի կուտակում գոտկատեղում) թուրք նորածինների և երեխաների ոչ մեծ թվի մոտ [502, էջ 41—50]։

Ինչպես վերևում արդեն նշվեց, թուրքերի մոտ գերակշռում է կարճագլխությունը. գլխի ցուցանիշը, Ա. Շ. Կանտուի և Ա. Վ. Ելիսեևի տվյալներով, հավասար է 84-ի [516, էջ 479. 78, պրակ 127], գանգի բարձրության հարաբերությունը երկարության նկատմամբ կազմում է 77,6 [516, էջ 479]։ Այս երկու ցուցիչները ամենից ավելի մոտ են, ինչպես պարզել է Ա. Վ. Վալլուան, այն համանման ցուցանիշներին, որ Վ. Վ. Բունակը նշել է արևելաանատոլիական վիլայեթների՝ Բիթլիսի և Վանի հայերի համար (դրանք համապատասխանաբար հավասար են 84-ի և 78,3-ի) [516, էջ 479]։

Սովետական մարդաբանները, օրինակ՝ Վ. Վ. Բունակը, գտնում են, որ թուրքերի ֆիզիկական կերպարը ձևավորվել է առնվազն չորս հիմնական և առավել զանազանվող բաղադրամասերի մասնակցությամբ։ Դրանք են՝ ճորոխ-ռիոնյան, պոնտոս-զագրոսյան, բալկանա-դինարյան մարդաբանական տիպերը՝ որպես հնագույն տեղական տիպեր՝ փոքրասիական և բալկանյան տարրեր, և անդրկասպյան տիպ, որը ծագում է մոտավորապես VIII—IX դարերից, բայց ոչ թե տեղական է, այլ եկվոր։

Ճորոխ-ռիոնյան կամ պոնտական տիպը ներկայումս տարածված է գլխավորապես Թուրքիայի սահմաններից դուրս՝ Վրաստանի արևմտյան մարզերում։ Թուրքիայում այդ

տիպը ներկայացված է համեմատաբար փոքր մի մարզում միայն՝ Անատոլիայի հյուսիս-արևելքում։ Այն կարելի է կապել տեղական լազական էթնիկական բաղադրամասի հետ, որը միաձուլվել է թուրքերի կազմի մեջ։ Սակայն այդ տիպի մի քանի առանձնահատուկ հատկանիշների զուգորդումը հանդիպում է Թուրքիայի ամբողջ տերիտորիայում։ Հավանաբար, մի ժամանակ այդ տիպը Անատոլիայում ավելի լայնորեն է տարածված եղել։ Փոքր Ասիայի հին ժողովուրդները՝ խեթերը, լիդիացիները, կարիացիները և ուրիշներ իրենց մեջ ընդգրկած ունեին նաև լազերի ու վրացիների նախնիներին։

Պոնտոս-զագրոսյան տիպը (այլ կերպ այն անվանում են առաջավորասիական, արմենոիդ, ասորոիդ և այլն) պարզորոշ կերպով երևան է գալիս Արևելյան Անատոլիայի թուրքերի մոտ։ Սա ևս պատկանում է փոքրասիական հնագույն տիպերի թվին և կապված էր Ուրարտու պետության ժողովուրդների հետ։ Այդ ժողովուրդների կերպարի մասին պատկերացում են տալիս հին Ասորեստանի քանդակագործական հուշարձանները, որոնք վերարտադրում են պոնտոս-զագրոսյան տիպիկական գծերը։ Այս տիպը լայնորեն տարածված է հայերի մոտ (որի համար և երբեմն կոչվում են արմենոիդ)։

Բալկանա-դինարյան տիպը բնորոշ է Արևմտյան Անատոլիայի և Արևելյան Թրակիայի որոշ շրջանների թուրքերի համար։ Տարածված է նաև բալկանյան ժողովուրդների՝ հույների, բուլղարների, սերբերի և ուրիշների շրջանում։ Թուրքերին նա հասել է նրանց կողմից այդ ժողովուրդների մի մասի թուրքացման միջոցով։

Անդրկասպյան տիպը Թուրքիայում որոշակի տեղայնացում չունի և որպես այդպիսին անհետացել է, պահպանելով միայն մի շարք ցաքուցրիվ գծեր ուրիշ գծերի հետ խառնված։ Սրա տարածումը Անատոլիայում սկսվում է սելջուկյան նվաճման ժամանակաշրջանից։ Պատմական և լեզվաբանական տվյալներով սելջուկ-թուրքերը ամենից ավելի մոտ էին թուրքմեններին՝ անդրկասպյան տիպի ժամանակակից ներկայացուցիչներին։

Թուրքերի մեջ պատահում են նաև ուրիշ տիպեր, օրինակ՝ կապուտաչյա շիկահերներ, որոնք բնորոշ են հյուսիսային եվրոպական ժողովուրդների համար, և գրեթե աֆրիկական տիպի նման շատ մուգ գույնի թխագեմ տիպեր։ Այս ամենը խոսում է այն մասին, որ թուրքերն ունեն չափազանց տարասեռ ծագում։

Մարդաբանական տեսակետից թուրքերից փոքր ինչ տարբերվում են յուրյուքները։ Վերջիններս ավելի թուխ են, ավելի բարձրահասակ (թուրքերի միջին հասակն է 167 սանտիմետր [78, պրակ 7, էջ 127], յուրյուքներինը՝ 170 սանտիմետր [433, էջ 15]։ Նրանց մոտ գերակշռում է երկարագլխությունը (գլխի ցուցիչն է 76,46 [433, էջ 15])։ Այս առանձնահատկությունը Ա. Վ. Ելիսեևը բացատրում էր այն բանով, որ յուրյուքները ուժեղ կերպով խառնվել են քրդերի հետ, որոնք նույնպես երկարագլուխ են [78, պրակ 2, էջ 81]։ Բայց երկարագլխությունը գերակշռում է նաև միջինասիական թուրքմեններների մոտ։ Ուստի այդ բանը պարտադիր կերպով կապված կարող է չլինել քրդական տարրի հետ։ Բացի դրանից, յուրյուքները, ինչպես նաև ուրիշ շատ քոչվորներ, սովորություն ունեն կապել մանուկների գլուխը, որը արհեստականորեն ձևափոխում է գանգը, երկարացնում նրա ծոծրակային մասը, այսինքն՝ դարձնում է երկարագլուխ։ Ա. Ա. Իվանովսկին յուրյուքների մոտ հայտնաբերել է նաև բավական նկատելի մոնղոլոիդ գծեր՝ դուրս ցցված այտոսկրներ, երրորդային մազածածկի թույլ զարգացում, իսկ նրա հետազոտած 84 յուրյուքներից 18-ը ունեցել են էպիկանտուս [108, էջ 100]։ Այս թույլ մոնղոլոիդությունը, անկասկած, գալիս է միջնադարի Բյուրքական ցեղերից։

Թուրքերի արյան խմբերի տարածման վերաբերյալ հետազոտությունները ցույց են տալիս, որ թուրքերը մարդաբանական տեսակետից կարծես միջակա օղակ են Եվրոպայի և Ասիայի ռասաների միջև։ Այսպես, Ա խմբի տոկոսը բարձրանում է Ասիայից դեպի Եվրոպա գնացող ուղղությամբ, Թուրքիայում՝ Անատոլիայից դեպի Ռումելիա ուղղությամբ. Անատոլիայում Ա խումբը կազմում է 40 տոկոս, Բ խումբը՝ 18,6 տոկոս, իսկ Ռումելիայում համապատասխանաբար 41

տոկոս և 12,8 տոկոս։ Ընդհանուր առմամբ, Բ խմբի տոկոսը Թուրքերի մոտ ավելի շատ է, քան եվրոպական ժողովուրդների մոտ [477, էջ 851. 388, էջ 282]։ Սա մի անգամ ևս վկայում է, որ Թուրք ժողովրդի ծագման ժամանակ տեղի է ունեցել Անատոլիայի տեղացի ժողովուրդների միախառնում Միջին Ասիայից գաղթած Թյուրքական ցեղերի հետ։

Եվ այսպես, կարելի է արձանագրել, որ Թուրքերը մարդաբանական տեսակետից կազմված են, նախ, Փոքր Ասիայի և Բալկանների տեղական («մինչանելջուկյան» և «մինչօսմանյան») բնակչության հետ և, երկրորդ՝ եկվոր, միջինասիական, գլխավորապես օղուզա-Թուրքմենական տարրերի հետ։ Այս հետևությունը լավ համապատասխանում է պատմական բոլոր փաստերին և, ինչպես ասորև ցույց կտանք, լեզվաբանության և ազգագրության տվյալներին։

Լեզուն

Լեզուն, որպես էթնիկական հիմնական ցուցանիշ, վառ կերպով արտացոլում է այս կամ այն ժողովրդի էթնոգենեզի առանձնահատկությունները։ Իրոք, Թուրքերեն լեզվի հիմքը Թյուրքական է. տիպիկ Թյուրքական են հնչյունական և քերականական կառուցվածքի որոշիչ գծերը, բառապաշարի մեծ մասը։ Եվ դա հասկանալի է. չէ որ Թուրք ժողովրդի ձևավորման որոշիչ բաղադրամասերը եղել են Թյուրքական ցեղերը։

Թուրքերեն լեզվի, ինչպես և մյուս բոլոր Թյուրքական լեզուների լեզվաբանական առանձնահատկությունները, որոնք բնորոշվում են արմատ-հիմքի անփոփոխությամբ, հետաքրքրական են ծագումնաբանական վերլուծության տեսակետից. Թյուրքական լեզուներում բառերի արմատները ու ածանցավոր հիմքերը զարմանալիորեն քիչ են փոփոխությունների ենթարկվել և սովորաբար հազարամյա հնություն ունեցող հուշարձաններում ունեն նույն տեսքը, ինչ որ ժամանակակից Թյուրքական լեզուներում։ Զարմանալի է նաև ընդհանուր Թյուրքական ֆոնդին վերաբերող բառերի մեծ մասի հիմնական նշանակությունների կայունությունը [111, էջ

4]։ Բնական է, որ այդպիսի ֆոնի վրա շատ հեշտությամբ կարելի է տարբերել ուրիշ լեզուներից փոխառյալ բառերը. դրանք կարծես դուրս են եկել բառարանների մակերես, իրենցից ներկայացնելով, հնագիտական տերմինաբանությամբ ասած, «հանածո նյութ»։

Թուրքերեն լեզվի Թյուրքական հիմքը նրան մոտեցնում է Թյուրքական մյուս լեզուներին։ Սա ընդհանուր է տվյալ լեզուների համար, ճիշտ այնպես, ինչպես սլավոնական լեզվական հիմքը ընդհանուր է սլավոնական բոլոր լեզուների համար։ Ուրեմն ինչո՞վ է պայմանավորված այն առանձնահատուկը, որը Թյուրքական լեզվախմբի սահմաններում մեկ լեզուն տարբերում է մյուսից։ Նախ, բուն հիմքի տարբեր բաղադրամասերը, որոնք ծագում են ցեղական տարբեր լեզուներից ու բարբառներից։ Երկրորդ, դա այն տարբեր հիմնացեղերի լեզուներն են, որոնք լեզուների կազմի մեջ են մտել օտարալեզու խմբերի ասիմիլյացման ժամանակ։ Կա նաև երրորդ պատճառը, որը տարբերություններ է մացնում ազգակից լեզուների միջև, դա լեզուների բաժանումն է նրանց ներքին զարգացման պրոցեսում։ Բայց այս մոմենտը անմիջական առընչություն չունի էթնոգենեզի պրոբլեմի հետ։

Թուրքերի, ադրբեջանցիների, Թուրքմենների, գագաուզների մոտ լեզվի հաղթանակած բաղադրամասը եղավ օղուզականը։ Նշված ժողովուրդների համար ընդհանուր այդ օղուզական բաղադրամասը միաժամանակ այն առանձնահատուկն է, որով օղուզական լեզվական ենթախումբը տարբերվում է ամբողջ Թյուրքական խմբի լեզուներից։ Թուրքմենների և, ավելի սակաս չափով՝ ադրբեջանցիների ծագման գործում մասնակցություն են ունեցել օղուզներից բացի Թյուրքական ուրիշ ժողովուրդներ ևս, օրինակ՝ ղփչաղները, որոնք իրենց առանձնահատկություններն են մտցրել այդ ժողովուրդների ինչպես լեզվի, այնպես էլ մշակույթի մեջ։ Բայց գլխավորն այն է, որ Թյուրքական ժողովուրդների լեզուներում այդ առանձնահատուկը որոշել են ասիմիլյացված էթնիկական խմբերի լեզվական հիմքերը, օրինակ, Թուրքմենների համար՝ Միջին Ասիայի իրանական հին ժողովուրդների հիմքը, ադրբեջանցիների համար՝ Կովկասի

իրանական ժողովուրդների, միդիացիների, աղվանների, պարսիկների հիմքը, թուրքերի համար՝ հույների, քրդերի, հայերի, սլավոնների և այլ ժողովուրդների հիմքը:

Հին թյուրքական գրի ամենավաղ շրջանի հուշարձանը (պայմանականորեն թվագրվածներից) Գուդուլու խանի պատվին կառուցված հուշարձանն է, որը վերաբերում է 693—704 թվականներին: Այս, ինչպես նաև մյուս հուշարձանները, քարակոթողներ են, արձանագրություններ ժայռերի ու գլաքարերի վրա, տնային գործածության առարկաների (սկահների, ճախարակների և այլնի) վրա և ունեն լեզվական որոշ տարբերություններ, բայց պարունակում են լեզվաբանական այն հիմքը, որը տարբեր չափերով կրկնվում է ժամանակակից թյուրքական բոլոր լեզուներում: Այդ հուշարձանները հայտնաբերված են Տուվայում, Խաքասիայում, Հարավային Յուկուտիայում, Կիրգիզիայում, Հյուսիսային Մոնղոլիայում, Ալթայում: Այն լեզվի բազայի վրա, որի առանձին հատկանիշները արձանագրված են ենիսեյան հուշարձաններում, զարգացել են կիրգիզների, տուվացիների, շորերի, խաքասների և այլ ժողովուրդների նախնիների լեզուները [27, էջ 10—12]: Օղուզական (օրխոնյան) հուշարձաններում արտացոլված լեզվի հիման վրա հետագայում բարդ զարգացման ընթացքում ծագեցին թուրքմեներեն, ադրբեջաներեն, թուրքերեն, գագաուզերեն, Ղրիմի թաթարերեն լեզուները:

Թուրքերեն լեզվի հնչյունաբանությունը պահպանել է զույգ թվով ձայնավորներ, ինչպես օրխոնա-ենիսեյա-թալասյան հուշարձաններում. ա—է, ը—ի, օ—օ, ու—ու: Թուրքերենում, ինչպես նաև այդ հուշարձաններում, հետքեր չկան օ հնչյունից, որը, օրինակ, ադրբեջաներենում և ույղուրերենում երևացել է, հավանաբար, տեղական մինչթյուրքական նախահիմքերի ազդեցության տակ: Թուրքերեն լեզուն հիմնականում պահպանել է բաժանումը փափուկ և կոշտ բաղաձայների (վանկի սինհարմոնիզմ, որը, ինչպես գրում է Ա. Ի. Բատմանովը, բավական հստակ պահպանվել է հին թյուրքական գրելաձևի մեջ. բ—բյ, դ—դյ, գ—գյ, կ—ֆյ, լ—լյ, ն—նյ, ռ—ryյ, ս—սյ, տ—բյ [27, էջ 13]: Բառի սինհարմոնիզմ տեղի է ունենում նաև թուրքերենում՝ հին թյուրքական լեզվից: Թուրքերեն լեզվի համար բնորոշ է նեղ ձայնավորների (ոչ լայների մասին) շրթնայնացումը, ինչպես և հին թյուրքական մի քանի հուշարձանների լեզվում. օրինակ, հին թյուրքերեն բոլգու (եղավ) և թուրքերեն օլգու (եղավ, դարձավ): Թուրքերեն լեզվում ջիացում (ժիացում). յոք (չկա), քիշի (մարդ): Իսկ ղազախերենում և տուվաերենում, օրինակ, այդ երևույթները կան: Թուրքերենում չկա նաև ածանցային լ բաղաձայնի տարնմանում. աթլար (ձիեր), այն ժամանակ, երբ կիրգիզերենում և մի քանի այլ լեզուներում դա դարձել է հնչյունաբանական օրենք. օրինակ՝ կիրգիզերեն աթթար (ձիեր) և այլն:

Թուրքերեն լեզուն շատ բան է պահպանել նաև հին թյուրքական լեզուների ձևաբանությունից: Նրանում մնացել են, օրինակ, սեռերի նույն ածանցները.—ըն, —ըլ (անդրադարձ և կրավորական սեռեր), —ըշ (փոխադարձ սեռ), —թ, —ըր, —ար (հարկադրական սեռ). պահպանվել են նաև հին թյուրքական մակբայական դերբայի —ա, —ըփ ածանցները և այլն:

Թուրքերեն լեզվի բառապաշարում հիմնական բառային ֆոնդի մեծ մասը թյուրքական է: Օրինակ, մարդու մարմնի օրգանները ու մասերը, ֆիզիոլոգիական արտաթորանքների անունները. բաշ (գլուխ), յուզ (դեմք), գյոզ (աչք), աղըզ (բերան), դիլ (լեզու), դիշ (ատամ), սաչ (մազ), քաշ (հոնք), բուրուն (քիթ), դուդաք (շուրթ), սաքալ (մորուք), էնսե (ծոծրակ), բոյուն (վիզ), բողազ (կոկորդ), բել (գոտկատեղի), արքա (մեջք), էլ (ձեռքի դաստակ), կոլ (ձեռք), պարմաք (մատ), թըրնաք (եղունգ), այաք (ոտք), դիզ (ծունկ), կարըն (փոր), բյորբեկ (երիկամ), յուրեկ (սիրտ), դերի (կաշի), կան (արյուն), թեր (քրտինք), յաշ (արտասուք) և այլն: Գերազանցապես թյուրքական են ազգակցության տերմինները, կենդանիների և թռչունների անունները, բոլոր թվականները (բացառությամբ նոր ժամանակում փոխառնված միլիարդ, միլիոն բառերից), շարժում ցույց տվող գրեթե բոլոր բայերը, բազմաթիվ ածականներ, տնային գործա-

ծության առարկաների, աննդամթերքների, փոխադրամիջոցների, մետաղների ու հանքերի, երկնային լուսատուների շատ անուններ և այլն [23, էջ 23—36. 199, էջ 15—17. 221, էջ 260. 241, էջ 83—159]:

Թյուրքական բառապաշարը թուրքերեն լեզվում ներկայացված է գլխավորապես օղուզներեն բառերով: Այսպես, թուրքերեն լեզվում պահպանվել են գրեթե բոլոր այն բառերը, որոնք Մահմուդ Կաշգարին իր բառարանում նշել է որպես օղուզական. աք (սպիտակ), ավ (որս), բեն (ես), բոք (գոմաղբ), չանաք (թաս), էքին (ցանք), էվետ (այո), իլիկ (ոսկրուղեղ), յալ (յուղ), էնգիչ (խեցգետին), յուլերլիք (սպանդ), քիչե (թաղիք), քիչի (այծ), օբա (առվի, ցեղ), կարընջա (մրջյուն), կոչ (ոչխար), կովա (դույլ), քուրթ (գայլ), ութանմաք (ամաչել) և այլն [73, էջ 644—648]:

Յուրյուքների լեզվում պահպանվել են այնպիսի հին բառեր, ինչպես բիթի (գիրք), բիթիքչի (գրագիր) [350, էջ 367], որոնք անհետացել են մյուս, գրեթե բոլոր թյուրքական լեզուներում, այդ թվում և թուրքերենում:

Այսպիսին է թուրքերեն լեզվի թյուրքական շերտը: Այդ շերտը, անկասկած, հիմնականն է, գլխավորը, որոշիչը: Սակայն թուրքերի կողմից ուրիշ ժողովուրդների էթնիկական ասիմիլյացման պրոցեսում (իսկ էթնիկական ասիմիլյացիայի հիմքը հենց լեզվական ասիմիլյացիան է) նրանց լեզվի մեջ շատ բան է մտել ասիմիլյացված խմբերի լեզուներից: Ասիմիլյացումը երկկողմանի պրոցես է, երկու (առնվազն) էթնիկական ընդհանրությունների փոխներգործության, փոխազդեցության պրոցես. և թվում էր, թե որքան էլ լրիվ ասիմիլյացված լինի էթնիկական որևէ հանրություն մեկ ուրիշի կողմից, առաջինը ևս իր ավանդն է ներդնում նորակազմ էթնոսի մեջ: Եվ այդ բանը ակնառու կերպով արտացոլվում է լեզվում: Այսպես, եթե վերցնենք թյուրքական լեզվաընտանիքը, մենք որևէ կոնկրետ ժողովրդի լեզվի հնչյունակազմության, քերականության և բառապաշարի վրա կտեսնենք այն ժողովուրդների լեզուների նկատելի ազդեցությունը, որոնք նշանակալի դեր են կատարել նրա ծագման գործում. ալթայական լեզուն իր վրա կրել է մոնղոլական լեզու-

ների ազդեցությունը, թուրքմաններենը՝ իրանական, չուվաշերենը՝ ուգրո-ֆիննական և սլավոնական, յակուտերենը՝ տունդուսա-մանջուրական և մոնղոլական լեզունների ազդեցությունը և այլն [26, էջ 26, 27, 41, 60, 97, 98]:

Ժողովուրդների ծագման վերաբերյալ հետևությունների համար առանձնապես շատ նյութ է տալիս բառապաշարի վերլուծությունը: Դա հասկանալի է, քանի որ բառային միավորները հաճախ փոխառնվում են կուլտուրայի այն տարրերի հետ զուգահեռ, որ նրանք ցույց են տալիս: Ճիշտ է, նոր հասկացություններ արտահայտելու համար կարող են ստեղծվել նաև նորակազմություններ (այդ երևույթի մասնակի դեպքն է բառապատճենումը), որոնք արտացոլում են կուլտուրայի փոխառյալ տարրերը. նոր հասկացությունները կարող են արտահայտվել նաև հին բառերով, որոնք փոխել են նախկին նշանակությունը: Բայց ծագումնաբանական հետևությունների համար առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում օտարաբեղու բառապաշարի անմիջական փոխառությունները՝ որպես լեզուների փոխներգործության ակնառու օրինակ:

Սակայն, փոխառյալ բառերը վերլուծելիս հարկավոր է հաշվի առնել բառերի բավական մեծ ֆոնդ, որոնք լեզվի մեջ են թափանցում անկախ էթնոգենեզի պրոցեսներից, արտացոլելով միայն կուլտուրական ազդեցությունների պատմությունը, այլ ոչ թե էթնիկական ասիմիլյացման պատմությունը: Այսպես, ռուսաց լեզվի մեջ մտել են հունարեն շատ բառեր՝ Ռուսիայում քրիստոնեության տարածումից հետո, իսկ արևմտաեվրոպական լեզուներից (օրինակ՝ ֆրանսերենից) շատ բառեր թափանցել են նրա մեջ շնորհիվ զուտ կուլտուրական, այլ ոչ թե էթնիկական ազդեցության: Այնուհետև, Սիբիրի թյուրքական ժողովուրդների լեզուները, որոնք ընդունել են մոնղոլական կուլտուրան, փոխառել են զգալի քանակությամբ մոնղոլական «կուլտուրական» բառեր, իսկ Միջին Ասիայի թյուրքերի լեզուները, ինչպես նաև թուրքերենը, բառացիորեն ողողված են արաբական տարրերով, որոնք այդ լեզուների մեջ են թափանցել իսլամի և արաբա-իսլամական կուլտուրայի ազդեցության տակ: Թուրքերեն խոսակ-

ցական լեզվում, օրինակ, արաբիզմները կազմում են մինչև 30 տոկոս, գրական լեզվում՝ առնվազն 50 տոկոս [150, էջ 3]: Բայց թուրքերեն լեզվում արաբիզմների այդպիսի առատությունը խոսում է ոչ թե թուրքերի ծագման գործում արաբների կատարած ինչ-որ առանձին խոշոր դերի մասին, այլ լոկ թուրքական կուլտուրայի վրա արաբականի ամենաուժեղ ազդեցության մասին՝ իսլամի, լուսավորության, գրականության միջոցով: Ի դեպ, արաբական փոխառությունների մեծ մասն էլ կրում է «գրքային» բնույթ: Այսպես, դրանցից շատերը կապված են արաբական գրի տարածման հետ. էլիֆբե (այբուբեն), հարֆ (տառ), ռաքամ (թիվ), քիթապ (գիրք), մեքթուպ (նամակ), քյաթիպ (գրագիր, քարտուղար), սըֆըր (զրո), իմլյա (ուղղագրություն), կալեմ (գրիչ), թալեբե (ուսանող) և այլն: Իսլամի բոլոր կրոնական տերմիններըր նույնպես արաբական են (ոչ մեծ քանակությամբ կան նաև իրանական բառեր. փեյղամբեր— մարգարե, նամազ— աղոթք և այլն): Չնայած քեմալականների պուրիտանական գործունեությանը, պետական-վարչական տերմիններից մինչև հիմա էլ պահպանվել են ոչ քիչ թվով արաբիզմներ. դեվլեթ (պետություն), հյուքյումեթ (կառավարություն), մեմլեքեթ (երկիր), իդարե (կառավարում), ջումհուրիյեթ (հանրապետություն), վալի (նահանգապետ) և այլն: Գրեթե բոլոր վերացական հասկացությունների համար ևս գործածվում են արաբերեն բառեր. հաքիքաթ (ճշմարտություն), ֆիքիր (միտք), ինսաֆ (արդարացիություն, մարդասիրություն, գթություն), ադալեթ (արդարություն) և այլն: Գրեթե բոլոր շաղկապներն էլ ունեն արաբական ծագում. վե (և), ֆաքաթ (սակայն), ամմա (բայց) և այլն:

Ճիշտ է, արաբները մասնակցել են թուրքերի ծագմանը. արաբական առանձին ցեղեր թուրքերի հետ միասին վերաբնակեցվում էին օսմանցիների նվաճած հողերը, օրինակ, Բալկաններում [219, էջ 16], իսկ Օսմանյան կայսրությունում տեղի էր ունենում նաև արաբների միախառնում թուրքերի հետ: Բայց արաբների դերը թուրքերի էթնոգենեզի գործում եղել է անհամեմատ ավելի փոքր, քան մյուս ժողովուրդների՝ հույների, հայերի, քրդերի դերը: Ուստի, եթե

թուրքերեն լեզվի արաբական բառապաշարի մեջ փնտրենք այն բառերը, որոնք անմիջական առնչություն ունեն էթնոգենեզին, հարկավոր է նրանից դուրս հանել բոլոր այն արաբիզմները, որոնք թուրքերենի մեջ են մտել իսլամի տարածման կապակցությամբ, ինչպես նաև լուսավորության, գրականության շնորհիվ, ադմինիստրացիայի միջոցով (գրասենյակային լեզուն Օսմանյան կայսրությունում գրեթե բացառապես բաղկացած էր արաբիզմներից, ասենք հիմա էլ է դրանցից բաղկացած), բանակի միջոցով (ռազմական տերմինները Օսմանյան կայսրությունում հիմնականում արաբապարսկական էր) և այլն: Նման սահմանափակումից հետո թուրքերեն լեզվում կմնան արաբական ծագում ունեցող ոչ շատ բառեր, օրինակ՝ շարապ (գինի), խամուր (խմոր), ռաաթ (ժամ, ժամացույց), նալ (պայտ) և այլն, որը և արտացոլում է արաբների իրական դերը թուրքերի ծագման գործում:

Ինչպես մենք արդեն տեսանք, թուրք ժողովրդի ձևավորման առանձնահատկություններից մեկն այն էր, որ նրա էթնոգենեզի մեջ մասնակցել են երկու հիմնական, բայց իրենց կուլտուր-անտեսական տիպով միանգամայն հակադիր էթնիկական բաղադրամասեր՝ քոչվոր անասնապահների թյուրքական ցեղերը և Փոքր Ասիայի ու Բալկանների տեղացի ժողովուրդները, որոնց անտեսության բնորոշ տիպը եղել է նստակյաց երկրագործությունը և, ծովափնյա շրջաններում՝ ծովային ձկնորսությունը: Միայն քոչվորական և արածովի անասնապահությամբ զբաղվող քրդերի մի մասը անտեսության տիպով մոտ էր թուրքերին: Տեղական բնակչության հետ խառնվելու պրոցեսում քոչվոր թյուրքերը անցնում էին նստակեցության, տեղացի բնակիչներից յուրացնելով երկրագործության և նստակյաց կյանքի փորձը: Կարելի է ասել, որ կուլտուր-անտեսական ասիմիլյացման գործում հաղթող էին դուրս գալիս տեղացի բնակիչները, որոնք վաչկատուն անասնապահների համեմատությամբ ունեին ավելի բարձր նստակյաց երկրագործական կուլտուրա, տնտեսության հարուստ փորձ և զարգացած հմտություններ տեղի աշխարհագրական պայմանների համեմատ: Բայց լեզվական ասիմի-

լյացիայի գործում հաղթող էին դուրս գալիս թյուրքական բարբառները, որոնք, ճիշտ է այդ դեպքում փոխում էին իրենց հնչյունական ու քերականական առանձնահատկությունները և վերցնում մեծ քանակությամբ տեղական բառեր։ Տեղական լեզուների այդ ազդեցությունը թյուրքական ցեղերի բարբառների վրա մեծապես ազդեց թուրքերեն լեզվի ձևավորման վրա (որի հիմքում և ընկած այդ բարբառները), այն հարստացնելով հնչյունական, քերականական և բառապաշարի տեսակետներից։

Այն փաստը, որ լեզվական ասիմիլյացիայի պրոցեսում հաղթող էին դուրս գալիս թյուրքական բարբառները, բացի հիմնական պատճառներից (թյուրքերը ամենից ավելի խոշոր ընդհանրություններ էին, թուրք ժողովուրդը տիրապետող էր, թուրքերեն լեզուն դարձել էր ազդամիջյան հաղորդակցման լեզու և այլն) բացատրվում է նաև այն բանով, որ թյուրքական լեզուն բավական հեշտ է օտարալեզու բնակչության կողմից յուրացնելու համար։ Այն պարզ է հնչյունական տեսակետից, քերականությունը ևս մեծ դժվարություններ չի ներկայացնում, առանձնապես խոսակցական լեզվում։ Թուրքերեն լեզվում, օրինակ, ինչպես և թյուրքական մյուս լեզուներում, չկա սեռի քերականական կատեգորիա, հոդնակի թիվը կազմվում է շատ պարզ և հիմնական կանոնից առանց որևէ բացառության, չկան անկանոն բայեր, բայի խոնարհումը անչափ պարզ է, արմատ-հիմքը բոլոր բառերում անփոփոխ է, դժվարություններ չկան նաև բառակազմության ժամանակ։ Այդ բանը, իհարկե, չի կարելի ասել Փոքր Ասիայի և Բալկանների տեղական լեզուների մեծ մասի մասին։ Հայոց լեզուն, օրինակ, շատ բարդ է հնչյունական և քերականական տեսակետից։ Հունարենի և սլավոնական լեզուների քերականությունները նույնպես բարդ են ու դժվար՝ յուրացման համար։

Տեղական փոխառությունների շերտերը հեշտությամբ կարելի է տարբերել ժամանակակից թուրքերենում։ Այսպես, բառապաշարի բնագավառում այդ փոխառությունները հարկավոր է փնտրել այն տերմինների մեջ, որոնք վերաբերում են երկրագործությանը, շինարարությանը և նստակյաց

կյանքի կացարանների առանձնահատկություններին, ծովագնացությանը, ձկնորսությանը, այսինքն՝ այն տերմինների մեջ, որոնք բնորոշ չեն քոչվոր անասնապահների տնտեսության ու կուլտուրայի համար։ Թյուրքերը վերցրել են նաև շատ բառեր, որոնք կապված են աշխարհագրական միջավայրի, կլիմայի, կենդանական ու բուսական աշխարհի տեղական առանձնահատկությունների հետ։

Թուրքերեն լեզվի մեջ կարելի է տարբերել մի քանի կոնկրետ լեզվահիմքեր, որոնք պատկանում են փոքրասիական բնակչության՝ թուրքերի կողմից ասիմիլյացված լեզուներին։ Նման խմբերից մեկը հույներն էին, որոնք հսկայական ավանդ են ներդրել թուրքական մշակույթի մեջ և նկատելի հետք թողել թուրքերենում, հատկապես նրա բառապաշարի մեջ։ Հունաբանությունները թուրքերենում դասակարգվում են ըստ հետևյալ թեմատիկ բաժինների։ Ամենից առաջ դրանք աշխարհագրական ու կենդանաբանական-կենսաբանական տերմիններն են՝ ծովային քամիների անուններ՝ փոյրազ (հյուսիսային քամի), լոդոս (հարավ-արևմտյան քամի), ծովային երևույթների անուններ՝ թալազ (ծովային ալիք), յաքամոզ (ծովի ֆոսֆորափայլում), անաֆոր (ալեբախություն). ծովային ձկների ու կենդանիների անուններ՝ փիսի (տափակաձուկ), փաչոթա (թյունոս), զարդանա (ծովային օձաձուկ), վաթոզ (կատվաձուկ), լյուֆեր, լեվրեկ, կոֆանա (ծովային պերկեսի տեսակներ), ըսաակոզ (օմար), ախտափոթ (ութոտանի), չադանոզ (ծովախեցգետին) և այլն[1]։

Ծովագնացության և ձկնորսության վերաբերյալ տերմինների մի զգալի մասը ևս թուրքերենում ունեն հունական ծագում. էդրինի (ցանց), պրամա (ծանր նավ), փերեսև (սուզաղնդիկ), չափարի (կարճավոր ուռկան), դելյան, լիվար (ձկան բակարդների տեսակներ), քյորֆեզ (ծոց), լիման (նավահանգիստ), քամենկ (որսատեզ), ըսկարմոզ (թիակալ), զոկա (ձկնորսական կարթ)։ Ձկնորսության հետ են կապված նաև ձկնեղեն ճաշատեսակների անունները՝ լյա-

1 Տեղի խնայողության պատճառով բերվում են փոխառյալ բառերի ոչ թե սպառիչ ցուցակները, այլ միայն ավելի բնորոշ օրինակները։

քերդա (աղած ձուկ), լիկորինոզ (ապխտած ձուկ), չիրոզ (չորացրած թյունիկ), պիլյակի (տապակած ձուկ կծու համեմունքով)։

Երկրագործական տերմինաբանությանն են վերաբերում գյուղատնտեսական գործիքների փոխառյալ շատ անուններ՝ թըրփան (գերանդի), դիրեն (եղան), դյուվեն (կալատախտակ.) ագրոտեխնիկական տերմիններ՝ քիրիզմա (խոր հերկ), դյուբրե (պարարտանյութ), սընըր (սահմանագիծ), ֆիդան (պատվաստացու), նադաս (հարոս), ֆիլիզ (ծիլեր), ֆիդե (սածիլ), դեմնա (խուրձ), բընադ (խարադեզ), թեմեն (դեզ). կուլտուրական և վայրի բույսերի անուններ՝ քիրազ (կեռաս), դենին (դափնի), թաֆլան (ծվաղ), քյուքնար (եղևնի), ախլաթ (վայրի տանձ), դալյա (խաղողի վազ), ռազաքը (խաղողի տեսակ), բեզելյե (կանաչ սիսեռ), բիբեր (պղպեղ), մայդանոզ (մաղադանոս), լյահանա (կաղամբ)։

Երկրագործական տերմիններին մոտ են կանգնած նաև այն հունաբանությունները, որոնք ցույց են տալիս երկրագործության հետ անմիջականորեն կապված նյութական կուլտուրայի տարրեր, օրինակ՝ թխվածքների անուններ՝ փիդե (թթված խմորից բլիթ), սիմիտ (օղաբլիթ), սոմուն (բոքոն), բնդե (խմոր) պակսիմաթ (չորահաց)։

Նստակյաց կյանքի կացարանին, տների շինարարությանը վերաբերող տերմինները ևս հարուստ են հունարեն փոխառություններով. քուլուբե, քելիֆ (գերանաշեն կամ տախտակաշեն խրճիթների տեսակներ), քիլեր (նկուղ), բոդրում (մառան), ավլու (ցանկապատած բակ), թեմել (քարե հիմք), թոնոս (կամար), քիրեմիտ (կղմինդր), թուղլա (թըրծված աղյուս), մոլոզ (հիմքի խճաքար), պեդավրա (հերձան՝ կաուրի ծածկի համար)։

Հունարենի միջոցով թուրքերենին են անցել բազմաթիվ իտալերեն բառեր, որոնց մեծ մասը նույնպես վերաբերում է ծովագնացության ու ձկնորսության տերմինաբանությանը, օրինակ, դյումեն (նավի ղեկ), օլթա (կարթ), իսկելե (նավամատույց), սինթինե (նավամբար), ֆըրթընա (փոթորիկ), դումանա (խարիսխի շղթան), դյուվերթե (տախտակամած), ինչպես նաև երկրագործության ու նստակյաց կյանքի հետ

կապված բառապաշարին, օրինակ՝ ռեկոլտե (բերքահավաք), փորթաբալ (նարինջ), ֆըրըն (փուռ), մոլա (ջրաղացքար), մանդըրա (ծածկած գոմ), բաղանա (ավազան)։ Այսպես, իտալերեն «մարանդոնե» (հյուսն) բառը հունարենում ստացել է —ոս վերջածանցը (մարանկոս), որի վերջին բաղաձայնը թուրքերենում դարձել է հնչել՝ մարանգոզ։ Բայց իտալերեն շատ բառեր թուրքերենի մեջ են թափանցել անմիջականորեն իտալերենից (ծովային, տեխնիկական, առևտրական և այլ տերմիններ). դրանք թուրքերենի մեջ են մտել գլխավորապես կուլտուրական շփումների միջոցով, անկախ էթնոգենետիկական պրոցեսից, եթե բացառենք թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի գրավումից շատ առաջ այնտեղ բնակություն հաստատած ջենովացիների և վենետիկցիների մի մասի բոլորովին աննշան միախառնումը թուրքերի հետ։

Հունաբանությունների առատությունը թուրքերեն լեզվում, հատկապես այն բառապաշարում, որը ցույց է տալիս նյութական կուլտուրայի կարևորագույն տարրերը (օրինակ, երկրագործական տերմինները ներկայացված են այնպիսի հիմնական հասկացություններով, ինչպիսիք են հերկ, բերքահավաք, սահմանագիծ, խուրձ, խարադեզ, դեզ, գերանդի, եղան, բոքոն, բլիթ) վկայում են թուրքերի կուլտուրայի վրա տեղացի հույն բնակչության ամենաուժեղ ազդեցության մասին։ Նման ազդեցությունը կարելի է բացատրել հենց այն բանով, որ հույները անմիջական և լայն մասշտաբի մասնակցություն են ունեցել թուրքերի ծագման գործում, այլ ոչ թե կուլտուրական հասարակ փոխառությամբ միայն՝ երկարատև շփման պրոցեսում, չնայած վերջինս ևս խաղացել է իր դերը։ Թուրքերի էթնոգենեզի գործում հույների ունեցած մեծ ավանդի մասին է վկայում այն փաստը, որ հունարեն շատ բառեր են թափանցել ամենից ավելի պահպանողական բառապաշարի, այսպես կոչված՝ ինտիմ բնագավառը, ինչպես, օրինակ, մարդու մարմնի մասերի ու օրգանների, նրա կենսագործունեության նյութերի անուններ, տերմիններ, որոնք կապված են երեխայի ծննդյան ու դաստիարակության հետ։ Այսպես, հունաբանություններ են օմուզ (ուս), սալյա (թուք), լյոգուսա (ծննդաբեր կին), նիննի (օրորոցային), կապված բառապաշարին, օրինակ՝ ռեկոլտե (բերքահավաք), փորթաբալ (նարինջ), ֆըրըն (փուռ), մոլա (ջրաղացքար), մանդըրա (ծածկած գոմ), բաղանա (ավազան)։ Այսպես, իտալերեն «մարանդոնե» (հյուսն) բառը հունարենում ստացել է —ոս վերջածանցը (մարանկոս), որի վերջին բաղաձայնը թուրքերենում դարձել է հնչել՝ մարանգոզ։ Բայց իտալերեն շատ բառեր թուրքերենի մեջ են թափանցել անմիջականորեն իտալերենից (ծովային, տեխնիկական, առևտրական և այլ տերմիններ). դրանք թուրքերենի մեջ են մտել գլխավորապես կուլտուրական շփումների միջոցով, անկախ էթնոգենետիկական պրոցեսից, եթե բացառենք թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի գրավումից շատ առաջ այնտեղ բնակություն հաստատած ջենովացիների և վենետիկցիների մի մասի բոլորովին աննշան միախառնումը թուրքերի հետ։

Հունաբանությունների առատությունը թուրքերեն լեզվում, հատկապես այն բառապաշարում, որը ցույց է տալիս նյութական կուլտուրայի կարևորագույն տարրերը (օրինակ, երկրագործական տերմինները ներկայացված են այնպիսի հիմնական հասկացություններով, ինչպիսիք են հերկ, բերքահավաք, սահմանագիծ, խուրձ, խարադեզ, դեզ, գերանդի, եղան, բոքոն, բլիթ) վկայում են թուրքերի կուլտուրայի վրա տեղացի հույն բնակչության ամենաուժեղ ազդեցության մասին։ Նման ազդեցությունը կարելի է բացատրել հենց այն բանով, որ հույները անմիջական և լայն մասշտաբի մասնակցություն են ունեցել թուրքերի ծագման գործում, այլ ոչ թե կուլտուրական հասարակ փոխառությամբ միայն՝ երկարատև շփման պրոցեսում, չնայած վերջինս ևս խաղացել է իր դերը։ Թուրքերի էթնոգենեզի գործում հույների ունեցած մեծ ավանդի մասին է վկայում այն փաստը, որ հունարեն շատ բառեր են թափանցել ամենից ավելի պահպանողական բառապաշարի, այսպես կոչված՝ ինտիմ բնագավառը, ինչպես, օրինակ, մարդու մարմնի մասերի ու օրգանների, նրա կենսագործունեության նյութերի անուններ, տերմիններ, որոնք կապված են երեխայի ծննդյան ու դաստիարակության հետ։ Այսպես, հունաբանություններ են օմուզ (ուս), սալյա (թուք), լյոգուսա (ծննդաբեր կին), նիննի (օրորոցա-

յին)։ Վերջին երկու բառերը ցույց են տալիս «կանացի» ազդեցությունը, որը տեղի է ունեցել ավելի շուտ Թուրքերի հետ ամուսնական կապերի մեջ մտած և կամ նրանց հարևաններն բնակած հելլենուհիների միջոցով։

Թուրքերեն լեզվի, առանձնապես նրա արևելատնատոլիական բարբառների, տեղական փոքրասիական փոխառությունների մեջ կարելի է նշել հայկական և քրդական շերտերը։ Այսպես, Թուրք ազգագրագետ Հ. Սարաչօղլուն հաղորդում է, որ Արևելյան Անատոլիայի մի շարք շրջաններում ծածկած դոմը, փարախը և անասնապահների ագարակը անվանում են «կամ» [486, էջ 266], կալատախտակը՝ «կամ», 6—12 եզ լծված գութանը՝ «կոթան», հարոսը՝ «հերկ» [486, էջ 231, 436, 445, 468]։ Այս բոլոր բառերը հայկական ծագում ունեն [175, մ. II, էջ 464, 466, 498, 648, 649]։ Գուցե, «կոթան» բառը ունի և վրացական ծագում, քանի որ այդ գութանով աշխատող դյուղացիների խումբը կոչված է «մոդգամ» [461, էջ 3148], մի խոսքով, հնչա ստուգաբանվում է վրացերենով. վրացերեն «մոդգամը» բացահայտիչ է։ Կ. Պ. Պատկանովը Թուրքերեն լեզվում հայաբանություններ է համարում այնպիսի բառեր, ինչպես փանջար (ճակնդեղ), Թուփ (Թուփ, ծաղկեփունջ), փեթեկ (մեղրաբջիջներ), շեն (բնակելի, բնակեցված, ուրախ) [191, էջ 45—46]։ Ա. Զ. Բուդագովը Թուրքերեն լեզվում բերում է հայերեն մի բառ ևս՝ առաստակ (առաստաղ) [31, հատ. I, էջ 25]։ Ակնհայտ է, որ փոխառյալ հայերեն բառերը ևս կապված են երկրագործության և նատակյաց կուլտուրայի հետ։ Հետաքրքրական է, որ Արևմտյան Անատոլիայում այս հայաբանություններից մի քանիսին համապատասխանում են հունաբանություններ՝ մանդըրա (դոմ), դյուվլեն (կամ), նադաս (հարոս)։ Թուրք ազգագրագետ Հ. Զ. Քոշայը Թուրքիայի արևելյան վիլայեթներում արձանագրել է կովերի հոտի համար հատուկ անուն՝ նախրը և դրանից ածանցված նախրըջի՝ կովարած բառը [458, III, էջ 43]։ Սրանք ևս հայկական ծագում ունեցող բառեր են։ Անասնապահական տերմինաբանության բնագավառից կատարված այս փոխառությունները բացատրվում են այն բանով, որ քոչվոր Թյուրքերը հիմնականում պահում

էին ոչ թե խոշոր, այլ մանր եղջերավոր անասուններ։ Իսկ խոշոր եղջերավոր անասուններ պահելու գործը հատուկ էր տեղի նստակյաց բնակիչներին, մասնավորապես՝ հայերին։

Հայերեն բառերի մի մասը կարող էր Թուրքերենի մեջ թափանցել քրդերենի միջոցով, որտեղ դրանք բավական շատ են։ Ի դեպ, նշված հայաբանություններից շատերը կան նաև քրդերեն լեզվում՝ կամ (կալատախտակ), փեթեկ (փեթաք, մոմ) [191, էջ 46]։

Թուրքերենի զուտ քրդական փոխառությունների թվին կարելի է դասել անասնապահական այնպիսի տերմիններ, ինչպես Թիֆտիկ (Անզորայի այծ ու նրա բուրդը), լոր (այծի կաթից պատրաստված պանրի տեսակ), քանի որ այծապահությունը ընդհանրապես, և առանձնապես Անզորայի այծեր պահելը, հավանաբար, եղել է քուրդ վաչկատուն անասնապահական անտեսության ամենահին գիծը։ Բայց անասնապահական տերմինները Թուրքերեն լեզվում ճնշող մեծամասնությամբ Թյուրքական են, քանի որ Թյուրքերի հիմնական զբաղմունքը հենց եղել է անասնապահությունը։

Թուրքերեն լեզվի քրդական բառերը մեզ տանում են այդ լեզվի փոխառությունների մի շատ լայն շերտի՝ իրանականին։ Այս շերտը շատ բարդ է. այն կարծես բազմաքանակ է իր կազմավորման ժամանակի ու տեղի տեսակետից։ Նախ, դրանք համեմատաբար նոր են ժամանակի տեսակետից, և փոքրասիական՝ փոխառության տեղով (օրինակ՝ քրդերենից). երկրորդ, ավելի վաղ շրջանի, օրինակ՝ առաջավորասիական (օրինակ, պարսկերեն լեզվից) և, վերջապես, ամենահին՝ միջինասիական, որոնք հասնում են մինչև հին իրանական լեզուները (սակերենը, ալաներենը, սոդդիերենը, խորեզմերենը և այլն)։ Թյուրքական ցեղերի ալիքը, որոնք V—VI դարերում սկսեցին զանգվածային շարժումը կենտրոնական Ասիայից դեպի Միջին և Արևմտյան Ասիա ու Արևելյան Եվրոպա, XI—XIII դարերում աստիճանաբար հասան Թյուրք ժողովուրդների տարածման մինչև ժամանակակից սահմանները՝ Փոքր Ասիա և Բալկաններ։ Այդ ամբողջ երկարատև պատմական ճանապարհին այդ ալիքը իր մեջ է ընդունել իրանական տարրեր (ավելի լայն իմաստով նեթե

խոսենք, բացի մյուս հնդեվրոպական տարրերից) ինչպես լեզվի, այնպես էլ կուլտուրայի տեսակետից:

Հոնական դարաշրջանի վերջին (III—IV դարեր) թյուրքերի կողմից Արևելյան Թուրքեստանի և Արևմտյան Չինաստանի իրանալեզու (կամ ավելի լայնորեն՝ հնդեվրոպական) ցեղերի ասիմիլյացման մասին կարելի է խոսել որպես պատմական փաստի մասին: Իրենց հերթին, թյուրքերի լեզվի մեջ թափանցում էին նաև իրանական տարրեր: Նշված ժամանակաշրջանում այդ շրջանների թյուրքերի և իրանալեզու բնակչության շփումների և ցեղային միախառնման մասին են վկայում իրանական շատ հին փոխառությունները թյուրքական լեզուներում. բյորի / բյորյու (դայլ), շադ, յարգու (տոհմա-ցեղային առաջնորդների տիտղոսներ), աշինա (թյուրքական, գուցե և թյուրքացած իրանական ցեղի անուն) և այլ բառեր [124, էջ 11—13. 123, էջ 278—181. 7, էջ 263]:

Հին թյուրքական դարաշրջանում (V—X դարեր) այդ ասիմիլյացումը շարունակվում էր: Այն առանձնապես ինտենսիվ դարձավ VIII դարի սկզբից, երբ արաբները նվաճեցին թյուրքական ու իրանական խառը բնակչություն ունեցող Հարավային Թուրքեստանը: Տեղական բնակչության իսլամացման կապակցությամբ լայն փոխներգործություն տեղի ունեցավ մի կողմից թյուրքական լեզուների, և, մյուս կողմից՝ իրանական (այդ թվում և տաջիկերենի և պարսկերենի) լեզուների միջև: Այդ ժամանակաշրջանում թյուրքական լեզուները ենթարկվեցին իրանական լեզուների բառապաշարի, հընչյունական ու քերականական կառուցվածքի ամենաուժեղ ազդեցությանը [26, էջ 41—60]: Այդ ժամանակ էլ թյուրքական (ինչպես նաև իրանական) լեզուների մեջ սկսեցին մասսայաբար թափանցել արաբական բառերը, որի մասին արդեն խոսվեց վերևում:

Վ. Վ. Բարթոլդը գտնում է, որ VIII դարում Միջին Ասիայում թյուրքական լեզուների մեջ մտել են իրանական այնպիսի բառեր, ինչպես ուստադ (վարպետ), քյոշք (պալատ), բաղ (այգի), բոստան (բանջարանոց), սարայ (պալատ), խանե (տուն), քենտ (գյուղ) [25, էջ 208, 211, 224]:

Թյուրքական ցեղերի լեզուների բառարանը, որ XI դարի վերջին կազմել է Մահմուդ Կաշգարին, պարունակում է իրանական շատ բառեր. արմուդ (տանձ), արմաղան (նվեր), քեշյուր (տեսպին, գաղար), տամ (պատ), քենդ (քաղաք), թենե (հատիկ), աքշամ (երեկո), բամբուկ (բամբակ), սիրքե (քացախ) և այլն [386, հատ. I, էջ 95, 140, 343, 431, հատ. III, էջ 44, 157. 22, էջ 71, 108, 137]: Է. Վ. Սևորթյանը գտնում է, որ «աքշամ» բառը օղուզները փոխ էին առել սոգդիերեն լեզվից [209, էջ 74]: Այս բոլոր բառերը կան նաև ժամանակակից թուրքերենում (ինչպես նաև Վ. Վ. Բարթոլդի նշած բառերը). արմուտ (տանձ), արմաղան (նվեր), քեշյուր (գազար—արևելաանատոլիական բարբառներ), քենտ (փոքրիկ քաղաք), թանե (հատիկ), դամ (կտուր, գետնախուղ), աքշամ (երեկո), փամուկ (բամբակ), սիրքե (քացախ): Բայց դրանք, իհարկե, թուրքերեն լեզվի մեջ են մտել որպես թյուրքների կողմից վաղուց յուրացված բառեր, որոնք թյուրքական ցեղերի լեզուների մեջ հայտնվել են դեռ մինչև նրանց Փոքր Ասիա գալը:

Իրանական բառապաշարը թուրքերենում վերաբերում է տնտեսության և կուլտուրայի շատ բնագավառների: Բայց դրա գերակշիռ մասը այնուամենայնիվ կապված է երկրագործության և նստակյաց կենցաղի հետ: Այսպես, կարելի է նշել հետևյալ բույսերի անունները. չավդար (տարեկան), պիրինչ (բրինձ), նոխատ (սիսեռ), մերջիմեկ (ոսպ), շալդամ (շաղգամ), խիյար (վարունգ), կարպուզ (ձմերուկ), շեֆթալի (դեղձ), նաե (նուռ), նույնիսկ այնպիսի հավաքական բառեր, ինչպես սերզե (բանջարեղեն), մեյվա (մրգեր), ագրոտեխնիկական տերմիններ՝ բոստան (բանջարանոց), բախչե (այգի), բաղ (խաղողի այգի), հարման (կալսում), ռենչպեր (մաճկալ), սարպոն (փոս հացահատիկ պահելու համար), երկրագործական կուլտուրայի հետ կապված ճաշատեսակների ու մթերքների անուններ՝ շեպիտ (անալի բլիթ), երիշտե (արիշտա), ռեչել (մուրաբա), նիշաստե (օսլա), մայա (խմորիչ), նան (հաց), չորբա (ապուր), փիլավ (փլավ), խոշաֆ (կոմպոտ), նստակյաց բնակարանների կառուցման հետ կապված տերմիններ՝ թախտա (տախտակ),

ջամ (ապակի), դուվար (պատ), փենջերե (լուսամուտ), բաջա (վառարանի ծխնելույզ), փերվազ (քիվ), մերդիվեն (ասպիճան, սանդուղք)։ Այս բառերի մեծ մասի ստուգաբանությունը տրված է Ա. Զ. Բուդագովի, Վ. Վ. Ռադլովի և Դ. Ա. Մագազանիկի բառարաններում որպես պարսկական բառերի։ Բայց դա ճիշտ չէ։ Այս բառերը պատկանում են ոչ միայն պարսկերենին, այլ իրանական լեզուների լայն շրջանի։

Բերված բառերից շատերը կան նաև միջինասիական թյուրքական լեզուներում (թուրքմեներենում, ույղուկերենում, կիրղիզերենում, ղազախերենում), դրանց մի մասը արձանագրված են նաև միջնադարյան թյուրքական լեզուներում (չաղաթայերենում, կումաներենում)։ Սա մի անգամ ևս ընդգծում է, որ դրանք թյուրքերը փոխառել էին Միջին Ասիայում։ Ճիշտ է, այս բառերը ուրիշ լեզուներում ունեն հնչյունական փոքր-ինչ այլ դունավորում և ոչ միշտ նույն նշանակությունները, ինչ ժամանակակից թուրքերենում, օրինակ, թուրքմ.— տամ (տուն), ույղ.— շուրպա (ապուր), համեմատաբար թուրքերեն դամ (կտուր, գետնախուղ), չորբա (ապուր)։ Բայց այս երևույթը արդեն բացատրվում է նշված լեզուների ներքին զարգացման առանձնահատկություններով։

Բառապաշարի ազդեցությունից բացի, հիմք լեզուները լեզվական ասիմիլյացման պրոցեսում ուժեղ ազդեցություն են ունենում նաև ասիմիլյացնող լեզվի հնչյունական կառուցվածքի վրա։ Երբեմն այդ ազդեցությունը արմատապես փոխում է հաղթանակած լեզվի հնչյունական ամբողջ համակարգը։ Այսպես, ույղուկերեն լեզուն տաջիկերենի ազդեցության տակ (իսկ տաջիկները հսկայական դեր են կատարել ույղուկների էթնոգենեզի գործում) զրկվել է 0 ձայնավորը համատարած օգտագործող լեզու և գրեթե ամբողջովին կորցրել է ձայնավորների ներդաշնակությունը (բառի սինհարմոնիզմը), որը հատուկ է թյուրքական լեզուներին։ Իսկ ազգրբեջաներենում, թուրքերենում և գագաուզերենում երևան եկան նոր բաղաձայն հնչյուններ՝ վ, ֆ, որոնք բնորոշ չեն թյուրքական լեզուների համար։ Վերջին երևույթը թուրքերեն լեզվի համար, բացի ընդհանուր իրանալեզու ազդեցությունից, բացատրվում է նաև քրդերենի ազդեցությամբ։ Օրինակ, քրդերենում հաճախ են պատահում բ/պ>վ/ֆ հնչյունափոխությունները. արաբ. շարաբ (գինի)>քրդ. շերավ, պարսկ. խոշաբ (կոմպոտ)>քրդ. խոշաֆ։ Այս օրինաչափությունը, հավանաբար, քրդերենի ազդեցությամբ, յուրացրել են թուրքերենի մի քանի բարբառները։ Այսպես, կենտրոնական և Արևելյան Անատոլիայի բարբառներում «օթոմոբիլ» բառը (որը ավտոմոբիլ բառի ֆրանսերեն փոխառություն է) դարձել է «թոմոֆիլ»։

Իրանական լեզուները մեծ ազդեցություն են գործել նաև թուրքերեն լեզվի քերականական կառուցվածքի (բառակազմության, ձևաբանության, շարահյուսության) վրա. անչափ մեծ է իրանական նախդիրների, նախածանցների և վերջածանցների, շաղկապների թիվը. «օսմաներեն» լեզվում լայնորեն օգտագործվում էր իրանական քերականական մի ձև, այսպես կոչված պարսկական իզաֆեթը։ Պարսկական իզաֆեթը ժամանակակից թուրքերենում պահպանվել է կայուն բառակապակցություններում. քյուրեիարզ (երկրադունդ), արզուհալ (դիմում), իլանը աշք (սիրո բացատրություն) և այլն։ Սակայն պարսկական, ինչպես և արաբական փոխառությունների հիմնական մասսան կրում էր «գերքայինի» բնույթ՝ լեզվի մեջ է մտել պարսկական դրակատնության, լուսավորության, ադմինիստրացիայի և այլնի միջոցով։

XX դարում, հատկապես քեմալական հեղափոխությունից հետո, թուրքերեն լեզվի մեջ անչափ շատ բառեր են մտել արևմտաեվրոպական լեզուներից։ Դրանք հիմնականում միջազգային բառեր են՝ դիտական, տեխնիկական և կուլտուրական տերմիններ։ Դրանց մեջ գերակշռում են ֆրանսիական փոխառությունները. կյուլտյուր (կուլտուրա), ռադյո (ռադիո), տելեվիզյոն (հեռուստատեսություն), թիյատրո (թատրոն), սինեմա (կինո), օթոմոբիլ (ավտոմոբիլ), տրամվայ (տրամվայ) և այլն։ Եվրոպական դպրոց մտցնելու կապակցությամբ լեզվի մեջ թափանցեցին և դրանց անունները՝ պանթալոն (տաբատ), ջակետ (պիջակ), ժիլե (ժիլետ), ժյուպ (դեյրա), պալտո (վերարկու), կասկետ (կեպկա),

կրավատ (փողկապ), տրենչկոտ (թիկնոց) և այլն։ Թուրքերեն լեզվում կան նաև ոչ քիչ թվով ռուսերեն բառեր՝ շապկա (պլխարկ), սեմավեր (ինքնաեռ), վեդրա (դույլ), կոսա (գերանդի և հյուսած մազեր) [457, էջ 80. 458, I, էջ 42], տելյատին (կաշվի տեսակ), կուրուշ (մանր դրամ, գրոշ) և այլն։ Դրանց մի մասը թափանցել է դեռ XVIII—XIX դարերում՝ բալկանյան (Թուրքերենի բառակազմի բուն բալկանյան, մասնավորապես՝ հարավսլավոնական շերտի մասին մենք արդեն խոսեցինք վերևում) և կովկասյան ժողովուրդների միջոցով։ Բոլորովին վերջին շրջանի փոխառություններ են այնպիսի բառեր, ինչպես բոլշևիկ (բոլշևիկ), կոլխոզ (կոլտնտեսություն), սպուտնիկ (արբանյակ) և այլն։

Նշանակալի շերտ են կազմում նորաբանությունները։ Դրանք առանձնապես շատ են պաշտոնական՝ պետական, վարչական և ռազմական տերմինաբանության մեջ։ Իսկ խոսակցական և նույնիսկ գրական լեզվի մեջ դրանք դանդաղ են թափանցում. հին բառերը ավելի սովորական են հասարակ ժողովրդի համար. բացի դրանից, նորաբանությունները հաճախ անհասկանալի են նրան, ինչպես և նախկին արաբա-պարսկական բառերը դրբային «օսմաններեն լեզվից»։ Օրինակ, «օքուլ» (դպրոց) նորաբանությունը, որը կազմվել է Թուրքերեն «օքումաք» (սովորել, կարդալ) բայից՝ ֆրանսերեն «էկոլ» (դպրոց) բառի ձևով, երկար ժամանակ անհասկանալի էր գյուղացիների համար, որոնք այդ «օքուլը» համարում էին առանձին տեսակի դպրոց և այն անվանում էին «օքուլ մեքթեբի», այսինքն՝ օգտագործում էին արաբերեն «մեկթեբ» (դպրոց) բառը, որը վաղուց գործածության մեջ է մտել Թուրքերենում, այդ նորաբանության հետ՝ որպես նրա որոշիչ։

Գրական լեզվում հին բառապաշարը պահպանվում է որպես հոմանիշների ռեզերվ։ Այսպես, «ուշաք» (ինքնաթիռ) նորաբանության կողքին պահպանվել է նաև արաբերեն նախկին «թայյարե» բառը նույն նշանակությամբ, «պեվրիմ» (հեղափախություն) նորաբանությունը գործածվում է «ինքըլապ» (հեղափոխություն) բառի հետ միասին և այլն։ Ինչոր չափով այդ բանը բացատրվում է նաև լավ ոճի պահանջներով։ Օրինակ, «Գրողը հոդված գրեց» նախադասությունը, որը կազմված է նորաբանություններից և Թուրքերեն «յազմաք» (գրել), բայից, ոճական տեսակետից շատ անհաջող է՝ «Յազար յազըչը յազդը», այն ժամանակ, երբ արաբերեն բառերի օգտագործումը անմիջապես շոկում է ոճը՝ «էդիպ մաքալեչի յազդը»։

Նյութական և հոգևոր կուլտուրայի մի քանի առանձնահատկությունները

Ժամանակակից Թուրքերի նյութական և հոգևոր կուլտուրայի մեջ, նրանց առօրյա կենցաղում և զանազան ծիսակատարություններում ու տոնակատարություններում միախառնվում և միահյուսվում են Թյուրքական քոչվոր ցեղերի ավանդույթները, իսլամի սովորույթները, տեղական փոքրասիական փոխառություններն ու եվրոպական նորամուծությունները [93, էջ 95—118. 338]։

Թուրքական ազգային կուլտուրան վերլուծելիս հարկավոր է նաև չմոռանալ Վ. Ի. Լենինի հայտնի դրույթները կապիտալիստական հասարակության պայմաններում յուրաքանչյուր ազգային կուլտուրայի մեջ երկու ազգային կուլտուրաների մասին [6, էջ 129], կուլտուրայի դասակարգայնության մասին, այն մասին, որ «յուրաքանչյուր ազգային կուլտուրայում կան, թեկուզ չզարգացած, դեմոկրատական և սոցիալիստական կուլտուրաների տարրեր, որովհետև յուրաքանչյուր ազգի մեջ կա աշխատավոր և շահագործվող մասսա, որ կյանքի պայմաններն անխուսափելիորեն ծնունդ են տալիս դեմոկրատական և սոցիալիստական գաղափարախոսության» [6, էջ 120—121]։

Ժամանակակից Թուրքական հասարակության կառուցվածքը շատ բարդ է. արդյունաբերական և գյուղական պրոլետարիատ, իր սոցիալական դրությամբ շատ տարաբնույթ գյուղացիություն, քաղաքի և գյուղի խոշոր ու մանր բուրժուազիա, վերջինիս մեջ զատվում են նաև «միջին խավերը», վերջապես, ինտելիգենցիա և սոցիալական այլ խմբեր։ Յուրաքանչյուր դասակարգին, յուրաքանչյուր մեծ կամ փոքր սո-

ցիալական խմբին հատուկ են իրենց տարբերիչ հատկանիշները, նաև կուլտուրայի մեջ։ Այդ բանը հատկապես վերաբերում է գաղափարախոսությանը և ընդհանրապես հոգևոր կուլտուրային։ Բայց այդ տարբերությունները դրսևորվում են նաև նյութական կուլտուրայի մեջ։ Այդ պատճառով, իհարկե, չի կարելի խոսել Թուրքերի ինչ-որ «միասնական», «վերդասակարգային» կամ «անդասակարգ» ազգային կուլտուրայի մասին։

Եվ իրոք, Թուրք ազգի կուլտուրայի մեջ կարելի է հստակորեն տարբերել առնվազն երկու դասակարգային կուլտուրաներ, որոնք անտագոնիստական հակասություններ ունեն միմյանց միջև. Թուրք պրոլետարիատի կուլտուրան և Թուրք բուրժուազիայի կուլտուրան։ Պրոլետարիատի կուլտուրան տարբերվում է դեմոկրատական և սոցիալիստական կուլտուրայի շատ տարրերով, տենդենց ունի դեպի ինտերնացիոնալիզմ, նրա մեջ առավել լրիվ արտացոլում է զրտնում ամենաչն առաջավորը և առաջադիմականը, որը Թափանցում է Թուրքական հասարակության մեջ. միևնույն ժամանակ պրոլետարական կուլտուրան հոգացողությամբ պահպանում է առավել արժեքավորը Թուրքական ավանդական կուլտուրայից՝ ժողովրդական սովորույթներն ու ավանդույթները, ֆոլկլորը և այլն։ Թուրք բուրժուազիայի կուլտուրան, ընդհակառակը, հեշտությամբ իր մեջ ներծծում է ամենաչն ռեակցիոնը, հակված է դեպի նացիոնալ-շովինիզմը, և միևնույն ժամանակ հաճախ մերժում է ազգային ավանդույթները, դրանք փոխարինելով կոսմոպոլիտիկական նորամուծություններով, որոնք Թուրք բուրժուազիայի ներկայացուցիչները սարկաբար վերցնում են Արևմուտքի բուրժուական գաղափարախոսության և կուլտուրայի ազդեցության տակ։ Թուրք գյուղացիության կուլտուրան աչքի է ընկնում պահպանողականությամբ, ամուր կառչում է ամեն հնին, ինչպիսին էլ այն լինի, որպես կանոն, դիմադրում է ամեն մի նորամուծությանը։ Թուրքական հասարակության մեջ, Թերևս, գյուղացիության շրջանում ամենից ավելի շատ են տարածված զանազան սնոտիապաշտությունները, նախապաշարմունքները և անցյալի վերապրուկները, որը

բխում է գյուղացիական հիմնական մասսայի դրագիտության ծայրահեղ ցածր մակարդակից. մինչև հիմա էլ, ըստ որում դրեթե անխտիր բոլոր Թուրք գյուղացիները հավատարմորեն նվիրված են իսլամական կրոնին, խստորեն պահպանում են մուսուլմանական սովորույթներն ու ծեսերը և այլն։ Վերջապես, Թուրքիայում շատ նկատելի է ընդհանրապես քաղաքի և գյուղի կուլտուրայի միջև եղած սահմանը։

Թուրքիայի քաղաքային բնակչությունը վերջին տարիներին գնալով ավելի է «եվրոպականանում»։ Հագուստը, առանձնապես տղամարդկանց հագուստը, վաղուց դարձել է միանգամայն «եվրոպական» կամ ավելի լավ է ասել՝ ժամանակակից. սովորական պիջակներ, տաբատներ, պլաշչներ, եվրոպական գլխարկներ, կեպկաններ, բերետներ, վերնաշապիկներ ու կոշիկներ տղամարդկանց հագին, վերարկուներ, շորեր, ժակետներ, դեյրաններ, բլուզներ, կոֆտաներ, նույը կոշիկներ կանանց հագին։ Ազգային կոլորիտը արտահայտվում է, գուցե, միայն այն բանով, որ կանանց շրջանում շատ է տարածված շալերը, որոնք, ճիշտ է, տարածված են ոչ միայն Թուրքիայում, այլև ամբողջ Արևելքում, փակ տղամարդկանց մոտ այն բանով, որ կոշիկների կրընկամասը ևս է ծալված, որպեսզի հեշտ լինի կոշիկը հանել առանց մանելիս, որտեղ նրանք մանն են դալիս բորիկ կամ դուլպաներով։

Սննդի մեջ ևս Թափանցում է եվրոպական ազդեցությունը, սակայն շատ կերակրատեսակներ պահպանում են ազգային առանձնահատկություններն ու անունները՝ փլավներ (փիլյավ), խորովածներ (շիշ քեբաբը), տարբեր տեսակի ապուրներ (չորբա) և այլն։ Բավական խստորեն պահպանվում է իսլամական արգելքը խոզի մսի օգտագործման նկատմամբ։ Բայց սպիրտային խմիչքների նկատմամբ խստմի արգելքը արդեն դրեթե չի պահպանվում։

Քաղաքների բնակարանները ևս գնալով ավելի են ձեռք բերում ժամանակակից ճարտարապետության «ուրբանիստական» ոճը։ Ճիշտ է, Թուրք ճարտարապետներն ունեն սեփական ստեղծագործական ձեռագիրը. իրենց աշխատանք-

ներում նրանք համաշխարհային ճարտարապետության նվաճումները զուգորդում են ազգային ու պատմական ավանդույթների հետ, հաճախ հրապուրվում են սելջուկյան ճարտարապետության ձևերի խաստությամբ: Այդ ոճով կառուցված նոր շենքերը ունեն համեստ ու հասարակ տեսք՝ ցեմենտի փշրանքով սվաղված հարթ պատեր, լայն լուսամուտներ և մեծ պատշգամբներ, որոնք հարմար են հարավային կլիմայի համար, ավանդական հարթ կտուրներ: Լայնորեն տարածված են պատշգամբներն ու էրկերները: Վարպետորեն օգտագործվում է դեկորատիվ կերամիկան: Հարուստների առանձնատները զարդարված են հարթ սյուներով՝ առանց հիմքերի ու խոյակների, ավանդական կապույտ, կանաչ, երկնագույն ջնարակված խճանկարներով:

Բնակարանի ներքին մասը հաճախ տարբերվում է ազգային յուրատեսակությամբ. առանձնապես հին սովորություններին հավատարիմ մնացած շատ բնակիչներ պահպանում են բնակարանի բաժանումը սելյամլըքի (տղամարդկանց կեսի) և հարեմի (կանանց կեսի), որը տարածված է մուսուլմանական շատ ժողովուրդների մոտ: Իհարկե, քաղաքի չքավոր բնակիչները այդպիսի բաժանում չունեն այն պարզ պատճառով միայն, որ նրանց բնակարանը բաղկացած է հաճախ մեկսենյականոց երեքից (գեջեկոնդու) կամ բարաքի սենյակից: Բնակարանները կահավորանք քիչ ունեն, իսկ գավառական քաղաքներում այն գրեթե բոլորովին չկա: Քոչվորների ավանդույթներով, կահույքին փոխարինում են գորգերը, թաղիքները, խսիրը, ներքնակները, բարձերը, անդուկները և այլն:

Քաղաքներում ավելի քիչ են պահպանվում մուսուլմանական սովորությունները: Հաղվագյուտ մարդիկ են պահում ռամազանի ամսական պասը կամ կանոնավոր կերպով ասում օրվա պարտադիր հինգ աղոթքները և այլն: Բայց մուսուլմանական այնպիսի մեծ տոներ, ինչպես շեքեր-բայրամն և կուրբան-բայրամն, նշում են գրեթե բոլոր բնակիչները:

Գյուղում, հատկապես գյուղացիների շրջանում, ավելի լավ են պահպանվել հին սովորությունները, նորամուծությունները այստեղ ավելի դանդաղ էին տարածվում: Ուստի էթնոգենետիկական վերլուծության համար ավելի շատ նյութ են տալիս հենց թուրք գյուղացիության կուլտուրան ու կենցաղը, որոնց առանձին յուրահատկությունների վրա հարկավոր է ավելի մանրամասն կանգ առնել:

Ինչպես արդեն ցույց տվեց տերմինաբանական նյութի (օրինակ, երկրագործական բառապաշարի) վերլուծությունը, թուրք գյուղացիության կուլտուրան իրենից ներկայացնում է մի բարդ համադրություն, որը առաջացել է սահմանակից (Արևմտյան Ասիայի, Կովկասի և Բալկանների) երկրների ժողովուրդների հետ վաղուց ի վեր սերտ կապեր ունեցած Փոքր Ասիայի տեղացի ժողովուրդների և միջին դարերում Թուրքիայի տերիտորիան գաղթած թյուրքական ցեղերի բազմադարյան կուլտուրական փոխազդեցության և փոխներգործության հետևանքով: Էթնիկական միախառնման և կուլտուրական շփումների պրոցեսում թյուրքական ցեղերը, որոնք Փոքր Ասիայում հայտնվելու ժամանակ ունեին քոչվորական անասնապահական տնտեսություն և դրան համապատասխանող նյութական կուլտուրա, նստակյաց երկրագործական տնտեսության անցնելու հետ զուգընթաց յուրացրին Անատոլիայի երկրագործական հին կուլտուրայի գրեթե բոլոր տարրերը: Միևնույն ժամանակ, անասնապահությանը վերաբերող շատ բաներ էլ Փոքր Ասիա բերեցին թյուրքական ցեղերը: Ուրիշ խոսքով ասած, ժամանակակից թուրք ժողովրդի կուլտուրան ու կենցաղը փոքրասիական ժողովուրդների հին նստակյաց երկրագործական քաղաքակրթության և թյուրքերի անասնապահական կուլտուրայի միաձուլման արդյունք է: Այդ յուրահատկությունը կարելի է դիտել հիմնական զբաղմունքների մեջ (երկրագործություն, անասնապահություն, տնայնագործություն և արհեստներ), նյութական կուլտուրայի, ծիսական կարգի, ֆոլկլորի, հավատալիքների մեջ և այլն: Թուրքերի, գերազանցապես հոգևոր կուլտուրայի վրա հսկայական ազդեցություն ունեցավ նաև ազանդի իսլամը, որը մինչև այսօր էլ գավանում է թուրքերի՝ գյուղացիների ու քաղաքացիների ճնշող մեծամասնությունը:

Ժամանակակից Թուրքիայում տարածված գյուղական բնակարանների տիպերի մեջ կարելի է տարբերել տեղական մի քանի տիպեր, որ թուրքերը վերցրել են մինչթյուրքական նստակյաց բնակիչներից: Երկրի արևմտյան և հարավային շրջաններում տարածված է, օրինակ, խանայը՝ առանձնահատուկ տիպի երկհարկանի տունը: Դրա առաջին հարկը զբաղեցնում են անասնական օժանդակ շենքերը անասունների, կերի ու մթերքների պաշարների համար, ինչպես նաև փոխադրամիջոցների ու գյուղատնտեսական գործիքների համար: Երկրորդ հարկում են բնակելի սենյակները և ամառային ծածկված պատշգամբը արտաքին սանդուղքով [333, էջ 264—270]: Բնակարանի այս տիպը ընդհանրապես բնորոշ է Միջերկրական ծովի արևելյան ծովափի երկրների համար: «Խանայ» անունը Ա. Տիտցեն բխեցնում է հունարեն «անոյի» (վերնահարկ) բառից [346, էջ 211]:

Անատոլիայի արևելքում տարածված են սառրգնանյա կիսագնդաձև գետնախուղերը (դամ): Սրանք ևս տեղական ծագում ունեցող կացարաններ են, որ նկարագրել է դեռ մեր թվակ. առաջ 401 թվականին Փոքր Ասիայի արևելյան շրջաններով հույն ռազմիկների ջոկատի կատարած անցման մասնակից Քսենոֆոնը: Նրա խոսքերով, լեռնային Հայաստանի տները «սառրգնանյա էին՝ ջրհորի նման ներքևում լայն վերևի անցքով» [129, ուտանավոր 25]: Քսենոֆոնի այս հաղորդման մասին նշում է նաև Ո. Լ. Վիլչևսկին [35, էջ 64]: Սրա ոչ միայն Փոքր Ասիայի, ապա ամբողջ Արևմտյան Ասիայի կացարանների տեղական տիպին կարելի է դասել նաև յուրյուքների կարա-չադրը վրանը, որ նրանք վերցրել են ավելի շուտ քրդերից: Կացարանի թյուրքական տիպեր են ալաչիքը՝ յուրյուքների թաղիքե վրանը և դևրիմ էվին՝ թուրքմենների թաղիքե յուրտը:

Վ. Ռուբենը նշել է քրիստոնեական պաշտամունքային կառուցվածքների ուժեղ ազդեցությունը գյուղական մզկիթների ճարտարապետության վրա: Գյուղացիների խոսքերով, մզկիթները կառուցում էին քրիստոնյա ճարտարապետները, որոնց գյուղերի բնակիչները այդ նպատակի համար հրավիրում էին մոտակա քաղաքներից [485, էջ 386]:

Երկրագործական գործիքները (գութանների, տափաններ, կամերի, մանգաղների տեսակները և այլն) ունեն տեղական՝ փոքրասիական և բալկանյան ծագում [133. 130]: Անատոլիական տիպի սայլը (կաղնը) նման է խեթերի համանման սայլին, այսինքն՝ նույնպես ունի տեղական ծագում:

Փոքր Ասիայի քրիստոնյաների շրջանում տարածված տեղական երկրագործական օրացույցից երկրագործ թուրքերը վերցրել են երկու հիմնական տարեթիվ, որոնք տարին բաժանում են գարնանային և ձմեռային ժամանակաշրջանների՝ խըզըր Իլյաս կամ խոսակցական լեզվով՝ խըդրելլեզ (մայիսի 6-ը, հին տոմարով ապրիլի 23-ը, սուրբ Գևորգի օրը ամռան սկիզբն է) և քասըմ (նոյեմբերի 8-ը, հին տոմարով հոկտեմբերի 26-ը, սուրբ Դիմիտրիոսի օրը ձմռան սկիզբն է): Այդ բանը տեղի ունեցավ այն պատճառով, որ մուսուլմանական օրացույցը, որի ամիսները տարբեր տարիների զուգադիպում են տարվա տարբեր եղանակների հետ, չէր կարող ծառայել որպես գյուղատնտեսական օրացույցի հիմք: Քոչվորների օրացույցը ևս պիտանի չէր այդ նպատակի համար, քանի որ այդ օրացույցը տարին բաժանում էր իրենց քոչերի սեզոնի համապատասխան: Թուրքական երկրագործական օրացույցի մյուս ամիսները ևս նրանք վերցրել էին տեղական օրացույցներից. աղուստոս (օգոստոսի հունարեն անունը), մայըս (մայիսի հայերեն անունը) և այլն: Դեռ ավելի շուտ, Միջին Ասիայում և Իրանում, թյուրքերը վերցրել էին գարնան փրանակա անունը՝ բահար: Փոքր Ասիայում այդ բառը սկսեց ցույց տալ անձրևային երկու եղանակ՝ իլքբահար (առաջին գարուն, այսինքն՝ բուն գարունը) և սոնբահար (վերջին գարուն, այսինքն՝ աշուն): Որոշ գյուղերում թուրքերը նշում են նաև գարնան նովրուզ տոնը (մարտի 21—22-ին), որը բնորոշ է իրանալեզու ժողովուրդների համար [397, էջ 61]:

Թուրքերը վերցրել են նաև հունական շատ սովորույթների ծիսակատարման կողմերը: Այդպիսին է իմիջի սովորույթը (հունարեն իմեդիա, այսինքն՝ կես բառից), որը գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ գյուղացի-

ների փոխօգնության մի առանձնահատուկ ձև է, որը ուղեկցվում է երկրագործական հին պաշտամունքի շատ ծիսակատարությունների հետ [345, էջ 375]: Փոքրասիական տեղացի բնակչությունից նրանք վերցրել են նաև գարնան երկրագործական վաղեմի տոնը, որով սկսվում է խըդրելլեզ սեզոնը: Այս տոնը նույնպես կրում է «խըդրելլեզ» անունը [135. 432. 126]: Արևմտյան Թուրքիայի մի շարք շրջաններում թուրք գյուղացիների մեջ տարածված է մի մոգական ծես, որը կապված է լոդոս (հարավ-արևմտյան քամի) և փոյրազ (հյուսիսային քամի) աշխարհագրական հունաբանությունների հետ. գարնանը գյուղացիները կազմակերպում են տոնական ներկայացում՝ լոդոսի աղջկան ամուսնացնում են փոյրազի որդու հետ: Նրանք այդ բանն անում են, որպեսզի «մեղմացնեն դաժան հյուսիսային քամին և ջերմացնեն եղանակը»: Այս ծեսը նկարագրել է թուրք ազգագրագետ Հ. Թարխանը [497]: Զեյբեկները (Արևմտյան Անատոլիայի թուրքալեզու մի ցեղ) դափնին պաշտում են որպես սրբազան ծառ, բայց լավ հայտնի է, որ դափնին առանձնահատուկ տեղ էր գրավում հույների պաշտամունքային ծիսակատարություններում: Ի դեպ, զեյբեկները այդ ծառը «նեխթել» էլ անվանում են, որը հունարեն «դաֆնելայո» (դափնի) բառի աղավաղված ձևն է [346, էջ 215]: Թուրք ազգագրագետ Ա. Ս. Յունվերը գրում է, որ շատ «սրբատեղեր» նույնն են ինչպես մուսուլման թուրքերի, այնպես էլ ուղղափառ հույների համար, և որ թե՛ առաջինները և թե՛ երկրորդները ուխտագնացություն են կատարում այդ վայրերը միաժամանակ [514]: Այս բանը դեռ 1829 թվականին նշել է ֆրանսիացի ճանապարհորդ Վ. Ֆոնտանիեն: Նա պատմում է թուրքերի, հույների և հայերի ընդհանուր «սրբատեղեր»-ի մասին: Օրինակ, երեխային փաղաքշող կնոջ արձանը դրված է եղել թուրքերի կողմից մզկիթի վերածված եկեղեցիներից մեկում և որպես «սուրբ» պաշտվում էր ինչպես մուսուլմանների, այնպես էլ քրիստոնյաների կողմից (Ամասյայի շրջանում) [288, էջ 235]:

Թուրքերի մոտ ծնպատման ծիսակատարության մեջ մեծ դեր է կատարում կնքահայրության՝ քիրվելիքի սովորույթը:

Կնքահայրը այն տղամարդն է, որը ներկա է լինում ծնպատման ժամանակ և երեխայի վրա մի շարք մոգական ծեսեր է կատարում. նա պարտավոր է ամբողջ կյանքում խնամակալել երեխային, նույնիսկ երբ նա լրիվ չափահաս է դառնում: Արևելյան Թուրքիայի մի քանի շրջաններում կնքահայրությունը ազգակցությունից ավելի մոտ է համարվում [476, էջ 25]: Կնքահոր պարտականությունները իր խնամարկյալի նկատմամբ հիշեցնում են քրիստոնյաների կնքահոր պարտականությունները: Այս սովորույթը չկա Միջին Ասիայի մուսուլմանների մոտ: Դա չկա նաև յուրյուքների մոտ, որոնք քիչ են խառնվել նստակյաց բնակչության հետ [519, մ. II, էջ 68]: Այս ամենը խոսում է այն մասին, որ թուրքերը այդ սովորույթը կարող են վերցրած լինել Փոքր Ասիայի քրիստոնյա ժողովուրդներից: Ինքը՝ «քիրվե» կամ «քիվրե» բառը (կնքահայր) [31, հատ. II, էջ 125. 519, մ. II, էջ 68. 476. էջ 25] հնչյունական տեսակետից մոտ է հայերեն «քավոր» (հարսանքահայր) կամ «կնքավոր» (կնքահայր) բառին:

Երբեմն շատ հետաքրքրական են թուրքերի հոգևոր կուլտուրայում տեղ գտած տեղական փոխառությունները: Օրինակ, Ստամբուլում դժբախտ, «ծանր» օր է համարվում երեքշաբթին, շաբաթվա այն օրը, երբ օսմանյան թուրքերը գրավեցին Կոստանդնուպոլիսը, այսինքն՝ բյուզանդացի հույների համար իրոք դժբախտ օրը: Բայց հիմա այդ հավատալիքը անցել է նաև իրենց՝ թուրքերին [514]:

Թուրքերի մոտ վաղուց ընդունված է գերեզմանների շուրջը նոճիներ տնկել: Իսկ նոճին հին հույների մոտ եղել է վշտի խորհրդանշան. մեռելատան դռներին հույները կախում էին նոճու ճյուղեր, դրանց փշատերևներով զարդարում թաղման խարույկները, նոճիներ տնկում գերեզմանների կողքին: Այսպիսով, այստեղ ժառանգորդություն կա Փոքր Ասիայի մինչթուրքական բնակչության և ժամանակակից թուրքերի միջև: Իր արմատներով խոր հնություն է գնում մինչև մեր օրերը պահպանված թուրքական այն սովորությունը, երբ լվանում են աշխատանքից կամ ուղևորությունից տուն վերադարձող ընտանիքի ավագի և հարգելի մարդու ոտները:

Նման սովորություն տարածված է եղել նաև հին հույների մոտ. աղախին էվկլինեյան լվանում է հեռավոր ճանապարհորդությունից վերադարձած Ոդիսևսի ոտները։

Թուրքերի հոգևոր կուլտուրայում եղած փոքրասիական՝ հունական, հայկական, քրդական շատ փոխառությունների մասին գրում է Վ. Ա. Գորդլևսկին [47. 54. 57. 58]։

Ծագումնաբանական վերլուծության տեսակետից առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում թուրքերի, հատկապես գյուղացիների, հարսանիքի ծիսակատարման կողմը։ Դրա ժողովրդական ծեսերում կարելի է նկատել փոխառություններ թուրքերի էթնոգենեզին մասնակցած, նրա կենցաղի և կուլտուրայի վրա ազդած տարբեր ժողովուրդների հարսանեկան ծեսերից։ Այսպես, հարսնացուին բերելուց հետո փեսացուի տանը կազմակերպվող հարսանեկան խընջույքը թուրքերին անցել է օղուզներից։ Ամուսնական նընջասենյակի «գերդեք» (կլոր վրան) անունը մնացել է դեռ թյուրքերի նախկին քոչվորական կյանքի ժամանակներից։ Հարսնացուի մազերը, ձեռները և ոտները հինայով ներկելու սովորությունը վերցրել են իրանական ժողովուրդներից։ Փեսացուին հրապարակորեն սափրելու ծիսակատարությունը թուրքերը վերցրել են ավելի շուտ հույներից (այս ծեսը պահպանվել է, օրինակ, Կիպրոս կղզու հույների մոտ)։ Հարսանիքի ջահաթափորը ևս, հավանաբար, ունի փոքրասիական ծագում[2]։ Այդ ծեսը, օրինակ, կատարում են նաև հույները, իսկ հայերը կատարում են պար՝ վառած մոմերով, որի ժամանակ բոլոր ներկաները ձեռքներին բռնած են ունենում վառած մոմեր [145, էջ 67]։ Թուրքերի մի քանի հարսանեկան պարերը նման են հույների պարերին, օրինակ, «ռոմեյկա» պարը, որը ունի նաև հունական անուն [288, էջ 291], որոշ պարեր էլ նման են քրդականներին։ Թուրքերը քրդերից են վերցրել նաև հարսնացուի ճանապարհին ոչխար դնելու սովորույթը, երբ նրան տանում են փեսացուի տուն՝ փորձելու համար նրա ուժերը՝ կկարողանա՞ արդյոք վերցնել ոչխարը [56]։ Քրդական փոխառությունների թվին է դասվում նաև ռազմա-մարզական ջիրիդ խաղը։ Այդ խաղը կազմակերպում են հարսանիքի և այլ տոնախմբությունների ժամանակ։ Դրան մասնակցում են փայտյա տեգերով զինված հեծյալները։ Նման խաղը քրդերի մոտ կոչվում է «թաքկալե» [35, էջ 143, հավ. 83]։ Վերջապես, հարսնացուին տուն տանելուց առաջ դռներին յուղ ու մեղր քսելու սովորությունը հիշեցնում է խեթերի հարսանեկան ծեսը. սրանք յուղն ու մեղրը քսում էին հարսնացուի ճակատին։ Բայց թուրքերը, իհարկե, այդ սովորությունը անմիջականորեն վերցրել են ոչ թե խեթերից, որոնք որպես ցեղային ընդհանրություն անհետացել էին Փոքր Ասիայում թուրքական առաջին ցեղերի երևալուց դեռ շատ առաջ, այլ փոքրասիական ուրիշ ժողովուրդներից, որոնց նախորդները ինչ-որ ժամանակ այդ ծեսը վերցրել էին խեթերից։

Ոչ թյուրքական և մինչմուսուլմանական շատ սովորույթներ պահպանվել են նաև թուրքերի մի շարք էթնոգրաֆիական խմբերի մոտ։ Օրինակ, թախթաջիների մոտ հարսանիքի ժամանակ փեսացուն և հարսնացուն խմում են գինի. թաղման ժամանակ հանգուցյալի դագաղը նրանք զարդարում են ծաղիկներով [62, էջ 58]։ Քիլիսի շրջանում թուրքմաննները հարսանեկան դրոշակների վրա երբեմն պատկերում են խաչ [519, մ. II, էջ 89]։ Խաչի նկար հանդիպում է նաև թե՛ ժողովրդական ասեղնագործությունների, և թե՛ գորգերի վրա։ Հաճախ գորգերի նախշերը իրենցից ներկայացնում են երկրաչափականացված զարդեր, որոնց մեջ կարելի է լինում նշմարել մարդկանց ու կենդանիների պատկերներ, որոնց ռեալիստական պատկերումը արգելում է սուննի իսլամի դոգմատիկան։ Այլ կերպ ասած, այդ զարդերի թեմատիկան կապված է մինչմուսուլմանական ժողովրդական արվեստի հետ։ Գորգերի և ասեղնագործությունների զարդերը բերված են թուրք հետազոտողներ Յու. Դուրուլի և Կ. Դիրիկի աշխատություններում [413, էջ 91, աղ. 42. 410]։

Թուրքական կիրառական արվեստում հետաքրքրական են այսպես կոչված եղջերակերպ մոտիվները՝ խաչաձև ֆիգուր-

[2] Ինչպես հայտնի է, ամուսնական ջահը եղել է հին հույների ամուսնության աստված Հիմենեյի բնորոշ հատկանիշը։ Ըստ նրանց հավատալիքների, Հիմենեյը վառված ջահը ձեռքին ընթանում էր հարսանեկան թափորների առջևից։

ներ՝ ծայրերին եղջյուրանման ճյուղավորություններով։ Դրանց ակունքները, հավանաբար, հարկավոր է որոնել առաջավորասիական հին արվեստի մեջ [482], բայց կարող են նաև կապված լինել Կենտրոնական Ասիայի թյուրքերի արվեստի հետ։

Զարդաքանդակների մեջ փոքրասիական փոխառությունների թվին կարելի է դասել «խեթական արևի» պատկերը (արևի սխեմատիկ պատկերումը խաչաձևող գծեր ունեցող շրջագծի նման, որ հայտնաբերվել է խեթական կուլտուրայի բազմաթիվ առարկաների վրա), երկգլխանի արծիվի պատկերը (բյուզանդական գերբը), հինգ մատներով դրոշմված ափի պատկերը (այս նշանը հայտնաբերվել է նոր քարեդարյան առարկաների վրա՝ Չաթալ-Հյույուքում) և այլն [453, էջ 16. 293, էջ 172. 519, մ. I, էջ 56, 89]։

Թուրքական ֆոլկլորի մեջ թափանցել են նաև անշափ շատ հունական սյուժեներ (օրինակ, Հիպոկրատի և Պլատոնի մասին լեգենդապատումները), նույնիսկ հին ժամանակների հունական առասպելները, բյուզանդական լեգենդները և այլն [212, 259. 296. 353]։

ԱՄՓՈՓՈՒՄ

Թուրք ժողովուրդը, ինչպես նաև գրեթե բոլոր մյուս ժողովուրդները, չի առաջացել ինչ-որ մեկ նախորդից, ինչ-որ մեկ, օրինակ, թյուրքական ժողովրդից կամ ցեղից, այլ ձևավորվել է էթնիկական շատ բաղադրամասերից։ Այդ բաղադրամասերից մեկը եղել են թյուրքական տարբեր ցեղերը՝ օղուզները, թուրքմենները, ինչպես և, ավելի փոքր չափով, ույղուրները (արևմտյան օղուզները), պեչենեգները, ղըփչաղները և այլ ցեղեր, որոնք Անատոլիա են գաղթել հիմնականում XI—XIII դարերում։ Մյուս բաղադրամասերն են եղել տեղացի փոքրասիական և, ավելի ուշ, բալկանյան ժողովուրդները (ավելի ճիշտ՝ նրանց մի մասը)՝ հույները, հայերը, քրդերը, լազերը, վրացիները, սլավոնները և այլն։

Քոչվոր թյուրքերը, անցնելով նստակեցության և շփման մեջ մտնելով տեղի նստակյաց բնակչության հետ, նրանց մի մասին ասիմիլյացրին լեզվի տեսակետից, բայց իրենք էլ նրանցից այնքան շատ վերցրին տնտեսության հմտություններ և կուլտուրայի (հատկապես՝ հոգևոր կուլտուրայի) գծեր, որ, կարելի է ասել, ասիմիլյացվեցին տեղական բնակչության կողմից տնտեսական-կուլտուրական տիպի տեսակետից։ Ինչ-որ չափով այստեղ կարելի է օգտագործել Կ. Մարքսի այն ասույթը, որ «պատմության անխախտ օրենքի համաձայն, բարբարոս նվաճողները իրենք էին նվաճվում իրենց իսկ նվաճած ժողովուրդների ավելի բարձր քաղաքակրթության կողմից» [3, էջ 225]։ Բայց դա արդարացի է թուրքերի տնտեսության և կուլտուրայի շատ գծերի նկատմամբ։ Իսկ էթնոգենեզի պրոցեսում հաղթանակած լեզու հանդիսացավ թուրքերենը, թեև ինքն էլ ենթարկվեց տեղական լեզուների ուժեղ ազդեցությանը։ Այդ բանը տեղի ունեցավ գլխավորապես այն պատճառով, որ թյուրքերը արդեն XII—XIV դարերում, իսկ ավելի ուշ նաև թուրքերը XV—XVI դա-

րերում, կազմեցին ամենից ավելի բազմաքանակ և քաղաքականապես իշխող ընդհանրությունը (թյուրքերը՝ ցեղա-լեզվական, իսկ թուրքերը՝ արդեն էթնիկական) Անատոլիայում: Տեղական ժողովուրդների նստակյաց երկրագործական կուլտուրայի յուրացումը քոչվոր թյուրքերի կողմից տևեց շատ երկար ժամանակ, և դա ինչ-որ չափով արգելակեց նրանց զարգացումը այդ ժողովուրդների համեմատությամբ՝ սոցիալ-տնտեսական և էթնիկական տեսակետներից:

Սելջուկյան ժամանակաշրջանում, երբ թյուրքերը կազմեցին տիրապետող և ամենից ավելի խոշոր լեզվա-ցեղային ընդհանրությունը Փոքր Ասիայում, թյուրքական էթնիկական ընդհանրության ձևավորում տեղի չունեցավ. թյուրքերի մեջ դեռ չափից դուրս ուժեղ էր առանձին ցեղերի կամ ցեղերի միությունների պատկանելու գիտակցությունը: Ճիշտ է, ցեղերի մոտ ազգակից բարբառները (դրանց տարբերությունները, որպես կանոն, դուրս չէին գալիս ընդհանուր օղուզերեն լեզվի շրջանակներից) և սուննի իսլամի դավանումը Անատոլիայի թյուրքերի կողմից ուժեղացնում էին այդպիսի ընդհանրության գոյացման տենդենցը: Բայց դրա հաստատման համար անհրաժեշտ հիմքը՝ տնտեսական կապերը, որոնք ընդգրկեին ամբողջ Անատոլիան, չկար: Մոնղոլական արշավանքը, որի հետևանքով Սելջուկյան սուլթանությունը վերջնականապես մասնատվեց թյուրքական առանձին ֆեոդալական իշխանապետությունների, է՛լ ավելի թուլացրեց թյուրք-անատոլիական էթնիկական ընդհանրության կազմավորման տենդենցը:

Թուրք ժողովրդի միջուկը սկսեց ձևավորվել Օսմանյան բեյլիքությունում, որը սկզբում մտնում էր Փոքր Ասիայի Սելջուկյանների պետության կազմի մեջ, իսկ 1299 թվականից դարձել էր անկախ: XV դարի երկրորդ կեսին, երբ ավարտվեց ամբողջ Փոքր Ասիայի միավորումը Օսմանյան պետության շրջանակներում, թյուրքական ցեղերի մեծ մասը արդեն նստակյաց էր դարձել, կապվելով հողին և, խառնվելով տեղացի նստակյաց բնակչության հետ, տվեց նոր ընդհանրություն՝ թուրքականը (այլ ոչ թե սելջուկյան կամ թյուրք-անատոլիական), որը լրիվ նստակյաց էր, երկրագործական՝

հարստացած տեղական կուլտուրայով: Տնտեսական կապերը սկսեցին հաստատվել արդեն սկզբում դեռ շատ անկայուն այդ ընդհանրության մասերի միջև միայն, որը վերջին հաշվով հանգեցրեց թուրք ժողովրդի կազմավորմանը: Փոքր Ասիայի միավորումը օսմանցիների իշխանության տակ, Ստամբուլի վերածումը Թուրքիայի վարչական, առևտրական, քաղաքական ու կուլտուրական խոշորագույն կենտրոնի, այս ամենը նպաստեց երկրի տարբեր շրջանների տնտեսական, քաղաքական և կուլտուրական կապերի զարգացմանը: Իսկ դա էթնիկական տեսակետից մերձեցնում էր թուրքերի առանձին տերիտորիալ խմբերին, որոնք ծագել էին թյուրքերի և տեղական բնակչության միախառնումից. միմյանց հետ և նստակյաց թուրք բնակչության հետ էր մերձեցնում թյուրքական մնացած ցեղերին, որոնք գնալով ավելի շատ էին անցնում նստակեցության և խառնվում թուրքերին ու մյուս բնակիչներին: XVI դարի առաջին կեսին վերջնականապես ձևավորվեց թուրք ժողովուրդը իր տերիտորիայով, լեզվով, տնտեսական ու կուլտուրական որոշ ընդհանրությամբ:

Թուրք ազգի ձևավորումը բարդացել էր պատմական շատ պատճառներով, որոնցից գլխավորներն էին սոցիալ-տնտեսական զարգացման տեսակետից Թուրքիայի ետ մնալը եվրոպական երկրներից և, իբրև դրա հետևանք, Օսմանյան կայսրության ստրկացումը օտարերկրյա կապիտալի կողմից, իմպերիալիստական տերությունների միջամտությունը նրա ներքին գործերին: Թուրքական բուրժուական ազգի կազմավորումը արգելակվում էր նաև Թուրքիայի կապիտալիստական զարգացման ճանապարհին եղած ֆեոդալական-թեոկրատիկական խոչընդոտների պատճառով: Թուրքերի կոնսոլիդացումը որպես ազգ ընթանում էր շատ դանդաղ ու հիվանդագին: Այս տեսակետից նրանք մի քանի դարով ետ էին մնացել եվրոպական ժողովուրդներից: Թուրքերի վերջնական ձևավորումը որպես ազգ տեղի ունեցավ միայն XX դարի առաջին երկու տասնամյակներին և ավարտվեց Օսմանյան կայսրության անկումից հետո՝ քեմալական հեղափոխության հաղթանակի շնորհիվ բուրժուական Թուրքական Հանրապետության կազմավորմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցուցակ

ААС—Азия и Африка сегодня
ВВ—Византийский временник
ВГО—Всесоюзное географическое общество
ДАОИОЛЕАЭ—Дневник антропологического отдела императорского общества любителей естествознания, антропологии и этнографии
ДВ—Древности восточные
ЖМНП—Журнал Министерства народного просвещения
ЗВОРАО—Записки Восточного отдела Российского археологического общества
ЗКОИРГО—Записки Кавказского отдела императорского Российского географического общества
ИАН АзССР—Известия Академии наук Азербайджанской ССР
ИАН АрмССР—Известия Академии наук Армянской ССР
ИАН СССР—Известия Академии наук СССР
ИАН ТуркмССР—Известия Академии наук Туркменской ССР
ИАОИОЛЕАЭ—Известия антропологического отдела императорского общества любителей естествознания, антропологии и этнографии
ИКОИРГО—Известия Кавказского отдела императорского Российского географического общества
ИООН АН ТаджССР—Известия отделения общественных наук Академии наук Таджикской ССР
ИРГО—Известия Русского географического общества
ИФТЯСАЮС—Источники формирования тюркских языков Средней Азии и Южной Сибири
КСИВ—Краткие сообщения Института востоковедения АН СССР
КСИЭ—Краткие сообщения Института этнографии АН СССР
МАЭ—Музей антропологии и этнографии АН СССР

МКАЭН—Международный конгресс антропологических и этнографических наук
НАА—Народы Азии и Африки
ПЭС—Переднеазиатский этнографический сборник
ПС—Палестинский сборник
СЭ—Советская этнография
ТАО—Труды антропологического отдела
ТВОАО—Труды Восточного отдела археологического общества
ТИИАН АзССР—Труды Института истории Академии наук Азербайджанской ССР
ТИЭ—Труды Института этнографии АН СССР
ТМИВ—Труды Московского института востоковедения
ЭО—Этнографическое обозрение
ЭПСНСПА—Этнические процессы и состав населения в странах Передней Азии
AUDTCFD—Ankara üniversitesi Dil ve Tarih—Gografya fakültesi dergisi
BEL. —Belleten
BYZ. —Byzantion
IUEFTD—Istanbul üniversitesi Edebiyat fakültesi tarih dergisi
JA—Journal Asiatique
HBH—Halkbilgisi haberleri
REI—Revue des Etudes Islamiques
SI—Studia Islamica
TED—Türk etnografya dergisi
TFA—Türk folklor arastirmalari
TM—Türkiyat mecmuasi
TTAED—Türk tarih, arkeologya ve etnografya dergisi
TTK—Türk tarih kongresi

1. Маркс К., Объявление войны. — К истории возникновения восточного вопроса, — К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, изд. 2, т. 10.
2. Маркс К., Энгельс Ф., Британская политика.—Дизраэли.— Эмигранты.—Мадзини в Лондоне.—Турция,—К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, изд. 2, т. 9.
3. Маркс К., Энгельс Ф., Британское владычество в Индии,—Будущие результаты британского владычества в Индии,—К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, изд. 2, т. 9.
4. Энгельс Ф., Внешняя политика русского царизма,—К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, изд. 2, т. 22.
5. Энгельс Ф., Турецкий вопрос, — К. Маркс и Ф. Энгельс, изд. 2, т. 9.

6. Ленин В. И., Критические заметки по национальному вопросу,—Полное собрание сочинений, т. 24.
7. Абаев В. И., Историко-этимологический словарь осетинского языка. т. I, М.—Л., 1958.
8. Аболтин В., Национальный состав Турецкой Республики, —«Новый Восток». 1925, кн. 1 (7).
9. Агаджанов С. Г., Очерки истории огузов и туркмен Средней Азии IX—XIII вв., Ашхабад. 1969.
10. Агаджанов С. Г. и Юзбашян К. Н., К истории тюркских набегов на Армению в XI в.,—ПС. 1965, вып. 13 (76).
11. Ага Каррыев, В. Т. Мошкова, А. Н. Насонов, А. Ю. Якубовский, Очерки из истории туркменского народа и Туркменистана в VIII—XIX вв., Ашхабад, 1954.
12. Агафий, О царствовании Юстиниана. М.—Л., 1953.
13. Аверьянов П. И., Этнографический и военно-политический обзор азиатских владений Оттоманской империи. СПб., 1912.
14. Алькаева Л. О., Очерки по истории турецкой литературы. 1908—1939, М., 1959.
15. Анна Комнина, Алексиада, М., 1965.
16. Аралов С. И., Воспоминания советского дипломата. М., 1960.
17. [Аристакэс Ластивертци], Повествование вардапета Аристакэса Ластивертци, М., 1968.
18. Аристов Н. А., Заметки об этническом составе тюркских племен и народностей и сведения об их численности, —«Живая старина», 1896, вып. III—IV.
19. Аристова Т. Ф., Курды Закавказья. М., 1966.
20. «Армянская география VII в.», СПб., 1877.
21. [Ататюрк] М. Кемаль, Путь новой Турции, т. II, М., 1934.
22. Ахаллы С., Махмуд Кашгарынын созлуги ве туркмен дили, Ашхабат, 1958.
23. Аширалиев К., Древние тюркские элементы в современных языках. —ИФТЯСАЮС, Фрунзе, 1966.
24. Бартольд В. В., Очерк истории туркменского народа,—«Туркмения», т. I. 1929.
25. Бартольд В. В., История культурной жизни Туркестана,—Сочинения, т. II, ч. 1, М., 1963.
26. Баскаков Н. А., Тюркские языки, М., 1960.
27. Батманов И. А., Источники формирования тюркских языков Южной Сибири и Средней Азии, —ИФТЯСАЮС, Фрунзе, 1966.
28. «Библиография Турции (1713—1917)», М., 1961.
29. «Библиография Турции (1917—1958)», М., 1959.

30. Брук С. И., Этнический состав и размещение населения в странах Передней Азии, — ПЭС, I. М., 1958 (ТИЭ АН СССР, нов. серия, т. XXXIX).
31. Будагов А. З., Сравнительный словарь турецко-татарских наречий. т. I—II, СПб., 1869—1871.
32. Вайнштейн С. И., Орнамент в народном искусстве тувинцев,—СЭ, 1967, № 2.
33. Вейденбаум Е. Г., От Батума до Артвина. Путевые заметки, ИКОИРГО, 1879—1881. т. VI.
34. Византийские историки, СПб., 1860.
35. Вильчевский О. Л., Курды. Введение в этническую историю курдского народа, М.—Л., 1961.
36. Владимирцов Б. Я., Общественный строй монголов. Монгольский кочевой феодализм, Л., 1934.
37. [Вратислав Вацлав], Приключения чешского дворянина Вратислава в Константинополе и в тяжкой неволе у турок, с австрийским посольством в 1591 г., М., 1904.
38. [Вронченко М. П.], Обозрение Малой Азии в нынешнем ее состоянии, составленное русским путешественником М. В., ч. I—II, СПб., 1839—1840.
39. Гарбузова В. С., Сказание о Мелике Данышменде. Историко-филологическое исследование, М. 1959.
40. Гасанова Э. Ю., Идеология буржуазного национализма в Турции, Баку, 1966.
41. Гасанова Э. Ю., К истории журнала «Тюрк Юрду»,—ИАН АзССР, сер. обществ. наук, 1969, № 6.
42. Гасанова Э. Ю., Об идеологических основах кемализма и их современном толковании в Турции. —НАА, 1968, № 3.
43. Гасанова Э. Ю. Общественная мысль в Турции в период буржуазной революции 1908 г., —«Современная философская и социологическая мысль стран Востока», М., 1965.
44. Гасанова Э. Ю., Прогрессивные моменты в журнале «Тюрк Юрду», —ИАН АзССР, сер. обществ. наук, 161, № 3.
45. Гасратян М. А., О политике турецких правящих кругов в национальном вопросе. —«Проблемы современной Турции», М., 1963.
46. Голобородько (Южанин) И. И., Старая и новая Турция, М., 1908.
47. Гордлевский В. А., Быт османцев в суевериях, приметах и обрядах, —ЭО, 1915, № 3—4.
48. Гордлевский В. А., Внутреннее состояние Турции во второй половине XVII. в. (По документам, изданным А. Рефиком), —ТМИВ, № 2, 1940.

49. Гордлевский В. А., Государство Сельджукидов Малой Азии, М. —Л., 1941.
50. Гордлевский В. А., Избранные сочинения, т. I—III, М., 1960—1962.
51. Гордлевский В. А., Из жизни современной Турции, — «Восток», 1924. кн. 4.
52. Гордлевский В. А., Из комментариев к старо-османскому переводу хроники малоазийских Сельджукидов, так называемой хроники Ибн-Биби, — ДВ, 1913, т. IV, вып. 1.
53. Гордлевский В. А., Из наблюдений над турецкой песнью. —ЭО, 1908, № 4.
54. Гордлевский В. А., Из османской демонологии, —ЭО, 1914, № 1—2, кн. 101—102.
55. Гордлевский В. А., К личной ономастике у османцев,— ДВ, 1913. т. IV. вып. 1.
56. Гордлевский В. А., Османская свадьба, —ЭО, 1914, № 3—4, кн. 103—104.
57. Гордлевский В. А., Османские исторические сказания.— ЭО, 1915, № 1—2.
58. Гордлевский В. А., Османские сказания и легенды, — ЭО, 1911, № 1—2; 1912, № 3—4.
59. Гордлевский В. А., Турецкие юрюки. —ИКОИРГО, 1913—1914, т. XXII, вып. 3.
60. Гроте Г., По азиатской и европейской Турции. М., 1904.
61. Губогло М. Н., Этническая принадлежность гагаузов (историография проблемы), —СЭ, 1967, № 3.
62. Гуман К., Об этнологии Малой Азии. —ИКОИРГО, 1879—1881, т. VI, прил.
63. Гусейнов Р., К истории тюрок XI—XII вв., —ТИИАН АзССР, 1957, т. XII.
64. Гусейнов Р. А., Сельджукская военная организация,—ПС, 1967, вып. 17 (80).
65. Гусейнов Р., [Рец. на книгу:] Ф. Сюмер, «Огузы (туркмены)», Анкара, 1967, —НАА, 1969, № 3.
66. Гусейнов Р. А., Тюркские этнические напластования XI—XII вв. в Закавказье, —«Семинар по проблеме происхождения и формирования азербайджанского народа» (тезисы), Баку, 1966.
67. Гусейнов Р. А. «Хроника» Михаила Сирийца, —ПС, 1960. вып. 5 (68).
68. Давыдов А. А. Афганская деревня, М. 1969.
69. Данибегашвили Рафаил, Путешествия, М., 1968.

70. Данциг Б., Турция, М., 1949.
71. Даркот Бесим, География Турции, М., 1959.
72. Достян И. С., Борьба южнославянских народов против турецкой агрессии в XIV—XV вв., —ВВ, 1953, т. VII.
73. «Древнетюркский словарь», Л., 1969.
74. Дука, Византийская история, —ВВ, 1953, т. VII.
75. Дяченко В. Д., Антропологическое исследование гагаузов Молдавской ССР, —КСИЭ, 1952, № 15.
76. Елисеев А. В., Антропологическая экспедиция поперек Малой Азии, —ИРГО, 1887, т. XXIII.
77. Елисеев А. В., Антропологические заметки об обитателях Малой Азии, —ДАОИОЛЕАЭ, 1890, вып, 6—7, 9—10 (ТАО, т. XII).
78. Елисеев А. В., Турки-османы, —ДАОИОЛЕАЭ, 1891, вып. 2, 5—8 (ТАО, т. XIII).
79. Евгеньев Д. Е. [Еремеев], Вопросы этногенеза турок в турецкой исторической литературе, —ЭПСНСПА, М., 1963 (ТИЭ АН СССР, нов. серия, т. 83).
80. Еремеев Д. Е., Изменение типов жилищ и поселений юрюков при оседании. —КСИЭ, 1963, № 38.
81. Еремеев Д. Е., Изобразительное искусство и архитектура Турции XX в.,—«Всемирная история искусств», т. 6, кн. 1, М., 1965.
82. Еремеев Д., Изучение этнографии в современной Турции, — СЭ,1960, № 2.
83. Еремеев Д. Е., Кемализм и пантюркизм (обзор литературы), —НАА, 1963, № 3.
84. Еремеев Д. Е., Кемализм и пантюркизм,—«Сессия по вопросам истории и экономики Афганистана, Ирана и Турции» (тезисы докладов), М., 1962.
85. Еремеев Д. Е., К этнографии малоазиатских туркмен, — «Труды Института истории, археологии и этнографии АН ТуркмССР», Ашхабад, 1963.
86. Еремеев Д. Е., Национальные процессы в Турции (1830—1960 гг.), —«Национальные процессы в странах Ближнего и Среднего Востока», М., 1970.
87. Еремеев. Д. Е., Новое входит в быт, —ААС. 1967, № 4.
88. Еремеев Д. Е., Оседание юрюков в современной Турции,— СЭ, 1962, № 6.
89. Еремеев Д. Е., Особенности образования турецкой нации,— СЭ, 1969, № 5.
90. Еремеев Д. Е., От тюрков к туркам,—ААС, 1969, № 6.

91. Еремеев Д. Е., Происхождение юрюков и туркмен Турции и основные этапы их истории, —ЭПСНСПА, М., 1963 (ТИЭ АН СССР, нов. серия, т. 83).
92. Еремеев Д. Е., Проникновение тюркских племен в Малую Азию, —«Доклады VII МКАЭН», М., 1964.
93. Еремеев Дм., Страна за Черным морем, М., 1968.
94. Еремеев Д. Е., Турки,—«Народы зарубежной Европы», т, I, М., 1964.
95. Еремеев Д., Турчанка выходит замуж,—ААС, 1967, № 1.
96. Еремеев Дм., Юрюки Анатолии,—ААС, 1962, № 11.
97. Еремеев Д. Е., Юрюки (турецкие кочевники и полукочевники), М., 1969.
98. Еремеев Д. Е., Язык как этногенетический источник (из опыта лексического анализа турецкого языка),—СЭ, 1967, №4.
99. Еремян С. Т., Преемники полководца Липарита и вопрос о происхождении Дапышмендидов. —ИАН АрмССР, сер. обществ. наук, 1947, № 8.
100. Ерицов А., Опыт статистического очерка народонаселения Турецкой Армении,—ИКОИРГО, 1879—1881, т. VI, прил.
101. Желтяков А. Д., Начальный этап книгопечатания в Турции,—«Ближний и Средний Восток» (история, культура, источниковедение), М., 1968.
102. Желтяков А. Д., Петросян Ю. А., История просвещения в Турции (конец XVIII—начало XX века), М., 1965.
103. Жуковский П. М., Земледельческая Турция, М.—Л, 1933.
104. «За рубежом», 1969, № 40.
105. [Ибн-Фадлан], Книга Ахмеда ибн-Фадлана о его путешествии на Волгу в 921—922 гг., Харьков, 1956.
106. [Ибн-Фадлан], Путешествие Ибн-Фадлана на Волгу, М.—Л., 1939.
107. Иванов М. С., Племена Фарса кашкайские, хамсе, кухгилуйе, мамасани, М. 1961.
108. Ивановский А. А. Туркмены и турки по краниометрическим исследованиям,—ДАОИОЛЕАЭ, вып. III, (ТАО, 1891, т. III).
109. Иордан, О происхождении и деяниях гетов, М., 1960.
110. «Исследования по грамматике и лексике тюркских языков», Ташкент, 1965.
111. «Историческое развитие лексики тюркских языков», М., 1961.
112. «История Болгарии», М., 1954, т. I.
113. «История Туркменской ССР», Ашхабад, 1957, т. I, кн. 1.

114. Казбек И. Н., Три месяца в Турецкой Грузии,—ЗКОИРГО. 1876, кн. вып. 1.
115. Кази-Бек Ю., Современная Турция, СПб., 1897.
116. Кармышева Б. Х., Жилище узбеков племени карлук южных районов Таджикистана и Узбекистана—ИООН АН ТаджССР, 1956, № 10—11.
117. Кармышева Б. Х., О некоторых древних тюркских племенах и составе узбеков (по этнографическим данным),—«Доклады делегации СССР на XXV Международном конгрессе востоковедов», М., 1960.
118. Кармышева Б. Х., Этнографическая группа «тюрк» в составе узбеков, —СЭ, 1960, № 1.
119. Карпини Дж. дель Плано, История монгалов; Рубрук Г. де., Путешествие в восточные страны, М., 1957.
120. Карпов Г. И., Племенной и родовой состав туркмен, Ашхабад. 1925.
121. Каэн Кл., Земельный строй и тюркская оккупация в Анатолии, —«Вестник истории мировой культуры», 1958, № 1.
122. Клавихо Р. Г. де., Дневник путешествия ко двору Тимура в Самарканд, СПб., 1881.
123. Кляшторный С. Г., Проблемы ранней истории племени турк (ашина), —«Новое в советской археологии», М., 1965.
124. Кляшторный С. Г., Древнетюркские рунические памятники как источник по истории Средней Азии, М., 1964.
125. «Книга моего деда Коркута. Огузский героический эпос», М.—Л., 1962.
126. Коев И., Турецкий народный весенний праздник «Идреллез». (По материалам из деревни Север Разградского округа Болгарии), —СЭ, 1963, № 1.
127. Кононов А. Н., Родословная туркмен. Сочинение Абу-л-Гази хана Хивинского, М.—Л., 1958.
128. Косвен М. О., Семейная община и патронимия, М., 1963,
129. Ксенофонт, Анабасис, кн. IV. гл. V. Л., 1951.
130. Курылев В. П., К истории земледелия в Малой Азии (основное земледельческое орудие современной Турции—карасабан).—«Доклады Восточной комиссии ВГО», 1968, вып. 3,
131. Курылев В. П., Об общинных отношениях в деревнях современной Турции,—СЭ, 1969, № 4.
132. Курылев В. П., Одежда анатолийских турок,—«Традиционная культура и быт народов Передней и Средней Азии», Л., 1970 (Сборник МАЭ АН СССР, т. 26).
133. Курылев В. П Очерки хозяйства и материальной культу-

ры турецкого крестьянства (новейшее время). Автореф. канд. дисс., Л., 1969.
134. Курылев В. П., Поселения, жилища и хозяйственные постройки современной Турции,—«Народы и страны Востока», т. 8, М.—Л., 1969.
135. Курылев В, П., Хыдырэллез—пережиток древнего земледельческого культа в Малой Азии, —«Филология и история тюркских народов» (тезисы докладов), Л., 1967.
136. Крымский А., История Турции и ее литературы, т. I, М. 1916.
137. Крымский А. Е., История Турции и ее литературы от расцвета до начала упадка, М., 1910.
138. Крымский В., Пантюркисты—фашистская агентура в Турции, —«Большевик», 1944, № 10—11.
139. Кямилев Х., Общественные мотивы в турецкой поэзии (конец XIX—середина XX века), М., 1969.
140. Лавров М. И., Происхождение балкарцев и карачаевцев,— КСИЭ, 1959, № 32.
141. Ламанский В. М., О славянах в Малой Азии, в Африке и в Испании, СПб., 1859.
142. Латышев В. В., Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе, т. I, вып. 3; т. II. вып. 2, СПб., 1890.
143. Левченко М. В., История Византии, М—Л,, 1940.
144. Лежан Г. М., Этнография Европейской Турции, СПб., 1868.
145. Лисициан С, С., Танцевальный и театральный фольклор армянского народа,—Труды VII МКАЭН. т. VI. М., 1969.
146. Лудшувейт Е., Вступительная статья к I т. сочинений В. А. Гордлевского.— «Академик В. А. Гордлевский». Избранные сочинения, т. I, М., 1960.
147. Лудшувейт Е. Ф., Турция, Экономико-географический очерк, М., 1955.
148. Людвиг Г. М., Архитектура древних хеттов (по материалам двух экспедиций автора в древнюю Каппадокию 1924—1926 гг.),— «Академия архитектуры», 1934, № 1—2.
149. Магазаник Д. А., Турецко-русский словарь, М. 1945.
150. Майзель С., Арабские и персидские элементы в турецком языке, М., 1945.
151. Мак-Коан, Дж. К., Наш новый протекторат. Описание географических, этнографических и экономических свойств Турецкой Азии, М., 1884.
152. Малов С. Е., Древние и новые тюркские языки, —ИАН СССР, отд. лит. и яз., 1952, т. XI, вып. 2.

153. Манандян Я. А., Краткий обзор истории древней Армении М. 1943.
154, Маринов В., Принос към изучаването на произхода, бита и културата на Каракачаните в България, София, 1964.
155. Марков Г. Е., Из этнической истории туркменского народа, —КСИЭ, 1958, № 29.
156. Марр Н. Я , Еще о слове челеби, —ЗВОРАО, т. XX, вып. II—III, 1911.
157. Марр Н. Я., Из поездки в Турецкий Лазистан (впечатления и наблюдения), —«Известия Имп. АН», VI серия, 1910, № 7
158. Марр Н. Я., О лингвистической поездке в Восточное Средиземноморье,— «Известия Государственной академии истории материальной культуры», 1934, вып. 89.
159. Массэ А., Ислам. Очерк истории, М.. 1963.
160. Матвеев С. Н., Турция (азиатская часть—Анатолия). Физико-географическое описание, М.—Л., 1946.
161. Меликсет-Бек Л. М., Хазары по древнеармянским источникам в связи с проблемой Моисея Хоренского, —«Исследования по истории культуры народов Востока», —М.—Л., 1960.
162. Микаелян Г. Г., История Киликийского армянского государства. Ереван, 1952.
163. Миллер А. Ф., Буржуазная революция 1908 г. в Турции,— «Советское востоковедение», 1955. № 6.
164. Миллер А. Ф.; Краткая история Турции, М., 1948.
165. Миллер А. Ф., Мустафа паша Байрактар. Оттоманская империя в начале XIX века, М.—Л., 1947.
166. Миллер Ю. А., Искусство Турции, М.—Л., 1965.
167. Михајл Константинович, Србина историја или летопис турски Михајла Константиновича из Островице,—«Гласник Серпского ученого друштва», 1865, кн. 18.
168. Михов Никола, Населението на Турция и България през XVIII и XIX в., т. III, София, 1929.
169. [Мовсес Каганкатваци], История агваң Моисея Каганкатваци, СПб., 1861.
170. [Мовсес Хоренаци], История Армении Моисея Хоренского, М., 1858.
171. Моисеев П. П., Аграрные отношения в современной Турции, М., 1960.
172. Мордтман А. Д., Население Азиатской Турции по официальным турецким источникам,—ИКОИРГО, 1879—1881, т. VI, прил.
173. Мошков В. А. Турецкие племена на Балканском полуострове. Отчет о поездке на Балканский полуостров летом 1903 г. —ИРГО, 1904—1905, т. XI, вып. 3.

174. Мутафчиев П. Н., Мнимото преселение на сельджукски турци в Добруджа в XIII в.
175. «Народы Кавказа», ч. II, М., 1962.
176. Неклюдов А., Начало сношений России с Турцией. Посол Иоанна III-го Плещеев,—«Сборник Московского главного архива МИД», М., 1888, вып. 3—4.
177. [Нестор Искандер], Повесть о Царьграде, его основании и взятии турками в 1453 году Нестора Искандера XV века. Сообщил архимандрит Леонид, СПб., 1886.
178. [Никита Акоминат]. Никиты Акомината история, начинающаяся с царствования Иоанна Комнина, т. I—II, СПб., 1859—1862.
179. Никитин С. А., Образование болгарского народа и возникновение Болгарского государства, —«Вестник МГУ», 1952, вып. I.
180. [Никифор], Никифора, патриарха Константинопольского, краткая история со времени после царствования Маврикия,— ВВ, 1950, т. III.
181. Новичев А. Д., История Турции. I. Эпоха феодализма (XI—XVIII века), Л., 1963.
182. Новичев А. Д., Очерки экономики Турции до мировой войны, М.—Л., 1937.
183. Новичев А. Д. Турецкие кочевники и полукочевники в современной Турции.—СЭ, 1951, № 3.
184. Новичев А. Д., Турки,—«Народы Передней Азии», М., 1957.
185. Новичев А. Д., Турция, Краткая история, М., 1965.
186. Новичев А. Д. Экономика Турции в период мировой войны, М.—Л., 1935.
187. Осмоналиева Б., Иранские элементы в тюркских языках,—ИФТЯСАЮС, Фрунзе, 1966.
188. Ошанин Л. В., Антропологические материалы к проблеме этногенеза туркмен, —«ИАН ТуркмССР», 1952, № 4.
189. Ошанин Л. В., Зезенкова В. Я., Вопросы этногенеза народов Средней Азии в свете данных антропологии, Ташкент, 1953.
190. Пальгрев В. Дж., Анатолийские области. Консульские отчеты о восточных причерноморских провинциях Турции за 1869 и 1872 гг., —ИКОИРГО, 1882, т. VII, № 2, прил.
191. Патканов К. П., О месте, занимаемом армянским языком в кругу индоевропейских, —ИКОИРГО, 1879—1881, т. VI.
192. Патканян К. П., Опыт истории Сасанидов по сведениям, сообщаемым армянскими писателями, —ТВОАО. 1869, т. XIV.
193. П. Б., Плен и страдания россиян у турков, СПб., 1790.

194. Першиц А. И., Некоторые особенности этнического развития арабов Саудовской Аравии, —«ЭПСНСПА», М., 1963.
195. Петросян Ю. А., «Новые османы» и борьба за конституцию 1876 г. в Турции, М., 1958.
196. Петрушевский И. П., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI и начале XIX в., Л., 1949.
197. Пигулевская Н., Сирийские источники по истории народов СССР, М.—Л., 1941.
198. Пигулевская Н. В., Якубовский А. Ю., Петрушевский И. П., Строева П. В., Беленицкий Д. М., История Ирана с древнейших времен до конца XVIII века, Л., 1958.
199. Покровская Л. А., Термины родства в тюркских языках, — «Историческое развитие лексики тюркских языков», М., 1961.
200. [Поло, Марко], «Книга» Марко Поло, М., 1955.
201. Прокопий из Кесарии, Война с готами, М., 1959.
202. Путята Дм. В., Записка о Малой Азии СПб., 1896.
203. Радлов В. В., Опыт словаря тюркских наречий, т. I—IV, СПб., 1893—1911.
204. Рахмани А. А., «Сельджук-намэ» Захир-ад-Дина Нишапури как источник по истории Азербайджана, —«ИАН АзССР», сер. обществ. наук, 1963, № 3.
205. Рашид-ад-дин, Сборник летописей, т. 1, кн, 1. М.—Л.. 1952.
206. Римская история Никифора Григоры, начинающаяся со взятия Константинополя латинянами, т. I—II, СПб., 1862.
207. Росляков А. А., Туркмены и огузы, — «Ученые записки Туркменского государственного университета им. А. М. Горького» , 1955, вып. 3.
208. Северак Ж. де, Описание чудес, —«После Марко Поло», М., 1968.
209. Севортян Э. В., Пробные статьи к этимологическому словарю тюркских языков, М., 1966.
210. Сиясет-намэ. Книга о правлении вазира XI столетия Низам ал-Мулька. М.—Л., 1949.
211. Смирнов В. Д., Очерк истории турецкой литературы. СПб. 1891.
212. Смирнов В. Д., Турецкие легенды о святой Софии и о других византийских древностях, СПб. 1897.
213. «Современная Турция (справочник)», М., 1965.
214. «Сочинения Константина Багрянородного „О фемах“ и „О народах“», М., 1899.

215. Станчев С., Славяни и прабългари в старобългарската култура.—«Археология», 1962, година IV, кн. 4.
216. «Тарих-и Ал-и Осман. рукопись ИВАН, С-1046».
217. Тверитинова А. С., Аграрный строй Османской империи, Документы и материалы, М., 1963.
218. Тверитинова А. С., К вопросу о домениальном землевладении феодалов-ленников в Османской империи в XV—XVI вв., —КСИВ, 1960, т. XXXVIII.
219. Тверитинова А. С., Фальсификация истории средневековой Турции в кемалистской историографии,—ВВ, 1953, т. VII.
220. Тевяшов Е., Осада Константинополя аварами и славянами в 626 году,—ЖМНП, 1914, № 52.
221. Тенишев Э. Р., Глаголы движения в тюркских языках,—«Историческое развитие лексики тюркских языков», М. 1961.
222. Толстов С. П. Города гузов (историко-этнографические этюды), —СЭ, 1947, № 3.
223. Томилов П. А., Отчет о поездке по Азиатской Турции в 1904 г., ч. 1. СПб., 1907.
224. Трофимова Т. А., Этногенез татар Поволжья в свете данных антропологии, —М.—Л., 1949.
225. Трофимова Т. А., Гинзбург В. В., Антропологический состав населения Южной Туркмении в эпоху энеолита,—«Труды Южнотуркменской археологической комплексной экспедиции», т. X. Ашхабад. 1961.
226. Трубецкой В. В. Бахтиары (расселение, хозяйство, общественные отношения), —«Этнические процессы и состав населения в странах Передней Азии», М., 1963.
227. Тыркова А., Старая Турция и младотурки. Пг., 1916.
228. Убичини А., Изображение современного состояния Турции в географическом, статистическом, религиозном и военном отношениях, СПб., 1854.
229. Убичини А., Куртейль П. де, Современное состояние Оттоманской империи, СПб,, 1877.
230. Успенский Ф. И., Движение народов из Центральной Азии в Европу, —ВВ, 1947. т. I (XXIV).
231. [Фавстос Бузанд], История Армении Фавстоса Бузанда, —«Памятники древнеармянской литературы», т, I. 1953.
232. [Феофан], Летопись византийца Феофана от Диоклетиана до царей Михаила и сына его Феофилакта, М., 1844.
233. Феофилакт Симокатта, История, М., 1957.
234. Фрунзе М. В., Доклад о поездке в Ангору на объединенном заседании Совнаркома и ЦИК'а Украины, —Собрание сочинений, т. I, М.—Л., 1926.

235. Халатьянц Г. А., Армянские Аршакиды, М., 1903.
236. [Хуршид М.], Сияхэт-намэ-и-худуд. Описание путешествия по турецко-персидской границе, СПб., 1877.
237. Чебоксаров Н. Н., Антропологические типы населения Передней Азии, —«Народы Передней Азии», М., 1957.
238. Шамсутдинов А. М., Вакфнаме Ибрагима бея из княжества Караман.— КСИВ, 1956, № 22.
239. Шамсутдинов А. М., К вопросу об образовании Османского княжества,—ТМИВ, 1947, сб. 5.
240. Шафарик П. И, Славянские древности, М, 1847. т. I, кн. 2.
241, Щербак А. М., Названия домашних и диких животных в тюркских языках,— «Историческое развитие лексики тюркских языков», М., 1961.
242. Эвлия Челеби, Книга путешествия, вып. I. Земли Молдавии и Украины, М., 1961.
243. «Экспедиция инженера Иосифа Черника для исследования в техническом отношении бассейнов Евфрата и Тигра»,—ИКОИРГО, 1879, т, VI. прил.
244. Эмин Ф. А., Краткое описание древнейшего и новейшего состояния Оттоманской Порты, М., 1828.
245. Якубовский А. Ю. Сельджукское движение и туркмены в XI в., —ИАН СССР. отд. обществ, наук, 1937, № 4.

* * *

246. Aflaki, Manaqib al-Arifin. Les Saints des derviches tourneurs, Paris, 1918—1922, vol. I—II.
247. Arfa H., The Kurds, London, 1966.
248. «Asie Française», 1917, № 171.
249. Atabinen R. S., Les apports turcs dans le peuplement et la civilisation de l'Europe Orientale, Istanbul, 1952.
250. Atabinen R. S., Les Turcs à Constantinople du V-ème au XV-ème siècle, —«Les Turcs occidentaux et la Mediterranee», Istanbul, 1956.
251. Backer D. de, L'Extrême Orient au moyen âge, Paris, 1877.
252. Band W. und Marquart J., Osttürkische Dialektstudien,—«Abhandlungen der Gesellschaft der Wissenschaften zu Göttingen», phil-hist. Klasse, N. F., Bd XIII, 1914, № 1.
253. Banse E., Das Arabische Element in der Türkei, Leipzig, 1916
254. Banse E., Die Länder und Völker der Türkei, Westermann, 1916.
255. Bergeron P., Voyages faits principalement en Asie dans les XII, XIII, XIV et XV siècles, Le Haye, 1735.

255. Berkes N., The Development of Secularism in Turkey, Montreal, 1961.
257. Bianchi A., Viaggi in Armenia, Kurdistan et Lazistan, Milano, 1863.
258. «The Birth of the Turkish Nation», —«New Outlook», III, № 6 (28), 1960.
259. Bittel K., Legenden von Kerkeness-Dag (Kappadokien),— «Oriens», 1960—1961, vol. 13—14.
260. Brice W. G., The Turkish Colonization of Anatolia — «Bulletin of the John Rylands Library», 1955, vol. 38, № 1.
261. Broquière B. de la, Le voyage d'outre-mer.—«Recueil de voyages et de documents», Paris, 1892, t. XII.
de son patriotisme. —«Revue de psychologie des peuples», 1962. «Mémoires de l'Académie des sciences de St. Petersbourg. 7-ème serie, t. 13, № 5.
263. Burnouf D., La formation de la nation turque et le caractère de son patriotisme,—«Revue de psychologie des peuples», 1962, année 17, № 3.
264. Busbecq O. Ch. Travels into Turkey, London, 1744.
265. Cahen Cl., La campagne de Mantzikert, — «Byz», 1948, t. XVIII.
266. Cahen Cl., The Historiographie of the Saljuqid Period, London, 1962.
267. Cahen Cl., Les Malik-names et l'histoire des origines Seldjoukides, — «Orient», 1953, vol. 6, № 2.
268. Cahen Cl., Notes pour l'histoire des Turcomans d'Asie Mineure au XIII siècle, —«JA», 1951, t. CCXXXIX, fasc. 3.
269. Cahen Cl., La première penetration turque en Asie Mineure (seconde moitie du XI-e siècle), —«Byz.», 1934, t. IX fasc. 2.
270. Cahen Cl., Le problème ethnique en Anatolie, — «Cahiers d'histoire mondiale», 1954.
271. Cahen Cl., Quelques textes negliges concernant les Turcomans de Rûm au moment de l'invasion mongole, —«Byz», 1939, t. XIV.
272. Cahen Cl., Les Seldjouks de Rûm, Brussel, 1950.
273. Cahen Cl., Les tribus d'Asie Occidentale pendant le periode seljukide. — «Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes», 1950. Bd 51, Hft. 3.
274. Charanis P., Slavic element in Byzantine Asie Minor in the thirteenth century, —«Byz.», 1948, t. XVIII.
275. «Chronique de Matthieu d'Edesse», Paris, 1858.
276. «Chronique de Michel le Syrien, patriarche jacobite d'Antioche», t. I—IV. Paris, 1889—1924.

277. [Collier J.], Journal du voyage de M. Collier, resident á la Porte, Paris, 1672.
278. Colombe M., La Turquie et l'Islam, —«Revue française de science politique», 1955, vol, V, № 4.
279. Creasy E. S., History of the Ottoman Turks, Beirut, 1961.
280. Defremery M., Histoire des Seldjoukides, — «JA», 1848, vol. 2.
281. «Die altosmanischen anonymen Chroniken. (Tevarih-i Al-i Osman)», Leipzig. 1925.
282. «Ducae Historia byzantina», Bonn, 1834.
283. Eberhard W. Nomads and Farmers in Southeastern Turkey. Problems of Setlement, — «Orient», 1953, vol. 6, № 1.
284. «Encyclopedie de l'Islam», t. IV, 1934.
285. Ethe H., Die Fahrten des Sajjid Battâl. Ein alttürkischer Volks und Sittenroman, Leipzig, 1871.
286. Febre M., L'Etat present de la Turquie, Paris, 1675.
287. Feilberg C. G., La tente noire, Copenhague, 1944.
288. Fontanier V., Voyages en Orient, Paris, 1829.
289. «Geographie de Moïse de Corène d'après Ptolemee», Venise, 1881.
290. Gökalp Z., Turkish nationalism and Western civilization, New York—London, 1959.
291. Gregoire H., L'Epopee byzantine et ses rapports avec l'epopee turque et l'epopée romane,—«Bulletin de la Classe des Lettres» (Academie royale de Belgique), 5-e serie, t. XVII, 1951, № 2.
292. Guer M., Moeurs et usages des Turcs, Paris, 1747, t. 1—2.
293. Hamdi Bey Launay M. de, Les costumes populaires de la Turquie en 1873, Constantinople, 1873.
294. Hammer-Purgstall J. von, Histoire de l'Empire Ottoman, Paris, 1835—1843, t. I—XVIII.
295. Hasluck F. W., Christianity and Islam under the Sultans, Oxford, 1929, vol. I—II.
296. Hasluck F. W. Plato in the Folklore of the Konya Plain,— «Annual of the British School at Athens», № XVIII,
297. Hommel F., Ethnologie und Geographie des alten Orients, München, 1926.
298. Hostler Ch. W., Turkism and the Soviets. The Turks of the World and Their Political Objectives, New York—London, 1957.
299. Hostler Ch. W., The Turks and Soviet Central Asia.—«The Middle East Journal», 1958, vol. XII, № 3.
300. Hostler Ch. W., Türken und Sowjets, Berlin—Frankfurt a. M., 1960. [rez.: «Zeitschrift für Geopolitik», 1961, Jg. 32, № 11—12].

301. [Ibn Battuta], The Travels of Ibn Battuta. vol. II, Cambridge, 1961.
302. [Ibn Fadlan], Relation du voyage d'Ibn Fadlân chez les Bulgares de la Volga, — «Annales de l'Institut des Etudes orientales», vol. XVI, 1958.
303. Inalcik H., Ottoman Methods of Conquest, —«SI», 1954. №2.
304. Izeddin, Deux voyageurs du XV-e siècle en Turquie; Bertrandon de la Broquière et Pero Tafur,—«JA», 1951, t. 239, fasc. 2.
305. Johansen U., Zur volkskundlichen Forschung in der Türkei,—«Der Islam», 1967, Bd 43, Hft. 1—2.
306. Kavadias G. V., Pasteurs-nomades mediterraneens. Les Saracatsans de Grèce, Paris, 1965.
307. Kerestedjian B., Quelques materiaux pour un dictionaire etymologique de la langue turque, London, 1912.
308. Kinneir J. M., Voyage dans l'Asie Mineure. l'Armenie et le Kourdistân dans les annees 1813 et 1814, Paris, 1818, t, I—II.
309, Kyriakides S. P., Elements historiques byzantins dans le roman epique turc de Sayyid Battal, — «Byz.», 1936, t. II, fasc 2.
310. Kowalski T., Les Turcs balkaniques, — «Revue internationale des etudes balkaniques», 1936. an II, t. II (4).
311. Köprülü., F., Les origines de l'Empire Ottoman. Paris, 1935.
312. Langlois V., Voyage dans la Cilicie. Paris. 1861.
313. Laurent J.; Byzance et les origines du Sultanat de Roum,— «Melanges Ch. Diehl», vol. I, Paris, 1930.
314. Laurent J., Byzance et les Turcs seldjoucides dans l'Asie Occidentale jusque 1081, Nancy, 1913.
315. Laurent J., Sur les emir Danichmendites,—«Melanges offerts à M. Nicolas Jorga», Paris, 1933.
316. Leunclavius J., Müsülmanischer Türkischer Histori, Frankfurt a. M., 1955.
317. Lloyd S. and Storm Rice D., Alanya (Ala'iyya), London, 1958.
318. Maçoudi, Le livre de l'avertissement et de la revision, Paris, 1897.
319. Mansuroglu M., Some Titles and Names in Old-anatolian Turkish,—«Ural-Altaische Jahrbücher», 1955, t. XXVII.
320. Marquart I., Uber das Volkstum der Komanen,--«Abhandlungen der k. Akademie der Wissenschaften», philologisch historische Klasse, Bd XIII, № 1, 1914.
321. Menage V. L., Neshri's, History of the Ottomans, Oxford, 1964.
322. Meyer G., Türkische Studien, I. Die griechischen und romanischen Bestandtheile im Wortschatze des Osmanisch—Türkischen.—«Sitzungsberichte der philosophisch-historischen Klasse der k. Akademie der Wissenschaften». 1893. Bd 128, Abh. I.
323. Moltke H., Briefe über Zustände und Begebenheiten in der Türkei, Berlin, 1882.
324. Moravcsik Gy., Attilas Tod in Geschichte und Sage, Berlin. 1936.
325. Moravcsik Cy., Byzantinoturcica, I. Die byzantinischen Quellen der Geschichte der Türkenvölker, Budapest, 1942.
326. Moravcsik Gy., Byzantinoturcica, II. Sprachreste der Türkvölker in der byzantinischen Quellen, Berlin, 1958.
327. Nesri M., Kitab-I Cihannüma. Die altosmanische Chronik des Mehemmed Neschri, Bd I—II, Leipzig, 1951 – 1955.
328. Ohsson I. M. d', Tableau general de l'Empire Ottoman, t. I—VII, Paris, 1788—1824.
329. Ottin Merry, Camilly Jerôme, Le nomadisme en Anatolie. Les Yuruks.—«Connaissance du monde», 1961, № 31.
330. Paoli Historia Langobardorum, Hannoverae, 1878.
331. Pierce Y. E.. Life in a Tirkish Village, New-York, 1969.
332. Pittard E., L'arrivee des brachicephales en Europe Centrale et Occidentale, Florence, 1929.
333. Planhol X. de, De la plaine Pamphylienne aux lacs Pisidiens. Nomadisme et vie paysanne, Paris, 1958.
334. Reid J., Turkey and the Turks, London, 1840.
335. Ricaut P., History of the Turks, 1687.
336. Roux J.-P., La sedentarisation des nomades Yürük du vilayet d'Antalya (Turquie meridionale), — «Ethnographie», 1961, № 55.
337. Saint-Quentin S. de. Histoire des Tartares. Paris, 1965.
338. Sperco W., Turcs d'hier et d'aujourl'hui. (D'Abdul-Hamid à nos jours), Paris. 1951.
339. Stirling P., Turkish village, London, 1965.
340. Senyürek M. S., A Note on the Human Skeletons in the Alaca Höyük Museum,— «AUDTCFD», 1951, t. 9, № 1—2.
341. Senyürek M. S., Fluctuation of the Cranial Index in Anatolia, from the Fourth Millenium B. C. to 1200 B. C., —«Bel.», 1951, t. XV. № 60.
342. Tachau F., The Face of Turkish Nationalism, —«Middle East journal», 1959, vol. 13, № 3.
343. Tachau F., The Search for National Identity Among the Turks,— «Welt des Islams», 1963, vol. 8, № 3.
344. Talbot Rice T., The Seljuks in Asia Minor, London, 1961.
345. Titze A., Einige weitere griechische Lehnwörter im anatolischen Türkisch,—«Nemeth aramagani». Ankara, 1962.
346. Titze A., Griechische Lehnwörter im anatolischen Türkisch,— «Oriens», 1955, t. VIII, № 2.

347. Togan A. Z. V., Die Vorfahren der Osmanien in Mittelasien,— «Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft», 1941, Bd 95, Hft. 3.
348. [Tott F. de], Mémoires du baron de Tott sur les Turcs et les Tartares. pt. 1—4, Amsterdam, 1784—1785.
349. Traeger P., Die Jürüken und Konjaren in Makedonien,— «Zeitschrift für Ethnologie», 1905, J. 37, Hft. I.
350. Tsakyroglous M., Die Jürüken, —«Das Ausland», 1891, № 19.
351. Turan O,. L'islamisation dans la Turquie du Moyen âge,— «SI». 1959, № 10.
352. Turan O., Les souverains Seldjoukides et leurs sujets non-musulmans, — «SI», 1953, № 1.
353. Unver A. S., Hippocrates et sa grande place dans la mythologie turque, Paris, 1940.
354. Vallois H., Les ossements humains de Sialk. Contribution à l'etude de l'histoire raciale de l'Iran ancient,—«R. Ghirshman. Fouilles de Sialk, près de Kashan», vol. II. Museé de Louvre— Departement des antiquites orientales, serie archeologique, t. V, 1939.
355. Volney C. F., Voyage en Syrie et en Egypte pendant les annees 1783, 1784, 1785, vol. II. Paris, 1787.
356. Wittek P., De la defaite d'Ankara à la prise de Constantinople,— «REI», 1938.
357. Wittek P., Deux chapitres de l'histoire des Turcs de Roum,— «Byz.», 1936, t. XI, fasc. 1—2.
358. Wittek P., Das Fürstentum Mentesche, Istanbul, 1937.
359. Wittek P., The Rise of the Ottoman empire, London, 1938.
360. Wittek P., Yazijioghlu Ali on the Christian Turks of the Dobruja,— «Bulletin of the School of Oriental and African Studies», 1952, t. XIV, № 3.
361. Wittek P., Zur Geschichte Angoras im Mittelalter, — «Festschrift G. Jacob», Leipzig, 1932.

* * *

362. Acipayamli O., Türkiye'de dogumla ilgili âdet ve inanmaların etnolojik etüdü, Erzurum, 1961.
363. Acipayamli O., Acipayam ve çevresinde mesken ve mesken ile ilgili etnografik arastirmalar, —«AUDTCFD», 1954, c. XII, № 3—4.
364. Ahmet N., Anadolu'da Türklere ait yer isimleri,— «Türkiyat mecmuasi», 1928, c. 2.

365. Ahmet Tevhit, Mentese ogullari, — «Tarih-i Osmani Encumeni mecmuasi», 1913, c. 12, cuz. I.
366. Akin Himmet, Aydinogullari tarihi hakkinda bir arastirma, Istanbul, 1946.
367. Akok M. ve Gökoglu A., Eski Ankara evleri, Ankara, 1945.
368. Akurgal E., Tarih ilmi ve Atatürk,—«Bel.», 1956, т. XX, №80.
369. Aksarayli Mehmedoglu Kertmüddin Mahmut, Müsameret-ül-Ahbar Mogollar zamaninda Türkiye Selçuklulari tarihi, Ankara. 1944.
370. Aksarayli Mehmedoglu K. M., Selçuki devletleri tarihi, Ankara, 1943.
371. [Altinay] Ahmet Refik, Anadolu'da Türk asiretleri, Istanbul, 1930.
372. Altundag S., Osmanlilarin ilk devirlerinde Türklerin kültür ve sosyal durumlari hakkinda bir kaç not, — «AUDTCFD», 1944, c. II, № 4.
373. Andreasyan H. D., Türk tarihine ait Ermeni kaynaklari,— «IUEFTD». 1949, c. I, № 1; 1950. c. I, № 2.
374. Anit A. K., Türk tarihi. Milâttan 250 yil evvelinden 1950 yilina kadar, Istanbul, 1950.
375. Ar M. S., Çivi yazili kaynaklara göre Türkçe—Etice—Hurrice arasindaki baglar,— «Bel.», 1944, c. VIII, № 32.
376. Ar M. S., Çivi yazili kaynaklara göre Türkçe — Etice—Hurrice arasindaki baglar üzerinde yeni arastirmalar,—«AUDTCFD», 1944. c. II, № 4.
377. Arik R. O., Proto—Etilere dair,—«II. TTK», Istanbul, 1943.
378. Arik R. O., Türk inkilâbi ve milliyetçiligimiz, Ankara, 1958.
379. [Asik Pasazade], Die altosmanische Chronik des Asikpasazade, Leipzig, 1929.
380. Atabeyli N. K., Antalya tahtacilarina dair notlar,—«TTAED», 1940, № 4.
381. Atabeyli N. K., Teke (Antalya) Yürükleri hakkinda notlar,— «TTAED», 1940, № 4.
382. [Atabeyli] Naci Kum, Türkmen Baraklari,—«TED», 1965. № 6.
383. [Atabinen] Resit Saffet, Türklük ve Türkçülük izleri, ktp. 1, Ankara, 1930.
384. [Atatürk] Kemal Atatürk tarafindan nutuk, c. II, Istanbul, 1934.
385. «Atatürk'ün söylev ve demeçleri», c. I. Istanbul, 1945.
386. Atalay B., Divanü Lûgat-it Türk tercümesi, c. I—III, Ankara, 1939—1941.

387. Aygen N., Türklerin antropolojik tarihleri bakimindan kan gruplari hakkinda,—«III. TTK», Ankara, 1948.
388. Aygen N., Türklerin kan gruplari ve kan gruplarinin antropolojik karakterlerle ilgisi üzerine bir arastirma,—«AUDTCFD», 1944, c. II, № 1.
389. Aykut S., Kamâlizm (C. H. Partisi programinin izahi), Istanbul. 1936.
390. Balcioglu T. H.. Edremit civarinda Türk asiretleri, —«II. TTK», Istanbul. 1913.
391. Barlas U.. Kayseri dügünleri üzerine bir arastirma denemesi, Istanbul, 1943.
392. Barlas U., Maras dügün adetleri üzerine bir arastirma denemesi, Istanbul, 1964.
393. Bayatli O., Bergama'da sifali, otlar ve Lokman Hekim, Istanbul, 1952.
394. Bayri M. H., Halk adetleri ve inanmalari. Istanbul, 1939.
395. Bayri M. H., Istanbul folkloru, Istanbul, 1947.
396. Bayur H., Kuvay-i Milliye devrinde Atatürk'ün dis siyasa ile ilgili görüs ve davranislari,—«Bel.», 1956, c. XX, № 80.
397. Berkes N., Bazi Ankara köyleri üzerinde bir arastirma, Ankara, 1950.
398. [Bese] Enver M., Safranbolu'da ve çevresinde göçebeler,—«HBH», c. III, № 4, 1934.
399. Bozkaya E. A., Anadolu'nun pamuk—çeltik—misir—findik—afyon ve bagcilik bölgelerinde kullanilan ziraat alet ve düzenleri üzerinde arastirmalar, Ankara, 1936.
400. «CHP programi», Ankara, 1951.
401. Cagatay N., Osmanli Imparatorlugunda reayadan alinan vergi ve resimler,—«AUDTCFD», 1947, c. V, № 5.
402. Cetintürk S., Osmanli Imparatorlugunda Yürük sinifi ve hukukî statüleri,—«AUDTCFD», 1947, c. V. № 5.
403. Danismend I. H., Türkiyat ve islâmiyat tetkikleri külliyati, 2. fasikül, Medenî kiyafetin tesekkülünde Türk irkin rolü, Istanbul, 1956.
404. Dâver B., Türkiye Cumhuriyetinde lâyiklik, Ankara, 1955.
405. Demirci Y. Z., Anadolu'da eski dügün ve evlenme adetleri, Istanbul, 1938.
406. Demirtas F., Bozulus hakkinda, —«AUDTCFD», 1949, c. VII, № 1.
407. Demirtas F., Osmanli devrinde Anadolu'da kayilar,—«Bel.», 1948, c. XII, № 48.
408. Demirtas F., Osmanli devrinde Anadolu'da Oguz boylari,—«AUDTCFD», 1949, c. VII, № 2.

409. Dilmen I. N., Türk tarih tezinde Günes-Dil teorisinin yeri ve degeri, «II. TTK», Istanbul, 1943.
410. Dirik K., Eski ve yeni Türk haliciligi ve hali tipleri panoramasi, Istanbul, 1938.
411. Dukas, Bizans tarihi, Istanbul, 1956.
412. Duran F. S., Türkiye cografyasi, Istanbul, 1929,
413. Durul Y., Hali ve kilimlerde kiz motifleri,—«TED», 1956, №1.
414. Efe S. ve Barlas U., Kütahya dügün adetleri üzerine bir arastirma metodu denemesi, Istanbul, 1964.
415. Engin A., Atatürkçülük ve Moskofluk— Türklük savaslari. Atatürk yalniz Türkiye Türklerinin degil, bütün Türklügun atasidir, Istanbul, 1953.
416. Engin M. S., Eti ve Grek dinî sistemlerinin mukayesesi,—«II. TTK», Istanbul, 1943.
417. Eristirgil M., Türkçülük devri, milliyetçilik devri, insanlik devri, Ankara, 1958.
418. Erzi A. S., Akkoyunlu ve Karakoyunlu tarihi hakkinda arastirmalar,—«Bel.», 1954, c. XVIII, № 7.
419. [Evliya Celebi], Evliya Celebi seyahatnamesi, Istanbul, 1896, c. I—V.
420. Freilih ve Raulig, Türkmen asiretleri, Istanbul, 1918.
421. Gazavat'i Seyyid Battal Gazi, Istanbul, 1870.
422. «1955 Genel nüfus sayimi», Ankara, 1956.
423. «23 Ekim 1960 Genel nüfus sayimi», Ankara, 1963.
424. «24 Ekim 1965 Genel nüfus sayimi», Ankara, 1969.
425. Gökalp Z., Türkçülügün esaslari, Istanbul. 1952.
426. Gökbilgin M. T., Rumeli'de Yürükler, Tatarlar ve Evlâd-i Fâtihan, Istanbul, 1957.
427. Gökbilgin T., Rumeli'nin iskâninda ve Türklesmesinde Yürükler,—«III. TTK», Ankara, 1948.
428. [Gökoglu] Ahmet Baha, Istanbul etnografyasi (Istanbul halkini kimler teskil ediyor), Istanbul, 1934.
429. Gökyay O. S., Dede Korkut, Istanbul, 1938.
430. Günaltay S., Abbasogullari imparatorlugunun kurulusu ve yükselisinde Türklerin rolü,—«Bel.», 1942, c. VI, № 23—24.
431. Günaltay S., Türk tarih tezi hakkindaki intikatlarin mahiyeti ve tezin kat'i zaferi, —«Bel.», 1938. c. II, № 7—8.
432. Güngör K., Anadolu'da Hizir gelenegi ve Hidirellez törenlerine dair bir inceleme,—«TED», 1956. № 1.
433. Güngör K., Cenubî Anadolu Yürüklerinin etno-antropolojik tetkiki, Ankara, 1941.
434. Ibn Bibi, Anadolu Selçukî tarihi, Ankara, 1941.

435. [Ibn Bibi], Selçukname,—Histoire des Seldjoucides de l'Asie Mineure d'après Ibn-Bibi, Leide, 1902, —Houtsma Th., Recueil de textes relatifs à l'histoire des Seldjoucides, vol. III.
436. Inalcik H., Fatih devri üzerinde tetkikler ve vesikalar, Ankara, 1954.
437. Inalcik H., Stefan Dusan'dan Osmanli Imparatorluguna,—«Melanges Fuad Köprülü», Istanbul, 1953.
438. [Inan] Abdülkadir, Birinci ilmî seyahate dair rapor, Istanbul, 1930.
439. Inan Afet, Türkiye halkinin antropolojik karakterleri ve Türkiye tarihi. Ankara, 1947.
440. «Islam ansiklopedisi», Istanbul, 1944, cuz 40.
441. Izmirli. I. H., Sark kavnaklarina göre Mislümanliktan evvel Türk kültürünün Arap yarimadasi.da izleri,—«II. TTK», Istanbul, 1943.
442. «Kalkinma plâni. Ikinci bes yil (1968—1972). Özet», Ankara. 1967.
443. Kafesoglu I., Selçuklu tarihinin meseleleri,—«Bel.», 1955, c. XIX, № 76.
444. Kafesoglu I., Selçuk'un ogullari ve torunlari,—«TM», 1958, c. XIII.
445. Kafesoglu I., Sultan Meliksah devrinde Büyük Selçuklu Imparatorlugu, Istanbul, 1953.
446. Kafesoglu I., Türkler ve medeniyet, Istanbul, 1957.
447. Kansu S. A., Insan ve medeniyet tekâmül tarihinde Anadolu, nun yeri,— «III. TTK», Ankara, 1948.
448. Kansu S. A., Selçuk Türkleri hakkinda antropolojik ilk bir tetkik ve neticeleri.— «II. TTK», Istanbul, 1943.
449. Kansu S. A., Tunakan S., Karaoglan höyügünden cikarilan Eti, Frik ve Klâsik devir iskeletlerinin antropolojisi,—«IV. TTK», Ankara, 1952.
450. Karal E. Z., Osmanli Imparatorlugunda ilk nüfus sayimi - 1831, Ankara, 1943.
451. Kemal K., Anadolu'nun Dogu ve Cenupdogusu, Ankara, 1933.
452. Kemali A., Erzincan Tarihî, cografî, içtimaî, etnografî, idarî, ihsaî tetkikat tecrübesi, Erzincan, 1932.
453. Kosay H. Z., Alaca-Höyük. (Anadolu'nun etnografya ve folkloruna dair malzeme), Ankara, 1951.
454. Kosay H. Z., Ankara budun bilgisi, Ankara, 1935.
455. Kosav H. Z., Bask dili ile Türkçe arasindaki münasebetlere dair ye i deliller,—«Bell.», 1959, c. XXIII, № 92.

456. Kosay H. Z., Dil mukayeselere göre Basklarla Türklerin temaslari, göç yollari ve zamani hakkinda,—«Bel.», 1957, c. XXI, № 84.
457. Kosay H. Kilic S., Güzelova (Erzurum) etnografya ve folkloruna dair notlar, —«TED», 1965, № 6.
458. Kosay H. Z., Türkiye halkinin maddî kültürüne dair arastirmalar, I (Gifçilik). —«TED», 1956, № 1; II (Kap-kaçak, ocak v. s.), «TED», 1957, № 2; III (Hayvancilik), — «TED», 1959, № 3.
459. Kosay H. Z., Türkiye Türk dügünleri üzerinde mukayeseli malzeme, Ankara, 1941.
460. Kosay H. Z, Ülkücan A., Anadolu yemekleri ve Türk mutfagi, Ankara, 1961.
461. Köse M., Kars'ta kotan,— «TFA», 1963, № 169.
462. Köprülü F., Anadolu beylikleri tarihine ait notlar,— «TM», 1928, c. 2.
463. Köprülü M. F., Anadolu Selçukulari tarihinin yerli kaynaklari,— «Bel.». 1943, c. VII, № 27.
464. Köprülü M. F., Kay kabilesi hakkinda yeni notlar, —«Bel.», 1944, c. VIII, № 31.
465. Köprülü M. F., Oguz etnolojisine dair tarihî notlar,—«TM», 1925, c. 1.
466. Köprülü M. F., Oguz kabile isimleri, — «TM», 1925, c. 1.
467. Köprülü F., Osmanli devleti'nin kurulusu, Ankara, 1959.
468. Köprülü M. F., Osmanli Imparatorlugunun etnik mensei meseleleri,— «Bel.», 1943, c. VII. № 28.
469. «Köylerimizin adlari», Istanbul, 1928.
470. Köymen M. A., Selçuklu devri Türk tarihi, Ankara, 1963.
471. Mansel A. L., Ege tarihinde Akalar meselesi, — «II. TTK», Istanbul, 1943.
472. Mansel A. M., Preistorik boyali keramik kültürleri,—«Bel.», 1937, c. I, № 3—4.
473. [Mehmed Nesrî], Kitab-i cihannüma. Nesrî tarihi, c. I—II, Ankara, 1949.
474. «Millî mücadele ve inkilâplarla ilgili kanunlar», c. I, Ankara, 1957.
475. Münecclm basi, Sahaif al-Ahbar, Istanbul, 1868.
476. Nesin A., Böyle gelmis, böyle gitmez, Istanbul, 1966.
477. Onur N., Kan gruplari bakimindan Türk irkinin mensei hakkinda bir etüd,—«II. TTK», Istanbul, 1943.
478. Orkun H. N., Anadolu'da Oguz boylari, —«Ülkü», c. V, № 27, 1935; c. XI, № 124, 1946.
479. Orkun H. N. Oguzlara dair,—«Ülkü», 1935, c. V, № 26,
480. Orkun H. N., Türk tarihi, c. I—IV, Ankara, 1946.

481. Oruç bin Adil, Tevarih-i Al-i Osman, Hannover, 1925.
482. Özbel K., El sanatlari, c. I, Ankara, 1949.
483. Özgüç T. Birinci Truva'yi kim kurdu?—«AÜDTCFD», 1944. c. II, № 5.
484. Öztelli C., XVII yuzyilda büyük folklorcu Evliya Çelebi,— «TTA», 1958, № 107.
485. Ruben W., Anadolu'nun yerlesme tarihi ile ilgili görüsler. Koçhisar'in Tuz gölü Batisindaki step köylerinde 1946 Eylülünde yapilan bir arastirma gezisinin sonuçlari,—«AÜDTCFD», 1947, c. V, № 4.
486. Saraçoglu H., Dogu Anadolu, c. I, Istanbul, 1956.
487. Sümer F. Avsarlara dair,— «60. dogum yili münasebetiyle Fuad Köprülü armagani», Istanbul, 1953.
488. Sümer F., Dögerlere dair.— «TM», 1953, c. X.
489. Sümer F., Karakoyunlular, —«Islâm ansiklopedisi», 1953, cuz 58.
490. Sümer F., Oguzlar (Türkmenler). Târihleri, boy teskilâti, destanlari, Ankara, 1967.
491. Sümer F., Yiva ogus boyuna dair, «TM», 1951, c. IX.
492. Sapolyo E., Ziya Gökalp, Istanbul, 1943.
493. Senyürek M. S., En eski Anadolu halkinin kraniyolojik tetkiki, —«III. TTK», Ankara, 1948.
494. Senyürek M. S. Türk Tarih Kurumu adina yapilan Kara höyük kazisindan çikarilan kafataslarinin tetkiki,—«Bel.», 1949, c. XIII, № 49.
495. Senyürek M. S., Truva civarinda Kumtepe'deki bulunmus olan iskeletlere dair bir not, —«AÜDTCFD», 1949, c. VII. № 2.
496. Tansel F., Arap harflerinin islahi ve degistirilmesi hakkinda ilk tesebbüsler ve neticeleri, «Bel.», 1953, c. XVII, № 66.
497. Tarhan H., Isparta'da Lodos'un kizini Poyraz'a gelin etmek,— «HBH». 1930, № 5.
498. «Tavarih-i âli Osman», Istanbul, 1332 (hicre).
499. «Tevarih-i Al-i Osman», Breslau, 1922.
500. Togan Z. V.. Mogollar, Cingiz, Türklük, [S. L.], 1940.
501. Togan Z. V., Umumî Türk tarihine giris, c. I, Istanbul, 1949.
502. Tunakan S. Türk çocuklarinda ve yeni dogmuslarda Mongol lekesi, —«AÜDTCFD», 1956, c. XIV, № 3—4.
503, Turan O., Celâleddin Karatay, vakiflari ve vakfiyeleri,— «Bel.», 1948, c. XII, № 45.
504. Turan O., Istanbul'un fethinden önce yazilmis tarihi takvimler. Ankara, 1954.
505. «Türkçe sözlük». 3, baski, Ankara, 1959.
506. «I. TTK», Istanbul, 1932.
507. «Türkiye karayollari haritasi», Istanbul, 1966.
508. Uzunçarsili I. H., Osmanli devleti teskilâtina medhal. Istanbul, 1941.
509. Uzunçarsili I. H., Osmanli tarihi, c. I—IV, Istanbul, 1947—1952.
510. Urunçarsili I. H., Teke ogullari,—«TTAED», 1933. № 1.
511. Uraz M., Türk edip ve sairleri, Istanbul, 1939—1940, c. I—IV.
512. Ülkütasir M. S., Türk halkbilgisine ait arastirmalar, Istanbul, 1938.
513. Ünal T., Karamanogullari tarihi, Ankara, 1957.
514. [Ünver] Süheyl A., Türkiye'de tibbî folklor hakkinda rapor,—«HBH», 1936, № 56.
515. «Vahdettin Anzavur'u silâhlandiriyor»,—«Aksam», 27. III. 1968.
516. Vallois H. V., Garbî Asya'nin Irklar tarihi,—«II. TTK», Istanbul. 1943.
517. Yalgin A. R., Anadolu'da yagcilik,—«Ülkü», 1946, c. IX, № 103, 106.
518. [Yalgin] A. Riza, Cenupta Bozdoganlilar,—«Ülkü», 1934, c. III, № 17.
519. [Yalgin] A, Riza, Cenupta Türkmen oymaklari, Istanbul—Ankara, 1931—1933, k. 1—3.
520. Yalgin A. R., Hayvancilik,—«TED», 1959, № 3.
521. Yalgin-A. R., Toroslarda Karatepeli bölgesi. Yurt ve etnografya, Ankara, 1950.
522. Yalgin A. R., Uludag çevresinde Türk damgalari, —«III. TTK». Ankara, 1948.
523. Yazicioglu Ali, Oguzname yahut Selçukname, Istanbul, [S. A.].
524. Yener E., Eski Ankara kadin kiyafetleri,—«AÜDTCFD», 1955, c. XIII, № 3.
525, Yinanç M. H., Danismendiler,—«Islam ansiklopedisi», Istanbul, 1944. c. II, cüz 21.
526. Yinanç M. H., Türkiye tarihi. Selçuklular devri, Istanbul, 1944.
527. Wittek P., Mentese beyligi (XIII—XV asir). Ankara, 1944.
528. Πουλαγοι Αρι, Η προελεγεο τεν Ελληνεν, Ἀδηνα, 1962.
529. Χατζημιχαλη Α., Καραχατσανοι, Ἀδηνα, 1957.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից 3

Հիմնական աղբյուրների և գրականության տեսություն . . . 5

Գլուխ I: Անատոլիայի բնակչության էթնիկական կազմը մինչև թյուրքական ցեղերի զանգվածային գաղթը 61

Գլուխ II: Թյուրքական ցեղերի գաղթը Անատոլիա XI—XIII դարերում և նրանց էթնիկական պատմությունը 98

Օղուզները և թուրքմենները Ռումի սուլթանությունում (98): Օղուզների և թուրքմենների տարաբնակեցումը Անատոլիայում (110): Թյուրքերի թվաքանակը Անատոլիայում XI—XII դարերում (118): Անատոլիայի թյուրքական ցեղերի էթնիկական կազմը (120): Թյուրքերի խառնվելը Անատոլիայի տեղական քոչվորների հետ (125): Փոքր Ասիայի բնակչության էթնիկական կազմը XI—XIII դարերում (133): Էթնիկական պրոցեսները Անատոլիայում XI—XIII դարերում: Թյուրքերի անցումը նստակեցության և դրա նշանակությունը էթնիկական պրոցեսների համար (135): Տեղական բնակչության իսլամացումը և էթնիկական միախառնման մյուս գործոնները (138): Փոքր Ասիայի սելջուկյան կուլտուրայի էթնիկական արմատները (151):

Գլուխ III: Թուրք ժողովրդի կազմավորումը 164

Անատոլիայի էթնիկական-պատմության առանձնահատկությունները մոնղոլական տիրապետության և ֆեոդալական մասնատվածության ժամանակաշրջանում (164): Օսմանական պետության բարձրացումը և թուրք ժողովրդի կազմավորումը (173): Բալկանյան մի շարք երկրների գաղութացումը թուրքերի կողմից (179): Յուրյուքների դերը Ռումելիայի գաղութացման գործում (181): Անատոլիայի և Բալկանների տեղացի բնակչության մի մասի ասիմիլյացումը թուրքերի կողմից (187): Թուրքերի կուլտուրայի ու լեզվի զարգացման առանձնահատկությունները XV—XVI դարերում (196): Ցեղերը XV—XVI դարերի թուրք ժողովրդի կազմում (206):

Գլուխ IV: Թուրք ազգի ձևավորումը 210

Թուրքիայի զարգացման առանձնահատկությունները XVII—XVIII դարերում (211): Թուրք ժողովրդի մի քանի գծերը XIX դարի սկզբին (214): Թուրքերի և մուսուլմանների վերաբերմունքը նախկին օսմանական և սահմանակից տերիտորիաներից Թուրքիա (224): Լեզվական ասիմիլյացիոն պրոցեսների առանձնահատկությունները Թուրքիայում XIX դարում (226): Կապիտալիստական հարաբերությունների սաղմնավորումը և Թուրքիայի ժողովուրդների ազգային զարգացման առանձնահատկությունները XIX դարի առաջին կեսին (231): Թուրքիայի վերածումը օտարերկրյա տերությունների կիսագաղութի XIX դարի վերջին—XX դարի սկզբին և ազգային պրոցեսները (247): Երիտասարդ թուրքերի հեղափոխությունը, առաջին համաշխարհային պատերազմը և դրանց ազդեցությունը Թուրքիայի ազգային պրոցեսների վրա (262): Քեմալական հեղափոխությունը և թուրքերի ազգային կոնսոլիդացման ավարտումը (271): Թուրք ազգի զարգացումը 1930—1965 թվականներին (277):

Գլուխ V: Ժամանակակից թուրքերի էթնիկական բնութագիրը (290): Մարդաբանական տիպերը (291): Լեզուն (296): Նյութական և հոգևոր կուլտուրայի մի քանի առանձնահատկությունները (315): 327

Ամփոփում 330

Գրականություն 336

Դմիտրի Եվգենիչ Երեմեև

Թուրքերի ծագումը

Խմբագիր՝ Բ. Բ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Նկարիչ՝ Ե. Բ. Բեկետով
Գեղ. խմբագիր՝ Մ. Մ. Բաղդասարյան
Տեխ. խմբագիր՝ Ռ. Հ. Գրիգորյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ա. Ս. Հովսեփյան

ДМИТРИ, ЕВГЕНЬЕВИЧ ЕРЕМЕЕВ
ЭТНОГЕНЕЗ ТУРОК
(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван 1975